ՏՂԱՄԱՐԴԻԿ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների

զեկույց

Երևան 2016

Հետազոտությունն անցկացվել է Հայաստանում ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի ծրագրի շրջանակներում 2015-2016 թթ.: Զեկույցում տեղ գտած կարծիքներն ու եզրակացությունները հեղինակային են և կարող են չհամընկնել ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի տեսակետերին:

Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների զեկույց

Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում (2016)

© ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ

Հայաստան, 2016

ՄԱԲՀ 14 Պ.Ադամյան փ.., Երևան, Հայաստան

Tel.: +374 10 543416

Ընտրանքը, դաշտային աշխատանքները և վերջնական տվյալների բազան ձևավորվել է Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի կողմից (ՔՍՀԻ/IPCS)

Վերլուծական զեկույցի հեղինակներ՝

Վլադիմիր Օսիպովը, գ. թ., գենդերային փորձագետ
- Գլուխներ 1, 2, 3, 7 և 8

Ջինա Սարգիզովա, գենդերային փորձագետ
- Գլուխներ 4, 5 և 6

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ....5
ԱՌԱՋԱԲԱՆ....15
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ....17
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....37
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ....46
ԳԼՈՒԽ 1. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ....55
Կանանց իրավունքները....55
Գենդերային հավասարությունը....58
Գենդերային հավասարության օրենքները....62
Կանանց քաղաքական մասնակցությունը և առաջնորդական ներուժը....64
Կանանց համար քվոտաները....68
ԳԼՈՒԽ 2. ԿԱՆԱՆՑ ՀԱՆԴԵՊ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ. ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԵՐԸ....72
Կանանց դեմ բռնության տարածվածությունը....74
Սեռական զուգընկերոջ բռնությունը. բռնության գործադրումը և բացահայտումը....75
Ֆիզիկական բռնության մասին հաղորդում. Համեմատական վերլուծություն....96
Սեռական բռնությունը (տղամարդիկ)....104
Կանանց հանդեպ բռնությունը տանից դուրս....115
Տղամարդկանց հանդեպ բռնություն....120
ԳԼՈՒԽ 3. ԲՌՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ....131
ԿԴԲ նկատմամբ վերաբերմունքը....131
Վերաբերմունքը կանանց հանդեպ սեռական զուգընկերոջ ֆիզիկական բռնության նկատմամբ....133
Բռնաբարության նկատմամբ վերաբերմունք....167
Նույնասեռական տղամարդկանց հանդեպ բռնություն....181
ԳԼՈՒԽ 4. ՏՂԱՄԱՐԴՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ....192
Որոշումների կայացումը....192
Տղամարդկանց՝ իբրև հայրերի մասնակցությունը (ծնողավարում)....211
Տղամարդկանց մասնակցությունը տնային գործերին....225
ԳԼՈՒԽ 5. ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԻՑ....234
ԳԼՈՒԽ 6. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ....246
ԳԼՈՒԽ 7. ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ....257

Սեռական ակտիվությունը 257
Հակաբեղմնավորում և ապահով սեռական հարաբերություն 263
Հղիության ընդհատումը 265
ԳԼՈՒԽ 8. ՍԵՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ 269
Սեռականությունը և կարծրատիպերը 269
Ժամադրություն, ամուսնություն և երեխաներ 280
Հակաբեղմնավորման նկատմամբ վերաբերմունք 286
Հղիության ընդհատումը 296
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 305
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 310

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 1. Ընտրանքի բաշխումը մարզերում և Երևանում

Աղյուսակ 2. Դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում ծագած խնդիրները և դրանց լուծումները

Աղյուսակ 3. Որակի ստուգման արդյունքները

Աղյուսակ 4. Խոտանհարցաթերթեր

Աղյուսակ 5. Հետազոտության ընտրանքի դեմոգրաֆիկ բնութագրիչները

ԳԼՈՒԽ 1. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Աղյուսակ 1. Վերաբերմունքը կանանց իրավունքներին

Պնդումների հետ համաձայն հարցվածների տոկոսը

Աղյուսակ 2. Վերաբերմունքը կանանց իրավունքներին

Պնդումների հետ համաձայն կին և տղամարդ հարցվածների տոկոսը

Աղյուսակ 3. Վերաբերմունք գենդերային հավասարության հանդեպ

Պնդումների հետ համաձայն հարցվածների տոկոսը.

Աղյուսակ 4. Վերաբերմունք գենդերային հավասարության հանդեպ

Պնդումների հետ համաձայն կին և տղամարդ հարցվածների տոկոսը

Աղյուսակ 5. Գենդերային հավասարության և կանանց դեմ բռնության (ԿԴԲ/VAW) կանխարգելման օրենքների իմացությունը
Հարցվածների տոկոսը

Աղյուսակ 6. Գենդերային հավասարության և կանանց դեմ բռնության (ԿԴԲ/VAW) կանխարգելման օրենքների իմացությունը

Կին և տղամարդ հարցվածների տոկոսը

Աղյուսակ 7. Վերաբերմունք կանանց քաղաքական մասնակցության և առաջնորդելու ներուժի հանդեպ

Հարցվածների տոկոսը

Աղյուսակ 8. Վերաբերմունք կանանց քաղաքական մասնակցության և առաջնորդելու ներուժի հանդեպ

Կին և տղամարդ հարցվածների տոկոսը

Աղյուսակ 9. Վերաբերմունք կանանց համար քվոտաների վերաբերյալ

Կանանց համար ֆիքսված համամասնությամբ հատկացվող տեղեր երաշխավորող քվոտայի համակարգին կողմ և դեմ հարցվածների տոկոսը

Աղյուսակ 10. Վերաբերմունք կանանց համար քվոտաների վերաբերյալ

Կանանց համար ֆիքսված համամասնությամբ հատկացվող տեղեր երաշխավորող քվոտայի համակարգին կողմ և դեմ կին և տղամարդ հարցվածների տոկոսը

ԳԼՈՒԽ 2. ԿԱՆԱՆՑ ԴԵՄ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ. ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԵՐԸ

Աղյուսակ 1. Կանանց հանդեպ հոգեբանական և ֆիզիկական բռնության գործադրումը, խոցելիությունն ու տնտեսական շահագործումն իրենց զուգընկերոջ կողմից (Տարածվածությունը կյանքի ընթացքում)

Աղյուսակ 2. Կին սեռական զուգընկերոջ հանդեպ հոգեբանական և ֆիզիկական բռնության գործադրումը ու տնտեսական շահագործումը. տղամարդիկ (Տարածվածությունը կյանքի ընթացքում)

Աղյուսակ 3. Կանանց հանդեպ հոգեբանական և ֆիզիկական բռնության գործադրումն ու տնտեսական շահագործումն իրենց զուգընկերոջ կողմից. կանայք (Տարածվածությունը կյանքի ընթացքում)

Աղյուսակ 4. Կանանց ֆիզիկական բռնության ենթարկումը տղամարդ զուգընկերոջ կողմից

Հարցազրուցավարի հարցերին հարցվածների պատասխաններից ստացված տվյալների և ինքնուրույն հարցաշարի նույն հարցերին տրված պատասխանների համեմատություն

Աղյուսակ 5. Տղամարդ սեռական զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության գործադրում. կանայք (Տարածվածությունը կյանքի ընթացքում)

Ըստ ինքնուրույն հարցաշարի տվյալների

Աղյուսակ 6. Տղամարդ հարցվածների թիվը, ովքեր պատասխանել են (ինքնուրույն հարցաշարի միջոցով) սեռական բռնության գործադրման մասին հարցերին և այն տղամարդկանց տոկոսը, ովքեր հաղորդել են մեկ կամ ավելի անգամ կին սեռական զուգընկերոջ կամ այլ կնոջ/ աղջկա հանդեպ մեկ կամ ավելի անգամ հետևյալ սեռական ոտնձգությունների մասին

Աղյուսակ 7. Կանանց դեմ սեռական բռնության գործադրումը.տղամարդիկ

(Տարածվածությունը կյանքի ընթացքում)

Աղյուսակ 8. Վերջին 12 ամիսների ընթացքում տղամարդ հարցվածների կողմից գործադրված սեռական բռնությունը

Աղյուսակ 9. Ֆիզիկական բռնությունը տանից դուրս. կանայք(տարածվածությունը ժամանակի ընթացքում)

Տվյալները վերցված են ինքնուրույն հարցաշարից

Աղյուսակ 10. Ֆիզիկական բռնությունը տանից դուրս. Կանայք (տարածվածությունը ժամանակի ընթացքում)

Տվյալները վերցված են ինքնուրույն հարցաշարից

Աղյուսակ 11. Տղամարդկանց հանդեպ ֆիզիկական բռնությունը

Աղյուսակ 12. Տղամարդկանց հանդեպ ֆիզիկական բռնությունը (Տարածվածությունը կյանքի ընթացքում)

Աղյուսակ 13. Բռնացող և չբռնացող տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր ենթարկվել են որևէ տեսակի ֆիզիկական բռնության

Աղյուսակ 14. Ֆիզիկական բռնության տվյալ տեսակին *ենթարկված/չենթարկված* տղամարդկանց և իրենց կին ինտիմ զուգընկերոջը ֆիզիկական բռնության *ենթարկած* տղամարդկանց տոկոսը

ԳԼՈՒԽ 3. ԲՌՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Աղյուսակ 1. Ընտրանքի հարցվածների տոկոսային բաշխվածությունը, ովքեր համաձայն են հետևյալ պնդումների հետ

Աղյուսակ 2. Այն կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունը, ովքեր համաձայն են հետևյալ պնդումների հետ.

Աղյուսակ 3. Սեռական զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության նկատմամբ վերաբերմունքը. Տղամարդիկ

Աղյուսակ 4. Սեռական զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության նկատմամբ վերաբերմունքը. Կանայք

Աղյուսակ 5. Սեռական զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության նկատմամբ վերաբերմունքը

Աղյուսակ 6. Սեռական զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության նկատմամբ վերաբերմունքը

Աղյուսակ 7. Սեռական զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության նկատմամբ վերաբերմունքը

Աղյուսակ 8. Սեռական զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության նկատմամբ վերաբերմունքը

Աղյուսակ 9. Սեռական զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության նկատմամբ վերաբերմունքը

Աղյուսակ 10. Սեռական զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության նկատմամբ վերաբերմունքը

Աղյուսակ 11. Տղամարդ հարցվածների տարբեր խմբերի վերաբերմունքը ինտիմ զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության նկատմամբ

Աղյուսակ 12. Կին սեռական զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության գործադրում ՍԶԲ դատապարտող կամ արդարացնող վերաբերմունք ունեցող տղամարդկանց կողմից

Աղյուսակ 13. Բռնաբարության համար կանանց մեղադրող պնդումների հետ համաձայն հարցվածների տոկոսային բաշխվածությունը

Աղյուսակ 14. Հետևյալ պնդումների հետ համաձայն կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունը

Աղյուսակ 15. Բռնաբարության նկատմամբ վերաբերմունքը. Տղամարդիկ

Աղյուսակ 16. Բռնաբարության նկատմամբ վերաբերմունքը. Կանայք

Աղյուսակ 17. Բռնաբարության նկատմամբ վերաբերմունքը. ողջ ընտրանքը

Աղյուսակ 18. Բռնաբարության գործադրումը այն տղամարդկանց կողմից, ովքեր բռնաբարության նկատմամբ ՆԵՐՈՂԱՄԻՏ ԵՆ/ ՉԵՆ

Աղյուսակ 19. Նույնասեռական տղամարդու հանդեպ բռության նկատմամբ վերաբերմունքը

Պնդումների հետ համաձայն տղամարդ հարցվածների տոկոսը

Աղյուսակ 20. Նույնասեռական տղամարդուն բռնանալու նկատմամբ վերաբերմունքը

Պնդումների հետ համաձայն տղամարդ հարցվածների տոկոսը ըստ կենսագրական բնութագրիչների

Աղյուսակ 21. Սեռական զուգընկերոջ ֆիզիկական բռնության նկատմամբ վերաբերմունքը. տղամարդիկ

Աղյուսակ 22. Սեռական զուգընկերոջ ֆիզիկական բռնության նկատմամբ վերաբերմունքը. Կանայք

Աղյուսակ 23. Բռնաբարության նկատմամբ վերաբերմունքը

Պպնդումների հետ համաձայն կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունն ըստ տարիքի

Աղյուսակ 24. Բռնաբարության նկատմամբ վերաբերմունքը

Պնդումների հետ համաձայն կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունն ըստ կրթության

Աղյուսակ 25. Բռնաբարության նկատմամբ վերաբերմունքը

Պնդումների հետ համաձայն կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունն ըստ ամուսնական կարգավիճակի

Աղյուսակ 26. Բռնաբարության նկատմամբ վերաբերմունքը

Պնդումների հետ համաձայն կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունն ըստ բնակության վայրի

Աղյուսակ 27. Բռնաբարության նկատմամբ վերաբերմունքը

Պնդումների հետ համաձայն կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունն ըստ զբաղվածության

ԳԼՈՒԽ 4. ՏՂԱՄԱՐԴՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Աղյուսակ 1. Որոշումների կայացում

Ծախսումների վերաբերյալ որոշումների կայացման մասին հարցերին պատասխանած հարցվածների տոկոսը

Աղյուսակ 2.	Որոշումների կայացում
	Ծախսումների վերաբերյալ որոշումների կայացման մասին հարցերին պատասխանած կին և տղամարդ հարցվածների տոկոսը
Աղյուսակ 3.	Որոշումների կայացում
	Ծախսումների վերաբերյալ որոշումների կայացման մասին հարցերին պատասխանած հարցվածները ըստ կենսագրական բնութագրիչների
Աղյուսակ 4.	Որոշումների կայացում
	Խոշոր ծախսումների վերաբերյալ որոշումների կայացման մասին հարցերին պատասխանած հարցվածների տոկոսը.
Աղյուսակ 5.	Ժամանակի օգտագործում
	Ժամանակի օգտագործման վերաբերյալ հարցերին պատասխանած հարցվածների տոկոսը ըստ կենսագրական բնութագրիչների
Աղյուսակ 6.	Որոշումների կայացում/տանից դուրս աշխատանք
	Որոշումների կայացման վերաբերյալ հարցերին պատասխանած հարցվածների տոկոսը
Աղյուսակ 7.	Որոշումների կայացում/ հակաբեղմնավորիչների օգտագործում
	Որոշումների կայացման վերաբերյալ հարցերին պատասխանած հարցվածների տոկոսը
Աղյուսակ 8.	Որոշումների կայացում/ ազատ ժամանց
	Որոշումների կայացման վերաբերյալ հարցերին պատասխանած հարցվածների տոկոսը ըստ կենսագրական բնութագրիչների
Աղյուսակ 9.	Որոշումների կայացում /(էլ ո՞վ)
	Որոշումների կայացման վերաբերյալ հարցերին պատասխանած հարցվածների տոկոսը
Աղյուսակ 10.	Որոշումների կայացում
	Հարցվածների տոկոսը, ովքեր պատասխանել են իրենց ծնողների ընտանիքներում որոշումների կայացման մասին հարցերին
Աղյուսակ 11.	Որոշումների կայացում
	Կին և տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր պատասխանել են իրենց ծնողների ընտանիքներում որոշումների կայացման մասին հարցերին
Աղյուսակ 12.	Որոշումների կայացում ծնողների ընտանիքում
	Հարցվածների տոկոսը, ովքեր պատասխանել են իրենց ծնողների ընտանիքում որոշումների կայացման մասին հարցերին
Աղյուսակ 13.	Որոշումների կայացում

	Կին և տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր պատասխանել են երեխա ունենալու կամ որդեգրելու մասին որոշումների կայացման հարցին
Աղյուսակ 14.	Հոգատար վերաբերմունք
	Իրենց զուգընկերների՝ նախածննդաբերական շրջանում իրենց հետ կատարած այցերի մասին հարցերին պատասխանած հարցվածների տոկոսը
Աղյուսակ 15.	Հոգատար վերավերմունքը
	Կին և տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր պատասխանել են զուգընկերոջ հանդեպ տղամարդկանց վերաբերմունքի մասին հարցին
Աղյուսակ 16.	Հոգատար վերաբերմունք
	Կին և տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր պատասխանել են զուգընկերոջ հանդեպ տղամարդկանց վերաբերմունքի մասին հարցին
Աղյուսակ 17.	Տղամարդիկ իբրև ծնողներ
	Ծնողական հոգածության մասին հարցերին պատասխանած տղամարդ հարցվածների տոկոսը
Աղյուսակ 18.	Տղամարդիկ իբրև ծնողներ
	Երեխաների հոգածության հարցում «խիստ կողմ» արտահայտված տղամարդ հարցվածների տոկոսը՝ ըստ կրթության մակարդակի
Աղյուսակ 19.	Տղամարդիկ իբրև ծնողներ
	Ծնողական հոգածության մասին հարցերին պատասխանած հարցվածների տոկոսը.
Աղյուսակ 20.	Ծնողավարություն
	Հետևյալ ծնողական պարտականությունների բաշխման մասին հարցերին պատասխանած տղամարդ և կին հարցվածների տոկոսը.
Աղյուսակ 21.	Ծնողավարություն
	Ծնողական հոգածության հաճախականության մասին հարցերին պատասխանած հարցվածների տոկոսը
Աղյուսակ 22.	Ծնողավարություն
	Ծնողական հոգածության հաճախականության մասին հարցերին պատասխանած տղամարդ և կին հարցվածների տոկոսը
Աղյուսակ 23.	Տնային պարտականությունների բաշխում
	Տղամարդ և կին հարցվածների տոկոսը, ովքեր պատասխանել են ՏՊ բաշխման մասին հարցին
Աղյուսակ 24.	Տնային պարտականությունների բաշխումը

ՏՊ պարտականությունների բախշմանը վերաբերող հարցին պատասխանանծ հարցվածների տոկոսը

Աղյուսակ 25. Վերաբերմունքը տնային պարտականությունների բաշխմանը

ՏՊ պարտականությունների բախշմանը վերաբերող հարցին պատասխանած հարցվածների տոկոսը

Աղյուսակ 26. Վերաբերմունք տնային պարտականությունների բաշխմանը

ՏՊ պարտականությունների բախշմանը վերաբերող հարցին պատասխանած կին և տղամարդ հարցվածների տոկոսը

ԳԼՈՒԽ 5. ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Աղյուսակ 1. Փոխհարաբերություններ

Իրենց հարաբերությունների մասին հարցին պատասխանող տղամարդ և կին հարցվածների տոկոսը

Աղյուսակ 2. Տնային պարտականությունների բաշխումը

ՏՊ պարտականությունների բախշմանը վերաբերող հարցին պատասխանած կին և տղամարդ հարցվածների տոկոսը

Աղյուսակ 3. Փոխհարաբերություններ

Իրենց փոխհարաբերությունների մասին հարցին պատասխանած տղամարդ և կին հարցվածների տոկոսը

Աղյուսակ 4. Վերահսկողական վարք

Իրենց ներկայիս կամ վերջին կնոջ կամ զուգընկերոջ վերահսկողական վարքի վերաբերյալ հարցին պատասխանած հարցվածների տոկոսը. Տղամարդիկ

Աղյուսակ 5. Փոխհարաբերութուններ

Փոխհարաբերություններին վերաբերող հարցին պատասխանած հարցվածների տոկոսն ըստ կենսագրական բնութագրիչների

ԳԼՈՒԽ 6. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Աղյուսակ 1. Առողջություն

Իրենց առողջության մասին պատասխաններ տված կանանց և տղամարդկանց տոկոսը.

Աղյուսակ 2. Առողջապահական ծառայությունների օգտագործում

Առողջապահական ծառայությունների օգտվելու մասին պատասխաններ տված կանանց և տղամարդկանց տոկոսը

Աղյուսակ 3. Ալկոհոլի օգտագործում

Ալկոհոլի օգտագործման մասին պատասխաններ տված կանանց ու տղամարդկանց տոկոսը

Աղյուսակ 4. Ալկոհոլի օգտագործում

Ալկոհոլի օգտագործման հետևանքների մասին պատասխաններ տված տղամարդկանց տոկոսը.

Աղյուսակ 5. Ալկոհոլի օգտագործում

Ալկոհոլի օգտագործման հետևանքների մասին պատասխանած տղամարդկանց տոկոսը

Աղյուսակ 6. Ինքնազգացողություն. Տղամարդիկ

ԳԼՈՒԽ 7. ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 1. Վերջին սեռական հարաբերությունը

Հարցված կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր հետևյալ պատասխաններն են տվել այն հարցին (ինքնուրույն հարցաշարերում ընդգրկված), թե ում հետ են վերջին անգամ սեռական հարաբերություն ունեցել

Աղյուսակ 2. Վերջին 12 ամիսներին ունեցած զուգընկերների թիվը

Տղամարդ և կին հարցվածների տոկոսը, ովքեր որոշակի քանակով զուգընկերներ են ունեցել վերջին 12 ամիսների ընթացքում (ինքնուրույն հարցաշարերում). Ում հետ վերջին անգամ սեռական հարաբերություն են ունեցել

Աղյուսակ 3. Հարցվածների՝ երբևէ ունեցած ամուսինների/բնակակիցների թիվը

Տղամարդ և կին հարցվածների տոկոսը, ովքեր ունեցել են որոշակի թվով ամուսինների/բնակակիցներ (բացի ներկայիս հարաբերություններից) (ըստ ինքնուրույն հարցաշարի հարցին տրված պատասխանների)

Աղյուսակ 4. Սեռական հարաբերություններից բավարարվածությունը և դրանց հաճախականությունը

Տղամարդ և կին հարցվածների տոկոսը, ովքեր արտահայտել են սեռական հարաբերություններից և դրանց հաճախականությունից բավարարվածության կամ անբավարարվածության տարբեր մակարդակներ

Աղյուսակ 5. Տղամարդ զուգընկերոջ հետ հարաբերության մերժումը և դրա հետևանքները

Կին հարցվածների տոկոսը, ովքեր համաձայնվել կան մերժել են տղամարդ զուգընկերոջ հետ հարաբերությունը և ովքեր հաղորդել են վերջինիս հակազդման մասին (ըստ ինքնուրույն հարցաշարի 2 հարցերին տրված պատասխանների)

Աղյուսակ 6. Գործարքային սեքսի տարածվածությունը

Կին հարցվածների տոկոսը, ովքեր ընդունել են գործարքային սեքսով զբաղվելու փաստը (ըստ ինքնուրույն հարցաշարի 3 հարցերին տրված պատասխանների)

Աղյուսակ 7. Վերջին 12 ամիսների ընթացքում պահպանակի օգտագործումը

Տղամարդ և կին հարցվածների տոկոսը, ովքեր պահպանակ են օգտագործել /չեն օգտագործել վերջին 12 ամիսների ընթացքում (ըստ ինքնուրույն հարցաշարի 2 հարցերին տրված պատասխանների)

Աղյուսակ 8. Հակաբեղմնավորիչների օգտագործման մասին որոշումը

Կին և տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր ընտրել են տարբեր պատասխաններ հակաբեղմնավորման օգտագործման որոշումների կայացման վերաբերյալ հարցերին

Աղյուսակ 9. Հղիության ընդհատման մասին որոշման կայացում

Կին և տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր ընտրել են տարբեր պատասխաններ հղիության ընդհատման մասին որոշումների կայացման վերաբերյալ հարցերին

Աղյուսակ 10. Տղամարդ զուգընկերոջ մասնակցությունը կնոջ հղիության ընդհատմանը

Կին և տղամարդ հարցվածների տոկոսը

ԳԼՈՒԽ 8. ՍԵՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Աղյուսակ 1. Սեռականության նկատմամբ վերաբերմունք

Հետևյալ պնդումների հետ համաձայն հարցվածների տոկոսը

Աղյուսակ 2. Սեռականության նկատմամբ վերաբերմունք

Հետևյալ պնդումների հետ համաձայն հարցվածների տոկոսը

Աղյուսակ 3. Սեռականության նկատմամբ վերաբերմունք

Հետևյալ պնդումների հետ համաձայն բոլոր հարցվածների տոկոսը՝ ըստ կենսագրական բնութագրիչների

Աղյուսակ 4. Սեռականության նկատմամբ վերաբերմունքը. Տղամարդիկ

Հետևյալ պնդումների հետ համաձայն բոլոր հարցվածների տոկոսը՝ ըստ կենսագրական բնութագրիչների

Աղյուսակ 5. Սեռականության նկատմամբ վերաբերմունք. կանայք

Հետևյալ պնդումների հետ համաձայն հարցվածների տոկոսը՝ ըստ կենսագրական բնութագրիչների

Աղյուսակ 6. Լավագույն տարիքը

Աղյուսակ 7. Լավագույն տարիքը

Կին և տղամարդ հարցվածներ

Աղյուսակ 8. Հակաբեղմնավորման նկատմամբ վերաբերմունք

Պնդումների հետ համաձայն հարցվածների տոկոսը

Աղյուսակ 9.	Հակաբեղմնավորման նկատմամբ վերաբերմունք
	Պնդումների հետ համաձայն Կին և տղամարդ հարցվածների տոկոսը
Աղյուսակ 10.	Հակաբեղմնավրման նկատմամբ վերաբերմունք
	Պնդումների հետ համաձայն հարցվածների տոկոսը ըստ կենսագրական բնութագրիչների
Աղյուսակ 11.	Հակաբեղմնավրման նկատմամբ վերաբերմունք. Տղամարդիկ
	Պնդումների հետ համաձայն հարցվածների տոկոսը ըստ կենսագրական բնութագրիչների
Աղյուսակ 12.	Վերաբերմունք հակաբեղմնավորման նկատմամբ. Կանայք
	Պնդումների հետ համաձայն բոլոր հարցվածների տոկոսը՝ ըստ կենսագրական բնութագրիչների
Աղյուսակ 13.	Հղիության ընդհատում
	Պնդումների հետ համաձայն հարցվածների տոկոսը
Աղյուսակ 14.	Հղիության ընդհատում
	Պնդումների հետ համաձայն կին և տղամարդ հարցվածների տոկոսը
Աղյուսակ 15.	Հղիության ընդհատման նկատմամբ վերաբերմունքը
	Պնդումների հետ համաձայն կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների
Աղյուսակ 16.	Հղիության ընդհատման նկատմամբ վերաբերմունքը. Տղամարդիկ
	Պնդումների հետ համաձայն բոլոր հարցվածների տոկոսը՝ ըստ կենսագրական բնութագրիչների
Աղյուսակ 17.	Հղիության ընդհատման նկատմամբ վերաբերմունքը. կանայք
	Պնդումների հետ համաձայն բոլոր հարցվածների տոկոսը՝ ըստ կենսագրական բնութագրիչների

ԱՌԱՋԱԲԱՆ

ՄԱԲՀ Հայաստանյան գրասենյակը սիրով ներկայացնում է իր տեսակի մեջ եզակի հաշվետվություն, որը մանրամասնում է Հայաստանում տղամարդկանց, գենդերային հավասարության և գենդերային հարաբերությունների հիմնախնդիրներին նվիրված մեր վերջին հետազոտությունը: Սույն հաշվետվությունը հետազոտության հիմնական եզրակացությունների սեղմագիրն է, որում կիրառված է Տղամարդկանց և գենդերային հավասարության միջազգային հետազոտության (IMAGES) մեթոդաբանությունը:

Տղամարդկանց և գենդերային հավասարության միջազգային հետազոտությունը /IMAGES /, որը ստեղծվել և համակարգվել է Պրոմունդոյի /Promundo/ և Կանանց հետազոտության միջազգային կենտրոնի /ICRW/ կողմից, տղամարդկանց փորձի և վերաբերմունքի ամենահամակողմանի ուսումնասիրություններից մեկն է, որն ընդգրկում է գենդերային նորմերը, գենդերային հավասարության ապահովման ուղղությամբ վարվող քաղաքականության նկատմամբ վերաբերմունքը, տնային պարտականությունների բաշխումը՝ ներառյալ երեխայի խնամքը և տղամարդկանց՝ իբրև հայրերի ներգրավվածությունը, սեռական զուգընկերոջ բռնությունը, առողջությունն ու սթրեսը: Այն հաջողությամբ կիրառվել է աշխարհի ավելի քան 15 երկրներում, մասնավորապես՝ մեր տարածաշրջանում ՝ փաստացի հիմք ապահովելով հետագա քաղաքական և իրապաշտպանական գործունեության համար:

Վերջին 20 տարիների ընթացքում ՄԱԲՀ-ը իր նպաստն է բերել Հայաստանում զարգացման գործընթացին՝ համագործակցելով կառավարության, քաղաքացիական հասարակության և զարգացման այլ մասնակիցների հետ: ՄԱԲՀ-ը ապահովում է կանանց սեռական և վերարտադրողական առողջապահական ծառայությունների հասանելիությունը, լուծումներ է առաջարկում երկրում գենդերային բռնության և սեռային հատկանիշով խտրականության հիմնախնդիրներին՝ անցկացնելով գործնական հետազոտություններ, որոնք գենդերային հավասարության մասին գիտելիքների բազա են ստեղծում, կիրառում գենդերային հիմնախնդրի կարգավորմանը միտված ծրագրեր և հանդես է գալիս իբրև գենդերային հավասարության առաջամարտիկ:

ՄԱԲՀ-ի երկարամյա փորձը նպաստել է գենդերային հավասարության հիմնախնդրի և առընթեր սոցիալական նորմերի և գործընթացների ավելի խորը ընմբռմանը՝ զարգացնելով գենդերային հավասարության առկա հիմնախնդիրների լուծման արդյունավետ մոտեցումներ: ՄԱԲՀ-ը համոզված է, որ կանանց և աղջիկների դիրքերի ամրապնդմանը զուգընթաց անհրաժեշտ է անմիջականորեն սատարել նաև տղամարդկանց և տղաներին՝ կողմնակալ գենդերային սոցիալական նորմերի հետ առնչվելիս: ՄԱԲՀ-ը ներգրավված է երկու սեռերի՝ գենդերային բռնության (ԳԲ/GBV) համատեղ առճակատման գործընթացում: Սույն հետազոտությունը իրենից ներկայացնում է Հայաստանում առնականության և գենդերային հիմնախնդրին ավելի լավ ծանոթանալու փորձ: Մենք լիահույս ենք, որ առաջադրված գաղարներն ու վերլուծությունը կնպաստեն Հայաստանի կառավարության և զարգացման այլ

մասնակիցների համատեղ ջանքերին՝ նպատա ունենալով ապահովել իրավունքների պաշտպանությունը և ամրապնդել կանանց ու աղջիկների դիրքերը: Հետազոտության արդյունքները գալիս են ապացելու, որ Հայաստանում առկա մոտեցումները, հավատալիքներն ու փորձը խոչընդոտում են գենդերային իրավահավասարությանը:

Դաշտային աշխատանքներն իրականացրել էր Հայաստանում «Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական հետազոտությունների ինստիտուտը (IPSC): Տվյալների վերլուծությունը և զեկույցի նախապատրաստումը կատարվել է ազգային փորձագետներ տիկին Ջինա Սարգիզովայի և պարոն Վլադիմիր Օսիպովի կողմից: Պրոմունդոն ուղղորդել և խոհրդատվություն է ապահովել ուսումնասիրության բոլոր փուլերի ընթացքում: Մենք շնորհակալություն ենք հայտնում մեր բոլոր գործընկերներին իրենց անգնահատելի ներդրման և շարունակական աջակցության համար:

Հետազոտության վերջնարդյունքները հնարավորինս կհանրայնացվեն՝ քաղաքական քննարկումներ խթանելու և քաղաքականության մեջ փոփոխություններ կատարելու համար՝ գենդերային հավասարության հարցի մեջ ներգրավելով տղամարդկանց և տղաներին: Դրանք նաև կծառայեն իրավապաշտպանության և իրազեկման նպատակներին: ՄԱԲՀ-ը լիահույս է, որ սույն հետազոտությունը դրական ազդեցություն կունենա գենդերային հիմնախնդրի մասին գիտելիքների բազայի և զարգացման վրա և՛ ազգային, և՛ միջազգային մակարդակներում: Մենք նաև հույս ունենք, որ սույն ուսումնաիրությունը կխրախուսի Հայաստանում կանանց կազմակերպություններին քաջալերել և ներգրավել տղամարդկանց՝ իբրև համախոհների ԳԲ վերացման և գենդերային հավասարության հասնելու հարցում:

Ռիտա Կոլումբիա

Մոլդովայի ներկայացուցիչ
Հայաստանի, Ալբանիայի և Մոլդովայի
տարածաշրջանային տնօրեն
ՄԱԲՀ, ՄԱԿ-ի Բնակչության հինադրամ

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Հիմնախնդիրը

Սեռերի հավասարության սկզբունքն ամրագրված է ՀՀ օրենսգրքում և արտացոլված ազգային սահմանադրության մեջ: 2005 թվականին Հայաստանի սահմանադրության մեջ կատարված փոփոխություններում սույն սկզբունքը ձևակերպվել է որպես խտրականության արգելք՝ մի շարք հիմքերով, այդ թվում՝ սեռի հիմքով[1], մինչդեռ 2015 թվականին հավելվել է սեռերի հավասարության մասին հատուկ հոդվածը [2] : Սակայն de jure գենդերային հավասարությունը չի հանգեցնում de facto հավասարության[3]: Հետևաբար հատուկ գենդերային քաղաքականության անհրաժեշտությունը մնում է հրամայական: Հայաստանում գենդերային քաղաքականության պատմությունը սկիզբ են առնում ուշ 1990–ականներից՝ մի շարք գործոնների, այդ թվում՝ բոլոր երեք համաշխարհային կոնֆերանսների[4] և Եվրաինտեգրման հեռանկարների[5] համակցման շնորհիվ:

Հայաստանի կառավարությունը որոշակի քայլեր է ձեռնարկել տվյալ հիմնահարցի շուրջ վարվող ազգային քաղաքականությունը գենդերային հավասարության սկզբունքին և միջազգային պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

---

[1] ՀՀ Սահմանադրության Հոդված 14.1. «Բոլորը հավասար են օրենքի առաջ: Ցանկացած խտրականություն՝ հիմնված սեռի, ազգային պատկանելության, գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի կամ դավանանքի, քաղաքական կան ցանկացած այլ տեսակետի, ազգային փոքրամասնության անդամակցելու, գույքի, ծագման, հաշմանդամության, տարիքի կամ այլ անձնական կամ սոցիալական հանգամանքների վրա արգելվում է»:

[2] ՀՀ Սամնանադրություն, Հոդված 30 «Տղամարդկանց և կանանց իրավահավասարություն, համաձայն որի «Կանայք և սղամարդիկ պետք է ունենան հավասար իրավունքներ»:

[3] Ազգային սահմանադրությունը սահմանել է քրեական պատասխանատվություն սեռային և բազմաթիվ այլ տեսակի խտրականության կիրառման դեպքում: Մասնավորապես՝ ՀՀ Քրեական Օրենսգրքի 143 Հոդվածի համաձայն («Քաղաքացիների իրավահավահավասարության իրավախախտում») Գլուխ 19-ում («Հանցագործություններ սահմանադրությամբ սահմանված մարդու իրավունքների և քաղաքացիական ազատությունների դեմ), նման գործողությունները պատժվելու են տուգանքի տեսքով կամ մինչև 2, պաշտոնատար անձանց դեպքում՝ մինչև 3 տարի ազատազրկմամբ:

[4] Վիեննայում կայացած մարդու իրավունքների պաշտպանությանը նվիրված կոնֆերանսը (1993), Կահիրեյում կայացած բնակչությանն ու զարգացմանը նվիրված կոնֆերանսը (ICPD, 1994) և կանանց նվիրված -րդ համաշխարհային կոնֆերանսը (Պեկին, 1995) առանձնակիորեն կարևորեցին գենդերային հավասարության հիմնահարցը և դրան հասնելու համապատասխան քաղաքականության մշակումը:

[5] Եվրոպական երկրների համար տղամարդկանց և կանանց հավասարությունը ոչ միայն մարդու իրավունքների սկզբունք է, այլև դեմոկրատիայի պարտադիր պայման, պլյուրալիստական դեմոկրատիայի հիմնարար չափորոշիչ և սոցիալական արդարության հրամայական, ինչպես նաև երկարատև զարգացման նախապայման: Օրինակ, Եվրոխորհրդի բազմաթիվ դեկլարացիաներ սահմանում են, որ գենդերային հավասարությունը ենթադրում է կանանց և տղամարդկանց հավասար ներգրավվածություն, լիազորություններ, պատասխանատվություն և մասնակցություն հասարակական և անձնական կյանքի բոլոր ոլորտներում» և պահանջում ջանքերի մեկտեղում սեռային խտրականության, օտարման և գենդերային կարծրատիպերի դեմ պայքարում *Տղամարդկանց և կանանց իրավահավասարության հռչակագիր* (Նախախարների կոմիտե, 16 նոյեմբերի, 1988); *Տղամարդկանց և կանանց իրավահավասարության՝որպես դեմոկրատիայի հիմնարար չափորոշիչի հռչակագիր* (4th Եվրոպական նախարարական կոնֆերանս՝ նվիրված տղամարդկանց և կանանց իրավահավասարությանը, Ստամբուլ, 13-14 Նոյեմբերի 1997, Գենդերային հավասարությունը որպես հասարակության վերափոխման հիմնահարց (Հռչակագիր և գործողության ծրագիր՝ ընդունված 5րդ Եվրոպական նախարարական կոնֆերանսին՝ նվիրված կանանց և տղամարդկանց հավասարությանը (Սկոպիե, 22-23 հունվար 2003) և ***Հռչակագիր՝ Դարձնելով գենդերային հավասարությունն իրականություն*** (Նախարարների կոմիտեի 119 րդ նստաշրջան, Մադրիդ, 12 Մայիսի 2009)

Այսպես՝ Գործողության Պեկինյան հարթակը, ինչպես նաև բազմաթիվ այլ միջազգային փաստաթղթեր հիմք են ծառայել հայաստանում գենդերային հավասարության ապահովմանը միտված մի շարք ազգային փաստաթղթերի ստեղծմանը, հիմնականում ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգը, որը կոչված է նպաստելու հասարակական- քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր ոլորտների և կառավարման բոլոր մակարդակների քաղաքականության մեջ գենդերային չափման՝ որպես հասարակության կայուն, ժողովրդավարական զարգացման և ժողովրդավարական, բաց, սոցիալապես արդար քաղաքացիական հասարակության ու իրավական պետության կայացման ապահովման միջոցի ներառմանը: Գենդերային քաղաքականության իրականացման և անհավասար իրավունքների ու հնարավորությունների հիմնախնդրին լուծում տալու համար առանձնակի կարևորություն էր ստացել Հայաստանի Հանրապետության կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ապահովման մասին օրենքը[6], որն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2013 թվականի մայիսի 20-ին և ՀՀ նախագահի ստորագրությամբ օրինական ուժ ստացել 2013 թվականի հունիսի 11-ին: Վերջին տարիներին ընդունված փաստաթղթերի թվում են «2011-2015թթ. Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության ռազմավարական իրականացման գործողությունների ծրագիրը»[7], և «2011-2015թթ. Ընդդեմ գենդերային բռնության ազգային գործողությունների ծրագիրը»: Ներկայումս Հայաստանի Կառավարությունը 2017-2021թթ. Գենդերային հավասարության ռազմավարության և հետագա տարիների գործողությունների նախագծի մշակման փուլում է:

Հայաստանում գենդերային իրավիճակի ուսումնասիրությունները բազմիցս երևան են հանել այն փաստը, որ Հայաստանի սոցիալական և պետական համակարգը դեռևս «գենդերային զգայուն» չէ[8]: Կանանց առաջընթացին ու գենդերային հավասարության ձեռքբերմանը խոչընդոտում են լայնորեն տարածված գենդերային բացասական կարծրատիպերը և կանանց նկատմամբ վիրավորական/ նվաստացուցիչ ավանդական բռնություններ (առաջին հերթին՝ գենդերային բռնությունը, տղայի

[6] http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=4761
[7] http://www.un.am/res/Gender%20TG%20docs/national/2011-2015_Gender%20Policy_NAP-Eng.pdf
[8] Օրինակ՝ Հայաստանում գենդերային հինահարցի զեկույց, քաղաք Մանդալույոնգ, Ֆիլիպիններ Ասիական զարգացման բանկ, 2015. 2011-2015թթ. Գենդերային քաղաքականության ռազմավարական պլանի և 2011-2015թթ. Ընդդեմ գենդերային բռնության ազգային գործողության պլանի իրականացման հաշվետվություն. Երևան, ՄԱԶԾ, ՄԱԲՀ, ՄԱՄՀ/UNICEF, 2015 (Հայաստանում).

նախընտրությամբ սեռի հատկանիշով հղիության ընդհատումները), որոնք դեռ իշխում են հասարակության մեջ.

Ցուցիչ	Արժեք/կարգ	Տարեթիվ	Աղբյուր
Մարդկային զարգացման ցուցիչ	85 / 190	2015	2015 մարդկային զարգացման զեկույց http://hdr.undp.org/en/data
Սոցիալական հաստատությունների և գենդերային ցուցիչ	0.236	2014	http://www.genderindex.org/sites/default/files/docs/BrochureSIGI2015.pdf
Գենդերային անհավասարության ցուցիչ	62/122	2015	http://hdr.undp.org/sites/default/files/hdr_2015_statistical_annex.pdf
Գենդերային արդարության ցուցիչ	61/168	2012	http://www.socialwatch.org/node/14367
Կանաց տնտեսական հնարավորության ցուցիչ	57/113	2015	http://chartsbin.com/view/33189
Գենդերային «ճեղքվածքի» համաշխարհային ցուցիչ	105/145	2015	http://reports.weforum.org/global-gender-gap-report-2015/economies/#economy=ARM

Ընթացիկ իրավիճակն առավել հստակ է արտացոլված Գենդերային ճեղքվածքի, Գենդերային անհավասարության և Գենդերային արդարությաբ ցուցիչներում: Ավելին, վերոնշյալ ցուցիչների ամենամյա վերլուծությունն արձանագրում է բացասական դինամիկա և ցույց է տալիս, որ իրադրությունն անկասելիորեն վատթարացել է վերջին մի քանի տարիների ընթացքում.

Ցուցիչ	Արժեք/կարգ	Տարեթիվ	Աղբյուր
Սեռերի հարաբերակցությունը ծնվելիս (տ/կ)	0.86	2015	http://reports.weforum.org/global-gender-gap-report-2015/economies/#economy=ARM
Կյանքի տևողության հարաբերակցությունը (կ/տ)	78.6/70.9	2015	http://hdr.undp.org/sites/default/files/hdr_2015_statistical_annex.pdf
Սահմանված համախառն ազգային եկամուտն առ անձ (կ/տ)	6,042 - 10,089 (PPP $)	2015	http://hdr.undp.org/sites/default/files/hdr_2015_statistical_annex.pdf
Կանանց և տղամարդկանց որոշումների ընդունումը ((կ/տ հարաբերակցությունը) Ազգային ժողով Կառավարություն	 0.12 0.13	2015	http://reports.weforum.org/global-gender-gap-report-2015/economies/#economy=ARM
Տնտեսապես ակտիվ կանայք և տղամարդիկ	55,2% (Կ); 73,2% (Տ)	2015	http://www.armstat.am/file/article/kanajq_ev_txamardik.pdf

Կրթություն **Գրագիտության համամասնությունը/հարաբերակցությունը (իգ./ար.)** **Ներգրավման հարաբերակցությունը** **տարրական** **միջնակարգ** **բարձրագույն**	1.0 1.10 1.16 1.51	2015	http://reports.weforum.org/global-gender-gap-report-2015/economies/#economy=ARM
Մագիստրոսներ	2014-ին մագիստրոսի որակավորում ստացած շրջանավարտների 67.3% կանայք էին և 32.7% տղամարդիկ	2015	http://www.armstat.am/file/article/kanajq_ev_txamardik.pdf
Գիտությունների թեկնածուի գիտական աստիճան	2014-ին գիտական աստիճան ստացած անձանց 36.3%-ը կանայք էին և 63.7% -ը՝ տղամարդիկ	2015	http://www.armstat.am/file/article/kanajq_ev_txamardik.pdf

Աղյուսակում ներկայացված տվյալները հստակորեն ամրագրում են կանանց անհավասար դիրքը հասարակական, քաղաքական և տնտեսական կյանքի շատ ոլորտներում և որ նրանց ներուժը լիարժեք չի օգտագործվում և որ Հայաստանում նրանք երբեմն անհաղորդ են որոշումների կայացման գործընթացին:

Քաղաքական կյանքում կանանց ոչ լիարժեք ներկայացվածությանը, նրանց տնտեսական ապահովվածության բացակայությանը զուգընթաց աշխատաշուկայում ուղղահայաց և հորիզոնական խտրարարությունը, ինչպես նաև մի շարք այլ ոլորտներում գենդերային անհավասարակշռությունը դա այն խնդիրներ են, որոնք միաժամանակ արտացոլում են գենդերային խտրականության արմատական պատճառները, որոնք դեռ ենթակա են վերացման:

Գենդերային հավասարության ապահովումն անհնար է առանց տղամարդկանց ակտիվ ներգրավման և մասնակցության, որն ածանցված է նրանց կողմից ադեկվատ արժեքների և նորմերի յուրացման, պահպանման և իրացման վրա: Գենդերային

հավասարության և արդարության արժեքների և նորմերի պահպանումն արտացոլվում է առնականության, գենդերային նորմերի, միջանձնային հարաբերությունների, գենդերային բռնության, սեռականության, վերարտադրողական առողջության, տնային պարտականությունների հավասար բաշխման և երեխաների խնամքի հարցերում նրանց վերաբերմունքի և գործողությունների մեջ: Հետազոտությունները արդյունավետ միջոց են պարզելու, թե արդյոք գենդերային հավասարության նորմերը պահպանվում են տղամարդկանց և կանանց կողմից և որքանով: Հետևաբար՝ սույն հետազոտության հիմնանպատակն էր պարզել իրական պատկերը մերօրյա Հայաստանում՝ ուշադրությունը սևեռելով տղամարդկանց և կանանց կարծիքներին սույն խնդրի առնչությամբ:

Սույն զեկույցը ներկայացնում է համազգային ընգրկում ունեցող հետազոտության արդյունքները տղամարդկանց և կանանց տրամադրվածության, դիրքորոշումների և գործողությունների վերաբերյալ՝ առնականության, գենդերային նորմերի, գենդերային բռնության /GBV/, ինտիմ հարաբերությունների և ամուսնության, սեռական հարաբերությունների, առողջության և տնային պարտականությունների վերաբերյալ Հայաստանում: Հետազոտությունն անցկացվել է IMAGES[9] հետազոտական նախաձեռնության ընդհանուր նպատակին համապատասխան:

Վերոնշյալ դիրքորոշումներին և գործողություններին վերաբերող վստահելի և ամբողջական տվյալների հավաքագրումը որպես այդպիսին կարևոր է, քանի որ այն տալիս է ընթացիկ իրադրության իրատեսական պատկերը, և, որն ավելի կարևոր է, տվյալները ծառայում են որպես առաջընթացի չափման ուղենիշներ և հիմք են ստեղծում թիրախային և ավելի արդյունավետ գենդերային հավասարության քաղաքականության և ռազմավարությունների մշակման համար:

[9] ՏԳՀՄՀ/ IMAGES –Տղամարդկանց և գենդերային հավասարության միջազգային հետազոտություն - համակողմանի հարցաշար է ընտանիքում տղամարդկանց վերաբերմունքի և վարքի վերաբերյալ՝ կանանց կարծիքի և տրամադրած իրզեկության հետ միասին, նաև՝ գենդերային հավասարությանն առնչվող բազմազան թեմաների շուրջ: Թեմաներն ընդգրկում են գենդերային բռնությունը, առողջությունն ու դրա պահպանմանը միտված միջոցառումները, տնային պարտականությունների բաշխումը, տղամարդու՝ որպես հոր մասնակցությանը երեխաների խնամքին , սեռի և գենդերային քաղաքականությունը,գործարքային սեռական հարաբերությունը, հանցագործ վարքի մասին տղամարդկանց հաղորդումները և կյանքի որակը: http://www.icrw.org/publications/international-men-and-gender-equality-survey-images

Քանի որ սույն հետազոտության կենտրոնում նաև առնականությունն է, հարկ է նախնառաջ սահմանել առնականության հասկացությունը, որի վրա և հիմնված է սույն հետազոտությունը: Թեև կենսաբանական գործոններն ու հոգեբանական բնութագրերը տղամարդկային ինքնությանը ներհատուկ հատկանիշներ են, առնականությունն առաջին հերթին սոցիալ-մշակութային երևույթ է, տղամարդկային ինքնությանն առնչվող սոցիալական սպասումների և հավատալիքների, ինչպես նաև այն վարքագծի նորմերի համակցություն, որոնք նախանշում են տղաներին և տղամարդկանց վարքի նորմերը, որոնք կնպաստեն վերջիններիս սոցիալականացմանը և ինքնության ձևավորմանը:

Հետազոտության մեթոդաբանություն

Ուսումնասիրությունը հիմնված է ողջ ազգաբնակչության քանականական հետազոտության վրա. ընտրանքի ծավալը կազմում են 18-59 տարեկան 1,617 հարցվածներ (767 տղամարդ և 850 կին) Երևան քաղաքից, Հայաստանի բոլոր 10 մարզերի այլ քաղաքային (22) և գյուղական (36) համայնքներից՝ ազգային ներկայացուցչական տվյալների ապահովման նպատակով: Ընտրանքային շրջանակը ձևավորվել է բազմաստիճան քվոտային ընտրանքի միջոցով: Վստահելիության մակարդակը կազմում է 95%, իսկ վստահելիության միջակայքը՝ ± 2.45:

Հետազոտության ընթացքում կիրառվել է երեք հարցաշար: Հիմնական հարցաշարը Տղամարդկանց և գենդերային հավասարության միջազգային հետազոտության (IMAGES) ընթացքում կիրառված տնային տնտեսությունների համակողմանի հարցաշարի տարբերակ է, որն անդրադառնում է գենդերային հավասարության նկատմամբ կանանց և տղամարդկանց վերաբերմունքին և փորձին առնչվող մի շարք հիմնախնդիրների, և որը ձևափոխվել ու համապատասխանեցվել է հայկական իրականությանն ու առաջնահերթություններին: Այն ներառում է 272 հարց՝ գենդերային հիմնախնդիրների լայն ընդգրկումով (առնականություն, գենդերային նորմեր, միջանձնային հարաբերություններ, գենդերային բռնություն, սեռականություն, վերարտադրողական առողջություն, տնային պարտականությունների և երեխայի խնամքի բաշխում և այլն), և *գենդերային վարքին բնորոշ օրինաչափություններ:* Թեմաները ներառում էին՝

- գենդերային հավասարության նկատմամբ վերաբերմունք և իրազեկվածություն,

- կանանց դեմ բռնություն. տարածվածությունը, խոցելիությունը և վարքագիծը,
- բռնության նկատմամբ վերաբերմունք,
- տղամարդու դերն ընտանիքում,
- ամուսնությունից բավարարվածություն,
- առողջապահական խնդիրներ,
- սեռական և վերարտադրողական առողջություն և
- սեռականություն, սեռական և վերարտադրողական առողջության և դրան առնչվող խնդիրների նկատմամբ վերաբերմունք:

Հիմնական հարցաշարին հավելվել են նաև տղամարդկանց և կանանց համար առանձին երկու առանձին վարվող հարցաշարեր, որոնք նպատակամղված են առանցքային հարցերի ավելի հիմնարար ուսումնասիրմանը և համապատասխան տվյալների համեմատական վերլուծության ապահովմանը: Տղամարդկանց հարցաշարը կազմված էր 31, իսկ կանանց համար նախատեսված հարցաշարը՝ 20 հարցից:

«Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական հետազոտությունների ինստիտուտը (IPSC) դաշտային աշխատանքներ էր իրականացրել 2015–2016 թթ. դեկտեմբեր–հունվար ամիսներին՝ տվյալների մուտքագրում, որակի վերահսկում, և «SPSS»-ում տվյալների բազա էր ստեղծել 2016 թ. փետրվար-մարտ ամիսներին:

ՄԱԲՀ գենդերային փորձագետները տվյալների վերլուծություն էին կատարել և գրել հաշվետվություն 2016 թ. ապրիլ-հուլիս ամիսներին:

Հետազոտության մասնակիցների ազգագրական պատկերը հետևյալն է.

Դեմոգրաֆիկ բնութագրիչ	ՏՂԱՄԱՐԴԻԿ. N=767 100%		ԿԱՆԱՅՔ N=850 100%	
	N	%	N	%
ՏԱՐԻՔԸ				
18-24	153	19.9%	133	15.6%
25-34	209	27.2%	252	29.6%
35-49	250	32.6%	291	34.2%
50-59	155	20.2%	174	20.5%
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ				
Տարրական կամ ավելի ցածր	0	0.0%	1	0.1%
Հիմնական	32	4.2%	14	1.6%
Միջնակարգ	403	52.5%	324	38.1%
Միջին մասնագիտական	126	16.4%	245	28.8%

Բարձրագույն	206	26.9%	266	31.3%
ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ				
Գրանցված ամուսնություն	408	53.2%	533	62.7%
Չգրանցված ամուսնություն	83	10.8%	95	11.2%
Ոչ պաշտոնական միություն (Ապրում է զուգընկերոջ հետ, ամուսնացած չեն)	9	1.2%	9	1.1%
Ընկեր/ընկերուհի (չեն վարում համատեղ կյանք)	28	3.7%	9	1.1%
Չամուսնացած	213	27.8%	124	14.6%
Բաժանված/ ամուսնալուծված	24	3.1%	50	5.9%
Այրի	2	0.3%	30	3.5%
ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ				
Միայնակ	15	2.0%	15	1.8%
2	50	6.5%	71	8.4%
3	132	17.2%	121	14.2%
4	188	24.5%	216	25.4%
5	161	21.0%	157	18.5%
6	115	15.0%	143	16.8%
7	71	9.3%	69	8.1%
8-14	34	4.5%	54	6.3%
Չկա պատասխան	1	0.1%	4	0.5%
ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ				
Երևան	258	33.6%	312	36.7%
Այլ քաղաքային բնակավայր	226	29.5%	246	28.9%
Գյուղական բնակավայր	283	36.9%	292	34.4%
ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ				
Երբեք չի աշխատել	40	5.2%	171	20.1%
Ուսանող	24	3.1%	48	5.6%
Գործազուրկ	249	32.5%	356	41.9%
Գրանցված աշխատող	224	29.2%	185	21.8%
Չգրանցված աշխատող	227	29.6%	68	8.0%
Սովորում և աշխատում է	2	0.3%	1	0.1%
Երեխայի խնամքի կամ այլ տեսակի արձակուրդում է	1	0.1%	19	2.2%
Պատասխան չկա	0	0.0%	2	0.2%
ԿՐՈՆ				
Հայկական առաքելական եկեղեցի	726	94.7%	817	96.1%
Բողոքական	8	1.0%	11	1.3%
Կաթոլիկ	1	0.1%	2	0.2%
Այլ	7	0.9%	5	0.6%
Անկրոն է (աթեիստ/ագնոստիկ)	24	3.1%	14	1.6%
Չկա պատասխան	1	0.1%	1	0.1%
ԱՄՍԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏԸ				
40,000 ՀՀ դրամից պակաս	60	7.8%	72	8.5%
41,000-120,000 ՀՀ դրամ	222	28.9%	174	20.5%

121,000-220,000 ՀՀ դրամ	144	18.8%	57	6.7%
221,000-400,000 ՀՀ դրամ	48	6.3%	12	1.4%
Ավելի քան 401,000 ՀՀ դրամ	13	1.7%	2	0.2%
Եկամուտ չունի	221	28.8%	515	60.6%
Չկա պատասխան	59	7.7%	18	2.1%
ԸՆԴԱՄԵՆԸ	767	100.0%	850	100.0%

Հետազոտության արդյունքները

Ուսումնասիրության արդյունքները հստակորեն ցույց են տալիս, որ հայրիշխանական և «ավանդական» խստահայաց սոցիալական նորմերը և առնականության, կանացիության, գենդերային հավասարության, սեռականության, ընտանիքի այլ անդամների, այդ թվում՝ երեխաների հետ հարաբերությունների, տնային պարտականությունների բաշխման, ինչպես նաև կանանց դեմ բռնության, սեռական զուգընկերոջ և հասակակիցների կողմից բռնության ընկալումները դեռևս լայնատարած են հայ հասարակության շրջանում:

Գենդերային հավասարության նկատմամբ վերաբերմունքը և իրազեկվածությունը: Կանանց իրավունքների և գենդերային հավասարության, գենդերային հավասարության մասին օրենքի իմացության և կանանց դեմ բռնությունների կանխարգելման մասին օրենքի նկատմամբ վերաբերմունքի հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ քարոզչությունը, հանրային իրազեկության բարձրացումը և տեղեկատվական քարոզարշավները, ինչպես նաև կրթական ջանքերը միշտ չէ, որ արդյունավետ են և/կամ հասու չեն հայ ազգաբնակչության որոշ սեգմենտներին: Տվյալները նաև ակնարկում են պատրիարխալ հոգեկերտվածքի հարատևումը կամ նույնիսկ որոշակի վերարտադրումը:

Սոցիալական նորմերի և արժեքների բախման համատեքստում զարմանալի չէ, որ ոչ բոլոր տղամարդիկ են գենդերային զգայուն կամ արդար: Սա վերաբերում է նաև կանանց: Ավելի շուտ՝ հարցվածների մեծ մասը երբեմն իրարամերժ տեսակետներ է հայտնում՝ երևան հանելով հետևողական մոտեցման և կայուն հոգեկերտվածքի բացակայություն, իսկ գենդերային կարծրատիպերը լայն տարածում են գտնում:

Պնդում	Պնդումների հետ համաձայն հարցվածների	Տղամարդ հարցվածների տոկոսը	Կին հարցվածների տոկոսը

	ընդհանուր տոկոսը		
Երբ կանայք իրավունքներ են ստանում, նրանք խլում են տղամարդկանց իրավունքները	12.9%	18.2%	8.2%
Կանանց իրավունքներ շնորհելը տղամարդկանց իրավունքների ոտնահարում է ենթադրում	13.1%	17.5%	9.1%
Գենդերային հավասարությունն արդեն զգալի առաջընթաց է գրանցել	86.8%	83.3%	89.9%
Գենդերային հավասարության հիմնականում ապահովված է	63.3%	57.0%	69.0%
Գենդերային հավասարության հասնելուն միտված ջանքերը ձեռնտու են հիմնականում ապահովված մարդկանց	47.5%	48.5%	46.6%
Գենդերային հավասարության խթանման ուղղությամբ ավելի շատ է պետք աշխատել	51.3%	44.2%	57.7%
Տղամարդիկ ավելի լավ քաղաքական գործիչներ են դառնում, քան կանայք	58.3%	67.1%	50.2%
Կանայք պետք է քաղաքականությունը զիջեն տղամարդկանց	42.5%	48.4%	37.3%
Կանայք չափազանց էմոցիոնալ են իրենց համայնքները ղեկավարելու համար	69.7%	73.1%	66.7%
Կանայք պետք է քաղաքական պաշտոններում ընտրվելիս տղամարդկանց հետ հավասար հնարավորություններ ունենան	76.7%	70.3%	82.6%
Միևնույն որակավորումներով կինը կարող է նույնքան լավ աշխատել, որքան տղամարդը	81.7%	71.7%	90.7%

Միևնույն ժամանակ, ընդհանուր առմամբ, հարցվածները կողմ են կանանց քաղաքական մասնակցությանը և ակտիվիզմին և՛ հանրային կառավարման ոլորտում, և՛ տեղական ինքնակառավարման մեջ (63.3%), և՛ բիզնեսում (65.9%) կանանց դիրքը երաշխավորող քվոտաներին, և ընդունում են կանանց ղեկավարման ներուժը (81.7%)։

Հարցվածների ճնշող մեծամասնությունը (86.8%) համոզված է, որ գենդերային հավասարության հասնելու հարցում անօրինակ առաջընթաց է գրանցվել, և գենդերային հավասարության հիմնահարցին արդեն գրեթե լիարժեք լուծում է տրվել։ Այս գերլավատեսական պնդումն ակնհայտաբար հեռու է ներկայիս Հայաստանի իրականությունից։

Հարցվածների կեսից քիչն են ճիշտ պատասխանել Գենդերային հավասարության մասին օրենքի գոյությանը վերաբերող հարցին (43.2%), մինչդեռ 36.1%-ը կարծում էր, որ նման օրենք գոյություն չունի, իսկ յուրաքանչյուր 5-րդ հարցված տեղյակ չէր։ Շատ ավելի անսպասելի էին ԿԴԲ կանխարգելման մասին օրենքի վերաբերյալ հարցին տված սխալ պատասխանները հարցվածների մեծամասնության կողմից։ Թեև հանրային թեժ քննարկումներ էին ընթացել, Օրենքի նախագիծն այդպես էլ չդրվեց երկրի Ազգային ժողովի քննարկման։ Քանի որ Օրենքի հիմնախնդիրը լայնորեն լուսաբանվեց լրատվամիջոցների կողմից, ամենայն հավանականությամբ, սխալ պատասխան տված

62.7% հարցվածները վերհիշել էին լրատվական որոշ ռեպորտաժներ և կարծել, թե Օրենքն ընդունվել է: Հարցվածների ընդամենը մեկ քառորդն էր ճիշտ պատասխանել (26.6%), իսկ 10.5%-ը տեղյակ չէր:

Ըստ հարցվաշների սեռի տարանջատված պատասխանները ցույց են տալիս, որ տղամարդիկ ավելի լավ են իրազեկված վերոհիշյալ օրենքների մասին, քան կանայք: Թեպետև գենդերային հավասարության մասին օրենքին վերաբերող հարցին ճիշտ և սխալ պատասխաններ տված տղամարդ և կին հարցվածների մասնաբաժինների տարբերությունը չնչին է, այն զգալի է ԿԴԲ կանխարգելման մասին օրենքի պարագայում:

Կանանց դեմ բռնություն. տարածվածություն, խոցելիություն և վարքագծեր: Տարածվածությունը հավաստող տվյալները ցույց են տալիս, որ կանանց և սեռական զուգընկերների դեմ բռնության հիմնախնդիրը մնում է չլուծված և վիճահարույց՝ արտացոլելով դեմոկրատական գենդերային մշակույթի ձևավորման փորձի ձախողումը, որի հիմնարար սկզբունքներից են բռնության և խտրականության բացակայությունը, գենդերային հավասարությունը և արդարությունը:

Տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր հոգեբանական բռնության են ենթարկել իրենց կին սեռական զուգընկերոջը	***53.3%***	*Կին հարցվածների տոկոսը, ովքեր հոգեբանական բռնության են ենթարկվել իրենց տղամարդ սեռական զուգընկերոջ կողմից*	***45.9%***

Տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր տնտեսական բռնության են ենթարկել իրենց կին սեռական զուգընկերոջը	***20.8%***	*Կին հարցվածների տոկոսը, ովքեր տնտեսական բռնության են ենթարկվել իրենց տղամարդ սեռական զուգընկերոջ կողմից*	***21.3%***

Տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր ֆիզիկական բռնության են ենթարկել իրենց կին սեռական զուգընկերոջը	***17.4%***	*Կին հարցվածների տոկոսը, ովքեր ֆիզիկական բռնության են ենթարկվել իրենց տղամարդ սեռական զուգընկերոջ կողմից*	***12.5%***

Տղամարդ սեռական զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության ենթարկված կանանց տոկոսը՝ ըստ հիմնական հարցաշարի	***12.5%***	*Նույնը՝ ըստ ինքնուրույն վարվող հարցաշարի*	***22.4%***

Սեռական բռնության տոկոսը (տղամարդկանց կողմից գործադրված և հաղորդված)	***14.6%***

Ենթարկվել են առնվազն մեկ տեսակի բռության (Կանանց տոկոսը, ովքեր ինքնուրույն վարվող հարցաշարի միջոցով հայտնում են վերջին 3 ամիսների ընթացքում տանից դուրս միջին ծանրության կամ ծանր ֆիզիկական բռնության ենթարկվելու մասին)	***3.7%***

Կանանց տոկոսը, ովքեր գործարքային սեռական հարաբերություն են ունեցել	***6.6%***

Տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր հաղորդել են իրենց վերահսկողական վարքի մասին	***95.5%***

Խոցելիությունը հաստատապես նպաստել է պատրիարխալ առնականությանը, որը շեշտը դնում է հատկապես բռնության վրա: Ստորև ներկայացված տվյալները մտահոգության տեղիք են տալիս.

Տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր մանկության ընթացքում ֆիզիկական բռնության են ենթարկվել (տարածվածությունը կյանքի ընթացքում)	***49.3%***

Տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր մանկության ընթացքում ֆիզիկական բռնության են ենթարկվել (մինչև 18 տարեկանը)	***27.2%***

Տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր մանկության ընթացքում հոգեբանական բռնության են ենթարկվել	***10.9%***

Տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր մանկության ընթացքում սեռական բռնության են ենթարկվել	***3.5%***

Տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր մանկության ընթացքում արհամարհված կամ լքված են եղել	***0.9%***

Բռնության նկատմամբ վերաբերմունքը: Ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալները ցույց են տալիս, որ զգալի տոկոս են կազմում այն հայ տղամարդիկ, ովքեր դեռ հավատարիմ են ավանդական և մշակութային նորմերին, որոնք, սակայն, ըստ էության, պատրիարխալ կարծրատիպեր են: Կախված կին սեռական զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության պատճառից՝ ընտրանքի տղամարդ հարցվածների մեկ երրորդից կամ նույնիսկ կեսից ավելին գենդերային հիմնախնդրի առնչությամբ անարդար են: Նրանք արդարացնում են սեռական զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության գործադրումը: Յուրաքանչյուր 5 հարցվածներից չորսը համաձայն են բռնաբարությունն արդարացնող առնվազն մեկ պնդման հետ, մինչդեռ հարցվածների մոտ մեկ երրորդից գրեթե երկու երրորդը հակված են առանձին վերցված հիմնավորումներից մեկի հիման վրա զոհին մեղադրելու:

Ըստ հարցվածների սեռի տարանջատված պատասխանները ցույց են տալիս, որ չափազանց բարձր է բռնաբարությունն արդարացնող տղամարդ, ինչպես և կին հարցվածների տոկոսը (համապատասխանաբար 86.2% և 78.9%):

Պնդում	Պնդումների հետ համաձայն հարցվածների ընդհանուր տոկոսը	Տղամարդ հարցվածների տոկոսը	Կին հարցվածների տոկոսը

Կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն ընտանիքի միասնության	**35.7%**	44.6%	27.8%
Որոշ դեպքերում կինը ծեծի է արժանի	**27.7%**	35.2%	21.0%
Եթե կինը տղամարդուն դավաճանում է, ապա վերջինս կարող է նրան խփել	**55.4%**	60.9%	50.5%
Տղամարդը կարող է խփել կնոջը, եթե նա հրաժարվում է իր հետ սեռական հարաբերություն ունենալ	**5.1%**	5.8%	4.5%
Երբ կին է բռնաբարվում, սովորաբար նա է ինչ-որ բան արել՝ իրեն դնելով այդ իրադրության մեջ	**32.2%**	40.9%	24.2%
Բռնաբարության որոշ դեպքերում կանայք իրականում ուզում են, որ դա տեղի ունենա	**35.8%**	44.0%	28.6%
Եթե կինը ֆիզիկապես չի հակադարձում, ապա հնարավոր չէ հաստատապես պնդել, որ տեղի ունեցածը բռնաբարություն է	**59.8%**	61.3%	58.4%
Ցանկացած բռնաբարության դեպքում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք զոհը պատահական սեռական կապեր կամ վատ համբավ չի ունեցել	**62.7%**	64.4%	61.0%

Տղամարդն ընտանիքում: Որոշումների կայացումն ամենաուշագրավ խնդիրներից է ընտանիքում գենդերային դերերի ուսումնասիրության դիտանկյունից և առնականության ու կանացիության ոլորտներում փոփոխությունների առումով: Գենդերային բուրգը հայկական ընտանիքի անբաժան մասն է եղել: Բազմասերունդ ընտանիքում կար հստակ կառուցված հիերարխիա՝ հորիզոնական և ուղղահայաց կապերով:

Այսօր ընտանիքների մեծ մասը, ըստ էության, միակազմ են. հորիզոնական և ուղղահայաց կապերը, որոնք բնորոշ են մեծ ընտանիքին, մեծամասամբ վերացել են: Այս առումով տեղի են ունեցել արմատական փոփոխություններ, քանի որ կանայք մտել են հանրային ոլորտ: Այս տեսանկյունից հետաքրքրական է ուսումնասիրել փոփոխությունների խորությունը և գնահատել հնարավոր զարգացումները:

Հարկ է նշել, որ գրեթե բոլոր դեպքերում, կապված տնային ծախսերի, մեծ ներդրումների, ընկերների և բարեկամների հետ հարաբերությունների, տանից դուրս աշխատանքի և ազատ ժամանակ հանգստի կազմակերպման հետ, հարցվածների մեծ մասը նշել է, որ որոշումները համատեղ են կայացվել:

Առնականության ընկալման կարևոր ասպեկտ է հանդիսանում երեխայի խնամքի հարցում հոր՝ իբրև ծնողի ներգրավվածությունը: Հայրությանը նվիրված մի շարք պատմական և սոցիոլոգիական ուսումնասիրություններ և ժամանակի բյուջեի

ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ վերջին հարյուրամյակի ընթացքում հայրության ուղեցույցներն ու փորձն անընդհատ փոխվում են: Հայրերը ավելի ու ավելի են ներգրավվում երեխայի խնամքի ու կրթության մեջ:

Ընդհանուր առմամբ, հետազոտության մասնակից տղամարդիկ կարծում են, որ իրենց շփումը երեխաների հետ կայուն է և կախված չէ ամուսնության մեջ իրենց զուգընկերների հետ հարաբերություններից: Այսպես՝ հարցվածների 76%-ը համաձայն չեն հետևյալ պնդման հետ. «Վախենում եմ, որ կկորցնեմ կապը երեխաներիս հետ, եթե բաժանվեմ»: Չնայած վերոնշյալին՝ հարցվածների 85%-ն ընդունում է, որ իրենց դերակատարումը երեխայի խնամքի հարցում ընդամենը օժանդակ է («Ես երեխաներիս հոգածության մեջ օգնականի դեր եմ կատարում») և սահմանափակվում է մատակարարողի պարտականությամբ (89.9%): Տղամարդ հարցվածների մոտավորապես կեսը (54.8%) չափազանց քիչ ժամանակ է տրամադրում երեխաներին աշխատանքային գերծանրաբեռնվածության պատճառով:

Ըստ հասարակությունում իշխող գենդերային կարծրատիպերի՝ տնային գործերը, որպես կանոն, չեն համարվում տղամարդու գործ: Նույնիսկ հաշվի առնելով այն փաստը, որ տնային գործերը մասնավոր ոլորտի մի մաս են՝ դրանք հաճախ ղեկավարվում են հանրային ոլորտում գոյություն ունեցող գենդերային կարծրատիպերով:

Հետազոտությունը ցույց է տվել, որ ամուսնական զույգը շատ քիչ աշխատանք է միասին կատարում, այդ թվում՝ միայն սննդամթերք գնելը (38.1%) և կոմունալ ծախսերի վճարումը (21.2%), իսկ մնացած տնային պարտականությունները, որպես կանոն, բաշխված են զույգի միջև:

Տնային պարտականություններում մասնակցություն ցուցաբերած տղամարդ հարցվածների տոկոսը	
Լվացք /շորեր լվանալը	3.2%
Տան վերանորոգումը	68.2%
Սննդի գնումը	17.7%
Տան մաքրումը	3.2%
Լոգասենյակի/ զուգարանի մաքրումը	3.0%
Կերակուր պատրաստելը	3.3%

Վարձավճարների մուծումը	**36.5%**

Բավարարվածությունը ամուսնությունից: Սույն հետազոտությունն ուսումնասիրում է նաև սեռերի միջև հարաբերությունների բնույթը ամուսնությունից գոհ լինելու համատեքստում: Տղամարդ (84.1%) և կին (82.5%) հարցվածների մեծամասնությունը դրական են գնահատում իրենց զուգընկերների հետ ունեցած հարաբերությունները՝ *բավականին լավ* և *շատ լավ*: Սա հավանաբար վկայում է, որ նրանք ընտանեկան հարաբերություններում էմոցիոնալ հանգիստ են զգում, կամ որ իրենց զուգընկերոջ հետ կապված սպասումներն արդարացվել են: Այն հարցվածները, ովքեր բացասական որակումներ են տալիս զուգընկերների հետ իրենց հարաբերություններին (*ոչ այնքան լավ*, *բավականին վատ* և *վատ*), հիմնականում կանայք (14.7%) են, քան տղամարդիկ (9.6%):

Ամուսինների կողմից կիրառվող հաղթահարման ռազմավարությունները հանդիսանում են ևս մեկ գործոն, որն իր նպաստն է բերում ընտանեկան հարաբերություններից բավարարվածությանը: Սույն հետազոտության շրջանակներում այս փոխառնչակցությունը դրսևորվում է ընտանեկան խնդիրների համատեղ լուծման պարագայում:

Տղամարդկանց 75%-ը և կանանց 83%-ը նշում են, որ խնդիրները համատեղ են քննարկում: Ընդ որում՝ տղամարդկանց 61.7%-ը և կանանց 69%-ը վերջին անգամ դա արել են մեկ շաբաթ առաջ, իսկ մնացածն ավելի երկար ժամանակահատված են նշում՝ երկուսից վեց շաբաթ: Այս տվյալները փոխկապակցված են ընտանեկան հարաբերություններում բավարարվածության մակարդակի հետ և մատնացույց են անում այն փաստը, որ համատեղ որոշումների ընդունման գործոնը շատ ավելի կարևոր է կանանց, քան տղամարդկանց համար:

Հարկ է նշել, որ նույնիսկ այն տղամարդիկ, ովքեր ցանկանում են հարցերը իրենց զուգընկերոջ հետ միասին քննարկել, այն կարծրատիպային մտածողության կրողն են, որ իրենց խոսքն ավելի ծանրակշիռ է (83.8%):

Առողջապահական խնդիրներ: «Ճիշտ» տղամարդկային վարքի ստանդարտին համապատասխան՝ տղամարդիկ «իսկական տղամարդուց» սպասում են ուժի և

ղեկավարելու ունակությունների ցուցադրում, էմոցիոնալ զսպվածություն, հաջողության մրցավազք և շատ այլ բաներ։ Հեգեմոնիկ առնականությունը՝ որպես սոցիալ-մշակութային նորմատիվ կանոն, որոնց ձգտում են հասնել բոլոր տղամարդիկ, տղամարդկանց առողջությանը սպառնացող ամենամեծ ռիսկն է։ Խիզախ և կայացած մարդու կերպարը հաճախ կապված է հիվանդության կամ ցավի ախտանշանների ժխտման հետ, որոնք կարող են հանգեցնել, օրինակ, հիվանդության ախտորոշմանը միայն ավելի ուշ փուլերում։ Սրա հետևանքով տղամարդիկ հաճախ գերագնահատում են իրենց առողջական վիճակը և ամաչում են խոստովանել վատառողջ լինելու փաստը։ Առնականության թյուր մեկնաբանման հատկանիշներից է բուժօգնությունից հրաժարվելը՝ ի տարբերություն կանանց։ Սա չի առնչվում բացառապես առողջական վիճակի գնահատմանը և ոչ էլ բժիշկներին դիմելու հաճախականությանը, այլև բողոքների բնույթին, սեփական թուլություններն ընդունելուն, ախտանիշների և ինքնազգացողության նկարագրությանը և այլն։ Հետազոտության շրջանակներում ներկայացված տվյալներն իրական պատկերն են բացահայտում. տղամարդկանց 91.3%-ը իրենց առողջական վիճակը գնահատում են նորմալից՝ գերազանց, և ընդամենը 8.6% են այն որակում իբրև վատ կամ շատ վատ՝ նույնիսկ հաշվի առնելով այն փաստը, որ տղամարդ հարցվածների 53.7%-ը վերջին տարվա ընթացքում առողջապահական ծառայությունների են դիմել կլինիկայում կամ հիվանդանոցում, և 6%-ից ավելին ունեն խրոնիկական հիվանդություն կամ սեռական առողջության հետ կապված խնդիրներ։

Սեռական և վերարտադրողական առողջություն։ Չնայած տարբեր կանանց հետ սեռական հարաբերություններ ունենալուն՝ երկարատև հարաբերությունների և հատկապես ամուսնության առումով հարցված տղամարդիկ «միասեր» են, քանի որ նրանց երեք քառորդն ունեցել է միայն մեկ կին կամ համատեղ կյանք է վարել/վարում միայն մեկ կնոջ հետ։ Համեմատաբար փոքր է այն տղամարդ հարցվածների տոկոսը (16.2%), ովքեր մեկ կին են ունեցել կամ համատեղ ապրել/ապրում են մեկի հետ՝ ներկա հարաբերությունից դուրս։

Երկարատև ինտիմ հարաբերությունների (ներառյալ ամուսնությունը) կարևոր ասպեկտներից է սեռական հարաբերություններից բավարարվածությունը և դրանց հաճախականությունը։ Հետազոտության տվյալները միանշանակորեն ցույց են տալիս, որ տղամարդ հարցվածների ճնշող մեծամասնությունն իրենց կնոջ կամ հիմնական

զուգընկերոջ հետ սեռական հարաբերությունների «որակը» և հաճախականությունը (շատ) գոհացուցիչ են համարում (համապատասխանաբար 86.8% և 86.5%) կամ քիչ թե շատ գոհացուցիչ (համապատասխանաբար 7.7% և 7.8%)։ Իրենց կնոջ կամ հիմնական զուգընկերոջ հետ սեռական հարաբերությունների «որակից» և հաճախականությունից դժգոհ են տղամարդ հարցվածների 5%-ը և կին հարցվածների 2.5-ից ցածր տոկոսը։ Պահպանակների ոչ մշտական և ոչ հետևողական օգտագործումը կարող է լուրջ սպառնալիք հանդիսանալ իրենց ինտիմ զուգընկերների և իրենց սեփական սեռական և վերարտադրողական առողջության համար։ Ինչպես երևում է տվյալներից, տղամարդ հարցվածների կեսը (49.3%) ընդհանրապես պահպանակներ չեն օգտագործում, մինչդեռ նրանց միայն մեկ քառորդն է (24.2%) միշտ պահպանակ օգտագործում, իսկ մյուս քառորդը (25.9%) հետազոտությանը նախորդած տասներկու ամիսների ընթացքում միշտ կամ երբեմն է պահպանակներ օգտագործել։ Այսպիսով՝ սա մտահոգիչ թեմա է ոչ միայն հակաբեղմնավորման, այլև չպաշտպանված և, հետևաբար, ոչ անվտանգ սեռական հարաբերության առումով, հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ տղամարդ հարցվածների մոտ 30%-ը, ովքեր պատասխանել են այն հարցին, թե ով է եղել իրենց զուգընկերը ամենավերջին սեռական հարաբերության ժամանակ, նշել է, որ դա եղել է մեկ այլ զուգընկեր, այդ թվում՝ պատահական սեռական զուգընկեր կամ մարմնավաճառ։

Սեռական և վերարտադրողական առողջության վիճակի ստուգման ձևերից մեկը ՄԻԱՎ-ի վերաբերյալ ստուգումն է։ Այս հարցին պատասխանած 396 տղամարդ հարցվածներից վերջին վեց ամիսների ընթացքում ընդամենը 13.4% է ստուգվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ, իսկ 5.3%-ը՝ վերջին 12 ամիսների ընթացքում։ 7.6%-ը ստուգվել են 2-5 տարի առաջ, իսկ ևս 1.8%-ը՝ ավելի քան 5 տարի առաջ։ 71.2%-ը երբևէ չեն ստուգվել (0.8%-ը չեն պատասխանել)։

Հղիության ընդհատումը սեռական և վերարտադրողական առողջության ևս մի խնդիր է, որը սերտորեն կապված է առնականության և կանացիության ընդհանուր «նորմերի» հետ։ Եթե հղիության ընդհատումը բուժական նպատակներ չի հետապնդում, ապա սա նշանակում է, որ հղիությունն անցանկալի է կամ անցանկալի է դարձել, և որ առաջին պլան են մղվել սոցիալական պատճառները՝ ներառյալ հակաբեղմնավորման մասին անիրազեկ լինելը և դրա հնարավորությունը չունենալը։

Երբևէ զուգընկեր ունեցած այն կանայք, ովքեր դրական պատասխան են տվել այն հարցին, թե արդյոք իրենց կյանքում երբևէ ընդհատել են հղիությունը, տոկոսային տվյալներով փաստացիորեն համընկնում են բացասական պատասխանողներին (համապատասխանաբար 45.8% և 46.6%)։ Դրական պատասխան տված կին հարցվածների ընդամենը 1.6%-ը առաջին անգամ դա արել են 18 տարեկանից ցածր հասակում, իսկ 98.4%-ը՝ 18 տարեկանից բարձր։

Սեռականություն, սեռական և վերարտադրողական առողջության և առընթեր հիմնախնդիրների նկատմամբ վերաբերմունքը: Հետազոտությունը նաև կենտրոնանում էր սեռականության ու առնականության պատրիարխալ կարծրատիպերին առնչվող մի շարք պնդումների վրա։ Պնդումներում արտահայտված տեսակետներին են հարում հարցվածների զգալի՝ թեև իրարից տարբեր մասնաբաժինները։ Ի համեմատություն դրական պատասխան տվողների՝ բավականին մեծ է այն հարցվածների մասնաբաժինը, ովքեր չեն կարծում, որ տղամարդն այլ կանանց կարիքն ունի, նույնիսկ եթե լավ հարաբերությունների մեջ է իր կնոջ հետ (58.7%)։ Մինչդեռ հարցվածներիի մեկ երրորդը համոզված է, որ տղամարդու դավաճանությունը սովորական երևույթ է։ Անհամաձայնություն հայտնողների համեմատությամբ (49.9%) ավելի փոքր տոկոս են կազմում հաջորդ պնդման կողմնակիցները (45.5%), ովքեր հղիությունից խուսափելու ողջ պատասխանատվությունը բացառապես կնոջ վրա են դնում։

Թեպետև այն պնդումները, թե տղամարդիկ ավելի շատ սեռական հարաբերության կարիք ունեն, քան կանայք, և որ տղամարդիկ միշտ պատրաստ են սեռական հարաբերություն ունենալուն, միանշանակ թյուրըմբռնումներ են և հնաոճ կարծրատիպեր, որոնք կասկածի տակ են առնվում նորագույն գիտական հետազոտություններում, այնուամենայնիվ, դրանք լայնատարած են։ Այդ պնդումների հետ համաձայն հարցվածների մասնաբաժինը (համապատասխանաբար 49.1% և 58.3%) մոտ 15-30%-ով բարձր է, քան անհամաձայնություն հայտնողներինը (համապատասխանաբար 34.5% և 29.3%)։

Լայն տարածում գտած կարծրատիպերի թվում է նաև այն կարծիքը, թե իրենց մոտ պահպանակներ պահող կանայք «թեթևաբարո» են. այս պնդումը սատարում են հարցվածների կեսից մի փոքր ավելին։ Կանանց պատասխանատու սեռական վարքը որոշ հարցվածների կողմից դեռ մեկնաբանվում է իբրև անկանոն սեռական

հարաբերությունների վկայություն կամ «առաքինության» զգացումի բացակայություն։ Միևնույն ժամանակ անհամաձայնություն հայտնողների տոկոսը բոլորովին էլ չնչին չէ (37.7%)։

Երկակի ստանդարտներ արտահայտող զգայուն մի խնդիր է կնոջ կուսությունը։ Հարցվածների ճնշող մեծամասնությունը (85.9%) համաձայն են այն պնդմանը (*խիստ կողմ* անձանց 75.0%-ը ներառյալ), որ կինը պետք է կույս մնա մինչև ամուսնությունը։ Հարցվածների ընդամենը 12.4%-ն են դեմ, իսկ չնչին տոկոսը՝ 1.8%, չունի միանշանակ պատասխան։ Այլ կերպ ասած՝ անկախ բարյացակամ վերաբերմունքից և առաջադրվող փաստարկներից ու պատճառաբանություններից, հարցվածների չորս հինգերորդից շատ ավելին ժխտում է կանանց՝ սեփական մարմինը և սեռական գրավչությունը տնօրինելու իրավունքը և ստիպում նրանց ենթարկվել մոլեգին *հայրիշխանական* հոգեկերտվածքի պարտադրած նորմերին և ստանդարտներին։

Որպես Հայաստանում անցկացված իր տեսակի մեջ եզակի հետազոտություն՝ սույն հետազոտությունը նպատակ ուներ քննվող հիմնախնդիրների համար հիմք և մի շարք ուղենիշներ ստեղծել։ Սակայն պարզ դարձավ, որ անհրաժեշտ է անհատական խնդիրների հետագա ուսումնասիրություն՝ ազդեցության գնահատումը ներառյալ՝ իբրև թիրախ քաղաքականության և ծրագրերի շարունակություն։

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ուժեղացնել առնականության դրական կողմերը՝ լայն հասարակությանը կրթելու և ավելի նպատակային միջամտությունների միջոցով՝ ուշադրության կենտրոնում պահելով և խթանելով գենդերային արդար վերաբերմունքի և վարքի ձևավորումը,
- Գենդերային արդարությանը և հավասարությանն ուղղված ապագա Ազգային գործողությունների ծրագրերում և ռազմավարություններում նախատեսել *առնականության* հիմնախնդիրներին վերաբերող գործողություններ,
- Ուժեղացնել արդյունավետ համագործակցությունը ու համակարգումը հիմնական կառույցների շրջանում, որոնց թվում են կառավարական կառույցներ, քաղաքացիական հասարակությունը, ակադեմիական համայնքը և միջազգային կազմակերպությունները,

- Ներմուծել և պարբերաբար անցկացնել գենդերային հավասարության, այդ թվում՝ առնականության հիմնախնդիրներին նվիրված ազգային ծրագրերի գործած ազդեցության գնահատում,
- Աջակցել առնականության նոր միտումներին և ընկալումներին նվիրված ուսումնասիրություններին՝ հատուկ ուշադրություն դարձնելով գենդերային արդարությանը սատարող վերաբերմունքի տարածմանը և այն ադեկվատ վարքի վերափոխման աստիճանին,
- Հանրայնացնել էգալիտար ընտանիքի մոդելը՝ բռնությունը բացառող վարքի օրինակով և գենդերային հիմնախնդիրները ընտանիքի օժանդակության ազգային նախագծերի վերածելով,
- Աջակցել ազգային օրենսդրության բարեփոխմանը և գենդերային բռնության բացահայտված դեպքերի դեմ պայքարը քաղաքական հարթակ տեղափոխել՝ հասնելով դրա ճանաչմանը, և *ի թիվս այլ հարցերի* ստեղծելով ուղղորդման մեխանիզմ և ապահովելով ավելի արդյունավետ օգնություն և երթարկվածների պաշտպանվածություն:
- Սատարել գենդերային քվոտաների ներմուծումը հանրային կառավարման համակարգ և տեղական ինքնակառավարման մարմիններ և վերջնական լուծման համար՝ Ազգային ժողով:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սեռերի հավասարության սկզբունքն ամրագրված է ՀՀ օրենսգրքում և արտացոլված ազգային սահմանադրության մեջ: 2005 թվականին Հայաստանի սահմանադրության մեջ կատարված փոփոխություններում սույն սկզբունքը ձևակերպվել է որպես խտրականության արգելք՝ մի շարք հիմքերով, այդ թվում՝ սեռի հիմքով[10], մինչդեռ 2015 թվականին հավելվել է սեռերի հավասարության մասին հատուկ հոդվածը [11] : Սակայն de jure գենդերային հավասարությունը չի հանգեցնում de facto հավասարության[12]: Հետևաբար հատուկ գենդերային քաղաքականության անհրաժեշտությունը մնում է հրամայական: Հայաստանում գենդերային քաղաքականության պատմությունը սկիզբ են առնում ուշ 1990–ականներից՝ մի շարք գործոնների, այդ թվում՝ բոլոր երեք համաշխարհային կոնֆերանսների[13] և Եվրաինտեգրման հեռանկարների[14] համակցման շնորհիվ:

Հայաստանի կառավարությունը որոշակի քայլեր է ձեռնարկել տվյալ հիմնահարցի շուրջ վարվող ազգային քաղաքականությունը գենդերային հավասարության սկզբունքին և միջազգային պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Այսպես՝ Գործողության Պեկինյան հարթակը, ինչպես նաև գենդերային հավասարության վերաբերող բազմաթիվ այլ միջազգային փաստաթղթեր հիմք են

---

[10] ՀՀ Սահմանադրության Հոդված 14.1. «Բոլորը հավասար են օրենքի առաջ: Ցանկացած խտրականություն՝ հիմնված սեռի, ազգային պատկանելության, գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի կամ դավանանքի, քաղաքական կան ցանկացած այլ տեսակետի, ազգային փոքրամասնության անդամակցելու, գույքի, ծագման, հաշմանդամության, տարիքի կամ այլ անձնական կամ սոցիալական հանգամանքների վրա արգելվում է»:

[11] ՀՀ Սամնանադրություն, Հոդված 30 «Տղամարդկանց և կանանց իրավահավասարություն, համաձայն որի «Կանայք և սղամարդիկ պետք է ունենան հավասար իրավունքներ»:

[12] Ազգային սահմանադրությունը սահմանել է քրեական պատասխանատվություն սեռային և բազմաթիվ այլ տեսակի խտրականության կիրառման դեպքում: Մասնավորապես՝ ՀՀ Քրեական Օրենսգրքի 143 Հոդվածի համաձայն («Քաղաքացիների իրավահավահավասարության իրավախախտում») Գլուխ 19-ում («Հանցագործություններ սահմանադրությամբ սահմանված մարդու իրավունքների և քաղաքացիական ազատությունների դեմ), նման գործողությունները պատժվելու են տուգանքի տեսքով կամ մինչև 2, պաշտոնատար անձանց դեպքում՝ մինչև 3 տարի ազատազրկմամբ:

[13] Վիեննայում կայացած մարդու իրավունքների պաշտպանությանը նվիրված կոնֆերանսը (1993), Կահիրեյում կայացած բնակչությանն ու զարգացմանը նվիրված կոնֆերանսը (ICPD, 1994) և կանանց նվիրված -րդ համաշխարհային կոնֆերանսը (Պեկին, 1995) առանձնակիորեն կարևորեցին գենդերային հավասարության հիմնահարցը և դրան հասնելու համապատասխան քաղաքականության մշակումը:

[14] Եվրոպական երկրների համար տղամարդկանց և կանանց հավասարությունը ոչ միայն մարդու իրավունքների սկզբունք է, այլև դեմոկրատիայի պարտադիր պայման, պլյուրալիստական դեմոկրատիայի հիմնարար չափորոշիչ և սոցիալական արդարության հրամայական, ինչպես նաև երկարատև զարգացման նախապայման: Օրինակ, Եվրոխորհրդի բազմաթիվ դեկլարացիաներ սահմանում են, որ գենդերային հավասարությունը ենթադրում է կանանց և տղամարդկանց հավասար ներգրավվածություն, լիազորություններ, պատասխանատվություն և մասնակցություն հասարակական և անձնական կյանքի բոլոր ոլորտներում» և պահանջում ջանքերի մեկտեղում սեռային խտրականության, օտարման և գենդերային կարծրատիպերի դեմ պայքարում *Տղամարդկանց և կանանց իրավահավասարության հռչակագիր* (Նախախարների կոմիտե, 16 նոյեմբերի, 1988); *Տղամարդկանց և կանանց իրավահավասարության՝որպես դեմոկրատիայի հիմնարար չափորոշիչի հռչակագիր* (4th Եվրոպական նախարարական կոնֆերանս՝ նվիրված տղամարդկանց և կանանց իրավահավասարությանը, Ստամբուլ, 13-14 Նոյեմբերի 1997, Գենդերային հավասարությունը որպես հասարակության վերափոխման հիմնահարց (Հռչակագիր և գործողության ծրագիր՝ ընդունված 5րդ Եվրոպական նախարարական կոնֆերանսին՝ նվիրված կանանց և տղամարդկանց հավասարությանը (Սկոպիե, 22-23 հունվար 2003) և ***Հռչակագիր՝ Դարձնելով գենդերային հավասարությունն իրականություն*** (Նախարարների կոմիտեի 119 րդ նստաշրջան, Մադրիդ, 12 Մայիսի 2009)

ծառայել մի շարք ազգային փաստաթղթերի ստեղծմանը՝ միտված գենդերային հավասարության ապահովմանը:

1998 թվականին Հայաստանի կառավարության ընդունած «Հայաստանի Հանրապետությունում կանանց կարգավիճակի բարելավման ծրագրի հիմնադրույթների մասին» No. 242 որոշմամբ և «1998-2000 թթ. Ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում կանանց կարգավիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերակատարման բարձրացման ազգային ծրագրի հաստատման մասին» No. 406 որոշմամբ: 2004 թվականի ապրիլին Հայաստանի կառավարությունը հաստատեց «2004 -2010 թթ. հասարակության մեջ կանանց կարգավիճակի բարելավման և նրանց դերի բարձրացման ազգային գործողությունների ծրագիրը»: Ազգային գործողությունների ծրագիրը նախանշում էր ՀՀ պետական քաղաքականության սկզբունքները, առաջնահերթությունները և հիմնական ուղղությունները, որոնց իրացվումը կբերեր կանանց հիմխնդիրների լուծմանը: Դժբախտաբար վերոհիշյալ ծրագրերի իրականացման ընթացքում կառավարության ֆինանսավորման հետ կապված խնդիրներ առաջացան, որի արդյունքում առաջին ծրագիրը դադարեցվեց, իսկ երկրորդի իրականացումը թերի մնաց:

2008 թվականին Հայաստանի կառավարությունն իր 2008-2012[15] Գործողությունների պլանում գենդերային հավասարությունը որակեց որպես տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովում տնտեսական, սոցիալական և քաղաքական կյանքում, և որպես առաջնահերթ քաղաքական ուղղություն: Գործողության պլանն ամրագրեց նաև տղամարդկանց և կանանց համար հավասար պայմանների և հավասար հնարավորությունների ապահովման անհրաժեշտությունը իրենց ներուժի օգտագործման, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում հավասար մասնակցության ապահովման միջոցով, որը միտված է երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման խթանմանը, սեռի հիմքով խտրականության բացառմանը,

15 2008-2012 թթ. ՀՀ Գործողության պլան, ՀՀ կառավարության N380-Ա Որոշման հավելված 28 Ապրիլ 2008 (ՀՀ Կառավարության ծրագիր, Հավելված ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի N 380 - Ա որոշման) pp.43-44

կանանց և տղամարդկանց հավասարության ապահովմանը և երկու սեռերի հանդեպ հավասար վերաբերմունքի ապահովմանը:

Այնուամենայնիվ, Հայաստանի՝ գենդերային հավասարության հարցում վարվող քաղաքականության և միջազգային պարտավորվածություններին հավատարիմ լինելու փաստն արձանագրող հիմնական փաստաթուղթը ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգն է, որը հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից 2010[16] թվականի փետրվարին: Սույն փաստաթուղթը փոխարինեց 2004-ից - 2010 թթ. հասարակության մեջ կանանց կարգավիճակի բարելավման և նրանց դերի բարձրացման ազգային գործողությունների ծրագրին: Սակայն այն տարբերվում է Ազգային գործողությունների ծրագրից թե՛ հայեցակարգային, թե՛ գաղափարական առումներով, քանի որ այն հիմնված է գենդերային հավասարության հարացույցի վրա՝ դիտարկվելով որպես դեմոկրատական արժեք և սոցիալական արդարության պարտադիր պայման: ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգն արտացոլում է նորագույն միջազգային մոտեցումները գենդերային հավասարության իրագործմանը՝ հիմնվելով հավասար իրավունքների և հնարավորությունների սկզբունքին և հիմք է ստեղծում գենդերային հիմնախնդիրը իրավական դաշտ, ինչպես նաև հանրային կյանքի և պետական քաղաքականության համատեքստ ներմուծելու համար:

Հայեցակարգն ուղղված է իրավական, քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային պայմանների ստեղծմանը՝ բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրացման նպատակով: Այն պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների ու քաղաքացիական հասարակության ինստիտուտների համար հիմք է ծառայում գենդերային հավասարության ապահովման ծրագրային միջոցառումների մշակման գործում: Գենդերային քաղաքականության հայեցակարգը կոչված է նպաստելու հասարակական- քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր ոլորտների և կառավարման բոլոր մակարդակների քաղաքականության մեջ գենդերային չափման՝ որպես հասարակության կայուն, ժողովրդավարական զարգացման և

[16] ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգ (2010) http://www.gov.am/u_files/file/kananc-xorh/Gender-hayecakarg.pdf

ժողովրդավարական, բաց, սոցիալապես արդար քաղաքացիական հասարակության ու իրավական պետության կայացման ապահովման միջոցի ներառմանը:

Գենդերային քաղաքականության իրականացման և անհավասար իրավունքների ու հնարավորությունների հիմնախնդրին լուծում տալու համար առանձնակի կարևորություն էր ստացել Հայաստանի Հանրապետության կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ապահովման մասին օրենքը[17], որն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2013 թվականի մայիսի 20-ին և ՀՀ նախագահի ստորագրությամբ օրինական ուժ ստացել 2013 թվականի հունիսի 11-ին: Այդ օրենքի ընդունման անհրաժեշտությունն ամրագրված էր ՄԱԿ-ի՝ կանանց դեմ խտրականության վերացման կոմիտեի[18] առաջարկություններում և Եվրոպայի հարևան երկրներում իրականացվող ծրագրի գործողության պլանում[19].

Օրենքը կարգավորում է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնահարցերը քաղաքականության, հանրային կառավարման, աշխատանքի և զբաղվածության, ձեռներեցության, առողջապահության, կրթության և այլ ոլորտներում: Օրենքը փաստաթուղթ է, որը ներառում է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիաի /CEDAW/[20] և CEDAW Կոմիտեի առաջարկությունների[21] և պահանջների առավելագույն ծավալը:

Մասնավորապես օրենքը.

- Օրենսգիրք է ներմուծում «գենդերային խտրականություն» հասկացությունը,
- Արգելում է սեռի հիմքով խտրականությունը,
- Օրենսգիրք է ներմուծում ուղիղ և անուղղակի խտրականության հասկացությունները,
- Տալիս է հնարավորություն և քաղաքացիների՝ սեռի հիմքով խտրականությունից պաշտպանվելու ընթացակարգ,
- սահմանում է քրեական պատասխանատվություն պաշտոնատար անձանց և գործատուների կողմից խտրականության կիրառման դեպքում,

---

[17] http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=4761

[18] *ՄԱԿ-ի՝ Կանանց դեմ խտրականության վերացման կոմիտեի եզրակացուցիչ դիտողությունները, /43րդ նստաշրջանը* / 19 Հունվար-6 Փետրվար 2009/, ԿԽՎԿ/CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 /

[19] http://eeas.europa.eu/enp/pdf/pdf/action_plans/armenia_enp_ap_final_en.pdf

[20] http://www.un.org/womenwatch/daw/cedaw/cedaw.htm

[21] *ՄԱԿ-ի՝ Կանանց դեմ խտրականության վերացման կոմիտեի եզրակացուցիչ դիտողությունները, /43րդ նստաշրջանը* / 19 Հունվար-6 Փետրվար 2009/, ԿԽՎԿ/CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 /

- նպաստում է գենդերային հավասարության մշակույթի զարգացմանը և այն գենդերային կարծրատիպերի վերացմանը, որոնք խտրականությունը,
- ուրվագծում է գենդերային անհավասարակշռությունը կարգավորող հատուկ ժամանակավոր միջոցների շրջանակներն ու ժամանակացույցը,
- ամրագրում է գենդերային հավասարության ազգային մեխանիզմի անհրաժեշտությունը, և
- Սահմանում է գենդերային քաղաքականության իրականացմանմոնիտորինգի և զեկուցման մեխանիզմի պայմանները:

2011-ին Հայաստանի կառավարությունն ընդունեց նաև «2011-2015թթ. Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության ռազմավարական իրականացման գործողությունների ծրագիրը»[22], և «2011-2015թթ. Ընդդեմ գենդերային բռնության ազգային գործողությունների ծրագիրը»: Վերոհիշյալ նախագծերը նպատակ ունեին գենդերային հավասարություն ապահովել իշխանությունում և որոշումների կայացման մակարդակում, սոցիալ-տնտեսական, կրթական, առողջապահական, մշակութային և հանրային իրազեկման ոլորտներում, ինչպես նաև կանխելու գենդերային բռնությունն ու թրաֆիքինգը: Թեև գործողությունների ծրագրերի իրականացման մոնիտորինգը հաստատեց հանեց նախագծի նպատակի ու խնդիրների որոշակի արդյունավետությունը, այնուամենայնիվ գենդերային հավասարության ոլորտում դեռ առկա են լուրջ խնդիրներ[23]:

Ներկայումս Հայաստանի կառավարությունը 2017-2021թթ. գենդերային հավասարության ռազմավարության և հետագա տարիների գործողությունների նախագծի մշակման փուլում է:

***

Հայաստանում գենդերային իրադրությանն առնչվող մի շարք ուսումնասիրություններ բազմիցս երևան են հանել այն փաստը, որ Հայաստանի սոցիալական և պետական համակարգը դեռևս «գենդերային զգայուն» չէ[24]: Կանանց առաջընթացին ու գենդերային հավասարության ձեռքբերմանը խոչընդոտում են լայնորեն տարածված գենդերային բացասական կարծրատիպերը և կանանց նկատմամբ

[22] http://www.un.am/res/Gender%20TG%20docs/national/2011-2015_Gender%20Policy_NAP-Eng.pdf
[23] 2011-2015թթ. Գենդերային քաղաքականության ռազմավարական պլանի և 2011-2015թթ. Ընդդեմ գենդերային բռնության ազգային գործողության պլանի իրականացման հաշվետվություն
http://un.am/up/library/Assessement_2011-2015_Gender%20Policy_arm.pdf
[24] Օրինակ՝ Հայաստանում գենդերային հինահարցի զեկույց, քաղաք Մանդալույոնգ, Ֆիլիպիններ Ասիական զարգացման բանկ, 2015. 2011-2015թթ. Գենդերային քաղաքականության ռազմավարական պլանի և 2011-2015թթ. Ընդդեմ գենդերային բռնության ազգային գործողության պլանի իրականացման հաշվետվություն. Երևան, ՄԱԶԾ, ՄԱԲՀ, ՄԱՄՀ/UNICEF, 2015 (Հայաստանում).

վիրավորական/ նվաստացուցիչ ավանդական բռնություններ (առաջին հերթին՝ գենդերային բռնությունը, տղայի նախընտրությամբ սեռի հատկանիշով հղիության ընդհատումները), որոնք դեռ իշխում են հասարակության մեջ:

Գենդերային իրավիճակը լավագույնս բնութագրվում է միջազգային կազմակերպությունների կողմի հաշվարկվող և կիրառվող համապատասխան ցուցիչների արժեքներով.

Ցուցիչ	Արժեք/կարգ	Տարեթիվ	Աղբյուր
Մարդկային զարգացման ցուցիչ	85 / 190	2015	2015 մարդկային զարգացման զեկույց http://hdr.undp.org/en/data
Սոցիալական հաստատությունների և գենդերային ցուցիչ	0.236	2014	http://www.genderindex.org/sites/default/files/docs/BrochureSIGI2015.pdf
Գենդերային անհավասարության ցուցիչ	62/122	2015	http://hdr.undp.org/sites/default/files/hdr_2015_statistical_annex.pdf
Գենդերային արդարության ցուցիչ	61/168	2012	http://www.socialwatch.org/node/14367
Կանաց տնտեսական հնարավորության ցուցիչ	57/113	2015	http://chartsbin.com/view/33189
Գենդերային «ճեղքվածքի» գլոբալ ցուցիչ	105/145	2015	http://reports.weforum.org/global-gender-gap-report-2015/economies/#economy=ARM

Ընթացիկ իրավիճակն առավել հստակ է արտացոլված Գենդերային ճեղքվածքի, Գենդերային անհավասարության և Գենդերային արդարությաբ ցուցիչներում: Ավելին, վերոնշյալ ցուցիչների ամենամյա վերլուծությունն արձանագրում է բացասական դինամիկա և ցույց է տալիս, որ իրադրությունն անկասելիորեն վատթարացել է վերջին մի քանի տարիների ընթացքում:

Ցուցիչ	Արժեք/կարգ	Տարեթիվ	Աղբյուր

Սեռերի հարաբերակցությունը ծնվելիս (տ/կ)	0.86	2015	http://reports.weforum.org/global-gender-gap-report-2015/economies/#economy=ARM
Կյանքի տևողության հարաբերակցությունը (կ/տ)	78.6/70.9	2015	http://hdr.undp.org/sites/default/files/hdr_2015_statistical_annex.pdf
Սահմանված համախառն ազգային եկամուտն առ անձ (կ/տ)	6,042 - 10,089 (PPP $)	2015	http://hdr.undp.org/sites/default/files/hdr_2015_statistical_annex.pdf
Կանանց և տղամարդկանց որոշումների ընդունումը ((կ/տ հարաբերակցությունը) Ազգային ժողով Կառավարություն	 0.12 0.13	2015	http://reports.weforum.org/global-gender-gap-report-2015/economies/#economy=ARM
Տնտեսապես ակտիվ կանայք և տղամարդիկ	55,2% (Կ); 73,2% (Տ)	2015	http://www.armstat.am/file/article/kanajq_ev_txamardik.pdf
Կրթություն Գրագիտության համամասնությունը/հարաբերակցությունը (իգ./ար.) Ներգրավման հարաբերակցությունը տարրական միջնակարգ բարձրագույն	 1.0 1.10 1.16 1.51	2015	http://reports.weforum.org/global-gender-gap-report-2015/economies/#economy=ARM
Մագիստրոսներ	2014-ին մագիստրոսի որակավորում ստացած շրջանավարտների 67.3% կանայք էին և 32.7% տղամարդիկ	2015	http://www.armstat.am/file/article/kanajq_ev_txamardik.pdf
Գիտությունների թեկնածուի գիտական աստիճան	2014-ին գիտական աստիճան ստացած անձանց 36.3%-ը կանայք էին և 63.7% -ը՝ տղամարդիկ	2015	http://www.armstat.am/file/article/kanajq_ev_txamardik.pdf

Աղյուսակում ներկայացված տվյալները հստակորեն ամրագրում են կանանց անհավասար դիրքը հասարակական, քաղաքական և տնտեսական կյանքի շատ ոլորտներում և որ նրանց ներուժը լիարժեք չի օգտագործվում և որ Հայաստանում նրանք երբեմն անհաղորդ են որոշումների կայացման գործընթացին:

Սա իր հերթին վատթարացնում է սոցիալ-տնտեսական իրադրությունը և հաջորդիվ բացասական ազդեցություն գործում ժողովրդավարության դեֆիցիտի վրա՝ խոչընդոտելով երկրի երկարաժամկետ զարգացման հեռանկարներին:

Քաղաքական կյանքում կանանց ոչ լիարժեք ներկայացվածությանը, նրանց տնտեսական ապահովվածության բացակայությանը զուգընթաց աշխատաշուկայում ուղղահայաց և հորիզոնական խտրարարությունը, ինչպես նաև մի շարք այլ ոլորտներում գենդերային անհավասարակշռությունը դա այն խնդիրներ են, որոնք միաժամանակ արտացոլում են գենդերային խտրականության արմատական պատճառները, որոնք դեռ ենթակա են վերացման:

***

Գենդերային հավասարության ապահովումն անհնար է առանց տղամարդկանց ակտիվ ներգրավման և մասնակցության, որն ածանցված է նրանց կողմից ադեկվատ արժեքների և նորմերի յուրացման, պահպանման և իրացման վրա: Գենդերային հավասարության և արդարության արժեքների և նորմերի պահպանումն արտացոլվում է առնականության, գենդերային նորմերի, միջանձնային հարաբերությունների, գենդերային բռնության, սեռականության, վերարտադրողական առողջության, տնային պարտականությունների հավասար բաշխման և երեխաների խնամքի հարցերում նրանց վերաբերմունքի և գործողությունների մեջ: Հետազոտությունները արդյունավետ միջոց են պարզելու, թե արդյոք գենդերային հավասարության նորմերը պահպանվում են տղամարդկանց և կանանց կողմից և որքանով: Հետևաբար՝ սույն հետազոտության հիմնանպատակն էր պարզել իրական պատկերը մերօրյա Հայաստանում՝ ուշադրությունը սևեռելով տղամարդկանց և կանանց կարծիքներին սույն խնդրի առնչությամբ:

Սույն զեկույցը ներկայացնում է համազգային ընգրկում ունեցող հետազոտության արդյունքները տղամարդկանց և կանանց տրամադրվածության, դիրքորոշումների և

գործողությունների վերաբերյալ՝ առնականության, գենդերային նորմերի, գենդերային բռնության /GBV/, ինտիմ հարաբերությունների և ամուսնության, սեռական հարաբերությունների, առողջության և տնային պարտականությունների վերաբերյալ Հայաստանում: Հետազոտությունն անցկացվել է IMAGES[25] հետազոտական նախաձեռնության ընդհանուր նպատակին համապատասխան:

Վերոնշյալ դիրքորոշումներին և գործողություններին վերաբերող վստահելի և ամբողջական տվյալների հավաքագրումը որպես այդպիսին կարևոր է, քանի որ այն տալիս է ընթացիկ իրադրության իրատեսական պատկերը, և, որն ավելի կարևոր է, տվյալները ծառայում են որպես առաջընթացի չափման ուղենիշներ և հիմք են ստեղծում թիրախային և ավելի արդյունավետ գենդերային հավասարության քաղաքականության և ռազմավարությունների մշակման համար:

Քանի որ սույն հետազոտության կենտրոնում նաև առնականությունն է, հարկ է նախնառաջ սահմանել առնականության հասկացությունը, որի վրա և հիմնված է սույն հետազոտությունը: Թեև կենսաբանական գործոններն ու հոգեբանական բնութագրերը տղամարդկային ինքնությանը ներհատուկ հատկանիշներ են, առնականությունն առաջին հերթին սոցիալ-մշակութային երևույթ է, տղամարդկային ինքնությանն առնչվող սոցիալական սպասումների և հավատալիքների, ինչպես նաև այն վարքագծի նորմերի համակցություն, որոնք նախանշում են տղաներին և տղամարդկանց վարքի նորմերը, որոնք կնպաստեն վերջիններիս սոցիալականացմանը և ինքնության ձևավորմանը:

[25] ՏԳՀՄՀ/ IMAGES –Տղամարդկանց և գենդերային հավասարության միջազգային հետազոտություն - համակողմանի հարցաշար է ընտանիքում տղամարդկանց վերաբերմունքի և վարքի վերաբերյալ՝ կանանց կարծիքի և տրամադրած իրզեկության հետ միասին, նաև՝ գենդերային հավասարությանն առնչվող բազմազան թեմաների շուրջ: Թեմաներն ընդգրկում են գենդերային բռնությունը, առողջությունն ու դրա պահպանմանը միտված միջոցառումները, տնային պարտականությունների բաշխումը, տղամարդու՝ որպես հոր մասնակցությանը երեխաների խնամքին , սեռի և գենդերային քաղաքականությունը,գործարքային սեռական հարաբերությունը, հանցագործ վարքի մասին տղամարդկանց հաղորդումները և կյանքի որակը: http://www.icrw.org/publications/international-men-and-gender-equality-survey-images

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նկարագրություն

Հայաստանի Հանրապետությունում տղամարդկանց և կանանց փոխհարաբերությունների առանձնահատկությունների ուսումնասիրության համար «Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտը իրականացնում է սոցիոլոգիական հետազոտություն քանակական մեթոդներից դեմ առ դեմ հարցազրույցի և հարցաթերթիկային հարցման միջոցով: Հետազոտությունը իրականացվել է ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը Հայաստանյան գրասենյակի պատվերով:

Հետազոտության ընտրանքի նկարագրություն

Հետազոտության շրջանակներում կիրառվել է բազմաստիճան քվոտային ընտրանք: Հետազոտության ընտրանքը հաշվարկվել է հետևյալ քայլերով՝

Քայլ I. Ընտրանքի ծավալի հաշվարկում,

Քայլ II. Բնակավայրերի ընտրություն (Երևանում՝ փողոցներ) և քվոտաների հաշվարկում,

Քայլ III. Շենքի/տան և բնակարանի (եթե շենք է) ընտրություն:

Ընտրանքի ծավալը

Ընտրանքի ծավալը հաշվարկվել է ըստ Երևան քաղաքի և մարզերի 18-59 տարեկան բնակչության թվի. ուսումնասիրության ենթակա է ողջ ՀՀ-ի 18-59 տարեկան բնակչությունը՝ N=1,873,309[26]: Այսպես՝ γ=95% վստահելիության դեպքում, երբ Δ= 2,45 ընտրանքի ծավալը՝ n=1,600:

Վերջնական ընտրանքը կազմելիս հաշվի է առնվել նաև հնարավոր խոտանների համար նախատեսված հարցաթերթերի քանակը: Հիմնական ընտրանքը ավելացվել է 1.25%-ով՝ հնարավոր խոտան հարցաթերթերի և հարցաթերթերում առկա հնարավոր

[26] ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն, 2011թ.

բացթողումների արդյունքում սխալի տոկոսը նվազեցնելու համար: Այսպիսով՝ վերջնական ընտրանքը՝ n=1,620:

Այնուհետև, ընտրանքը բաշխվել է Երևանի և մարզերի միջև ըստ բնակչության տոկոսային համամասնության և ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Ընտրանքի բաշխումը մարզերում և Երևանում

Բնակավայր	18-59 բնակչության քանակը	%	n–ընտրանքի ծավալը
Մարզ	1,212,631	64.7	1,053
Երևան	660,678	35.3	567
Ընդամենը	**1,873,309**	**100**	**1,620**

Դաշտային աշխատանքների ընթացքում առաջացած խնդիրները

Հետազոտության դաշտային աշխատանքների ընթացքում առաջացած խնդիրները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 2. Դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում ծագած խնդիրները և դրանց լուծումները

##	Խնդիր	Լուծում
1	Հետազոտության շրջանակներում դժվար էր գտնել միջին տարիքի տղամարդկանց, ինչի հետևանքով երկար ժամանակ էր ծախսվում այդ քվոտային համապատասխան մարդկանց գտնելու համար:	Հարցազրուցավարներին հրահանգվում էր ամեն դեպքում փորձել փնտրել այդ քվոտան: Սակայն 30 րոպեից ավել փնտրելու դեպքում, շեղվել տարիքը, սակայն ոչ սեռը:
2	Հետազոտության թեմայի պատճառով նախատեսվածից շատ էին հարցմանը մասնակցելուց հրաժարվողները, ինչը դանդաղեցնում էր դաշտային աշխատանքների ընթացքը:	Հարցազրուցավարներին հրահանգվում էր ամեն դեպքում փորձել փնտրել այդ քվոտաները և օրվա համար նախատեսված հարցումների թիվը լրացնել:
3	Հետազոտության թեմայի պատճառով կանխատեսվածից շատ էին ընդհատված հարցազրույցները, ինչը խոչընդոտում էր դաշտային աշխատանքների ընթացքին:	Հարցազրուցավարներին հրահանգվում էր նորից փնտրել այդ քվոտաներին համապատասխան հարցվողների և իրականացնել հարցումները:

Որակի ստուգում և վերահսկում

Հետազոտության շրջանակներում հարցազրուցավարների աշխատանքի և հարցազրույցների որակի ստուգումն իրականացվել է հետևյալ չորս փուլերով.

- Հարցազրուցավարների վերահսկում դաշտային կոորդինատորների կողմից
- Հարցաթերթերի որակի առաջնային ստուգում

    - Հարցաթերթի տեխնիկական մոնիտորինգ
    - Հարցաթերթի բովանդակային և տրամաբանական մոնիտորինգ
- Հեռախոսազանգով ստուգում
- Հետադարձ այցի միջոցով ստուգում
- Հարցազրուցավարների վերահսկում GPS սարքավորումների միջոցով

Հարցաթերթի բովանդակային և տրամաբանական մոնիտորինգ

Բոլոր հարցաթերթերն անխտիր (100%) ենթարկվել են տրամաբանական վերլուծության՝ ընկերության որակի ստուգման բաժնի կողմից: Հարցաթերթերի ստուգման ընթացքում մասնավորապես ուշադրություն է դարձվել հետևյալ կետերին՝

- անցումների պահպանմանը,
- միանգամայն նոր՝ չկրկնվող ինֆորմացիայի ի հայտ գալուն և կրկնվելուն,
- սիստեմատիկ սխալների բացահայտմանը,
- բաց թողնված (անպատասխան) հարցերին և հաշվառմանը,
- ոչ ադեկվատ և սխալ պատասխաններին,
- ստուգիչ հարցերի պատասխանների տրամաբանությանը,
- հարցաթերթի ընդհանուր տրամաբանությանը,
- հարցաթերթի լրացման գրչի գույնի, ձեռագրի միանմանությանը,
- հակասական պատասխաններին,
- տեխնիկական խնդիրներին (ջնջումներ, ԴՊ տարբերակներ),
- անցում ենթադրող պատասխանների հաճախականությանը:

Ստուգման արդյունքում բացահայտված խնդիրների և թերացումների վերաբերյալ ինֆորմացիան հանձնվել է որակի ստուգման մենեջերին:

Հարցաթերթերի որակի առաջնային ստուգման արդյունքում խոտան է համարվել 1 հարցաթերթ:

Որակի վերահսկման և ստուգման վերջնական արդյունքներ

Որակի վերահսկման և ստուգման վերջնական արդյունքները, ինչպես նաև խոտան հարցաթերթերի քանակը համապատասխանաբար ներկայացված են Աղյուսակ 3-ում և Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 3. Որակի ստուգման արդյունքները

Որակի ստուգում	Զուգայց		Հեռախոսազանգ		Հետայց		Ընդամենը	
Հարցաթերթերի քանակ	Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս
1,628	244	15.0%	550	33.8%	85	5.2%	879	54.0%
Վկայություն	կոորդինատորի ստորագրությունը կապույտ գրիչով		զանգերի ցուցակը դուրս գրված հեռախոսի համարներով		կոորդինատորի ստորագրությունը կարմիր գրիչով			

Աղյուսակ 4. Խոտանհարցաթերթեր

Խոտան հարցաթերթեր	Հարցաթերթի մոնիտորինգ		Հեռախոսազանգ		Հետայց		Ընդամենը		Տվյալների բազա
Հարցաթերթերի քանակ	Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս	Քանակ
1,628	1	0.06%	10	0.6%	0	0.0%	11	0.67%	1,617

Որակի վերահսկման և ստուգման արդյունքում հետազոտությունը որակավորվել է ՀԱՍՏԱՏՎԱԾ. տվյալների բազայում մուտքագրված իսկ բոլոր 1,617 հարցաթերթերը վավեր:

Տվյալների մշակում

Տվյալների մշակման գործընթացը ներառում է հետևյալ փուլերը՝

- հարցաթերթերի պատրաստում,
- հարցազրուցավարների առաջին ինստրուկտաժ, հարցաթերթերի փորձարկում և հարցաթերթերի վերջնական տարբերակի պատրաստում,
- հարցաթերթերի առաջնային և երկրորդային ստուգում դաշտային փուլից անմիջապես հետո,
- մասնագիտական մշակում և կոդավորում,
- SPSS տվյալների բազայի պատրաստում,
- տվյալների մուտքագրման գործընթաց,
- տվյալների բազայի վերջնական ստուգում և մաքրում:

Հարցաթերթերի պատրաստում

Քանակական հետազոտության հարցաթերթերը տրամադրվել են Պատվիրատուի կողմից, և վերջնականացվել են IPSC ընկերության համապատասխան մասնագետների և Պատվիրատուի փորձագետների կողմից՝ համատեղ քննարկումների արդյունքում: Հետազոտությունում կիրառվում է՝

Մեկ հիմնական հարցաթերթ՝ ներառում է ընդհանուր առմամբ 272 հարց՝ ըստ հետազոտության խնդիրների և առաջադրանքների /բաղկացած է 12 x A4 էջից/:

Հարցաշար տղամարդկանց համար՝ ինքնուրույն լրացնելու համար՝ ներառում է ընդհանուր առմամբ 34 հարց՝ ըստ հետազոտության խնդիրների և առաջադրանքների /բաղկացած է 2 x A4 էջից/:

Հարցաշար կանանց համար՝ ինքնուրույն լրացնելու համար՝ ներառում է

ընդհանուր առմամբ 20 հարց՝ ըստ հետազոտության խնդիրների և առաջադրանքների /բաղկացած է 1 x A4 էջից/:

Հարցաթերթի պատրաստմանը հաջորդել է հարցազրուցավարների ինստրուկտաժի փուլը:

Հարցազրուցավարների առաջին ինստրուկտաժ, հարցաթերթերի փորձարկում, հարցաթերթերի վերջնական տարբերակի պատրաստում

Հարցաթերթերի ինստրուկտաժին ներկա գտնվելը պարտադիր պայման է բոլոր հարցազրուցավարների համար: Ինստրուկտաժը բաղկացած է հետևյալ բաժիններից՝

- քանակական հետազոտության նպատակի, հիմնական խնդիրների ներկայացում,
- ծանոթացում հարցաթերթերի հետ,
- դերային խաղ,
- ընդհանուր կազմակերպչական թրեյնինգ:

Հարցաթերթերի առաջնային և երկրորդային ստուգում դաշտային փուլից անմիջապես հետո

Ստորև ներկայացված են տվյալների մշակման հիմնական փուլերը, որոնք հաջորդում են դաշտային փուլին:

- Հարցաթերթերի առաջնային ստուգում որակի ստուգողի կողմից. դաշտից եկած հարցաթերթերը ստուգվում են ընկերության համապատասխան մասնագետի կողմից: Ստուգման ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում բովանդակային սխալներին, բացթողումներին, հարցաթերթերի ոչ ճիշտ լրացմանը և ընտրանքից շեղմանը: Յուրաքանչյուր դաշտային օրվա սկզբում հարցազրուցավարները տեղեկացվում են այդ սխալների մասին՝ մյուս օրերին այդ սխալները թույլ տալու հավանականությունը նվազեցնելու նպատակով:
- Հարցաթերթերի երկրորդային ստուգում հեռախոսազանգով. Այս փուլում հարցաթերթերը ստուգվում են հեռախոսազանգով, որից հետո բոլոր խնդրահարույց /խոտան/ հարցաթերթերը առանձնացվում են, այնուհետև որակի ստուգման մենեջերը ընտրում է մշակված հարցաթերթերը և նախապատրաստում դրանք տվյալների մշակման հաջորդ փուլի համար:
- Առաջին երկու փուլից հետո հարցաթերթերը համարակալվում են և այդ համարակալման հիման վրա մուտքագրվում տվյալների բազա:

Մասնագիտական մշակում և կոդավորում

Դաշտին հաջորդող օրերի ընթացքում համապատասխան մասնագետները՝ կոդավորողները, դուրս են գրել բաց և կիսափակ, այդ թվում նաև «այլ», հարցերի պատասխանները: Հարցվողների պատասխանները վերանայվել են, որոնց հիման վրա կառուցվել են կոդավորման խմբավորված կատեգորիաները՝ այդ մեկնաբանությունները ներկայացնելու նպատակով: Այնուհետև յուրաքանչյուր հարցաթերթ մշակվել է պատրաստված կոդավորման գործիքով և բոլոր բաց հարցերը կոդավորվել են: Յուրաքանչյուր կոդավորող պատասխանատու է հարցաթերթի որոշակի մասի կոդավորման համար (որոշակի բաց հարցերի և «այլ-երի» համար): Այնուհետև բոլոր կոդավորված հարցաթերթերը մուտքագրվել են համապատասխան մասնագետների կողմից:

SPSS տվյալների բազայի պատրաստում

Հարցաթերթերի վերջնական տարբերակների հիման վրա ստեղծվել է տվյալների SPSS բազա որը ներառում է 384 փոփոխական: Տվյալների բազայի պատրաստման ընթացքում հաշվի է առնվել յուրաքանչյուր հարցի առանձնահատկությունը և ներառվել է փոփոխականներին և նրանց արժեքներին վերաբերող անհրաժեշտ ինֆորմացիա: Բազայում ներառվում են բաց հարցերի կոդերը:

Տվյալների բազայի վերջնական ստուգում և մաքրում

Տվյալների բազայի ստուգմանը հաջորդում է բազայի մաքրման գործընթացը, որը բաղկացած է երկու փուլից.

- Տվյալների բազայում սխալների հայտնաբերում և ուղղում: Բազայի մաքրումը

իրականացվում է հիմնվելով հաճախականությունների /frequencies/ ստուգման վրա, որը որպես կանոն կիրառվում է այնպիսի կատեգորիաների համար, ինչպիսիք են սեռ, տարիք, բնակավայր, որոշակի անհամապատասխանությունների դուրս բերման նպատակով:

- Բնակավայրի «մաքրումից» հետո, հարցազրուցավարների կոդերը, ինչպես նաև

այլ անկախ փոփոխականները զտվում են ըստ յուրաքանչյուր հարցի, իսկ նկատված սխալները ուղղվում են համապատասխան հարցաթերթի հիման վրա:

Այս բոլոր փուլերի ավարտից հետո տվյալների բազան ուղարկվում է վերջնական վերլուծության և հաշվետվության պատրաստման, որը սույն մեթոդաբանական հաշվետվությունից առանձին է տրվում Պատվիրատուին:

Հետազոտության ընտրանքի դեմոգրաֆիկ բնութագրիչները

Հետազոտության մասնակիցների դեմոգրաֆիկ պատկերը ներկայացված է ստորև՝ **Աղյուսակ 5-ում:**

Դեմոգրաֆիկ բնութագրիչ	**ՏՂԱՄԱՐԴԻԿ N=767 100%**		**ԿԱՆԱՅՔ N=850 100%**	
	N	**%**	**N**	**%**
ՏԱՐԻՔԸ				
18-24	153	19.9%	133	15.6%

25-34	209	27.2%	252	29.6%
35-49	250	32.6%	291	34.2%
50-59	155	20.2%	174	20.5%
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ				
Տարրական կամ ավելի ցածր	0	0.0%	1	0.1%
Հիմնական	32	4.2%	14	1.6%
Միջնակարգ	403	52.5%	324	38.1%
Միջին մասնագիտական	126	16.4%	245	28.8%
Բարձրագույն	206	26.9%	266	31.3%
ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ				
Գրանցված ամուսնություն	408	53.2%	533	62.7%
Չգրանցված ամուսնություն	83	10.8%	95	11.2%
Ոչ պաշտոնական միություն (Ապրում է զուգընկերոջ հետ, ամուսնացած չեն)	9	1.2%	9	1.1%
Ընկեր/ընկերուհի (չեն վարում համատեղ կյանք)	28	3.7%	9	1.1%
Չամուսնացած	213	27.8%	124	14.6%
Բաժանված/ ամուսնալուծված	24	3.1%	50	5.9%
Այրի	2	0.3%	30	3.5%
ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ				
Միայնակ	15	2.0%	15	1.8%
2	50	6.5%	71	8.4%
3	132	17.2%	121	14.2%
4	188	24.5%	216	25.4%
5	161	21.0%	157	18.5%
6	115	15.0%	143	16.8%
7	71	9.3%	69	8.1%
8-14	34	4.5%	54	6.3%
Չկա պատասխան	1	0.1%	4	0.5%
ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ				
Երևան	258	33.6%	312	36.7%

Այլ քաղաքային բնակավայր	226	29.5%	246	28.9%
Գյուղական բնակավայր	283	36.9%	292	34.4%
ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ				
Երբեք չի աշխատել	40	5.2%	171	20.1%
Ուսանող	24	3.1%	48	5.6%
Գործազուրկ	249	32.5%	356	41.9%
Գրանցված աշխատող	224	29.2%	185	21.8%
Չգրանցված աշխատող	227	29.6%	68	8.0%
Սովորում և աշխատում է	2	0.3%	1	0.1%
Երեխայի խնամքի կամ այլ տեսակի արձակուրդում է	1	0.1%	19	2.2%
Պատասխան չկա	0	0.0%	2	0.2%
ԿՐՈՆ				
Հայկական առաքելական եկեղեցի	726	94.7%	817	96.1%
Բողոքական	8	1.0%	11	1.3%
Կաթոլիկ	1	0.1%	2	0.2%
Այլ	7	0.9%	5	0.6%
Անկրոն է (աթեիստ/ագնոստիկ)	24	3.1%	14	1.6%
Չկա պատասխան	1	0.1%	1	0.1%
ԱՄՍԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏԸ				
40,000 ՀՀ դրամից պակաս	60	7.8%	72	8.5%
41,000-120,000 ՀՀ դրամ	222	28.9%	174	20.5%
121,000-220,000 ՀՀ դրամ	144	18.8%	57	6.7%
221,000-400,000 ՀՀ դրամ	48	6.3%	12	1.4%
Ավելի քան 401,000 ՀՀ դրամ	13	1.7%	2	0.2%
Եկամուտ չունի	221	28.8%	515	60.6%
Չկա պատասխան	59	7.7%	18	2.1%
ԸՆԴԱՄԵՆԸ	**767**	**100.0%**	**850**	**100.0%**

ԳԼՈՒԽ 1. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հարցվողներին առաջադրվել են մի շարք հարցեր՝ կապված կանանց իրավունքների, գենդերային հավասարության, կանանց քաղաքական և տնտեսական մասնակցության և առաջնորդելու ներուժի, ինչպես նաև համապատասխան օրենքների գոյության վերաբերյալ գիտելիքների և վերաբերմունքի հետ:

Կանանց իրավունքները

Գենդերային հավասարության, այն է՝ տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հնարավորությունների հիմնախնդիրը նոր չէ: Երկու սեռերի համար հավասար իրավունքներն ամրագրված են միջազգային պայմանագրերով, կոնվենցիաներով, համաձայնագրերով և այլ իրավական գործիքներով, ինչպես նաև երկրի սահմանադրությամբ: Սակայն, թեև տղամարդկանց և կանանց իրավունքների հավասարությունը *de jure* պաշտպանված է Հայաստանի սահմանադրությամբ[27], այս երկիրը դեռ չի հասնել *de facto* գենդերային հավասարության[28]:

Ելնելով պատմական համատեքստից (մասնավորապես՝ Սովետական արժեհամակարգից ժառանգած ֆորմալ հավասարությունից և Հայաստանի՝ որպես անկախ պետության ընթացիկ սահմանադրությունից)՝ զարմանալի է, որ դեռևս կան մարդիկ, ովքեր տղամարդկանց և կանանց իրավունքների վահավասարությունը դիտարկում են որպես «zero sum game», այսինքն երբ մեկը շահում է մյուսի կորցնելու հաշվին :

---

[27] Հայաստանը ոչ միայն վավերացրել կամ ստորագրել է գենդերային հավասարությունը վերաբերով միջազգային փաստաթղթեր (առաջին հերթին՝ CEDAW կոնվենցիան, Բնակչության և զարգացման միջազգային գիտաժողովի գործողության պլանը, Պեկինյան գործողությունների ծրագիրը, Հազարակյյակի զարգացման նպատակները, Կայուն զարգացման հպատակները և այլն), այլ նաև՝ ներառել է հատուկ պայմաններ (Հոդված 30) 2015-ի բարեփոխված Սահմանադրության մեջ, հաստատել է Գենդերային քաղաքականության հայեցակարգը (2011-ի թետրվարին), ընդունել Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներ և հնարավորություններ երաշխավորող օրենքը (2013-ի մայիսին), Կանանց կարգավիճակի և հասարության մեջ նրանց դերի բարձրացման 2 ազգային ծրագրերը (1998-2000-ի և 2004-2010-ի համար), 2011-2015 թթ. Գենդերային քաղաքականության ռազմավարական ծրագիրը և 2011-2015թթ. Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիրը:

[28] Տե՛ս օրինակ, Գենդերային «ճեղքվածքի» վերաբերյալ համաշխարհային զեկույց *2015*. Ժնև, Համաշխարհային տնտեսական ֆորում, 2015, էջեր. 88-89. Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ: Հայաստան (Փետրվար 2009). ՄԱԿ-ի փաստաթուղթ CEDAW/C/ARM/CO/4/Rev.1.*Հայաստանի 5րդ and 6րդ պարբերական զեկույցները՝ ներկայացված CEDAW կոմիտեին, .մարտ 2015.* ՄԱԿ-ի փաստաթուղթ CEDAW/C/ARM/5-6, p. 13. Երկրի գենդերային զեկույցը. Հայաստան: Մանիլա. Ասիական զարգացման բանկ 2015. Դուբան Ի. Գենդերային իրվիճակը հայաստանում ԱՄՆ ՄԶԳ, *Հայաստան.* Վաշինգտոն: ԱՄՆ ՄԶԳ, 2010. Պիթման, Ա.. *Կանաց իրավունքների ուսումնասիրությունը և ֆեմինիստական շարժման սկզբնավորումը Հայաստանում. Անցյալից դասեր քաղելով և ապագայի ռազմավարություն մշակելով.* http://media.wix.com/ugd//c5c87c_c87914feeeb70cd5db729f306e399d83.pdf *2011-2015 Գենդերային քաղաքականության ռազմավարական ծրագրի և 2011-2015 Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիր իրականացման մոնիտորինգ* . Զեկույց, Երևան, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր/UNDP, ՄԱԲՀ/ UNFPA և ՄԱՄՀ/ UNICEF, դեկտեմբեր, 2015թ. (Հայաստան).

Ինչպես երևում է **Աղյուսակի 1-ի** տվյալներից, հարցվողների 12.9%-ը համաձայն են այն պնդման հետ, որ երբ կանայք իրավունքներ են ստանում, նրանք խլում են տղամարդկանց իրավունքները, իսկ 13.1%-ը համաձայն են այն պնդմանը, որ կանանց իրավունքներ տալը կնշանակի տղամարդկանց պարտություն: Իհարկե, երկու դեպքում էլ հարցվողների 86.0%-ից ավելին (այսինքն՝ գերակշռող մեծամասնությունը) համամիտ չեն այս պնդումներին: Այնուամենայնիվ, չնայած այն փաստին,որ համեմատաբար ցածր տոկոս են կազմում նրանք, ովքեր գտնում են, որ կանանց իրավունքներ են տրվում տղամարդկանց իրավունքների հաշվին, խնդրի կամ պոտենցիալ խնդրի առկայություն է արձանագրվում:

Աղյուսակ 1. Վերաբերմունքը կանանց իրավունքներին

Հետևյալ պնդումների հետ համաձայն հարցվածների տոկոսը.

Տեսակետներ	Հարցվածներ (N=1,617)
Երբ կանայք իրավունքներ են ստանում, նրանք խլում են տղամարդկանց իրավունքները:	**12.9%** (ընդդեմ չհամաձայնողների 86.3%-ի)
Կանանց իրավունքեր շնորհելը տղամարդկանց իրավունքների ոտնահարում է ենթադրում:	**13.1%** (ընդդեմ չհամաձայնողների **86.1%-ի**)

Դա նշանակում է, որ քարոզչությունը, հանրային իրազեկության բարձրացումը և տեղեկատվական քարոզարշավները, ինչպես նաև լուսավորման փորձերը միշտ չէ, որ արդյունավետ են և/կամ դրանք չեն հասնում բնակչության մեծ հատվածին: Դա նաև կարող է ենթադրել հակադրություն կամ հետադարձ դեպի պատրիարխալ մտածողություն:

Իրերի նման դրությունն իր հավաստումն է ստանում դիտելով պատասխանները ըստ պնդումների հետ համաձայն հարցվածների սեռի[29]: **Աղյուսակ 2-ում** ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ տղամարդ հարցվածների թիվը կրկնակի անգամ գերազանցում է կին հարցվածներին, ովքեր համոզված են, որ կանանց իրավունքներ շնորհելու պարագայում կանայք հավակնում են սահմանափակել տղամարդկանց իրավունքները: Գրեթե ամեն հարցված հինգերորդ տղամարդը համակարծիք էր այս

[29] Կին և տղամարդ հարցվածների միջև տարբերությունները վիճակագրության տեսակետից էական են (p=0.000), թեպետև կապի հաստատունությունը շատ թույլ է:

պնդումների հետ: Դա նշանակում է, որ տղամարդկանց զգալի մասն այս երկրում ոչ միայն սխալ պատկերացումներ ունեն մարդկանց իրավունքների մասին ընդհանրապես և կանանց իրավունքների մասին՝ մասնավորապես, այլև կարող են ինչպես և շատերը դառնալ գենդերային հավասարության դեմ քարոզչության և քարոզարշավի զոհ:

Աղյուսակ 2. Կանանց իրավունքների հանդեպ վերաբերմունք

Ստորև տրված պնդումների հետ համաձայն կին և տղամարդ հարցվածների տոկոսը.

Տեսակետներ	Տղամարդիկ (N=767)	Կանայք (N=850)
Երբ կանայք իրավունքներ են ստանում, նրանք խլում են տղամարդկանց իրավունքները:	**18.2%** (ընդդեմ չհամաձայնողների **80.7%-ի)**	**8.2%** (ընդդեմ չհամաձայնողների **91.2% -ի)**
Կանանց իրավունքեր շնորհելը տղամարդկանց իրավունքների ոտնահարում է ենթադրում	**17.5%** (ընդդեմ չհամաձայնողների **81.2%-ի)**	**9.1%** (ընդդեմ չհամաձայնողների **90.4%-ի)**

Միևնույն ժամանակ կին հարցվածների 9.0%-ը ոչ միայն հակված են ընդունելու, այլև ընդունում են «զրոյական արդյունքով խաղի» այս տեսակետները: Նրանք, ինչպես և վերոհիշյալ տղամարդիկ անկասկած պետք է թիրախ խումբ դառնան կանանց ՀԿ իրազեկության բարձրացման, կրթական և այլ քարոզչական գործունեության շրջանակներում:

Տղամարդկանց և կանանց այդ խմբերի հետ ավելի ստույգ և արդյունավետ աշխատելու համար մանրամասն տեղեկություններ են անհրաժեշտ, հստակեցնելու տղամարդկանց և կանանց այդ ենթախմբերի հիմնական բնութագրիչները:

Սովորաբար տարիքի, կրթության և բնակավայրի իսկ երբեմն նաև ամուսնական կարգավիճակի ու զբաղվածությունը այդ բնութագրիչները օժանդակում են տարբերությունների տարանջատմանը: Սակայն նման դեպքերում այս կատեգորիաներում ընդգրկված խմբերի միջև վիճակագրությամբ արձանագրված նշանակալի տարբերություններ չկան: Այլ կերպ ասած, սույն պնդման հետ համակարծիք անձանց մասնաբաժինը նույնն է տարբեր ենթախմբերում և համապատասխանում է ողջ ընտրանքի միջին ցուցանիշին: Սա ճշմարիտ է նաև պնդումների հետ չհամաձայնվողների մասնաբաժնի դեպքում:

Սակայն, երբ այս բնութագրիչներին զուգորդվում են հարցվածների սեռի տարբերակմամբ տարբերությունը դառնում է նշանակալի՝ թույլից չափավոր ուժային տատանումով հանդերձ: Հետևաբար տվյալները պետք է ստանալ աղյուսակների եռուղի խաչմամբ: Խիստ հարաբերական ու ձեռնպահ մոտեցմամբ հնարավոր է ստանալ գենդերային ամենահավասարակշիռ խմբերի պատկերը: Դրանք 35-ից 49տարեկան միջնակարգ կրթությամբ տղամարդիկ են, ովքեր հիմնականում ապրում են այլ քաղաքային բնակավայրերում /ոչ Երևանում/ և ցածր կրթվածությամբ 50-ից 59 տարեկան կանայք, ովքեր հիմնականում բնակվում են Երևանում:

Գենդերային հավասարությունը

Չորս հարց է տրվել պարզելու, թե ինչքանով է ապավոված գենդերային հավասարությունը և ով է դրանից շահել:

Աղյուսակ 3-ի տվյալները վկայում են, որ հարցվածների ճնշող մեծամասնությունը (86.8%) հավատում են, որ գենդերային հավասարության հասնելու հարցում զգալի առաջընթաց կա: Այս գերլավատեսական պնդումը հեռու է ներկայիս Հայաստանի իրականությունից:

Ինչ վերաբերում է երկրորդ պնդմանը, ապա գնահատումն ավելի իրատեսական է: հույնպես, հարցվածների 63.3% համաձայն են, որ գենդերային հավասարությունն արդեն մեծամասամբ իր իրացումն է ստացել:

Աղյուսակ 3. Վերաբերմունք գենդերային հավասարության հանդեպ
Ստորև տրված պնդումների հետ համաձայն հարցվածների տոկոսը.

Տեսակետներ	Հարցվածներ (N=1,617)
Գենդերային հավասարությունն արդեն զգալի առաջընթաց է գրանցել:	**86.8%** (ընդդեմ չհամաձայնողների 12.2%-ի)
Գենդերային հավասարությունը հիմնականում ապահովված է:	**63.3%** (ընդդեմ չհամաձայնողների 35.7%-ի)
Գենդերային հավասարության հասնելուն միտված ջանքերը ձեռնտու են հիմնականում ապահովված մարդկանց :	**47.5%** (ընդդեմ չհամաձայնողների 45.3%-ի)
Գենդերային հավասարության խթանման ուղղությամբ ավելի շատ է պետք աշխատել:	**51.3%** (ընդդեմ չհամաձայնողների 46.3%-ի)

Եթե իրոք սա է գերակա տեսակետը, ապա բնակչության մեծամասնությունը բավարար չափով իրազեկված չէ: Հետևաբար՝ իրադրությունն ունի դրական և բացասական ասպեկտներ: Դրական ասպեկտն ամրագրված է Թոմասի թեորեմում[30], քանի որ նման դիրքորոշումը դիրքորոշումը հավանաբար դրական արդյունք կապահովի: Բացասական ասպեկտ էլ այն է, որ գենդերային հավասարության հիմնախնդիրը համարելով գրեթե լուծված՝ քայլերն այլևս չեն ձեռնարկվի: Ի՞նչ կարիք կա անհանգստանալու, եթե ամեն ինչ առանց այդ էլ լավ է:

Իրադրության իրատեսական գնահատումը ավելի արդյունավետ կլիներ, քանի որ այն կխթաներ քայլերի ձեռնարկումը և այսպիսով ավելի դրական արդյունք կապահովեր:

Երրորդ պնդումը կասկածի տեղիք է տալիս անգամ գենդերային հավասարության գաղափարի մասին, քանի որ այն ցույց է տալիս, որ գենդերային հավասարության հասնելու հետևանքով առավելապես բարեկեցիկ մարդիկ են շահում: Թեև հարցվածների կեսից քիչն էր համաձայն, նրանց թիվն դեպքում մեծ է (47.5%):

Սույն պնդման հարաբերականորեն լայնամասշտաբ սատարումը ևս թերիրազեկման հետևանք է: Գենդերային հավասարությունը հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովումն է: Այպես, ավելի հավանական է, որ խոցելի խմբերն ավելի կշահեն, քան բարեկեցիկ խմբերը: Այնուամենայնիվ, քանի որ գերիշխում է այն կարծիքը, որ գենդերային հավասարության ապահովմանը միտված գործողություններից օգուտ կքաղեն առավել ապահովվածները, ցանկալի է իրացվող ընթացիկ գենդերային քաղաքականության և համապատասխան գործողությունների համակողմյա ուսումնասիրություն անցկացնել՝ համոզվելու համար, որ սույն մոտեցումը սխալ է: Ցանկալի կլիներ ջանքեր գործադրել լայն հասարակությանը մատչելի և հասանելի ձևով ներկայացնելու այս դաշտում վարվող քաղաքականության և գործունեության ուսումնասիրության արդյունքները՝:

Հարկ է նշել, որ հարցվածների կեսից քիչ ավելին համաձայն են այն պնդմանը, որ անհրաժեշտ է ավելի շատ աշխատանք տանել գենդերային հավասարության ապահովման համար: Սակայն լիովին պարզ չէ, թե ինչպես որոշ հարցվածներ

[30] «Երբ մարդ բնութագրում է իրավիճակը ինչպես այդպիսին, ապա այն իրական է իր հետևանքներով»

(հավանաբար 10%-15%-ը), ովքեր համաձայնել են առաջին երկու պնդումներին, դրական են պատասխանել նաև այս մեկին: Ամեն դեպքում կարևոր է, որ հարցվածների 51.3%-ը գիտակցում է, որ գենդերային հավասարությունը նպատակ է, որն իր իրականացումը դեռ չի ստացել և որի ուղղությամբ անհրաժեշտ է աշխատել:

Ըստ սեռի տարանջատված տվյալների, որոնք ներկայացված են **Աղյուսակ 4-ում**[31], երևում է որ բացի երրորդ պնդումից, մյուս պնդումների հետ համաձայն կին և տղամարդ հարցվածների մասնաբաժիններում ակհայտ տարբերություն կա: Բոլոր դեպքերում (կրկին երրորդ պնդման բացառությամբ), կին հարցվածների մասնաբաժինն ավելի մեծ է:

Աղյուսակ 4. Վերաբերմունք գենդերային հավասարության հանդեպ
Հետևյալ պնդումների հետ համաձայն կին և տղամարդ հարցվածների տոկոսը.

Տեսակետներ	Տղամարդիկ (N=767)	Կանայք (N=850)
Գենդերային հավասարությունն արդեն զգալի առաջընթաց է գրանցել:	**83.3%** (ընդդեմ հարցվածների 15.7% -ի)	**89.9%** (ընդդեմ հարցվածների 9.1 %)
Գենդերային հավասարությունը հիմնականում ապահովված է:	**57.0%** (ընդդեմ հարցվածների 41.9%-ի)	**69.0%** (ընդդեմ հարցվածների 30.2%-ի)
Գենդերային հավասարության հասնելուն միտված ջանքերը ձեռնտու են հիմնականում ապահովված մարդկանց :	**48.5%** (ընդդեմ հարցվածների 42.8%-ի)	**46.6%** (ընդդեմ հարցվածների 47.5%)
Գենդերային հավասարության խթանման ուղղությամբ ավելի շատ է պետք աշխատել:	**44.2%** (ընդդեմ հարցվածների. 53.3% -ի)	**57.7%** (ընդդեմ հարցվածների 40.0% -ի)

Ամենամեծ տարբերությունը նկատվում է երկու հակասական պնդումների միջև, այն է՝ «Գենդերային հավասարությունը հիմնականում ապահովված է» և «Գենդերային հավասարության խթանման ուղղությամբ ավելի շատ է պետք աշխատել»:

[31] Կին և տղամարդ հարցվածների միջև տարբերությունները վիճակագրության տեսակետից էական են ((p=0.000 երկրորդ և չորրորդ պնդումների դեպքում, p=0.002 առաջին պնդման դեպքում և p=0.027 չորրորդ պնդման դեպքում), թեև կապի հաստատունությունը շատ թույլ է:

Թվում է՝ տղամարդիկ ավելի իրատեսորեն են գնահատում ընթացիկ իրադրությունը: Հնարավոր է, որ կանայք համաձայն են գենդերային հավասարության խնդրի գրեթե լուծված և շատերի համար պարզված լինելու տեսակետի հետ, քանի որ կին հարցվածները տղամարդկանցից առավել են կենտրոնանում սեռերի միջև *de jure* հավասարության, քան թե de *facto* հավասարության վրա:

Ինչ վերաբերում է պնդումներին. Երկրորդ պնդման վիճակագրորեն կարևոր գործոնը բնակության վայրն է, երրորդ պնդման համար՝ բնակության վայրն ու կրթությունը, իսկ չորրորդի համար՝ տարիքն ու կրթությունը:

Հարցվածների ամենամեծ մասնաբաժինը, ովքեր գտնում են, որ գենդերային հավասարության հիմնահարցն արդեն ստացել է իր լուծումը, այլ քաղաքային բնակավայրերի /ոչ Երևանի/ բնակիչներ են (63.0%), իսկ նվազագույն մասնաբաժինը կազմում են գյուղաբնակները (55.0%): Երևանաբնակների մասնաբաժինը կազմում է 61.1%:

Հարցվածների մեծամասնությունը, ովքեր համաձայն են այն պնդման հետ, որ «Գենդերային հավասարության հասնելուն միտված ջանքերը ձեռնտու են հիմնականում ապահովված մարդկանց» գյուղաբնակներ են (51.1%), Երևանաբնակները համեմատաբար քիչ են (43.7%), իսկ այլ քաղաքային բնակավայրերի բնակիչները միջանկյալ դիրք են զբաղեցնում (47.6%), իսկ ինչ վերաբերում է կրթության մակարդակին, ամենամեծ մասնաբաժինը հիմնական կրթությամբ հարցվածներն են կազմում (52.6%), մինչդեռ ամենացածրը՝ բարձրագույն կրթությամբ անձինք (47.1%). միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների համամասնությունը կազմում է համապատասխանաբար 50.5% և 50.0%:

Գենդերայի հավասարության հասնելու համար ավելի շատ աշխատանք տանելու կողմնակից հարցվածների ամենաբարձր տոկոսը կազմում են բարձրագույն կրթություն ունեցողները (58.6%), իսկ ամենացածրը՝ միջնակարգ կրթություն ունեցողները (43.5%). միջանկյալ դիրքում են միջին մասնագիտական և միջնակարգ կրթություն ունեցողները (համապատասխանաբար 49.3% and 48.0% r): Իսկ ինչ վերաբերում է տարիքին, ամենաբարձր տոկոսները 18-ից 24 և 50-ից 59 տարեկանների մոտ են գրանցվել (համապատասխանաբար 58.8% և 57.7%)՝ հետևում թողնելով 25-ից 34 և 36-ից 49 տարեկաններին (համապատասխանաբար 47.7% և 46.4%):

Գենդերային հավասարության օրենքները

Գենդերային խնդիրներին առնչվող ցանկացած քննարկման կարևոր ասպեկտ է գենդերային հավասարության և գենդերային բռնության կանխարգելման մասին ազգային օրենքների իմացությունը: Դրանք սովորաբար կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներ և հավասար հնարավորութուններ ապահովող օրենքներն են, ինչպես նաև կանաց դեմ բռնության կամ ընտանեկան բռնության կանխարգելման մասին օրենքները:

Ելնելով այն փաստից, որ *Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովման մասին օրենքը* սուր հակասություններ առաջացրեց ոչ վաղ անցյալի որոշակի պահին, կարելի էր ակնկալել, որ հարցվածները քաջատեղյակ էին այդ օրենքի գոյությանը: Սակայն, ինչպես երևում է **Աղյուսակ 5 -ի** տվյալներից, ընտրանքի միայն 43.2% է տվել ճիշտ պատասխան, մինչդեռ 36.1%-ը սխալ է պատասխանել: Հարցվածների զգալի տոկոսն անտեղյակ էին (20.4%):

Աղյուսակ 5. Գենդերային հավասարության և կանանց դեմ բռնության (ԿԴԲ/VAW) կանխարգելման օրենքների իմացությունը

Մեր երկրում գործու՞մ է օրենք.	
1. գենդերային հավասարության մասին	Հարցվածներ **N =1,617** Պատասխանների տոկոսային բաշխվածություն
Այո	**43.2%**
Ոչ	**36.1%**
Չգիտեմ	**20.4%ը**
Չկա պատասխան	**0.3%**
2. ԿԴԲ մասին	
Այո	**62.7%**
Ոչ	**26.6%**
Չգիտեմ	**10.5%**
Չկա պատասխան	**0.2%**

Շատ ավելի անսպասելի էր այն, որ հարցվածների մեծ մասը սխալ էին պատասխանել ԿԴԲ կանխարգելման մասին օրենքին վերաբերող հարցին: Մինչ թեժ հանրային քննարկումներ էին ընթանում, օրենքի նախագիծն այդպես էլ Ազգային ժողովի քննարկման թեմա չդարձավ: Քանի որ օրենքի հիմախնդիր հանդիսացող թեման ժամանակ առ ժամանակ հայտնվում էր ԶԼՄ-ների ուշադրության կենտրոնում, ամենայն հավանականությամբ այդ 62.7%-ից սխալ պատասխաններ տված շատ անձինք հիշել էին լրատվական ռեպորտաժները և կարծել, որ օրենքն ընդունվել է: Հարցվածների միայն քառորդն էր տվել ճիշտ պատասխան (26.6%), իսկ 10.5%-ն անտեղյակ էին:

Ըստ հարցվածների սեռի տարանջատված **Աղյուսակ 6** -ի տվյալները ցույց են տալիս, որ տղամարդիկ ավելի լավ են իրազեկված վերոհիշյալ օրենքների մասին, քան կանայք: Չնայած կին և տղամարդ հարցվածների մասնաբաժինների տարբերությունը նվազագույն է գենդերային հավասարության օրենքի մասին հարցին ճիշտ և սխալ պատասխաններ տալիս, ԿԴԲ կանխարգելման օրենքի պարագայում այն զգալի է:

Աղյուսակ 6. Գենդերային հավասարության և ԿԴԲ կանխարգելման մասին ազգային օրենքների մասին իրազեկվածությունը

Մեր երկրում գործու՞մ է օրենք.	**Պատասխանների տոկոսային բաշխվածությունը**	
1. գենդերային հավասարության մասին	**Տղամարդիկ (N=767)**	**Կանայք (N=850)**
Այո	**43.7%**	**42.8%**
Ոչ	**34.0%**	**37.9%**
Չգիտեմ	**21.6%**	**19.3%**
Չկա պատասխան	**0.7%**	**0.0%**
2. ԿԴԲ կանխարգելման մասին		
Այո	**58.7%**	**66.4%**
Ոչ	**30.8%**	**22.8%**
Չգիտեմ	**10.0%**	**10.8%**
Չկա պատասխան	**0.5%**	**0.0%**

Այլ կերպ ասած, չնայած տղամարդ հարցվածների մեծամասնությունը սխալ է պատասխանել երկրորդ օրենքի վերաբերյալ հարցին, այնուամենայնիվ նրանք, ի տարբերություն կին հարցվածների, մոտ 8.0%-ով ավելի իրազեկ էին և՛ սխալ, և՛ ճիշտ պատասխանների դեպքում:

Վիճակագրորեն նշանակալի տարբերություն կա գենդերային հավասարության մասին օրենքի վերաբերյալ պատասխաններում՝ կախված տարիքից ու բնակավայրից, իսկ ինչ վերաբերում է ԿԲԴ կանխարգելման օրենքին, ապա պատասխանների տարբերությունները պայմանավորված են կրթության և բնակավայրի գործոններով:

Ինչ վերաբերում է գենդերային հավասարության օրենքին՝ ըստ տարիքային բաշխվածության՝ ճիշտ պատասխան տված հարցվածների ամենամեծ մասնաբաժինը 50-ից 59 տարեկաններն են կազմում (55.3%), որը միակ տարիքային խումբն էր, որի անդամների կեսից ավելին ճիշտ էին պատասխանել, իսկ նվազագույն մասնաբաժինը 25-ից 34 տարեկաններն են (36.9%). Միջանկյալ դիրքում են 18-ից 24 և 36-ից 49 տարեկանները (համապատասխանաբար 41.3% և 42.9%), իսկ ինչ վերաբերում է բնակավայրին, ամենամեծ մասնաբաժինը գյուղաբնակներն են կազմում (48.0%), ամենացածրը՝ Երևանաբնակները (37.5%), մինչդեռ այլ քաղաքային բնակավայրերի բնակիչները միջանկյալ դիրքում են (44.3%):

Ըստ բնակության վայրի գործոնի ԿԴԲ կանխարգելման օրենքը տոկոսային տվյալներով լրիվ համընկնում է գենդերային հավասարության օրենքին: Ճիշտ պատասխան տված հարցվածների ամենամեծ մասնաբաժինը գյուղաբնակներն են (35.0%), իսկ ամենացածրը՝ Երևանաբնակները (18.9%), մինչդեռ այլ քաղաքային բնակավայրերի բնակիչները միջանկյալ դիրքում են (25.6%): Կրթության գործոնի պարագայում իրադրությունը հայելու ճշգրտությամբ արտացոլում է այդ գործոնի սովորական դարձած ազդեցությունը: Ճիշտ պատասխան տված հարցվածների ամենամեծ մասնաբաժինը կազմում են ամենացածր կրթամակարդակ ունեցողները (45.7%), որին հետևում են միջնակարգ (31.5%) և միջին մասնագիտական կրթությամբ անձինք (24.8%), մինչդեռ ամենացածր տոկոսն են կազմում բարձրագույն կրթություն ունեցողները (18.6%):

Կանանց քաղաքական մասնակցությունը և առաջնորդական ներուժը

Հետազոտության մի փոքր մաս վերաբերում էր կանանց քաղաքական մասնակցության և նրանց ղեկավարման ներուժի վրա:

Ինչպես երևում է **Աղյուսակ 7 –ի** տվյալներից, հարցվածների զգալի տոկոսը համաձայն են այն պնդումներին, որոնք կանանց այնքան էլ հաճո չեն, մինչդեռ, մյուս կողմից, ավելի մեծ տոկոս են կազմում գենդերային արդարության կողմնակիցները: Այլ կերպ ասած, հարցվածների որոշակի մասնաբաժինը հակասական կարծիքներ են սատարում:

Հարցվածների 58.3%-ը համամիտ են այն մտքի հետ, որ տղամարդիկ ավելի լավ քաղաքական գործիչներ են դառնում, քան կանայք: Թեև այս արմատացած հայրիշխանական կարծրատիպն ընդունելի է հարցվածներից կեսից ավելիի համար. տոկոսն ավելի ցածր է, քան մի քանի տարի առաջ՝ անգամ դաշտում մենաշնորհ ստեղծած տղամարդ քաղաքական գործիչներից աճող հիասթափության պարագայում: Միևնույն ժամանակ սույն պնդումը բավականին վերացական է, քանի որ մինչ օրս կանանց չի հաջողվել զբաղեցնել բարձր քաղաքական պաշտոններ խոչընդոտող տղամարդկանց պատճառով: Հետևաբար, անհնար է համեմատել, և պնդումն իսկ ոչ այլ ինչ է, քան սուբյեկտիվ չհիմնավորված կարծիք:

Աղյուսակ 7. Վերաբերմունք կանանց քաղաքական մասնակցության և առաջնորդելու ներուժի հանդեպ

Հետևյալ պնդումների հետ համակարծիք հարցվածների տոկոսը.

Պնդումներ	Հարցվածներ (N=1,617)
Տղամարդիկ ավելի լավ քաղաքական գործիչներ են դառնում, քան կանայք	**58.3%** (ընդդեմ չհամաձայնվողների 40.0%-ի)
Կանայք պետք է զիջեն քաղաքականությունը տղամարդկանց	**42.5%** (ընդդեմ չհամաձայնվողների 56.4%-ի)
Կանայք չափազանց էմոցիոնալ են՝ իրենց համայնքներում ղեկավարներ դառնալու համար	**69.7%** (ընդդեմ չհամաձայնվողների 27.5% -ի)
Կանայք պետք է ընտրվելու նույն հնարավորությունը ունենան, ինչ տղամարդիկ	**76.7%** (ընդդեմ չհամաձայնվողների 22.0% -ի)
Միևնույն որակավորումներն ունեցող կինը կարող է նույնքան լավ աշխատել, որքան տղամարդը	**81.7%** (ընդդեմ չհամաձայնվողների 16.6% -ի)

Մեկ այլ պնդում հիմնվում է «կանայք ի տարբերություն տղամարդկանց չափազանց էմոցիոնալ են», և «տղամարդիկ ավելի խելամիտ են» կարծրատիպի վրա: Քանի որ այդ կարծրատիպը բավականին տարածված է, զարմանալի չէ, որ հարցվածների երկու երրորդից ավելին (69.7%) համաձայնեցին այն պնդմանը, որ կանայք իրենց համայնքներում ղեկավար դառնալու համար չափազանց էմոցիոնալ են: Այս պնդումը ևս անհիմն է առնվազն երկու պատճառով: Առաջին՝ այն տղամարդիկ, ովքեր քաղաքական և տնտեսական ազդեցություն ունեն արգելափակում են կանանց ղեկավար պաշտոններ զբաղեցնելու հնարավորությունները շատ համայնքներում: Երկրի անկախության 25 տարիների ընթացքում Հայաստանյան մեծ և փոքր քաղաքներում երբևէ չի եղել կին քաղաքապետ: Տեղի համայնքներից միայն 2.0%-ն են ղեկավարվում կանանց կողմից, և բոլոր կին ղեկավար ունեցող համայնքները գյուղական են: Երկրորդ՝ կանանց կողմից ղեկավարվող գյուղական համայնքները շատ մարտահրավերների են դիմակայում, որոնք չէին լինի «ռացիոնալ» և «անէմոցիոնալ»տղամարդկանց ղեկավարման պարագայում: Համայնքների այս կին ղեկավարներն անկասկած ապացուցել են, նրանք շատ ընդունակ են, ակտիվ և «ոչ այնքան էմոցիոնալ»: Այդ կանայք ԶԼՄ-ների ուշադրության կենտրոնում և եթերում չեն և այսպիսով հասարակությունն ընդհանուր առմամբ անտեղյակ է նրանց ձեռքբերումներին և նրանց իրացման ներուժին:

Երկրի քաղաքական կյանքի իրողությունները (հատկապես աճող քաղաքական դժգոհությունը) և դեմոկրատիայի, հավասարության (գենդերային հավասարությունը ներառյալ) և քաղաքացիների մասնակցության խրախուսումը քաղաքացիական հասարակության կողմից փոշիացնում են պատրիարխալ գենդերային կարծրատիպերը՝ քաղաքական կուսակցություններում և/կամ բողոքի քարոզարշավներում ներգրավված շատ կանանց աճող քաղաքական ակտիվիզմին զուգընթաց: Հետևաբար այն պնդումը, որ «Կանայք պետք է քաղաքականությունը տղամարդկանց թողնեն» հավանության չարժանացավ հարցվածների կողմից: Թեպետև հարցվածների 42.5%-ը համաձայն են այդ պնդմանը, հարցվող բնակչության կեսից ավելին դեմ են դրան (56.4%):

Այն, որ հավասարության և հասարակական արդարության գաղափարները լայն տարածում են գտնում, ապացուցվում է դրական պատասխանների ահռելի քանակով, որոնք տրվել են հետևյալ պնդումներին. «Կանայք պետք է ունենան քաղաքական պաշտոնում ընտրվելու նույն հնարավորությունները, ինչ տղամարդիկ» և «Նույն

որակավորումներն ունեցող կինը կարող է նույնչափ լավ աշխատել, որքան տղամարդը» (հարցվածների համապատասխանաբար 76.7% և 81.7% համաձայնեցին նրանց հետ): Այլ կերպ ասած, բոլոր հարցվածների երեք քառորդն ու ավելին սատարում են հավասար հնարավորությունների, ինչպես նաև արժանիքների գերակայության և պրոֆեսիոնալիզմի առաջնահերթության սկզբունքները:

Ըստ սեռի տարանջատված տվյալները[32] միևնույն պնդումների վերաբերյալ ներկայացված են **Աղյուսակ 8-ում**: Զարմանալի չէ, որ զգալի տարբերություն կա կին և տղամարդ հարցվածների միջև: Կանայք զիջում են տղամարդկանց գենդերային կարծրատիպերին վերաբերող պնդումներին համաձայնելիս (առաջին երեք պնդումները) և ընդհակառակը՝ նրանք առաջ են անցնում տղամարդկանցից գենդերային հավասարությանն առնչվող պնդումները սատարելիս (վերջին երկու պնդումները):

Աղյուսակ 8. Վերաբերմունք կանանց քաղաքական մասնակցության և առաջնորդելու ներուժի հանդեպ

Հետևյալ պնդումների հետ համակարծիք կին և տղամարդ հարցվածների տոկոսը.

Պնդումներ	Տղամարդիկ (N=767)	Կանայք (N=850)
Տղամարդիկ ավելի լավ քաղաքական գործիչներ են դառնում, քան կանայք	**67.1%** (ընդդեմ չհամաձայնվողների 30.9%-ի)	**50.2%** (ընդդեմ չհամաձայնվողների 48.2%-ի)
Կանայք պետք է քաղաքականությունը զիջեն տղամարդկանց	**48.4%** (ընդդեմ չհամաձայնվողների 50.6%-ի)	**37.3%** (ընդդեմ չհամաձայնվողների 61.5%-ի)
Կանայք չափազանց էմոցիոնալ՝են իրենց համայնքներում ղեկավար դառնալու համար	**73.1%** (ընդդեմ չհամաձայնվողների 23.9%-ի)	**66.7%** (ընդդեմ չհամաձայնվողների 31.0%-ի)
Կանայք պետք է ընտրվելու նույն հնարավորությունը ունենան ինչ տղամարդիկ	**70.3%** (ընդդեմ չհամաձայնվողների 28.4% -ի)	**82.6%** (ընդդեմ չհամաձայնվողների 16.3% -ի)
Միևնույն որակավորումներով կինը կարող է նույնքան լավ աշխատել, որքան տղամարդը	**71.7%** (ընդդեմ չհամաձայնվողների 25.7% -ի)	**90.7%** (ընդդեմ չհամաձայնվողների 8.3% -ի)

[32] Տղամարդ և կին հարցվածների միջև նշանակալի տարբերություն կա վիճակագրության մեջ (p=0.000 առաջին, երկրորդ, չորրորդ և հինգերորդ պնդումներ և p=0.014՝ երրորդ պնդման համար), մինչդեռ զուգորդման ուժգնությունը տատանվում է թույլից՝ չափավոր և չափավորից՝ չափավոր ուժեղ:

Հարկ է փաստել, որ տղամարդկանց զգալի մասնաբաժինը հարում է գենդերային արդարության տեսակետին, քանի որ տղամարդ հարցվածների 70.0%-ից ավելին համաձայն են այն պնդումներին, որոնք արտացոլում են հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի սկզբունքները:

Միևնույն ժամանակ տղամարդ հարցվածների ոչ փոքրաքանակ մասնաբաժինը հարում է գենդերային արդարության սուբյեկտիվ տեսակետին, որոնք կնոջը վերագրում են ենթակա կարգավիճակ և ենթակայի դեր քաղաքական դաշտում: Ամենամեծ մասնաբաժինը համաձայն է այն պնդմանը, որ կանայք չափազանց էմոցիոնալ են իրենց համայնքներում ղեկավար պաշտոններ զբաղեցնելու համար (73.1%), իսկ երկրորդ ամենամեծ մասնաբաժինը համամիտ է այն պնդմանը, որ տղամարդիկ ավելի լավ քաղաքական գործիչներ են դառնում, քան կանայք (67.1%): Տղամարդ հարցվածների համեմատաբար փոքր մասնաբաժինը համաձայն է այն պնդմանը, որ կանայք պետք է քաղաքականությունը զիջեն տղամարդկանց (48.4%): Այս դեպքում անհամաձայնություն հայտնած տղամարդ հարցվածների տոկոսն ավելի մեծ է (50.6%):

Կանանց համար քվոտաները

Քանի որ կանայք բավարար չափով ներկայացված չեն Կառավարությունում և որոշումների կայացման մակարդակում, անհավասարակշռությունը կարգավորող մեխանզմներից մեկը հատուկ ժամանակավոր միջոցների ձեռնարկումն է: Հայաստանում դա իր դրսևումն է ստանում կանաց համար քվոտաների տեսքով քաղաքական կուսակցության ցուցակներում ԱԺ ընտրություններում, որն առաջին անգամ 5.0%-ով ներմուծվել է 1999-ին և այնուհետ բարձրացվել մինչև 15.0% 2007-ին և 20% 2011-ին: Քվոտաներն ունեին դրական, թեև սահմանափակ էֆեկտ կանանց քաղաքական ներկայացվածության բարձրացման մեջ: 2016-ի մայիսի 25-ին ընդունված նոր ընտրական օրենսգիրքը պահանջում է, որ նույն սեռի ներկայացուցիչների առնվազն 30.0%-ը ներառված լինեն քաղաքական կուսակցության ցուցակներում ազգային և տեղական ընտրությունների համար[33]:

[33] Հայաստանի հանրապետության ընտրական օրենսգիրք(2016), հոդված 83.4, http://parliament.am/legislation.php?sel=show&ID=5479&lang=arm

Այնուամենայնիվ, այլ ոլորտների համար քվոտաներ չկան, ինչպես, օրինակ, կառավարության, քաղաքացիական ծառայության, տարածքային կառավարման և տեղական կառավարությունների, ինչպես նաև բիզնես սեկտորի համար:

Հետազոտությունն ընդգրկում էր քվոտաներին վերաբերող 2 հարց, որոնց նպատակն էր պարզել հարցվածների վերաբերմունքը այսօրինակ հատուկ ժամանակավոր միջոցների հանդեպ: Հարցերից մեկն առնչվում էր կանանց քվոտաներին կառավարությունում և տեղական ինքնակառավարման մարմիններում, իսկ երկրորդը կենտրոնանում էր բիզնես սեկտորում որոշումների ընդունման առումով կարևոր պաշտոններին տրվող քվոտաներին:

Պատասխանները ներկայացված են **Աղյուսակ 9** –ում և դրանք ցույց են տալիս, որ հարցվածների երկու երրորդը կանանց համար քվոտաների համակարգի կողմանկիցներ են և ոչ միայն երկրի կառավարության և տեղական ինքնակառավարման մեջ, այլև բիզնես սեկտորում որոշումների ընդունման առումով կարևոր պաշտոններում: Հարկ է նշել, որ շատ քիչ մասնաբաժին էին կազմում այն հարցվածները, ովքեր դժվարանում էին պատասխանել:

Աղյուսակ 9. Վերաբերմունք կանանց համար քվոտաների վերաբերյալ
Կանանց համար ֆիքսված համամասնությամբ հատկացվող տեղեր երաշխավորող քվոտայի համակարգին կողմ և դեմ հարցվածների տոկոսը.

1. կառավարությունում և տեղական ինքնակառավարման մարմիններում	**Հարցվածներ N =1,617** **Պատասխանների տոկոսային բաշխվածությունը**
Կողմ	**63.3%**
Դեմ	**32.0%**
Չգիտեմ	**4.5%**
Չկա պատասխան	**0.2%**
2. Բիզնես սեկտորում որոշումների ընդունման առումով կարևոր պաշտոններում	
Կողմ	**65.9%**
Դեմ	**29.9%**

Չգիտեմ	**4.0%**
Չկա պատասխան	**0.2%**

Քաղաքական համատեքստում դա նշանակում է, որ բնակչության ակնհայտ մեծամասնությունը կուզենար տեսնել ավելի շատ թվով կանանց երկրի կառավարությունում և տեղական ինքնակառավարման մարմիններում և անգամ ավելի շատ բիզնես սեկտորում որոշումների ընդունման առումով կարևոր պաշտոններում: Այսպիսով, կառավարությունն ուժեղ աջակցություն է ստանում կանանց քվոտաները հանրային կառավարում, տեղական ինքնակառավարում և բիզնես սեկտոր ներմուծելիս: Այս հարցերի պատասխանները՝ ըստ սեռի տարանջատված տվյալները, ներկայացված են ստորև՝ **Աղյուսակ 10** -ում[34]: Ինչպես և ակնկալվում էր, կանանց քվոտաների ներմուծման կողմնակից կանանց մասնաբաժինը գերազանցում է տղամարդկանց թիվը:

Աղյուսակ 10. Վերաբերմունք կանանց համար քվոտաների հանդեպ

Կանանց համար ֆիքսված համամասնությամբ հատկացվող տեղեր երաշխավորող քվոտայի համակարգին կողմ և դեմ կին և տղամարդ հարցվածների տոկոսը.

1. կառավարությունում և տեղական ինքնակառավարման մարմիններում	**Պատասխանների տոկոսային բաշխվածությունը**	
	Տղամարդիկ (N=767)	**Կանայք (N=850)**
Կողմ	**59.3%**	**66.8%%**
Դեմ	**35.5%**	**28.8%**
Չգիտեմ	**4.8%**	**4.1%**
Չկա պատասխան	**0.4%**	**0.2%**
2. Բիզնես սեկտորում որոշումների ընդունման առումով կարևոր պաշտոններում		
Կողմ	**61.4%**	**69.9%**
Դեմ	**33.9%**	**26.2%**
Չգիտեմ	**4.3%**	**3.6%**
Չկա պատասխան	**0.4%**	**0.2%**

[34] Կին և տղամարդ հարցվածների միջև տարբերությունները վիճակագրության համար էական են (p=0.003 առաջին հարցի դեպքում և p=0.000 երկրորդ հարցի դեպքում, թեև կապի հաստատունությունը շատ թույլ է:

Հարցվածների տարբեր խմբերի տարբերություններն ըստ կրթության մակարդակի և բնակության վայրի վիճակագրական առումով նշանակալի են, միչդեռ նույնը չի կարելի ասել տարիքի մասին:

Երկու հարցերի դեպքում էլ հիմնականում նույն պատկերն է:

Ինչ վերաբերում է կրթությանը, ապա կանանց համար քվոտայի համակարգի կողմնակիցների ամենամեծ մասնաբաժինը թե՛ հանրային ադմինիստրացիայի, թե՛ տեղական ինքնակառավարման մեջ, թե՛ բիզնես սեկտորում բարձրագույն կրթություն ունեցողներն են (համապատասխանաբար 69.6% և 70.5%): Նրանց հետևում են միջնակարգ կրթություն ունեցողները (համապատասխանաբար 63.6% և 66.1%):

Ցածրագույն մասնաբաժինը միջնակարգ և միջին մասնագիտական կրթություն ունեցողներն են կազմում: Ինչ վերաբերում է հանրային ադմինիստացիայում և տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց քվոտաներին, տոկոսաչափն ըստ էության նույնն է երկու խմբերում (61,0% և 61.2%), մինչդեռ բիզնես սեկտորում կանանց համար քվոտաների հարցում միջնակարգ կրթություն ունեցողների տոկոսը փոքր ինչ զիջում է միջին մասնագիտական կրթություն ունեցողներին (63.6% և 64.9%):

ԳԼՈՒԽ 2. ԿԱՆԱՆՑ ՀԱՆԴԵՊ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ. ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԵՐԸ

Կանանց դեմ բռնությունը[35] (ԿԴԲ) մարդու իրավունքների լուրջ խախտում է և լուրջ սոցիալական, առողջական, սոցիալ-տնտեսական, զարգացման և նույնիսկ քաղաքական խնդիր, քանի որ ոչ միայն ազդում է ենթարկվածները և բռնարարների վրա, այլև նրանց ընտանիքների, համայնքների և երկրների վրա: Այն կանանց դեմ խտրականության վատագույն ձևերից է և գենդերային հավասարության գլխավոր խոչընդոտներից մեկը:

Եվրոխորհրդի՝ *Կանանց և ընտանեկան բռնության կանխարգելման և հաղթահարման մասին կոնվենցիան* **շեշտում է**, որ ԿԴԲ արմատական պատճառները կանանց և տղամարդկանց պատմականորեն անհավասար ուժային հարաբերություններն են, որոնց արդյունքն է տղամարդկանց գերակայումն ու խտրականությունը կանանց դեմ և **ընդունում է,** որ դա «վճռորոշ սոցիալական մեխանիզմներից մեկն է, որով կանանց ենթակա դիրք է պարտադրվում տղամարդկանց համեմատությամբ»[36]:

Հայաստանում ԿԴԲ ճանաչումն իբրև լուրջ հիմնախնդիր հրամայական դարձավ առաջին՝ *Հայաստանում կանանց դեմ ընտանեկան բռնության համազգային հետազոտության* (*2008-2009)*[37] և ՄԱԿ-ի CEDAW Կոմիտեի՝ *Հայաստանի երրորդ և չորրորդ համատեղ պարբերական զեկույցների վերաբերյալ եզրափակիչ դիտարկումների*[38] արդյունքում:

Հայաստանի կառավարությունը որոշակի քայլեր ձեռնարկեց գենդերային բռնության դեմ քաղաքականության մշակման և կիրառման ուղղությամբ: 2010-ին ընդունվեց *Գենդերային քաղաքականության հայեցակարգի* փաստաթուղթը, որի VII բաժինը նվիրված է գենդերային բռնության կանխարգելման դեմ գենդերային քաղաքականությանը, և որը *Ընդդեմ գենդերային բռնության միջգերատեսչական*

---

[35] Կանանց դեմ բռնության վերացման մասին հռչակագրի Հոդված 1-ը (ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովում վավերացված դեկտեմբերի 20-ին, 1993) որակում է կանանց դեմ բռնությունն իբրև «գենդերային բռնության ցանկացած ակտ, որի արդյունքում կամ՝ կանխատեսելի արդյունքում, ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնաս /կամ ցավ/ է հասցվում կանանց՝ նմանօրինակ իրադրության վտանգը ներառյալ, ինչպես նաև բռնի հարկադրում կամ կամայական ազատազրկում, որը կարող է տեղի ունենալ ինչպես հանրային, այպես էլ անձնական կյանքում»ՄԱԿ-ի փաստաթուղթA/RES/48/104.

[36] Եվրոխորհրդի *Կոնվենցիան ընդդեմ ընտանեկան և կանանց դեմ բռնության /Convention on preventing and combating violence against women and domestic violence/* (ընդունված 2011 մայիսի 11-ին և օրինական ուժ ստացավ 2014 թվականի օգոստոսի1-ին). Նախաբան

[37] *Հայաստանում կանանց դեմ ընտանեկան բռնության համազգային հետազոտություն (2008-2009): Ամփոփիչ եզրակացություն.* Երևան, ՄԱԲՀ և ՀՀ ԱՎԾ, 2010.

[38] Կանանց դեմ խտրականության վերացման կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ. Հայաստան, Ժնև, 2009. ՄԱԿ-ի փաստաթուղթ CEDAW/C/ARM/CO/4/Rev.1

կոմիտեի ստեղծման հիմք հանդիսացավ (ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն առընթեր): 2011-ին Հայաստանի կառավարությունն ընդունեց *2011-2015թթ. Գենդերային քաղաքականության գործողության ռազմավարությունը* (որը պարունակում էր Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունը գենդերային բռնության և մարդկային թրաֆիքինգի կանխարգելման սեկտորում) և *2011-2015թթ. Գենդերային բռնության կանխարգելման ազգային գործողության նախագիծը:*

Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է գենդերային բռնության կանխարգելման և հաղթահարման դեմ գործողություններին և միջոցառումներին, ՄԱԿ-ի փորձագետները, ովքեր 2015-ի դեկտեմբերին անցկացրել էին այս երկու Գործողությունների պլանների գնահատումը, եզրակացրեցին, որ «չնայած այս Գործողության պլանների շրջանակներում գրանցած հաջողությանը, չէր հաջողվել հիմնանպատակներն ամբողջովին իրականացնել»[39]:

Ադեկվատ օրենսդրական և կարգավորիչ մեխանիզմների բացակայությունը նվազեցնում է գենդերային բռնության կանխարգելման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետությունը և ապահովումը, հատկապես հանրային քարոզարշավների միջոցով, իրավական պաշտպանությունն ու կրթական նախաձեռնությունները, նաև իրավապաշտպան գործակալությունների միջամտությունները: *Ընտանեկան Բռնության դեմ* հատուկ օրինագիծը չի ընդունվել և Եվրոխորհրդի՝ *Կանանց ընտանեկան բռնության դեմ և դրա կանխարգելման Կոնվենցիան* դեռ չի ստորագրվել:

ԿԲԴ կանխմանն ուղղված ավելի թիրախային և էֆեկտիվ քաղաքականության մշակման համար անհրաժեշտ է, որ այն հիմնված լինի իրեղեն ապացույցների վրա: Այսպիսով այն պահանջում է գիտելիքների կայուն բազա, որը շատ ավելին է, քան վիճակագրական տվյալների հավաքագրումը, թեև վերջինս ևս ունի մեծ կարևորություն: Փաստերի վրա հիմնված որոշումներ կայացնելու համար և տեսակետներում ու վարքում փոփոխություններ մտցնելու համար քաղաքական գործիչները պետք է հստակ պատկերացում ունենան ընդհանրապես հանրության և որոշակի թիրախ խմբի տեսակետների և նրանց վարքի մասին, ինչպես նաև իրազեկ լինեն նոր

[39] Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրի եվ Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների Ազգային ծրագրի իրականացման գնահատման զեկույց: Երևան, ՄԱԶԾ, ՄԱԲՀ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 2015, էջ 193.

զարգացումներին: Հետևաբար այս դաշտում կատարվող ուսումնասիրություններն ու հետազոտություններն անհրաժեշտություն են: Սակայն Հայաստանում ԿԴԲ խնդիրների վրա կենտրոնացող հետազոտությունները սակավաթիվ են, հազվադեպ, և սովորաբար շատ սահմանափակ իրենց ընդգրկումով: Սա հատկապես ճշմարիտ է խնդրի մի շարք դիտանկյուններից, որպիսիք են սեռականությունը, վերաբերմունքն ու ակնկալիքները, առնականության և կանացիության ընկալումները:

ԿԴԲ խնդիրը սերտորեն առնչվում է առնականության՝ որպես սոցիալական կերտվածքի որոշ ասպեկտներին: Փաստորեն, ԿԴԲ-ն «հեգեմոնիկ առնականությանը»[40] բնորոշ վարվելաձև է, որն ապահովում է տղամարդկանց գերակա դիրքը՝ ստորադասելով կանանց: Հետևաբար, ԿԴԲ կիրառման հիմնախնդիրը առնականության ուսումնասիրման կարևոր ասպեկտ է:

Կանանց հանդեպ բռնության տարածվածությունը

Կանանց հանդեպ բռնությունն արտացոլում է անհավասար և ասիմետրիկ ուժային հարաբերությունները, որտեղ կանայք de facto ցածր սոցիալական կարգավիճակ ունեն հասարակության մեջ գոյություն ունեցող հիերարխիայում, տեղի համայնքներում և ընտանիքներում և առնականության որոշ մեկնաբանություններում: Դա կանանց ղեկավարելու և նրանց ենթակա դիրքում պահելու գործիք է, ինչպես նաև նրանց հնարավորությունների և որոշումների կայացման իրավունքի սահմանափակում, որը ելք է դեպի ուժեղացման ռեսուրսներ և դիրքեր: Հետևաբար պատահական չէ, որ գիտնականները հակված են ԿԴԲ-ն որակելու իբրև 'հարաբերությունների խոցելիություն', այսինքն՝ իբրև «չափազանց ասիմետրիկ սոցիալական հարաբերությունների և կախվածությունների»[41] մաս հանդիսացող ձևերից մեկը:

Երեք հարցաշարերում ընդգրկված հարցերի զգալի մասը կենտրոնացած են տարածվածության[42] և կանանց դեմ բռնության բարձր հաճախականության վրա: Ընդգրկված են ԿԴԲ հիմնական բոլոր ձևերը, այդ թվում՝ հոգեբանական, ֆիզիկական և

---

[40] Տե՛ս Քոննելլ, Ռ.Վ և Ջեյմս Վ.. Մեսսերշմիդտ. «Հեգեմոնիկ առնականություն. Մտորումներ հասկացության շուրջ» *Սեռը և հասարակությունը*, հատ. 19, No. 6, դեկտեմբեր 2005, էջեր 829-859.

[41] Կաբիր, Ն.. կանաց դեմ բռնությունն իբրև «*հարաբերությունների խոցելիություն.կայուն մարդկային զարգացման օրակարգի գենդերականացումը*». 2014 ՄԱԶԾ Մարդկության զարգացման զեկույցի գրասենյակ. Պարբերական փաստաթուղթ, էջ 2.

42 Տարածվածությունը հետազոտված բնակչության տոկոսն է, ովքեր բռնության զոհ են դարձել կյանքի ընթացում տեղի ունեցած բռնարարքի հետևանքով (տարածվածությունը կյանքի ընթացքում) կամ որոշակի ժամանակհատվածում (տարածվածությունն ըստ ժամանակամիջոցի, որը սույն հետազոտության մեջ ընդգրկում է անցած 3 կամ 12 ամիսները):

սեռական բնույթի բռնություն, վարքի վերահսկում և տնտեսական բռնություն՝ բացի կառուցվածքային բռնությունից: Քանի որ ԿԴԲ չի որակվում բացառապես որպես բռնություն սեռական զուգընկերոջ հանդեպ (ՍԶԲ/IPV)[43]. հարցերը հիմնականում կենտրոնանում են ՍԶԲ -ի վրա, քանի որ նախորդ ուսումնասիրությունների անհերքելի ապացույցները պարզորոշ կերպով ցուցադրում են, որ ՍԶԲ -ն ԿԴԲ լայնորեն տարածված ձև է և, հետևաբար, *Տղամարդկանց և գենդերային հավասարության միջազգային հետազոտությունները* (ՏԳՀՄՀ/IMAGES) և դրանց վրա հիմնված ուսումնասիրությունները այնպես են կառուցված, որ առավելագույն ուշադրությունը սևեռվի ՍԶԲ –ի վրա: Այնուամենայնիվ սա չի խոչընդոտում ընտանիքում տարածված ԿԴԲ-ի մեր ուսումնասիրությանը:

Նաև կարևոր է ԿԴԲ տարածվածությունը համեմատել կանանց և տղամարդկանց դիտանկյուններից, և հնարավորության դեպքում համեմատել դեմ առ դեմ հարցազրույցների և ինքնուրույն հարցաշարերի միջոցով հավաքած համապատասխան տվյալները:

Սեռական զուգընկերոջ բռնությունը. բռնության գործադրումը և բացահայտումը

Ստորև՝ 3 աղյուսակներում ներկայացված տվյալները վերաբերում են կյանքի ընթացքում շարունակական հոգեբանական և ֆիզիկական բռնությանը, նաև՝ տնտեսական ճնշմանը, որը պարզ է դարձել կանանց և տղամարդկանց հարցման արդյունքում՝ հիմնական հարցախույզի միևնույն հարցերին տրված պատասխաններից: Սեռական բռնության վերաբերյալ տվյալները կներկայացվեն առանձնաբար, քանի որ տվյալները ստացվել են միայն տղամարդկանց հարցման և ինքնուրույն հարցաշարերի միջոցով:

Աղյուսակները ներկայացնում են երբևէ զուգընկեր ունեցած տղամարդ հարցվածների տոկոսն ու թիվը, ովքեր երբևէ տարբեր աստիճանի ծանրության հոգեբանական, ֆիզիկական և տնտեսական բռնություն են գործադրել և երբևէ զուգընկեր ունեցած կին հարցվածների թիվը, ովքեր երբևէ ենթարկվել են բռնության նման հետերոսեքսուալ հարաբերություններում: 5 հարցեր առնչվում են հոգեբանական

[43] Այս համատեքստում նախաընտրություն է տրվել «Սեռական զուգընկերոջ բռնություն» եզրույթին (ՍԶԲ)՝ «ընտանեկան բռնություն» (ԸԲ/DV) եզրույթի փոխարեն, քանի որ այն ավելի ստույգ է, ադեկվատ և, այսպիսով, ավելի միանշանակ:

բռնությանը, 4 հարցեր առնչվում են տնտեսական շահագործմանը, ևս 5 հարց՝ ֆիզիկական բռնությանը:

Աղյուսակ 1-ում ներկայացված են տվյալներ, որոնք ցույց են տալիս կանանց հանդեպ իրենց սեռական զուգընկերների կողմից գործադրվող բռնության ձևը՝ ելնելով կին և տղամարդ հարցվածների պատասխաններից:

Քանի որ երբևէ զուգընկեր ունեցած կին և տղամարդ հարցվածներն իրար հետ բոլորովին առնչություն չունեն, ուսումնասիրվող փորձն այսպիսով վերաբերում է զույգերին, որոնց թիվը (2,926) կրկնակի անգամ գերազանցում է ընտրանքի բոլոր այդ տղամարդկանց և կանանց միասնական թվաքանակը (1,463)՝ այսպիսով ապահովելով տվյալների իսկությունը: Ավելին՝ թեև կին և տղամարդ հարցվածները նույն զույգից չեն, բռնության մասին բարձրաձայնողների տոկոսները զարմանալիորեն մոտ են իրար ըստ նշված հարցերի առնվազն կեսին տրված պատասխանների, որը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ հետազոտության տվյալները բավականին իրատեսորեն են արտացոլում իրադրությունը:

Հետազոտության տվյալները պարզորոշ կերպով ցույց են տալիս, որ հոգեբանական բռնությունը բռնության բոլոր ձևերի «առաջատարն է», որին հետևում են տնտեսական շահագործումն ու ֆիզիկական բռնությունը: Միևնույն ժամանակ բռնության միևնույն ձևի մեջ տարբեր տարատեսակներ կան:

Ինչ վերաբերում է հոգեբանական բռնությանը, տղամարդկանց հաղորդմամբ ամենատարածված ձևերն են կին զուգընկերոջ վիրավորանքը կամ նրան միտումնավոր կերպով իրեն վատ զգալ ստիպելը (49.4%) և ահաբեկումն ու ճնշումը (10.1%): Կանանց տեսակետից տարածված ձևերի թվում են վերոնշյալները (համապատասխանաբար 43.6% և 9.2%), ինչպես նաև ստորացումն այլոց ներկայությամբ (9.8%):

Ինչ վերաբերում է բռնանալուն, ձևերից միայն մեկն էր ամենից շատ տարածված, որը պարզ էր դառնում թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց պատասխաններից (համապատասխանաբար 19.3% և 19.5%), այն է՝ զուգընկերն արգելում է կնոջն աշխատել, աշխատանքի գնալ, առևտուր անել և փող վաստակել:

Ֆիզիկական բռնության երկու ձև է տարածված, որոնք սակայն զիջում են մյուս տեսակներին իրենց հաճախականությամբ: Դրանք են տղամարդու ապտակելն իր կին զուգընկերոջը կամ նրան վնասելու նպատակով որևէ բան շպրտելը (12.9% տղամարդիկ

և 10.3% կանայք են սա խոստովանում), նաև՝ հրելը կամ քաշքշելը (համապատասխանաբար 11.4% և 7.5%):

Ընդհանուր բնույթի այլ դիտարկումներ ևս կարելի է կատարել՝ ելնելով **Աղյուսակ 1**-ում ներկայացված տվյալներից:

Աղյուսակ 1. Կանանց հանդեպ հոգեբանական և ֆիզիկական բռնության գործադրումը, խոցելիությունն ու տնտեսական շահագործումն իրենց զուգընկերոջ կողմից (Տարածվածությունը կյանքի ընթացքում)

Երբևէ զուգընկեր ունեցած և բռնություն գործադրած տղամարդկանց տոկոսը և երբևէ զուգընկեր ունեցած և վերջինիս կողմից գործադրած բռնության զոհ դարձած կանանց տոկոսը			
Բռնության ձևերը	**Տղամարդիկ (Կին զուգընկերոջ վրա բռնության գործադրման հաղորդում)** N=696	**Բռնության ձևերը**	**Կանայք (իրենց տղամարդ զուգընկերոջ կողմից բռնության դեպքերի հաղորդում)** N=767
Հոգեբանական բռնություն/ զգայական ճնշում		**Հոգեբանական բռնություն/ զգայական ճնշում**	
Վիրավորել է զուգընկերոջը կամ միտումնավոր կերպով ստիպել նրան վատ զգալ	**49.4%**	Զուգընկերը վիրավորել է կամ միտումնավոր կերպով ստիպել իրեն վատ զգալ	**43.6%**
Նսեմացրել կամ նվաստացրել է զուգընկերոջը այլոց ներկայությամբ	**3.7%**	Զուգընկերը նսեմացրել կամ նվաստացրել է իրեն այլոց ներկայությամբ	**9.8%**
Միտումնավոր գործողություններով վախեցրել է զուգընկերոջը (օրինակ՝ հայացքով, բղավոցով կամ իրեր կոտրելով)	**10.1%**	Զուգընկերը միտումնավոր գործողություններով վախեցրել է նրան (օրինակ՝ հայացքով, բղավոցով կամ իրեր կոտրելով)	**9.2%**
Սպառնացել է վնասել զուգընկերոջը	**4.3%**	Զուգընկերը սպառնացել է վնասել նրան	**4.5%**
Զուգընկերը վիրավորել է նրա համար թանկ անձանց՝ այսպիսով վիրավորանք հասցնելով նրան, կամ վնասել է վերջինիս համար արժեքավոր իրեր	**3.7%**	Զուգընկերը վիրավորել է նրա համար թանկ անձանց՝ այսպիսով վիրավորանք հասցնելով նրան, կամ վնասել է վերջինիս համար արժեքավոր իրեր	**4.0%**
Կին զուգընկերոջ հանդեպ հոգեբանական բռնություն կիրառած տղամարդկանց տոկոսը	**53.3%**	Տղամարդ զուգընկերոջ կողմից հոգեբանական բռնության ենթարկված կանանց տոկոսը	**45.9%**
Տնտեսական շահագործում		Տնտեսական շահագործում	
Արգելել է զուգընկերոջը աշխատանք ունենալ, աշխատանքի գնալ, առևտուր անել կամ փող վաստակել	**19.3%**	Զուգընկերն արգելել է իրեն աշխատանք ունենալ, աշխատանքի գնալ, առևտուր անել կամ փող վաստակել	**19.5%**

Զուգընկերոջ վաստակն է խլել՝ վերջինիս կամքին հակառակ	**0.8%**	Զուգընկերն իր վաստակն է խլել՝ իր կամքին հակառակ	**2.9%**
Զուգընկերոջը տանից դուրս է շպրտել	**2.1%**	Զուգընկերը իրեն տանից դուրս է շպրտել	**2.2%**
Վաստակած փողից պահել է իր ալկոհոլի, ծխախոտի կամ այլ բաների համար՝ իմանալով, որ զուգընկերոջ համար դժվար է տան ծախսերի կարգավորումը	**2.8%**	Զուգընկերը վաստակած փողից պահել է իր ալկոհոլի, ծխախոտի կամ այլ բաների համար՝ իմանալով, որ իր համար դժվար է տան ծախսերի կարգավորումը	**3.0%**
Կին զուգընկերոջ հանդեպ տնտեսական շահագործում/ բռնություն գործադրած տղամարդկանց տոկոսը	**20.8%**	Տղամարդ զուգընկերոջ կողմից տնտեսական շահագործման/ բռնության ենթարկված կանանց տոկոսը	**21.3%**
Ֆիզիկական բռնություն		**Ֆիզիկական բռնություն**	
Ապտակել է զուգընկերոջը կամ որևէ իր շպրտել՝ վերջինիս վնասելու նպատակով	**12.9%**	Ապտակել է նրան կամ որևէ իր շպրտել՝ նրան վնասելու նպատակով	**10.3%**
Հրել կամ քաշքշել է զուգընկերոջը	**11.4%**	Զուգընկերը հրել կամ քաշքշել է նրան	**7.5%**
Բռուցքով կամ վնասող որևէ իրով հարվածել է զուգընկերոջը	**4.1%**	Զուգընկերը բռուցքով կամ վնասող որևէ իրով հարվածել է նրան	**4.6%**
Խփել, քարշ տվել, ծեծել, խեղդել կամ այրել է զուգընկերոջը	**1.7%**	Զուգընկերը խփել, քարշ տվել, ծեծել, խեղդել կամ այրել է իրեն	**2.8%**
Սպառնացել է կամ իրականում զուգընկերոջ հանդեպ գործադրել է հրազեն, դանակ կամ այլ զենք	**2.9%**	Զուգընկերը սպառնացել է կամ իրականում իր հանդեպ գործադրել է հրազեն, դանակ կամ այլ զենք	**0.6%**
Կին զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնություն գործադրած տղամարդկանց տոկոսը	**17.4%**	Տղամարդ զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության ենթարկված կանանց տոկոսը	**12.5%**

Իսկզբանե հարկ է փաստել, որ կին և տղամարդ հարցվածների պատասխաններն իրապես մոտ են իրար տնտեսական շահագործման պարագայում, և հեռու են՝ հոգեբանական բռնության պարագայում: «Տնտեսական շահագործման» սեգմենտում միակ «անհամապատասխանությունը» երևան է գալիս այն իրադրության մեջ, երբ տղամարդը բռնի ուժով տիրանում է իր կին զուգընկերոջ վաստակին: Կին հարցվածների 2.9% և տղամարդ հարցվածների ընդամենը 0.8% է հաղորդել նման դեպքերի մասին: Այս հստակ տարանջատումը պատահական չէ, հատկապես այն պատճառով, որ ընտրանքի տղամարդկանց և կանանց մասնաբաժինների տոկոսային տվյալները տեսականորեն մոտ են իրար: Ու թեև բռնության այլ

ձևերն առանձնակիորեն տարածված չեն, դրանք այնուամենայնիվ առնականության հայրիշխանական տեսլականի մասն են կազմում՝ տղամարդկանց իրավազորության առումով: Կնոջից նրա սեփական վաստակը խլելը չի կարող համապատասխանել այդ հարացույցին:

Ինչ վերաբերում է հոգեբանական բռնությանը, ըստ ստացված տվյալների իրադրությունը զարմանալիորեն նույնն է. միակ տարբերությունը նկատելի է հոգեբանական ճնշման 2 ձևերի միջև: Առաջին՝ տղամարդ հարցվածների ավելի բարձր տոկոսն էր (49.4%) հաղորդում կին զուգընկերոջը վիրավորելու կամ միտումնավոր կերպով իրեն վատ զգալ ստիպելու մասին, քան թե կին հարցվածները (43.6%), ովքեր խոստովանում էին բռնի վարքի զոհը դառնալու մասին: Երկրորդ՝ տարբերությունը զգալիորեն մեծանում է այլոց ներկայությամբ կին զուգընկերոջ նսեմացման կամ նվաստացման դեպքում: Այս անգամ, սակայն, կանանց ավելի բարձր տոկոսն էր հաղորդում նմանօրինակ բռնության ենթարկվելու մասին (9.8%), մինչդեռ տղամարդ հարցվածների միայն 3.7% էր խոստովանում բռնության գործադրումը:

Ֆիզիկական բռնություն գործադրողների տոկոսային մասնաբաժինն ավելի ցածր է բռնության ենթարկված կանանց մոտ, քան տղամարդկանց. բացառություն են կազմում բռնության 2 ձևեր, որոնց տարբերությունը, այնուամենայնիվ, չնչին է:

* *

*

Հիմնականում սոցիալ-դեմոգրաֆիական բնութագրիչներով /բացառությամբ հարցվածների սեռի/ իրարից տարբերվող տվյալների մարամասն վերլուծություն կատարելուց առաջ, կարելի է մի քանի ընդհանրացումներ կատարել՝ կապված կանանց դեմ բռնության 3 ձևերի գործադրման և խոցելիության հետ:

(ա) Ընդհանուր առմամբ բռնություն գործադրելու կամ բռնությանը ենթարկվելու մասին հաղորդող կանանց և տղամարդկանց և բռնության կոնկրետ ձևի գրանցված ամենաբարձր տոկոսների միջև տարբերությունը չնչին է[44]: Դա նշանակում է, որ շատ դեպքերում տղամարդիկ իրագործել, իսկ կանայք ենթարկվել են նույն բռնության երկու կամ ավելի ձևերի:

[44] Օրինակ՝ հոգեբանական բռնության դեպքում, 45.9% ընդդեմ 43.6% (կանայք) և 53.3% ընդդեմ 49.4% (տղամարդիկ).

Այլ կերպ ասած՝ նույնիսկ երբ բռնության լրջագույն կամ ավելի չափավոր ձևերի տարածվածությունը նվազագույն է, այդուհանդերձ, միևնույն տղամարդիկ գործադրում են նաև բռնության հարաբերականորեն « ավելի մեղմ» ձևեր և միևնույն կանայք ենթակա են այդ բռնություններին: Ավելին՝ դա նաև հիշեցում է, որ երբ բռնություն է գործադրվում, այն սովորաբար չի սահմանափակվում մեկ դրսևորումով:

(բ) Ակներև է ԿԴԲ բոլոր այս ձևերի լայն տարածվածությունը, իսկ բռնության ենթարկված կանանց տոկոսը զգալիորեն ավելի բարձր է (առնվազն 1.5-1.8 անգամ), քան Հայաստանում նախկինում անցկացված լայնամասշտաբ ուսումնասիրությունների տվյալներով՝ վերոհիշյալ համապետական հարցումը ներառյալ: Կին հարցվածների գրեթե կեսը (45.9%) հաղորդում էին հոգեբանական բռնության ենթարկվելու մասին: Յուրաքանչյուր հինգերորդ հարցվածը (21.3%) տնտեսական շահագործման զոհ էր դարձել, և առնվազն ամեն տասներորդ հարցվածը (12.5%) ֆիզիկական բռնության էր ենթարկվել:

ԿԴԲ արձանագրված աճն ունի մի քանի հնարավոր պատճառներ: Հնարավոր է, որ զուգընկերոջ կողմից բռնության գործադրումն ավելի լայն տարածում է գտնում՝ որպես բռնության դեպքերի և նմանօրինակ վարքի հետևանք հասարակության մեջ առհասարակ, իսկ հարցման միջոցով ստացվող տվյալները պարզապես դրա արտացոլումն են: Մեկ այլ պատճառ կարող է հանդիսանալ այն փաստը, որ հասարակությանն իրազեկող քարոզարշավների շնորհիվ զուգընկերոջ բռնության քննարկումն այլևս տաբու չէ և խարան չէ իր զոհերի համար: Ներկայումս կանայք ավելի են ձգտում ինքնարտահայտվել, քան մի քանի տարի առաջ, հատկապես երբ սկսում են կասկածի տակ առնել ԿԴԲ հետ կապված հայրիշխանական նորմերի «բնականոնությունը» և իրավականությունը, ինչպես նաև հարցման դեպքում ձգտում են հաղորդել ՍԶԲ-ի մասին՝ այսպիսով մեծացնելով բացահայտման հավականությունն ու օժանդակելով դրան: Բացի այդ, այդ քարոզարշավների շնորհիվ և՛ կանայք, և՛ տղամարդիկ ավելի իրազեկ և զգայուն են դառնում ԿԴԲ հանդեպ, հետևաբար նրանք գիտակցված և ավելի ադեկվատ կերպով են վերհիշում հարցախույզի հարցերին առնչվող իրադրությունները: Կարող են լինել նաև այլ պատճառներ և մի շարք գործոնների կոմպլեքս:

(գ) Թեև տոկոսները բարձր են և այսպիսով հնարավոր է, որ դրանք ավելի իրատեսորեն են արտացոլում գոյություն ունեցող իրադրությունը, այնուամենայնիվ կանանց և տղամարդկանց զեկույցների միջև դեռ կան անհամապատասխանություններ: Շատ ավելի մեծ է իրենց կողմից բռնություն գործադրելու մասին հաղորդող տղամարդկանց տոկոսը (տնտեսական շահագործման չնչին բացառությամբ, որտեղ տոկոսներն ըստ էության նույնն են), քան բռնության զոհ դարձած և այդ մասին հայտնող կանանց թիվը: Քանի որ հարցերը հստակ են ձևակերպված, և չեն կարող սխալ մեկնաբանվել կամ թյուրըմբռնման տեղիք տալ, հետևաբար մնում է միայն եզրակացնել, որ կանայք լիարժեք չեն հաղորդում հոգեբանական և ֆիզիկական բռնությունների մասին: Անանուն լրացրած ինքնուրույն հարցաթերթիկների տվյալները (տվյալները կքննվեն ու կհամեմատվեն ստորև) վերահաստատում են այն եզրահանգումը, որ ֆիզիկական բռնության ենթարկված կանանց տոկոսը զգալիորեն բարձր է, քան դեմ առ դեմ հարցազրույցի հարցաշարերի միջոցով այդ մասին հաղորդած կանանց թիվը (22.4% ընդդեմ 12.5%):

(դ) Միևնույն ժամանակ արդար կլինի նշել, որ ըստ տվյալներում արտացոլված իրադրության բռնության այս ձևերը լայնամասշտաբ չեն և նույնիսկ լայն տարածում չունեն ժամանակակից հայ հասարակության մեջ: Անշու՛շտ, պետք է առհասարակ բացառվի հանդուրժողական վերաբերմունքը ԿԴԲ-ի հանդեպ և ավելի շատ ջանքեր պետք է գործադրվեն հասարակությանը կրթելու և կանանց ու տղամարդկանց գիտակից դարձնելու համար, որ ԿԴԲ ցանկացած դրսևորում հոռի է, չի կարող արդարացման որևէ հիմք ունենալ և չի կարող անպատիժ մնալ: Մյուս կողմից, տվյալները ցույց են տալիս, որ կանանց դեմ բռնությունը սահմանափակվում է հարաբերականորեն «մեղմ» ձևերով, մինչդեռ «չափավոր» ծանրության և ծանրագույն ձևերն արտահայտվում են միանիշ տոկոսային ցուցանիշներով և հաճախ նույնիսկ վստահության միջակայքից ցածր են:

* *

*

Հարկ է նաև ավելի մանրազնին դիտարկել հոգեբանական և ֆիզիկական բռնության, ինչպես նաև տնտեսական շահագործման տարածվածությունը ողջ կյանքի ընթացքում՝ ուսումնասիրելով սեռային և մի շարք այլ ազգագրական բնութագրիչներ, ինչպես օրինակ տարիքը, կրթությունը, ամուսնական կարգավիճակը, բնակության վայրը և

զբաղվածությունը, որոնց հիման վրա դասակարգվում են տվյալները: Համապատասխան հետազոտական տվյալները ներկայացված են ստորև՝ **Աղյուսակներ 2 և 3 –ում**: Տղամարդ զուգընկերների կողմից կանանց բռնության դեպքերը վերլուծվում են տղամարդկանց կողմից հաղորդվող ԿԴԲ քրեորեն պատժելի դեպքերի մասին ստացված տվյալների միջոցով, իսկ այնուհետ՝ կանանց կողմից բարձրաձայնվող բռնարարքների մասին տվյալների հիման վրա:

Ինչպես վկայում են **Աղյուսակ 2-ի** տվյալները, տղամարդկանց ***տարիքային*** գործոնի ազդեցությունը *հոգեբանական բռնության* վրա կայուն և անմիջական չէ, հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ ինչքան մեծ է տարիքը, այնքան ավելի մեծ է կին զուգընկերոջ հետ երկարատև հարաբերությունների հավանականությունը: Սակայն, թեև միատեսակ օրինաչափություն չկա, առանձին ձևերի դեպքում տարիքի գործոնի ազդեցությունը դրական արդյունք է արձանագրում՝ 0.9% ամենաերիտասարդ տարիքային խմբում և 7.8% ամենաբարձր տարիքային խմբում՝ մյուս երկու խմբերին համապատասխանաբար թողնելով միջանկյալ դիրքում («զուգընկերոջ նվաստացումը կամ նսեմացումը այլոց ներկայությամբ»): Հարկ է նշել, որ ավելի երիտասարդ տղամարդիկ զերծ են մնում իրենց զուգընկերոջը հրապարակավ նվաստացնելուց, սակայն նրանց գրեթե կեսը հաղորդում է իր զուգընկերոջն առանձնաբար նման վիրավորանք հասցնելու մասին: Սա արտացոլում է սոցիալ-մշակութային նորմերի փոփոխությունը:

Տարիքն ավելի անմիջական, թեպետև չնչին ազդեցություն ունի *տնտեսական շահագործման* վրա: Հայրիշխանական առնականության վերահաստատումով ավելի երիտասարդ տղամարդիկ հակված են իրենց կին զուգընկերոջն արգելել աշխատանք գտնել (յուրաքանչյուր հինգերորդն այդպես է վարվել): Սակայն երբ զուգընկերը եկամտի աղբյուր ունի, նա չի խլում վերջինիս վաստակը: Մինչդեռ չնչին տոկոս են կազմում ավելի բարձր տարիքային խմբի այն ներկայացուցիչները, ովքեր վերցրել են կին զուգընկերոջ վաստակած գումարը:

Տարիքային գործոնն ամենասերտ առնչակցությունն ունի *ֆիզիկական բռնության* հետ: Թեպետև տոկոսները նվազ են, դրական փոխկապակցվածություն է նկատվում բռնության 3 ձևերի միջև, իսկ լուրջ ծանրության բռնությունները չափազանց չնչին տոկոսային բաշխվածության միտվածություն ունեն:

Կրթության գործոնը, թվում է, հավասարաչափ չի ազդում իրադրության վրա: Շատ ուսումնասիրություններ պարզել են, որ բարձր կրթամակարդակի ապահովումը սերտորեն առնչվում է ավելի լիբերալ և առաջադեմ հայացքների և վարքի հետ: Երբեմն նույնիսկ բարձրաձայնվում է այն հանգամանքը, որ բարձրագույն կրթությունը ԿԴԲ «հակաթույնն է»: Ակնհայտ է, որ այս կանոնը չի գործում այս տղամարդկանց պարագայում: Բարձրագույն կրթություն ստացած անձինք ոչ միայն *ձեռնպահ* չեն բռնության հանդեպ, այլև հոգեբանական բռնության դեպքում բռնարարների տոկոսն ավելի մեծ է: Սույն միտման համախտանիշը *խոսքային դրսևորումն* է՝ *բացառելով գործողությունները*: Ինչ վերաբերում է խոսքային բռնությանը, ապա այստեղ նրանք իրոք գերազանցում են ավելի ցածր կրթության մակարդակ ունեցող տղամարդկանց:

Մյուս կողմից՝ ամենացածր տոկոսը գրանցվել է հենց նրանց մոտ, քանի որ չեն վիրավորում զուգընկերոջ համար թանկ մարդկանց և վնաս չեն հասցնում արժեք ներկայացնող գույքին: *Ֆիզիկական բռնության* պարագայում ամենաբարձր տոկոսն են կազմում բռնության համեմատաբար «մեղմ» ձևերը, այդ թվում՝ զուգընկերոջը հրելը կամ քաշքշելը: Այն ավելի ցածր է զուգընկերոջը խփելու կամ ապտակելու պարագայում, նաև նրան վնասելու նպատակով իրեր շպրտելու դեպքում:

Աղյուսակ 2. Կին սեռական զուգընկերոջ հանդեպ հոգեբանական և ֆիզիկական բռնության գործադրումը ու տնտեսական շահագործումը. տղամարդիկ (Տարածվածությունը կյանքի ընթացքում)

Երբևէ կին զուգընկեր ունեցած և *երբևէ բռնության հետևյալ ձևերի գործադրման մասին* հաղորդող տղամարդկանց տոկոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների															
	Հոգեբանական բռնություն					Տնտեսական շահագործում				Ֆիզիկական բռնություն					
Կենսագրական բնութագրիչներ	Վիրավորել է զուգընկերոջը /ստիպել է իրեն վատ զգալ	Նսեմացրել/նվաստացրել է զուգընկերոջն այլոց ներկայությամբ	Վախեցրել/սպառնացել է զուգընկերոջը	Սպառնացել է ցավ պատճառել	Վիրավորել է զուգընկերոջ համար հարազատ մարդկանց/ վնասել է նրա համար արժեքավոր իրերը	Արգելել է զուգընկերոջը աշխատել, փող վաստակել	Խլել է զուգընկերոջ վաստակը՝ նրա կամքին բռնանալով	Տանից դուրս է շպրտել զուգընկերոջը	Վաստակած գումարը պահել է ալկոհոլ և այլն գնելու համար	Ապտակել է/ինչ-որ բան շպրտել զուգընկերոջ վրա	Հրել /քաշքշել է զուգընկերոջը	Հարվածել է զուգընկերոջը	Խփել/ քարշ տվել խեղդել /այրել է զուգընկերոջը	Սպառնացել է օգտագործել/օգտագործել է զենք	Տղամարդկանց թիվը N = 696
Տարիքը															
18-24	48.2	0.9	14.5	0.9	6.4	20.9	0.0	1.8	0.0	6.3	6.3	1.8	0.0	0.0	**110**
25-34	45.5	1.6	9.0	4.8	3.1	20.6	0.0	1.6	0.5	7.9	9.0	2.1	0.5	0.5	**189**
35-49	53.1	4.2	9.1	5.4	3.7	19.9	0.8	2.4	2.1	16.5	13.2	5.4	2.9	0.4	**243**
50-59	49.3	7.8	9.7	4.5	2.6	16.8	2.5	2.5	2.6	18.1	14.9	5.8	2.5	0.0	**154**

Կրթությունը															
Հիմնական	(33.3)	(3.3)	(3.3)	(10.0)	(13.4)	(20.0)	(3.3)	(6.7)	(3.3)	(16.6)	(16.7)	(10.0)	(13.3)	(0.0)	**30**
Միջնակարգ	49.2	2.8	10.1	2.2	4.5	21.9	0.9	1.9	2.0	10.7	8.9	4.2	1.7	0.3	**356**
Միջին մասնագիտական	47.2	4.1	10.5	4.9	3.2	15.5	0.0	1.6	0.8	17.1	12.2	4.9	0.8	0.0	**123**
Բարձրագույն	54.0	5.3	10.7	7.0	1.1	16.6	1.0	2.1	0.5	13.9	14.4	2.1	0.5	0.5	**187**
Ամուսնական կարգավիճակը															
Գրանցված ամուսնություն	49.5	3.4	9.1	4.2	2.4	19.1	1.4	1.2	2.2	15.2	12.0	3.7	1.5	0.2	**408**
Չգրանցված ամուսնություն	42.1	4.8	8.4	8.4	6.0	16.9	0.0	1.2	1.2	9.6	10.8	4.8	1.2	0.0	**83**
Ոչ պաշտոնական միություն (Ապրում է զուգընկերոջ հետ, ամուսնացած չեն)	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	**9**
Ընկեր/ընկերուհի (չեն վարում համատեղ կյանք)	(50.0)	(3.6)	(7.1)	(0.0)	(0.0)	(14.3)	(0.0)	(0.0)	(7.1)	(10.7)	(14.3)	(0.0)	(0.0)	(0.0)	**28**
Չամուսնացած	51.4	1.4	12.0	1.4	5.6	19.0	0.0	0.7	5.6	4.9	5.6	1.4	1.4	0.0	**142**

Բաժանված/ամուսնալուծված	(54.1)	(16.7)	(25.0)	(16.7)	(8.3)	(25.0)	(0.0)	(29.2)	(0.0)	(37.5)	(29.2)	(20.9)	(8.3)	(4.2)	**24****
Այրի	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	**2**
Բնակության վայրը															
Երևան	54.6	5.6	13.5	4.3	2.2	20.0	0.8	2.6	1.7	13.8	14.7	5.2	1.7	0.4	**231**
Այլ քաղաքային	50.7	2.9	5.8	5.2	2.9	18.2	0.5	2.4	1.0	15.8	13.4	3.9	2.0	0.0	**209**
Գյուղական	43.8	2.8	10.5	3.5	5.9	19.5	1.2	1.6	1.6	9.8	6.7	3.2	1.6	0.4	**256**
Զբաղվածության կարգավիճակը***															
Երբեք չի աշխատել	(50.0)	(11.5)	(23.0)	(11.5)	(11.5)	(19.2)	(0.0)	(3.8)	(0.0)	(11.5)	(11.5)	(7.7)	(3.8)	(3.8)	**26**
Ուսանող	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	**13**
Գործազուրկ	49.4	5.4	10.2	4.9	4.0	21.3	0.8	2.6	2.7	15.1	13.5	4.9	2.8	0.0	**225**
Գրանցված աշխատող	51.9	3.7	13.2	4.7	2.9	16.9	1.0	1.9	0.9	12.3	9.0	1.8	0.5	0.5	**212**
Չգրանցված աշխատող	48.1	1.4	5.5	2.8	3.2	19.7	1.0	1.9	0.9	12.4	12.0	4.6	1.9	0.0	**218**
Ընդամենը	49.4%	3.7%	10.1%	4.3%	3.7%	19.3%	0.8%	2.1%	2.8%	12.9%	11.4%	4.1%	1.7%	2.9%	**696**

Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թվային տվյալը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:

** Սահմանագծային դեպքերը ներկայացնող տվյալները վավեր են համարվում:

*** Քանի որ «ուսումն աշխատանքի հետ համատեղողների» և « Երեխայի խնամքի կամ այլ տեսակի արձակուրդում գտնվողների» կատեգորիայում կար ընդամենը մեկական հարցված, այդ կատեգորիաները չեն ներկայացվել (հետևաբար այս սեկցիայի հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 694):

Սա նաև վերաբերում է բռնության ծանր ձևերին, որոնք արտահայտված են խփելու, քարշ տալու, ծեծելու, խեղդելու կամ զուգընկերոջը այրելու գործողություններով, թեև տոկոսները չափազանց չնչին են:

Ամուսնական կարգավիճակը տղամարդկանց կողմից բռնությունների գործադրման և նմանօրինակ վարքի կանխորոշիչ չէ: Կարելի է փաստել, որ լուրջ վերապահումներով հանդերձ՝ օրինական և քաղաքացիական կարգով ամուսնացած տղամարդիկ իրար նման վարքագիծ են դրսևորում՝ ի համեմատություն տղամարդկանց այլ խմբերի. սակայն այդ նմանությունը բացարձակ չէ, քանի որ երբեմն տարբերությունները զգալի են:

Շատ ավելի ցածր տոկոսային բաշխվածություն ունեն չամուսնացած տղամարդկանց կողմից կին զուգընկերոջ հանդեպ բռնության գործադրման դեպքերը, սակայն նույնը չի կարելի ասել հոգեբանական բռնության և տնտեսական շահագործման մասին:

Փոխհարաբերության մյուս տեսակն ավելի անմիջական է՝ զուգընկերոջից կամ կնոջից բաժանված տղամարդիկ բռնության բոլոր տեսակների (բացառությամբ մեկի) ամենաբարձր ցուցանիշն են արձանագրում: Սակայն այս եզրակացությունը ևս առանց վերապահման չէ: Այս խմբի հարցվածները փոքրաթիվ են: Սա փաստորեն սահմանագծային դեպք է՝ սահմանափակ, եթե ոչ կասկածելի, հավաստիությամբ: Միևնույն ժամանակ կարելի է հանգել այն փորձնական եզրակացությանը, որ զուգընկերոջ բռնությունն է սեռական զուգընկերոջից կամ կնոջից բաժանության պատճառ դառնում:

Հարցվածների ***բնակության վայրը*** որպես գործոն առանձնակի կարևորություն և անմիջական ազդեցություն չունի: Մինչդեռ բռնություն գործադրողների ամենաբարձր տոկոսը ԿԴԲ գրեթե բոլոր ձևերի երկու երրորդի դեպքում կազմում են երևանաբնակները. տարբերությունը երբեմն նվազագույն է, անգամ՝ անվանական: Այլ քաղաքների բնակիչները մեծամասամբ միջանկյալ դիրքում են՝ դրսևորելով այս կամ այն խմբին մոտ լինելու միտվածություն: Բռնարարների ամենացածր տոկոսն են կազմում գյուղաբնակները: Սակայն ամենաբարձր տոկոսը դարձյալ նրանք են կազմում բռնության երկու ծանրագույն ձևերի դեպքում, այն է՝ զուգընկերոջ համար թանկ մարդկանց վիրավորելն ու նրա համար արժեքավոր գույքին վնաս հասցնելը,

նաև նրա վաստակը խլելը՝ վերջինիս կամքին հակառակ: Ինչ վերաբերում է բռնության մյուս երեք ձևերին, թեև բռնարարների տոկոսը նրանց շրջանում ամենաբարձր չէ, այն այնուամենայնիվ ավելի բարձր է քաղաքաբնակների շրջանում՝ երևանաբնակների բացառությամբ:

Իրադրությունն ավելի խրթին է ***զբաղվածության*** գործոնի դեպքում: Թեև միասնական միտվածություն չի նկատվում, միակ ակնառու օրինաչափությունը, որ կարելի է մատնանշել (թեպետև մեծ վերապահումով), այն է, որ գործազուրկներն ու երբևէ աշխատանք չունեցած հարցվածներն ավելի հակված են ԿԴԲ գործադրելուն, քան օրինական կամ ոչ պաշտոնապես աշխատանք ունեցողները:

Հետազոտության տվյալները նաև ցույց են տալիս, որ **խոցելիությունը** ևս կարող է որոշակիորեն, թեև ոչ զգալիորեն, ազդել տղամարդկանց կողմից հետևողականորեն բռնություն գործադրելու կամ չգործադրելու վրա:

Այսպես, *երբևէ հարված չստացած* տղամադկանց 2.9%-ը գրեթե երբեք չեն խփել իրենց կին զուգընկերներին, մինչդեռ երկու անգամ բարձր է երբևէ հարված ստացած տղամարդկանց տոկոսը՝ 5.6%, ովքեր նույն կերպ են վարվել իրենց կին զուգընկերոջ հետ:

Ինչ վերաբերում է կին զուգընկերոջ դեմ զենք օգտագործելու սպառնալիքին, ապա այս լուրջ բռնության ձևի պարագայում նույնիսկ ավելի մեծ տարբերություն կա: Հարկ է նշել, որ այն տղամարդիկ, ում երբևէ զենքով *չեն սպառնացել*, կին զուգընկերոջ դեմ այդ կերպ չեն գործել: Մյուս կողմից, զենքի սպառնալիքի տակ երբևէ հայտնված տղամարդկանց 4.4%-ը պարբերաբար սպառնացել են իրենց կին զուգընկերոջը: Այդ սպառնալիքները կրկնվել են մեկից ավելի անգամ:

Աղյուսակ 3. Կանանց ահնդեպ հոգեբանական և ֆիզիկական բռնության գործադրումն ու տնտեսական շահագործումն իրենց զուգընկերոջ կողմից. կանայք (Տարածվածությունը կյանքի ընթացքում)

Երբևէ տղամարդ զուգընկեր ունեցած և *երբևէ բռնության հետևյալ ձևերին ենթարկելու մասին* հաղորդող կանանց տոկոսային բաշխվածությունը ըստ կենսագրական բնութագրիչների															
	Հոգեբանական բռնություն					**Տնտեսական շահագործում**				**Ֆիզիկական բռնություն**					
Կենսագրական բնութագրիչներ	Վիրավորել/ստիպել է իրեն վատ զգալ	Նսեմացրել/նվաստացրել է նրան այլոց ներկայությամբ	Նրան սպառնացել /վախեցրել է զուգընկերը	Նրան սպառնացել են վնասել	Վնաս է հասցվել իր համարթանկ մարդկանց / իր համար արժեք ներկայացնող գույքին	Արգելել է աշխատել, փող վաստակել	Իր կամքին հակառակ տիրացել է վաստակին	Դուրս է շպրտել տանից	Զուգընկերը պահել է վաստակած գումարը ալկոհոլի և այլ նման ծախսեր հոգալու համար	Նրան ապտակել է/վրան իրեր շպրտել	Հրել / քաշքշել է զուգընկերը	Հարվածել է զուգընկերը	Խփել է/ քարշ տվել/ խեղդել / այրել զուգընկերոջը	Սպառնացել է օգտագործել կամ իրական անում օգտագործել է զենք	Կանանց թիվը N = 767
Տարիքը															
18-24	31.1	8.4	4.8	1.2	2.4	15.7	6.0	1.2	0.0	4.8	3.6	1.2	0.0	0.0	**83**
25-34	35.6	5.6	10.8	3.8	3.0	20.2	2.6	2.1	3.0	7.3	5.6	3.0	1.3	0.0	**233**

35-49	47.6	9.2	7.4	3.9	3.2	22.4	1.5	2.1	3.2	10.7	7.8	4.3	2.8	1.1	**281**
50-59	54.1	17.0	11.8	8.3	7.7	15.9	4.1	3.0	4.1	16.5	11.2	8.9	5.9	1.2	**170**
Կրթությունը**															
Հիմնական	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	**13**
Միջնակարգ	41.9	9.3	9.3	4.2	4.1	23.4	2.4	2.1	4.8	9.3	8.2	5.5	3.0	1.0	**291**
Միջին մասնագիտական	47.9	10.5	9.2	4.4	4.9	20.6	1.3	2.2	1.8	10.9	5.7	3.5	2.7	0.4	**228**
Բարձրագույն	41.4	8.1	7.3	4.7	2.6	13.6	1.7	1.7	1.7	9.4	7.3	3.5	2.2	0.4	**234**
Ամուսնական կարգավիճակը															
Գրանցված ամուսնություն	43.7	7.5	6.4	2.2	3.2	17.1	1.1	1.4	1.7	7.6	5.1	2.5	1.6	0.2	**533**
Չգրանցված ամուսնություն	43.2	11.6	10.6	6.3	4.2	30.5	1.1	1.1	3.3	11.6	8.5	4.2	2.2	1.1	**95**
Ոչ պաշտոնական միություն (Ապրում է զուգընկերոջ հետ, ամուսնացած չեն)	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	**9**
Ընկեր/ընկերուհի	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	**9**

(չեն վարում համատեղ կյանք)															
Չամուսնացած	(24.4)	(2.4)	(12.2)	(2.4)	(0.0)	(4.8)	(0.0)	(2.4)	(0.0)	(4.9)	(4.8)	(2.4)	(2.4)	(0.0)	**41**
Բաժանված/ամուսնալուծված)	60.0	36.0	38.0	26.0	16.0	34.0	14.0	14.0	18.0	40.0	30.0	28.0	18.0	4.0	**50**
Այրի	(50.0)	(16.6)	(6.6)	(10.0)	(6.7)	(23.3)	(3.3)	(3.3)	(6.7)	(20)	(13.4)	(10.0)	(3.3)	(3.3)	**30**
Բնակության վայրը															
Երևան	48.2	11.0	12.8	6.9	6.5	23.3	5.1	3.3	4.0	14.2	11.0	8.8	5.4	1.1	**274**
Այլ քաղաքային	44.4	8.5	8.5	4.4	2.6	18.8	0.9	1.7	3.1	8.5	4.9	2.7	2.2	0.9	**223**
Գյուղական	38.5	9.6	5.9	2.2	2.6	16.3	2.2	1.4	1.9	7.8	5.9	1.9	0.4	0.0	**270**
Զբաղվածության կարգավիճակը* **															
Երբեք չի աշխատել	45.1	6.1	5.5	0.6	2.4	22.0	1.2	0.6	1.2	6.1	4.9	1.2	0.0	0.0	**164**
Ուսանող	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	**19**
Գործազուրկ	45.4	11.7	9.4	5.1	4.2	24.2	2.7	2.4	4.2	10.8	7.8	5.7	3.6	0.6	**335**
Գրանցված աշխատող	44.2	9.2	7.9	6.8	4.3	6.7	2.4	1.8	1.8	11.6	7.3	3.7	2.4	0.6	**163**
Չգրանցված աշխատող	39.0	10.9	18.7	9.4	7.8	28.1	6.3	6.3	6.3	18.8	14.0	12.5	7.8	3.2	**64**
Երեխայի խնամքի կամ այլ տեսակի	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	**19**

արձակուրդում															
Ընդամենը	**43.6%**	**9.8%**	**9.2%**	**4.5%**	**4.0%**	**19.5%**	**2.9%**	**2.2%**	**3.0%**	**10.3%**	**7.5%**	**4.6%**	**2.8%**	**0.6%**	**767**
Փակագծերում տրված տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ տվյալը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և և չի ներկայացվել:															

** Քանի որ «տարրական կամ ավելի ցածր կրթության», կատեգորիայում միայն մեկ հարցված կար, կատեգորիան չի ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների թիվը կազմում է 766):
*** Քանի որ «աշխատանքն ուսման հետ համատեղողների» կատեգորիայում կար միայն մեկ հարցված, իսկ հարցվածներից 2-ն ընդհանրապես չեն պատասխանել, այդ կատեգորիաները չեն ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 764):

Ինչպես վկայում են **Աղյուսակ 3-ում** տեղ գտած տվյալները բռնության նույն ձևերի զոհը դարձած կանանց պարագայում միևնույն գործոններն ունեն փոխհարաբերակցման տարբեր դինամիկա:

Զարմանալի չէ, որ ***տարիքի*** գործոնը դրական ազդեցություն ունի ֆիզիկական և հոգեբանական բռնության պարագայում, չնայած որ նշված երկու ձևերի դեպքում էլ ընդհանուր օրինաչափությունից շեղումներ կան: Սովորաբար ավելի մեծ տարիքով կանայք տղամարդ զուգընկերոջ հետ ավելի երկար հարաբերությունների պատմություն ունեն և հետևաբար ՍԶԲ հանդեպ խոցելիությունը ավելի մեծ է: Միևնույն օրինաչափությունն է գործում տնտեսական շահագործման 2 ձևերի դեպքում: Ժամանակի հետ, թեպետև ոչ կտրուկ կամ ահագնալի, սակայն աճում է հավանականությունը, որ կինը կարող է տանից դուրս շպրտվել, կամ զուգընկերը կարող է նրա վաստակը ալկոհոլ կամ ծխախոտ գնելու նպատակով խլել այն ժամանակ, երբ քաջատեղյակ է տնային հոգսերին և ծախսերին:

Ինչ վերաբերվում է տնտեսական շահագործման մյուս 2 տեսակներին, գոյություն ունի զգալի անհամապատասխանություն (և՛ տոկոսային և՛, որն ավելի կարևոր է, դինամիկայի տեսանկյուններից) տղամարդ բռնարարների և, մյուս կողմից, կին զոհերի կողմից հաղորդվող բռնության տարածվածության միջև: *Աշխատանք ունենալու,* աշխատանքի գնալու, առևտրի կամ փող վաստակելու արգելքը զուգընկերոջ կողմից ամենացածր տոկոսն է կազմում երիտասարդ տարիքային խմբում, մինչդեռ, եթե իրադրությունը դիտարկենք տղամարդկանց հաղորդած տվյալների դիրքերից,ապա կգրանցվեին ամենաբարձր տոկոսները: Արժանահավատ բացատրությունը կարող է ներառել հետևյալ գործոնները. այդ տարիքային խմբի շատ երիտասարդ կանայք դեռ կրթությունը կամ վերապատրաստումն ավարտելու փուլում են, նրանցից համեմատաբար քչերն են արդեն ամուսնացած կամ զուգընկեր ունեն, թեպետ ամուսնացածները կարող են խնամքի կարիք ունեցող երեխա ունենալ, ոմանք էլ պարզապես գործազուրկ են, հետևաբար սույն իրավիճակում խնդիրն ավելի վարկածային է, քան թե իրական հիմք ունեցող: Տոկոսային զգալիորեն բարձր տվյալներ են ստացվել կանանց մյուս տարիքային խմբում (25-34 տարեկաններ): Շատ երիտասարդ կանայք ամուսնանում են կամ զուգընկեր ձեռք բերում այդ տարիքում,

այսպիսով աշխատանք ունենալ-չունենալու կամ աշխատանքը պահելու խնդիրները դառնում են հրամայական: Տվյալները ցույց են տալիս, որ նշված տարիքային խմբում երբևէ զուգընկեր ունեցած կին հարցվածներից յուրաքանչյուր հինգերորդը ոչ միայն կանգնել է այս երկընտրանքի առաջ, այլև զուգընկերն արգելել է լավ վարձատրվող աշխատանքի անցնել:

Կրթության գործոնն ավելի վստահելի ցուցանիշ է, քան տղամարդկանց դեպքում: Տվյալները հստակորեն ցույց են տալիս, որ թեպետև կանանց կրթամակարդակը էական տարբերություն չի մտցնում բռնության հիմնահարցի մեջ, այնուամենայնիվ բարձրագույն կրթություն ունեցող կանայք ամենաքիչը կամ գոնե ավելի քիչ են բախվում նման դեպքերի հետ: Սա հավանաբար պայմանավորված է նրանց անհանդուրժողականությամբ բռնության հանդեպ և հատկապես՝ դրա ավելի լուրջ դրսևորումներին դեմ դուրս գալու հանգամանքով: Բռնության հոգեբանական ձևի պարագայում դա կապված է զուգընկերոջ կողմից կնոջ համար թանկ անձանց *վիրավորանքի* կամ արժեքավոր գույքին *վնաս հասցնելու* հետ: *Տնտեսական բռնության* պարագայում զուգընկերը կնոջն *արգելում է* աշխատանք ունենալ , աշխատանքի գնալ, առևտուր անել կամ փող վաստակել: Այս վերջին դեպքում զգալի է բարձրագույն կրթություն ունեցող և ավելի ցածր կրթամակարդակ (միջին մասնագիտական և միջնակարգ կրթություն) ունեցող կանանց միջև տարբերությունը (համապատասխանաբար 7.0-9.8 տոկոսով):

Շատ կանխատեսելի է ***ամուսնական կարգավիճակի*** դերակատարումը: ՍԶԲ մասին հաղորդող կանանց ամենաբարձր տոկոսն են կազմում *ընկերոջից կամ օրինական ամուսնուց բաժանվածները:* Միջին հաշվով սա 2 –ից 3 անգամ (երբեմն՝ անգամ ավելի) գերազանցում է կանանց այլ խմբերին ըստ աղյուսակային ցուցանիշների, որտեղ ներառված են բռնության բոլոր 3 ձևերն ու կանանց բոլոր խմբերը: Այս փաստն ամենևին էլ զարմանալի չէ, քանի որ ՍԶԲ–ն բավականին հաճախ է հանդես գալիս որպես ամուսնալուծության կամ ընկերոջից բաժանության պատճառ՝ կանանց կողմից նույնիսկ դիտարկվելով իբրև միակ պատճառը: Տարբերությունն առանձնապես զգալի է ֆիզիկական բռնության տարածվածության պարագայում:

ՍԶԲ զոհերի ամենաբարձր տոկոսն են կազմում *այրիները*՝ երկու չնչին բացառություններով: Սա կապված է զուգընկերոջ ահաբեկման հետ (հոգեբանական

բռնության դեպքում) և կնոջ՝ աշխատանք ունենալու ու դրամ վաստակելու զուգընկերոջ կողմից դրված արգելքի հետ: Վերջինս բացատրվում է նրանով, որ այրիներից շատերն ավելի մեծ տարիք ունեն, և, ինչպես արդեն նշվել է, ավելի բարձր տարիքի տղամարդիկ բոլորովին չեն ուզում կանանց արգելել շահութաբեր աշխատանք ունենալ:

Ինչպես և կարելի էր ակնկալել, ՍԶԲ-ի ամենացածր տոկոսը պարբերաբար գրանցվում է չամուսնացած կանանց շրջանում: 2 փոքրաթիվ բացառություններն առնչվում են ահաբեկման դեպքերին, և նույնիսկ ամենաչնչին հավանականությամբ իսկ չեն առնչվում տանից դուրս շպրտվելու հետ: Օրինական և քաղաքացիական կարգով ամուսնության բնույթ ևս չկրելով՝ հավանաբար նրանց հարաբերությունները եղել են կարճաժամկետ և սահմանափակ:

Միջանկյալ դիրք են զբաղեցնում գրանցված և չգրանցված՝ քաղաքացիական կարգով ամուսնացած կանայք: Հարկ է նշել, որ թեպետև այս 2 խմբերն իրար շատ մոտ են՝ ի համեմատություն այլ խմբերի, չգրանցված ամուսնություն ունեցող կանայք ավելի հաճախ են հաղորդել հոգեբանական և ֆիզիկական բռնության, տնտեսական շահագործման ենթարկվելու մասին, ինչպես նաև ուրիշների ներկայությամբ նվաստացման, հրելու, քաշքշելու կամ ապտակելու, նաև՝ իրեն վնաս հասցնելու նպատակով իրեր շպրտելու մասին՝ ի համեմատություն գրանցված ամուսնությունների: Ամենամեծ տարբերությունն առնչվում է աշխատանք ունենալու արգելքին (30.5% ընդդեմ 17.1%):

Ինչ վերաբերում է ***բնակության վայրի*** գործոնին, հետազոտության տվյալները պարզում են հետևյալ պատկերը: ՍԶԲ ենթարկվածների կայուն բարձր տոկոս է գրանցվել երևանաբնակների շրջանում, մինչդեռ ամենացածր տոկոսն են կազմում ***գյուղաբնակները*** (նրանց տոկոսային տվյալները փոքր-ինչ բարձր են քաղաքային բնակավայրերի բնակիչների /ոչ երևանաբնակ/ տոկոսային տվյալներից այլոց ներկայությամբ նվաստացման, հրելու կամ քաշքշելու և նրանց վաստակը կամքին հակառակ խլելու պարագայում): Միջանկյալ դիրք են զբաղեցնում այլ *քաղաքային բնակավայրերից* բռնության ենթարկված անձինք: Ըստ նրանց տրամադրած տվյալների՝ ճնշումների պարագայում նրանք մոտ են այլ խմբերին:

Զբաղվածության գործոնի տվյալների համաձայն ամենաճնշված խմբում են չգրանցված աշխատող կանայք: Նրանց տոկոսը կայուն կերպով ակնհայտաբար բարձր է ֆիզիկական բռնության բոլոր ձևերի, տնտեսական շահագործման և հոգեբանական բռնության ձևերի մեծ մասի դեպքում: Երկու բացառությունները կապված են հոգեբանական բռնության հարաբերականորեն մեղմ ձևերի հետ. այլոց ներկայությամբ նվաստացման ենթարկվածների տոկոսը քիչ է տարբերվում ամենաբարձր տոկոսային տվյալներն ունեցող խմբից, մինչդեռ վիրավորանք հասցնելու կամ զուգընկերոջ կողմից իրեն վատ զգալ ստիպելու պարագայում տարբերությունն ակնահայտ է և գերազանցում է 5%-ի շեմը:

Բռնության ենթարկվածների երկրորդ ամենամեծ խումբն են կազմում գործազուրկ կանայք: Հոգեբանական բռնության ձևերից միայն մեկի դեպքում (վնաս հասցնելու սպառնալիք) և ֆիզիկական բռնության (ապտակելը կամ կնոջը վնասելու նպատակով իրեր շպրտելը) դեպքում նրանց տոկոսը քիչ է տարբերվում մյուս խմբից:

Մյուս խումբն են կազմում գրանված աշխատող կանայք: Նույնիսկ եթե նրանք 1.5-2 անգամ պակաս են բռնության են ենթարկվում՝ ի տարբերություն ամենահաճախ բռնության ենթարկվողների (չգրանցված աշխատողների), այս ցուցանիշը այդուհանդերձ բավականին մոտ է երկրորդ ամենաշատ բռնության ենթարկված խմբի ցուցանիշին (գործազուրկ կանանց):

Հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ (2 չնչին բացառություններով) բռնությանն ամենաքիչն են ենթարկվել այն կանայք, ովքեր երբևէ չեն աշխատել:

***

Ֆիզիկական բռնության մասին հաղորդում. Համեմատական վերլուծություն

Կին հարցվածներին երկու անգամ հարց է տրվել զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության ենթարկվելու իրենց փորձի մասին:

Առաջին անգամ զուգընկերոջ գործադրած ֆիզիկական բռնությանը վերաբերող հարցերն ընթերցվել են երբևէ զուգընկեր ունեցած կանանց կին հարցազրուցավարի կողմից հիմնական հարցաշարից, և կանանց խնդրել են պատասխանել այդ հարցերին: Տրամադրված տվյալները ներկայացվել են ամփոփագրում և դասակարգվել աղյուսակի տեսքով, ինչպես նաև ստորև ներկայացվել շարադրանքի ձևաչափով:

Երկրորդ անգամ միևնույն հարցերը տրվել են առանձին ինքնուրույն հարցաշարով, որը կին հարցվածներին խնդրել են ինքնուրույնաբար լրացնել և լրացնելուց հետո գցել կնիքված արկղը: Սա արվել է անանունության պահպանման և գաղտնիության ապահովման նպատակով՝ տվյալների կայունությունը և հավաստիությունը ստուգելու համար: Կարելի է եզրակացնել, որ հարցվածներից շատերը հանգիստ էին իրենց զուգընկերոջ կողմից գործադրած ֆիզիկական բռնությանն առնչվող հարցերին այս ձևաչափով պատասխանելիս, քանի որ ինքնուրույն հարցաշարի համապատասխան բաժնի հարցերին պատասխանել են 82%-83%-ով: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր 5 հարցված կանանցից առնվազն 4-ը պատրաստ են եղել պատասխանել իրենց անձնական կյանքի ամենափակ և ոչ այնքան հաճելի ասպեկտներին առնչվող հարցերին:

Ստորև՝ **Աղյուսակ 4 –ում** ներկայացված են տղամարդ զուգընկերոջ կողմից գործադրած ֆիզիկական բռնության փոխհատվող տվյալները, որոնք ստացվել են կանանց՝ հարցազրուցավարի հարցերին տրված պատասխաններից՝ վերցված հիմնական զեկույցի հարցաշարից և նույն հարցերից կազմված ինքնուրույն հարցաշարից:

Աղյուսակ 4. Կանանց ֆիզիկական բռնության ենթարկումը տղամարդ զուգընկերոջ կողմից

Հարցազրուցավարի հարցերին հարցվածների պատասխաններից ստացված տվյալների և ինքնուրույն հարցաշարի նույն հարցերին տրված պատասխանների համեմատություն

Երբևէ զուգընկեր ունեցած կանանց տոկոսը, ովքեր հաղորդել են իրենց սեռական զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության ենթարկվելու մասին		
	Պատասխաններ հարցազրուցավարի հարցերին	**Ինքնուրույն հարցաշարի հարցերին տրված պատասխաններ**
Բռնության ձևեր	**Երբևէ զուգընկեր ունեցած և ֆիզիկական բռնության ենթարկված կանանց տոկոսը** **N=767**	**Երբևէ զուգընկեր ունեցած և ֆիզիկական բռնության ենթարկված կանանց տոկոսը** **N=634**

Զուգընկերն ապտակել է կամ նրան վնասելու նպատակով իրեր շպրտել վրան	10.3%	14.1
Զուգընկերը հրել կամ քաշքշել է նրան	7.5	16.5
Զուգընկերը հարվածել է բռունցքով կամ նրան վնասելու նպատակով իրեր շպրտել վրան	4.6	9.3
Զուգընկերը խփել, քարշ տվել, ծեծել, խեղդել կամ այրել է նրան	2.8	7.1
Զուգընկերը սպառնացել է օգտագործել կամ իրականում կնոջ դեմ օգտագործել է հրազեն, դանակ կամ այլ զենք	0.6	5.9
Սեռական զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության ենթարկված կանանց տոկոսը	12.5%	22.4%

Տվյալները հստակորեն ցույց են տալիս, որ դեմ առ դեմ հարցազրույցի պարագայում շատ կին հարցվածներ չեն պատմել սեռական զուգընկերոջ բռնության մասին, թեև հարցազրույցի ընթացքում երրորդ անձ ներկա չի եղել և երաշխավորվել է հարցազրույցի գաղտնիությունը: Այլ կերպ ասած, տղամարդ սեռական զուգընկերոջ բռնանալը թաքցվում է, լիարժեք չի հաղորդվում: Ինչպես երևում է Աղյուսակ **4** –ում տեղ գտած տվյալներից, երբ կին հարցվածները հարցաշարին պատասխանել են անանուն և ինքնուրույնաբար, ՍԶԲ մասին հաղորդողների տոկոսը առնվազն 1.5 և սովորաբար 2 կամ ավելի անգամ մեծ է եղել, քան հարցազրույցների ընթացքում: Հարկ է նշել, որ միևնույն կնոջ կողմից բռնության նույն դեպքի մասին երկու տարբեր ձևաչափերով հաղորդելու միջև զգալի անհամապատասխանություն կա, որը պայմանավորված է նաև բռնության ծանրության աստիճանով: Սույն անհամապատասխանությունը, որը կարող է կոչվել (տարածվածության) «թերհաղորդման բաց», գնալով աճում է՝ հանցանքի ծանրությանը զուգահեռ:

Աղյուսակ **5** –ի տվյալները վկայում են, որ հարցման երկու տարբեր ձևերի դեպքում կանանց պատասխանների տարբերությունը միայն քանակական չէ՝ անկախ դրանց կարևորությունից: Հաճախ կենսագրական բնութագրիչների ազդեցությունը և բացահայտված օրինաչափությունները նույնական չեն: Հետևաբար անհրաժեշտ է

ուսումնասիրել կենսագրական բնութագրիչների ազդեցությունը ինքնուրույն **հարցաթերթ** (ԻՀ) հարցերին տրված պատասխանների վրա և համեմատել դինամիկան **հիմնական հարցաթերթի** (ՀՀ) պատասխանների հետ:

Քանի որ տարիքով ավելի մեծ կանայք սովորաբար ավելի երկար հարաբերությունների մեջ են եղել տղամարդ զուգընկերոջ հետ և, հետևաբար, զոհ դառնալու վտանգին ավելի ենթակա, զարմանալի չէ, որ տարիքն ընդհանուր առմամբ իր նպաստն է բերում ֆիզիկական բռնության տարածվածությանը: Պատասխաններ տված երկու խմբերն իրար նման են այս առումով: Սակայն ԻՀ պատասխաններում բռնության այս ձևի աճի դինամիկան զգալիորեն ցածր է ՀՀ պատասխանների համեմատությամբ (բացառությամբ այն հատուկ դեպքի, երբ տղամարդ զուգընկերը սպառնացել է կնոջ դեմ օգտագործել հրազեն, դանակ կան այլ զենք), հատկապես հաշվի առնելով երկու խմբերի պատասխանների հարաբերական տոկոսային տվյալները:

Կրթական գործոնն, ինչպես պարզվում է, անկանխատեսելի է: Թեպետև տեխնիկական ու միջին մասնագիտական կրթություն ունեցող կանայք, ովքեր հաղորդում են ֆիզիկական բռնության ենթարկվելու մասին, միջնակարգ կրթություն ունեցողների համեմատությամբ մշտապես ցածր տոկոս են կազմում ըստ ԻՀ պատասխանների: Տղամարդ զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության ենթարկված բարձրագույն կրթությամբ կանանց տոկոսն ավելի բարձր կամ հավասար է միջնաարգ կամ միջին մասնագիտական կրթությամբ կանանց տոկոսին: Այս օրինաչափությունը հակադրվում է ՀՀ պատասխանների օրինաչափությանը և տեսանելի է նաև շատ երկրներում անցկացված հետազոտություններում:

Որպես կանոն, բարձրագույն կրթությամբ կանայք չեն հանդուրժում բռնությունը, հատկապես՝ ֆիզիկական բռնությունը, և սովորաբար նրանք ընտրում են բարձրագույն կրթությամբ զուգընկերների, կամ, առնվազն, միջին մասնագիտական կրթություն ունեցողների: Այդ կրթամակարդակն ունեցող տղամարդիկ քիչ են հակված բռնության՝ ի համեմատ ցածր կրթամակարդակ ունեցողների՝ հատկապես ֆիզիկական բռնության դեպքում: Այս միտումը վերահաստատվում է նաև սույն զեկույցի վերջնարդյունքներով: Հետևաբար, հետագա ուսումնասիրության կարիք ունի այն հարցը, թե ինչու բարձրագույն կրթությամբ կանայք, ովքեր անանուն կերպով հաղորդում են սեռական

զուգընկերոջ գործադրած ֆիզիկական բռնության մասին, ավելի բարձր տոկոս են կազմում կամ տոկոսային տվյալներով հավասար են ցածր կրթամակարդակ ունեցող կանանց ցուցանիշներին:

Աղյուսակ 5. Տղամարդ սեռական զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության գործադրում. կանայք
(Տարածվածությունը կյանքի ընթացքում) Ըստ ինքնուրույն հարցաշարի տվյալների

Ընտրանքի երբևէ զուգընկեր ունեցած կանանց տոկոսային մասնաբաժինը, ովքեր լրացրել են ինքնուրույն հարցաշարը և հաղորդել իրենց սեռական զուգընկերոջ կողմից երբևէ ֆիզիկական բռնության ենթարկվելու մասին՝ ըստ կենսագրական բնութագրիչների						
Կենսագրական բնութագրիչներ	Նրան ապտակել է/ վնասելու նպատակով իրեր շպրտել	Նրան հրել/քաշքշել է զուգընկերը	Նրան հարվածել է զուգընկերը	Խփել /քարշ տվել/խեղդել/այրել է զուգընկերը	Սպառնացել է օգտագործել/ իրականում կնոջ դեմ օգտագործել է հրազեն	Կանանց թիվը N=634 Աղյուսակ
Տարիքը						
18-24	14.0%	12.5%	8.3%	5.2%	6.3%	96
25-34	14.3%	16.2%	7.9%	5.7%	4.7%	190
35-49	13.5%	17.9%	10.5%	8.0%	5.7%	227
50-59	15.0%	17.5%	10.0%	9.2%	7.4%	121
Կրթությունը						
Հիմնական	*	*	*	*	*	7
Միջնակարգ	15.0%	15.1%	9.4%	8.1%	6.7%	236
Միջին մասնագիտական	10.6%	14.5%	7.3%	5.1%	4.0%	177
Բարձրագույն	15.5%	19.3%	10.2%	7.5%	6.5%	214
Ամուսնական կարգավիճակը						
Գրանցված ամուսնություն	11.6%	12.8%	7.5%	5.0%	3.8%	423
Չգրանցված ամուսնություն	16.0%	22.7%	9.3%	5.2%	5.2%	76
Ոչ պաշտոնական միություն	*	*	*	*	*	6

(Ապրում է զուգընկերոջ հետ, ամուսնացած չեն)						
Ընկեր/ընկերուհի (չեն վարում համատեղ կյանք)	*	*	*	*	*	7
Չամուսնացած	11.8%	9.7%	9.7%	9.8%	9.8%	61
Բաժանված/ամուսնալուծված	(42.1%)	(43.2%)	(29.0%)	(26.3%)	(13.2%)	38
Այրի	*	*	*	*	*	23
Բնակության վայրը						
Երևան	15.3%	18.1%	12.1%	9.2%	6.7%	239
Այլ քաղաքային	12.5%	15.9%	8.1%	5.4%	5.4%	186
Գյուղական	14.1%	15.3%	7.1%	6.2%	5.3%	209
Զբաղվածության կարգավիճակը**						
Երբեք չի աշխատել	15.6%	13.9%	8.9%	6.6%	5.7%	122
Ուսանող	(12.9%)	(3.6%)	(10.7%)	(10.7%)	(10.7%)	28
Գործազուրկ	12.5%	16.3%	8.2%	7.4%	6.0%	267
Գրանցված աշխատող	12.8%	19.3	9.1%	6.3%	5.6%	142
Չգրանցված աշխատող	22.2%	24.5%	14.5%	9.1%	5.4%	56
Երեխայի խնամքի կամ այլ տեսակի արձակուրդում	*	*	*	*	*	17
Ընդամենը	**14.1%**	**16.5%**	**9.3%**	**7.1%**	**5.9%**	**634**

**Քանի որ «աշխատանքի համատեղում ուսման հետ» կատեգորիայում կար ընդամենը 1 հարցված, իսկ 1 հարցված չէր պատասխանել, այս կատեգորիաները չեն ներկայացվել (հետևաբար հարցվածների ընդհանուր քանակն ըստ այունակների այս սեկցիայում ավելի փոքր է, քան տրված հարցին պատասխանած հարցվածների ընդհանուր քանակը):

Փորձնականորեն սկզբում կարող են առնվազն 2 վարկածներ առաջադրվել. (ա) ավելի ցածր կրթամակարդակով կանայք թաքցնում էին ինտիմ հարաբերություններում ֆիզիկական բռնության ենթարկվելու փաստը նույնիսկ անանուն ձևաչափով հետազոտության մեջ, (բ) բարձրագույն կրթությամբ կանայք,

ավելի քան այլ կանայք, հակված են թաքցնելու իրենց սեռական զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության ենթարկվելու փաստը դեմ առ դեմ հարցազրույցի դեպքում. Թեպետև ամաչելու մշակույթը կին զոհերի բոլոր խմբերի մոտիվացիան է հանդիսանում՝ ստիպելով շրջահայաց լինել այս դժբախտ փորձի մասին խոսելիս, բարձրագույն կրթությամբ կանանց մոտ ամոթի զգացումն ավելի սուր է մի շարք պատճառներով, այդ թվում՝ կարգավիճակի անհամապատասխանությունը. Հնարավոր է, որ կրթության դրական դերակատարումը գերագնահատված է և իրականում այլ՝ ավելի ազդեցիկ գործոններ են գործում, որոնք ինչպես հարկն է ուշադրության չեն արժանացվել:

Ըստ ինքնուրույն հարցաշարի պատասխանների՝ ***ամուսնական կարգավիճակի*** ազդեցությունը այնքան էլ (հարաբերականորեն) անմիջական չէ, ինչպես ՀՀ պատասխանների դեպքում: Տվյալներից բխող միակ օրինաչափությունը, որը համընկնում է ՀՀ պատասխանների օրինաչափությանը այն է, որ ՍԶԲ-ի մասին հաղորդող կանաց ամենաբարձր տոկոսն է գրանցվել *օրինական ամուսնուց կամ ընկերոջից բաժանված կանանց շրջանում*: Ինչպես և ԻՀ պատասխանների դեպքում է, ամենայն հավանականությամբ բռնությունն առնվազն նպաստող, եթե ոչ առաջնային գործոն է բաժանության դեպքում:

Երկրորդ՝ ամենաշատը բռնության ենթարկվածների խմբի հստակ տարորոշումը հեշտ չէ: Կախված մոտեցումից՝ դա կարող են լինել քաղաքացիական կարգով ամուսնացած կամ չամուսնացած կանայք: Եթե հիմք ընդունենք տոկոսների վրա հիմնվող մոտեցումը, ապա այդ խումբը կկազմեն քաղաքացիական կարգով ամուսնությամբ ապրող կանայք: Սակայն, եթե բռնության դեպքի լրջության և ծանրության աստիճանն է ընդունվում որպես չափորոշիչ, ապա այդ խումբը կկազմեն չամուսնացած կանայք: Ֆիզիկական բռնության համեմատաբար «մեղմ» ձևերի դեպքում (ապտակը կամ կնոջը վնասելու նպատակով իրեր շպրտելը, հրելը կամ քաշքշոցը) զգալիորեն ցածր է բռնությունների մասին հաղորդող չամուսնացած կանանց տոկոսը՝ ի համեմատություն քաղաքացիական կարգով ամուսնացած կանանց (համապատասխանաբար 11.8% ընդդեմ 16.0% և 9.7% ընդդեմ 22.7%): Տոկոսային հարաբերությունը հավասար է բռնության «միջին» տեսակի դեպքում (հարված ստանալու), մինչդեռ ֆիզիկական բռնության ավելի ծանր և դաժան ձևերի

պարագայում (զուգընկերոջ խփելը, քարշ տալը, ծեծելը, խեղդելը կամ այրելը, նաև՝ կնոջը սպառնալը կամ հրազեն, դանակ կամ այլ տեսակի զենք օգտագործելը) տոկոսը զգալիորեն բարձր է չամուսնացած կանանց պարագայում: Քանի որ նրանք ներկայում ամուսնացած չեն, նշանակում է՝ նրանք ընդհատել են հարաբերությունները: Հավանական է, որ գոնե որոշ դեպքերում հարաբերություններն ընդհատվել են բռնության պատճառով, քանի որ այդ կանայք հնարավոր է, որ չեն ցանկացել հանդուրժել ֆիզիկական բռնությունը, որը կարող էր ինքնաբերաբար փոխանցվել հետագա ամուսնական կյանք:

ԻՀ պատասխաններում ամրագրված չամուսնացած կանանց տրամադրած տվյալներն ամբողջովին հակադրվում են ՀՀ հարցերի պատասխաններին, որտեղ ՍԶԲ ենթարկված չամուսնացած կանանց տոկոսը ամենացածրն է:

ԻՀ պատասխաններում ամենացածր տոկոսն են կազմում գրանցված ամուսնություն ունեցող կանայք: Սակայն նույնիսկ նրանք են մեծամասամբ թաքցրել ՍԶԲ-ն դեմ առ դեմ հարցազրույցների ժամանակ: ԻՀ պատասխանների տոկոսները միջին հաշվով 2-3 անգամ գերազանցում են ՀՀ պատասխաններին:

Ինչ վերաբերում է *բնակության վայրի* գործոնին, ԻՀ պատասխանները բացահայտում են գրեթե նույն օրինաչափությունը, որն առկա է ՀՀ պատասխաններում: Կրկին սեռական զուգընկերոջ կոզմից բռնության ենթարկվածների ամենամեծ տոկոսն են կազմում երևանաբնակները: Սակայն, այս դեպքում փաստացի տարբերություն չկա գյուղաբնակների և այլ քաղաքային բնակավայրերի /բացառությամբ Երևանի/ բնակիչների միջև:

Հարկ է նշել, որ ՍԶԲ աճի դինամիկան երկու զեկույցներում համանման չէ: «Ամենահամեստ» աճը (մոտ 1.5 անգամ) գրանցվել է երևանաբնակ կին հարցվածների շրջանում, ովքեր հաղորդել են ՍԶԲ ենթարկվելու մասին՝ բացառությամբ հրազենի, դանակի կամ այլ զենքի կին զուգընկերոջ դեմ օգտագործման սպառնալիքի կամ իրական օգտագործման ամենածանր ու դաժան դեպքերի, որտեղ աճը նկատելի է թե՛ տոկոսային տվյալներից, թե՛ վեցակի աճից (1.1%-ից 6.7%): Շեշտակիորեն աճել է գյուղական և այլ քաղաքային բնակավայրերում սեռական զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության ենթարկվելու մասին հաղորդող կանանց տոկոսը: Տվյալները

ցույց են տալիս, որ «թաքցնելու միտվածության բացը» շատ ավելի մեծ է նրանց միջև, քան թե երևանաբանակների միջև:

Զբաղվածության կարգավիճակի տեսանկյունից ըստ ԻՀ պատասխանների ամենաշատ բռնությունների ենթարկված խումբը կրկին ոչ պաշտոնապես աշխատանք ունեցող կանայք են: Սակայն, ի տարբերություն ՀՀ պատասխանների, ՍԶԲ լրջագույն և ծանրագույն դրսևորումների պարագայում ամենաբարձր տոկոսն են կազմում ուսանողուհիները:

Ընդհանուր առմամբ կայուն և պարզ օրինաչափություն չկա, քանի որ այն կանայք, ովքեր երբեք չեն աշխատել, գործազուրկ են և նրանք, ովքեր օրինական աշխատանք ունեն հիմնականում նույն, երբեմն՝ գրեթե նույնանման, իրադրության մասին են հաղորդում (ուշադրության է արժանի այն փաստը, որ սա վերաբերում է «չափավոր» և ծանրագույն դաժանության ու լրջության բռնարարքներին):

«Թաքցնելու միտվածության բացը» ամենաակնառուն է երբևէ աշխատանք չունեցած կանանց պարագայում, և գրեթե աննշմարելի՝ ոչ պաշտոնապես աշխատանք ունեցող կանանց մոտ: Գործազուրկ կանայք և օրինական աշխատանք ունեցողները միջանկյալ դիրքում են: Այս տարբերությունն ընդգծում է կին հարցվածների անկաշկանդությունն և անկեղծությունն իրենց ԻՀ պատասխաններում:

Սեռական բռնությունը (տղամարդիկ)

Սեռական բռնության մասին հարցեր են տրվել միայն տղամարդկանց և միայն ինքնուրույն հարցաշարի ձևաչափով: Սա շատ զգայուն թեմա է իրավական, սոցիալական, էթիկական, առողջապահական, հոգեբանական և այլ տեսանկյուններից՝ հետևանքների և արձագանքների առումով: Այսպիսով, առավելագույն անանունության և գաղտնիության ապահովումը դարձել էր հրամայական, որպեսզի տղամարդ հարցվածներից ստացված պատասխանները լինեին անկեղծ, որը թույլ կտար հետազոտողներին սեռական բռնության տարածվածության հարցի վերաբերյալ կռահումներից անցում կատարել իրականությանը մոտ ընդհանրացումների:

Աղյուսակ 6 –ում ներկայացված են տղամարդկանց կողմից կին կամ աղջիկ /այդ պահին այլևս զուգընկեր չհանդիսացող/ սեռական զուգընկերոջ դեմ գործադրած

սեռական բռնության տարբեր ասպեկտներին վերաբերող տվյալներ, որոնք ստացվել են հետազոտության արդյունքում:

Աղյուսակ 6. Տղամարդ հարցվածների թիվը, ովքեր պատասխանել են (ինքնուրույն հարցաշարի միջոցով) սեռական բռնության գործադրման մասին հարցերին և այն տղամարդկանց տոկոսը, ովքեր հաղորդել են մեկ կամ ավելի անգամ կին սեռական զուգընկերոջ կամ այլ կնոջ/ աղջկա հանդեպ մեկ կամ ավելի անգամ հետևյալ սեռական ոտնձգությունների մասին

	Տղամարդիկ (Կին զուգընկերոջ կամ այլ կնոջ/աղջկա հանդեպ սեռական բռնության գործադրման մասին հաղորդող տղամարդկանց տոկոսը) N=369	Մեկ անգամ վերջին 12 ամսում և դրանից առաջ	Մեկ անգամ ից ավելի	Վերջին 12 ամսում	12 ամսից առաջ
1. Ստիպել է կնոջը/աղջկան սեռական հարաբերություն ունենալ	7.6%, ներառյալ →	4.6%	2.9%	5.1%	2.4%
2. Սեռական հարաբերություն է ունեցել հարբած կնոջ/ աղջկա հետ, ով ի վիճակի չի եղել ընդդիմանալ կամ համաձայնել	5.4%	3.5%	1.8%	4.3%	1.0%
3. Ստիպել է կին զուգընկերոջը սեռական հարաբերություն ունենալ	5.1%	4.1%	1.1%	4.6%	0.6%
4. Ստիպել է նախկին կին զուգընկերոջը սեռական հարաբերություն ունենալ	3.5%	2.5%	1.2%	2.8%	0.9%
5. Ստիպել է կին զուգընկերոջը, ով այդ պահին չի եղել իր զուգընկերը, սեռական հարաբերություն ունենալ	2.5%	1.6%	0.8%	1.6%	0.8%
6. Այլ տղամարդու հետ միասին ստիպել է կնոջը հարաբերություն ունենալ երկուսի հետ	1.1%	0.8%	0.3%	0.5%	0.6%
7. Այլ տղամարդու հետ միասին ստիպել է կնոջը հարաբերություն ունենալ	2.1%	1.3%	0.8%	0.5%	1.6%

երկուսի հետ, երբ վերջինս հարբածության պատճառով ի վիճակի չի եղել իր կողմ կամ դեմ լինելու մասին հայտնելու					
Սեռական բռնության տոկոսը (տղամարդկանց կողմից գործադրած և նրանց կողմից այդ մասին հաղորդվող)	14.6%				

Ձևանմուշում երբևէ զուգընկեր ունեցած տղամարդկանց միայն 52%-53%[45]-ն է նախընտրել լրացնել ինքնուրույն հարցաշարը: Տվյալները ցույց են տալիս, որ այս խմբի հարցվածների առնվազն 7.6%-ն է իրենց կյանքի որոշակի փուլում պարտադրել կամ ստիպել կնոջը կամ աղջկան իր հետ սեռական հարաբերություն ունենալ: Շատ դեպքերում բռնացած սեռի զոհերը սեռական զուգընկերներ են եղել. Բռնություն գործադրողների երկու երրորդը (կամ հարցվածների վերոհիշյալ խմբի 5.1% -ը) հաղորդել են կին զուգընկերոջը ուժով ստիպելու և գրեթե կեսը (3.5%)՝ նախկին կին սեռական զուգընկերոջը ստիպողաբար իրենց հետ սեռական հարաբերություն ունենալու մասին, մինչդեռ մեկ երրորդը (2.5%) հաղորդել են այլևս իրենց սեռական զուգընկերը չհանդիսացող կնոջը բռնանալու մասին:

Այս եզրակացությունը նաև հիմնավորվում է այն պատասխաններով, որոնք տարբեր կանանց կամ աղջիկներին սեռական բռնության ենթարկելու մասին հարցին են տրվել: Թեպետ 6.0%-ն է հաղորդել բռնության փաստի մասին, 3.3%-ը (կամ բռնացողների կեսից ավելին) ստիպել են մեկ կնոջ, 0.9% և 1.2% հարկադրել են համապատասխանաբար երկու և երեք կանանց և միայն 0.6%-ն են ստիպել 4 կամ ավելի կանանց իրենց հետ հարաբերություն ունենալ:

Հարակից ապացույցներ են ներկայացվում նաև ցածր տոկոսային ցուցանիշներում, որոնք քննում են մեկ այլ տղամարդու հետ միասին բռնության գործադրման դեպքերը (ընդհանուր առմամբ 1.1% և 2.1% են կազմում այն իրադրությունները, երբ բռնության ենթարկված կինը չափազանց հարբած է եղել իր կամքը հայտնելու համար): Իր կին զուգընկերոջը մեկ այլ տղամարդու հետ կիսելու հավանականությունը խիստ ցածր է: Նույնիսկ երբ ալկոհոլն է օժանդակ գործոն

[45] Մեկ հարցի դեպքում (տարբեր կանանց հարաբերություն ունենալ ստիպելը և նրանց թիվը) երբևէ զուգընկեր ունեցած տղամարդկանց 48.0% լրացրել են ինքնուրույն հարցաշարը:

հանդիսանում, բռնություն գործադրող տղամարդիկ ցանկություն չունեն իրենց կին զուգընկերոջն այլ տղամարդու հետ կիսել (թեպետ բռնացողների 5.4% օգտվել են հարբած կնոջ վիճակից՝ ստիպելով սեռական հարաբերություն ունենալ, միայն 2.1% -ն է հաղորդել մեկ այլ տղամարդու հետ միասին կնոջը բռնանալու մասին):

Հարկ է նշել, որ բռնարարների մեծ մասը հաղորդել են կնոջը կամ աղջկան միայն մեկ անգամ բռնության ենթարկելու մասին. տոկոսային սանդղակը 0.8%–4.6% միջև է, մինչդեռ դա մեկից ավելի անգամ գործադրողների տոկոսը 1.5-2 կամ ավելի անգամ ցածր է և կազմում է համապատասխանաբար 0.3% – 2.9%: Ակներև է, որ սա հարաբերականորեն դրական միտում է, եթե հաշվի չառնենք այն մտահոգիչ հանգամանքը, որ կանանց դեմ այս բոլոր սեռական բռնությունները նրանց իսկ հաղորդմամբ տեղի են ունեցել վերջին 12 ամիսների ընթացքում: Դրանք կազմում են բոլոր զեկույցների 65%-80%՝ բացառությամբ այն իրադրությունների, երբ բռնությունը գործադրվել է մեկ այլ տղամարդու հետ միասին (վերջին դեպքում տոկոսները գրեթե հավասար են բաշխվում նախորդ տարվա և ավելի վաղ կատարված դեպքերի միջև, կամ երբ կնոջ հարբած լինելու պարագայում նախորդ տարվա տոկոսը 3 անգամ ցածր է):

Սեռական բռնություն գործադրողների տոկոսը, ովքեր համաձայնել են լրացնել ինքնուրույն հարցաշարը, կարող է շատ ցածր թվալ, քանի որ դրանց միանիշ տվյալները տատանվում են 1.1% -ից 7.6% և քիչ կամ փոքր-ինչ ավել են, քան վստահության միջակայքը (սխալի շեմը) և հետևաբար զգուշավոր վարմունք են ենթադրում: Այլ կերպ ասած՝ կարող է թվալ, թե կանանց դեմ սեռական բռնության խնդիրը լայնատարած չէ և, քանի որ այն հազվադեպ երևույթ է, այն չպետք է մտահոգության առարկա դառնա: Փաստացի այն պետք է և, իրավամբ, առաջացնում է լուրջ մտահոգություն:

Նախ նշենք, որ բռնության տարբեր տեսակների դեպքում թեև համեմատաբար ցածր տոկոսներ են գրանցվել, այնուամենայնիվ տղամարդ հարցվածների 14.6%-ն ընդունել է սեռական բռնություն գործադրելու փաստը: Այս ցուցանիշը բավարար հիմք է տալիս սույն երևույթի հետ հաշվի նստելու և դրա դեմ հատուկ միջոցներ ձեռնարկելու համար:

Երկրորդ՝ հաշվի առնելով դրա ազդեցությունը և հետևանքներն անհատների, համայնքների և ընդհանուր առմամբ՝ հասարակության վրա, սեքսուալ բռնությունը կանանց դեմ բռնության վատթարագույն և ամենատրավմատիկ ձևերից է: Անգամ եթե միայն մեկ կին դարձած լիներ նմանօրինակ բռնության զոհ, դա ևս չափազանց կլիներ: Պետք է հիշել, որ առանց զույգի փոխհամաձայնության ցանկացած սեռական հարաբերություն բռնաբարություն է: Տվյալները հաստատում են, որ հայ հասարակությունում տեղ է գտել զուգընկերոջ/զույգի բռնաբարության երևույթը, չնայած որ այն չի ընկալվում որպես այդպիսին, իսկ սույն հասկացությունը դեռ չի ընդգրկվել ազգային օրենսդրության մեջ:

Երրորդ՝ տվյալները հստակորեն ցուց են տալիս, որ բռնացողների ճնշող մեծամասնությունը սեռական բռնություն է իրագործել հետազոտությանը նախորդած 12 ամիսների ընթացքում: Սա կարող է նշանակել, որ իրադրությունը կարող է ստուգման չենթարկվելու դեպքում միտումի վերածվել:

Չորրորդ՝ թեև տվյալները այն ստույգ նվազագույնն են, որ հարցվածներն են ցանկացել տրամադրել՝ վստահելով գաղտնիության պահպանմանը, դրանք չեն արտացոլում երևույթի իրական մասշտաբները, քանի որ ամենայն հավանականությամբ, սեռական բռնությունը թաքցվում է բռնացողների կողմից մի շարք պատճառներով: Ամենաակնհայտների թվում է «հարկադրման» թյուրըմբռնումը՝ մշտական սեռական զուգընկերոջ դեպքում, ինչպես նաև նույնիսկ անանունության պայմանով իրողությունը խոստովանել չցանկանալը: Թեև մի քանի կին սեռական զուգընկեր ունենալը կարող է հնարավոր համարվել տղամարդկանց կողմից (հատկապես երիտասարդ տղամարդկանց) և հայ հասարակության լայն շրջաններում դա կարող է համարվել նրանց առնականության դրսևորում, կնոջ սեռական հարկադրումն այդուհանդերձ չի ընդունվում ո՛չ հասարակության, ո՛չ հենց իր՝ տղամարդու կողմից որպես «տղամարդավայել» արարք: Հետևաբար, չափազանց քիչ տղամարդիկ կկարողանային անգամ իրենք իրենց խոստովանել, որ այնքան արժեզուրկ են, որ պետք է բռնի ուժով արժանանան սեռական հարաբերություններ ունենալու բարեհաճության:

Ավելի մանրամասն տվյալներ են ներկայացված ստորև՝ **Աղյուսակ 7 –ում՝** 2 փոխհատվող աղյուսակների միջոցով՝ ըստ ընտրանքի տղամարդ հարցվածների հիմնական կենսագրական բնութագրիչների:

Ինչ վերաբերում է *տարիքի* գործոնին, ավելի մեծ տարիքով բռնություն գործադրող տղամարդկանց տոկոսային տվյալները գերազանցում են ավելի երիտասարդներինը՝ բացառությամբ հարբած կնոջ հետ առանց վերջինիս համաձայնության հարաբերություն ունենալուն: Այս կայուն բարձր ցուցանիշը ամենայն հավանականությամբ պայմանավորված է նրանց՝ կանանց հետ ավելի երկարատև հարաբերությունների փորձ ունենալու հանգամանքով:

Հարկ է նշել, որ երիտասարդների համեմատությամբ ավելի տարիքով տղամարդկանց ավելի մեծ տոկոսն է սեռական բռնություն գործադրել (և ավելի հաճախ) հետազոտությանը նախորդած 12 ամիսների ընթացքում (և նշանակալիորեն բարձր տոկոս են կազմում ներկայիս կամ նախկին զուգընկերոջը սեռական հարաբերության հարկադրանքի դեպքերի առումով)՝ բացառությամբ այն իրադրությունների, երբ նրանք են ստիպել հարբած կնոջը կամ այլ տղամարդու հետ միասին են ստիպել կնոջը սեռական հարաբերություն ունենալ: Այս բացառությունների դեպքում տարբերությունը չնչին է (տե՛ս **Աղյուսակ 8**):

Կրթական մակարդակին առնչվող որոշ միտումներ, որոնք բավականին տեսանելի էին կանանց դեմ բռնության այլ ձևերի դեպքում, առանձնակի ուշադրության չեն արժանանում առաջին հերթին այն պատճառով, որ շատ դեպքերում բռնացողների տոկոսը չափազանց նվազ է և վստահության միջակայքի տեսակետից՝ իրար չափազանց մոտ սահմանազատումներ կատարելու համար: Սեռական զուգընկերոջը բռնանալու մասին այլ տվյալներ, ինչպես նաև տղամարդկանց վերաբերմունքը բռնության հանդեպ ցույց են տալիս, որ կրթամակարդակը սերտորեն կապված է բռնության և ՍԶԲ ինքնարդարացման միտվածության հետ: Սեռական բռնության դեպքում այս միտումն ակնհայտաբար արտահայտված չէ: Թեպետև բարձրագույն կրթություն ունեցող հարցվածների տոկոսն իրոք մեծամասամբ ցածր է սեռական բռնությանն առնչվող շատ դեպքերում (հարբած կնոջը սեռական հարաբերության հարկադրման բացառությամբ). Վերոհիշյալ միտումը չի գործում միջնակարգ և միջին մասնագիտական կրթություն ունեցողների պարագայում:

Աղյուսակ 7. Կանանց դեմ սեռական բռնության գործադրումը.տղամարդիկ (Տարածվածությունը կյանքի ընթացքում)

Տղամարդ հարցվածների թվաքանակը, ովքեր պատասխանել են (ինքնուրույն հարցաշարի միջոցով) սեռական բռնության գործադրման մասին հարցերին և այն տղամարդկանց տոկոսը, ովքեր հաղորդել են կանանց դեմ հետևյալ սեռական բռնությունները ***երբևէ գործադրելու*** մասին՝ ըստ կենսագրական բնութագրիչների									
Կենսագրական բնութագրիչներ	Ստիպել է կնոջը/աղջկան սեռական հարաբերություն ունենալ	Սեռական հարաբերություն է ունեցել հարբած կնոջ/աղջկա հետ, ով ի վիճակի չի եղել ընդդիմանալ կամ համաձայնել	Ստիպել է ինտիմ կին զուգընկերոջը հարաբերություն ունենալ	Ստիպել է նախկին ինտիմ կին զուգընկերոջը սեռական հարաբերություն ունենալ	Ստիպել է ինտիմ զուգընկեր չհանդիսացող կնոջը սեռական ահրաբերություն ունենալ	Մեկ այլ տղամարդու հետ միասին ստիպել են կնոջը հարաբերություն ունենալ իրենց հետ	Մեկ այլ տղամարդու հետ սեռական հարաբերություն է ունեցել հարբած կնոջ/աղջկա հետ, ով ի վիճակի չի եղել ընդդիմանալ կամ համաձայնել	Սեռական բռնության ենթարկված կանանց/աղջիկների թիվը	Տղամարդկանց թիվը N =369
Տարիքը									
18-24	6.0%	5.0%	1.0%	1.0%	0.0%	1.0%	0.0%	5.7%	98
25-34	1.0%	6.6%	1.8%	1.9%	0.9%	0.9%	1.9%	4.8%	108
35-49	13.7%	6.1%	6.9%	5.5%	4.6%	0.9%	3.6%	7.0%	112
50-59	9.6%	2.0%	15.3%	8.0%	5.9%	2.0%	4.0%	(11.0%)	51
Կրթությունը									
Հիմնական	*	*	*	*	*	*	*	*	8
Միջնակարգ	8.2%	5.7%	5.1%	3.9%	2.2%	1.8%	2.2%	5.7%	179
Միջին մասնագիտական	6.0%	3.8%	9.3%	(6.3%)	5.7%	1.9%	1.9%	(6.4%)	53
Բարձրագույն	6.2%	5.5%	3.1%	1.6%	1.6%	0.0%	2.4%	5.7%	129
Ամուսնական կարգավիճակը**									
Գրանցված ամուսնություն	9.0%	4.2%	6.9%	2.9%	2.7%	0.5%	2.1%	5.9%	188

Չգրանցված ամուսնություն	(6.1%)	(6.1%)	(3.0%)	(6.3%)	(3.1%)	(0.0%)	(0.0%)	(7.4%)	32
Չամուսնացած	6.2%	5.2%	2.6%	2.6%	1.7%	2.6%	1.8%	4.9%	115
Բնակության վայրը									
Երևան	3.4%	3.9%	2.0%	0.7%	2.0%	0.0%	1.4%	3.5%	150
Այլ քաղաքային	9.3%	7.3%	7.3%	5.4%	1.8%	0.9%	2.7%	8.9%	109
Գյուղական	11.7%	5.4%	6.2%	5.5%	3.6%	2.7%	2.7%	6.6%	110
Զբաղվածությունը* **									
Երբեք չի աշխատել	(8.3%)	(0.0%)	(4.3%)	(4.2%)	(0.0%)	(0.0%)	(0.0%)	(4.5%)	24****
Գործազուրկ	10.6%	6.2%	7.1%	3.6%	3.8%	2.7%	3.6%	9.6%	113
Գրանցված աշխատող	6.6%	5.9%	4.9%	4.4%	3.3%	0.0%	1.6%	5.4%	121
Չգրանցված աշխատող	5.1%	6.3%	4.1%	3.3%	1.1%	0.0%	2.2%	3.8%	93
Ընդամենը	7.6%	5.4%	5.1%	3.5%	2.5%	1.1%	2.1%	6.0%	369

** «Ոչ ֆորմալ միություն», «Ընկերուհի/ համատեղ կյանք չեն վարում/», «բաժանված/ամուսնալուծված» կատեգորիաներում հարցվածների թիվը 25-ից պակաս է եղել, որի պատճառով այս թվային տվյալները չեն ներկայացվել և այս կատեգորիաները չեն ընդգրկվել Աղյուսակում (հետևաբար յուրաքանչյուր սյունակում ներկայացված հարցվածների թիվն այս սեկցիայում ավելի քիչ է, քան հարցվածների ընդհանուր թիվը տվյալ հարցի շուրջ):
*** «Ուսանող», «Ուսումն աշխատանքի հետ համատեղող» և « Երեխայի խնամքի կամ այլ տեսակի արձակուրդում գտնվող» կատեգորիաներում հարցվածների թիվը չափազանց նվազ էր, այդ իսկ պատճառով տվյալները չեն ներկայացվել և այս կատեգորիաները չեն ներառվել Աղյուսակում (հետևաբար հարցվածների ընդհանուր թիվն ըստ սյունակների այս սեկցիայում ավելի քիչ է, քան տրված հարցին պատասխանողների թիվը):
**** Սահմանագծային դեպքերի տվյալները վավեր են համարվում:

Աղյուսակ 8. Վերջին 12 ամիսների ընթացքում տղամարդ հարցվածների կողմից գործադրված սեռական բռնությունը

Վերջին *12ամիսների ընթացքում* կանանց դեմ *սեռական բռնություն գործադրած* տղամարդ հարցվածների տոկոսն ըստ տարիքային խմբերի				
Տարիքային խումբ / **Սեռական բռնության տեսակը**	**I** 18-24 տարեկաններ	**II** 25-34 տարեկաններ	**III** 35-49 տարեկաններ	**IV** 50-59-տարեկաններ

Ստիպել է կնոջը սեռական հարաբերություն ունենալ իր հետ	4.0%	1.0%	9.4%	5.8%
Ստիպել է սեռական զուգընկերոջը սեռական հարաբերություն ունենալ իր հետ	1.0%	1.8%	6.0%	13.4%
Ստիպել է նախկին սեռական զուգընկերոջը սեռական հարաբերություն ունենալ իր հետ	1.0%	1.9%	3.7%	6.0%
Ստիպել է սեռական զուգընկեր չհանդիսացող կնոջը սեռական հարաբերություն ունենալ իր հետ	0.0%	0.9%	2.7%	3.9%
Սեռական հարաբերություն է ունեցել հարբած կնոջ հետ, ով ի վիճակի չի եղել ընդդիմանալ կամ համաձայնել	5.0%	5.7%	4.3%	0.0%
Մեկ այլ տղամարդու հետ սեռական հարաբերություն է ունեցել հարբած կնոջ հետ, ով ի վիճակի չի եղել ընդդիմանալ կամ համաձայնել	0.0%	1.9%	0.0%	0.0%
Մեկ այլ տղամարդու հետ ստիպել է կնոջը սեռական հարաբերություն ունենալ իրենց հետ	1.0%	0.9%	0.0%	0.0%

Ավելի վաղ նշվել էր այն մտահոգիչ փաստը, որ կանանց դեմ սեռական բռնությունների տարածվածությունն անհամեմատելիորեն բարձր էր հետազոտությունը նախորդող 12 ամիսների ընթացքում, քան ավելի վաղ: Այս մտահոգիչ միտումը գործում է նույնիսկ բարձրագույն կրթությամբ հարցվածների դեպքում: Քննվող շրջանում (նշված 12 ամիսների ընթացքում) տարածվածությունը նույնիսկ ավելի բարձր է, քան ողջ կյանքի ընթացքում:

Ամուսնական կարգավիճակի տեսանկյունից թեև բռնացողների ընդհանուր տոկոսային տվյալներն իրարից շատ չեն տարբերվում, այնուամենայնիվ տվյալներն արտացոլում են որոշ հետաքրքիր առանձնահատկություններ:

Օրինական ամուսնություններում տղամարդիկ «լիդերներ» են իրենց կանանց, ընկերուհիներին կամ այլ կանանց սեռական հարաբերություններ պարտադրելու հարցում, մեծամասամբ՝ կանանց: Ամենաբարձր տոկոսն են կազմում չգրանցված /քաղաքացիական / ամուսնությամբ տղամարդիկ, ովքեր հաղորդում են իրենց նախկին զուգընկերներին սեռական հարաբերություններ պարտադրելու դեպքերի մասին:

Նրանց տոկոսն ավելի բարձր է, քան գրանցված ամուսնություն ունեցողների և չամուսնացած տղամարդկանց ցուցանիշներն իրար հետ վերցված: Հատկանշական է, որ ի համեմատություն վերջին երկուսի, չգրանցված/քաղաքացիական կարգով/ ամուսնացած տղամարդիկ չեն հաղորդում կնոջը սեռական բռնության ենթարկելու անգամ մեկ դեպքի մասին՝ իսպառ բացառելով սթափ կամ հարբած կնոջ, ինչպես նաև այլ տղամարդու հետ միասին բռնանալու դեպքերը: Նրանք նաև հաղորդում էին իրենց զուգընկերը չհանդիսացող կնոջը և տարբեր կանանց բռնանալու դեպքերի ամենաշատ տարածվածության մասին:

Չամուսնացած տղամարդկանց պարագայում ամենաբարձր տոկոսն են կազմում մեկ այլ տղամարդու հետ կնոջը սեռական բռնության ենթարկելու դեպքերը:

Ինչ վերաբերում է մեկ տղամարդու կողմից տարբեր կանանց հանդեպ սեռական բռնության գործադրմանը, օրինական կարգով ամուսնացած տղամարդիկ հաղորդում էին 2, 3 կամ նույնիսկ 4 տարբեր կանանց բռնանալու մասին, մինչդեռ քաղաքացիական կարգով ամուսնացածները հաղորդում էին 1 կնոջը բռնանալու մասին (չնայած որ այդ խմբում ընդհանուր հաշվով ամենաբարձր տարածվածությունն է գրանցվել), ինչպես վարվել էին նաև «չամուսնացած տղամանդկանց» կատեգորիայի ներկայացուցիչների երկու երրորդը:

Ինչ վերաբերում է վերոհիշյալ մտահոգիչ միտմանը, այն է՝ վերջին (12 ամիսների ընթացքում) պատահարների մեծացող «չափաբաժնին» սեռական բռնության ընդհանուր տարածվածության համատեքստում, ապա հարկ է նշել, որ այն ակնհայտ տարածում է գտել չամուսնացած տղամարդկանց և քաղաքացիական կարգով ամուսնացած տղամարդկանց պարագայում, մինչդեռ օրինական կարգով ամուսնացած տղամարդկանց դեպքում սեռական բռնության տարածվածությունը ժամանակային «համաչափ» բաշխվածություն ունի:

Ընտրանքի տվյալների բաշխվածությունն ըստ բռնացող տղամարդկանց ***բնակության վայրի*** զգալի տարբերություններ է երևան հանում՝ այսպիսով ցույց տալով, որ բնակավայրը ՍԶԲ –ի այս տեսակի հետ սերտորեն առնչվող գործոն է: Տվյալները նաև հաստատում են, որ այլ քաղաքային բնակավայրերի բնակիչները /բացառությամբ երևանաբնակների/ շատ ավելի նման են գյուղաբնակներին, քան Երևանաբնակներին: Ամենայն հավանականությամբ սա կապված է այն փաստի հետ, որ նրանց ապրելաոճը

և հոգեկերտվածքը շատ մոտ են իրար և այդ պատճառով նրանք նույն վարքագիծն են դրսևորում: Հարկ է նշել, որ բռնացողների տոկոսը զգալիորեն ցածր է Երևանաբնակների մոտ՝ բացառությամբ այն դեպքի, երբ բռնանում են տվյալ ժամանակամիջոցում իրենց զուգընկերը չհանդիսացող կնոջը (թեև գյուղաբնակների համեմատությամբ ցածր տոկոս են կազմում, երևանաբնակների տոկոսային ցուցանիշները գրեթե համընկնում են այլ բնակավայրերի բնակիչների ցուցանիշներին: Ըստ նրանց տվյալների, Երևանաբնակները երբեք չեն միացել (կամ չեն միացվել) մեկ այլ անձի՝ կնոջը սեռական հարաբերություն հարկադրելու նպատակով: Բացի այդ, հարբած կնոջը բռնացողների տոկոսը նման իրադրությունում ավելի ցածր է (1.4%)՝ համեմատած գյուղաբնակների (2.7%) և այլ քաղաքային բնակավայրերի բնակիչների հետ (2.7%): Հարկ է նաև նշել, որ ընդհանուր առմամբ գյուղերի և այլ քաղաքային բնակավայրերի /բացառությամբ Երևանի/ բնակիչները «առաջ են անցնում» Երևանի բնակիչներից սեռական բռնության ակտերի տարածվածության դինամիկայով (անցած 12 ամիսների կտրվածքով), մինչդեռ Երևանաբնակների պարագայում աճը շատ դանդաղընթաց է և տարածվածությունն ըստ տեղանքի ու կյանքի տևողության ավելի հավասարաչափ է բաշխված:

Ինչպես արդեն նշվել է, կանանց դեմ սեռական բռնություններ գործած ինքնաբացահայտված բռնարարների ցածր տոկոսների պատճառով և քանի որ հաճախ տարբերությունների տոկոսային արտահայտությունը ավելի փոքր կամ փոքր-ինչ մեծ է վստահության միջակայքից, անհնար է կանխորոշել գերակա միտումները և միայն հնարավոր է բացահայտել մի քանի առանձնահատկություններ: Իրադրությունը նույնն է, երբ տվյալների վերլուծությունը կատարվում է ***զբաղվածության*** տեսակետից: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ թվում է՝ աշխատանքը ծանրակշիռ մի գործոն է: Տվյալների վերլուծությունը չի բացահայտում որևէ միատեսակ և անմիջական օրինաչափություն, քանի որ ցանկացած պոտենցիալ «օրինաչափության» դեպքում ի հայտ են գալիս բազմաթիվ խախտումներ և շեղումներ:

Սեռական բռնարարների ամենամեծ տոկոսն են կազմում գործազուրկները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին ինտիմ կին զուգընկերոջն են ստիպում սեռական հարաբերությունների մեջ մտնել իրենց հետ:

Սեռական բռնություն գործադրող տղամարդկանց ամենացածր տոկոսն ընդհանուր առմամբ կազմում են երբևէ աշխատանք չունեցած տղամարդիկ: Այս կատեգորիան հատուկ դեպք է: Առաջին հերթին սա միջանկյալ դեպք է՝ բացարձակ թվային տվյալների առումով: Երկրորդ՝ այս կատեգորիայի տղամարդկանց զրո տոկոսն է գրացվել սեռական հարաբերություն ունենալու դրվագներում (թե՛ մենակ, թե՛ այլ տղամարդու հետ) չափազանց հարբած կնոջ հետ, ով անընդունակ է եղել դիմադրել կամ համաձայնվել, կամ այդ ժամանակահատվածում իր զուգընկերը չհանդիսացող կնոջ հետ՝ վերջինիս հարկադրելով հարաբերություն ունենալ, կամ մեկ այլ տղամարդու հետ կնոջը բռնանալու դեպքերում:

Սեռական բռնության տոկոսային տվյալներն իրար մոտ են գրանցված կամ չգրանցված աշխատողների դեպքում: Փաստորեն, ինչպես պարզ երևում է **Աղյուսակ 7-ի** տվյալներից, տարբերությունները չնչին են: Հարցվածների այս կատեգորիաները տարբերվում են և՛ գործազուրկ հարցվածներից, և՛ երբևէ աշխատանք չունեցած տղամարդկանցից:

Զգալի տարբերություն կա նաև գործազուրկ հարցվածների և երբևէ աշխատանք չունեցած տղամարդկանց միջև:

Կանանց հանդեպ բռնությունը տանից դուրս

ԿԴԲ չի սահմանափակվում միայն սեռական զուգընկերոջ բռնությամբ: Կին հարցվածների կողմից ինքնուրույն լրացված հարցաշարը, պարունակում էր հարցեր, որոնք վերաբերում էին իրենց՝ տանից դուրս ֆիզիկական միջին ծանրության և ծանրագույն բռնության 3 տեսակներին ենթարկվելուն ուսումնասիրությունից առաջ եռամսյա ժամկետում: Տվյալները ներկայացված են ստորև՝ **Աղյուսակ 9 –ում**:

Հատուկ կանորություն ունի այն փաստը, որ ինքնուրույն հարցաշարը նաև պարունակում էր «Այլ» ընտրանքը (ֆիզիկական բռնության դեպք/եր), սակայն հարցվածներից և ոչ մեկը չի հաղորդել այդ ժամանակահատվածում ֆիզիկական բռնության այլ ձևերին ենթարկվելու մասին:

Աղյուսակ 9. Ֆիզիկական բռնությունը տանից դուրս. կանայք(տարածվածությունը ժամանակի ընթացքում)
Տվյալները վերցված են ինքնուրույն հարցաշարից

Ընտրանքի կին հարցվածների տոկոսը, ովքեր լրացրել են ինքնուրույն հարցաշարը և հաղորդել վերջին 3 ամսում տանից դուրս տարբեր *ֆիզիկական բռնությունների ենթարկվելու* մասին	
Ֆիզիկական բռնության տեսակները	**Կանայք** **(տանից դուրս ֆիզիկական բռնության ենթարկվելու հաղորդումներ)** **N = 682**
	Ֆիզիկական բռնության որոշակի տեսակին ենթարկված հարցվածների տոկոսը
Նրա դեմքին են հարվածել կամ խփել	3.3%
Սպառնացել են դանակով կամ այլ զենքով (բացառությամբ հրազենի)	1.3%
Սպառնացել են հրազենով	0.9%
Այլ	0.0%
Ենթարկվել է ֆիզիկական բռնության առնվազն մեկ տեսակին (ընտրանքի կանանց տոկոսն ըստ ինքնուրույն հարցաշարի վերջին 3 ամիսների ընթացքում տանից դուրս ենթարկվել են միջին ծանրության և ծանրագույն ֆիզիկական բռնությանը)	3.7%

Տանից դուրս կանանց դեմ բռնությունների տարածվածությունը կարող է անկարևոր թվալ: Ընտրանքի միայն 3.7% կազմող կանայք են հաղորդել ոչ զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության ենթարկվելու մասին: Սակայն, հաշվի առնելով այն փաստը, որ տոկոսներն արտացոլում են երևույթի տարածվածությունը որոշակի ժամանակահատվածում՝ ընդ որում՝ շատ կարճ ժամանակահատվածում, այդ տոկոսները չափազանց բարձր են անկարևոր լինելու համար: Անտարակույս, տոկոսային տվյալներն ավելի բարձր կլինեին 12-ամսյա ժամանակահատվածում և անգամ ավելի բարձր՝ կյանքի ընթացքում տարածվածության ուսումնասիրման դեպքում: Տվյալները նաև ցույց են տալիս, որ այս կանանց մեծամասնությունը ենթարկվել են ֆիզիկական բռնության մեկից ավելի ձևերի ոչ զուգընկերների կողմից: Չկան բավականաչափ իրեղեն ապացույցներ՝ այն վարկածը առաջ քաշելու համար, թե այս կանայք հատուկ «խումբ» են կազմում, որը որոշակի պատճառով բռնության և սպառնալիքների թիրախ է դառնում, թե այս կանայք պարզապես փողոցային

հանցագործությունների և պատահական հարձակման զոհ են և այդ հարձակման ընթացքում նրանց ոչ միայն դեմքին են հարվածել կամ խփել, այլև սպառնացել զենքով:

***

Ոչ զուգընկերոջ կողմից կանանց ֆիզիկական բռնության ենթարկվելու վերաբերյալ տվյալները՝ բաշխված ըստ հիմնական կենսագրական բնութագրիչների, ներկայացված են ստորև՝ **Աղյուսակ 10 –ում:**

Աղյուսակ 10 Ֆիզիկական բռնությունը տանից դուրս. Կանայք (տարածվածությունը ժամանակի ընթացքում)

Տվյալները վերցված են ինքնուրույն հարցաշարից

Ընտրանքի կին հարցվածների տոկոսը, ովքեր լրացրել են ինքնուրույն հարցաշարը և հաղորդել վերջին 3 ամսում տանից դուրս տարբեր ***ֆիզիկական բռնությունների ենթարկվելու*** մասին **N= 682** **Հարցվածներ, ովքեր դրական պատասխան են տվել այն հարցին, որ**				
Կենսագրական բնութագրիչներ	Նրանց դեմքին են հարվածել կամ խփել	Նրանց սպառնացել են դանակով կամ այլ զենքով (բացառությամբ հրազենի)	Նրանց սպառնացել են հրազենով	Կանանց թիվը N =682
Տարիքը				
18-24	1.7%	1.7%	1.7%	117
25-34	2.0%	1.0%	0.5%	201
35-49	2.5%	0.8%	0.4%	238
50-59	8.6%	2.4%	1.6%	126
Կրթությունը				
Հիմնական	*	*	*	7
Միջնակարգ	2.8%	0.8%	1.2%	250
Միջին մասնագիտական	4.1%	1.6%	0.5%	192
Բարձրագույն	3.0%	1.7%	0.9%	233
Ամուսնական կարգավիճակը				
Գրանցված ամուսնություն	1.6%	0.0%	0.0%	425
Չգրանցված ամուսնություն	5.1%	2.7%	1.4%	77
Ոչ պաշտոնական միություն (Ապրում է զուգընկերոջ հետ, ամուսնացած չեն)	*	*	*	6
Ընկեր/ընկերուհի	*	*	*	7

(չեն վարում համատեղ կյանք)				
Չամուսնացած	3.8%	3.8%	2.9%	104
Բաժանված/ ամուսնալուծված	(13.2%)	(5.4%)	(2.7%)	38
Այրի	(12.0%)	(4.2%)	(4.2%)	25
Բնակության վայրը				
Երևան	3.3%	1.1%	0.4%	264
Այլ քաղաքային	4.0%	1.5%	1.0%	202
Գյուղական	2.7%	1.4%	1.4%	216
Զբաղվածությունը**				
Երբեք չի աշխատել	0.8%	0.8%	0.8%	129
Ուսանող	(2.4%)	(2.4%)	(2.4%)	41
Գործազուրկ	3.9%	1.1%	1.1%	281
Գրանցված աշխատող	4.5%	1.3%	0.7%	154
Չգրանցված աշխատող	5.0%	3.4%	0.0%	60
Երեխայի խնամքի կամ այլ տեսակի արձակուրդում է	*	*	*	17
Ընդամենը	**3.3%**	**1.3%**	**0.9%**	**682**

** Քանի որ «ուսումն աշխատանքի հետ համատեղման» կատեգորիայում միայն 1 հարցված կար, իսկ 1 հարցված պատասխան չէր տվել, այս կատեգորիաները չեն ներկայացվել (հետևաբար ընտրանքի բոլոր հարցվածների ընդհանուր թիվը՝ ներկայացված այս սեկցիայի յուրաքանչյուր այնուակում, ավելի քիչ է, քան հարցին պատասխանած բոլոր հարցվածների ընդհանուր թիվը):

Տվյալները ցույց են տալիս, որ թեպետև բոլոր այս կենսագրական բնութագրիչներն ազդեցություն ունեցող գործոններ են, նրանց ազդեցությունը տարբեր աստիճանի է և հազվադեպ է անմիջական լինում: Կարելի է մատնանշել որոշ սահմանափակ օրինաչափություններ, սակայն միշտ վերապահումով:

Կարևոր նախապայման է այն, որ բռնության՝ «զենքով սպառնալու» ձևը հատուկ դեպք է բոլոր հիմնական գործոնների համար: Այն հնարավոր չէ ներառել որևէ միտման մեջ (ինչքան էլ որ թույլ ու հասական լինի), որ մյուս երկու միտումները կարող են դրսևորել:

Տարիքային գործոնը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ այն նպաստում է բռնության տարածմանը, հատկապես մեծանում է խփելու հավանականությունը: Այնուամենայնիվ պարզ չէ, թե ինչու ավելի տարիքով կանայք (և հատկապես 50-ից 59

տարեկանները) են դառնում հարձակումների ու սպառնալիքի թիրախ: Զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության տոկոսը ամենաբարձրն է ավագ տարիքային խմբում: Եթե շեշտը դրվեր կյանքի ընթացքում տարածվածության վրա, այս միտումը լիովին հասկանալի կլներ. քանի որ ավելի մեծ տարիքով կանայք ավելի երկար են ապրում, տանից դուրս պատահական հարձակման զոհ դառնալու հավանականությունը ավելի բարձր կլիներ: Քննվող ժամանակահատվածը ընդամենը հետազոտությունից առաջ ընկած 3 ամիսն է ընդգրկում և, այսպիսով, համահարթեցնում է կյանքի ընթացքում երևան եկող տարբերությունները: Թեպետ երիտասարդ սերունդը կարող է ավագ սերնդին պատշաճ հարգանքով չվերաբերվել, իսկ տղամարդիկ կարող են առնականության տարբեր պատկերացումներ ունենալ, առնականության պատկերացումներից ոչ մեկն այդուհանդերձ չի խրախուսելու կամ հանդուրժելու կանանց դեմ բռնությունը, հատկապես տարեց կանանց դեմ ոչ զուգընկերոջ, ընտանիքի անդամների կամ բարեկամների կողմից գործադրվող բռնությունը: Հետևաբար, անհրաժեշտ է շարունակական հետազոտություն՝ պարզելու համար, թե ինչու է դրսում հարված ստացած տարեց կանանց տոկոսը 4 կամ 5 անգամ գերազանցում երիտասարդ կանանց թիվը (համապատասխանաբար 8.6% ընդդեմ 1.7% և 2.0% ՝ 18-24 և 25-34-տարեկանների պարագայում):

Ավելի ***բարձր կրթամակարդակը*** կանանց համար ֆիզիկական բռնությունից կամ զենքով սպառնալիքից պաշտպանվածության երաշխիք չէ: Բացակայում է միատեսակ օրինաչափությունը: Տարբեր կրթամակարդակներով կանայք կարող են տարբեր հանգամանքներում տարբեր բռնությունների թիրախ դառնալ: Հարվածի թիրախ դարձած կանանց ամենաբարձր տոկոսն են կազմում միջին մասնագիտական կրթություն ունեցողները, թեպետև փաստացի տարբերություն չկա միջնակարգ և բարձրագույն կրթություն ունեցողների միջև:

Ամուսնական կարգավիճակը ավելի լավ կանխորոշիչ է: Տվյալները երևան են հանում բավականին պարզ մի օրինաչափություն:. Նույնիսկ « հատուկ դեպքն է» գրեթե համապատասխանում դրան: Ամուսնալուծված կամ զուգընկերոջից բաժանված կանանց (13.2%) և այրիների (12.0%) զգալիորեն բարձր տոկոսն է հարված ստացել՝ ի համեմատություն այլ կատեգորիաների կանանց, այդ թվում՝ չամուսնացած կանանց (3.8%), նաև՝ օրինական (1.6%) և քաղաքացիական կարգով (5.1%) ամուսնացած

կանանց: Քանի որ բռնարարների ինքնությունը չի նշվում, անհնար է տարորոշել փողոցային հարձակման դեպքերը կանաց ծանոթ անձանց կողմից (կոլեգաներ, բարեկամներ, հարևաններ, և այլն) իրագործվող բռնարարքներից: Սակայն այն փաստը, որ օրինական ամուսնացած կանայք ամենաքիչն են զոհ դառնում, ցույց է տալիս, որ պոտենցիալ հանցագործները քաջատեղյակ են, որ այս կանայք ամուսիններ ունեն, որը կարող է էֆետկիվ կանխարգելիչ միջոց հանդիսանալ:

Ինչ վերաբերում է զոհերի ***բնակության վայրին***, ոչ զուգընկերոջ ֆիզիկական բռնության դեպքերը հաղորդող կանանց տոկոսը նվազագույն չափով է բարձր այլ քաղաքային բնակավայրերի /բացառությամբ Երևանի/ բնակիչների տոկոսային տվյալներից: Ամեն դեպքում տարբերությունները չնչին են և հիմնականում, անկախ բնակավայրից, կանայք հավասարապես ենթակա են ֆիզիկական բռնության:

Զբաղվածության գործոնի հիման վրա տվյալների դասակարգումը թեև անուղղակիորեն, սակայն ցույց է տալիս, որ բռնությունն աշխատավայրում կարող է գործոն հանդիսանալ: Հետազոտությանը նախորդող 3 ամիսների ընթացքում չգրանցված աշխատողների 5.0%-ը և գրանցված աշխատող կանանց 4.5%-ը հաղորդել են ֆիզիկական հարձակման ենթարկվելու մասին՝ ի հակադրություն երբևէ չաշխատած կանանց 0.8%-ի:

Տղամարդկանց հանդեպ բռնություն

Գենդերային բռնությունը գրեթե միշտ հատկապես Հայաստանի նման երկրներում ուղղված է կանանց դեմ: Կանայք ենթակա են բռնության, քանի որ նրանք կին են և բռնացողներն ուժ են կիրառում կանանց հանդեպ գերիշխանության հասնելու համար հատկապես սեռական զուգընկերոջ հետ հարաբերություններում: Գենդերային բռնությունն ունի միակողմանի ուղղվածություն և փոխադարձ չէ: Որպես կանոն՝ կանայք տղամարդկանց բռնության չեն ենթարկում, իսկ եթե դիմում են բռնության, ապա ինքնապաշտպանվելու նպատակով:

Միևնույն ժամանակ բռնության, հատկապես ֆիզիկական բռնության, ենթարկված տղամարդկանց մասնաբաժինն ու բացարձակ թվային տվյալները շատ ավելի բարձր են, քան կանանց շրջանում: Սակայն, անկախ այն հանգամանքից, թե բռնության ենթարկվել են կանայք թե տղամարդիկ, բռնացողների ճնշող մեծամասնությունը

տղամարդիկ են: Այլ կերպ ասած, սա սովորաբար տղամարդկանց կողմից կանանց հանդեպ կամ տղամարդկանց կողմից տղամարդկանց հանդեպ բռնություն է, մինչդեռ կանանց կողմից տղամարդկանց հանդեպ բռնությունը դեռ մեծամասամբ բացառություն է, նույնիսկ երբ գործադրվում է ինքնապաշտպանական նպատակներով:

Տղամարդկանց դեմ ֆիզիկական բռնության տվյալները ներկայացված են ստորև՝ **Աղյուսակ 11 –ում:** Ելնելով բռնության տեսակների լրջությունից (փաստացի դրանք մեծամասամբ հավասարազոր են ծանր հանցատեսակներին), որոնց մասին հաղորդում են ընտրանքի տղամարդիկ, պարզ է դառնում, որ գոնե հայկական համատեքստում դա գերազանցապես տղամարդկանց բռնություն է տղամարդկանց հանդեպ: Անհրաժեշտ է հիշել,որ հետազոտության տվյալները անգամ մոտ չեն հայ տղամարդկանց հանդեպ գործադրվող բռնությունների իրական ծավալներին, քանի որ հարցվածներին չեն տրվել հավելյալ հարցեր այլ տեսակի բռնությունների մասին:

Աղյուսակ 11. Տղամարդկանց հանդեպ ֆիզիկական բռնությունը

Ընտրանքի տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր հաղորդել են ***ֆիզիկական բռնության*** հետևյալ ձևերին ***ենթարկվելու*** մասին (Տղամարդկանց թվաքանակը N=767)	
Թալանվել է	16.3%
Հարվածել են	42.6%
Սպառնացել են դանակով, ջարդված շշով կամ այլ զենքով (բացառությամբ հրազենի)	15.5%
Սպառնացել են հրազենով	10.2%
Սպառնացել են զենքով (դանակ նն և/կամ հրազեն)	17.8%
Ֆիզիկական բռնության առնվազն մեկ տեսակին ենթարկված տղամարդ հարցվածների տոկոսը	**49,3%**

Այնուամենայնիվ հետազոտության տվյալները պարզորոշ կերպով ցույց են տալիս, որ ֆիզիկական բռնությունը լայն տարածվածություն ունի երկրում: Փաստորեն, ընտրանքի տղամարդ հարցվածների կեսը ենթարկվել են ծանր ֆիզիկական բռնության

վերոնշյալ տեսակներից առնվազն մեկին: Բացի այդ, ինչպես վկայում են տվյալները, հարցվածների մեծ մասը ենթարկվել է բռնության երկու կամ ավելի տեսակներին:

Հատկապես մտահոգիչ է այն, որ զենքով սպառնալիք ստացած հարցվածների տոկոսը բավականին մեծ է: Փաստորեն յուրաքանչյուր հինգերորդ հարցվածին սպառնացել են զենքով: Եվ նորից, տվյալները վկայում են, որ նրանց մեծ մասին ոչ միայն դանակով (ջարդված շշով, և այլն.) են սպառնացել, կամ ատրճանակով, այլ երկուսով միաժամանակ:

Նաև հարկ է փաստել, որ թալանվածների տոկոսը ևս բավականին բարձր է, քանի որ հարցվածներից յուրաքանչյուր վեցերորդը թալանվել է: Տվյալները հիմք են տալիս վերանայելու (եթե ոչ կասկածի տակ առնելու) այն ավանդական տեսակետը, որ փողոցային հանցագործությունների տեսակետից Հայաստանն ապահով երկիր է: Պաշտոնական վիճակագրությունը, թվում է, այդ տեսակետին է հարում, քանի որ այն լուրջ հանցագործությունների թվաքանակի փոքր աճ է արձանագրում[46]: Չնայած որ հետազոտության տվյալներն արտացոլում են միայն տարածվածությունը, այլ ոչ թե վերոհիշյալ ծանր քրեորեն պատժելի հանցագործությունների ընդգրկումը, այդուհանդերձ ամենայն հավանականությամբ այդ հանցանքները թաքցվում են:

Ստորև **Աղյուսակ 12–ում** տեղ գտած տվյալները ներկայացնում է տղամարդկանց՝ կյանքի ընթացքում ֆիզիկական բռնության ենթարկվելու տարածվածությունը՝ դասակարգված ըստ 5 հիմնական բնութագրիչների:

Աղյուսակ 12. Տղամարդկանց հանդեպ ֆիզիկական բռնությունը (Տարածվածությունը կյանքի ընթացքում)

Ընտրանքի տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր հաղորդել են ***ֆիզիկական բռնության*** հետևյալ ձևերին ***ենթարկվելու*** մասին՝ ըստ կեսագրական բնութագրիչների					
Կենսագրական բնութագրիչներ	**Թալանվել է**	**Հարվածել են դեմքին կամ խփել**	**Սպառնացել են դանակով և այլն (բացառությամբ հրազենի)**	**Սպառնացել են հրազենով**	**Տղամարդկանց թիվը N = 767**
Տարիքը					
18-24	11.1%	45.8%	11.8%	4.6%	**153**
25-34	14.8%	39.7%	10.5%	5.3%	**209**
35-49	18.4%	43.2%	18.9%	15.8%	**250**

[46] 2010-2014թթ. դինամիկան ներկայացված է Հայաստանի վիճակագրական տարեգրքում *2015*. Երևան, ՀՀ, ԱՎԾ, 2015, էջ 195.

50-59	20.3%	42.6%	20.6%	13.6%	**155**
Կրթությունը					
Հիմնական	3.1%	28.1%	6.3%	6.3%	**32**
Միջնակարգ	13.4%	39.7%	12.9%	7.5%	**403**
Միջին մասնագիտական	19.0%	45.2%	18.3%	9.6%	**126**
Բարձրագույն	22.3%	49.0%	20.5%	16.7%	**206**
Ամուսնական կարգավիճակը*					
Գրանցված ամուսնություն	15.7%	39.2%	16.0%	12.0%	**408**
Չգրանցված ամուսնություն	16.9%	42.2%	15.7%	6.2%	**83**
Ընկերուհի (համատեղ կյանք չեն վարում)	(17.9%)	(46.4%)	(14.3%)	(10.7%)	**28**
Չամուսնացած	15.0%	47.9%	14.1%	7.1%	**213**
Բաժանված / ամուսնալուծված	(29.2%)	(41.7%)	(25.0%)	(26.1%)	**24****
Բնակության վայրը					
Երևան	20.9%	51.2%	19.0%	11.3%	**258**
Այլ քաղաքային	18.1%	45.6%	19.1%	15.7%	**226**
Գյուղական	10.6%	42.6%	9.5%	5.0%	**283**
Զբաղվածությունը * **					
Երբեք չի աշխատել	(5.0%)	(42.5%)	(12.5%)	(2.5%)	**40**
Ուսանող	(8.3%)	(41.7%)	(8.3%)	(8.3%)	**24**
Գործազուրկ	17.3%	41.4%	18.5%	12.6%	**249**
Գրանցված աշխատող	18.8%	45.1%	17.0%	10.8%	**224**
Չգրանցված աշխատող	15.4%	41.9%	11.9%	8.4%	**227**
Ընդամենը	**16.3%**	**42.6%**	**15.5%**	**10.2%**	**767**
Փակագծերում բերված տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա:					

* Քանի որ « Ոչ ֆորմալ միություն» և «Այրի» կատեգորիաների հարցվածների քանակը համապատասխանաբար 9 և 2 էր (25-ից պակաս), այս կատեգորիաները չեն ներկայացվել և հետևաբար, հարցվածների ընդհանուր թվաքանակը «Ամուսնական կարգավիճակ» սեկցիայում 767-ից պակաս է:
**Սահմանագծային դեպքերի տվյալները վավեր են համարվում:

*** Քանի որ «ուսման համատեղումն աշխատանքի հետ» կատեգորիայում կային միայն 2 հարցվածներ և «Երեխայի խնամքի կամ այլ տեսակի արձակուրդում» կատեգորիայում՝ 1 հարցված, այս կատեգորիաները չեն ներկայացվել և, հետևաբար, այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը 767-ից պակաս էր:

Տարիքի գործոնի վրա հիմնված հետազոտության տվյալների դասակարգումը հանգեցնում է 2 եզրակացության: Առաջին՝ ծանր և դաժան բռնության ենթարկված հարցվածների տոկոսը (թալանվել են և ենթարկվել զենքով սպառնալիքի) զգալիորեն բարձր է ավելի բարձր տարիքային խմբերում: Ամենաերիտասարդ խմբի համեմատությունն ամենաբարձր տարիքային խմբի հետ ցույց է տալիս, որ ֆիզիկական բռնության այս տեսակների տարածվածությունը գրեթե երկու կամ անգամ երեք անգամ բարձր է վերջին խմբի դեպքում (11.1% ընդդեմ 20.3%, 11.8% ընդդեմ 20.6% և 4.6% ընդդեմ 13.6%): Սա «նորմալ» դինամիկա է, քանի որ ավելի բարձր տարիքի մարդիկ բռնության ենթարկվելու ավելի մեծ հնարավորություն ունեին պարզապես հետազոտության անցկացման ժամանակ ավելի երկար կյանք ապրած լինելու պատճառով:

Երկրորդ՝ ֆիզիկական բռնության ավելի չափավոր, սակայն ոչ պակաս լուրջ և մեծամասամբ թաքցվող տեսակ է զարգանում (ապտակելը կամ խփելը): Հարցվածների ամենաբարձր տոկոսը, որը հաղորդում է բռնության հենց այդ տեսակին ենթարկվելու մասին, ամենաերիտասարդ տարիքային խումբն է՝ 18-24 տարեկաններ: Սա պարզորոշ կերպով ցույց է տալիս, որ երիտասարդների շրջանում աճում է ագրեսիվ վարքի և դրան ենթարկվելու միտումը: Եվ տարբերությունը մյուս տարիքային խմբի համեմատ (25-35 տարեկաններ) զգալի է (45.8% ընդդեմ 39.7%):

Կրթության գործոնը երևան է հանում շատ անմիջական հստակ մի օրինաչափություն, որում չկան բացառություններ: Միևնույն ժամանակ այդ օրինաչափությունը շատ տարօրինակ է: Կրթամակարդակը դրական ազդեցություն ունի բռնության կանխման վրա: Ինչքան բարձր է մարդու կրթամակարդակը, այնքան մեծ է բռնության վերոհիշյալ տեսակներին ենթարկվելու հավանականությունը: Հատկապես տպավորիչ է ընդհանուր կրթությամբ և բարձրագույն կրթությամբ տղամարդկանց միջև ընկած տարբերությունը: Թալանի ենթարկված բարձրագույն կրթությամբ անձանց տոկոսը 7 անգամ գերազանցում է ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողներին (22.3% ընդդեմ 3.1%): Այս երկու խմբերի միջև տարբերությունը, չափազանց ընգծված չլինելով՝ զգալի է, երբ խոսքը վերաբերում է

ապտակելու կամ խփելու միջոցով իրականացվող ֆիզիկական բռնությանը (համապատասխանաբար 49.0% և 28.1%): Այս տարբերությունը խորանում է զենքով սպառնալիք ստանալու իրադրություններում (թեև ընդհանուր կրթությամբ տղամարդկանց 6.3%-ը ստացել են սպառնալիք դանակով կամ հրազենով, նույնպիսի իրավիճակում հայտնված բարձրագույն կրթությամբ տղամարդկանց տոկոսը համապատասխանաբար 20.5% և 16.7% է):

Կարող է թվալ, որ ավելի բարձր կրթաստիճանը ավելի շատ ֆիզիկական բռնության է զարկ տալիս կամ խթանում: Հետազոտության տվյալները բավարար չեն պատասխանելու «Ինչու՞» հարցին: Հնար

ավոր բացատրությունների շարքում կարող էր լինել ավելի կրթված մարդկանց ավելի մեծ ցանկությունը հաղորդելու ֆիզիկական բռնության ենթարկվելու մասին: Ավելի ցածր կրթություն ունեցող անձինք չէին ցանկանա ընդունել, որ իրենք ենթարկվել են ֆիզիկական բռնության, քանի որ նրանք ավելի են հակված թաքուն պահելուն և «առնականության» խիստ ու կարծրատիպային տեսակետներին հարելուն:

Ինչ վերաբերում է ***ամուսնական կարգավիճակին***, հետազոտության տվյալները չեն հանգում միասնական որևէ օրինաչափության: Ընդհանուր առմամբ կնոջից/ ընկերուհուց բաժանված տղամարդիկ ֆիզիկական բռնության ենթարկվելու ամենաբարձր հավանականությունն ունեն:

Բնակության վայրի մասին տվյալները ցույց են տալիս, որ ընդհանուր առմամբ քաղաքային և գյուղական բնակավայրերի բնակիչների միջև մեծ տարբերություն կա: Տարբերությունը հատկապես ակնառու է ֆիզիկական բռնության ավելի լուրջ ու ծանր դեպքերում՝ գյուղաբնակների շրջանում բռնության ենթարկվածների թիվը կրկնակի անգամ ցածր լինելով քաղաքաբնակների թվից: Թեպետև գյուղաբնակների ընդամենը 10.6% է հաղորդել թալանի ենթարկվելու մասին, Երևանում նրանց տոկոսը 20.9% է և այլ քաղաքային բնակավայրերում՝ 18.1%: Գյուղաբնակների 9.5%-ին սպառնացել են դանակով կամ նմանատիպ զենքով, իսկ 5.0%-ին՝ ատրճանակով, մինչդեռ Երևանում ստառնալիքի տակ հայտնված հարցվածների տոկոսը համապատասխանաբար 19.0% և 11.3% էր, իսկ այլ քաղաքային բնակավայրերում՝ համապատասխանաբար 19.1% և 15.7%:

Ինչպես երևում է ***զբաղվածության կարգավիճակը*** ամենայն հավանականությամբ գործոն չէ, քանի որ որևէ հստակ օրինաչափություն չկա գործազուրկների, աշխատողների կամ ուսանողների համար, կամ նրանց միջև տարբերությունների համար:

***

Կարևոր հարց է, թե տղամարդկանց ենթարկվածությունը ֆիզիկական բռնությանը կապված է արդյոք նրանց սեռական զուգընկերոջ հանդեպ բռնության գործադրման հետ: Հատկապես ուշադրության է արժանի այն հանգամանքը, թե արդյոք նրանց՝ ֆիզիկական բռնության ենթարկվելը որևէ կերպ ազդում է իրենց կին սեռական զուգընկերների դեմ ֆիզիկական բռնության գործադրելուն: **Աղյուսակ 13 – ն** ներկայացնում է համապատասխան տվյալներ՝ համեմատելու բռնացող և չբռնացող տղամարդ ինտիմ զուգընկերների կողմից ֆիզիկական բռության գործադրումը:

Աղյուսակ 13. Բռնացող և չբռնացող տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր ենթարկվել են որևէ տեսակի ֆիզիկական բռնության

Իրենց ինտիմ զուգընկերոջը ֆիզիկական բռնության *ենթարկած/ չենթարկած* տղամարդկանց և Ֆիզիկական բռնության տրված տեսակին *ենթարկված* տղամարդկանց տոկոսը N=696				
Տղամարդ հարցվածներ, ովքեր հաղորդել են, որ իրենք	Երբևէ զուգընկեր ունեցած տղամարդկանց տոկոսն այդ բռնացող (և չբռնացող) տղամարդկանցից, ովքեր			
	Թալանվել են	Դեմքին կամ մարմնին հարված են ստացել	Դանակով և այլ զենքով սպառնալիք են ստացել(բացառությամբ հրազենի)	Հրազենով սպառնալիք են ստացել
Ապտակել են զուգընկերոջը կամ իրեր շպրտել՝ նրան վնասելու նպատակով	**23.3%**	**58.9%**	**27.8%**	**23.3%**
Չեն ապտակել զուգընկերոջը կամ իրեր շպրտել՝ նրան վնասելու նպատակով	**16.1%**	**41.4%**	**15.1%**	**9.0%**
Հրել կամ քաշքշել են զուգընկերոջը	**29.1%**	**62.0%**	**29.1%**	**22.8%**
Չեն հրել կամ քաշքշել են զուգընկերոջը	**15.7%**	**41.4%**	**15.2%**	**9.3%**

Բռունցքով կամ որևէ բանով, որ կարող է վնասել, խփել է զուգընկերոջը	25.0%	(60.7%)	(21.4%)	(25.0%)
Չեն խփել զուգընկերոջը բռունցքով կամ որևէ բանով, որ կարող է վնասել	16.8%	43.0%	16.7%	10.3%
Խփել, քարշ տվել, ծեծել, խեղդել կամ հրկիզել է զուգընկերոջը	*	*	*	*
Սպառնացել կամ իրոք գործադրել է հրազեն, դանակ կամ այլ զենք զուգընկերոջ դեմ	*	*	*	*
Փակագծերում տրված տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանշանը (*) ցույց է տալիս, որ թիվը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:				

Աղյուսակի տվյալները հստակորեն ցույց են տալիս, որ բռնացող տղամարդ ինտիմ զուգընկերները, ովքեր իրենք են ենթարկվել ֆիզիկական բռնության զգալիորեն և հետևողականորեն շատ է, քան չբռնացող տղամարդ զուգընկերներինը: Ընդհանուր առմամբ ֆիզիկական բռնության և՛ ավելի լուրջ և ծանր, և՛ ավելի «չափավոր» տեսակների պարագայում տարբերությունը 1.5-ից 2 անգամ է: Օրինակ, 23.3%-ն այն տղամարդկանց, ովքեր ապտակել են ինտիմ կին զուգընկերոջը կամ նրան վնասելու նպատակով իրեր շպրտել, թալանվել են, 58.9%-ը՝ դեմքին կամ մարմնին հարված ստացել, 27.8%-ը դանակով և 23.3%-ն ատրճանակով սպառնալիքի ենթարկվել, մինչդեռ այն տղամարդիկ, ովքեր բռնության նման ձևեր չեն կիրառել իրենց զուգընկերոջ հանդեպ, կազմում են համապատասխանաբար 16.1%, 41.4%, 15.1% և 9.0%: Տարբերությունն ավելի ընդգծված է զուգընկերոջը հրելու կամ քաշքշելու դեպքում: Այն տղամարդիկ, ովքեր իրենց զուգընկերոջը նման բռնության են ենթարկել, 29.1% թալանվել են, 62.0% դեմքին կամ մարմնին հարված ստացել, 29.1% դանակով և 22.8% հրազենով սպառնալիքի են ենթարկվել, մինչդեռ այն տղամարդիկ, ովքեր բռնության նման ձևեր չեն կիրառել իրենց զուգընկերոջ հանդեպ, կազմում են համապատասխանաբար 15.7%, 41.4%, 15.2% և 9.3%:

Հենաբար կարելի է փորձնականորեն առաջ քաշել այն վարկածը, որ ֆիզիկական բռնության ենթարկվելու փորձ ունենալը մի գործոն է, որն ազդում է տղամարդկանց ագրեսիվ վարքագծի ձևավորման վրա իրենց ինտիմ զուգընկերների հետ հարաբերություններում:

Ստորև տրված **Աղյուսակ 14-ը** պարունակում է տվյալներ, որոնք անհրաժեշտ են այս վարկածը ստուգելու համար:

Աղյուսակ 14. Ֆիզիկական բռնության տվյալ տեսակին *ենթարկված/ չենթարկված* տղամարդկանց և իրենց կին ինտիմ զուգընկերոջը ֆիզիկական բռնության *ենթարկած* տղամարդկանց տոկոսը

Ֆիզիկական բռնության տվյալ տեսակին *ենթարկված/ չենթարկված* տղամարդկանց և իրենց կին ինտիմ զուգընկերոջը ֆիզիկական բռնության *ենթարկած* տղամարդկանց տոկոսը N=696					
Տղամարդ հարցվածներ, ովքեր հաղորդել են, որ իրենք	Ֆիզիկական բռնության ենթարկված տղամարդկանցից երբևէ զուգընկեր ունեցած տղամարդկանց տոկոսը, ովքեր				
	Ապտակել են զուգընկերոջը կամ նրան վնասելու նպատակով իրեր շպրտել	Հրել կամ քաշքշել են զուգընկերոջը	Հարվածել են զուգընկերոջը բռունցքով կամ որևէ իրով, որ կարող է վնասել	Խփել, քարշ տվել, ծեծել, խեղդել կամ հրկիզել են զուգընկերոջը	Սպառնացել կամ զուգընկերոջ հանդեպ իրոք գործադրել են ատրճանակ, դանակ կամ այլ զենք[47]
Թալանվել են	17.8%	16.6%	5.9%	4.2%	0.0%
ՉԵՆ թալանվել	11.9%	10.0%	3.6%	1.2%	0.3%
Դեմքին կամ մարմնին հարված են ստացել	17.4%	16.1%	5.6%	3.3%	0.7%
ՉԵՆ ստացել հարված դեմքին կամ մարմնին	9.3%	7.8%	2.9%	0.5%	0.0%
Ենթարկվել են ստառնալիքի դանակով կամ այլ զենքով (բացառությամբ հրազենի)	21.8%	20.0%	5.2%	3.4%	1.7%
ՉԵՆ ենթարկվել ստառնալիքի դանակով	11.2%	9.8%	3.9%	1.4%	0.0%

[47] Տոկոսային տվյալները, ինչպես նաև դրանց միջև տարբերություններն այս կատեգորիայում (աղյուսակում) այնքան նվազ են, որ հարկ չկա անդրադարձ կատարել դրանց

կամ այլ զենքով (բացառությամբ հրազենի)					
Ենթարկվել են ատրճանակով սպալնալիքի	**28.4%**	**24.4%**	**9.5%**	**5.4%**	**2.7%**
ՉԵՆ ենթարկվել ատրճանակով սպալնալիքի	**11.2%**	**10.0%**	**3.5%**	**1.3%**	**0.0%**
Փակագծերում տրված տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թիվը հիմնված է 25-ից քիչ դեպքերի վրա և չի ներկայացվել:					

Տվյալները պարզորոշ կերպով ցույց են տալիս, որ ֆիզիկական բռնության զոհ դառնալը և դրան ենթարկվելն իրոք զարկ է տալիս իրենց կին ինտիմ զուգընկերների հանդեպ տղամարդկանց բռնացող վարքին: Տղամարդկանց բռնության ենթարկվելն ուղղակիորեն առնչվում է իրենց կին ինտիմ զուգընկերների հանդեպ ֆիզիկական բռնություն կիրառելու հետ: Փաստացի այս կատեգորիայի տղամարդիկ, ովքեր իրենց ինտիմ զուգընկերոջը ենթարկել են ֆիզիկական բռնության, 1.5-ից 3 և անգամ ավելի գերազանցում է այն տղամարդկանց, ովքեր չեն ենթարկվել ֆիզիկական բռնության վերոհիշյալ տեսակին: Այսպես օրինակ, դեմքին կամ մարմնին հարված ստացած տղամարդկանց 17.4% ապտակել է ինտիմ կին զուգընկերոջը կան նրան վնասելու նպատակով իրեր շպրտել վերջինիս վրա, 16.1% հրել կան քաշքշել է նրան, 5.6% հարվածել է նրան և 3.3% խփել, քարշ տվել, ծեծել, խեղդել կամ այրել են զուգընկերոջը: Մյուս կողմից այն տղամարդկանցից, ովքեր հարված չեն ստացել, իրենց կին զուգընկերոջը բռնության են ենթարկել համապատասխանաբար 21.8%, 20.0%, 5.2% և 3.4%:

Հետևաբար կարելի է եզրակացնել, որ իրոք բռնությունը բռնություն է ծնում և որ ինտիմ զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության նվազեցման ամենաէֆեկտիվ (թեպետև ոչ միակ) միջոցը տղամարդկանց բռնությունից պաշտպանելն է: Դա, ընդ որում, նշանակում է, որ թեև կանաց դեմ բռնության կանխարգելումը օրինական և կարևոր նպատակ է, այն պետք է ընդլայնել և վերածելել գենդերային բռնության դեմ պայքարի և ապա ինքնին բռնության դեմ պայքարի՝ ինչպիսի ձևերով էլ որ վերջինս հանդես գա: Լավագույն ռազմավարությունը կլիներ բռնության հանդեպ «զերո

հանդուրժողականության» մշակույթի ձևավորումը ու քաղաքականության զարգացումը:

***

Ինչ վերաբերում է կանանց դեմ բռնությանը, հատկապես ինտիմ զուգընկերոջ հանդեպ բռնությանը, տղամարդկանց վարքի ձևաչափը ներգծվում է «առնական վարքագծի» գերակա մոդելի մեջ: Տղամարդկանց զգալի տոկոսը ներգրավված է չփոխադարձվող գենդերային բռնության մեջ:

Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ կանանց դեմ բռնության բոլոր ձևերը՝ սեռական բռնությունը ներառյալ, հազվադեպ երևույթ չեն: Հատուկ ուշադրության է արժանի այն փաստը, որ սեքսն առանց փոխհամաձայնության՝ ներառյալ զուգընկերոջ/ զույգի բռնաբարությունը, իրոք գոյություն ունի և պետք է որպես այդպիսին ճանաչվի ադեկվատ օրենսդրության և համապատասխան լուծումների մշակմամբ:

«Չհաղորդված տարածվածությունը», որը նշանակալի է, ցույց է տալիս, որ գենդերային բռնության հետագա հետազոտություններն ու ուսումնասիրությունները պետք է կենտրոնանան այն մեթոդների վրա, որոնք ավելի լավ են ապահովում հարցվածների անանունությունն ու գաղտնիությունը, այսպիսով նրանց հոգեբանորեն ավելի ապահով իրադրության մեջ դնելով և այսպիսով բարձրացնելով տվյալների արժանահավատությունը:

ԳԼՈՒԽ 3. ԲՌՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

ԿԴԲ նկատմամբ վերաբերմունքը

Սույն ուսումնասիրությունը կենտրոնանում է հասարակության՝ ԿԴԲ հետ առնչվող առնականության ասպետկների նկատմամբ վերաբերմունքի ճանաչողական, զգացական և վարքագծային բաղադրիչների վրա: Ուսումնասիրության տվյալներն ապահովում են լայն իրազեկություն հարցվածների տեսակետների, կարծիքների և հավատալիքների վերաբերյալ, նրանց տված գնահատականների և էմոցիաների, ինչպես նաև նրանց վարքի մասին: Անտարակույս, քանի որ հարցվածների վարքագծի ուսումնասիրությունը կյանքային իրադրությունում ուսումնասիրության շրջանակներից դուրս էր և բոլորովին ոչ իրատեսական, ապա նրանց խոստովանած զգացմունքների և գնահատականների, ինչպես նաև իրենց կամ այլոց կողմից հաղորդած վարքագծի մասին եզրակացությունները մեծապես կախված են ոչ թե իրենց տեսակետներից և հավատալիքներից, այլ նրանց՝ այդ մասին բարձրաձայնելու և կիսվելու ցանկությունից:

Առնականության վերաբերյալ ուսումնասիրությունների կարևոր բաղադրիչ է տղամարդկանց իրավահավասար լինել կամ չլինելը տվյալ երկրում: Բացի ուղղակիորեն իրագործվող բռնության՝ այսինքն՝ տղամարդկանց կողմից կանանց հանդեպ կիրառվող տարբեր ձևերի տարածվածության մասշտաբների հստակեցումից, կարևոր է նաև ուսումնասիրել տղամարդկանց և կանանց վերաբերմունքը ԿԴԲ երևույթի հանդեպ: Սա կարևոր է մի կողմից այն պատճառով,որ այս վերաբերմունքն արտացոլում է գերակա գաղափարախոսությունը, նորմերը և արժեհամակարգը, կանանց դեմ բռնության ընդունումն ու հանդուրժողականությունը, նաև կառուցողական և մշակութային բռնության գոյությունը կամ չգոյությունը հասարակությունում՝ ձևավորվելով դրանց հենքի վրա, և մյուս կողմից այն, թե ինչպես են դիրքորոշումներն ազդում, ամրակայում և փոխում հասարակության մշակույթը:

Հասարակական մթնոլորտը կարևոր գործոն է, քանի որ այն կարող է թույլ տալ, զարգացնել, կամ ընդհակառակը՝ դատապարտել և արգելել կանանց դեմ բռնությունը: Որոշիչ դերակատարում ունեն գենդերային, առնականության և կանացիությանն առնչվող նորմերը և գաղափարախոսությունը, որոնք գերակա են տվյալ

հասարակությունում: Ավելի ավանդական և հայրիշխանական նորմատիվ գաղափարները, որոնք իսկական առնականության հիմք են հանդիսանում՝ սովորաբար շեշտելով ֆիզիկական ուժն ու դրա ցուցադրումը և կանանց՝ հատկապես ինտիմ զուգընկերների հանդեպ գերակայման հաստատումը՝ ընդ որում հիմնվելով բռնի ուժի և բռնության վրա:

Հետազոտողները փաստում են, որ նորմատիվ ուժային դինամիկան ստիպում է որոշ տղամարդկանց ֆիզիկական բռնություն գործադրել ինտիմ զուգընկերների դեմ՝ ցույց տալու համար իրենց առնականությունը: Այսպիսով հետազոտողները պնդում են, որ «տղամարդկանց վարքագիծը՝ բռնության գործադրումը ներառյալ, օգնում են նրանց կանանց հանդեպ թվացյալ գերիշխանության հասնել, որը համընկնում է հասարակության մեջ գործող առնականության պատկերացումներին»[48]:

Ուսումնասիրությունն ընդգրկում էր 8 պնդումներ, որոնք կարող էին օգնել պարզելու կանանց դեմ բռնության նկատմամբ վերաբերմունքը (կամ, ավելի ճիշտ, կանանց հանդեպ ինտիմ զուգընկերոջ բռնությունը) և այսպիսով պարզելու, թե ներկայումս գենդերային հիմնահարցի առնչությամբ ինչքանով են կողմնակալ կամ անկողմնակալ հայ տղամարդիկ և ինչպիսին է հայ կանաց դիրքորոշումը սույն հիմնախնդրի շուրջ: Չորս պնդումներից բաղկացած առաջին խումբը վերաբերում է ***ինտիմ զուգընկերոջ գործադրած ֆիզիկական բռնության*** նկատմամբ վերաբերմունքին: Այդ պնդումներն են.

Կինը պետք է հանդուրժի բռնությունը հանուն ընտանիքի պահպանման:.

Որոշ դեպքերում կինը ծեծի է արժանի:

Եթե կինը տղամարդուն դավաճանում է, ապա տղամարդը կարող է կնոջը հարվածել:

Տղամարդը կարող է հարվածել իր կնոջը, եթե վերջինս հրաժարվում է իր հետ սեքսով զբաղվել:

Չորս պնդումներից բաղկացած երկրորդ խումբը առնչվում է բռնաբարության խնդրին, որը կանանց դեմ ***սեռական բռնության ծայրահեղ դրսևորում է*** (հաճախ նաև ֆիզիկական բռնության հետ համակցվող): Այդ պնդումներն են.

---

[48] Ֆլեմինգ Պ.Ջ. և ուրիշներ. «Կյանքի ընթացքում սեռական զուգընկերների հանդեպ տղամարդկանց կողմից ֆիզիկական բռնության գործադրման ռիսկի գործոնները. Տղամարդկանց և գենդերային հավասարության միջազգային հետազոտության արդյունքները (IMAGES) ութ երկրներում» *PLoS ONE*, 2015, 10(3): e0118639. doi:10.1371/journal.pone.0118639, p. 2.

Եթե կինը ենթարկվում է բռնաբարության, ապա նա է սովորաբար ինչ-որ բան է արել իրեն այդ իրադրության մեջ դնելու համար:

Բռնաբարության որոշ դեպքերում կանայք իրականում ուզում են, որ դա տեղի ունենա:

Եթե կինը ֆիզիկապես չի պաշտպանվում, ապա չի կարելի պնդել, որ դա բռնաբարություն էր:

Բռնաբարության ամեն մի դեպքում, պետք է տեղեկանալ, թե արդյոք զոհը չի ունեցել անկանոն սեռական հարաբերություններ կամ վատ համբավ:

Վերաբերմունքը կանանց հանդեպ սեռական զուգընկերոջ ֆիզիկական բռնության նկատմամբ

Աղյուսակ 1 պարունակում է տվյալներ ընտրանքի հարցվածների տոկոսային բաշխվածության վերաբերյալ, ովքեր համաձայն են[49] մի շարք պատճառների հետ, որոնք արդարացնում են տղամարդ ինտիմ զուգընկերոջ կողմից կանանց հանդեպ գործած ֆիզիկակն բռնությունը:

Աղյուսակ 1. Ընտրանքի հարցվածների տոկոսային բաշխվածությունը, ովքեր համաձայն են հետևյալ պնդումների հետ

Պնդումներ	Հարցվածներ (N=1,617)
Կինը պետք է հանդուրժի բռնությունը հանուն ընտանիքի պահպանման.	35.7%
Որոշ դեպքերում կինը ծեծի է արժանի:	27.7%
Եթե կինը տղամարդուն դավաճանում է, ապա տղամարդը կարող է կնոջը հարվածել:	55.4%
Տղամարդը կարող է հարվածել իր կնոջը, եթե վերջինս հրաժարվում է իր հետ սեքսով զբաղվել:	5.1%
Ընտրանքի հարցվածների տոկոսային բաշխվածությունը, ովքեր արդարացնում են ինտիմ զուգընկերոջ ֆիզիկական բռնությունը	70.3%

[49] Սվյալների մատչելի ներկայացման, համեմատության ու վերլուծության համար, «խիստ կողմ եմ և «կողմ եմ» պատասխանների կատեգորիաները միացվել են մեկ ընդհանուր «համաձայն եմ» կատեգորիայի մեջ, ինչպես արվել է նաև «դեմ եմ» և «խիստ դեմ եմ» կատեգորիաները «համաձայն չեմ» կատեգորիայի մեջ միավորելով, եթե այլ պնդում չի ներկայացվում: Հարկ եղած դեպքում կօգտագործվեն բոլոր 4 կատեգորիաները և կներկայացվեն համապատասխան տոկոսաչափերը:

Ինչպես վկայում են հետազոտության տվյալները, կարծիքներն էականորեն տարբերվում են՝ կախված ինտիմ զուգընկերոջ ֆիզիկական բռնության արդարացման պատճառներից: Հարցվածները տարբեր կերպով են հակազդում տարբեր իրադրություններին: Թեպետև հարցվածների գրեթե երկու երրորդը չեն սատարում այն միտքը, որ կինը պետք է բռնություն հանդուրժի հանուն ընտանիքի պահպանման և երկու երրորդից ավելին մերժում են այն միտքը, որ կան (չհստակեցված) դեպքեր, երբ կինն արժանի է ծեծի ենթարկվելուն 92.0% համաձայն չեն՝ ներառյալ 80.3%, ովքեր բոլորովին դեմ են, և միայն 5.1% է համաձայն այն պնդմանը, որ տղամարդը կարող է ծեծել կնոջը իր հետ սեքսից հրաժարվելու պատճառով, պատասխանը բոլորովին այլ է, երբ կին ինտիմ զուգընկերն է նրան հարվածում դավաճանության պատճառով: Ընդամենը 42.0% -ը չի համաձայնում այդ մտքին, մինչդեռ 55.4%-ը համաձայն է (ներառյալ 40.7%, ովքեր խիստ կողմ են): Հարկ է նաև նշել, որ հարցվածները ոչ միայն բացարձակ դեմ են այդ երևույթին, այլև նրանց մեծ մասը անխախտ կարծիք ունի, մինչդեռ միայն մոտ 2.5% չուներ որոշակի պատասխան կամ ընդհանրապես հրաժարվել են հարցին պատասխանել:

Այսպիսով հարցվածներն ամենաքիչն են հակված ինտիմ զուգընկերոջ բռնության արդարացմանը, երբ դա կատարվում է կնոջ՝ ամուսնու հետ սեռական հարաբերություն ունենալուց հրաժարվելու պատճառով: Ողջ ընտրանքի ճնշող մեծամասնությունը ժխտում են այն միտքը, որ կնոջ հրաժարվելը ամուսնու հետ սեռական հարաբերություն ունենալուց նրան օրինական հիմք է տալիս կնոջը հարվածել և միայն հարցվծների 5.1%-ն է համաձայն այդ մտքին:

Ինտիմ զուգընկերոջ բռնությունն արդարացնող հարցվածների ամենաբարձր տոկոսը գրանցվել՝ այն դեպքում, երբ կինը դավաճանում է տղամարդոն: Ընդհանուր հաշվով սա կազմում է ընտրանքի 55.4% -ը: Սա բոլորովին զարմանալի չէ, քանի որ երբ կնոջ (ենթադրյալ) դավաճանության պատճառով ինտիմ զուգընկերոջ բռնության մասին լրատվամիջոցներով լուսաբանվող դատական լսումներ են հաղորդվում, և քննարկվում, դեպքերի մեծ մասում քննարկման մասնակիցներն արդարացնում են բռնությունը՝ ասելով թե կինն ու նրա սիրեկանն ավելի դաժան պատժամիջոցների են արժանի (բառացիորեն պնդելով, որ « մեղավորներն» արժանի են մահվան) և որ բռնարարն ըստ էության անմեղ է և չպետք է ներկայանա օրենքի առաջ:

Վերոնշյալ հիմունքներով տղամարդ զուգընկերոջ կողմից կնոջ դեմ գործած բռնության գործադրումն արդարացնող հարցվածների թիվը զգալիորեն ցածր է դատապարտողների թվի համեմատությամբ: Այնուամենայնիվ այն դեռ բավականին բարձր է և այդ հարցվածները մեծաքանակ խումբ են կազմում, որը հնարավոր չէ ուղղակի առհամարել կամ անտեսել: Այս հարաբերականորեն բարձր տոկոսները ցույց են տալիս, որ բացակայում է մարդկանց կրթելուն և նրանց գիտակցությունը բարձրացնելուն ուղղված ողջամիտ ազգային քաղաքականություն կանանց դեմ բռնությունների, այդ թվում՝ ընտանեկան բռնության հիմանահարցի առնչությամբ, կամ որ գոյություն ունեցող քաղաքականությունը հետևողականորեն չի կեսնագործվում և որ ձեռնարկված միջոցները՝ իրազեկումն ու քարոզարշավները, առանձնապես էֆետկիվ չեն:

Կանանց դեմ բռնության տրամաբանակն հիմնավորումը մտահոգիչ երևույթ է, հատկապես երբ բռնարարներն ու նրանց կողմնակիցները կողմ են այնպիսի պնդումների, որոնք չեն մասնավորեցնում ինտիմ զուգընկերոջ բռնության պատճառները:

Հարցվածների քառորդից ավելին (27.7%) համաձայն են այն պնդմանը, որ « Որոշ դեպքերում կինն արժանի է ծեծի ենթարկվելուն: Այս մոտեցումը հիմնավորվում է երկրում բռնության աճող սոցիալական արդարացմամբ, որը քաղաքագետների բնորոշմամբ «առօրյա կյանքի բարբարոսականացում է»: Իր հերթին, եթե բռնության վարքագիծն ի տես հանրության վճռականորեն չի կանխարգելվում լայն հասարակության կողմից, կամ խանխարգելվում է միայն առանձին դեպքերում և ոչ հետևողականորեն, այն անխուսափելիորեն վերարտադրվելու է նաև մասնավոր կյանքում: Երբ միջանձնային բռնության ակտերը որակվում են իբրև «օրինական» ՝ հատկապես որպես «մաչիզմի» արտահայտություն, երբ ագրեսիվ վարքն ու բռնությունը՝ լինի դա սադրանքի արդյունք չհանդիսացող կամ ենթադրյալ վիրավորական վարքի պատասխան, արդարացվում են, կարելի է հեշտորեն գտնել բազմաթիվ «պատրվակներ» ինտիմ կին զուգընկերոջը բռնանալու համար:

Ինտիմ զուգընկերոջ դեմ բռնության գործադրման հետ կապված առկա է ևս մի խնդիր՝ ընտանիքի մասին մտահոգությունը: Հարցվածների մեկ երրորդից ավելին

(35.7%) հավատացած են, որ կինը *չպետք է հանդուրժի բռնությունը՝* հանուն ընտանիքի պահպանման: Սա պարադոքսալ, կամ գոնե այդպես է թվացող երևույթ է:

Մի կողմից այս համատեքստում ընտանիքը համարվում է բարձրագույն արժեք: Եվ ավանդաբար այն հիմնական արժեք է հայ ազգի համար:

Մյուս կողմից, այդ նույն հարցվածներն անտեսում են այն հանգամանքը, որ կանանց դեմ բռնությունն ընտանեկան արժեք կամ ողջամիտ երևույթ չէ՝ հատկապես ընտանիքի պես կարևոր սոցիալական օղակը չի կարող բռնության վրա հիմնվել:

Այն ընտանիքը, որում կինը բռնության՝ հատկապես ֆիզիկական բռնության է ենթարկվում, չի կարող առողջ միություն լինել: Լավագույն դեպքում այն կարող է միայն թվացյալ միության տպավորություն գործել այլոց վրա, իրականում այն կլինի ընդամենը դատարկ և մասնատված ընտանիք, թերարժեք ընտանիք: Ոմանք նույնիսկ կվիճարկեին, որ դա ընտանիք է, կամ առնվազն ոչ լիարժեք լիիրավ ընտանիք: Փորձագետները մատնանշում են, որ Հայաստանում ամեն հինգերորդ ամուսնությունն ավարտվում է բաժանությամբ և որ ֆիզիկական բռնությունը (կնոջը ծեծելը) բաժանությունների թվի աճի պատճառներից մեկն է[50] (երկրում բաժանությունների թիվը 2014-ին 4,496 էր, գրանցելով 20% աճ 2013-ի համեմատությամբ, երբ բաժանությունների թիվը 3,756 էր[51]):

Անհրաժեշտ է նաև նշել, որ զգալի է տարբերություն կա անհատական պնդման հետ համաձայն հարցվածների (մոտ 15%) և այն հարցվածների, ովքեր առնվազն մեկ հիմնավորումով արդարացնում են ինտիմ զուգընկերոջ բռնությունը: Տարբերությունը ցույց է տալիս, որ հարցվածների զգալի մասնաբաժինը համաձայն են միայն մեկ պնդման հետ և դեմ են արտահայտվում 2 կամ ավելի պնդումներին:

***

Թեև վերևում բերված Աղյուսակը ներկայացնում է ինտիմ տղամարդ զուգընկերոջ կողմից կանանց բռնության ենթարկվելու նկատմամբ ողջ ընտրանքի վերաբերմունքի ընդհանուր պատկերը, նախ կարևոր է պարզել, թե ինչ և ինչ տարբերություն կա տղամարդկանց և կանանց միջև՝ կապված նրանց վերաբերմունքի հետ: Ստորև **Աղյուսակ 2 –ն** ներկայացնում է սեռի հիմքով տարանջատված տվյալները.

---

[50] « Հայաստանում յուրաքանչյուր 5րդ մուսնությունն ավարտվում է բաժանությամբ: ինչու՞ և ինչպե՞ս պետք է վարվել» *Կանայք և հասարակությունը.Տեղեկատվական և վերլուծական պորտալ l.* WomenNet.am 17.05.2015.

[51] *Հայաստանի վիճակագրության տարեգիրք-2015.* Երևան: ՀՀ NSS, 2015, p. 42.

Աղյուսակ 2. Այն կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունը, ովքեր համաձայն են հետևյալ պնդումների հետ.

	Տղամարդիկ (N=767)	Կանայք (N=850)
Կինը պետք է հանուն ընտանիքի միասնության հանդուրժի բռնությունը:	**44.6%**	**27.8%**
Որոշ դեպքերում կինն արժանի է, որ նրան ծեծեն	**35.2%**	**21.0%**
Եթե կինը դավաճանում է ամուսնուն, ապա նա կարող է հարվածել կնոջը	**60.9%**	**50.5%**
Տղամարդը կարող է հարվածել կնոջը, եթե նա հրաժարվում է իր հետ սեքսով զբաղվել	**5.8%**	**4.5%**
Ֆիզիկական բռնությունն արդարացնող տղամարդ և կին հարցվածների տոկոսային բաշխվածությունը	**78.6%**	**62.9%**

Ըստ վիճակագրական տվյալների զգալի փոխհարաբերակցություն կա հարցվածների սեռի և ԿԴԲ նկատմամբ արդարացնող վերաբերմունքի միջև[52]:

Տվյալները պարզորոշ կերպով ցույց են տալիս, որ կանայք քիչ են հակված ինտիմ զուգընկերոջ բռնությունն արդարացնելուն, քան տղամարդիկ ինտիմ կին զուգընկերոջ դեմ տղամարդու բռնության պատճառների և՛ ընդհանուր, և՛ յուրաքանչյուր անհատական պնդման պարագայում: Ընտրանքի տղամարդ հարցվածներն ավելի քան կին հարցվածները հակված են կանանց՝ պատրիարխալ նորմերի հետ համակերպվելուն: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ թեպետև տղամարդկանց և կանանց մեծամասնությունը համակարծիք են առնվազն 2 կամ, ըստ ամենայնի, 3 պնդումներին, ավելի քիչ թվով պնդումների հետ համաձայնողների տոկոսը բարձր է տղամարդկանց պարագայում: Զգալի տարբերությունն է (5.3%), որ երկուսից ավել անգամ գերազանցում է սխալի հավանականությունը:

Կին և տղամարդ հարցվածների միջև ամենամեծ տարբերությունը գրանցվել է առաջին երկու պնդումների դեպքում: Ընտրանքի տղամարդ հարցվածները հաստատ ավելի են հակված այն մտքին, որ կինը պետք է հանդուրժի ինտիմ զուգընկերոջ բռնությունը հանուն ընտանիքի: Հարկ է նշել, որ տղամարդ հարցվածների տոկոսը,

[52] Անվանական արժեքը $p<0.05$ է,մինչդեռ հաստատունությունը տատանվում է չափավորից՝ թույլ և շատ թույլ:

ովքեր ***խիստ կողմ են*** այս պնդմանը, կրկնակի անգամ գերազանցում է կին հարցվածների տոկոսային տվյալները (համապատասխանաբար 25.6% ընդդեմ 12.4% -ի):

Յուրաքանչյուր երրորդ հարցված տղամարդը (35.2%) համաձայն է այն պնդմանը, որ որոշ դեպքերում կինն արժանի է ծեծի ենթարկվելու, մինչդեռ միայն ամեն հինգերորդ կին հարցվածն է համամիտ (21.0%): Կրկին այս պնդմանը ***խիստ կողմ*** տղամարդ հարցվածների տոկոսը շատ ավելի բարձր է, քան կին հարցվածներինը (համապատասխանաբար 15.1% ընդդեմ 5.9% -ի):

Հաջորդ երկու պնդումներից յուրաքանչյուրը հատուկ դեպք է ներկայացնում:

Ինչ վերաբերում է անհավատարմությանը, ապա սա միակ դեպքն է, երբ տղամարդկանց, ինչպես և կանանց մեծ մասը (համապատասխանաբար 60.9% և 50.5%) համաձայն են այդ պնդմանը և, բացի այդ, երբ ***խիստ կողմ*** արտահայտվողների երկու խմբերի տոկոսային տվյալները ավելի բարձր են, քան նրանց, ովքեր պարզապես համաձայն են պնդմանը: Այսպիսով, տղամարդկանց 47.5-ը և կանաց 34.6%-ը ***խիստ կողմ*** են, մինչդեռ տղամարդկանց 13.4%-ը և կանանց 15.9%-ը պարզապես համաձայն են սույն պնդմանը:

Սա նաև մեծամասամբ տղամարդկանց որդեգրած կրկնակի ստանդարտների դրսևորում է, բայց նաև զգալի տոկոս են կազմում կանայք Հայաստանի նման երկրում, որտեղ սեռական հարաբերությունների ոլորտում գործում են որոշ հնաոճ նորմեր և «արժեքներ»: Այս հարցվածներն անկասկած շատ ավելի ներողմիտ են տղամարդկանց անհավատարմության հանդեպ և նրանք հաստատ կողմ չեն լինի կնոջ՝ դավաճանության համար ինտիմ զուգընկերոջը ծեծելուն:

Թեև սպասելի էր, որ անհավատարիմ կնոջը ծեծելու կողմնակից տղամարդ հարցվածների տոկոսը բարձր է լինելու, մտահոգիչ պիտի լինի այն փաստը, որ կին հարցվածների կեսը ևս համակարծիք են այս մտքին (50.5%): Փաստորեն, տեխնիկապես սա մեծամասնությունն է:

Ինչպես արդեն նշվել է, վերջին պնդումը ևս հատուկ դեպք է ներկայացնում, սակայն մեկ այլ պատճառով: Կին և տղամարդ հարցվածների չափազանց ցածր տոկոսն է համաձայնել այն պնդմանը, որ տղամարդը կարող է հարվածել կնոջը, եթե

նա հրաժարվի սեքսով զբաղվել իր հետ (համապատասխանաբար 5.8% և 4.5%)[53] և այս հատուկ հարցի առնչությամբ է, որ ընտրանքը կազմող տղամարդիկ և կանայք հազվադեպ համակարծություն են ցուցաբերում: Այն միտքը, որ կնոջը հարվածող տղամարդը կարող է արդարացվել, քանի որ նա հրաժարվում է սեքսով զբաղվել, հավասարապես անընդունելի է թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց համար:

***

Կին զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության մասին տղամարդկանց և կանանց պատկերացումների և կարծիքների ավելի մանրամասն պատկերը ներկայացված է հարցվածների՝ ըստ հիմնական կենսագրական բնութագրիչների տոկոսային բաշխվածության տվյալներում:

Տվյալների բաշխումը ներկայացված է ստորև՝ **Աղյուսակ 3** և **Աղյուսակ 4** –ում՝ համապատասխանաբար կին և տղամարդ հարցվածների համար[54]: Ողջ ընտրանքի համար միևնույն փոփոխականների վրա հիմնված տվյալների աղյուսակը ևս ներկայացված է ստորև՝ հղումներ կատարելու և անհրաժեշտ հավելյալ տեղեկություններ քաղելու համար (տե՛ս **Աղյուսակ 10**)[55]:

Աղյուսակ 3. Սեռական զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության նկատմամբ վերաբերմունքը. Տղամարդիկ

Ընտրանքի այն տղամարդկանց տոկոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների, ովքեր ***համամիտ են*** , որ ինտիմ զուգընկերը/ամուսինը պետք է արդարացվի իր կնոջը/ զուգընկերոջը ինչ-որ պատճառով հարվածելու/ ծեծելու համար **					
Տղամարդիկ արդարացվում են կնոջը/զուգընկերոջը ծեծելու կամ հարվածելու համար, քանի որ.					
Կենսագրական բնութագրիչներ	Կինը պետք է հանդուրժի բռնությունը՝	Որոշ դեպքերում	Եթե կինը դավաճանում է ամուսնում,	Տղամարդը կարող է ծեել կնոջը, եթե	Տղամարդկանց թիվը

[53] Համեմատաբար վերջերս՝ 2010-ին անցկացված ԱԱՀ/DHS համազգային հետազոտությունից ստացված տվյալները համապատասխանաբար կազմում էին 2.8% և 1.2% (*Հայաստանի ազգագրական և առողջական հետազոտություն 2010*. Երևան, ԱՎԾ և ԱՆ/MoH./ Կալվերտոն (MD): ICF International, 2012, pp. 234-235). Փորձնական եզրակացությունը ցույց է տալիս, որ աճել է այն կանանց և տղամարդկանց համամասնությունը (և, այսպիսով, թվաքանակը), ովքեր այդ հիմնավորումով արդարացնում են ՍԶԲ-ն: Սակայն անհրաժեշտ է ճշգրտում մտցնել: Հարկ է նշել, որ սույն հետազոտության ընտրանքների տարիքային խմբերը տարբերվում են ԱԱՀ տարիքային խմբերից: Թեպետև սույն ուսումնասիրության մեջ թիրախային խմբում են18-ից 59 տարեկանները, ԱԱՀ ընտրանքի ազգաբնակչությունը 15-49 տարիքի էին: Այդ տարբերությունն ակնհայտաբար տարամիտում է արդյունքները:.

[54] Քանի որ հարցերի այս շարանը հայ տղամարդկանց գենդերային օբյեկտիվության/ սուբյեկտիվության կարևոր կանխորոշիչ է, հարկ է նաև ներկայացնել վերոշարադրյալ պնդումների վերաբերյալ ***անհամաձայնություն*** հայտնած տղամարդկանց տվյալները: Հետևաբար, տվյալներն ամփոփող համապատասխան աղյուսակը ներառված է այս բաժնի Հավելված **I-ում,** իսկ կանանց տվյալների զուգադիր աղյուսակը ևս ներկայացված է այնտեղ՝ համեմատության նպատակով:

[55] Աղյուսակ **10-ը** օգտագործվում է այս ամբողջ բաժնում սեռական զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության նկատմաբ վերաբերմունքի շուրջ քննարկումներ անելիս հղումներ կատարելու համար՝ ելնելով հարցվածների 5 հիմնական կենսագրական բնութագրիչներից, որոնց թվում են տարիքը, կրթությունը, ամուսնական կարգավիճակը, բնակության վայրը և զբաղվածությունը:.

	հանուն ընտանիքի պահպանման	կինն արժանի է ծեծի	նա կարող է հարվածել կնոջը	նա հրաժարվում է սեքսով զբաղվել	N = 767
Տարիքը					
18-24	34.6	30.1	64.7	5.3	**153**
25-34	40.2	35.4	69.9	3.8	**209**
35-49	52.4	40.8	58.0	6.8	**250**
50-59	47.8	31.0	49.7	7.1	**155**
Կրթությունը					
Հիմնական	(75.1)	(50.0)	(84.4)	(12.5)	**32**
Միջնակարգ	50.9	38.0	65.0	6.9	**403**
Միջին մասնագիտական	49.2	34.1	57.1	6.4	**126**
Բարձրագույն	24.7	28.2	51.4	2.0	**206**
Ամուսնական կարգավիճակը* **					
Գրանցված ամուսնություն	45.3	36.2	39.0	5.2	**408**
Չգրանցված ամուսնություն	51.8	39.8	69.8	3.6	**83**
Ընկեր/ընկերուհի (չեն վարում համատեղ կյանք)	(35.7)	(35.7)	(50.0)	(7.2)	**28**
Չամուսնացած	37.5	28.1	60.1	6.1	**213**
Բաժանված/ ամուսնալուծված	(66.7)	(62.5)	(70.8)	(16.6)	**24**** **
Այրի	*	*	*	*	**2**
Բնակության վայրը					
Երևան	31.0	33.0	52.3	3.1	**258**
Այլ քաղաքային	46.4	35.4	63.7	6.6	**226**
Գյուղական	65.4	37.1	64.5	7.4	**283**
Զբաղվածությունը*** **					
Երբեք չի աշխատել	(50.0)	(25.0)	(70.0)	(15.0)	**40**
Ուսանող[56]	(16.7)	(16.7)	(41.7)	(0.0)	**24**** **
Գործազուրկ	51.8	37.0	57.4	7.2	**249**

[56] Այստեղ և հետայսու «ուսանող» նշանակում է բարձրագույն ուսումնական հաստատության ուսանող:

Գրանցված աշխատող	34.4	36.6	59.4	3.6	**224**
Չգրանցված աշխատող	48.9	36.1	67.4	5.3	**227**
Ընդամենը	**44.6%**	**35.2%**	**60.9%**	**5.8%**	**767**
Փակագծերում տրված տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը(*) ցույց է տալիս, որ թվային տվյալը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:					

** Տվյալների հեշտ ներկայացման, համեմատության և վերլուծության նպատակով «լիովին համաձայն եմ» և «համաձայն եմ» պատասխանները միավորվել են՝ տրված պնդման հետ համամիտ տղամարդկանց տոկոսը որոշելու համար.
***Քանի որ «Ոչ պաշտոնական միություն/ համատեղ կյանք»; կատեգորիայում կային ընդամենը 9 հարցվածներ, այդ կատեգորիան չի ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 758):
**** Սահմանագծային դեպքերի տվյալները լրիվ վավեր են համարվում:

***** Քանի որ «ուսման համատեղում աշխատանքի հետ» կատեգորիայում կային ընդամենը 2 հարցվածներ և 1 անձ՝ «Երեխայի խնամքի կամ այլ տեսակի արձակուրդում» կատեգորիայում, այս կատեգորիաները չեն ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 764):

Տարիքային գործոնը զգալի ազդեցություն ունի տղամարդկանց վերաբերմունքի վրա, սակայն չի հետևում սկզբունքին: Թվում է՝ այն գործում է տարբեր, երբեմն հակադիր ուղղություններով: Բոլոր տարիքային խմբերը՝ բացի ամենաերիտասարդից չափազանց հանդուրժողական էին ինտիմ զուգընկերոջ բռնության հանդեպ՝ արդարացնելով այն վերոհիշյալ մեկ կամ երկու պատճառով: 35-49-տարեկան տղամարդկանց խմբի կեսից ավելին (52.4%) հարում են այն տեսակետին, որ կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն ընտանիքի միասնության: Սա միակ դեպքն է (բացառությամբ անհավատարմության), երբ տարիքային խմբերից յուրաքանչյուրում հարցվածների մեծ մասը արդարացնում են ինտիմ զուգընկերոջ բռնությունը: Նույն խումբը նաև ՍԶԲ արդարացման «առաջատարն» է (40.8%), երբ պատասխանում են այն պնդմանը, որ որոշ դեպքերում կինը ծեծի է արժանի, թեև պնդման ձևակերպումը չի հստակեցնում իրադրությունը, կնոջ գործողություններն ու անգործությունը և այլն: Սա մտահոգության թեմա է, քանի որ լինելով հարաբերականորեն երիտասարդ՝այս տղամարդիկ արդեն հասուն են, ունեն կյանքի և հարաբերությունների բավականին մեծ փորձ: Թեև նրանք պարտադիր հանդես չեն գալիս իբրև վերջնական կարծիք թելադրողներ. իրենց սոցիոտնտեսական, մասնագիտական, աշխատանքային և ամուսնական/ հարաբերությունների կարգավիճակի շնորհիվ, նրանք՝ իբրև խումբ, ամենայն հավանականությամբ մտատիպար են հանդիսանում իրենց երեխաների և այլ դեռահասների, պատանիների և երիտասարդների համար: Համեմատաբար բարձր է

նաև նրանց տոկոսը, ովքեր գտնում են, որ տղամարդը կարող է կնոջը հարվածել սեքսով զբաղվելուց հրաժարվելլու համար (6.8%) և շատ մոտ է առաջատարին, որը ամենամեծ տարիքային խումբն է (7.1%), մինչդեռ սույն պնդման հետ համաձայն այլ տարիքային խմբեր ավելի ցածր տոկոսային չափաբաժնով են հանդես գալիս (5.3% ամենաերիտասարդ և 3.8% դրան հաջորդող տարիքային խմբում):

Միևնույն ժամանակ մինչ նրանց կեսից ավելին (58.0%) արդարացնում են ինտիմ զուգընկերոջ բռնությունը կնոջ անհավատարմության դեպքում, երկու ավելի երիտասարդ խմբերը նույնիսկ ավելի ռադիկալ են (որտեղ մոտ երկու երրորդը կան ավելին սատարում են այդ տեսակետը): Ընտրանքի՝ ՍԶԲ-ն արդարացնող տղամարդ հարցվածների ամենաբարձր տոկոսը 25-34-տարիքային խմբում են, որը հավանաբար կարող է բացատրվել նրանով, որ ի համեմատություն ամենաերիտասարդ տարիքային խմբի, նրանց երկու երրորդն արդեն ունի ինտիմ կին զուգընկեր և որ նրանք չափազանց բուռն են արձագանքում ոչ միայն հայրիշխանական կարծրատիպերի, այլև իրադրությունը իրենց սեփական հարաբերությունների վրա պրոյեկտելու պատճառով:

Սա զարգացման դրական միտում է, սակայն ավելի երիտասարդ տարիքային խմբերը (և հատկապես ամենաերիտասարդը) ընդհանուր առմամբ հակված չեն կանանց նկատմամբ գործադրած բռնությունն արդարացնելուն:

Աղյուսակ 4. Սեռական զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության նկատմամբ վերաբերմունքը. կանայք

Ընտրանքի այն կանանց տոկոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների, ովքեր ***համամիտ են***, որ ինտիմ զուգընկերը/ամուսինը պետք է արդարացվի իր կնոջը/ զուգընկերոջը ինչ-որ պատճառով հարվածելու/ ծեծելու համար **					
Տղամարդն արդարացվում է իր կնոջը հարվածելու/ ծեծելու համար, քանի որ.					
Կենսագրական բնութագրիչներ	Կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն ընտանիքի պահպանման	Որոշ դեպքերում կինն արժանի է ծեծի ենթարկվելուն	Եթե կինն ամուսնուն դավաճանում է, նա կարող է ծեծել նրան	Տղամարդը կարող է հարվածել նոջը, եթե նա հրաժարվի նրա հետ սեքսով զբաղվելուց	Կանանց թիվը N = 850
Տարիքը					
18-24	6.0	11.3	42.1	2.3	**133**
25-34	29.3	21.4	55.9	2.4	**252**
35-49	31.6	22.7	52.9	6.5	**291**

50-59	35.6	24.7	44.8	5.7	**174**
Կրթությունը ***					
Հիմնական	*	*	*	*	**14**
Միջնակարգ	37.1	23.7	57.4	5.6	**324**
Միջին մասնագիտական	28.2	22.9	51.0	5.3	**245**
Բարձրագույն	13.5	15.1	39.9	1.2	**266**
Ամուսնական կարգավիճակը****					
Գրանցված ամուսնություն	31.3	23.5	56.7	5.6	**533**
Չգրանցված ամուսնություն	27.4	23.2	52.6	3.2	**95**
Ընկեր (համատեղ կյանք չեն վարում)	*	*	*	*	**9**
Չամուսնացած	12.1	11.3	30.7	1.6	**124**
Բաժանված/ ամուսնալուծված	22.0	26.0	38.0	2.0	**50**
Այրի	(46.7)	(13.4)	(36.6)	(0.0)	**30**
Բնակության վայրը					
Երևան	14.8	16.0	37.8	2.6	**312**
Այլ քաղաքային	28.0	23.2	50.4	4.1	**246**
Գյուղական	41.5	24.4	64.1	6.9	**292**
Զբաղվածությունը*****					
Երբեք չի աշխատել	38.6	29.8	64.4	8.7	**171**
Ուսանող	2.1	4.2	29.2	2.1	**48********
Գործազուրկ	30.9	21.3	53.4	4.5	**356**
Գրանցված աշխատող	18.9	17.8	38.9	2.1	**185**
Չգրանցված	29.4	17.6	48.5	2.9	**68**
Ընդամենը	**27.8%**	**21.0%**	**50.5%**	**4.5%**	**850**
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թվային տվյալը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:					

** Տվյալների հեշտ ներկայացման, համեմատության և վերլուծության նպատակով «լիովին համաձայն եմ» և «համաձայն եմ» պատասխանները միավորվել են՝ տրված պնդման հետ համամիտ կանանց տոկոսը որոշելու համար

***Քանի որ «Տարրական կամ ավելի ցածր կրթություն» կատեգորիայում կար ընդամենը 1 հարցված, այդ կատեգորիան չի ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 849):

******** Քանի որ «Ոչ պաշտոնական միություն/ համատեղ կյանք» կատեգորիայում ընդամենը 9 հարցվածներ կային, այդ կատեգորիան չէր ներկայացվել (հետևաբար հարցվածների ընդհանուր թիվն այս սեկցիայում 841 է):

***** Քանի որ «ուսման համատեղում աշխատանքի հետ» կատեգորիայում կար ընդամենը 1 հարցված, 2 հարցված ընդհանրապես չէին պատասխանել կամ հրաժարվել էին պատասխանելուց, իսկ «Երեխայի խնամքի կամ այլ տեսակի արձակուրդում» կատեգորիայում՝ 19 հարցվածներ, այս կատեգորիաները չեն ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 828):
****** Սահմանագծային դեպքերի տվյալները լրիվ վավեր են համարվում:

Տարիքի գործոնն ավելի անմիջական ազդեցություն ունի կին հարցվածների դեպքում: Ավելի երիտասարդ տարիքային խմբերի համար կա հստակ ձևանմուշ, որն ավելի լիբերալ և գենդերային դիրքորոշում է արտահայտում: Ուղղակի փոխառնչակցություն կա առաջին 2 պնդումների և տարիքի ու կանանց դեմ ինտիմ զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության հանդեպ հանդուրժողականության միջև: Հարկ է նշել, որ զգալի տարբերություն կա ամենաերիտասարդ տարիքային խմբի և մնացած բոլորի միջև: Ամենաերիտասարդ խմբի կին հարցվածները, ովքեր համաձայն են այն պնդմանը, որ կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն ընտանիքի պահպանման, 5 -ից 6 անգամ պակաս տոկոս են կազմում, քան այլ տարիքային խմբերը (6.0% ընդդեմ 29.3%-35.6%): Ի տարբերություն մյուս խմբերի, կրկնակի անգամ ցածր է նրանց տոկոսը, ովքեր համաձայն են այն պնդմանը, որ կինն արժանի է ծեծի (11.3% ընդդեմ 21.4%-24.7%): Թեև վերջին 2 պնդումների դեպքում տարբերությունն այդքան ահռելի չէ, այնուամենայնիվ այն առկա է: Անգամ կնոջ անհավատարմության խնդրի հետ կապված՝ տոկոսը 10%-16% ցածր է, քան մյուս 2 խմբերում, որտեղ հարցվածների կեսը համաձայն են այն պնդմանը, որ տղամարդուն ներելի է կնոջն հարվածելը, եթե կինը նրան դավաճանում է (42.1% ընդդեմ 52.9%-55.9%) և ավելի մոտ է 50 տարեկան և բարձր խմբերի տվյալներին (44.8%):

Աղյուսակ 5. Սեռական զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության նկատմամբ վերաբերմունքը

Հետևյալ պնդումների հետ համամիտ ընտրանքի բոլոր կանանց և տղամարդկանց տոկոսային բաշխվածությունն ***ըստ տարիքի***

Ընտրանքի բոլոր կանանց և տղամարդկանց տոկոսային բաշխվածությունն ըստ տարիքի, ովքեր ***համամիտ են***, որ ինտիմ զուգընկերը/ամուսինը պետք է արդարացվի իր կնոջը/ զուգընկերոջը ինչ-որ պատճառով հարվածելու/ ծեծելու համար						
Տղամարդն արդարացվում է կնորը/զուգընկերոջը ծեծլու/հարվածելու համար, քանի որ.						
Դեմոգրաֆիկական բնութագրիչներ	Կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն ընտանիքի պահպանման	Որոշ դեպքերում կինն արժանի է ծեծի	Եթե կինը դավաճանում է տղամարդուն,հա կարող է նրան հարվածել	Տղամարդը կարող է հարվածել կնոջը, եթե նա հրաժարվում է իր հետ սեքսով զբաղվել	Տղամարդկանց թիվը N = 767	Կանանց թիվը N = 850

Տարիքը	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ
18-24	34.6	6.0	30.1	11.3	64.7	42.1	5.3	2.3	153	133
25-34	40.2	29.3	35.4	21.4	69.9	55.9	3.8	2.4	209	252
35-49	52.4	31.6	40.8	22.7	58.0	52.9	6.8	6.5	250	291
50-59	47.8	35.6	31.0	24.7	49.7	44.8	7.1	5.7	155	174

Ինչպես ցույց են տալիս հետազոտության տվյալները, *տարիքային ստրատիֆիկացիան* ավելի կարևոր գործոն է կին հարցվածների, քան տղամարդ հարցվածների դեպքում՝ ինտիմ զուգընկերոջ ֆիզիկական բռնությանը կողմ կամ դեմ արտահայտվելիս (Տե՛ս նաև Աղյուսակ **5**): Հասարակության իրազեկվածության բարձրացման քարոզարշավները և այլ կրթական և տեղեկատվական գործողությունները, թվում է, ավելի մեծ ազդեցություն են ունեցել կանանց, քան տղամարդկանց վրա, հատկապես երիտասարդ կանանց (ամենաերիտասարդ տարիքային խմբի վրա՝ առանձնակիորեն) ի համեմատ ավելի բարձր տարիքային խմբերի: Սա միայն մասամբ է առնչվում տղամարդկանց՝ որոշակի վերապահումներով:

Թվում է նաև, որ կանայք ավելի հետևողական են իրենց տեսակետներում և տարիքային խմբերի միջև տարբերությունները մեծամասամբ շատ ավելի փոքր են, քան տղամարդկաց խմբերի միջև:

Համեմատելով կանանց և տղամարդկանց տեսակետները կնոջ անհավատարմության և դրանից բխող տղամարդու գործադրած բռնության վիճահարույց խնդրի շուրջ՝ կարելի է հետևյալ դիտարկումն անել: Կին և տղամարդ հարցվածների միջև տարբերությունը տարիքր հետ կրճատվում է և հասնելով իր գագաթնակետին երկրորդ տարիքային խմբում՝ պնդման հետ համամիտ հարցվածների չափաբաժինը զգալիորեն նվազում է: Պարզ է, որ ավելի բարձր տարիքի հարցվածները կնոջ անհավատարմության՝ հատկապես ամուսնական անհավատարմության հանդեպ ավելի հանդուրժողական չեն տրամադրված: Ավելի հավանական է, որ իջնում է բռնության արդարացման մակարդակը:

Ողջ ընտրանքի կտրվածքով (տե՛ս Աղյուսակ 10) երկրորդ տարիքային խմբում (25-34-տարեկաններ) գրանցվել է պնդման հետ համաձայնվողների ամենաբարձր տոկոսը (62.3%), որը գրեթե երկու անգամ բարձր է, քան անհամաձայնություն հայտնողներինը:

Հարցվածների չորս հինգերորդը (78.3%) այդ տարիքային խմբում ունեն կամ ունեցել են ինտիմ զուգընկեր (բաժանվածների և այրիների փոքր տոկոսը ներառյալ՝ համապատասխանաբար 3.5% և 0.4%): Թվում է՝ այս խումբը կտրականապես դեմ է ինտիմ զուգընկերոջ անհավատարմությանը և ծայրահեղ մոտեցում է որդեգրել, որը, հավանաբար, թույլ չի տալիս այս բավականին առաջադեմ հայացքներով տարիքային խմբին առողջ դատել, որը մյուս դեպքերում բացասաբար է տրամադրված ՍԶԲ հանդեպ (միջին հաշվով հարցվածների 65%-70% այդ տարիքային խմբում համաձայն չեն այն պնդմանը, որ տղամարդուն պետք է արդարացնել իր ինտիմ կին զուգընկերոջը ծեծելու համար , իսկ ինչ վերաբերում է այն մտքին, թե տղամարդը կարող է խփել կնոջը իր հետ սեքսով զբաղվելուց հրաժարվելու դեպքում, այդ խմբի հարցվածների գրեթե 94% չեն համաձայնվել այդ պնդման հետ):

Ամենաերիտասարդ տարիքային խմբի տղամարդիկ, ովքեր անհավատարմության դեպքում արդարացնում են ՍԶԲ, մեծամասամբ խոսում են կարծրացած հայրիշխանական կարծրատիպերի կամ երևակայական բարոյական նորմերի դիրքերից, քան թե իրենց կյանքի փորձից ելնելով: Նրանց ընդամենը 8.6% ունի ինտիմ կին զուգընկեր, մինչդեռ այդ տարիքային խմբի կին հարցվածների 40.0% -ը արդեն (թեպետև մեծամասամբ վերջերս) ամուսնացած են (և 0.7% արդեն բաժանված են ամուսնուց կամ ընկերոջից): Չնայած որ կին հարցվածները չեն հանդուրժում կնոջ անհավատարմությունը, նրանք առանձնակիորեն կողմ չեն ինտիմ զուգընկերոջ կողմից բռնության գործադրմանը:

***

Կրթական գործոնի ազդեցությունը ոչ միայն նշանակալի դերակատարում ունի տղամարդկանց դեպքում, այլև միասնական հաստատուն ձևանմուշով է հանդես գալիս: Առանց բացառության տղամարդկանց կրթամակարդակը հակադարձաբար փոխկապակցված է ինտիմ զուգընկերոջ կողմից կանանց դեմ ֆիզիկական բռնությունը արդարացնելու նրանց տրամադրվածության հետ: Հատկապես աչքի են ընկում երկու խմբեր, դրանք են՝ ընդհանուր միջնակարգ կրթությամբ տղամարդիկ և միջին ու բարձրագույն կրթությամբ տղամարդիկ Ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցող տղամարդ հարցվածների մասնաբաժինը, ովքեր արդարացնում են ինտիմ կին զուգընկերոջը տղամարդու ծեծելը, 2, 3 կամ նույնիսկ 6 անգամ գերազանցում է միջին

ու բարձրագույն կրթությամբ տղամարդ հարցվածներին (վերջին դեպքում խոսքը վերաբերում է այն իրադրությանը, երբ տղամարդը խփում է կնոջը սեքսից հրաժարվելու պատճառով,. Սա կազմում է համապատասխանաբար 12.5% և 2.0%): Առաջին երկու պնդման (կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն ընտանիքի պահպանման և որոշ դեպքերում կինն արժանի է ծեծի ենթարկվելուն) հետ համաձայնելու համապատասխան տոկոսաչափերը 75.1% ընդդեմ 24.7% և 50.0% ընդդեմ 28.2% են: Միակ բացառությունը կնոջ անհավատարմության « հատուկ դեպքն է», մեծամասամբ այն պատճառով, որ աղյուսակում հարցվածների կեսից ավելին արդարացնում են կնոջը հարվածելն այդ իրադրությունում: Այնուամենայնիվ, նույնիսկ այդ դեպքում ընդհանուր միջնակարգ կրթությամբ տղամարդ հարցվածների տոկոսաչափը 1.5 անգամ գերազանցում է միջին ու բարձրագույն կրթությամբ տղամարդկանց (84.4% ընդդեմ 51.4%):

Ինչ վերաբերում է ***կրթական գործոնին***, ապա կին հարցվածների դեպքում ևս այն նշանակալի է և գործում է ըստ հստակ միատարր ձևանմուշի: Ինչպես և տղամարդկանց դեպքում, կին հարցվածների կրթամակարդակը հակադարձաբար փոխկապակցված է (և կրկին առանց բացառության) իրենց տրամադրվածության հետ համաձայնելու, որ տղամարդիկ կարող են իրավասու լինել ֆիզիկական բռնություն գործադրել իրենց ինտիմ կին զուգընկերոջ հանդեպ: Ավելի բարձր կրթամակարդակ ունեցող կին հարցվածներն ավելի քիչ են հակված ներելու տղամարդու բռնությունը կին զուգընկերոջ հանդեպ: Այսպիսով, կին զուգընկերոջ հանդեպ տղամարդու բռնությունն արդարացնող հարցվածների մասնաբաժինը 1.5-ից 3 և նույնիսկ գրեթե մինչև 5 անգամ ավելի ցածր է միջին և բարձրագույն կրթություն ունեցող կանանց շրջանում՝ ի համեմատ ընդհանուր միջնակարգ կրթությամբ կանանց: Այպիսով, երկրորդ և երրորդ պնդումների դեպքում (« Որոշ դեպքերում կինն արժանի է ծեծի ենթարկվելուն» և « տղամարդը կարող է կնոջը ծեծել, եթե նա իրեն դավաճանում է») տոկոսները բաշխվում են համապատասխանաբար 15.1% ընդդեմ 23.7% և 39.9% ընդդեմ 57.4%: Ինճ վեչաբերում է առաջին պնդմանը (« կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն ընտանիքի միասնության»), ապա տոկասային հարաբերությունը հետևյալն է՝ 13.5% ընդդեմ 37.1% , իսկ չորրորդ պնդման դեպքում (« տղամարդը կարող է հարվածել կնոջը, եթե վերջինս հրաժարվում է իր հետ սեքսով զբաղվել»)՝ 1.5%

ընդդեմ 5.6%: Սա հատկապես տպավորիչ է՝ ելնելով այն փաստից, որ ի տարբերություն տղամարդկանց՝ կին հարցվածների բավականին փոքր մասնաբաժինն է համաձայնել վերոհիշյալ պնդումների հետ, որոնք արդարացնում են տղամարդու բռնությունը կին զուգընկերոջ հանդեպ:

Աղյուսակ 6. Սեռական զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության նկատմամբ վերաբերմունքը

Հետևյալ պնդումների հետ համամիտ կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունն ***ըստ կրթության***

Բոլոր այն տղամարդկանց և կանանց տոկոսային բաշխվածությունն ըստ կրթական գործոնի, ովքեր ***համաձայն են***, որ սեռական զուգընկերը/ ամուսինը կարող է որոշակի պատճառով արդարացվել իր կնոջը/զուգընկերոջը խփելու կան ծեծելու համար *										
Տղամարդը կարող է արդարացվել իր կնոջը ծեծելու կամ խփելու դեպքում, քանի որ.										
Կենսագրական բնութագրիչներ	Կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն ընտանիքի միասնության		Որոշ դեպքերում կինը ծեծի է արժանի		Եթե կինը տղամարդուն դավաճանում է, ապա նա կարող է նրան խփել		Տղամարդը կարող է խփել կնոջը, եթե նա հրաժարվում է իր հետ սեքսով զբաղվել		Տղամարդկանց թիվը N = 767	Կանանց թիվը N = 850
Կրթությունը	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ
Հիմնական	(75.1)	*	(50.0)	*	(84.4)	*	(12.5)	*	**32**	**14**
Միջնակարգ	50.9	37.1	38.0	23.7	65.0	57.4	6.9	5.6	**403**	**324**
Միջին մասնագիտական	49.2	28.2	34.1	22.9	57.1	51.0	6.4	5.3	**126**	**245**
Բարձրագույն	24.7	13.5	28.2	15.1	51.4	39.9	2.0	1.2	**206**	**266**
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թիվը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:										

Այսպիսով, ինչպես վկայում են ըստ *կրթական գործոնի* բաշխված տղամարդ և կին հարցվածների խմբերը, ինտիմ զուգընկերոջ բռնության հանդեպ վերաբերմունքի դինամիկան նույնն է (տես նաև **Աղյուսակ 6**). Անհրաժեշտ է նաև նշել, որ միջին մասնագիտական կրթությամբ կին և տղամարդ հարցվածները շատ ավելի մոտ են միջնակարգ կրթություն ունեցողներին, քան բարձրագույն կրթությամբ անձանց

(երրորդ պնդման միակ բացառությամբ, որտեղ միջին մասնագիտական կրթությամբ տղամարդ հարցվածների տոկոսը փոքր-ինչ մոտ է բարձրագույն, և ոչ թե միջնակարգ կրթություն ունեցողներին):

Հարցվածների երկու խմբի մոտ էլ ավելի շերտավորված արդյունք է նկատվում *կրթության,* քան թե տարիքային գործոնի պարագայում: Ողջ ընտրանքի տվյալները ևս հաստատում են այն վարկածը, որ կրթությունը (մասնավորապես բարձրագույն կրթությունը) բախտորոշ դեր ունի կանանց դեմ ինտիմ զուգընկերոջ գործադրած բռնության «իրավազորության» նկատմամբ հարցվածների տեսակետների և վերաբերմունքի ձևավորման հարցում, և որ սա կարծրատիպերի և նախապաշարմունքների դեմ էֆեկտիվ միջոց է: Ինչպես և այլ բռնությանն առնչվող զարգացումների դեպքում, այստեղ ևս կրթությունը նշանակալի ազդեցություն ունի հարցվածների տեսակետների վրա:

Պարզ է, որ կրթական գործոնը վերաբերմունքի ձևավորման հարցում միակը չէ: Այնուհանդերձ այն նույնքան կարևոր և շերտավորման դերակատարում ունեցող գործոն է, որքան սեռը. միակ տարբերությունը կայանում է նրանում, որ սեռը կենտրոնանում է երկու սեռերի տարբերությունների վրա, իսկ կրթությունը երևան է հանում *միևնույն* սեռերի միջև խմբում առկա տարբերությունները: Ողջ ընտրանքի համար կրթությունն անգամ ավելի տարբերակիչ գործոն է, քան սեռը, քանի որ տղամարդ և կին հարցվածների առավելագույն տարբերությունը մոտ 16% է, մինչդեռ ամենացածր և ամենաբարձր կրթամակարդակ ունեցողների տարբերությունը հասնում է 25%, 37% և, անգամ, առավելագույնը 55%-ի[57]:

***

Ամուսնական կարգավիճակի գործոնը միշտ չէ, որ միատեսակ և անմիջական ազդեցություն է ունենում տղամարդկանց՝ ինտիմ զուգընկերոջ նկատմամբ բռնության գործադրման վերաբերյալ վերաբերմունքի վրա: Կախված պնդումից՝ տղամարդ հարցվածների մեկ այլ խումբ կարող է հանդես գալ գենդերային հավասարության կամ էլ անհավասարության դիրքերից: Օրինակ, հանուն ընտանիքի միասնության բռնության հանդեպ կնոջ հանդուրժողականության կողմնակիցներն ամենափոքր տոկոսն են կազմում այն տղամարդ հարցվածները, ովքեր *ընկերուհի ունեն*, բայց

[57] Տե՛ս Աղյուսակ J –ի ***Կրթություն*** սեկցիայում զետեղված տվյալները:

համատեղ կյանք չեն վարում (35.7%): Իսկ ինչ վերաբերում է կնոջ՝ որոշակի դեպքերում ծեծի արժանի լինելուն, ապա այս պնդման կողմնակիցները *չամուսնացած* տղամարդիկ են (28.1%), մինչդեռ մյուս երկու պնդումները / «Եթե կինն ամուսնուն դավաճանում է, նա կարող է կնոջը խփել» և «Տղամարդը կարող է խփել կնոջը, եթե նա հրաժարվում է իր հետ սեքսով զբաղվել» կողմնակիցներ են գտնում գրանցված և քաղաքացիական կարգով ամուսնացած տղամարդկանց շրջանում (համապատասխանաբար 39.0% և 3.6%):

Մյուս կողմից՝ ամուսնուց/ընկերոջից բաժանված տղամարդ հարցվածները հետևողականորեն հանդես են գալիս գենդերային անհավասարության դիրքերից: Նրանց երկու երրորդը ոչ միայն համամիտ են առաջին 3 պնդումներին (համապատասխանաբար 66.7%, 62.5% և 70.8%) , այլև բոլոր դեպքերում ամենաբարձր տոկոսն են կազմում և սովորաբար զգալիորեն գերազանցում են ըստ ամուսնական կարգավիճակի բաշխված տղամարդ հարցվածների մնացած բոլոր ենթախմբերին: Օրինակ, ինչ վերաբերում է 4րդ պնդմանը, տղամարդկանց 16.6% -ը համաձայն են դրա հետ: Թեև սա ընթանրապես և հատկապես առաջին 3 պնդումների տոկոսի համեմատությամբ բարձր տոկոս չի կազմում, այն այնուամենայնիվ 2-ից 4 անգամ գերազանցում է տղամարդ հարցվածների այլ խմբերի տոկոսաչափերը:

Անհրաժեշտ է նաև նշել, որ կնոջից/ ընկերուհուց բաժանված տղամարդ հարցվածները մշտապես հանդես են գալիս որպես գենդերային անհավասարության ամենամեծ կողմանկիցներ և ոչ միայն ամուսնական կարգավիճակի հիման վրա բաշխված տղամարդ հարցվածների խմբերի շրջանում: ***Նրանք հանդես են գալիս իբրև ամենաանզիջում վերաբերմունքի և ամենաթողության կողմնակիցները՝ ողջ ընտրանքի տղամարդ հարցվածների այլ խմբերի համեմատությամբ՝ բաշխված ըստ 5 հինական կենսագրական բաղադրիչներից որևէ մեկի (տարիք, կրթություն, ամուսնական կարգավիճակ, բնակության վայր և զբաղվածություն):***

Ամենայն հավանականությամբ իրենց ինտիմ զուգընկերոջ հանդեպ բռնությունը և բռնության նկատմամբ վերաբերմունքն են այդ տղամարդկանց բաժանությանը նպաստող գործոն դարձել: Սակայն չի բացառվում նաև, որ բաժանության դառը փորձն է ինչ-որ կերպ արմատականացրել այդ տղամարդկանց վերաբերմունքը ինտիմ զուգընկերոջ բռնության նկատմամբ:

Ամուսնական կարգավիճակի գործոնը միատեսակ ազդեցություն է թողնում կին հարցվածների որոշակի խմբի վրա, քանի որ այս խումբը բոլորովին հակված չէ համաձայնելու այս պնդումներին: Դա չամուսնացած կանանց խումբն է: Համաձայնություն հայտնողների տոկոսը զգալիորեն ցածր է և երբեմն կրկնակի կամ եռակի ցածր ըստ ամուսնական կարգավիճակի բաշխված կանանց այլ խմբերի համեմատությամբ: Միակ բացառությունը չորրորդ պնդումն է, որտեղ նրանք չնչին տոկոս են կազմում (1.6%), որը փոքր-ինչ մեծ է այրիների թվից (0.0%):

Նպաստող գործոնների թվում է նաև տարիքը: Ինչպես նշվել է ավելի վաղ, ամենաերիտասարդ կանայք ամենաքիչն էին հակված արդարացնելու տղամարդկանց գործադրած բռնությունը ինտիմ զուգընկերոջ հանդեպ: Չամուսնացած կանայք փոքրամասնություն են կազմում 25-34-, 35-49- և 50-59-տարեկանների տարիքային խմբում (համապատասխանաբար 11.9%, 5.5% և 4.0%): Միևնույն ժամանակ նրանք 18-24-տարեկանների տարիքային խմբի մոտ կեսն են կազմում (ավելի կոնկրետ՝ 53.4%):

Խնդրահարույց է կանանց գենդերային ամենակողմնակալ վերաբերմունքն ունեցող ենթախումբը տարորոշելը, քանի որ չկա միատարր ձևանմուշ: Ինչ վերաբերում է 3րդ և 4^{դդ} պնդումներին, ապա այստեղ գրանցված ամուսնությամբ կանայք են (համապատասխանաբար 56.7% և 5.6%), մինչդեռ 1ին և 2րդ պնդումների դեպքում՝ համապատասխանաբար (46.7%) այրիներն են և (26.0%) ամուսնուց/ ընկերոջից բաժանված կանայք:

Աղյուսակ 7. Սեռական զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության նկատմամբ վերաբերմունքը

Հետևյալ պնդումների հետ համաձայն կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունն ըստ ամուսնական կարգավիճակի

Բոլոր այն տղամարդկանց և կանանց տոկոսային բաշխվածությունն ըստ ամուսնական կարգավիճակի, ովքեր ***համաձայն են***, որ սեռական զուգընկերը/ ամուսինը կարող է որոշակի պատճառով արդարացվել իր կնոջը/զուգընկերոջը խփելու կան ծեծելու համար *										
Տղամարդը կարող է արդարացվել իր կնոջը ծեծելու կամ խփելու դեպքում, քանի որ.										
Դեմոգրաֆիկ բնութագրիչներ	ԿԻնը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն ընտանիքի միասնության		Որոշ դեպքերում կինը ծեծի է արժանի		Եթե կինը տղամարդուն դավաճանում է, ապա նա կարող է նրան խփել		Տղամարդը կարող է խփել կնոջը, եթե նա հրաժարվում է իր հետ սեքսով զբաղվել		Տղամարդ կանց թիվը N = 767	Կանանց թիվը N = 850
Ամուսնական կարգավիճակը	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ

Գրանցված ամուսնություն	45.3	31.3	36.2	23.5	39.0	56.7	5.2	5.6	**408**	533
Չգրանցված ամուսնություն	51.8	27.4	39.8	23.2	69.8	52.6	3.6	3.2	**83**	95
Ընկերուհի / ընկեր (համատեղ կյանք չեն վարում)	(35.7)	*	(35.7)	*	(50.0)	*	(7.2)	*	**28**	9
Չամուսնացած	37.5	12.1	28.1	11.3	60.1	30.7	6.1	1.6	**213**	124
Բաժանված/ ամուսնալուծված	(66.7)	22.0	(62.5)	26.0	(70.8)	38.0	(16.6)	2.0	**24*** **	50
Այրի	*	(46.7)	*	(13.4)	*	(36.6)	*	(0.0)	**2**	30
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թիվը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:										

Կին և տղամարդ հարցվածների վերաբերմունքի ուսումնասիրության հետևանքով բացահայտված օրինաչափությունների համեմատությունը (տե՛ս նաև **Աղյուսակ 7**) ցույց է տալիս, որ մինչ տղամարդկանց դեպքում միակ միատեսակ օրինաչափությունը ամենակողմնակալ վերաբերմունք ունեցողներին է առնչվում (կնոջից/ընկերուհուց բաժանված տղամարդիկ), ապա կանանց դեպքում ճիշտ հակառակն է: Միակ միատեսակ օրինաչափությունն այն կին հարցվածների շրջանում է, ովքեր ամենաանկողմնակալն են (չամուսնացած կանայք):

Կին և տղամարդ հարցվածների միջև տարբերություններն այնքան զգալի են, որ ողջ ընտրանքի տվյալների բաշխումն ըստ ամուսնական կարգավիճակի (այսինքն՝ տղամարդկանց և կանանց վերաբերմունքների համակցությունը) կին և տղամարդ հարցվածների համար ստեղծում է գրեթե խորթ մի պատկեր:

***

Բնակության գործոնի ազդեցությունը նշանակալի դեր ունի տղամարդկանց պարագայում և բացահայտում է միատեսակ օրինաչափություն: Ընտրանքի Երևանաբնակ տղամարդիկ ամենասակավաթիվն են, իսկ գյուղաբնակներն ամենաշատն են հակված համաձայնելու իրենց կին զուգընկերոջ հանդեպ տղամարդկանց ֆիզիկական բռնության մասին պնդումներին: Այս տարբերությունը կամ զգալի է (ինչպես, օրինակ, կնոջ անհավատարմության դեպքում տղամարդու բռնության արդարացումը, որտեղ տոկսային բաշխվածությունը հետևյալն է՝

համապատասխանաբար 52.3% և 64.5%) կամ ահռելի (ինչպես, օրինակ, այն պնդումները, որոնց համաձայն կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն ընտանիքի միասնության՝ համապատասխնաբար 31.0% և 65.4% բաշխվածությամբ, և որ «տղամարդը կարող է խփել կնոջը, եթե նա հրաժարվում է իր հետ սեքսով զբաղվել»՝ համապատասխանաբար 3.1% և 7.4%): Նույնիսկ այն պնդման դեպքում, որ որոշ դեպքերում կինը ծեծի է արժանի, որտեղ տղամարդ հարցվածների բոլոր 3 խմբերի տոկոսները գրեթե համընկնում են, տարբերությունն այդուհանդերձ կրկնակի անգամ ավել է, քան սխալի թույլատրելի շեմը:

Այլ քաղաքային բնակավայրերի, բացառությամբ Երևանի, տղամարդ հարցվածները, բացի առաջին պնդումից, իրենց տվյալներով ամենամոտն են գյուղաբնակներին՝ բացառությամբ Երևանամերձ բնակավայրերի: Այլ կերպ ասած, այլ քաղաքային բնակավայրերի /բացառությամբ Երևանի/ տղամարդկանց մասնաբաժինը, ովքեր կարծրատիպային հայացքներ ունեն ինտիմ զուգընկերոջ բռնության վերաբերյալ, որը մեծամասամբ քիչ է տարբերվում գյուղաբնակների տեսակետներից, ովքեր գենդերային հիմնահարցում ամենակողմնակալ խումբն են կազմում: Երևանաբնակ տղամարդիկ ամենաանկողմնակալ խումբն են կազմում ինտիմ զուգընկերոջ բռնության հանդեպ վերաբերմունքի դիտանկյունից:

Բնակության գործոնը շատ նշանակալի է և ակնհայտորեն տարբերակում է կին հարցվածների 3 խմբեր: Երևանաբնակ կին հարցվածները գենդերային հիմնահարցում ամենաանկողմնակալ խումբն են կազմում կանանց դեմ ինտիմ զուգընկերոջ ֆիզիկական բռնության գործադրման մասին իրենց պատկերացումներով, մինչդեռ գյուղական բնակավայրերի կանայք ամենաանկողմնակալ խումբն են կազմում: Ինչպես երևում է հետազոտության տվյալներից, այս երկու խմբերի միջև տարբերությունը նշանակալի է՝ 1.5-ից 2 և ավելի անգամ, ամենամեծ տարբերությունը գրանցելով այն պնդման առնչությամբ, ըստ որի կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն ընտանիքի միասնության (համապատասխանաբար 14.8% և 41.5%) , ինչպես նաև կնոջ անհավատարմության դիմաց ֆիզիկական բռնությամբ հատուցելու մասին պնդման դեպքում (համապատասխանաբար 37.8% և 64.1%): Այլ քաղաքային բնակավայրերի հարցվածները մեծամասամբ միջանկյալ դիրք են զբաղեցնում:

Աղյուսակ 8. Սեռական զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության նկատմամբ վերաբերմունքը

Հետևյալ պնդումների հետ համաձայն կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունն ըստ բնակության վայրի

Բոլոր այն տղամարդկանց և կանանց տոկոսային բաշխվածությունն ըստ բնակության վայրի, ովքեր ***համաձայն են***, որ սեռական զուգընկերը/ ամուսինը կարող է որոշակի պատճառով արդարացվել իր կնոջը/զուգընկերոջը խփելու կան ծեծելու համար *										
Տղամարդը կարող է արդարացվել իր կնոջը ծեծելու կամ խփելու դեպքում, քանի որ.										
Կենսագրական բնութագրիչներ	ԿԻՆը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն ընտանիքի միասնության		Որոշ դեպքերում կինը ծեծի է արժանի		Եթե կինը տղամարդուն դավաճանում է, ապա նա կարող է նրան խփել		Տղամարդը կարող է խփել կնոջը, եթե նա հրաժարվում է իր հետ սեքսով զբաղվել		Տղամարդկանց թիվը N = 767	Կանանց թիվը N = 850
Բնակության վայրը	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ
Երևան	31.0	14.8	33.0	16.0	52.3	37.8	3.1	2.6	**258**	**312**
Այլ քաղաքային	46.4	28.0	35.4	23.2	63.7	50.4	6.6	4.1	**226**	**246**
Գյուղական	65.4	41.5	37.1	24.4	64.5	64.1	7.4	6.9	**283**	**292**
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թիվը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:										

Կին և տղամարդ հարցվածների վերաբերմունքի համեմատական վերլուծությունը (տե՛ս նաև **Աղյուսակ 8**) երևան է հանում անմիջական միատեսակ օրինաչափություն, որը նաև արտացոլված է ողջ ընտրանքում: Երևանի բնակիչները (տղամարդ և կին հարցվածներն առանձնաբար և ընտրանքում երկու սեռերը միասին վերցված) *ամենաքիչն են* հակված ինտիմ զուգընկերոջ հանդեպ տղամարդու գործադրած բռնությունն արդարացնելուն և գյուղաբնակներն *ամենաշատն են* հակված ներողամտությանը, մինչդեռ այլ քաղաքային բնակավայրերի /ոչ Երևանի/ բնակիչները միջանկյալ դիրքում են, չնայած որ միտվածությունը դեպի գյուղական բնակավայրերի բնակիչներն է:

Անհրաժեշտ է նաև նշել, որ քանի որ Երևանաբնակ կանանց մեկ երրորդից քիչ ավելն է (37.8%) համաձայն այն պնդմանը, որ *տղամարդը կարող է խփել կնոջը, եթե նա իրեն դավաճանում է*, ողջ ընտրանքի՝ պնդմանը համակարծիք հարցվածների տոկոսը զգալիորեն ցածր է 50%-ից, այսպիսով հակադարձելով տոկոսային հարաբերությամբ

գերակշռող ավելի կարծրատիպային մտածողություն ունեցող տղամարդ հարցվածներին:

***

Զբաղվածության գործոնը տղամարդկանց համար անակնկալ և անկանխատեսելի ազդեցություն ունեցավ: Հիմնական տարբերությունը ոչ թե աշխատանք ունեցող և գործազուրկ, կամ օրինական աշխատանք ունեցող և ոչ պաշտոնապես աշխատող տղամարդկանց միջև է, այլ ուսանող և երբևէ աշխատանք չունեցած տղամարդ հարցվածների միջև: Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ *ուսանողները գենդերային հիմնահարցում տղամարդկանց ամենաանկողմնակալ խումբն են:* Նրանց միայն 16.7% է համաձայն այն պնդումներին, որ «Կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն ընտանիքի միասնականության»և «Որոշ դեպքերում կինն արժանի է ծեծի»: Այս տոկոսը 3 անգամ պակաս է տղամարդ հարցվածների այլ խմբերի մոտ առաջին պնդման դեպքում և առնվազն 1.5-2 անգամ՝ երկրորդ պնդման դեպքում: Ուսանողներից ոչ մեկը չէին խրախուսում այն միտքը, որ տղամարդը կարող է խփել կնոջը իր հետ սեքսով զբաղվելուց հրաժարվելու համար: Ինչ վերաբերում է ինտիմ կին զուգընկերոջն անհավատարմության համար բռնության ենթարկելուն, ուսանողները տղամարդ հարցվածների միակ խումբն են կազմում, որտեղ պնդմանը համաձայն անձինք կեսից պակաս են (41.7%): Մյուս խմբերում պնդման հետ համաձայնողների թիվը տատանվում էր 57.4% -ից 70.0%:

Մյուս խումբը, որն ընդհանուր առմամբ բավականին արդար միտվածություն ունի օինական աշխատանք ունեցող տղամարդիկ են: Պնդումների հետ համաձայնողների մասնաբաժինն ավելի ցածր է կամ փաստացի հավասար է հետազոտության ողջ ընտրանքի տղամարդկանց տոկոսին:

Տղամարդկանց երկու խմբեր «մրցում» են գենդերային ամենաանարդար լինելու համար:

Առաջին խմբում երբևէ աշխատանք չունեցած տղամարդիկ են: Այս խումբը ներկայացնում է է 2 պնդումների հետ համամիտ տղամարդկանց ամենամեծ մասնաբաժինը (երրորդ և չորրորդ պնդումների հետ համամիտ տղամարդկանց տոկոսը համապատասխանաբար 70.0% և 15.0% է):

Երկրորդ ամենաանարդար խումբը ընդհանուր առմամբ ներկայումս աշխատանք չունեցող տղամարդիկ են: Խումբը ներկայացնում է հարցվածների ամենամեծ մասնաբաժինը, ովքեր համաձայնվել էին առաջին (51.8%) և երկրորդ (37.0%) պնդումներին:

Այսպիսով, հարկ է նշել, որ այն տղամարդիկ, ովքեր մասնագիտական կրթություն են ստանում կամ օրինական աշխատանք ունեն միտված են չարդարացնել ինտիմ զուգընկերոջ բռնությունը:

Զբաղվածության գործոնի ազդեցությունը կանանց վրա իրացվում է ըստ հստակ ուրվագծված և միատեսակ օրինաչափության: Առանց բացառությունների՝ 2 խմբերն էլ գենդերային հարցում ամենակողմնակալ և ամենաանկողմնակալ վերաբերմունքի արտահայտման առաջատարն են: Դրանք ուսանողներն են և կանայք, ովքեր ենթեք չեն աշխատել:

Ուսանեղուհիները նվազագույն հանդուրժողականություն են դրսևորում կին զուգընկերոջ հանդեպ տղամարդու բռնարարքների նկատմամբ: Ինչ վերաբերում է 3 պնդումներին, ապա դրանց հետ համաձայն ուսանողուհիների մասնաբաժինն արտահայտված է միանիշ թվերով (համապատասխանաբար 2.1%, 4.2% և 2.1% առաջին, երկրորդ և չորրորդ պնդումների): Այլ խմբերում ամենացածր տոկոսը 18.9% է առաջին պնդման համար, 17.6% երկրորդի և 2.1% չորրորդի: Երրորդ՝ ամենահակասական պնդման դեպքում նույնիսկ, որը վերաբերում է դավաճան կնոջը ֆիզիկական բռնության ենթարկելուն, համաձայնությունը տված ուսանողուհիների տոկոսը շատ ավելի քիչ է մյուս խմբերի համեմատությամբ (29.2%, մինչդեռ մյուս խմբերի մանսաբաժինները տատանվում են 38.9%-ից 64.4%):

Երկրորդ ամենացածր տոկոսային ցուցանիշը գրանցած զուգընկերոջ բռնությունն արդարացնող կանանց խումբը ներառում է օրինական աշխատանք ունեցող կանանց: Թեպետև զիջելով ուսանողներին՝ նրանց վերաբերմունքը մշտապես ավելի անկողմնակալ է, քան կին հարցվածների այլ խմբերում:

Իբրև խումբ՝ երբևէ աշխատանք չունեցած կանայք ամենաշատն էին հակված արդարացնելու գենդերային բռնությունը: Նրանց մոտ մեկ երրորդը կամ ավելին համաձայն էին այն պնդումներին, որ «Կինը պետք է հանդուժի բռնություն՝ հանուն ընտանիքի միասնության պահպանման» և «Որոշ դեպքերում կինն արժանի է ծեծի

ենթարկվելուն» , իսկ երկու երրորդը՝ այն պնդմանը, որ տղամարդը կարող է խփել կնոջը, եթե նա դավաճանում է իրեն: Անհրաժեշտ է նաև նշել այն փաստը, որ զգալի տարբերություն կա նրանց և ոչ միայն ուսանողների, այլև այլ խմբերի միջև ևս: Մինչդեռ, ինչ վերաբերում է չորրորդ պնդմանը, ապա դրա հետ համաձայնողների տոկոսը ինքնըստինքյան մեծ չէ (8.7%), այնուամենայնիվ այն 2-ից 3 անգամ ավել է, քան կին հարցվածների մյուս խմբերում:

Երկրորդ ամենակողմնակալ խումբը գործազուրկ կանայք են: Չնայած նրանք մոտ չեն առաջին խմբին, նրանք առանձնանում են՝ ի համեմատություն կին հարցվածների այլ խմբերի:

Աղյուսակ 9. Սեռական զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության նկատմամբ վերաբերմունքը

Հետևյալ պնդումների հետ համամիտ կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունն ***ըստ զբաղվածության***

Բոլոր այն տղամարդկանց և կանանց տոկոսային բաշխվածությունն ըստ զբաղվածության, ովքեր ***համաձայն են*** , որ սեռական զուգընկերը/ ամուսինը կարող է որոշակի պատճառով արդարացվել իր կնոջը/զուգընկերոջը խփելու կան ծեծելու համար *										
Տղամարդը կարող է արդարացվել իր կնոջը ծեծելու կամ խփելու դեպքում, քանի որ.										
Կենսագրական բնութագրիչներ	Կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն ընտանիքի միասնության		Որոշ դեպքերում կինը ծեծի է արժանի		Եթե կինը տղամարդուն դավաճանում է, ապա նա կարող է նրան խփել		Տղամարդը կարող է խփել կնոջը, եթե նա հրաժարվում է իր հետ սեքսով զբաղվել		Տղամարդկանց թիվը N = 767	Կանանց թիվը N = 850
Զբաղվածությունը	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ **	Կ
Երբեք չի աշխատել	(50.0)	38.6	(25.0)	29.8	(70.0)	64.4	(15.0)	8.7	**40**	**171**
Ուսանող	(16.7)	2.1	(16.7)	4.2	(41.7)	29.2	(0.0)	2.1	**24*** **	**48**** **
Գործազուրկ	51.8	30.9	37.0	21.3	57.4	53.4	7.2	4.5	**249**	**356**
Գրանցված աշխատող	34.4	18.9	36.6	17.8	59.4	38.9	3.6	2.1	**224**	**185**
Չգրանցված աշխատող	48.9	29.4	36.1	17.6	67.4	48.5	5.3	2.9	**227**	**68**
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թիվը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:										

** Քանի որ «աշխատանքի և ուսման համատեղում» կատեգորիայում կային ընդամենը 2 հարցվածներ և 1 հարցված՝«Երեխայի խնամքի կամ այլ տեսակի արձակուրդում» կատեգորիայում, այս կատեգորիաները չեն ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 764).

*** Քանի որ «աշխատանքի և ուսման համատեղում» կատեգորիայում կար 1 հարցված և 2 հարցվածներ, ովքեր չեն պատասխանել կամ հրաժարվել են պատասխանել և 19 հարցվածներ, ովքեր «Երեխայի խնամքի կամ այլ տեսակի արձակուրդում էին գտնվում», այս կատեգորիաները չեն ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 828):
**** Սահմանագծային դեպքերի տվյալները լրիվ վավեր են համարվում:

Կին և տղամարդ հարցվածների վերաբերմունքի համեմատական վերլուծությունը (տե՛ս նաև Աղյուսակ 10) բացահայտում է իրապես նմանօրինակ միտվածություն այն խմբերի դեպքում, ովքեր ամենաշատը կամ ամենաքիչն են հակված արդարացնելու ինտիմ զուգընկերոջ բռնությունը:

Ե՛վ կանանց, և՛ տղամարդկանց համար գենդերային ամենաանարդար խումբն են կազմում երբեք աշխատանք չունեցած հարցվածները, որոնց (տղամարդ հարցվածների դեպքում՝ անմիջապես) հետևում են գործազուրկ հարցվածները:

Գենդերային ամենաարդար խումբը (կրկին թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց պարագայում) ուսանողներն են, որոնց հետևում են (մեծամասամբ տղամարդ հարցվածների դեպքում, իսկ կին հարցվածների դեպքում՝ անմիջապես) գրանցված աշխատողները:

Ըստ զբաղվածության բաշխված կին հարցվածների խմբերը շատ ավելի կայուն վերաբերմունք ունեն, քան ընտրանքի տղամարդ հարցվածները: Թեև ընդհանուր առմամբ միտվածությունները համանման են, տղամարդ հարցվածների դեպքում կան մի շարք բացառություններ՝ խմբերի ներքին կազմության խնդիրներ և ոչհստակ տարանջատումներ, մինչդեռ ակնառու է կանանց խմբերի ներքին ամբողջականությունը և խմբերի հստակ տարանջատումը:

Սա կարելի է նաև ցույց տալ չգրանցված աշխատող կանանց օրինակով: Հիմնվելով նախկին քննարկմանը՝ ենթադրվում է, որ նրանք միջանկյալ դիրք են զբաղեցնում հարցվածների գենդերային «ամենաանկողմնակալ» և «ամենակողմնակալ» 2 խմբերի միջև: Կին հարցվածների պարագայում այս խումբն իրոք միջանկյալ դիրքում է, որը վերահաստատվում է կին հարցվածների ողջ ընտրանքի համար միջինացված («ամբողջական») տվյալների հետ գրեթե համընկնումով: Տղամարդ հարցվածների դեպքում դինամիկան այդքան էլ ուղիղ միտվածություն չունի և երրորդ պնդմանն տոկոսային հարաբերությունը ոչ միայն երկրորդ ցուցանիշն է ապահովում ամենակողմնակալ գենդերային խմբում, այլև տարբերվում է և զգալիորեն

գերազանցում ընտրանքի տղամարդկանց սույն պնդմանը վերաբերող միջին տվյալները (67.4% ընդդեմ 60.9%):

Տղամարդ հարցվածների խմբերում այս անհամապատասխանությունները ևս ազդում են հարցվածների ողջ ընտրանքի ընդհանուր պատկերի վրա: Մինչ ակնհայտաբար գենդերային ամենաանկողմնակալ խումբն են կազմում ուսանողները, ում հետևում են գրանցված աշխատողները, իրադրությունը լրիվ այլ է գենդերային կողմնակալ խմբերի պարագայում: Ընդհանուր առմամբ, կրկին ամենակողմանակալ խումբն են կազմում երբևէ աշխատանք չունեցած հարցվածները: Այնուամենայնիվ այդ խմբին անմիջապես հետևում են ոչ թե գործազուրկները, այլ ոչ պաշտոնապես աշխատանք ունեցողներ հարցվածները: Հիմնականում այս 2 խմբերն են առաջատար դիրքերում՝ իբրև գենդերային հարցում ամենակողմնակալ խմբեր:

Աղյուսակ 10. Սեռական զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության նկատմամբ վերաբերմունքը

Բոլոր այն տղամարդկանց և կանանց տոկոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների, ովքեր ***համաձայն են***, որ սեռական զուգընկերը/ ամուսինը կարող է որոշակի պատճառով արդարացվել իր կնոջը/զուգընկերոջը խփելու կան ծեծելու համար *					
Տղամարդը կարող է արդարացվել իր կնոջը ծեծելու կամ խփելու դեպքում, քանի որ.					
Կենսագրական բնութագրիչներ	Կնը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն ընտանիքի միասնության	Որոշ դեպքերում կինը ծեծի է արժանի	Եթե կինը տղամարդուն դավաճանում է, ապա նա կարող է նրան խփել	Տղամարդը կարող է խփել կնոջը, եթե նա հրաժարվում է իր հետ սեքսով զբաղվել	Հարցվածների թիվը **N = 1,617**
Տարիքը					
18-24	20.3%	21.3%	54.2%	3.8%	**286**
25-34	34.3%	27.8%	62.3%	3.1%	**461**
35-49	41.3%	31.0%	55.3%	6.7%	**541**
50-59	41.4%	27.7%	47.1%	6.4%	**329**
Կրթությունը**					
Հիմնական	(73.9%)	(45.6%)	(82.6%)	(17.4%)	**46**
Միջնակարգ	44.7%	31.7%	61.6%	6.4%	**727**
Միջին մասնագիտական	35.3%	26.7%	53.1%	5.6%	**371**

Բարձրագույն	18.4%	20.8%	44.9%	1.4%	**472**
Ամուսնական կարգավիճակը* **					
Գրանցված ամուսնություն	37.4%	29.1%	57.7%	5.4%	**941**
Չգրանցված ամուսնություն	38.8%	30.9%	60.7%	3.3%	**178**
Ընկեր (համատեղ կյանք չեն վարում)	(27.0%)	(27.0%)	(45.9%)	(8.1%)	**37**
Չամուսնացած	28.1%	22.0%	49.2%	4.5%	**337**
Բաժանված/ ամուսնալուծված	36.5%	37.8%	48.6%	6.8%	**74**
Այրի	(46.9%)	(15.7%)	(37.5%)	(0.0%)	**32**
Բնակության վայրը					
Երևան	22.1%	23.7%	44.4%	2.8%	**570**
Այլ քաղաքային	36.9%	29.1%	56.7%	5.3%	**472**
Գյուղական	48.4%	30.7%	65.3%	7.2%	**575**
Զբաղվածությունը ****					
Երբեք չի աշխատել	40.7%	29.0%	65.4%	9.9%	**211**
Ուսանող	7.0%	8.3%	33.3%	1.4%	**72**
Գործազուրկ	39.5%	27.8%	55.1%	5.6%	**605**
Գրանցված աշխատող	27.4%	28.1%	50.1%	2.9%	**409**
Չգրանցված աշխատող	44.4%	31.8%	63.1%	4.8%	**295**
Ընդամենը	**35.7%**	**27.7%**	**55.4%**	**5.1%**	**1,617**
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա:					

* Տվյալների հեշտ ներկայացման, համեմատության և վերլուծության նպատակով «խիստ կողմ եմ» և «կողմ եմ» պատասխանները միավորվել են՝ տրված պնդման հետ համամիտ հարցվածների տոկոսը որոշելու համար.

** Քանի որ «Տարրական կամ ավելի ցածր կրթություն» կատեգորիայում կար ընդամենը 1 հարցված, այդ կատեգորիան չի ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 1,616):
*** Քանի որ «Ոչ ֆորմալ միություն/ համատեղ կյանք» կատեգորիայում ընդամենը 18 հարցվածներ կային, այդ կատեգորիան չէր ներկայացվել (հետևաբար հարցվածների ընդհանուր թիվն այս սեկցիայում 1,599 է):
**** Քանի որ «ուսուցման համատեղում աշխատանքի հետ» կատեգորիայում կային ընդամենը 3 հարցվածներ, 20 հարցված «Երեխայի խնամքի կամ այլ տեսակի արձակուրդում» կատեգորիայում, 2 հարցված ընդհանրապես չէին պատասխանել, այս կատեգորիաները չեն ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում ընդհանուր թիվը կազմում է 1,592):

Կանանց դեմ բռնությունների բազմաթիվ ուսումնասիրություններ բացահայտել են, որ ինտիմ զուգընկերոջ բռնությունը ոչ միայն ԿԴԲ ամենատարածված ձևն է, այլև ԿԳԲ

գործադրումը և դրա նկատմամբ վերաբերմունքը սերտորեն փոխկապակցված են: Այսպիսով այդ փոխառնչակցությունը թույլ է տվել վարկած առաջ քաշել և այն հետևողականորեն քննել սույն հետազոտության շրջանակներում:

Առաջին հերթին այս փոխառնչակցությունը կարող է ուսումնասիրվել բռնարար վարքի դիրքերից, այսինքն՝ պարզել, թե արդյոք այն էական տարբերություն կա բռնարարաների վերաբերմունքի վրա գործած ազդեցության մեջ: Ստորև՝ **Աղյուսակ 11–ում** ներկայացված են տվյալներ ինտիմ զուգընկերոջ հանդեպ բռնություն գործած և չգործած տղամարդկանց վերաբերմունքի մասին դրա նկատմամբ:

Աղյուսակ 11. Տղամարդ հարցվածների տարբեր խմբերի վերաբերմունքը ինտիմ զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության նկատմամբ

Հետևյալ պնդումների հետ համաձայն տղամարդ հարցվածների տարբեր խմբերի տոկոսային բաշխվածությունը.

Այն տղամարդկանց տարբեր խմբերի տոկոսային բաշխվածությունը, ովքեր ***համաձայն են*** , որ սեռական զուգընկերը/ ամուսինը կարող է որոշակի պատճառով արդարացվել իր կնոջը/զուգընկերոջը խփելու կան ծեծելու համար					
Տղամարդը կարող է արդարացվել իր կնոջը ծեծելու կամ խփելու դեպքում, քանի որ.					
	Կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն ընտանիքի միասնության	Որոշ դեպքերում կինը ծեծի է արժանի	Եթե կինը տղամարդուն դավաճանում է, ապա նա կարող է նրան խփել	Տղամարդը կարող է խփել կնոջը, եթե նա հրաժարվում է իր հետ սեքսով զբաղվել	Տղամարդկանց թիվը
Ողջ ընտրանքի տղամարդկանց թիվը	**44.6%**	**35.2%**	**60.9%**	**5.8%**	**N = 767**
Տղամարդիկ, ովքեր ապտակել են կին սեռական զուգընկերոջը կամ շպրտել են որևէ բան, որը կարող էր նրան վնասել	**65.6%**	**61.1%**	**65.6%**	**10.0%**	**N = 90**
Տղամարդիկ, ովքեր ԵՐԲԵՔ չեն ապտակել կին սեռական զուգընկերոջը կամ չեն շպրտել որևէ բան, որը	**42.6%**	**33.2%**	**60.7%**	**4.7%**	**N = 596**

կարող էր նրան վնասել					
Տղամարդիկ, ովքեր հրել են կամ քաշքշել կին սեռական զուգընկերոջը	**62.0%**	**63.3%**	**64.6%**	**11.4%**	**N = 49**
Տղամարդիկ, ովքեր ԵՐԲԵՔ չեն հրել կամ քաշքշել կին սեռական զուգընկերոջը	**43.4%**	**33.3%**	**61.1%**	**4.6%**	**N = 606**
Տղամարդիկ, ովքեր խփել են կին սեռական զուգընկերոջը բռունցքով կամ որևէ բանով, որ կարող էր նրան վնասել	**(75.5%)**	**(75.5%)**	**(67.9%)**	**(10.7%)**	**N = 28**
Տղամարդիկ, ովքեր ԵՐԲԵՔ չեն խփել կին սեռական զուգընկերոջը բռունցքով կամ որևէ բանով, որ կարող էր նրան վնասել	**44.5%**	**35.3%**	**61.3%**	**5.2%**	**N = 654**
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա:					

Ինչպես երևում է Աղյուսակի տվյալներից, զգալի տարբերություն կա ՍԶԲ հանդեպ մի կողմից տղամարդ բռնարարների, մյուս կողմից ՍԶԲ չգործադրած ու ողջ ընտրանքը կազմող տղամարդկանց վերաբերմունքի միջև: (Հարկ է նաև նշել, որ ՍԶԲ չգործադրած տղամարդկանց վերաբերմունքը շատ մոտ է ողջ ընտրանքի տղամարդ հարցվածների վերաբերմունքին):

Ընդհանուր առմամբ բռնարարները 1.5 – 2 անգամ ավելի են հակված արդարացնելու ՍԶԲ -ն, քան թե ֆիզիկական ՍԶԲ երբևէ չգործադրած տղամարդիկ: Տարբերությունը հատկապես տպավորիչ է առաջին 2 հարցերի դեպքում իրենց ընդգրկման և սանդղակի պատճառով: Իրենց ինտիմ զուգընկերոջը ապտակած, հրած/ քաշքշած կամ խփած տղամարդկանց երկու երրորդը համաձայն են այն պնդումներին,

որ « *Կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն ընտանիքի միասնության*» և « *Որոշ դեպքերում կինն արժանի է ծեծի*», մինչդեռ հարցվածների կեսից զգալիորեն պակաս (իսկ երբեմն ընդամենը մեկ երրորդը), ովքեր ֆիզիկական ՍԶԲ չեն գործադրել, համաձայն են այս պնդումներին:

Միակ բացառությունն է կազմում կնոջ անհավատարմության խնդիրը: Սակայն, չնայած որ երկու խմբերի հարցվածների կեսից ավելին (ինչպես նաև տղամարդկանց ողջ ընտրանքը) համաձայն են այն պնդմանը, որ *տղամարդը կարող է խփել կնոջը, եթե նա իրեն դավաճանում է*, այնուամենայնիվ սույն պնդման հետ համաձայնողների թիվը 3.5%-6.5%-ով բարձր է ՍԶԲ գործադրողների շրջանում:.

Այսպիսով բավարար հիմքեր կան եզրակացնելու, որ սույն հետազոտության տվյալները ևս հաստատում են այն վարկածը, որ բռնարարքներ գործող տղամարդիկ, ում թիրախն են հանդիսանում ինտիմ զուգընկերները, ավելի շատ են հակված արդարացնելու ՍԶԲ -ն:

Երկրորդ՝ այս փոխառնչակցությունը կարելի է ուսումնասիրել ՍԶԲ նկատմամբ վերաբերմունքի դիրքերից, այն է՝ պարզել, թե արդյոք զգալի տարբերություն կա տղամարդկանց վրա հանդուրժողական և անհանդուրժողական վերաբերմունքների գործած ազդեցության միջև, որով դատապարտվում կան արդարացվում են բռնարարքները: Ստորև՝ **Աղյուսակ 12 –ում** ներկայացված են կին ինտիմ զուգընկերների հանդեպ ֆիզիկական բռնությունը դատապարտող կամ արդարացնող պնդումների հետ համաձայնություն կան անհամաձայնություն հայտնած տղամարդկանց ՍԶԲ վարքը:

Աղյուսակ 12. Կին սեռական զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության գործադրում ՍԶԲ դատապարտող կամ արդարացնող վերաբերմունք ունեցող տղամարդկանց կողմից

ՍԶԲ գործադրած տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունը, ովքեր համաձայն են հետևյալ պնդումների հետ.

Պնդմանը կողմ/դեմ		Տղամարդիկ, ովքեր ապտակել են կին սեռական զուգընկերոջը կամ շպրտել են որևէ բան, որը կարող էր նրան վնասել	Տղամարդիկ, ովքեր հրել են կամ քաշքշել կին սեռական զուգընկերոջը	Տղամարդիկ, ովքեր խփել են կին սեռական զուգընկերոջը բռունցքով կամ որևէ բանով, որ կարող էր նրան վնասել	**Տղամարդկանց թիվը**
Կինը պետք է հանդուրժի	Կողմ	**18.7%**	**15.6%**	**6.7%**	**N = 315**

բռնությունը՝ հանուն ընտանիքի միասնության	Դեմ	**8.3%**	**7.5%**	**1.9%**	**N = 374**
Որոշ դեպքերում կինը ծեծի է արժանի	Կողմ	**21.6%**	**19.6%**	**8.2%**	**N = 255**
	Դեմ	**7.9%**	**6.8%**	**1.6%**	**N = 428**
Եթե կինը տղամարդուն դավաճանում է, ապա նա կարող է նրան խփել	Կողմ	**13.8%**	**12.0%**	**4.5%**	**N = 426**
	Դեմ	**11.3%**	**10.5%**	**3.6%**	**N = 247**
Տղամարդը կարող է խփել կնոջը, եթե նա հրաժարվում է իր հետ սեքսով զբաղվել	Կողմ	**(24.3%)**	**(24.3%)**	**(8.1%)**	**N = 37**
	Դեմ	**11.2%**	**10.7%**	**3.6%**	**N = 637**
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա:					

Աղյուսակի տվյալները միանշանակորեն ցույց են տալիս, որ ՍԶԲ գործադրողների տոկոսը կայուն է և զգալիորեն բարձր այն տղամարդ հարցվածների թվում, ովքեր համաձայն են ՍԶԲ արդարացնող պնդումների հետ՝ ի համեմատություն անհամաձայնությունը հայտնողների: Կնոջ անհավատարմությանը վերաբերող պնդման «ավանդական» բացառությամբ, պնդումների հետ համաձայն տղամարդկանց թվում 2-ից 3 անգամ բարձր է այն տղամարդկանց մասնաբաժինը, ովքեր հաղորդել են իրենց կին զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության գործադրման մասին՝ ի տարբերություն անհամաձայնություն հայտնողների: Անգամ «բացառության» դեպքում բռնարարների ավելի մեծ մասնաբաժին են կազմում պնդումների հետ համամիտ տղամարդիկ՝ չնչին տարբերությամբ:

Այսպիսով, թեև դեռևս պարզ չէ, թե երկու գործոններից որը՝ ՍԶԲ գործադրումը, թե դրա հանդեպ հանդուրժողական վերաբերմունքն է առաջնային կամ երկրորդային կարևորության, թե արդյոք դրանք հավասարազոր ազդեցություն ունեն. Անտարակույս, դրանք երկուսն էլ արժեքավոր և, ըստ ամենայնի, փոխադարձաբար իրար խթանող գործոններ են:

Վերոշարադրյալ վերլուծությունից կարելի է անել հետևյալ եզրակացությունները:

Անձի դեմ ֆիզիկական բռնության գործադրումը, այդ թվում՝ կանանց դեմ բռնությունն ու հատկապես ընտանեկան բռնությունը, մարդու իրավունքների կոպիտ խախտում է և կարող է քրեորեն պատժելի հանցանք դիտարկվել: Թեև շատ կարևոր է կանխել կանաց դեմ բռնությունը և պատժել բռնարարներին քրեական, քաղաքացիական և ադմինիստրատիվ օրենսդրությամբ, գենդերային բռնության կանխարգելման ուղղությամբ տարվող աշխատանքներն էֆեկտիվ կլինեն միայն այն դեպքում, երբ լայն հասարակությունը մերժի հայրիշխանական կարծրատիպերն ու նորմերը և յուրացնի գենդերային հավասարության մշակույթի սկզբունքներն ու նորմերը:

Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ հայ տղամարդկանց զգալի տոկոսը դեռ հետևում են, ինչպես իրենց է թվում, ավանդական և մշակութային նորմերին, որոնք իրականում ժամանակավրեպ կարծրատիպեր են: Կախված կին զուգընկերոջ դեմ ֆիզիկական բռնության գործադրման հետևում կանգնած պատճառներից՝ տղամարդ հարցվածների մեկ երրորդից ավելին, կամ մոտ կեսը, կամ նույնիսկ ընտրանքի կեսից ավելին կողմնակալ վերաբերմունք ունեն գենդերային հավասարության վերաբերյալ: Նրանք արդարացնում են և ներություն շնորհում ինտիմ զուգընկերոջ նկատմամբ բռնության գործադրմանը՝ բացառությամբ այն իրադրության,երբ տղամարդը խփում է կնոջը իր հետ սեքսով զբաղվելուց հրաժարվելու համար: Այս բացառությունը ոչ միայն հիշարժան է, այլև փաստացիորեն եզակի տղամարդ և կին հարցվածների համակարծության տեսանկյունից, քանի որ այն միտքը, որ տղամարդը կարող է արդարացվել սեքսից հրաժարվելու պատճառով կնոջը խփելու համար *հավասարապես անընդունելի է* երկու սեռերի ներկայացուցիչների համար:

Այն տղամարդիկ, ովքեր ընդունում են «առնականության» նորմերը կամ հետևում դրանց, շատ ավելի են հակված ինտիմ զուգընկերոջ հանդեպ բռնություն գործադրելուն և այն արդարացնելուն:

Կանայք ավելի քիչ են հակված ինտիմ զուգընկերոջ բռնությունն արդարացնելուն, քան տղամարդիկ թե՛ ընդհանուր, թե՛ յուրաքանչյուր առանձին վերցրած պնդման

դեպքում, որը ներկայացնում է տղամարդու կողմից կին զուգընկերոջ հանդեպ բռնանալու պատճառը:

Տղամարդ հարցվածները, ավելի քան կանայք, հակված են այն մտքին, որ կինը պետք է համակերպվի «հայրիշխանական» նորմերի հետ:

Հետազոտության տվյալները հիմք են տալիս տարորոշելու հարցվածների՝ «գենդերային զգայուն» և «ոչզգայուն» խմբերը: Պետք է հիշել, որ այնուամենայնիվ սա մեծապես կախված է համատեքստից և համեմատության դիտանկյունից: Չկան ***բացառապես*** «գենդերային զգայուն» և «ոչզգայուն» խմբեր. Դրանք ավելի շուտ ***քիչ*** թե ***շատ*** «գենդերային զգայուն» են՝ կախված իրենց լիբերալ և էգալիտար կամ ավանդապաշտ և ժամանակավրեպ տեսակետներից, և որոնցից նրանք զատում են կամ որոնց կցում արմատացած պատրիարխալ կարծրատիպերը: Գենդերային արդարացի և գենդերային անարդար նշանակումները գործածվում են այստեղ ցույց տալու համար խմբերը սույն ուսումնասիրության համատեքստում և նրանց կարգը՝ իրար համեմատ: Այս երկատումը տարանջատում է ոչ միայն սեռը, այլև մյուս 5 հիմնական կենսագրական բնութագրիչները: Հետևաբար, վերջնարդյունքն ընդհանրացված է և 2 երևակայական, այն է՝ անհատական բնութագրիչներ ներառող, խմբերի ընդհանուր պատկերն է ներկայացված:

Այսպիսով, ըստ հետազոտության տվյալների, ***տղամարդկանց ամենաարդար խումբն*** են կազմում ավելի երիտասարդ, ավելի կրթված և գրանցված աշխատող հանդիսացող[58] տղամարդիկ, ովքեր ապրում են Երևանում և ունեն ընկերուհի կամ արդեն ամուսնացած են:

Տղամարդկանց ***ամենաանարդար*** խումբը կազմված է տարիքով ավելի մեծ, ցածր կրթամակարդակ ունեցող տղամարդկանցից, ովքեր ապրում են գյուղական բնակավայրում, որբևէ չեն աշխատել կամ ներկայումս գործազուրկ են և բաժանված/ամուսնալուծված:

Ինչ վերաբերում է կանանց, ***գենդերային ամենաարդար խումբը*** ներառում է ավելի երիտասարդ, ավելի կրթված, գրանցված աշխատող հանդիսացող չամուսնացած

[58] Տեխնիկապես, ինչ վերաբերում է զբաղվածությանը գենդերային ամենաարդար խումբը ուսանողներն են: Սակայն զգալիորեն զիջում են այլ խմբերին ոչ միայն իրենց թվային տվյալներով, այլև, որն ավելի կարևոր է, կրթական մակարդակով (հատկապես բարձրագույն կրթությամբ). Վերջինս ավելի կարևոր է (նույնիսկ ավելի քան սեռի) և տարիքի և սեռի հետ միասին այն ավելի նշանակալի է, քան զբաղվածությունը և/կամ ամուսնական կարգավիճակը: Սա վերաբերում է նաև կանանց և ողջ ընտրանքին առնչվող պնդումներին:

Երևանաբնակ կանանց, մինչդեռ ***ամենաանարդար խումբը*** կազմված է ավելի բարձր տարիքի, ցածր կրթամակարդակով կանանցից, ովքեր երբեք չեն աշխատել, ապրում են գյուղական բնակավայրում և ամուսնացած են (կամ այրի):

Հետազոտության վերջնարդյունքները նաև միանշանակորեն ցույց են տալիս, որ կանայք ավելի ***արդարացի են***, քան տղամարդիկ:

Ընդհանուր առմամբ ողջ ընտրանքի համար ապացույցներով հիմնավորված եզրակացությունն այն է, որ ավելի երիտասարդ, ավելի կրթված, գրանցված աշխատող հանդիսացող չամուսնացած Երևանաբնակ կանայք շատ ավելի են հակված ժխտելու այն «հայրիշխանական» տեսակետը, որ որոշակի իրադրություններում իր ինտիմ կին զուգընկերոջ հանդեպ տղամարդու ֆիզիկական բռնության գործադրումն արդարացված է, քան տարիքով ավելի մեծ, ավելի ցածր կրթամակարդակով ամուսնալուծված/ բաժանված գյուղաբնակները:

Բռնաբարության նկատմամբ վերաբերմունք

Բռնաբարությունը սեռական բռնության ծանրագույն և ամենածայրահեղ միջոցներից է զոհի ֆիզիկական և հոգևոր առողջության վրա թողած հետևանքների առումով, ինչպես նաև մարմնական և մարդկային արժանապատվության անխախտելիության վրա կոտիպ բռնանանում: Որպես գենդերային բռնության տեսակ, որը հազվադեպ է հանդես գալիս առանձնաբար, սակայն սովորաբար հանդիսանում է բռնացող վարքի տարբեր ձևերի բաղկացուցիչը, որոնք, այդ թվում որոշ տեսակետների և ուժեղացող կարծրատիպերի արդյունքն են. դրա հիմնական իմաստը կայանում է ուժի գործադրման, գերիշխանության հասնելու ու հպատակեցման մեջ: Սա այն միջոցներից մեկն է, որով որոշ տղամարդիկ կարող են փորձել գերազանցության հասնել և այն պարտադրել զուգընկերոջը, հատկապես եթե ընդհանուր հասարակական կլիման բարենպաստ է կամ առնվազն հանդուրժողական մարդու իրավունքների այս կոպիտ խախտման նկատմամբ: Հետևաբար առանձնակիորեն կարևոր է պարզել բռնաբարության՝ այս հասարակության մեջ գերակա ըմբռնումներն ու դրա հանդեպ վերաբերմունքը: Սա նպատակային առումով իրագործելի դարձնելու համար անհրաժեշտ է ապահովել որոշակի համատեքստ, քանի որ չափազանց քչերն են ունակ արդարացնելու բռնությունը *per se*, կամ առհասարակ ոչ ոք: Սակայն արդարացումը հնարավոր է որոշակի իրադրության հետ բախվելու հետևանքով:

Հետազոտության այս հատվածը նպատակ ուներ հարցերն այնպես ձևակերպել, որ հնարավոր լինի պարզել, թե հարցվածների որ խմբերն ու ինչքանով են կարող արդարացնել բռնաբարությունը՝ մեղադրելով զոհին որոշակի համատեքստավորման կամ որոշակի իրադրության սոցիալական կկառույցի միջոցով:

Աղյուսակ 13-ում ներկայացնում է ողջ ընտրանքի մեջ այն հարցվածների տոկոսային տվյալները, ովքեր համաձայն են որոշակի պատճառով բռնաբարության ենթարկվելու մեղքը կանանց վրա բարդող պնդումների հետ:

Աղյուսակ 13. Բռնաբարության համար կանանց մեղադրող պնդումների հետ համաձայն հարցվածների տոկոսային բաշխվածությունը

Պնդումներ	Հարցվածներ (N=1,617)
Երբ կին է բռնաբարվում, սովորաբար նա է ինչ-որ բան արել՝ իրեն դնելով այդ իրադրության մեջ	**32.2%**
Որոշ բռնաբարության դեպքերում, կանայք իրականում ուզում են, որ դա տեղի ունենա	**35.8%**
Եթե կինը ֆիզիկապես չի հակադարձում, ապա հնարավոր չէ հաստատապես պնդել, որ տեղի ունեցածը բռնաբարություն է	**59.8%**
Ցանկացած բռնաբարության դեպքում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք զոհը պատահական սեռական կապեր կամ վատ համբավ չի ունեցել	**62.7%**
Այն հարցվածների տոկոսը, ովքեր համաձայն են վերոնշյալ պնդումներից առնվազն մեկի հետ	**82.4%**

Առանց չափազանցման, արդյունքներն ափշեցուցիչ են: Փաստորեն, հարցվածների մեկ երրորդից գրեթե երկու երրորդը հակված են զոհին մեղադրելու առանձին վերցված պատճառներից մեկով և հարցվածների 82.4% իրականում արդարացնում են բռնաբարությունը՝ համաձայնելով պնդումներից գոնե մեկի հետ: Տվյալները նաև պարզորոշ կերպով ցույց են տալիս, որ այս հարցվածների մեծ մասը համաձայն էին երկու կամ ավելի պնդումների հետ:

Առաջին երկու պնդումները չեն նկարագրում որոշակի իրադրություն: Դրանք առաջ են քաշում մի ենթադրություն, համաձայն որի կինն ինչ-որ բան է արել իրեն դնելու համար մի իրադրության մեջ, որում նա բռնաբարվել է կամ որ նա իրականում ուզեցել է, որ բռնաբարություն տեղի ունենա: Ինչպես երևում է, բռնարարին առնվազն

մեկ առավելություն է տրվում կամ նույնիսկ արադարացում: Պարզ ընդգծվում է այն հանգամանքը, որ կինն ինքն է փորձանքն ընկել: Բոլոր հարցվածների մոտ մեկ երրորդը հակված են այս տեսակետին:

Այդ հարցվածների ըմբռնումները որոշակիորեն զարկ են տալիս պնդումներում նկարագրված իրադրություններին: Այն, որ բռնաբարությունը չափազանց տրավմատիկ փորձ է զոհի համար, ինչ-որ կերպով արհամարհվում է կամ պարզեցվում նման մոտեցման մեջ: Ուշադրությունը շեղվում է բռնարարի մեղսունակությունից և բռնաբարության անընդունելի լինելուց դեպի կնոջ մեղադրանք:

Այս միտումն անգամ ավելի պարզորոշ կերպով է արտահայտված վերջին երկու պնդումներում: Հարցվածների մեծամասնությունը համաձայն են այն պնդդումներին, որ «Եթե կինը հակահարված չի հասցնում, ապա հնարավոր չէ հաստատ պնդել, որ դա բռնաբարություն է եղել» (59.8%) և «Ցանկացած բռնաբարության դեպքում պետք է պարզել, թե արդյոք զոհը պատահական սեռական հարաբերությունների մեջ չի ներգրավվում կամ վատահամբավ չէ» (62.7%): Այս հարցվածները չգիտեն կամ չեն ուզում ընդունել այն պարզ ճշմարտությունը, որ առանց փոխհամաձայնության ցանկացած սեռական գործողություն փաստացի բռնություն է և որ նման հանգամանքներում սեռական հարաբերությունները բռնաբարություն են համարվում: Այլ կերպ ասած, այդ հարցվածների կարծիքով մինչև կինը, հետևելով «հայրիշխանական մշակութային նորմերին և լինելով «արժանապատիվ»՝ մեծ կռիվ չսարքի «պատիվը» պաշտպանելու համար հարձակման ենթարկվելու դեպքում, նրան կարող են կասկածել կամ նույնիսկ մեղադրել տղամարդկանց «սադրելու» մեջ, «թեթևաբարո» լինելու մեջ կամ ինքն իրեն փորձանքի մեջ գցելու համար, հատկապես երբ նա չունի արական սեռի «պաշտպան»:

Այդ մարդկանց համար մեծ կարևորություն չունի, որ կինը պարտավոր չէ ֆիզիկական հակահարված տալ կամ «անբասիր» վարքի ապացույցներ բերել՝ զոհ համարվելու համար, այլ ոչ թե սեռական բռնության «օրինական» թիրախ: Կարևոր չէ նաև այն, որ այդ կարծրատիպերը Հայաստանի սահմանադրության խախտում են: Ըստ Հայաստանի քրեական օրենսգրքի 138 Հոդվածի, բռնաբարությունը «տղամարդու սեռական հարաբերություն է կնոջ հետ՝ նրա կամքին հակառակ, վերջինիս կամ մեկ ուրիշի հանդեպ բռնության կիրառմամբ, վերջինիս նկատմամբ սպասնալիքի

կիրառմամբ, կամ օգտվելով կնոջ անօգնական վիճակից» և պատժվում է բանտարկությամբ[59]: Օրենքը չի սահմանում այլ պահանջներ՝ բացի կնոջ համաձայնության բացակայությունից, որը թույլ է տալիս ոտնձգությունը բռնաբարություն որակել:

Նմանօրինակ արմատացած «հայրիշխանական» կարծրատիպերը, անշուշտ, վտանգավոր են և ապակողմնորոշում են ավելի երիտասարդ սերունդներին: Ինչքան էլ որ տարօրինակ թվա, թեև բռնաբարությունը կանանց դեմ սեռական բռնության ծայրահեղ ձև է (և, բացի այդ, սեռական հարաբերությունը պատրիարխալ նորմերի և հոգեկերտվածքի համար ***զգայուն*** խնդիր է), հարցվածներից շատերը բավականին ներողամիտ դիրքորոշում են որդեգրում: Ամեն դեպքում նրանք ավելի հանդուրժող են թվում այդ հարցում, քան կանանց դեմ ֆիզիկական բռնության դեպքում՝ արհամարհելով այն փաստը, որ բռնաբարությունը սովորաբար ուղեկցվում է ֆիզիկական բռնությամբ: Ահավասիկ, ընդհանուր առմամբ ***ողջ ընտրանքի՝ բռնաբարությունն արդարացնող հարցվածների տոկոսը (82.4%)*** մեկ կամ ավելի պատճառներով, որոնք նշված են վերոհիշյալ պնդումներում, զգալիորեն բարձր է, քան ***այն հարցվածներինը, ովքեր արդարացնում են կանանց դեմ ֆիզիկական բռնությունը (70.3%).***

Հասարակության համար չափազանց մտահոգիչ ևս մի խնդիր պետք է լինի այն, որ նույնիսկ բարձրագույն կրթությամբ հարցվածների կեսից ավելին համաձայն են կարծրատիպերի վրա հիմնված այն պնդումներին, որ այն կանայք, ովքեր ֆիզիկապես հակահարված չեն հասցնում, կամ ովքեր «պատահական» սեռական հարաբերություններ ունեն կամ վատ համբավ (համապատասխանաբար 54.2% և 57.2%) և այսպիսով տեղյակ չեն իրենց տեսակետների անհամապատասխանությանը օրենքի պայմաններին կամ օրինական մոտեցումը չեն համարում ադեկվատ և իրավազոր:

***

Ինչպես կարելի էր ակնկալել, տարբերություններ կան տղամարդ և կին հարցվածների՝ բռնաբարության հանդեպ վերաբերմունքի միջև: Ստորև՝ **Աղյուսակ 14 –ում** ներկայացված են տվյալներ՝ տարանջատված ըստ սեռի:

[59] Հոդված 138 («Բռնաբարություն»), Կետ 1.Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք. Հաստատված 18.04.2003.

Աղյուսակ 14. Հետևյալ պնդումների հետ համաձայն կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունը

	Տղամարդիկ (N=767)	Կանայք (N=850)
Երբ կին է բռնաբարվում, սովորաբար նա է ինչ-որ բան արել՝ իրեն դնելով այդ իրադրության մեջ	**40.9%**	**24.2%**
Որոշ բռնաբարության դեպքերում, կանայք իրականում ուզում են, որ դա տեղի ունենա	**44.0%**	**28.6%**
Եթե կինը ֆիզիկապես չի հակադարձում, ապա հնարավոր չէ հաստատապես պնդել, որ տեղի ունեցածը բռնաբարություն է	**61.3%**	**58.4%**
Ցանկացած բռնաբարության դեպքում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք զոհը պատահական սեռական կապեր կամ վատ համբավ չի ունեցել	**64.4%**	**61.0%**
Այն հարցվածների տոկոսը, ովքեր արդարացնում են բռնաբարությունը վերոնշյալ պնդումներից առնվազն մեկի վրա հիմնվելով	**86.2%**	**78.9%**

Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ ինչ վերաբերում է առաջին 2 պնդումներին, բռնաբարության զոհ դարձած կանանց մեղադրող տղամարդ հարցվածների տոկոսը 1.5-2 անգամ բարձր է, քան կին հարցվածներինը: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր չորրորդ կին հարցվածը մեղադրում է զոհին:

Վերջին 2 պնդումների դեպքում, տարբերությունը փաստորեն վերանում է և երկու սեռի հարցվածների կեսից շատ ավելին հիմնականում արդարացնում են բռնաբարողին, քանի որ նրանք մակերեսորեն են քննում բռնաբարության փաստը:

Ընդհանուր առմամբ, բռնաբարությունն արդարացնող մեկ կամ ավելի պնդումների հետ համաձայն տղամարդ և կին հարցվածների տոկոսը չափազանց բարձր է (համապատասխանաբար 86.2% և 78.9%):

***

Բռնաբարության նկատմամբ տղամարդ և կին հարցվածների վերաբերմունքի մասին ավելի հստակ պատկերացում կազմելու համար հետազոտության տվյալները բաշխվել են ըստ հարցվածների հիմնական կենսագրական բնութագրիչների:

Այսպիսով բաշխված տվյալները ներկայացված են ստորև՝ **Աղյուսակ 15 և 16 -ում՝** համապատասխանաբար ըստ կին և տղամարդ հարցվածների[60]: Ստորև ներկայացված է նաև ողջ ընտրանքի հաշվառումով ըստ նույն փոփոխականների բաշխված տվյալների աղյուսակ, որը հեշտ հղումներ կատարելու և անհրաժեշտության դեպքում հավելյալ ինֆորմացիայի համար է (տե՛ս **Աղյուսակ 17**)[61].

Աղյուսակ 15. Բռնաբարության նկատմամբ վերաբերմունքը. Տղամարդիկ

Բոլոր տղամարդկանց տոկոսն ըստ կենսագրական բնութագրիչների, ովքեր համաձայն են այն պնդումներին, որոնք որոշակի պատճառներով բռնաբարության մեջ կնոջն են մեղադրում**					
Կենսագրական բնութագրիչներ	Երբ կին է բռնաբարվում, սովորաբար նա է ինչ-որ բան արել՝ իրեն դնելով այդ իրադրության մեջ	Որոշ բռնաբարության դեպքերում, կանայք իրականում ուզում են, որ դա տեղի ունենա	Եթե կինը ֆիզիկապես չի հակադարձում, ապա հնարավոր չէ հաստատապես պնդել, որ տեղի ունեցածը բռնաբարություն է	Ցանկացած բռնաբարության դեպքում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք զոհը պատահական սեռական կապեր կամ վատ համբավ չի ունեցել	Տղամարդկանց թիվը **N = 767**
Տարիքը					
18-24	39.2%	44.4%	58.9%	66.7%	**153**
25-34	39.7%	43.5%	63.6%	60.8%	**209**
35-49	42.0%	42.0%	62.8%	66.0%	**250**
50-59	42.4%	47.1%	58.1%	64.5%	**155**
Կրթությունը					
Հիմնական	(46.9%)	(40.7%)	(68.7%)	(81.3%)	**32**
Միջնակարգ	42.6%	44.5%	62.3%	67.0%	**403**
Միջին մասնագիտական	42.9%	47.6%	65.1%	61.9%	**126**
Բարձրագույն	35.4%	41.3%	55.9%	58.3%	**206**
Ամուսնական կարգավիճակը * **					

[60] Քանի որ այս հարցերի խումբը հնարավորություն է տալիս պարզել հայ տղամարդկանց գենդերային տեսակետից արդարացի լինելը, կարևոր է նաև ներկայացնել վերոհիշյալ պնդումներին ***դեմ*** տղամարդկանց առնչվող տվյալներ: Այդ իսկ պատճառով Հավելված **I** –ում ներկայացված է այս բաժնի համապատասխան ամփոփագիրը և կանանց առնչվող տվայլների զուգադիր աղյուսակը ևս ներկայացված է այնտեղ՝ համեմատության նպատակով:

[61] Աղյուսակ **17** հաճախակիորեն էհիշատակվում այս բաժնում հղում կատարելու՝ կանանց հանդեպ սեռական զուգընկերոջ կողմից գործադրվող բռնության վերաբերյալ կարծիքների քննարկման ժամանակ՝ 5 փոփոխականների տեսանկյունից, այդ թվում՝ տարիքը, **կրթությունը**, ամուսնական կարգավիճակը, բնակության վայրը և զբաղվածությունը, որոնք հարցվածների հիմնական կենսագրական բնութագրիչներն են :

Գրանցված ամուսնություն	40.7%	43.6%	62.5%	65.7%	**408**
Չգրանցված ամուսնություն	33.8%	43.3%	57.8%	57.8%	**83**
Ընկերուհի (համատեղ կյանք չեն վարում)	(50.0%)	(50.0%)	(64.3%)	(60.7%)	**28**
Չամուսնացած	39.5%	42.3%	57.7%	63.9%	**213**
Բաժանված/ ամուսնալուծված	(58.4%)	(41.7%)	(66.7%)	(70.9%)	**24*** **
Այրի	*	*	*	*	**2**
Բնակության վայրը					
Երևան	35.2%	41.4%	59.7%	56.6%	**258**
Այլ քաղաքային	40.3%	42.9%	63.3%	69.0%	**226**
Գյուղական	46.6%	47.0%	61.1%	67.8%	**283**
Զբաղվածությունը ******					
Երբեք չի աշխատել	(40.0%)	(47.5%)	(60.0%)	(62.5%)	**40**
Ուսանող	(25.0%)	(29.2%)	(54.2%)	(41.7%)	**24********* **
Գործազուրկ	41.4%	41.3%	63.8%	65.5%	**249**
Գրանցված աշխատող	39.2%	46.0%	62.9%	64.7%	**224**
Չգրանցված աշխատող	43.6%	45.4%	57.7%	65.2%	**227**
Ընդամենը	**40.9%**	**44.0%**	**61.3%**	**64.4%**	**767**
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թվային տվյալը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:					

** Տվյալների հեշտ ներկայացման, համեմատության և վերլուծության նպատակով «խիստ կողմ եմ» և «կողմ եմ» պատասխանները միավորվել են՝ տրված պնդման հետ համամիտ տամարդկանց տոկոսը որոշելու համար.

*** Քանի որ «Ոչ ֆորմալ միություն/ համատեղ կյանք» կատեգորիայում ընդամենը 9 հարցվածներ կային, այդ կատեգորիան չէր ներկայացվել (հետևաբար հարցվածների ընդհանուր թիվն այս սեկցիայում 758 է):

**** Քանի որ «ուսման համատեղում աշխատանքի հետ» կատեգորիայում կային ընդամենը 2 հարցվածներ, 1 հարցված՝ «Երեխայի խնամքի կամ այլ տեսակի արձակուրդում» կատեգորիայում, այս կատեգորիաները չեն ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 764):

***** Սահմանագծային դեպքերի տվյալները լրիվ վավեր են համարվում:

Թեև ***տարիքի*** գործոնն ունի իր ազդեցությունը, չկա ուղիղ օրինաչափություն: Կախված հարցից՝ հարցվածների միևնույն տարիքային խումբն ընդհանրապես և տղամարդ հարցվածներինը՝ մասնավորապես, կարող են գրանցել զոհին մեղադրելով

բռնաբարությունն արդարացնողների ամենաբարձր (կամ երկրորդ ամենաբարձր) կամ ամենացածր (կամ երկրորդ ամենացածր) տոկոսը: Փոքր բացառություն է կազմում կանանց ամենաերիտասարդ խումբը, ովքեր առաջին երեք պնդումների դեպքում գոնե հակված են համաձայնվելու դրանց հետ և արդարացնելու բռնաբարությունը:

Տղամարդ հարցվածների ամենաերիտասարդ խումբը նույն միտվածությունը չունի: Ավելին՝ տղամարդ հարցվածների տարիքային խմբերի միջև տարբերությունները մինիմալ են, եթե ընդհանրապես կան, և շատ դեպքերում չեն գերազանցում սխալի թույլատրելի շեմը: Սա նշանակում է, որ բռնաբարությանը վերաբերող կարծրատիպերը էֆեկտիվորեն վերարտադրվում են ներկայիս հայ հասարակությունում և փոխանցվում տղամարդկանց ավելի տարեց սերնդից երիտասարդ սերնդին:

Աղյուսակ 16. Բռնաբարության նկատմամբ վերաբերմունքը. Կանայք

Բոլոր այն կանանց տոկոսը, ովքեր համաձայն են այն պնդումներին, որոնք որոշակի պատճառներով բռնաբարության մեղքը բարդում են կանանց վրա՝ ըստ կենսագրական բնութագրիչների **					
Կենսագրական բնութագրիչներ	Երբ կին է բռնաբարվում, սովորաբար նա է ինչ-որ բան արել՝ իրեն դնելով այդ իրադրության մեջ	Որոշ բռնաբարության դեպքերում, կանայք իրականում ուզում են, որ դա տեղի ունենա	Եթե կինը ֆիզիկապես չի հակադարձում, ապա հնարավոր չէ հաստատապես պնդել, որ տեղի ունեցածը բռնաբարություն է	Ցանկացած բռնաբարության դեպքում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք զոհը պատահական սեռական կապեր կամ վատ համբավ չի ունեցել	Կանանց թիվը **N = 850**
Տարիքը					
18-24	15.8%	21.8%	54.1%	60.9%	**133**
25-34	28.9%	29.3%	61.1%	64.3%	**252**
35-49	25.1%	26.1%	59.5%	60.1%	**291**
50-59	22.4%	36.8%	56.3%	58.0%	**174**
Կրթությունը* **					
Հիմնական	*	*	*	*	**14**
Միջնակարգ	28.7%	30.9%	61.1%	65.7%	**324**
Միջին մասնագիտական	22.0%	28.6%	62.0%	58.4%	**245**

Բարձրագույն	19.6%	25.5%	53.0%	55.4%	**266**
Ամուսնական կարգավիճակը****					
Գրանցված ամուսնություն	24.4%	28.9%	59.3%	61.3%	**533**
Չգրանցված ամուսնություն	27.4%	28.5%	60.0%	63.2%	**95**
Ընկեր (համատեղ կյանք չեն վարում)	*	*	*	*	**9**
Չամուսնացած	21.7%	25.0%	50.0%	56.4%	**124**
Բաժանված/ ամուսնալուծված	16.0%	26.0%	62.0%	70.0%	**50**
Այրի	(30.0%)	(43.4%)	(63.3%)	(53.3%)	**30**
Բնակության վայրը					
Երևան	18.3%	28.8%	56.4%	51.6%	**312**
Այլ քաղաքային	28.0%	24.8%	58.1%	62.6%	**246**
Գյուղական	27.4%	31.5%	61.0%	69.9%	**292**
Զբաղվածությունը *****					
Երբեք չի աշխատել	29.8%	32.8%	63.7%	70.7%	**171**
Ուսանող	8.4%	20.9%	45.8%	52.1%	**48********
Գործազուրկ	25.3%	30.4%	60.9%	60.1%	**356**
Գրանցված աշխատող	22.2%	23.2%	54.0%	54.6%	**185**
Չգրանցված աշխատող	25.0%	33.9%	55.9%	64.7%	**68**
Ընդամենը	**24.2%**	**28.6%**	**58.4%**	**61.0%**	**850**
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թիվը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:					

** Տվյալների հեշտ ներկայացման, համեմատության և վերլուծության նպատակով «խիստ կողմ եմ» և «կողմ եմ» պատասխանները միավորվել են՝ տրված պնդման հետ համամիտ կանանց տոկոսը որոշելու համար.

*** Քանի որ «Տարրական կամ ավելի ցածր կրթություն» կատեգորիայում կար ընդամենը 1 հարցված, այդ կատեգորիան չի ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 849):
**** Քանի որ «Ոչ ֆորմալ միություն/ համատեղ կյանք» կատեգորիայում ընդամենը 9 հարցվածներ կային, այդ կատեգորիան չէր ներկայացվել (հետևաբար հարցվածների ընդհանուր թիվն այս սեկցիայում 841 է):
***** Քանի որ «ուսուցման համատեղում աշխատանքի հետ» կատեգորիայում կար ընդամենը 1 հարցված, 2 հարցված ընդհանրապես չէին պատասխանել կամ հրաժարվել էին պատասխանելուց, իսկ «Երեխայի խնամքի կամ այլ տեսակի արձակուրդում» կատեգորիայում՝ 19 հարցվածներ, այս կատեգորիաները չեն ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 828):
****** Սահմանագծային դեպքերի տվյալները լրիվ վավեր են համարվում:

Ինչպես կարելի էր սպասել, ***կրթությունը***, հատկապես բարձրագույն կրթությունը, շատ ազդեցիկ գործոն է: Պնդումների հետ համաձայնվողների մասնաբաժինը ոչ միայն ամենացածրն է ողջ ընտրանքի բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում, ինչպես նաև կին և տղամարդ հարցվածների ենթախմբերում, այլև մեծամասամբ զգալիորեն ցածր է ավելի ցածր կրթամակարդակ ունեցողների համեմատությամբ: Բռնաբարությունն ընդունելու խնդրի առնչությամբ բարձրագույն և հիմնական կրթություն ունեցողների միջև տարբերությունը տատանվում է 7%-ից 25% ողջ ընտրանքի համար և գրեթե նույքան տպավորիչ է (միակ նշանակալի բացառությամբ) տղամարդ հարցվածների պարագայում:

Ինչ վերաբերում է ***ամուսնական կարգավիճակին***, կին և տղամարդ հարցվածների միջև առկա զգալի տարբերությունների պատճառով ընդհանուր պատկերը հեռու է պարզորոշ լինելուց: Ողջ ընտրանքի համար բռնաբարության արդարացմանն ամենաքիչ միտվածություն ունեցող խումբն են կազմում բաժանված/ ամուսնալուծված անձինք՝ առաջին 2 պնդումների դեպքում, այնուհետ չամուսնացած անձանց և այրիների դեպքում՝ յուրաքանչյուրը համամիտ է մեկ պնդման հետ: Կնոջը բռնաբարության մեջ մեղադրող ամենամեծ միտվածությունն ունեցող խմբերն են կազմում ընկեր/ընկերուհի ունեցող հարցվածները (առաջին պնդման դեպքում), բաժանված/ ամուսնալուծված հարցվածները (4 րդ պնդման դեպքում) և այրիները (պնդումներ 2 և 3).

Տղամարդ հարցվածների շրջանում, բռնաբարության արդարացմանը ամենաքիչ միտվածությունն ունեցող խումբն առաջին հերթին ընդգրկում է չգրանցված/քաղաքացիական կարգով/ ամուսնացած տղամարդկանց և մի դեպքում (այն է՝ այն պնդումը, որ որոշ բռնաբարությունների դեպքերում կանայք իրականում ցանկանում են, որ դա տեղի ունենա) բաժանված/ ամուսնալուծված տղամարդկանց: Միևնույն ժամանակ բաժանված/ ամուսնալուծված տղամարդիկ են, որ որպես խումբ բռնաբարության արդարացման ամենամեծ միտվածությունն ունեն՝ բացի վերոնշյալ խմբից:

Կին հարցվածների շրջանում չկա միասնական մի խումբ, որը կայուն մոտեցում կցուցաբերեր բռնության ցանկացած արդարացման բացառմանը: Կախված պնդումից՝ դա կարող է լինեն չամուսնացած կանայք, բաժանված/ ամուսնալուծված կանայք և (

4րդ պնդման դեպքում) անգամ այրիները: Միևնույն ժամանակ այրիներն այն խումբն են, որտեղ առաջին 3 պնդումների պարագայում բռնաբարության մեջ կանանց մեղադրողների մասնաբաժինը ոչ միայն ամենաբարձրն է, այլև շատ ավելի բարձր է, քան այլ խմբերի շրջանում: Ինչ վերաբերում է 4րդ պնդմանը, ամենամեծ մասնաբաժինն են կազմում բաժանված/ ամուսնալուծված կանայք:

Աղյուսակ 17. Բռնաբարության նկատմամբ վերաբերմունքը. ողջ ընտրանքը

Բոլոր հարցվածների տոկոսը, ովքեր համաձայն են այն պնդումներին, որոնք որոշակի պատճառներով բռնաբարության մեղքը բարդում են կանանց վրա՝ ըստ կենսագրական բնութագրիչների **					
Կենսագրական բնութագրիչներ	Երբ կին է բռնաբարվում, սովորաբար նա է ինչ-որ բան արել՝ իրեն դնելով այդ իրադրության մեջ	Որոշ բռնաբարության դեպքերում, կանայք իրականում ուզում են, որ դա տեղի ունենա	Եթե կինը ֆիզիկապես չի հակադարձում, ապա հնարավոր չէ հաստատապես պնդել, որ տեղի ունեցածը բռնաբարություն է	Ցանկացած բռնաբարության դեպքում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք զոհը պատահական սեռական կապեր կամ վատ համբավ չի ունեցել	Հարցվածների թիվը **N = 1,617**
Տարիքը					
18-24	28.3%	33.9%	56.6%	64.0%	**286**
25-34	33.8%	35.8%	62.2%	62.6%	**461**
35-49	32.9%	33.4%	61.0%	62.9%	**541**
50-59	31.9%	41.6%	57.2%	61.1%	**329**
Կրթությունը ***					
Հիմնական	47.8%	39.1%	60.9%	82.6%	**46**
Միջնակարգ	36.5%	38.4%	61.8%	66.4%	**727**
Միջին մասնագիտական	29.1%	35.0%	63.1%	59.5%	**371**
Բարձրագույն	26.5%	32.4%	54.2%	57.2%	**472**
Ամուսնական կարգավիճակը ****					
Գրանցված ամուսնություն	31.4%	35.2%	60.6%	63.2%	**941**
Չգրանցված ամուսնություն	30.3%	35.4%	59.0%	60.7%	**178**
Ընկեր/ընկերուհի (համատեղ կյանք չեն վարում	(45.9%)	(45.9%)	62.1%	59.4%	**37**
Չամուսնացած	33.0%	35.9%	54.9%	61.1%	**337**

Բաժանված/ ամուսնալուծված	29.8%	31.1%	63.5%	70.2%	**74**
Այրի	(34.4%)	(46.9%)	(65.7%)	(56.3%)	**32**
Բնակության վայրը					
Երևան	25.9%	34.5%	57.9%	53.9%	**570**
Այլ քաղաքային	33.9%	33.5%	60.6%	65.7%	**472**
Գյուղական	36.8%	39.1%	61.1%	68.9%	**575**
Զբաղվածությունը *****					
Երբեք չի աշխատել	31.7%	35.6%	63.0%	69.2%	**211**
Ուսանող	13.8%	23.7%	48.6%	48.7%	**72**
Գործազուրկ	31.9%	34.9%	62.1%	62.3%	**605**
Գրանցված աշխատող	31.5%	35.7%	58.9%	60.1%	**409**
Չգրանցված աշխատող	39.3%	42.7%	57.3%	65.1%	**295**
Ընդամենը	**32.2%**	**35.8%**	**59.8%**	**62.7%**	**1,617**
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թիվը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:					

** Տվյալների հեշտ ներկայացման, համեմատության և վերլուծության նպատակով «խիստ կողմ եմ» և «կողմ եմ» պատասխանները միավորվել են՝ տրված պնդման հետ համամիտ հարցվածների տոկոսը որոշելու համար.
*** Քանի որ «Տարրական կամ ավելի ցածր կրթություն» կատեգորիայում կար ընդամենը 1 հարցված, այդ կատեգորիան չի ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 1,616):
**** Քանի որ «Ոչ ֆորմալ միություն/ համատեղ կյանք» կատեգորիայում ընդամենը 18 հարցվածներ կային, այդ կատեգորիան չէր ներկայացվել (հետևաբար հարցվածների ընդհանուր թիվն այս սեկցիայում 1,599 է):
***** Քանի որ «ուսուցման համատեղում աշխատանքի հետ» կատեգորիայում կային ընդամենը 3 հարցվածներ, 2 հարցված ընդհանրապես չէին պատասխանել կամ հրաժարվել էին պատասխանելուց, իսկ «Երեխայի խնամքի կամ այլ տեսակի արձակուրդում» կատեգորիայում՝20 հարցվածներ, այս կատեգորիաները չեն ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 1,592):

Բնակության գործոնի ազդեցությունն միատեսակ չէ առաջին հերթին տղամարդկանց տարբեր խմբերի վերաբերմունքների և կանանց տարբեր խմբերի միջև տարբերությունների շնորհիվ:

Կրկին անգան նշվում է, որ երևանաբնակները սովորաբար ամենալիբերալ տեսակետներն են արտահայտում և քիչ ավանդապաշտ մոտեցմանն են հարում, որը հիմնված է պատրիարխալ նորմերի վրա: Այս օրինաչափությունը մեծամասամբ արտացոլվում է նաև այս դեպքում՝ հատկապես երբ խոսքը վերաբերում է տղամարդ հարցվածներին: Հետազոտության ենթարկված տղամարդ հարցվածների մեջ

պնդումների հետ համաձայնների ամենափոքր մասնաբաժինն են կազմել երևանաբնակները: Ողջ ընտրանքի և կին հարցվածների պարագայում հիմնական միտվածությունը նույնն է՝ երկրորդ պնդման միակ բացառությամբ, որտեղ ամենափոքր մասնաբաժինն են կազմում այլ քաղաքային բնակավայրերի/ոչ Երևանի/ բնակիչները:

Պնդումների հետ համաձայնվողների և իրապես կանանց մեղադրողների մասնաբաժինն ամենամեծն է ողջ ընտրանքի պարագայում գյուղաբնակների շրջանում: Տղամարդկանց ընտրանքում խոսքը գնում է միայն առաջին 2 պնդումների մասին, մինչդեռ 3րդ և 4րդ պնդումների դեպքում մասնաբաժինն ավելի մեծ է քաղաքային բնակավայրերի/բացառությամբ Երևանի/ բնակիչների շրջանում, սակայն փոքր-ինչ բարձր է՝ ի համեմատ գյուղաբնակների: Փաստացի նույն իրադրությունն է հարցված կանանց շրջանում: Ամենամեծ մասնաբաժինն են կազմում գյուղաբնակ կանայք,իսկ առաջին պնդման դեպքում, երբ ամենամեծ մասնաբաժինը այլ քաղաքային բնակավայրերի /բացառությամբ Երևանի/ բնակիչներն են, տարբերությունը չնչին է:

Զբաղվածության գործոնի դեպքում պնդումների հետ համաձայնողների ամենացածր տոկոսն են կազմում ուսանողները: Սա ճշմարիտ է հարցված կանանց և տղամարդկանց դեպքում և առավել ևս՝ ողջ ընտրանքի պարագայում:

Ավելի դժվար է ստանալ պնդումների հետ համաձայն ամենամեծ մասնաբաժինը կազմող հարցվածների խումբի հստակ պատկերը: Տղամարդ հարցվածներից դրանք առաջին հերթին գործազուրկներն են և երբևէ աշխատանք չունեցած անձինք (իսկ 1ին պնդման դեպքում՝ ոչ պաշտոնապես աշխատողները), կին հարցվածներից դրանք երբևէ աշխատանք չունեցած անձինք են և մեկ դեպքում՝(2րդ պնդմանն առնչվող) ոչ պաշտոնապես աշխատողները: Ողջ ընտրանքի կտրվածքով դրանք 2 խումբ են կազմում՝ երբևէ աշխատանք չունեցած և չգրանցված աշխատող անձինք:

***

Հարկ է նաև պարզել, թե արդյոք բռնաբարության նկատմամբ զիջողական վերաբերմունքը կապված է բռնաբարության փաստացի իրագործման հետ:Ինչպես երևում է **Աղյուսակ 18-ի** տվյալներից, այն տղամարդկանց տոկոսը, ովքեր ստիպել են կնոջը իր կամքին հակառակ սեռական հարաբերություն ունենալ իրենց հետ (այսինքն՝

ովքեր բռնաբարություն են գործել) կայուն բարձր է այն տղամարդ հարցվածների շրջանում, ովքեր ներողամիտ վերաբերմունք ունեն բռնաբարության հանդեպ: Սակայն տարբերությունը չափազանց չնչին է վիճակագրորեն նշանակություն ունենալու համար:

Աղյուսակ 18. Բռնաբարության գործադրումը այն տղամարդկանց կողմից, ովքեր բռնաբարության նկատմամբ ՆԵՐՈՂԱՄԻՏ ԵՆ/ ՉԵՆ

Հետևյալ պնդումների հետ ***համաձայն*** այն տղամարդ հարցվածների տոկոսային բաշխումը, ստիպել են/չեն ստիպել կնոջն իրենց հետ սեքսով զբաղվել				
Պնդումը կողմ/դեմ		Տղամարդիկ, ովքեր ստիպել են կնոջն իրենց հետ սեքսով զբաղվել՝ վերջինիս կամքին հակառակ	Տղամարդիկ, ովքեր ԵՐԲԵՔ չեն ստիպել կնոջն իրենց հետ սեքսով զբաղվել իրենց կամքին հակառակ	**Տղամարդկանց թիվը**
Երբ կին է բռնաբարվում, սովորաբար նա է ինչ-որ բան արել՝ իրեն դնելով այդ իրադրության մեջ	Կողմ	**8.7%**	**89.9%**	**N = 138**
	Դեմ	**6.1%**	**93.9%**	**N = 212**
Որոշ բռնաբարության դեպքերում, կանայք իրականում ուզում են, որ դա տեղի ունենա	Կողմ	**9.9%**	**88.3%**	**N = 162**
	Դեմ	**5.1%**	**94.9%**	**N = 178**
Եթե կինը ֆիզիկապես չի հակադարձում, ապա հնարավոր չէ հաստատապես պնդել, որ տեղի ունեցածը բռնաբարություն է	Կողմ	**8.4%**	**91.2%**	**N = 238**
	Դեմ	**6.4%**	**92.7%**	**N = 110**
Ցանկացած բռնաբարության դեպքում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք զոհը պատահական սեռական կապեր կամ վատ համբավ չի ունեցել	Կողմ	**7.2%**	**91.9%**	**N = 236**
	Դեմ	**5.9%**	**94.1%**	**N = 101**

***

Այսպիսով, հետազոտության տվյալները հստակորեն ցույց են տալիս, որ յուքանչյուր 5 հարցվածից 4-ը համաձայն է առնվազն մեկ պնդման հետ, որն արդարացնում է բռնաբարությունը, մինչդեռ հարցվածների մեկ երրորդից երկու երրորդը հակված են զոհին մեղադրելու նշված պատճառներից որևէ մեկով առանձին վերցված:

Ըստ սեռի տարանջատված տվյալները վկայում են, որ այն տղամարդ, ինչպես նաև կին հարցվածների տոկոսը, ովքեր համաձայն են բռնաբարությունն արդարացնող մեկ կամ ավելի պնդման հետ, չափազանց բարձր է (համապատասխանաբար 86.2% և 78.9%):

Բռնաբարությունն արդարացնող պնդումների հետ համամիտ երիտասարդների մասնաբաժինը փաստորեն նույնն է, ինչ ավելի մեծ տարիքով սերնդինը: Դա նշանակում է, որ բռնությանն առնչվող կարծրատիպերի վերարտադրման և փոխանցման մեխամիզմը դեռ նույն սանդղակով է գործում:

Ընդհանուր առմամբ հարցվածների կրթամակարդակը ցույց է տալիս, թե նրանց որ մասնաբաժինն է հակված բռնաբարությունն արդարացնելու և կին զոհին մեղադրելու, այն է՝ ինչքան բարձր է կրթության մակարդակը, այնքան ցածր է բռնաբարությունն արդարացնողների տոկոսը: Սա հատկապես ճշմարիտ է բարձրագույն կրթության դեպքում:

Ըստ ամուսնական կարգավիճակի և սեռի տարանջատված տվյալները ցույց են տալիս, որ տղամարդ հարցվածների թվում ընդհանուր առմամբ բռնության արդարացմանն ամենաքիչը հակված են չգրանցված/ քաղաքացիական կարգով ամուսնացած տղամարդիկ, իսկ ամենաշատը՝ բաժանված/ ամուսնալուծված տղամարդիկ:

Հետազոտության մասնակից տղամարդ հարցվածների տվյալ պնդումներին համաձայնություն տվածների ամենափոքր մասնաբաժինը երևանաբնակներն էին:

Ըստ զբաղվածության բաշխված տվյալները ցույց են տալիս, որ պնդումներին համամիտ տղամարդ հարցվածների ամենացածր տոկոսն են կազմում ուսանողները:

Նույնասեռական տղամարդկանց հանդեպ բռնություն

Տղամարդկանց համար կազմված ինքնուրույն հարցաշարը ներառում էր նույնասեռական տղամարդկանց հանդեպ բռնությանը վերաբերող երեք հարց:

Աղյուսակ 19. Նույնասեռական տղամարդու հանդեպ բռության նկատմամբ վերաբերմունքը

Այն տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր ***համաձայն են*** այն պնդման հետ, որ բռնության կիրառումը անձնական ընկեր չհանդիսացող նույնասեռական տղամարդու հանդեպ արդարացված է հետևյալ իրադրություններում, **N= 258**	
Պնդումներ	**Տոկոսը**
Երբ նա շարունակում է ինձ սիրահետել	**53.8%**
Երբ նա շարունակում է ակնդետ ինձ նայել	**40.7%**
Երբ նա իրեն կանացի է պահում	**40.9%**
Այն հարցվածների տոկոսը, ովքեր արդարացնում են նույնասեռական տղամարդու հանդեպ բռնության գործադրումը՝ հիմնվելով վերոնշյալ պնդումներից առնվազն մեկի վրա	**62.4%**

Ըստ հետազոտության տվյալների տղամարդ հարցվածների զգալի տոկոսն արդարացնում են նույնասեռական տղամարդկանց հանդեպ բռնությունը: Պարզ է, որ նրանք այդ անձի վարքը բռնի հակազդման սադրանք են համարում:

Կանխատեսելի էր, որ տղամարդ հարցվածների ամենաբարձր տոկոսը նույնասեռական տղամարդկանց հանդեպ բռնությունն արդարացնող պնդումների հետ (53.7%) համաձայն էին այն դեպքերում, երբ տվյալ նույնասեռական տղամարդկանց անթաքույց կերպով ցույց էր տալիս իր համակրանքը տղամարդու հանդեպ:

Տղամարդ հարցվածների բավականին մեծ մասը (40.7%) արդարացնում են նույնասեռական տղամարդկանց հանդեպ բռնության գործադրումը այն իրադրությունում, երբ հայացքով են արտահայտում իրենց հակակրանքը: Իրականում, քանի որ նրանք գիտեն, որ տվյալ անձը նույնասեռական է, նրանց հակազդումը չափազանցված է: Նույն տոկոսն են կազմում տղամարդ հարցվածները (40.9%), ովքեր արդարացնում են նույնասեռական տղամարդկանց հանդեպ բռնության գործադրումը իրենց պատասխաններում, նույնիսկ տվյալ անձն իրենց ընդհանրապես չի նայում: Միայն այն պատճառով, որ նույնասեռական տղամարդկանց «կանացի» պահվածք ունի, բավարար հիմք է այդ տղամարդկանց համար ագրեսիվ դիրքորոշում ունենալ՝ չնայած որ «կանացի» պահվածքը հստակ ձևակերպման չի ենթարկվում՝ սուբյեկտիվ, պատահական և կանխակալ մեկնաբանությունների տեղիք տալով:

Տվյալները ցույց են տալիս տղամարդ հարցվածների մեծ մասի ակնհայտաբար կանխակալ վերաբերմունքը նույնասեռական տղամարդկանց նկատմամբ: Ավելին՝

զգալի համընկնումներ կան նույնասեռական տղամարդկանց հանդեպ բռնության գործադրման յուրաքանչյուր առանձին վերցված պատճառի և նմանօրինակ բռնությունն արդարացնող, պնդումներից առնվազն մեկի հետ համամիտ տղամարդ հարցվածների տոկոսի միջև: Սա նշանակում է, որ հարցվածների զգալի մասնաբաժինն արդարացնում են բռնությունը մեկից ավելի պատճառներով:

Աղյուսակ 20. Նույնասեռական տղամարդուն բռնանալու նկատմամբ վերաբերմունքը

Կենսագրական բնութագրիչներ	Երբ նույնասեռական տղամարդը շարունակում է սիրահետել հարցվածին	Երբ նույնասեռական տղամարդը ակնդետ նայել հարցվածին	Երբ նույնասեռական տղամարդն իրեն կանացի է պահում	Տղամարդկանց թիվը **N = 258**
Տարիքը				
18-24	53.6%	37.5%	36.9%	65
25-34	41.5%	32.1%	32.9%	79
35-49	62.7%	50.0%	48.8%	82
50-59	(60.6%)	(43.8%)	46.9%	32
Կրթությունը				
Հիմնական	*	*	*	9
Միջնակարգ	51.9%	38.2%	41.6%	125
Միջին մասնագիտական	(73.5%)	(54.5%)	(62.5%)	32
Բարձրագույն	49.5%	37.1%	31.5%	92
Բնակության վայրը				
Երևան	57.9%	41.7%	37.0%	108
Այլ քաղաքային	45.9%	33.8%	37.0%	73
Գյուղական	54.4%	45.3%	49.4%	77
Ընդամենը	**53.8%**	**40.7%**	**40.9%**	**258**

Ինչպես ցույց են տալիս Աղյուսակի տվյալները, ամենատարեց տղամարդ հարցվածները ավելի անհանդուրժող են և ավելի են հակված նույնասեռական տղամարդկանց հանդեպ բռնության արդարացմանը:

Կրթությունը ևս ուղղակի առնչություն ունեցող գործոն չէ[62]: Բարձրագույն կրթությամբ տղամարդիկ ավելի քիչ են հակված համաձայնելու նույնասեռական տղամարդկանց հանդեպ բռնության գործադրմանը հատկապես այն դեպքում, երբ նույնասեռական տղամարդն իրենց հետ չի շփվում:

Ինչ վերաբերում է հարցվածների բնակության վայրին, ապա միատեսակ օրինաչափություն չկա: Ընդհանուր առմամբ գյուղաբնակ հարցվածներն ավելի են հակված նույնասեռական տղամարդկանց հանդեպ բռնությունն արդարացնելուն:

Եվս մեկ անգամ հարկ է փաստել, որ բավականին մեծ է նույնասեռական տղամարդկանց հանդեպ բռնությունն արդարացնողների տղամարդ հարցվածների մասնաբաժինը և որ նրանց որդեգրած դիրքորոշումը և նրանց հիմնական կենսագրական բնութագրիչները, որպիսիք են տարիքը, կրթությունը և բնակության վայրը, չեն փոխհարաբերակցվում:

---

[62] Մանե Ադամյանը, ով ուսումնասիրություն է անցկացրել՝ հետազոտելու համար հայ ազգաբնակչության վերաբերմունքը նույնասեռական կանանց և տղամարդկանց նկատմամբ, պարզել է, որ հարցվածների մոտ 92%-ը այլասեռվածություն են համարում կանանց նույնասեռականությունը, իսկ 89%-ը՝ տղամարդկանցը: Նա եկել է այն եզրակացությանը, որ «մենք ականատես ենք լինում այն փաստին, որ կրթությունը որևէ դրական ազդեցություն չի գործում սեռական փոքրամասնությունների հանդեպ դրական վերաբերմունքի ձևավորման վրա Հայաստանի Հանրապետությունում»: Ադամյան Մանե «Ազդու՞մ է արդյոք կրթությունը համասեռաոլության նկատմամբ վերաբերմունքի վրա Հայաստանում» *Կովկասյան հետազոտական ռեսուրսների կետրոն –Հայաստան բլոգ:* Ապրիլ 26, 2016. http://crrcam.blogspot.am/2016/04/does-education-make-difference-in.html
Ելնելով նույնասեռական կանանց և տղամարդկանց նկատմամբ անհանդուրժողականության սոցիալական կոնտեքստից և այն հանգամանքից, որ անգամ բարձրագույն կրթությունը տարբերություն չի մտցնում այս հարցում, զարմանալի չէ, որ սույն հետազոտությայն մեջ կրթությունը հանդես չի գալիս իբրև գործոն և որ բարձրագույն կրթությամբ տղամարդ հարցվածների զգալի մասնաբաժինն արդարացնում են նույնասեռական տղամարդը հանդեպ բռնության գործադրումը:

Հավելված I[63]

Սեռական զուգընկերոջ ֆիզիկական բռնության նկատմամբ վերաբերմունք

Տղամարդ և կին հարցվածների տոկոսը, ովքեր ԴԵՄ են հետևյալ պնդումներին

Աղյուսակ 21. Սեռական զուգընկերոջ ֆիզիկական բռնության նկատմամբ վերաբերմունքը. տղամարդիկ

Բոլոր այն տղամարդկանց տոկոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների, ովքեր ***դեմ են***, որ սեռական զուգընկերը/ ամուսինը կարող է որոշակի պատճառով արդարացվել իր կնոջը/զուգընկերոջը խփելու կան ծեծելու համար *					
Տղամարդը կարող է արդարացվել իր կնոջը ծեծելու կամ խփելու դեպքում, քանի որ.					
Կենսագրական բնութագրիչներ	Կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն ընտանիքի միասնության	Որոշ դեպքերում կինը ծեծի է արժանի	Եթե կինը տղամարդուն դավաճանում է, ապա նա կարող է նրան խփել	Տղամարդը կարող է խփել կնոջը, եթե նա հրաժարվում է իր հետ սեքսով զբաղվել	Տղամարդկանց թիվը **N = 767**
Տարիքը					
18-24	64.0	69.3	32.0	92.2	**153**
25-34	57.9	61.7	26.3	92.8	**209**
35-49	46.0	56.4	38.4	89.6	**250**
50-59	51.0	68.4	49.1	89.0	**155**
Կրթությունը					
Հիմնական	(25.0)	(50.1)	(15.7)	(87.5)	**32**
Միջնակարգ	47.4	60.3	33.8	89.1	**403**
Միջին մասնագիտական	50.0	64.3	38.1	89.7	**126**
Բարձրագույն	73.3	68.9	42.3	95.7	**206**
Ամուսնական կարգավիճակը					
Գրանցված ամուսնություն	53.7	61.8	37.7	91.2	**408**
Չգրանցված ամուսնություն	47.0	57.9	27.7	95.2	**83**

[63] Կին և տղամարդ հարցվածների «կողմ» և «դեմ» պատասխանների ընդհանուր համապատասխան տոկոսները ամփոփելիս(բաշխված ըստ կենսագրական բնութագրիչների)՝ թիվը 100-ից պակաս է, քանի որ պատասխանների չնչին տոկոսը «Չգիտեմ» կամ «Չեմ կարող պատասխանել» կամ «Հրաժարվում եմ պատասխանել» ներառված չեն Աղյուսակներում թե Բաժնի տեքստում և թե սույն Հավելվածում:

Ընկերուհի (համատեղ կյանք չեն վարում)	(64.2)	(64.3)	(42.8)	(89.2)	**28**
Չամուսնացած	59.6	70.0	36.6	90.2	**213**
Բաժանված/ ամուսնալուծված	(29.2)	(33.4)	(29.2)	(79.2)	**24******
Այրի	*	*	*	*	**2**
Բնակության վայրը					
Երևան	67.4	64.7	42.6	93.0	**258**
Այլ քաղաքային	51.4	62.9	33.6	89.4	**226**
Գյուղական	43.5	61.1	31.8	90.1	**283**
Զբաղվածությունը *****					
Երբեք չի աշխատել	(47.5)	(75.0)	(27.5)	(82.5)	**40**
Ուսանող	(79.2)	(79.2)	(58.4)	(100.0)	**24******
Գործազուրկ	46.2	62.3	40.6	88.7	**249**
Գրանցված աշխատող	63.9	59.8	37.0	93.8	**224**
Չգրանցված աշխատող	50.7	62.1	28.6	90.8	**227**
Ընդամենը	**53.9%**	**62.9%**	**36.0%**	**90.9%**	**767**
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թվային տվյալը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:					

** Տվյալների հեշտ ներկայացման, համեմատության և վերլուծության նպատակով «խիստ կողմ եմ» և «կողմ եմ» պատասխանները միավորվել են՝ տրված պնդման հետ համամիտ կանանց տոկոսը որոշելու համար.
*** Քանի որ «Ոչ ֆորմալ միություն/ համատեղ կյանք» կատեգորիայում ընդամենը 9 հարցվածներ կային, այդ կատեգորիան չէր ներկայացվել (հետևաբար հարցվածների ընդհանուր թիվն այս սեկցիայում 758 է):
**** Սահմանագծային դեպքերի տվյալները լրիվ վավեր են համարվում:

***** Քանի որ «ուսուցման համատեղում աշխատանքի հետ» կատեգորիայում կային ընդամենը 2 հարցված, իսկ «Երեխայի խնամքի կամ այլ տեսակի արձակուրդում» կատեգորիայում՝ 1 հարցված, այս կատեգորիաները չեն ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 764):

Աղյուսակ 22. Սեռական զուգընկերոջ հանդեպ ֆիզիկական բռնության նկատմամբ վերաբերմունքը.կանայք

Բոլոր այն կանանց տոկոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների, ովքեր ***դեմ են***, որ սեռական զուգընկերը/ ամուսինը կարող է որոշակի պատճառով արդարացվել իր կնոջը/զուգընկերոջը խփելու կան ծեծելու համար **					
Տղամարդը կարող է արդարացվել իր կնոջը ծեծելու կամ խփելու դեպքում, քանի որ.					
Կենսագրական բնութագրիչներ	Կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն	Որոշ դեպքերում կինը ծեծի է արժանի	Եթե կինը տղամարդուն դավաճանում է, ապա նա	Տղամարդը կարող է խփել կնոջը, եթե նա հրաժարվում	Կանանց թիվը N = 850

	ընտանիքի միասնության		կարող է նրան խփել	է իր հետ սեքսով զբաղվել	
Տարիքը					
18-24	91.7	88.0	55.6%	95.5%	**133**
25-34	69.8	77.4	30.5%	94.8%	**252**
35-49	67.4	76.6	46.0%	90.7%	**291**
50-59	63.2	74.7	53.4%	92.0%	**174**
Կրթությունը* **					
Հիմնական	*	*	*	*	**14**
Միջնակարգ	60.5	75.0	40.5%	91.1%	**324**
Միջին մասնագիտական	71.8	77.1	47.3%	91.8%	**245**
Բարձրագույն	85.7	83.9	57.5%	97.7%	**266**
Ամուսնական կարգավիճակը ** **					
Օրինական ամուսնություն	67.5	75.6	40.9%	91.8%	**533**
Քաղաքացիական կարգով ամուսնություն	72.6	75.8	45.3%	93.7%	**95**
Ընկեր (համատեղ կյանք չեն վարում)	*	*	*	*	**9**
Չամուսնացած	86.2	88.7	66.9%	94.4%	**124**
Բաժանված/ ամուսնալուծված	74.0	74.0	62.0%	98.0%	**50**
Այրի	(53.3)	(86.7)	(63.4%)	(100.0%)	**30**
Բնակության վայրը					
Երևան	84.6	83.1	59.6%	95.8%	**312**
Այլ քաղաքային	69.9	76.0	48.0%	93.5%	**246**
Գյուղական	57.6	75.0	33.9%	89.4%	**292**
Զբաղվածությունը *** **					
Երբեք չի աշխատել	59.1	68.4	35.1%	88.3%	**171**
Ուսանող	93.)	95.8	64.6%	93.8%	**48**** **
Գործազուրկ	58.5	78.1	44.7%	92.5%	**356**
Գրանցված աշխատող	80.5	71.2	60.0%	95.7%	**185**

Չգրանցված աշխատող	69.2	82.3	47.1%	97.0%	**68**
Ընդամենը	**71.1%**	**78.3%**	**47.4%**	**93.0%**	**850**
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թվային տվյալը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:					

** Տվյալների հեշտ ներկայացման, համեմատության և վերլուծության նպատակով «խիստ կողմ եմ» և «կողմ եմ» պատասխանները միավորվել են՝ տրված պնդման հետ համամիտ կանանց տոկոսը որոշելու համար.

*** Քանի որ «Տարրական կամ ավելի ցածր կրթություն» կատեգորիայում կար ընդամենը 1 հարցված, այդ կատեգորիան չի ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 849):
**** Քանի որ «Ոչ ֆորմալ միություն/ համատեղ կյանք» կատեգորիայում ընդամենը 9 հարցվածներ կային, այդ կատեգորիան չէր ներկայացվել (հետևաբար հարցվածների ընդհանուր թիվն այս սեկցիայում 841 է):
***** Քանի որ «ուսուցման համատեղում աշխատանքի հետ» կատեգորիայում կար ընդամենը 1 հարցված, 2 հարցված ընդհանրապես չէին պատասխանել կամ հրաժարվել էին պատասխանելուց, իսկ «Երեխայի խնամքի կամ այլ տեսակի արձակուրդում» կատեգորիայում՝ 19 հարցվածներ, այս կատեգորիաները չեն ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 828):
****** Սահմանագծային դեպքերի տվյալները լրիվ վավեր են համարվում:

Հավելված II[64]

Բռնաբարության նկատմամբ վերաբերմունքը

Աղյուսակ 23. Բռնաբարության նկատմամբ վերաբերմունքը

Հետևյալ պնդումների հետ համաձայն կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունն ըստ տարիքի

Բոլոր կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունն ըստ տարիքի, ովքեր ***համաձայն են*** բռաբարության մեջ կնոջը մեղադրելու պնդումներին										
Կենսագրական բնութագրիչներ	Երբ կին է բռնաբարվում, սովորաբար նա է ինչ-որ բան արել՝ իրեն դնելով այդ իրադրության մեջ		Որոշ բռնաբարության դեպքերում, կանայք իրականում ուզում են, որ դա տեղի ունենա		Եթե կինը ֆիզիկապես չի հակադարձում, ապա հնարավոր չէ հաստատապես պնդել, որ տեղի ունեցածը բռնաբարություն է		Ցանկացած բռնաբարության դեպքում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք զոհը պատահական սեռական կապեր կամ վատ համբավ չի ունեցել		Տղամարդկանց թիվը N = 767	Կանանց թիվը N = 850
Տարիք	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ
18-24	39.2	15.8	44.4	21.8	58.9	54.1	66.7	60.9	**153**	**133**
25-34	39.7	28.9	43.5	29.3	63.6	61.1	60.8	64.3	**209**	**252**
35-49	42.0	25.1	42.0	26.1	62.8	59.5	66.0	60.1	**250**	**291**

[64] Կին և տղամարդ հարցվածների «կողմ» և «դեմ» պատասխանների ընդհանուր համապատասխան տոկոսները ամփոփելիս(բաշխված ըստ կենսագրական բնութագրիչների)՝ թիվը 100-ից պակաս է, քանի որ պատասխանների չնչին տոկոսը «Չգիտեմ» կամ «Չեմ կարող պատասխանել» կամ «Հրաժարվում եմ պատսպխանել» ներառված չեն Աղյուսակներում թե Բաժնի տեքստում և թե սույն Հավելվածում:

50-59	42.4	22.4	47.1	36.8	58.1	56.3	64.5	58.0	**155**	**174**

Աղյուսակ 24. Բռնաբարության նկատմամբ վերաբերմունքը

Հետևյալ պնդումների հետ համաձայն կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունն ըստ կրթության.

Բոլոր կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունն *ըստ կրթության*, ովքեր ***համաձայն են*** բռաբարության մեջ կնոջը մեղադրելու պնդումներին										
Կենսագրական բնութագրիչներ	Երբ կին է բռնաբարվում, սովորաբար նա է ինչ-որ բան արել՝ իրեն դնելով այդ իրադրության մեջ		Որոշ բռնաբարության դեպքերում, կանայք իրականում ուզում են, որ դա տեղի ունենա		Եթե կինը ֆիզիկապես չի հակադարձում, ապա հնարավոր չէ հաստատապես պնդել, որ տեղի ունեցածը բռնաբարություն է		Ցանկացած բռնաբարության դեպքում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք զոհը պատահական սեռական կապեր կամ վատ համբավ չի ունեցել		Տղամարդկանց թիվը N = 767	Կանանց թիվը N = 850
Կրթություն	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ
Հիմնական	(46.9)	*	(40.7)	*	(68.7)	*	(81.3)	*	**32**	**14**
Միջնակարգ	42.6	28.7	44.5	30.9	62.3	61.1	67.0	65.7	**403**	**324**
Միջին մասնագիտական	42.9	22.0	47.6	28.6	65.1	62.0	61.9	58.4	**126**	**245**
Բարձրագույն	35.4	19.6	41.3	25.5	55.9	53.0	58.3	55.4	**206**	**266**
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թվային տվյալը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:										

Աղյուսակ 25. Բռնաբարության նկատմամբ վերաբերմունքը

Հետևյալ պնդումների հետ համաձայն կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունն ըստ ամուսնական կարգավիճակի.

Բոլոր կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունն *ըստ ամուսնական կարգավիճակի,* ովքեր ***համաձայն են*** բռաբարության մեջ կնոջը մեղադրելու պնդումներին *						
Կենսագրական բնութագրիչներ	Երբ կին է բռնաբարվում, սովորաբար նա է ինչ-որ բան արել՝ իրեն դնելով այդ իրադրության մեջ	Որոշ բռնաբարության դեպքերում, կանայք իրականում ուզում են, որ դա տեղի ունենա	Եթե կինը ֆիզիկապես չի հակադարձում, ապա հնարավոր չէ հաստատապես պնդել, որ տեղի ունեցածը բռնաբարություն է	Ցանկացած բռնաբարության դեպքում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք զոհը պատահական սեռական կապեր կամ վատ համբավ չի ունեցել	Տղամարդկանց թիվը N = 767	Կանանց թիվը N = 850

Ամուսնական կարգավիճակը	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ
Գրանցված ամուսնություն	40.7	24.4	43.6	28.9	62.5	59.3	65.7	61.3	**408**	533
Չգրանցված ամուսնություն	33.8	27.4	43.3	28.5	57.8	60.0	57.8	63.2	**83**	95
Ընկեր/ընկերուհի (համատեղ կյանք չեն վարում))	(50.0)	*	(50.0)	*	(64.3)	*	(60.7)	*	**28**	9
Չամուսնացած	39.5	21.7	42.3	25.0	57.7	50.0	63.9	56.4	**213**	124
Բաժանված/ամուսնալուծված	(58.4)	16.0	(41.7)	26.0	(66.7)	62.0	(70.9)	70.0	**24*** **	50
Այրի	*	(30.0)	*	(43.4)	*	(63.3)	*	(53.3)	**2**	30
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թվային տվյալը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:										

Աղյուսակ 26. Բռնաբարության նկատմամբ վերաբերմունքը

Հետևյալ պնդումների հետ համաձայն կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունն ըստ բնակության վայրի.

Բոլոր կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունն *ըստ բնակության վայրի,* ովքեր ***համաձայն են*** բռաբարության մեջ կնոջը մեղադրելու պնդումներին *										
Կենսագրական բնութագրիչներ	Երբ կին է բռնաբարվում, սովորաբար նա է ինչ-որ բան արել՝ իրեն դնելով այդ իրադրության մեջ		Որոշ բռնաբարության դեպքերում, կանայք իրականում ուզում են, որ դա տեղի ունենա		Եթե կինը ֆիզիկապես չի հակադարձում, ապա հնարավոր չէ հաստատապես պնդել, որ տեղի ունեցածը բռնաբարություն է		Ցանկացած բռնաբարության դեպքում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք զոհը պատահական սեռական կապեր կամ վատ համբավ չի ունեցել		Տղամարդկանց թիվը N = 767	Կանանց թիվը N = 850
Բնակության վայրը	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ
Երևան	35.2	18.3	41.4	28.8	59.7	56.4	56.6	51.6	**258**	**312**
Այլ քաղաքային	40.3	28.0	42.9	24.8	63.3	58.1	69.0	62.6	**226**	**246**
Գյուղական	46.6	27.4	47.0	31.5	61.1	61.0	67.8	69.9	**283**	**292**

Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թվային տվյալը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:

Աղյուսակ 27. Բռնաբարության նկատմամբ վերաբերմունքը

Հետևյալ պնդումների հետ համաձայն կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունն ըստ զբաղվածության.

Բոլոր կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունն *ըստ զբաղվածության,* ովքեր ***համաձայն են*** բռաբարության մեջ կնոջը մեղադրելու պնդումներին										
Կենսագրական բնութագրիչներ	Երբ կին է բռնաբարվում, սովորաբար նա է ինչ-որ բան արել՝ իրեն դնելով այդ իրադրության մեջ		Որոշ բռնաբարության դեպքերում, կանայք իրականում ուզում են, որ դա տեղի ունենա		Եթե կինը ֆիզիկապես չի հակադարձում, ապա հնարավոր չէ հաստատապես պնդել, որ տեղի ունեցածը բռնաբարություն է		Ցանկացած բռնաբարության դեպքում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք զոհը պատահական սեռական կապեր կամ վատ համբավ չի ունեցել		Տղամարդկանց թիվը N = 767	Կանանց թիվը N = 850
Զբաղվածությունը	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ**	Կ**
Երբեք չի աշխատել	(40.0)	29.8	(47.5)	32.8	(60.0)	63.7	(62.5)	70.7	**40**	**171**
Ուսանող	(25.0)	8.4	(29.2)	20.9	(54.2)	45.8	(41.7)	52.1	**24*** **	**48**** **
Գործազուրկ	41.4	25.3	41.3	30.4	63.8	60.9	65.5	60.1	**249**	**356**
Գրանցված աշխատող	39.2	22.2	46.0	23.2	62.9	54.0	64.7	54.6	**224**	**185**
Չգրանցված աշխատող	43.6	25.0	45.4	33.9	57.7	55.9	65.2	64.7	**227**	**68**
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թվային տվյալը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:										

** Քանի որ «ուսուցման համատեղում աշխատանքի հետ» կատեգորիայում կային ընդամենը 2 հարցված, իսկ «Երեխայի խնամքի կամ այլ տեսակի արձակուրդում» կատեգորիայում՝ 1 հարցված, այս կատեգորիաները չեն ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 764 է):

*** Քանի որ «ուսուցման համատեղում աշխատանքի հետ» կատեգորիայում կար ընդամենը 1 հարցված, 2 հարցված ընդհանրապես չէին պատասխանել կամ հրաժարվել էին պատասխանելուց, իսկ «Երեխայի խնամքի կամ այլ տեսակի արձակուրդում» կատեգորիայում՝ 19 հարցվածներ, այս կատեգորիաները չեն ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 828):

**** Սահմանագծային դեպքերի տվյալները լրիվ վավեր են համարվում:

ԳԼՈՒԽ 4. ՏՂԱՄԱՐԴՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Որոշումների կայացումը

Որոշումների կայացումն ամենաուշագրավ խնդիրներից է ընտանիքում գենդերային դերերի ուսումնասիրության դիտանկյունից և առնականության ու կանացիության հասկացությունների և ընկալումների փոփոխությունների առումով: Գենդերային բուրգը հայկական ընտանիքի անբաժան մասն է եղել: Բազմասերունդ ընտանիքում կար հստակ կառուցված հիերարխիա՝ հորիզոնական և ուղղահայաց կապերով:

Այսօր ընտանիքների մեծ մասն ըստ էության միակազմ են. հորիզոնական և ուղղահայաց կապերը, որոնք բնորոշ են մեծ ընտանիքին, մեծամասամբ վերացել են: Քանի որ կանայք մտել են հանրային ոլորտ հասարակությունում տեղի են ունեցել արմատական փոփոխություններ: Այս տեսանկյունից հետաքրքրական է ուսումնասիրել փոփոխությունների խորությունն ու գնահատել հնարավոր զարգացումները:

Սույն գլխում արծարծվող խնդիրներն այնպես են հերթագայվում, որ հնարավոր է դառնում որոշումների կայացման ողջ մեխանիզմն ուսումնասիրել և գնահատել այն տարիքի, կրթության և բնակության գործոնների ազդեցության տեսանկյուններից: Դրանք ներառում են ոչ նշանակալի և գլոբալ խնդիրներ, որոնք վերլուծվում են կանանց և տղամարդկանց տեսանկյուններից: Հասկանալու հարար, թե ով է վերջնական որոշումներ կայացնում՝ կապված (սննդի կամ հագուստի) ծախսերի, մեծ ներդրումների (ինչպես մեքենա կամ տուն գնելն է), ընկերների և բարեկամների, տանից դուրս աշխատանքի և ազատ ժամանակ հանգստի կազմակերպման հետ, կին և տղամարդ հարցվածներին(N=1617) տրվել են միևնույն հարցերը: Հետաքրքիր է նշել, որ գրեթե բոլոր դեպքերում ավելի բարձր տոկոս են առձանագրել միասնական որոշումները, քանի որ առանձին դեպքերում դա կազմում է համապատասխանաբար 59.2% սննդի գնման, 55.9% մեծ ներդրումների, 71.8% բարեկամների և ընկերների հետ հարաբերությունների համար: Նույնիսկ տանից դուրս աշխատանքի և ազատ

ժամանակի դեպքում հարցվածների 47.9% և 63% նախապատվությունը տվել են «միասին » կետին:

Աղյուսակ 1. Որոշումների կայացում

Ծախսումների վերաբերյալ որոշումների կայացման մասին հարցերին պատասխանած հարցվածների տոկոսը N=1617

Ձեր ներկայիս կամ ամենավերջին հարաբերություններում ո՞վ որոշում կայացնողը	Որոշումները կայացնում եք				
	Դուք	Ձեր զուգընկերը	Դուք և Ձեր զուգընկերը միասին	Մեկ այլ անձ (նշել)	Դուք մեկ այլ անձի հետ համատեղ
Ինչպե՞ս եք Դուք զումար ծախսում սննդի և հագուստի վրա	14.8	9.1	59.2	2.2	1.5
Ինչպե՞ս եք Դուք զումար ծախսում խոշոր ներդրումների, ինչպես օրինակ՝ մեքենա, առանձնատուն կամ կենցաղային տեխնիկա ձեռքբերելիս	13.8	10.4	55.9	2.5	1.7
Ինպե՞ս եք Դուք ժամանակ անցկացնում ընտանիքի, ընկերների և բարեկամների հետ	13.3	6.4	71.8	0.8	0.9
Կարո՞ղ է արդյոք Ձեր զուգընկերը տանից դուրս աշխատել:	19.0	22.6	47.9	0.7	0.2
Դուք և Ձեր զուգընկերն օգտագործու՞մ եք հակաբեղմնավորիչներ:	9.5	3.2	39.1	0.2	
Ինչպե՞ս եք անցկացնում Ձեր ազատ ժամանակը:	25.8	5.2	63.0	0.4	

Միևնույն խնդրի քննումը ըստ սեռային բաշխվածության սկզբունքի բացահայտում է հետևյալ պատկերը.

Աղյուսակ 2. Որոշումների կայացում

Ծախսումների վերաբերյալ որոշումների կայացման մասին հարցերին պատասխանած կին և տղամարդ հարցվածների տոկոսը

(Տղամարդիկ N=482, կանայք N=670)

Ձեր ներկայիս կամ ամենավերջին հարաբերություններում ո՞վ որոշում կայացնողը	Որոշումները կայացնում եք									
	Դուք		Ձեր զուգընկերը		Դուք և Ձեր զուգընկերը միասին		Մեկ այլ անձ		Դուք մեկ այլ անձի հետ համատեղ	
	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ
Ինչպե՞ս եք Դուք զումար ծախսում սննդի և հագուստի վրա	12.7	16.8	8.8	9.3	54.3	63.8	2.7	1.8	1.0	2.0
Ինչպե՞ս եք Դուք զումար ծախսում խոշոր ներդրումների, ինչպես օրինակ՝ մեքենա, առանձնատուն կամ կենցաղային տեխնիկա ձեռք բերելիս	22.3	5.7	2.9	17.5	49.3	62.1	1.9	3.1	0.9	2.6
Ինպե՞ս եք Դուք ժամանակ անցկացնում ընտանիքի, ընկերների և բարեկամների հետ	19.7	7.2	2.3	10.2	66.6	76.7	0.6	1.1	0.4	1.4
Կարո՞ղ է արդյոք Ձեր զուգընկերը տանից դուրս աշխատել:	33.6	5.3	6.5	37.8	47.4	48.4	0.1	1.2	0.1	0.3
Դուք և Ձեր զուգընկերն օգտագործու՞մ եք հակաբեղմնավորիչներ:	11.3	7.9	1.9	4.5	36.2	41.9	0	0.4	-	-
Ինչպե՞ս եք անցկացնում Ձեր ազատ ժամանակը:	29.4	22.4	2.2	8.0	60.5	65.3	0.3	0.5	0.3	0.3

Այն հարցին, թե ով է որոշում ինչպես ծախսել փողը ուտելիք և հագուստ գնելիս, տղամարդկանց 54%-ը և կանանց 64%-ը պատասխանել են՝ նշելով, որ նրանք զուգընկերոջ հետ միասին են որոշում կայացնում. Կանանց 17% և տղամարդկանց 13%-ը նշել են, որ ինքնուրույն են որոշում, և տղամարդկանց 9%-ը և կանանց 9%-ը նշել են, որ որոշումներ կայացնողն իրենց զուգընկերն է:

Կանանց 62% և տղամարդկանց 49%-ը նշել են, որ նրանք են որոշումներ կայացնում խոշոր գնումների դեպքում (մեքենա, տուն կամ կենցաղային) իրենց զուգընկերոջ հետ միասին: Պատասխանը ցույց է տալիս, որ խոշոր ներդրումների դեպքում մեծանում է

տղամարդկանց դերակատարումը: Հավանաբար տղամարդկանց մի մասը իրենց կանանց խորհրդի կարիքն ունեն և դա կանանց մոտ ստեղծում է այն խաբուսիկ տպավորությունը, որ նրանք միասին են որոշում: Կամ, հավանաբար, տղամարդիկ չեն ուզում խոստովանել, որ իրենք ավելի շատ հաշվի են նստում իրենց կանանց հետ մեծ գնումներ կատարելիս և նույնիսկ ավելի շատ՝ այն պատճառով, որ գնումները կախված են կանանց կամ իրենց համատեղ աշխատանքից:

Մեծ թիվ են կազմում այն տղամարդիկ, ովքեր նշել են, որ իրենք ինքնուրույն են որոշումներ կայացնում և սա վերահաստատվում է կանանց պատասխաններում: Տղամարդ հարցվածների 22 %-ը և կին հարցվածների 6%-ը նշել են, որ նրանք ինքնություն են որոշում, իսկ տղամարդկանց 3% և կանանց 17%-ը նշել են, որ մեծ գնումների դեպքում, որշում կայացնողն իրենց զուգընկերներն են:

Տղամարդկանց 67% և կանանց 77%-ը որոշում են, թե ինչպես անցկացնեն ժամանակը ընտանիքի, ընկերների և բարեկամների հետ՝ իրենց զուգընկերների հետ միասին: Տղամարդկանց 20% և կանանց 7% -ը նշել են, որ նրանք ինքնուրույն են որոշում, իսկ տղամարդկանց 2% և կանանց 10%-ը նշել են, որ իրենց զուգընկերներն են որոշումներ կայացնում:

Ըստ տղամարդկանց 47% և կանանց 48%-ի՝ զուգընկերոջ՝ տնից դուրս աշխատելու հնարավորությունը որոշվում է համատեղ: Տղամարդկանց 34% և կանանց 5%-ը նշել են, որ իրենք ինքուրույն են որոշում կայացրել իրենց աշխատանքի առնչությամբ, իսկ տղամարդկանց 6% և կանանց 38%-ը պատասխանել են, որ իրենց զուգընկերներն են որոշում կայացրել: Իրականում հանրային ոլորտում կանանց աշխատանքի մասին կարծրատիպերը դեռ ազդեցություն ունեն: Չնայած հարցվածների 47%-ը նշել են, որ այս խնդիրներին լուծում է տրվում իրենց զուգընկերների հետ համատեղ քննարկմամբ, կանանց 38%-ը նշել են, որ իրենց զուգընկերների որոշումը գերակա է:

Ըստ տղամարդկանց 36% և կանանց 42%-ի՝ հակաբեղմնավորիչ օգտագործելը համատեղ որոշմամբ է: Տղամարդկանց 11% և կանանց 8%- ը ինքնուրույն են որոշում կայացնում, մինչդեռ տղամարդկանց 2% և կանանց 5%-ը նշել են, որ իրենց զուգընկերներն են որոշում:

Ազատ ժամանակի բաշխումը միասին է կատարվում ըստ տղամարդկանց 60% և կանանց 65%-ի: Տղամարդկանց 29% և կանանց 22% իրենք են որոշում, իսկ տղամարդկանց 2% և կանանց 8%-ը նշել են, որ իրենց զուգընկերներն են այդ որոշումը կայացնում:

Այս հարցին տրված պատասխանները ինչ-որ չափով հակադրվում են նախորդ հարցին: Եթե կանանց 22%-ը իրենք են որոշում՝ ինչպես անցկացնեն իրենց ազատ ժամանակը, այդ դեպքում ինչու նա չի կարող աշխատելու վերաբերյալ ևս որոշում կայացնել: Սրա պատճառն այն է, որ տղամարդիկ վախենում են տնտեսապես անկախ կանանցից և վախենում են հաց վաստակողի դերից, կամ էլ պարզապես եսասեր են դառնում՝ ենթադրելով, որ աշխատող կանայք չեն հասցնի ամբողջովին կատարել տնային պարտականությունները:

Աղյուսակ 3. Որոշումների կայացում

Ծախսումների վերաբերյալ որոշումների կայացման մասին հարցերին պատասխանած հարցվածների տոկոսը ըստ կենսագրական բնութագրիչների. N=1617

Ինչպե՞ս եք Դուք զումար ծախսում սննդի և հագուստի վրա	Որոշումները կայացնում եք				
	Դուք	Ձեր զուգընկերը	Դուք Ձեր զուգընկերոջ հետ միասին	Մեկ ուրիշը	Դուք և մեկ ուրիշը միասին
Տարիքը					
18-24	5.2%	3.6%	29.4%	3.1%	2.1%
25-34	13.6%	9.3%	59.8%	3.1%	1.9%
35-49	18.1%	9.9%	65.2%	1.9%	1.0%
50-59	17.1%	10.9%	67.4%	1.0%	1.6%
Կրթությունը					
Հիմնական	26.2%	4.8%	59.5%	0.0%	0.0%
Միջնակարգ	13.0%	8.2%	58.2%	3.0%	1.7%
Միջին մասնագիտական	17.8%	12.1%	60.4%	1.8%	0.9%
Բարձրագույն	14.0%	8.5%	59.9%	1.7%	1.9%
Բնակության վայրը					
Երևան	16.5%	8.7%	56.9%	0.8%	1.2%
Այլ քաղաքային	15.9%	9.7%	59.4%	1.2%	1.7%
Գյուղական	12.3%	8.9%	61.3%	4.4%	1.7%

Միևնույն հարցերին տրված պատասխաններն ուսումնասիրվել են նաև տարիքի, կրթության և բնակության վայրի հաշվառումով:

Սննդի և հագուստի ծախսերին վերաբերող հարցին պատասխանների պարագայուն կրթությունն ու բնակության վայրը որևէ էական ազդեցություն չեն ունենում: Սակայն, երբ խնդրին նայում ենք տարիքի տեսակետից, երևան է գալիս հետևյալ փոխառնչակցությունը. Ինչքան ավելի բարձր է տարիքը, այնքան բարձր է զուգընկերների համագործակցության և համատեղ որոշումների ընդունման տոկոսը:

18-24 տարիքային խմբում հարցվածների միայն 29%-ն է նշել, որ նրանք որոշումները կայացնում են զուգընկերների հետ միասին: 25-34 տարիքային խմբի համար այս տոկոսաչափն աճում է՝ հասնելով 60% նիշին. 35-49 տարեկանների դեպքում այն հասնում է 65%-ի, իսկ 50-59 տարեկանների դեպքում՝ 67%-ի: Տարիքի մեծացմանը զուգընթաց աճում է նաև անկախ և զուգընկերոջ հետ ընդունած որոշումների թիվը: Այս դրույթը լուսաբանելու նպատակով կարող ենք նշել, որ 18-24 տարիքային խմբում հարցվածների 5%-ը որոշումներն անկախ են կայացնում, իսկ 25-34 տարիքային խմբում 14%-ն է անկախ որոշումներ ընդունողը, իսկ 35-ից բարձր տարիքային խմբում այս ցուցանիշը կազմում է 18%:

Այս օրինաչափությունն է նկատվում նաև զուգընկերների որոշումների կայացման ժամանակ, այն է՝ հարցվածների 4%-ը 18-24 տարիքային խմբում նշել են, որ իրենց զուգընկերներն են որոշում, տոկոսային ցուցանիշը 9% է 25-34 տարիքային խմբում և 10% է 35-ից բարձր տարիքային խմբում:

Ավելի երիտասարդ տարիքում այլ մարդկանց կողմից որոշումների ընդունման հավանականությունն ավելի բարձր է, թեև այս դեպքերի մասնաբաժինը մեծ չէ. 18-34 տարիքային խմբում միայն հարցվածների 3% է նշել, որ կողմնակի անձ է միջամտել այս հարցում, նույն իրադրությունն է նաև 35-49 տարիքային խմբի 2%-ի մոտ, իսկ 50-59 տարեկանների դեպքում գրանցվել է ընդամենը 1%:

Գյուղական բնակավայրերում հարցվածների 4%-ը, պատասխանելով սնունդ և հագուստ գնելիս կողմնակի մարդկանց միջամտությամբ որոշումների կայացման մասին, նշել են կողմնակի անձանց, թեպետև այս խնդրի առնչությամբ միջին ցուցիչը կազմում է 2%:

Աղյուսակ 4. Որոշումների կայացում

Ծախսումների վերաբերյալ որոշումների կայացման մասին հարցերին պատասխանած հարցվածների տոկոսը.

Ինչպե՞ս եք Դուք գումար ծախսում խոշոր ներդրումների, ինչպես օրինակ՝ մեքենա, առանձնատուն կամ կենցաղային տեխնիկա ձեռք բերելիս	Որոշումները կայացնում եք				
	Դուք	Ձեր զուգընկերը	Դուք Ձեր զուգընկերոջ հետ միասին	Մեկ ուրիշը	Դուք մեկ ուրիշի հետ միասին
Տարիքը					
18-24	4.1%	4.6%	25.8%	3.6%	3.1%
25-34	12.6%	13.1%	54.3%	3.3%	2.9%
35-49	17.3%	10.5%	63.0%	1.8%	0.6%
50-59	15.5%	10.2%	65.1%	2.0%	1.3%
Կրթությունը					
Հիմնական	26.2%	7.1%	54.8%	0.0%	0.0%
Միջնակարգ	14.1%	8.3%	54.3%	3.1%	1.7%
Միջին մասնագիտական	12.4%	12.7%	60.4%	2.7%	1.5%
Բարձրագույն	13.0%	12.1%	54.8%	1.7%	2.2%
Բնակավայր					
Երևան	12.6%	9.6%	54.7%	1.0%	1.6%
Այլ քաղաքային	13.1%	10.7%	58.4%	1.7%	2.1%
Գյուղական	15.4%	11.0%	54.9%	4.6%	1.5%

Այս օրինաչափությունը գործում է նաև մի շարք այլ պատասխաններում: Մեքենայի, տան կամ կենցաղային տեխնիկայի ձեռքբերման ծախսերի առնչությամբ 18-24 տարիքային խմբում միայն հարցվածների 26% էր նշել զուգընկերների հետ համատեղ որոշումների կայցման մասին: 24-35 տարիքային խմբում թիվն աճում է մինչև 54%, 35-49 տարիքային խմբում այն հասնում է 63%-ի, իսկ 50-59 տարեկանների դեպքում այն կազմում է 65%:

18-24 տարիքային խմբում հարցվածների 4%-ը նշել են, որ նրանք ինքնուրույն են որոշում: Այս հարցում անկախ որոշումների մասնաբաժինը կազմում է 13% 25-34 տարիքային խմբում, և 17% 35 տարեկան և բարձր տարիքային խմբում:

Նույն երևույթն է նկատվում զուգընկերների որոշումների կայացման ժամանակ: Հարցվածների 5%-ը 18-24 տարիքային խմբում նշել են, որ որոշում են իրենց զուգընկերները: Նույն պատասխանն են տվել նաև հարցվածների 13%-ը 25-34 տարիքային խմբում և հարցվածների 10%-ը 35 տարեկան և բարձր տարիքային խմբում: Համատեղ որոշումների կայացումը առաջընթաց է ապրում տարիքի հետ: Մեծ գնումների դեպքում այլ մարդկանց միջամտության տոկոսը պատասխաններում անկում է ապրում 4% -ից 2%՝ տարիքի աճին զուգընթաց:

Բարձր կրթամակարդակը չի ազդում համատեղ որոշումների կայացմանը, սակայն այն ազդում է այն մարդկանց վրա, ովքեր անկախ որոշումներ են կայացնում: Հիմնական կրթություն ունեցողների 26%-ը նշել են, որ նրանք անկախ որոշումներ են կայացնում մեծամասշտաբ գնումների դեպքում, մինչդեռ նույն պատասխանն են տվել նոր բարձրագույն կրթությամբ հարցվածների 13%-ը: Հավանաբար կրթամակարդակի բարձրացումը տանում է պատասխանատվության բարձրացման և այդ որոշումների հետևանքով առաջացած ռիսկերի գնահատման: Այս պատճառով է, որ անկախ որոշում կայացնողների մասնաբաժինն անկում է ապրում կրթամակարդակի բարձրացման հետ:

Կրկին անգամ գյուղական բնակավայրերում խոշոր գնումների դեպքում ուրիշների միջամտությամբ կայացրած որոշումների տոկոսն ավելի բարձր է և կազմում է 4%:

Աղյուսակ 5. Ժամանակի օգտագործում

Ժամանակի օգտագործման վերաբերյալ հարցերին պատասխանած հարցվածների տոկոսը

Ինչպե՞ս եք դուք ժամանակ անցկացնում ընտանիքի, ընկերների կամ բարեկամների հետ:	Որոշումները կայացնում եք				
	Դուք	Ձեր զուգընկերը	Դուք Ձեր զուգընկերոջ հետ միասին	Մեկ ուրիշը	Դուք մեկ այլ անձի հետ համատեղ
Տարիքը					
18-24	16.0%	3.1%	58.2%	1.0%	0.5%
25-34	12.9%	7.6%	69.8%	1.2%	1.0%
35-49	14.6%	7.2%	73.7%	0.6%	0.8%
50-59	9.9%	5.3%	79.9%	0.7%	1.3%

Կրթությունը					
Հիմնական	28.6%	11.9%	52.4%	0.0%	0.0%
Միջնակարգ	14.4%	6.1%	69.5%	1.3%	1.3%
Միջին մասնագիտական	10.9%	6.8%	76.9%	0.3%	0.6%
Բարձրագույն	11.8%	5.8%	72.9%	0.7%	0.7%
Բնակության վայրը					
Երևան	14.6%	5.7%	71.1%	0.4%	0.6%
Այլ քաղաքային	13.1%	6.2%	73.4%	0.0%	0.7%
Գյուղական	12.1%	7.1%	71.1%	1.9%	1.3%

Հարցվածների 58%-ը 18-24 տարիքային խմբում նշել են, որ նրանք միասին են որոշում, թե ինչպես կազմակերպեն ժամանցը ընտանիքի, ընկերների և բարեկամների հետ: 25-34 տարիքային խմբում այս տոկոսաչափը հասնում է 70%-ի, իսկ 50-59 տարեկանների դեպքում այն կազմում է 80%: Այսինքն՝ այս հարցում ևս տարիքի աճին զուգընթաց ձևավորվում է համագործակցելու մշակույթ և նկատվում է միասնական որոշումների քանակի աճ:

Հարցվածների տասնվեց տոկոսը 18-24 տարիքային խմբում նշել են, որ իրենք ինքնուրույն են որշումներ կայացնում այս հարցի շուրջ. սա կազմում է ընդամենը 10% 50-59 տարեկանների տարիքային խմբում:

Կողմնակի անձինք որևէ դերակատարում չունեն այս խնդրի շուրջ որոշումների կայացման մեջ: Բնակավայրերի տարբերությունը ևս այս հարցում դեր չի խաղում:

Սակայն կրթությունն ունի որոշակի ազդեցություն. Ինչքան ցածր է կրթամակարդակը, այնքան բարձր է որոշումներն ինքնուրույն կայացնողների տոկոսը: Հիմնական/տարրական կրթություն ունեցողների քսանինը տոկոսը նշել են, որ նրանք ինքնուրույն են որոշում կայացնում: Որոշումներն անկախ են միջնակարգ կրթությամբ անձանց 14%-ի, միջին մասնագիտական/տեխնիկական կրթություն ունեցողների 11%-ի, և բարձրագույն կրթությամբ անձանց 12%-ի դեպքում: Նույն օրինաչափությունն է դրսևորվում նաև այն դեպքերում, երբ զուգընկերներն են որոշում կայացնում: Այս մասին հիշատակել են հիմնական/տարրական կրթություն ունեցողների 12%-ը և բարձրագույն կրթություն ունեցողների 6%-ը:

Աղյուսակ 6. Որոշումների կայացում/տանից դուրս աշխատանք

Որոշումների կայացման վերաբերյալ հարցերին պատասխանած հարցվածների տոկոսը

Կարո՞ղ է արդյոք Ձեր զուգընկերը տանից դուրս աշխատել:	Որոշումները կայացնում եք				
	Դուք	Ձեր զուգընկերը	Դուք Ձեր զուգընկերոջ հետ միասին	մեկ ուրիշը	Դուք մեկ այլ անձի հետ համատեղ
Տարիքը					
18-24	24.7%	18.6%	29.4%	0.5%	0.0%
25-34	18.1%	25.5%	45.2%	0.2%	0.5%
35-49	19.8%	23.0%	52.1%	0.6%	0.0%
50-59	15.1%	20.7%	56.3%	1.6%	0.3%
Կրթությունը					
Հիմանական	40.5%	14.3%	40.5%	0.0%	0.0%
Միջնակարգ	23.2%	21.2%	43.6%	0.6%	0.5%
Միջին մասնագիտական	14.8%	28.1%	50.3%	0.6%	0.0%
Բարձրագույն	13.8%	21.3%	53.1%	1.0%	0.0%
Բնակության վայրը					
Երևան	16.7%	22.4%	48.4%	0.4%	0.2%
Այլ քաղաքային	19.2%	21.6%	50.6%	0.7%	0.0%
Գյուղական	21.0%	23.7%	45.3%	1.0%	0.4%

18-24 տարիքային խմբի հարցվածների ընդամենը 29%-ն են նշել, որ նրանք համատեղ որոշումներ են կայացնում իրենց զուգընկերների աշխատելու վերաբերյալ, իսկ 25-34 տարիքային խմբում նշված տոկոսաչափն աճում է՝ հասնելով 45%-ի, այն կազմում է 52% 35-49 տարիքային խմբում և 56% 50-59 տարեկանների մոտ: Տարիքի աճին զուգընթաց անկախ որոշումներ կայցնողների մասնաբաժինը նվազում է մինչև 18-24 տարիքային խմբի 25% -ից մինչև 50-59 տարիքային խմբի 15% -ը:

Որպես կանոն կողմնակի անձինք չեն միջամտում հարցի շուրջ որոշումների կայացմանը:

Կրթամակարդակն ազդում է աշխատանքի հետ կապված որոշումների կայացման վրա: Ինչքան ավելի բարձր է կրթամակարդակը, այնքան ավելի բարձր է այն մարդկանց տոկոսը, ովքեր նշել են զուգընկերների հետ համատեղ որոշումների կայացման մասին:

Այս հարցի առնչությամբ համատեղ որոշումների ընդունումը կատարվում է հիմնական/տարրական կրթություն ունեցողների 40%-ի կողմից, միջնակարգ կրթություն ունեցողների 44%-ի կողմից, միջին մասնագիտական/տեխնիկական կրթություն ունեցողների 50%-ի կողմից և բարձրագույն կրթություն ունեցողների 53%-ի կողմից: Փոխարենը, անկախ որոշում ընդունողների տոկոսը իջնում է ըտարրական կրթություն ունեցողների 40%-ից ընդհուպ մինչև բարձրագույն կրթություն ունեցողների 14%-ը: Առանց ակնհայտ պատճառների 14% -ից 21%-ով աճում է զուգընկերների համատեղ որոշումների թիվը նույն կրթամակարդակների պարագայում:

Բնակավայրը որևէ դեր չի խաղում այս հարցում:

Աղյուսակ 7. Որոշումների կայացում/ հակաբեղմնավորիչների օգտագործում

Որոշումների կայացման վերաբերյալ հարցերին պատասխանած հարցվածների տոկոսը

Ձեր և Ձեր զուգընկերոջ կողմից հակաբեղմնավորիչների օգտագործում	Որոշումները կայացնում եք				
	Դուք	Ձեր զուգընկերը	Դուք և Ձեր զուգընկերը միասին	Մեկ ուրիշը	Դուք մեկ այլ անձի հետ համատեղ
Տարիքը					
18-24	7.2%	0.5%	20.6%	0.0%	0.0%
25-34	12.2%	4.3%	45.6%	0.0%	0.0%
35-49	11.3%	3.3%	44.0%	0.0%	0.0%
50-59	4.3%	3.3%	33.9%	1.0%	0.0%
Կրթությունը					
Հիմնական	19.0%	7.1%	35.7%	0.0%	0.0%
Միջնակարգ	10.4%	3.0%	35.3%	0.3%	0.0%
Միջին մասնագիտական	7.1%	3.3%	40.5%	0.0%	0.0%
Բարձրագույն	9.2%	3.1%	44.3%	0.2%	0.0%
Բնակության վայրը					
Երևան	10.0%	3.7%	38.1%	0.0%	0.0%

Այլ քաղաքային	9.0%	3.3%	39.4%	0.2%	0.0%
Գյուղական	9.4%	2.7%	39.9%	0.4%	0.0%

Ինչ վերաբերում է հակաբեղմնավորիչների օգտագործման հարցին (Դուք և ձեր զուգընկերն օգտվու՞մ եք հակաբեղմնավորիչներից:), բոլոր տարիքային խմբերի հարցվածների մասնաբաժինն աճում է տարիքի հետ:

18-24 տարիքային խմբում հարցվածների միայն 21%ն է նշել, որ նրանք համատեղ որոշումներ են կայացնում. 25-34 տարիքային խմբում այս տոկոսն աճում է ընդհուպ մինչև 46%: Հետագայում այս տոկոսաչափը սկսում է նվազել՝ դառնալով 44% 35-49 տարիքային խմբում և 34% 50-59 տարիքային խմբում: Անկախ որոշումներ ընդունողների մասնաբաժինը տատանվում է տարիքին զուգընթաց՝ կազմելով 7% 18-24 տարիքային խմբի հարցվածների դեպքում, աճելով մինչև 12% 25-34 տարիքային խմբի հարցվածների դեպքում, և նվազելով մինչև 4% 50-59 տարիքային խմբում: Ասել է թե ակտիվ սեռական կյանքի շրջանից հետո այս խնդիրը պարզապես կորցնում է իր արդիականությունը և տոկոսային անկումը պայմանավորված է իրադրությամբ:

Կրթամակարդակն ու բնակության վայրը էական նշանակություն ունեն այս հարցի համար: Չնայած կրթամակարդակի աճին զուգընթաց աճում է նաև համագործակցային որոշումների կայացման աստիճանը: Այսպես, հիմնական/ տարրական կրթություն ունեցողների 36%-ը նշել են, որ նրանք հարցի շուրջ համատեղ որոշումներ են ընդունում և այս տոկոսաչափը կազմում է 44% բարձրագույն կրթություն ունեցողների համար: Ինչքան ավելի բարձր է կրթամակարդակը, այնքան ավելի ամուր հիմքեր են ստեղծվում ընտանիքի պլանավորման համար: Եվ ընդհակառակը, ինքնուրույն որոշումներ կայացնողների մասնաբաժինն անկում է ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողների 19%-ից ընդհուպ մինչև բարձրագույն կրթություն ունեցողների 9%-ը: Զուգընկերների որոշումների կայացումը ևս նվազում է 7%-ից 3%:

Աղյուսակ 8. Որոշումների կայացում/ ազատ ժամանց

Որոշումների կայացման վերաբերյալ հարցերին պատասխանած հարցվածների տոկոսը

	Որոշումը կայացնում եք

Ձեր ազատ ժամանակի անցկացում	Դուք	Ձեր զուգընկերը	Դուք և Ձեր զուգընկերը միասին	Մեկ ուրիշը	Դուք մեկ այլ անձի հետ համատեղ
Տարիքը					
18-24	25.8%	2.1%	59.3%	0.0%	0.0%
25-34	23.3%	6.9%	63.1%	0.2%	0.5%
35-49	28.0%	5.1%	63.2%	0.2%	0.0%
50-59	25.3%	4.9%	64.8%	1.3%	0.7%
Կրթությունը					
Հիմնական	33.3%	4.8%	54.8%	0.0%	0.0%
Միջնակարգ	27.3%	4.9%	61.1%	0.5%	0.6%
Միջին մասնագիտական	23.4%	4.7%	66.6%	0.3%	0.0%
Բարձրագույն	24.6%	6.0%	63.8%	0.5%	0.0%
Բնակության վայրը					
Երևան	25.4%	6.1%	62.0%	0.0%	0.4%
Այլ քաղաքային	25.7%	4.5%	64.4%	0.5%	0.2%
Գյուղական	26.2%	4.8%	62.8%	0.8%	0.2%

Տարիքը և բնակության վայրը նշանակալի դեր չեն խաղում պատասխանների ազատ ժամանակի օգտագործմոն մեջ: Միայն կրթամակարդակի աճի հետ է բարձրանում այն հարցվածների տոկոսը, ովքեր նշել են համատեղ որոշումների կայացման մասին: Նմանօրինակ պատասխան է տրվել հիմնական /տարրական կրթությամբ անձանց 55%-ի, միջնակարգ կրթությամբ անձանց 61%-ի, միջին մասնագիտական/տեխնիկական կրթությամբ անձանց 67%-ի և բարձրագույն կրթությամբ անձանց 64%-ի դեպքում: Եվ ընդհակառակը, անկախ որոշումներ ընդունողների թիվն անկում է ապրել 33%-ից՝ դառնալով 25%:

Աղյուսակ 9. Որոշումների կայացում

Որոշումների կայացման վերաբերյալ հարցերին պատասխանած հարցվածների տոկոսը (էլ ո՞վ) .N=1617

Էլ ո՞վ է մասնակցում որոշումների կայացմանը	Ինչպե՞ս եք Դուք գումար ծախսում սննդի և	Ինչպե՞ս եք Դուք գումար ծախսում խոշոր ներդրումների, ինչպես օրինակ՝ մեքենա,	Ինպե՞ս եք Դուք ժամանակ անցկացնում ընտանիքի, ընկերների և	Կարո՞ղ է արդյոք Ձեր զուգընկերը տանից	Դուք և Ձեր զուգընկերն օգտագործո՞ւմ եք	Ինչպե՞ս եք անցկացնում Ձեր ազատ ժամանակը:

	հագուստի վրա	առանձնատուն կամ կենցաղային տեխնիկա ձեռք բերելիս	բարեկամների հետ	դուրս աշխատել:	հակաբեղմն ավորիչներ:	
Ծնողներ	31.5	13.1	16.0	-	-	9.1
Երեխաներ	3.7	11.5	16.0	7.7	-	9.1
Հարսի/փեսայի ծնողներ	31.5	37.7	24.0	38.5	-	18.2
Հարս/ փեսա	1.9	4.9	4.0	15.4	-	9.1
Ողջ ընտանիքը	1.9				-	9.1

Ինչպես տեսնում եք, այլ անձինք շոշափելի ազդեցություն չունեն որոշումների կայացման վրա: Այնուամենայնիվ, մենք փորձել ենք պարզել, թե որ հարցերի դեպքում և ով է ազդեցություն գործում: Սննդի և հագուստի ծախսերին առնչվող որոշումները կայացվում են երկու զուգընկերների ծնողների ազդեցության տակ (31%): Գնումներ կատարելիս հարցվածները հաշվի են առնում երեխաների (4%) և ողջ ընտանիքի (2%) կարիքները:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե *Ի՞նչպես եք փող ծախսում մեծ ներդրումների վրա*, ինչպես, օրինակ, մեքենայի կամ առանձնատան կամ կենցաղային տեխնիկայի գնումը, ապա զուգընկերոջ ծնողների կարծիքն ամենաազդեցիկն է (38%), որին հետևում են հարցվածի սեփական ծնողները (13%) և, ի վերջո, երեխաները (12%):

Ընտանիքի, ընկերների կամ բարեկամների հետ ժամանակ անցկացնելու որոշումների վրա կողմնակի անձանցից կրկին ամենամեծ ազդեցությունն ունեն զուգընկերոջ ծնողները (24%), որին հետևում են հարցվածի ծնողները (16%) և երեխաները (16%):

Այն հարցի առնչությամբ, թե արդյոք Ձեր զուգընկերը կարող է տանից դուրս աշխատել, կրկին ամենամեծ դերակատարումն ունեն զուգընկերոջ ծնողները (39%),որին հետևում են երեխաները (7%):

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչպես եք ծախսում Ձեր ազատ ժամանակը, կրկին զուգընկերոջ ծնողներն ունեն ամենամեծ դերակատարումը (18.2%), իսկ մյուսներից յուրաքանչյուրը՝ 9%:

Սակայն, քանի որ այլ անձանց ներգրավումը ողջ հետազոտության համատեքստում շատ փոքր տոկոս է կազմում, մենք հավատացած ենք, որ այս հանգամանքն մեծ նշանակություն չունի:

Աղյուսակ 10. Որոշումների կայացում

Հարցվածների տոկոսը, ովքեր պատասխանել են իրենց ծնողների ընտանիքներում որոշումների կայացման մասին հարցերին (**իրենց ծնված օրվանից մինչև 18 տարեկան)** N=1617

	Ձեր ընտանիքում ու՞մն էր վերջին խոսքի իրավունքը ձեր քույրերի և եղբայրների կրթության վերաբերյալ	Ձեր ընտանիքում ու՞մն էր վերջին խոսքի իրավունքը ձեր քույրերի և եղբայրների առողջության վերաբերյալ
Գերազանցապես մայրը	12.3	17.3
Գերազանցապես հայրը	29.9	21.0
Երկուսը հավասարապես	41.4	53.7
Գերազանցապես մեկ ուրիշը	0.6	0.7
Քույրերը/ եղբայրներն անձամբ	1 3.0	3.6

Փորձ է կատարվել գնահատելու մոր և հոր ազդեցությունը որոշումների կայացման վրա երեխաների տեսակետից: Հարցվածների քառասունմեկ տոկոսը նշել են, որ նրանք (իբրև ծնողներ կամ իրենց ծնողներ) համատեղ որոշումներ են կայացրել դպրոցում երեխաների ուսումնառության և առողջապահական խնդիրների վերաբերյալ և անհատական որոշումների կայացման պարագայում ավելի մեծ է հոր դերը:

Հարցվածների քառասունմեկ տոկոսը նշել են, որ նրանք միասնաբար որոշել են, թե ումն է վերջին խոսքի իրավունքը իրենց քույրերի և եղբայրների դպրոցական ուսումնառության հարցում. 30% իբրև որոշում կայացնող նշել են հորը, իսկ 12%-ը մորը:

Հարցվածների քառասունչորս տոկոսը համատեղ որոշում են կայացրել հետևյալ հարցի շուրջ՝ Ու՞մ էր պատկանում վերջին խոսքի իրավունքը Ձեր ընտանիքում Ձեր քույրերի և եղբայրների առողջությանը վերաբերող որոշումներում: Հարցվածների քսանմեկ տոկոսը իբրև որոշում կայացնող նշել են հորը, իսկ 17%-ը՝ մորը:

Ինչպես վկայում են վերոհիշյալ տվյալները, թեև դեպքերի մեծ մասում որոշում կայացնողները հայրերն են, այստեղ նկատելի է գենդերային հավասարությունը երեխաների ուսումնառությանն ու առողջությանը վերաբերող որոշումներում:

Աղյուսակ 11. Որոշումների կայացում ծնողների ընտանիքում

Կին և տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր պատասխանել են իրենց ծնողների ընտանիքում որոշումների կայացման մասին հարցերին (**իրենց ծնված օրվանից մինչև 18 տարեկան)**

(Տղամարդիկ N=767, կանայք N=850)

	Ձեր ընտանիքում ու՞մն էր վերջին խոսքի իրավունքը ձեր և Ձեր եղբայրների ամուսնության վերաբերյալ		Ձեր ընտանիքում ու՞մն էր վերջին խոսքի իրավունքը Ձեր քույրերի ամուսնության վերաբերյալ	
	Տ	Կ	Տ	Կ
Գերազանցապես մայրը	5.0	3.3	5.0	5.1
Գերազանցապես հայրը	14.5	11.1	17.1	13.9
Երկուսը հավասարապես	25.7	19.4	22.6	24.6
Գերազանցապես մեկ ուրիշը	0.4	.5	1.0	1.3
Քույրերը/ եղբայրներն ինքնուրույն	36.2	35.2	19.0	42.1

Տղամարդ հարցվածների երեսունվեց տոկոսը և կին հարցվածների 35%-ը պատասխանել են այն հարցին, թե «Ձեր ընտանիքում ու՞մ էր պատկանում վերջին խոսքի իրավունքը Ձեր և Ձեր եղբայրների ամուսնությունների վերաբերյալ»՝ ասելով, որ եղբայրներն են որոշում կայացրել: Տղամարդկանց 26% և կանանց 19%-ը պատասխանել են, որ ծնողները միասին են որոշում կայացրել: Տղամարդկանց 14% և կանաց 11%-ը միայն հորն են մատնացույց արել իբրև որոշում կայացնող: Տղամարդկանց 5%-ը և կանանց 3%-ը միայն մորն են մատնացույց արել իբրև որոշում կայացնող:

Պատասխանելով այն հարցին, թե «Ձեր ընտանիքում ու՞մ էր պատկանում վերջին խոսքի իրավունքը Ձեր քույրերի ամուսնությանը վերաբերող հարցերում» տղամարդկանց 19% -ը և կանանց 42%-ը նշել են, որ իրենց քույրերն են որոշում կայացրել: Տղամարդկանց քսաներեք և կանանց 25%-ը նշել են, որ ծնողները եկել են փոխադարձ համաձայնության: Տղամարդկանց 17%-ը և կանանց 14%-ը նշել են միայն

հորն են նշել իբրև որոշում կայացնող, իսկ տղամարդկանց 5%-ը և կանանց 5%-ը միայն մորն են նշել իբրև որոշում կայացնող: Չնայած որ կանանց մասին տարածված է այն կարծիքը, որ նրանք չափազանց շատ են ներգրավված իրենց երեխաների կյանքին[65], իսկ հայրերը չափազանց պաշտպանում են իրենց դուստրերին, քան որդիներին, սույն ուսումնասիրությունը ցույց է տվել, որ երեխաների ամուսնության առնչությամբ համատեղ, գենդերային առումով հավասար որոշումներ են կայացվել:

Աղյուսակ 12. Որոշումների կայացում ծնողների ընտանիքում

Հարցվածների տոկոսը, ովքեր պատասխանել են իրենց ծնողների ընտանիքում որոշումների կայացման մասին հարցերին (ծննդյան օրվանից մինչև **18 տարեկան հասակը).** N=1617

	Ձեր ընտանիքում ու՞մն էր վերջին խոսքի իրավունքը խոշոր ներդրումներ կատարելիս, ինչպես օրինակ՝ մեքենա, առանձնատուն կամ կենցաղային տեխնիկա ձեռքբերելիս
Գերազանցապես մայրը	8.2
Գերազանցապես հայրը	39.4
Երկուսը հավասարապես	47.1
Գերազանցապես մեկ ուրիշը	1.4
Քույրերը/ եղբայրներն անձամբ	1.8

Պատասխանելով մեծ ներդրումների մասին հարցին, ինչպիսիք են մեքենայի, առանձնատան կամ կենցաղային տեխնիկայի ձեռքբերումը, հարցվածների 47%-ը նշել են, որ ծնողները համատեղ որոշում կայցնող են հանդիսանում (չմոռանանք, որ հարցվածների 56%-ը պատասխանել են, որ նրանք համատեղ որոշումներ են կայացրել). հարցվածների 39%-ը միայն հորն են նշել իբրև որոշում կայացնող , իսկ 8%-ը միայն մորն են նշել իբրև որոշում կայացնող (չմոռանանք, որ այժմ տղամարդկանց 22%-ը և կանանց 6%-ը նշել են, որ իրենք ինքնուրույն են որոշում ընդունել):

Այս հարցը կարելի է դիտարկել ժամանակի ընթացքում տեղի ունեցած փոփոխությունների դիտանկյունից: Դժվար չէ նկատել, որ համատեղ որոշում

[65] « Արդյո՞ք հայրական հոգածությունը նշանակում է, որ հայրերը կիսում են հոգսը: Լիարժեք ընտանիքներում մայրերի և հայրերի՝ երեխաների հետ ժամանցի համեմատություն» Լին Քրեյգ, Նոր Հարավային Ուելսի գենդերային հետազոտությունների և հասարակագիտական համալսարան, ապրիլ 2006 vol. 20 no. 2 259-281

կայացրած զուգընկերների տոկոսն աճել է, իսկ անհատական որոշումներ կայցնողներինը՝ նվազել:

Աղյուսակ 13. Որոշումների կայացում

Կին և տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր պատասխանել են երեխա ունենալու կամ որդեգրելու մասին որոշումների կայացման հարցին
(Տղամարդիկ N=488, կանայք N=671)

Վերջին անգամ ո՞ւմ ցանկությամբ եք երեխա ունեցել կամ որդեգրել	Տ	Կ
Գերազանցապես իմ	5.7%	8.2%
Գերազանցապես իմ զուգընկերոջ	4.1%	8.8%
Երկուսիս հավասարապես	86.3%	76.5%
Դա պլանավորված չէր	3.5%	5.7%

Ի պատասխան այն հարցի, թե ով էր ուզում երեխա ունենալ, վերջին անգամ ունեցել են կամ որդեգրել տղամարդկանց 86%-ը և կանանց 76%-ը՝ փոխադարձ համաձայնությամբ: Տղամարդկանց վեց տոկոսը և կանանց 8%-ը նշել են, որ նրանք միայնակ են որոշել, իսկ տղամարդկանց 4%-ը և կանանց 9%-ը նշել են, որ նաև իրենց ծնողներն են մասնակցել:

Հոգատար վերաբերմունքը զուգընկերոջ հանդեպ ներընտանեկան հարաբերությունների և որոշումների ընդունման ևս մի կարևոր հանգամանք է: Մինչև վերջերս հոգատարությունը համարվել է կնոջ բնութագրիչ: Մեր օրերում խնդրի հանդեպ վերաբերմունքը փոխվել է որոշ հասարակություններում: Այս հետազոտությունը փորձ է անում ուսումնասիրել իրադրությունը Հայաստանում: Դժբախտաբար հոգատար վերաբերմունքի միայն մեկ կողմն էր քննության առնվել, այն է՝ նախածննդաբերական խնամքը: Եկեք տեսնենք, թե այն ինչպես է դրսևորվում և արդյոք փոփոխություններ կան ավանդական մոտեցումներում: Վերջին հղիության ընթացքում երեխայի մորը բժշկի մոտ ուղեկցելու վերաբերյալ հարցին տված պատասխանները ցույց տվեցին, որ չկա դա անելու կամ չանելու հստակ մոտեցում. գրեթե նույն քանակով մարդիկ են դա անում ամեն անգամ (36.5) ժամանակ առ ժամանակ (32.9) կամ պարզապես մեկ անգամ կամ երբեք (29.6):

Աղյուսակ 14. Հոգատար վերաբերմունք

Իրենց զուգընկերների՝ նախածննդաբերական շրջանում իրենց հետ կատարած այցերի մասին հարցերին պատասխանած հարցվածների տոկոսը. N=1617

Ինչքա՞ն հաճախ եք ուղեկցել Ձեր երեխայի մորը նախածննդաբերական հետազոտության վերջին կամ ընթացիկ հղիության ընթացքում	Տոկոսը
Յուրաքանչյուր այցին	36.5
Մի քանի այցերին	32.9
Մեկ այցին	5.1
Երբեք	24.5

Մեկ այլ խնդիր է այն, քե մարդիկ ինչ են զգում կամ որոնք են զուգընկերոջը բժշկի տանելու պատճառները: Տղամարդ հարցվածների 80%-ից ավելին հայտնել են, որ իրենք զուգընկերոջը չեն միացել բժշկի կաբինետում, այլ սպասել են բուժհաստատության դրսում կան սպասասրահում:

Աղյուսակ 15. Հոգատար վերավերմունքը

Կին և տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր պատասխանել են զուգընկերոջ հանդեպ տղամարդկանց վերաբերմունքի մասին հարցին

(Տղամարդիկ N=350, կանայք N=471)

Սովորաբար որտե՞ղ եք գտնվել Դուք (Ձեր զուգընկերը) Ձեր նախածննդաբերական ստուգայցերի ընթացքում	Տղամարդ հարցվածներ	Կին հարցվածներ
Իջեցրել եմ նրան (է ինձ) մուտքի մոտ կամ սպասել նրան (ինձ) դրսում	16.9	20.6
Սպասասրահում նստած	63.4	59.0
Միացել եմ նրան (է ինձ) խորհրդատուի կողմից անցկացվող ստուգման վերջում	19.1	18.0

Նույն պատասխանն են տվել նաև կին հարցվածները: Միայն տղամարդկանց տասնինը տոկոսն են նշել, որ մտել են բժշկի կաբինետ իրենց հղի կանանց հետ, և կանանց 18%-ը հաստատել է դա:

Նույն պահվածքն է դրսևորվել նաև ծննդաբերության ժամանակ, երբ հարցվածների ընդամենը 2% է ասել, որ գտնվել են իրենց կնոջ հետ նույն սենյակում, իսկ 76.1 հաստատել են, որ իրենք բուժհաստատությունում սպասել են «արդյունքներին»:

Աղյուսակ 16. Հոգատար վերաբերմունք

Կին և տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր պատասխանել են զուգընկերոջ հանդեպ տղամարդկանց վերաբերմունքի մասին հարցին

(Տղամարդիկ N=482, կանայք N=670)

Որտե՞ղ եք գտնվել Ձեր վերջին երեխայի ծնվելու ժամանակ:	Տղամարդ հարցվածներ	Կին հարցվածներ
Զուգնկերոջս հետ նույն սենյակում են գտնվել	1.9	3.0
Բուժ. հաստատությունում եմ գտնվել, բայց ոչ նույն սենյակում	76.1	75.7
Բուժ. հաստատությունում եմ գտնվել	19.9	18.5

Ինչ վերաբերում է այս հարցին, մենք հավատացած ենք, որ միայն կարծրատիպերը չէ, որ դեր են խաղում և տղամարդկանց հեռու պահում էմոցիոնալ ներգրավվածությունից: Սա նաև պայմանավորված է հանրապետության առողջապահական հաստատությունների պայմաններով, այնտեղ գործող արժեհամակարգով և գենդերային մշակույթով, որն ամբողջովին անբարենպաստ է և չի ունդունում փոփոխությունները:

Տղամարդկանց՝ իբրև հայրերի մասնակցությունը (ծնողավարում)

Հայրությանը նվիրված մի շարք պատմական և սոցիոլոգիական ուսումնասիրություններ և «ժամանակի բյուջեի» ուսումնասիրությունը ցույց են տալսի, որ վերջին հարյուրամյակի ընթացքում հայրության ուղեցույցներն ու փորձն անընդհատ փոխվում են: Հայրերը ավելի ու ավելի են ներգրավվել երեխայի խնամքի ու կրթության մեջ[66]:

Եթե անցյալում տղամարդը հաց վաստակողն էր և, ըստ Պարսոնի, ինստրումենտալ գործառույթ ուներ երեխաներին ապահովելու և նրանց վարքը վերահսկելու մեջ, ապա սկսած 60-ականներից հետազոտողները հայրերին վերագրել են խնամակալի դեր: Հայր-խնամակալը ոչ միայն ֆինանսապես ապահովում է երեխաներին և վերահսկում նրանց վարքը, այլև մասնակցում նրանց առօրյա կյանքին, նրանց հետ գնում է սպորտի, զբոսանքի, հոբբիներով զբաղվում, և այլն[67]: Նա այլևս ոչ միայն ինստրումենտալ, այլև արտահայտիչ դերակատարում ունի[68]:

Անցած դարի 90-ականներից ծնողավարման հասկացության մեջ փոփոխություններ են նկատվել: Ավանդաբար շեշտադրվել է մոր՝ իբրև երեխայի խնամքով զբաղվող ծնողի դերը: Նվիրված, ինքնազոհ *մոր* իրեն սպառած կերպարը տեղ է գտել շատ ազգերի

[66] Ուոլ, Արնոլդ, 2007: 509-510;Ալդրս և ուրիշներ., 1998: 818; Լա Ռոսսա, 1995: 451-452; Ա.Վ.Ավդեյեվա, *2009: 99-100*
[67] Աթկինսոն, Բլեքվելդեր, 1993: 976, 981 -982; Լա Ռոսսա,1988: 449
[68] Կլյոտսինա, 2009; Ֆինլեվ, Շվարցz, 2004: 143 - 144

ժողովրդական բանահյուսությունում, և Հայաստանում, որտեղ մոր մեծարումը կարևոր մշակութային արժեք է, այն հատուկ տեղ է զբաղեցնում: Նույնը չի կարելի ասել հայրության մասին:

Տղամարդը համարվել է ընտանիքի պաշտպան և հաց վաստակող, էմոցիոնալ առումով ավելի սառը, և երեխաների հետ իր կապերն զգայական բնույթ չեն կրել:

Հայրության խնդիրը առաջին անգամ բարձրաձայնվել է «տղամարդկանց ուսումնասիրությունների» համատեքստում, որտեղ ֆեմինիստական շարժումից ոգեշնչված՝ տղամարդիկ ևս սկսեցին ստվերից դուրս բերել առնականության խնդիները: Ֆեմինիստական շարժման ուժեղացմանը և էգալիտարիստական գաղափարի տարածմանը զուգընթաց սկսեց գովազդվել ուշադիր, զգացմունքային, երեխայակենտրոն *հոր* կերպարը:

Սույն ուսումնասիրությունը փորձում է պարզաբանել այս առումով Հայաստանում տեղի ունեցած փոփոխությունները:

Աղյուսակ 17. Տղամարդիկ իբրև ծնողներ

Ծնողական հոգածության մասին հարցերին պատասխանած տղամարդ հարցվածների տոկոսը. (N=488)

Հետևյալ հանգամանքները վերաբերում են արդյո՞ք ձեր առօրյա կյանքին տանը	Խիստ դեմ	Դեմ	Կողմ	Խիստ կողմ
Ես չափազանց քիչ ժամանակ եմ անցկացնում երեխաներիս հետ աշխատանքի պատճառով	18.9	10.7	23.2	31.6
Ես կգերադասեի քիչ աշխատել, եթե դա հնարավորություն տար երեխաներիս հետ ավելի շատ ժամանակ անցկացնել	15.6	14.5	23.2	28.3
Ընդհանուր առմամբ ընտանիք պահելու հոգսն իմ ուսերին է	3.1	5.1	19.5	68.2
Վախենում եմ, որ կկորցնեմ կապը երեխաներիս հետ, եթե հարաբերություններս խզվեն	65.0	11.5	4.1	5.1
Իմ դերը երեխաների խնամքի հարցում կայանում է նրանց օգնելու մեջ	3.7	2.9	28.9	56.4
Իմ դերը երեխաների խնամքի հարցում կայանում է նրանց ապահովելու մեջ.	1.2	1.4	17.8	72.1

Հետազոտությունը ցույց է տվել, որ ընտրանքի տղամարդկանց մոտ 55%-ը համոզված են, որ իրենք իրենց ժամանակից քիչ են տրամադրում երեխաներին աշխատանքի պատճառով: Հարցվածների քսաներեք տոկոսը կողմ են այս տեսակետին, իսկ 32%-ը բացարձակապես համաձայն են: Մինչդեռ տղամարդկանց հիսունմեկ տոկոսը կուզենար ավելի շատ ժամանակ անցկացնել իրենց երեխաների հետ:

Հետազոտության ընթացքում տղամարդկանց մեծամասնությունը ընտանիքում գլխավոր հաց վաստակողի դիրքերից էր հանդես գալիս: Հետազոտությանը մասնակից տղամարդկանց ութսունութ տոկոսը նշել է, որ նրանց հիմնական պարտականությունն իրենց ընտանիքը ֆինանսապես ապահովելն է, և տղամարդկանց 68%-ից ավելին լիովին համաձայնել է այս պնդմանը:

Տղամարդու նոր՝ ներգրավված հոր կերպարն է առաջացել: Ներգրավված հայրը հոգ է տանում երեխաների մասին, «որակյալ» ժամանակ անցկացնում նրանց հետ (գնում զբոսանքի, խաղում) և երեխաների հետ ակտիվ կոնտակտի մեջ է: Նա կնոջն օգնում է ծննդաբերությանը նախապատրաստվելիս, ներկա է ծննդաբերությանը, հոգ է տանում երեխաների մասին: Բացի այդ, ներգրավված հայրը կիսում է տնային պարտականությունների բեռը իր զույգի հետ, քանի որ նա ընդունում և հարգում է կնոջ՝ անձնական տիրույթն ու ժամանակն ունենալու կարիքը: Այս ձևաչափի շրջանակներում տղամարդու հաջողության սոցիալական չափորոշիչը տղամարդու դերում կայանում է երեխայի կյանքում նրա մասնակցության չափի ու բնույթի մեջ: «Լավ» հայրը պետք է առավելատես ներգրավված լինի իր երեխաների կյանքում[69]:

Ընդհանուր առմամբ, հետազոտության ենթարկված տղաամարդիկ կարծում են, որ իրենց կոնտակտները երեխաների հետ կայուն են և չեն կապում դրանք ամուսնության մեջ իրենց զուգընկերների հետ հարաբերություններին: Այսպես, հարցվածների 76%-ը համաձայն չեն այն պնդմանը, որ « Վախենում եմ, որ կկորցնեմ կապը երեխաներիս հետ, եթե բաժանվեմ»:

[69] Ա. Վ. Ավդեյեվա, *Հայրերի ներգրավվածության հարցը ժամանակակից Ռուսաստանում. Երեխայի հոգածությանը մասնակցելու ռազմավարություններ:* http://ecsocman.hse.ru/data/2013/03/25/1251441009/Avdeeva.pdf, page 2.

Չնայած վերոնշյալին՝ հարցվածների 85%-ը ընդունում է, որ իրենց դերակատարումը երեխայի խնամքի հարցում ընդամենը օժանդակ է «Իմ դերը երեխաներիս հոգածության մեջ օգնականի դեր է»:

Փաստորեն, հնարավոր է եզրակացնել, որ տղամարդու՝ իբրև հիմնական հաց վաստակողի դերի ընկալումը դեռ բավականին կայուն է: Տղամարդկանց մեծամասնությունը իրենց պատասխանատու են համարում այս հարցում, չնայած մեր օրերում կանանց դերն այս հարցում զգալիորեն մեծացել է: Հիմնվելով այս կարծրատիպի վրա՝ տղամարդիկ արդարացնում են իրենց ժամանակից երեխաների խնամքին քիչ տրամադրելը՝ պատճառաբանելով, որ կան գործեր, որոնք նրանք չեն կարող անել և որ նրանց դերը սահմանափակվում է հաց վաստակելով:

Անուղղակիորն սա նաև հաստատում է գենդերային մասնատվածությունը/սեգրեգացիան/, որ գոյություն ունի աշխատաշուկայում և կանանց համար ֆինանսապես իրենց ընպանիքն ապահովելու սահմանափակ հնարավորությունները: Միևնույն ժամանակ, հետազոտության ենթարկված տղամարդկանց միայն կեսը ավելի շատ ժամանակ կանցկացնեն իրենց երեխաների հետ, եթե աշխատանքը թույլ տար: Այսպիսով, երեխաների խնամքին համեմատաբար քիչ ժամանակի տրամադրման միակ պատճառը աշխատանքը չէ:

Նույն հարցերին տրված պատասխաններն ուսումնասիրվել են նաև տղամարդկանց կրթամակարդակի հաշվառմամբ:

Աղյուսակ 18. Տղամարդիկ իբրև ծնողներ

Երեխաների հոգածության հարցում «խիստ կողմ» արտահայտված տղամարդ հարցվածների տոկոսը՝ ըստ կրթության մակարդակի

(N=488)

Կրթական մակարդակ	Ես չափազանց քիչ ժամանակ եմ անցկացնում երեխաներիս հետ աշխատանքի պատճառով	Ես կգերադասեի քիչ աշխատել, եթե դա հնարավորություն տար երեխաներիս հետ ավելի շատ ժամանակ անցկացնել	Ընդհանուր առմամբ ընտանիք պահելու հոգսն իմ ուսերին է	Վախենում եմ, որ կկորցնեմ կապը երեխաներիս հետ, եթե հարաբերությունն երս խզվեն	Իմ դերը երեխաների խնամքի հարցում կայանում է նրանց օգնելու մեջ.	Իմ դերը երեխաների խնամքի հարցում կայանում է նրանց ապահովելու մեջ.

Թերի միջնակարգ	45.8%	45.8%	91.7%	16.7%	87.5%	95.8%
Միջնակարգ լրիվ	28.6%	26.5%	66.0%	6.3%	54.6%	71.8%
Միջին մասնագիտական/տեխնիկական	30.4%	26.5%	74.5%	2.9%	57.8%	75.5%
Բարձրագույն (մագիստրոսի/ բակալավրի աստիճան)	35.5%	29.8%	62.9%	2.4%	52.4%	65.3%

Մենք ուսումնասիրել ենք հետևյալ պնդումը. «Ես չափազանց քիչ ժամանակ եմ անցկացնում իմ երեխաների հետ իմ աշխատանքի պատճառով» կրթամակարդակի դիրքերից և բացահայտել հետևյալ պատկերը.այս պնդումը սատարում են թերի միջնակարգ կրթություն ունեցողների 46%-ը, միջնակարգ կրթություն ունեցողների 29%-ը, միտջին մասնագիտական/տեխնիկական կրթություն ունեցողների 30%-ը և համալսարանական կրթություն ունեցողների 35%-ը: Այսպիսով հնարավոր է փաստել, որ կրթությունը էական դեր չի խաղում այս հարցում և տղամարդկանց մեկ երրորդը նշել են, որ նրանք քիչ ժամանակ են անցկացնում իրենց երեխաների հետ աշխատանքի պատճառով (այս տոկոսային ցուցանիշն ավելի բարձր էր թերի միջին մասնագիտական կրթություն ունեցողների մոտ -46%):

Երեխաների հետ ավելի շատ ժամանակ կանցկացնեյին , եթե աշխատանքը թույլ տար, թերի միջնակարգ կրթություն ունեցողների մոտ 46%-ը, միջնակարգ և միջին մասնագիտական տեխնիկական կրթություն ունեցողների 26%-ը և բարձրագույն կրթություն ունեցողների 30%-ը: Այսպիսով, այն տղամարդիկ, ովքեր նշել են, որ աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով իրենք քիչ ժամանակ են անցկացնում իրենց երեխաների հետ, պատրաստ են աշխատանք չունենալու պարագայում ավելի շատ ժամանակ տրամադրել:

Ինչքան ավելի ցածր է կրթամակարդակը, այնքան ավելի ուժեղ է դրսևորվում ընտանիքի հոգածության պատասխանատվությունը: Այս մոտեցումը սատարում են թերի միջնակարգ կրթությամբ տղամարդկանց 92%-ը, լրիվ միջնակարգ կրթությամբ տղամարդկանց 66%-ը, միջին մասնագիտական/տեխնիկական կրթություն ունեցողների 74%-ը և բարձրագույն կրթություն ունեցողների 63%-ը: Ինչ վերաբերում

է թերի և բարձրագույն կրթությամբ տղամարդկանց թվին, սույն պնդմանը մոտեցումների տարբերությունը բավականին մեծ է և կազմում է 30% և այն ավելի բարձր է ավելի ցածր կրթամակարդակ ունեցող տղամարդկանց շրջանում, ովքեր ավելի ուժեղ գենդերային կարծրատիպեր և առնականության ավելի ավանդական մոտեցումներ են հանդես բերում:

Նույն օրինաչափությունն է դրսևորվում «Երեխայի խնամքի հարցում իմ դերը նրան ապահովելն է» պնդման պատասխաններում: Այն սատարում են թերի միջնակարգ կրթությամբ տղամարդկանց 96%-ը, լրիվ միջնակարգ կրթությամբ տղամարդկանց 72%-ը, միջին մասնագիտական/տեխնիկական կրթություն ունեցող տղամարդկանց 75%-ը և բարձրագույն կրթություն ունեցողների 65%-ը: Կրկին տատանման սանդղակը այս հարցում թերի կրթությամբ տղամարդկանց և բարձրագույն կրթություն ունեցողների միջև լայն է և ընդգրկում է 30%-ին որը հավանաբար պայմանավորված է վերոհիշյալ նույն պատճառներով:

Տղամարդկանց մեծ մասը իրենց երեխաների և զուգընկերների հետ հարաբերությունների միջև կապ չեն տեսնում: Բայց, այնուամենայնիվ, հարցերին տրված պատասխանների միջոցով ի հայտ է գալիս հետևյալ փոխհարաբերությունը՝ ինչքան ավելի ցածր է տղամարդու կրթամակարդակը, այնքան շատ են նրա կասկածները, որ զուգընկերոջ հետ հարաբերությունների խզումը ազդելու է երեխաների հետ հարաբերությունների վրա: Սա թերի միջնակարգ կրթությամբ տղամարդկանց 17 %-ի, միջնակարգ կրթությամբ 6%-ի, միջին մասնագիտական/տեխնիկական կրթությամբ 3%-ի և բարձրագույն կրթությամբ տղամարդկանց 2%-ի պատասխանն է:

Ինչքան ցածր է տղամարդկանց կրթամակարդակը, այնքան բարձր է այն տղամարդկանց տոկոսը, ովքեր համաձայն են «Իմ դերը երեխաների խնամքի հարցում հիմնականում օգնական լինելն է» պնդման հետ: Այս հարցին դրական պատասխան տված տղամարդկանց ութսունութ տոկոսն ունեն թերի միջին մասնագիտական կրթություն, 54.6%-ը՝ միջին մասնագիտական կրթություն, 57.8%-ը՝ մասնագիտական տեխնիկական կրթություն և 52.4%-ը՝ բարձրագույն կրթություն:

Աղյուսակ 19. Տղամարդիկ իբրև ծնողներ

Ծնողական հոգածության մասին հարցերին պատասխանած հարցվածների տոկոսը. (N=1617)

Ինչպե՞ս եք Դուք և Ձեր զուգընկերը բաշխում հետևյալ պարտականությունները (ամենափոքրահասակ երեխայի դեպքում)	Սովորաբար ես	Հավասարապես արվում է միասին	Սովորաբար զուգընկերը
Երեխայի ամենօրյա խնամքը	34.0	10.6	22.8
Երեխայի հետ մնալը նրա հիվանդ ժամանակ	35.8	15.9	19.7
Երեխային դասի/ցերեկային խնամքի կենտրոն տանելը/ բերելը	18.6	12.7	11.0
Երեխայի հետ խաղալը կամ ազատ ժանամանակ անցկացնելը	18.7	38.1	7.8
Երեխային նախատելը (խոսքային դաստիարակություն)	26.4	28.8	9.8
Երեխային ծեծելը	16.0	6.0	4.1
Երեխայի տակդիրները կամ շորերը փոխելը	26.6	4.6	19.1
Երեխային լողացնելը	30.1	5.1	21.0
Երեխայի անձնական խնդիրների շուրջ խոսելը	20.4	28.6	8.4
Երեխային օգնելը տնային աշխատանք կատարելիս	22.5	13.4	10.4

Երեխայի ամենօրյա խնամքը կազմակերպվում է համատեղ զուգընկերների 11%-ի կողմից: Հարցվածների երեսունչորս տոկոսը նշել են, որ նրանք դա ինքնուրույն են անում, 23%-ը նշել են, որ իրենց զուգընկերներն են դա անում: Երբ իրենց զուգընկերը հիվանդ է, հարցվածների 36%-ը տանն են մնում: Չնայած զուգընկերոջ հիվանդությանը, հարցվածների 20%-ը խոստովանել են, որ իրենց զուգընկերներն են հոգ տանում երեխայի մասին, իսկ 16%-ը՝ միասին: Երեխային դպրոցից/ ցերեկային խնամքի կենտրոնից վերցնելու/տանելու համար հավանաբար կողմնորոշիչ հանդիսացող սկզբունքը նրանցից որևէ մեկի ազատ լինելու հարմարության հանգամանքն է, քանի որ հարցվածների մոտ 19%-ը դա ինքնուրույն են անում, 11%-ը նշել են, որ իրենց զուգընկերներն են անում, իսկ 13%-ը՝ միասին կամ հավասար են բաշխում պատասխանատվությունը:

Երեխայի դաստիարակությունը շատ տարբեր կողմեր է ներառում՝ երեխայի կրթություն հաղորդակցության միջոցով, խաղեր խաղալու և խոսքային ուղղորդման միջոցով, երբեմն էլ զայրույթի և պատժի: Որոշ ծնողներ ծեծն են կիրառում,

մարմնական պատժամիջոցները: Այս հարցերի պատասխանները պարզում են հետևյալ պատկերը:

Երեխայի հետ խաղալը կամ ազատ ժամանակ կազմակերպված այլ գործողություններն ավելի հաճախ իրացվում են զուգընկերների հետ միասին (38%), միայն հարցվածի կողմից (19%), կամ զուգընկերոջ կողմիցr (8%).

Երեխային հանդիմանելը (խոսքային դաստիարակություն) գրեթե հավասարարապես է կիրառվում զուգընկերների կողմից ընտանիքների 29%-ի դեպքում, դեպքերի 26%-ի պարագայում՝ հիմնականում հարցվածի կողմից և 10%-ի պարագայում՝ զուգընկերների կողմից:

Ըստ պատասխանների երեխային ապտակ հասցնելը կամ ծեծի ենթարկելը տեղի է ունենում ընտանիքների 6%-ի դեպքում, քանի որ հարցվածների հենց այդ տոկոսն է նշել, որ նրանք միասին են դա անում. Հարցվածների 16%-ը դա միայնակ է անում, իսկ 4%-ը հիմնականում նշելեն, որ նման վարքագիծը բնորոշ է իրենց զուգընկերներին:

Երեխայի տակդիրները կամ շորերը փոխելը հերթով են անում զուգընկերների 5%-ը, հարցվածների 27%-ը՝ միայնակ, իսկ 19%-ը նշել են, որ զուգընկերներն են դրա մասին հոգ տանում:

Երեխային միասին են լողացնում հարցվածների 5%-ը, 30%-ը հիմնականում ինքնուրույն են, իսկ 21%-ի դեպքում՝ զուգընկերները:

Երեխայի անձնական գործերի մասին 29%-ը խոսում են միասին, հիմնականում հարցվածներն են խոսում 20%-ի դեպքում, իսկ զուգընկերները՝ 8%- ի դեպքում:

Երեխային տնային աշխատանք կատարելիս միասին են օգնում հարցվածների 13%-ը, միայն հարցվածն է օգնում 23% ի դեպքում, և միայն իրենց զուգընկերները՝ 10% ի դեպքում:

Աղյուսակ 20. Ծնողավարություն

Հետևյալ ծնողական պարտականությունների բաշխման մասին հարցերին պատասխանած տղամարդ և կին հարցվածների տոկոսը.

(Տղամարդ N=488, կանայք N=671)

Ինչպե՞ս եք Դուք և Ձեր զուգընկերը բաշխում հետևյալ պարտականությունները (ամենափոքրահասակ երեխան)	Սովորաբար ես		Հավասարապես /միասին		Սովորաբար զուգընկերը	
	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ
Երեխայի ամենօրյա խնամքը	1.8	57.4	11.7	9.8	53.9	0.1
Երեխայի հետ մնալը նրա հիվանդ ժամանակ	2.7	60.0	22.3	11.2	46.1	0.4
Երեխային դասի/ցերեկային խնամքի կենտրոն տանելը/ բերելը	7.2	26.8	13.5	12.1	21.1	3.7
Երեխայի հետ խաղալը կամ ազատ ժանամանականցկացնելը	6.8	27.4	43.0	34.4	16.0	1.8
Երեխային նախատելը (խոսքային դաստիարակություն)	12.1	36.8	33.6	25.3	18.0	3.9
Երեխային ծեծելը	5.3	23.8	5.9	6.0	8.6	0.7
Երեխայի տակդիրները կամ շորերը փոխելը	0.6	45.5	5.9	3.6	44.9	0.3
Երեխային լողացնելը	1.2	51.1	6.6	4.0	49.0	0.6
Երեխայի անձնական խնդիրների շուրջ խոսելը	5.5	31.3	34.0	24.6	16.8	2.2
Երեխային օգնելը տնային աշխատանք կատարելիս	5.5	34.9	17.0	10.7	23.4	1.0

Պատկերը պարզվում է և կանանց ու տղամարդկանց ծանրաբեռնվածությունը երեխայի խնամքի առնչությամբ լուսաբանվում է այն ժամանակ, երբ նույն խնդիրները քննում են սեռային տարանջատման սկզբունքով:

Հարցված տղամարդկանց մոտ 12%-ը և կանանց 10%-ը նշել են, որ նրանք երեխայի խնամքը միասին են կազմակերպում , հարցված կանանց և տղամարդկանց համապատասխանաբար 57% և 2% նշել են, որ նրանք դա միայնակ են անում: Տղամարդկանց հիսունչորս տոկոսը և կանաց ընդամենը 0.1%-ը նշել են, որ դա իրենց զուգընկերներն են անում:

Երբ զուգընկերը հիվամնդ է, ընտրանքի տղամարդկանց 3%-ը և ընտրանքի կանանց 60%-ը երեխայի հետ տանն են մնում: Հարցված տղամարդկանց քառասունվեց տոկոսն ու կանանց 0.4%-ը նշել են, որ իրենց զուգընկերն այդ անում են ի հեճւկս հիվանդության: Իսկ տղամարդկանց 22%-ը և կանանց 11%-ը նշել են, որ նրանք են երեխայի խնամքով զբաղվում, երբ զուգընկերը հիվանդ է: Տղամարդու կատարած աշխատանքի անհամապատասխանությունը հաճախ է երևան գալիս տղամարդկանց և կանանց

գնահատումներում: Սա կարող է նշանակել, որ տղամարդը չափազանցնում է իր՝ անգամ փոքրիկ ներդրումը երեխայի խնամքի մեջ, քանի որ դա շեղում է ավանդական մոտեցումներից և գերագնահատվում է իր կողմից: Մինչդեռ կանայք սա դիտարկում են իրական օգնություն ստանալու տեսանկյունից, բայց շատ դժվար է ասել, թե արդյոք իրենց գնահատումն ավելի օբյեկտիվ է, թե նրանք, այնուամենայնիվ, թերագնահատում են տղամարդու ներդրումը:

Երեխային դպրոցից/ ցերեկային խնմքի կենտրոնից վերցնելը զուգընկերներից մեկի կողմից է արվում ըստ տղամարդկանց 13%-ի և կանանց 12%-ի: Տղամարդկանց յոթ տոկոսը և կանանց 27%-ը նշել են, որ նրանք դա հիմնականում ինքնուրույն են անում և տղամարդկանց 21% ու կանանց 4%-ը նշել են, որ դա զուգընկերներն են անում:

Երեխայի հետ անցկացրած ազատ ժամանակը, թվում է, զուգընկերները համեմատաբար հավասար են բաշխել: Երեխայի հետ խաղալը կամ ազատ ժամանակ տարբեր գործողությունները միասին են ձեռնարկվում ըստ տղամարդկանց 43%-ի և կանանց 34%-ի: Հարցված տղամարդկանց ընդամենը 7% -ը և հարցված կանանց 27%-ը նշել են, որ նրանք դա հիմնականում ինքնուրույն են անում, իսկ տղամարդկանց 16% և կանանց 2%-ը նշել են, որ մեծամասամբ իրենց զուգընկերներն են զբաղվում դրանով:

Ըստ հարցված տղամարդկանց 34%-ի և կանանց 25%-ի նրանք երկուսն էլ կշտամբում են երեխային և ենթարկում խոսքային կարգապահության. Տղամարդկանց տասներկու և կանանց 37%-ը նշել են, որ նրանք դա մեծամասամբ ինքնություն են անում, իսկ տղամարդկանց 18% և կանանց 1%-ը մատնացույց են աշել, որ իրենց զուգընկերներն են դրանով զբաղվում:.

Երեխային ապտակելու կամ ծեծելու դեպքերը տեղի են ունեցել ընտանիքների 6%-ում: Տղամարդկանց հինգ և կանանց 24%-ը նշել են, որ իրենք են ապտակել կամ ծեծել երեխային, իսկ տղամարդկանց 9%-ը ր կանանց 0.7%-ը նշել են, որ նմանօրինակ վարքագիծը բնորոշ է իրենց զուգընկերներին:

Փաստորեն, քանի որ կանայք ավելի շատ ժամանակ են անցկացնում երեխայի հետ, և հասարակությունը կանանց է ընկալում իբրև երեխայի հիմնական ուսուցանող, հենց կանայք են մեծամասամբ պատժամիջոցներ կիրառում: Այս դեպքում հայրերն իրենց պահվածքը համապատասխանեցնում են «վատ տղա չլինելու» սկզբունքին: Սա նաև

հավելյալ բարոյական բեռ է դառնում կանանց համար: Քիչ ներգրավվելով երեխայի ամենօրյա անցուդարձը, տղամարդը հայտնվում է շահեկան իրադրության մեջ, նրա խոսքերն ավելի մեծ արժեք են ունենում հազվադեպության հաշվին:

Երեխայի տակդիրներն ու շորերը հերթով փոխելը նշված է տղամարդկանց 6%-ի և կանանց 4%-ի զեկույցներում: Ըստ հարցված տղամարդկանց 0.6%-ի և կանանց 45%-ի՝ նրանք դա միայնակ են անում, իսկ տղամարդկանց 45% և կանանց 0.3%-ը նշել են, որ իրենց զուգընկերներն են դրանով զբաղված:

Երեխային միասին են լողացնում ըստ տղամարդկանց 7%-ի և կանանց 4%-ի: Հարցված տղամարդկանց մեկ տոկոսը և կանանց 51%-ը նշել են, որ նրանք դա հիմնականում մենակ են անում: Ըստ տղամարդկանց 49% և կանանց 0.6%-ի՝ նրանց զուգընկերներն են դրանով զբաղվում:

Երեխաների անձնական խնդիրները համատեղ են քննարկվում ըստ հարցված տղամարդկանց 34%-ի և հարցված կանանց 25%-ի: Տղամարդկանց հինգ տոկոսը և կանանց 31%-ը նշել են, որ հարցվածն հիմնականում ինքն է դրանով զբաղվում, իսկ տղամարդկանց 17%-ը և կանանց 2% -ը նշել են, որ իրենց զուգընկերներն են անում դա:

Ըստ տղամարդկանց 17%-ի և կանանց 11%-ի՝ նրանք միասին են երեխային օգնում տնային աշխատանք կատարելիս: Տղամարդկանց հինգ և կանանց 35%-ը նշել են, որ միայն հարցվածն է դա անում, իսկ տղամարդկանց 23%-ը և կանանց 1%-ը նշել են, որ իրենց զուգընկերներն են դրանով զբաղվում:

Ուստի, դժվար չէ նկատել, որ բոլոր այս պատասխաններում, որոնք հաստատում են, որ տղամարդիկ և կանայք այս կամ այն պարտականությունը կատարում են միասին, տղամարդիկ շեշտել են, որ իրենք բոլոր այս պարտականություններն իրացնում են ավելի հաճախ, քան կանայք են վկայում այդ մասին: Երբ դիտարկում ենք այս պարտականությունների վերաբերյալ պատասխանները առանձին, ակնհայտ է դառնում, որ տղամարդկանց ներդրումը մեծ չէ:

Աղյուսակ 21. Ծնողավարություն

Ծնողական հոգածության մասին հարցերին պատասխանած հարցվածների տոկոսը

(N=1159)

Որքան հաճախ եք դուք կատարում հետևյալը	Երբեք	Երբեմն	Հաճախ
Երեխայի ամենօրյա խնամքը	3.1	13.9	49.7
Երեխայի հետ մնալը նրա հիվանդ ժամանակ	2.9	19.8	47.9
Երեխային դասի/ցերեկային խնամքի կենտրոն տանելը/ բերելը	2.5	9.5	29.6
Երեխայի հետ խաղալը կամ ազատ ժանամանակ անցկացնելը	1.1	15.8	47.2
Երեխային նախատելը (խոսքային դաստիարակություն)	3.8	35.5	24.1
Երեխային ծեծելը	5.8	15.4	6.1
Երեխայի տակդիրները կամ շորերը փոխելը	9.2	6.0	33.6
Երեխային լողացնելը	10.6	6.3	38.7
Երեխայի անձնական խնդիրների շուրջ խոսելը	1.9	24.0	31.3
Երեխային օգնելը տնային աշխատանք կատարելիս	2.4	12.3	31.1

Չնայած այն փաստին, որ ծնողների 50% հայտնել են, որ հաճախ են խնամում երեխաներին, 48%-ը տանն են մնում, եթե երեխան հիվանդ է, 30%-ը երեխային վերցնում են դպրոցից և 47%-ը խաղում են երեխաների հետ, ըստ սեռային բաշխման՝ տվյալները ցույց են տալիս, որ բոլոր այս պարտականություններն ավելի հաճախ կատարվում են կանանց, քան տղամարդկանց կողմից (Աղյուսակ 22) .

Աղյուսակ 22. Ծնողավարություն

Հետևյալ պարտականությունների կատարման հաճախականության մասին հարցերին պատասխանած տղամարդ և կին հարցվածների տոկոսը

(Տղամարդիկ N=488, կանայք N=671)

Որքա՞ն հաճախ եք կատարում հետևյալ պարտականությունները	Երբեք		Երբեմն		Հաճախ	
	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ
Երեխայի ամենօրյա խնամքը	7.2	0.1	28.3	3.4	32.0	62.6
Երեխայի հետ մնալը նրա հիվանդ ժամանակ	6.6	0.3	32.8	10.4	31.4	59.9
Երեխային դասի/ցերեկային խնամքի կենտրոն տանելը/ բերելը	4.9	0.7	16.2	4.6	20.1	36.5
Երեխայի հետ խաղալը կամ ազատ ժանամանակ անցկացնելը	2.0	0.4	27.0	7.6	37.1	54.5

Երեխային նախատելը (խոսքային կդաստիարակություն)	7.0	1.5	36.5	34.7	19.5	27.4
Երեխայի ծեծելը	8.6	3.7	9.2	19.8	3.1	8.3
Երեխայի տակդիրները կամ շորերը փոխելը	20.9	0.7	11.7	1.8	17.6	45.3
Երեխային լողացնելը	24.6	0.4	11.9	2.2	19.9	52.5
Երեխայի անձնական խնդիրների շուրջ խոսելը	4.1	0.3	28.1	21.0	25.6	35.5
Երեխային օգնելը տնային աշխատանք կատարելիս	5.1	0.4	20.7	6.3	20.1	39.2

Ըստ ստացված տվյալների միջինի՝ տղամարդ հարցվածների 20 %-ը երեխայի խնամքին վերաբերող տարբեր հանձնարարություններ են կատարում, բայց միևնույն ժամանակ գերադասում են խաղալ երեխաների հետ (37%), մնալ հիվանդ երեխաների հետ (31%), քան թե օգնեն տնային առաջադրանքներ կատարելիս և լողացնելիս (20%): Տղամարդկանց մոտավորապես 26%-ը և կանանց 35%-ը ասել են, որ ոչ թե երբեմն,այլ հաճախ են խոսում անձնական խնդիրների շուրջ իրենց երեխաների հետ, որը, անշուշտ, բախտորոշ է երեխայի պատշաճ զարգացման համար:

Միևնույն ժամանակ նույնիսկ ընդունելով, որ երեխաների բուժումը համատեղ խնամք է համարվում (հարցվածների 60.7%) և որ ծնողներից մեկի հաղորդակցումը երեխայի հետ բախտորոշ է, կանանց 53%-ը և տղամարդկանց 46%-ը նշել են, որ որոշ պահերին երեխային պետք է ապտակել կամ ծեծել:

Եյլի բժշկական դպրոցի հայրության փորձագետ դոկտոր Քայլ Պրուետը բացատրում է հայրական խնամքի անհրաժեշտությունը հետևյալ կերպ. «Հայրը մայր չի դառնա»: Տարբեր հոգեբանական հետազոտություններ հաստատում են, որ «հայրությունը, ինչպես պարզվում է, բարդ և ունիկալ երևույթ է, որը նշանակալի հետք է թողնում երեխաների զգայական և ինտելեկտուալ աճի վրա» [70]: Հայրը՝ որպես տղամարդ ծնող, եզակի ներդրում ունի ծնողական հոգածության նախագծում. Նմանապես, մայրը՝ որպես կին, յուրօրինակ ազդեություն ունի իր երեխայի կյանքի և զարգացման վրա: Այս տարբերությունն ինքնին տալիս է երեխաներին հակադիր շփումների ավելի լայն և հարուստ փորձ , ավելի, քան միայնակ ծնողի մեծացրած երեխաների դեպքում: Երեխաները շատ վաղ տարիքից սովորում են իրենց փորձից, որ տղամարդիկ և

[70] Էրիկ Էրիկսոն, Նյու Յորք, Վորներ Բուքս, 1987

կանայք տարբեր են և ունեն կյանքի, այլ մեծահասակների և երեխաների հանդեպ տարբեր դիրքորոշումներ: Հայրերը հակված են խաղալ (37%), իսկ մայրերը՝ հոգ տանել երեխաների մասին (62%): Հայրերը խրախուսում են մրցակցությունը, մայրերը խրախուսում են արդարությունը: Մեկ գործելաոճը քաջալերում է անկախությունը, մինչդեռ մյուսները քաջալերում են անվտանգությունը: Երկուսն էլ իրենց յուրօրինակ ձևով են ապահովում անվտանգությունը և վստահութունը՝ սիրո և ֆիզիկական մտերմության միջոցով[71]:

Երեխաների հետ հաղորդակցման հաճախականության տվյալները, որոնք հավաքվել են հենց այս հետազոտության շրջանակներում, պատկերացում են տալիս այն մասին, որ անգամ առանձին ապրելու դեպքում ծնողները չեն խուսափում իրենց երեխաների հետ շփվելուց: Հարցվածների 52%-ը հայտնել են, որ շփվում են իրենց երեխաների հետ գրեթե ամեն օր: Սոցիոլոգիայի հայկական ամսագիրը գտնում է, որ «Երեխայի սոցիալականացման հայրակենտրոն օրինաչափություններ ունեցող հասարակարգերը դստիարակում են տղամարդկանց, ովքեր քիչ են հակված կանանց հանրային գործունեությունը սահմանափակելուն՝ ի համեմատություն հայրերին օտարող հասարակարգերի»[72]: Երբ մենք անտեսում ենք ծնողների ազդեցության գենդերային տարբերությունները՝ կարևորություն կամ նշանակություն չտալով դրանց, մենք իրապես սահմանափակում ենք երեխաների բնականոն զարգացումը: Երեխաները մոր և հոր ակտիվ մասնակցության կարիքն ունեն, և երկու ծնողներն էլ պետք է հավատարիմ մնան իրեց գենդերային նախասահմանմանը: Երկուսն էլ իրենց նպաստն են բերում ծնողական հոգածության նախագծին:

Թեև նախորդ հարցման ընթացքում պարզ դարձավ, որ տղամարդիկ տեսնում են իրենց հաց վաստակողի դերում և ընտանիքն ապահովելու իրենց պարտականությունը ամրակայված է հանրային գիտակցության մեջ, տղամարդկանց 26%-ը ֆինանսական աջակցություն չեն ցուցաբերում,իսկ հայրերի 10%-ը ժամանակ առ ժամանակ են օգնում, եթե երեխան չի ապրում իրենց հետ: Միևնույն ժամանակ 42%-

[71] Բարբարա Դաֆո Ուայթհեդ, Աթլանտիկ ասաթերթ, Ապրիլ 1993
[72] Սքոթ Կոլտրան, «Հայր-երեխա փոխհարաբերությունները և կանանց կարգավիճակը. Միջմշակութային ուսումնասիրություն», Սոցիոլոգիայի ամերիկյան ամսագիր, 93 (1988)

ը նշել են, որ իրենք մշտական օգնություն են ապահովում, իսկ 16%-ը նշել են, որ ծախսերի մեծ մասը նրանք են հոգում:

Տղամարդկանց մասնակցությունը տնային գործերին

Տնային տնտեսությունը բնորոշվում է որպես արտադրական ոլորտ, որտեղ ոչ առևտրային արտադրություն է իրականացվում (ինքամատակարարում), ինչպես նաև գործունեության ոլորտ, որի նպատակն է գործածական/ սովորական կենցաղային իրերի վերանորոգումը (նորացումը, բնակարանի մաքրումը և այլն). Ընտանիքի անդամների տնային ծառայությունների մատուցումը իրացվում է տնային տնտեսությունում: Աշխատանքի ծավալն ու բնույթը տնային տնտեսությունում տարբեր երկրներում տարբեր է և նույնիսկ միևնույն երկրի տարբեր սոցիալական շերտերում: Հայրիշխանության պայմաններում և հասարակարգերի մեծ մասի ավանդույթների համաձայն, հանրային և մասնավոր (տնային տնտեսության) տիրույթները բաժանված են տղամարդկանց և կանանց միջև: Եվ ինչքան ավելի ավնդական և ապադեմոկրատական է հասարակությունը, այնքան ավելի մեծ է տարբերությունը[73]:

Փաստացիորոն տնային արտադրությունը չվճարվող գործողություններ է ներառում, որոնք իրացվում են տնտեսության անդամների կողմից՝ իրենց պահանջները բավարարելու համար: Գործողության այս տեսակները կարող են փոխարինվել շուկայի ապրանքատեսակներով կամ վճարովի ծառայություններով, եթե հանգամանքները (եկամտի չափը, շուկայի պայմանները և անձնական նախընտրությունները) հնարավորություն են ապահովում: Օրինակ, Հայաստանում կանայք կարող են ուտելիք պահածոյացնել տանը, քանի որ ընտանիքի համար ավելի խելամիտ տարբերակ է, սակայն ընտանիքի եկամտի աճին զուգընթաց այս պահածոյացրած ուտելիքը կարելի է գնել: Միևնույն ժամանակ հնարավոր է, որ նույնիսկ այն դեպքերում, երբ ընտանիքը կարող է իրեն թույլ տալ դա ձեռք բերել, միևնույնն է դրանք կարող են պատրաստվել տանը՝ ընտանիքի անդամների

[73] Լ.Զաքարյան, Ա.Հարությունյան, *Սեռը և լրագրությունը*, Ուսումնական ձեռնարկ, AAWUE Երևան 2010, էջ 175.

նախընտրությունների պատճառով («տանը պատրաստված ուտելիքը միշտ ավելի համեղ է» և «ապահով»).

Տնային գործերը պահանջում են էներգիա և ժամանակ: Սա հիմնականում կատարվում է կանանց կողմից և նրանք ստիպված են լինում կամ հանրային ոլորտում չաշխատել, կամ ընտրել ոչ լրիվ օրով աշխատանք:

Մինչև վերջերս տնային գործերը քանակապես չէին գնահատվում. դրանք արտացոլված չէին ազգային վիճակագրական տվյալներում: Սակայն աշխատանքի վրա ծախսված ժամանակի կառուցվածքի ուսումնասիրությունը շատ կարևոր է աշծատանքի հավասար բաշխման համար, երկրի տնտեսական և սոցիալական կյանքում կանանց և տղամարդկանց ներդրման գնահատման համար և երեխայի խնամքի հետ կապված ընտանեկան պարտականությունների և պատասխանատվության հավասար բաշխման համար:

2005 թվականից սկսած Ազգային վիճակագրական ծառայությունը պատասխանատու է եղել «Կանայք և տղամարդիկ Հայաստանում» գրքույկի պատրաստման համար՝ կյանքի տարբեր ասպեկտներին, այդ թվում՝ տղամարդկանց և կանանց կողմից ժամանակի օգտագործմանը վերաբերող տվյալների ներառմամբ: Տվյալները ինֆորմացիա են պարունակում տղամարդկանց և կանանց կողմից վճարովի և անվճար (տնային) աշխատանքի վրա ծախսած ժամանակի մասին և ցույց են տալիս, որ կանայք սովորաբար հինգ անգամ ավելի ժամանակ են ծախսում տնային պարտականությունների վրա, քան տղամարդիկ[74]: Սույն խնդիրն ուսումնասիրողները միշտ ուշադրությունը կենտրոնացրել են կանանց՝ իբրև տնային տնտեսության գլխավոր դերակատարների վրա:

Ըստ հասարակությունում իշխող գենդերային կարծրատիպերի՝ տնային գործերը, որպես կանոն, չեն համարվում տղամարդու գործ: Իսկական տղամարդը, ըստ տարածված կարծրատիպի, պետք է ունենա «արժանապատիվ աշխատանք» և «փող վաստակի»: Սա կանխորոշում է ոչ միայն ընտանիքի բարեկեցությունը, այլև սոցիալական կարգավիճակը, հեղինակությունն ու կենսառճը: Ըստ այս

[74]Կանայք և տղամարդիկ Հայաստանում, վիճակագրական գրքույկ, ՀՀ ԱՎԾ, 2015 http://www.armstat.am/file/article/kanajq_ev_txamardik.pdf

մոտեցումների՝ տղամարդիկ պետք է միայն որոշ տնային գործառույթներ հանձն առնեն, և, որպես կանոն, դա բնակարանի վերանորոգումն է և մասնավորապես խոշոր գնումները և այլն:

Այս ըմբռնումները կախված են հասարակության մշակութային և արժեքային համակարգից, պետության գենդերային քաղաքականությունից և կարող են փոխվել հասարակության քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացմանը զուգահեռ: Տղամարդկանց դերերը դանդաղորեն փոխվում են, տղամարդիկ առաջնահերթ պահպանում են փող, անվտանգություն, ամուսնական և ծնողական խնամք ապահովողի դերը: Տեղի է ունենում գենդերային կարգի[75] նոր և հին ձևատեսակների համադրում: Կանանց դերի սոցիալական ըմբռնումները և տեղը հանրային ոլորտում ավելի արագ են փոխվում, քան տղամարդու՝ տնային տնտեսությունում ունեցած դերի հարստացումը: Այս իրադրության հիմնական պատճառներից մեկը այն հանգամանքն է, որ տնային գործերը շուկայական արժեք չեն ներկայացնում և, այսպիսով, բարձր չեն գնահատվում:

Հայաստանում քննվող խնդրի դաշտային հետազոտություններ երբեք չեն արվել: Այսպիսով, սույն ուսումնասիրությունը բավականին տեղեկատվական է այս առումով:

Ստեղծված պայմաններում ավանդական սոցիալական պայմանագրերը չեն համապատասխանում աշխատաշուկայում կանանց և տղամարդկանց դերերին: Կրթության և աշխատանքի ոլորտներում զբաղեցրած դիրքերի հավասարությունը վերացրել է անհավասարության հիմքերը հասարակական կարգավիճակից. Տղամարդը դադարել է ընտանիքի պաշտպան և միակ ապահովողը լինելուց, որը պետք է հանգեցներ տնային պարտականությունների համահավասարեցման: Սակայն այս ուղղությամբ կատարվող փոփոխությունները դանդաղ են առաջ ընթանումն իրենց բնույթով հակասական են:

Միևնույն ժամանակ սա կարևոր խնդիր է հանդիսացել, քանի որ եթե նրանցից մեկը իրականացնում է տնային աշխատանքի և եթե դա երկար ժամանակ է ինչ կնոջ կողմից

[75] Խմբագիրներ՝ Ի.Զդրամովիսլովա, Ա.. Ռոտկիրխ, Ա.. Թուեմկինա, Նոր ապրելառճ ժամանակակից Ռուսաստանում. Առօրյայի ուսումնասիրություն, Սանկտ Պետերբուրգ, Սանկտ Պետերբուրգի հրատարակչատուն 2009,էջ 8, http://socioline.ru/files/5/348/s-091_pages.pdf

է արվում, ապա նա քիչ ազատ ժամանակ ունի իր տրամադրության տակ և իր եկամուտները զարգացնելու համար:

Նույնիսկ հաշվի առնելով այն փաստը, որ տնային գործերը մասնավոր ոլորտի մի մաս են, դրանք հաճախ ղեկավարվում են հանրային ոլորտում գոյություն ունեցող գենդերայի կարծրատիպերով:

Հայաստանում առնականության ըմբռնումը հասկանալու համար լուսաբանվել են տնային գործերում և պարտականություններում տղամարդու ներգրավվածության որոշ գործերին, ինչպիսիք են լվացքը/ հագուստ լվանալը, տունը, լոգասենյակը կամ զուգարանը մաքրելը, ուտելիք պատրաստելը, սննդամթերք գնելը, կոմունալ ծախսերի վճարումը և տան վերանորոգումը:

Հետազոտությունը ցույց է տվել, որ ամուսնական զույգը շատ քիչ աշխատանք են միասին կատարում, այդ թվում՝ միայն սննդամթերք գնելը (38.1%) և կոմունալ ծախսերի վճարումը (21.2%), իսկ մնացած տնային պարտականությունները, ինչպիսիք են լվացքը, տան վերանորոգումը, բնակարանի և լոգասենյակի մաքրումը, կերակուր պատրաստելը, թվում է, որպես կանոն, բաշխված են զույգի միջև: Օրինակ, հարցվածների 46%-ը նշել են, որ նրանք ինքներն են լվացք անում և 36%-ը մատնացույց են արել զուգընկերներին: Կամ՝ այլ օրինակներ. Տան վերանորոգումն կամ հարցվածներն են անում (37%), կամ իրենց զուգընկերները (38%). Բնակարանի և լոգասենյակի մաքրումը համապատասխանաբար 47% և 36% են բաշխվել, իսկ կերակուրի պատրաստումը՝ 46% և 35%.

Աղյուսակ 23. Տնային պարտականությունների բաշխում

Տղամարդ և կին հարցվածների տոկոսը, ովքեր պատասխանել են ՏՊ բաշխման մասին հարցին

(Տղամարդիկ N=694, կանայք N=738)

Կողմնակի օգնությունը մի կողմ թողնելով՝ Դուք և Ձեր զուգընկերն ինչպե՞ս եք բաշխում հետևյալ պարտականությունները	Սովորաբար Դուք		Հավասարապես /միասին		Սովորաբար զուգընկերը	
	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ
Լվացքը /հագուստ լվանալը	3.2%	87.3%	0.3%	0.5%	71.9%	2.0%

Տան վերանորոգումը	68.2%	8.1%	3.2%	9.5%	4.3%	70.7%
Սննդի գնումը	17.7%	35.6%	35.4%	40.7%	23.6%	15.4%
Տան մաքրումը	3.2%	89.1%	2.3%	1.1%	71.5%	1.9%
Լոգասենյակի/ զուգարանի մաքրումը	3.0%	89.3%	1.0%	0.8%	72.6%	1.9%
Ուտելիքի պատրաստումը	3.3%	86.6%	4.2%	3.5%	69.5%	2.2%
Վարձավճարների մուծումը	36.5%	28.5%	20.7%	21.5%	18.4%	40.9%

Տղամարդկանց և կանանց միջև տնային պարտականությունների բաշխումը ավելի պարզ է դառնում, երբ նույն հարցերին տրված պատասխաններն ուսումնասիրվում ենք ըստ սեռի տարանջատմամբ: Ըստ հետազոտության արդյունքների, տղամարդիկ ամենաքիչն են ուշադրություն դարձնում տունը մաքրելուն: Օրինակ, հարցված տղամարդկանց ընդամենը 3.0% են նշել, որ հիմնականում լոգասենյակն ու զուգարանն իրենք են մաքրում, 3.2%-ը գործ ունեն բնակարանը մաքրելու, իսկ 3.2%-ը՝ լվացքի հետ: Տղամարդկանց ընդամենը 3.3% են նշել, որ իրենք տանն ուտելիք են պատրաստում: Սակայն տղամարդկանց 68.2%-ը տան վերանորոգման աշխատանքներն են անում, իսկ 36.5%-ը՝ կոմունալ վճարումները: Հավանաբար լվացքը մեր օրերում լվացքի մեքենան է անում և այս պատճառով տղամարդկանց ցածր տոկոսն է նշել դրա մասին: Նույն իրադրությունն է նաև տան մաքրման և կերակուր պատրաստելու դեպքում: Կանանց ավելի բարձր տոկոսը նշում են, որ իրենք ինքնուրույն են այդ գործերը գլուխ բերում՝ ի համեմատ տղամարդկանց ավելի ցածր տոկոսի, ովքեր նշում են, որ այս պարտականություններն իրականացվում են զուգընկերոջ կողմից:. Հարցված կանանց մոտավորապես 89%-ը նշել են, որ ինքնուրույ են մաքրում բնակարանը և սանիտարական աշխատանքներ կատարում, մինչդեռ տղամարդկանց ընդամենը 72%-ը նշել են, որ այս պարտականությունները զուգընկերն է կատարում:

Իրականում բացի բնակարանի վերանորոգումից, գնումների և կոմունալ վճարումների կատարումից, տղամարդկանց մասնակցությունը մնացած աշխատանքներին ըստ իրենց իսկ սեփական պատասխանների ընդամենը 3% է:

Հետաքրքիր է, որ երբ կանանց են հարցնում իրենց զուգընկերների ներտնային վերանորոգման կամ կոմունալ վճարումների կատարմանը մասնակցության մասին,

նրանց նշած տոկոսը բարձր է տղամարդկանց նշած տոկոսից: Սակայն, երբ տղամարդիկ են գահատում կանանց կատարած աշխատանքը, ապա տոկոսը ցածր է կականց նշած տոկոսից: Տղամարդկանց վաթսունութ տոկոսը նշել են, որ իրենք ինքնուրույն են անում տան վերանորոգման աշխատանքները, իսկ հարցված կանանց 71%-ը նշել են, որ այս գործն անում է զուգընկերը: Ինչ վերաբերում է կոմունալ վճարումներին, տղամարդկանց 36%-ը նշել են, որ իրենք են դա անում, իսկ կանանց 41%-ը այս պարտականությունը վերագրել են զուգընկերոջը: Քանի որ այս աշխատանքը չի զուգորդվում կարծրատիպերի հետ, կանանց և տղամարդկանց մոտ 21%-ը նշել են, որ նրանք այս գործն անում են միասին, այսինքն՝ այս դեպքում տվյալ պահին նրանցից որն էլ որ առաջինն է հասանելի ինում:

Աղյուսակ 24. Տնային պարտականությունների բաշխումը

ՏՊ պարտականությունների բախշմանը վերաբերող հարցին պատասխանանած հարցվածների տոկոսը

(N=1617)

Ընդհանուր առմամբ ի՞նչ կարծիքի եք պարտականությունների բախշման մասին:	Հարցվածների տոկոսը
Իմ զուգընկերը շատ ավելին է անում	21.6
Իմ զուգընկերը փոքր-ինչ ավելին է անում	18.7
Ես մի փոքր ավելին եմ անում	18.9
Ես շատ ավելին եմ անում	15.4

Ընդհանուր տնտեսության պարտականությունների բախշման հետազոտությունը ցույց է տալիս, որ հարցվածների մոտ 40% են վստահ, որ իրենց զուգընկերները տանն իրենցից շատ են աշխատում, իսկ 34%-ը հավատացած են, որ իրենց զուգընկերներից շատ են աշխատում:

Երբ մենք նույն հարցերին տարասխանները դիտարկում ենք ըստ սեռի տարանջատմամբ՝ պարզ է դառնում հետևյալը:

Տղամարդկանց միայն 44% է հավատացած, որ իրենց զուգընկերներն իրենցից շատ աշխատանք են կատարում, իսկ հարցվածների 23%-ի կարծիքով իրենք են ավելի

ծանրաբեռնված: Զարմանալիորեն հարցված կանանց միայն 45% են հավատացած, որ իրենք իրենց զուգընկերներից շատ են ծանրաբեռնված, իսկ 37%-ը նշել են, որ աշխատանքի մեծ մասը զուգընկերների ուսերին է:

Հետազոտությունը միանշանակորեն ցույց է տալիս, որ տղամարդկանց մասնակցության չափաբաժինը մի փոքր մեծացել է 2005-ից սկսած[76]. Հավանաբար, մի կողմից դա պայմանավորված է այն փաստով, որ տղամարդիկ զրկվել են հաց վաստակողի իրենց դերից, և մյուս կողմից, կանանց էմանսիպացիան է խթանում գործընթացը: Սոցիալ-տնտեսական պայմանների փոփոխությունները երբեմն կարող են հանգեցնել գենդերային կարծարտիպերի փոփոխութոյուններին:

Բացի այդ, մեր օրերում գոյություն ունի նոր միտվածություն տնային գործերը տեխնիկասարքավորումների միջոցով անելու (օրինակ՝ լվացքը կամ ափսե լվանալը) կամ ըստ էության առևտրային սկզբունքի կիրառմամբ (օրինակ՝ բնակարանի վերանորոգումը վարձու բանվորների միջոցով կամ բանվորական խմբերի միջոցով): Այս ամենը մասնակիորեն թեթևացնում է կանանց և տղամարդկանց տնային պարտականությունների բեռը: Սակայն այս դեպքերում ևս բանվորների կամ մեքենասարքավորումների կողմից այս աշխատանքների իրացման վերահսկողությունը կատարվում է համապատասխանաբար կանանց կողմից՝ լվացքի և մաքրման դեպքում և տղամարդկանց կողմից՝ վերանորոգման և գնումների դեպքում:

Եվս մի մտահոգիչ թեմա է հարցվածների գոհունակությունը տնային պարտականությունների բաշխումից: Այսպես, ընտրանքի ընդհանուր թվի մոտ 70%-ը գոհ են տնային պարտականությունների բաշխման և ընդամենը մոտ 13% են դժգոհ: Մինչդեռ հարցվածների 72%-ը գտնում են, որ իրենց զուգընկերները գոհ են տնային պարտականությունների ներկայիս բաշխումից, ենթադրվում է, որ ընդամենը 10% են դժգոհ:

Հարցերին տրված պատասխանների վերլուծությունը բերում է այն եզրակացության, որ ընտանիքներն ունեն կայուն հիմքի վրա դրված «պայմանագրեր»: Եթե 70%-ը գոհ են տնային պարտականությունների ներկայիս բաշխման, դա նշանակում է, որ այս

[76] Քանի որ սեռային տարանջատման վրա հիմնված առաջին տվյալները ներկայացվել են Ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ *Կանայք և տղամարդիկ Հայաստանում* վիճակագրական բուկլետում

բաժանումը համապատասխանում է իրենց տեսակետներին: Սա հաստատվում է նաև իրենց և իրենց զուգընկերներին վերաբերող հարցերին տրված պատասխաններով:

Աղյուսակ 25. Վերաբերմունքը տնային պարտականությունների բաշխմանը

ՏՊ պարտականությունների բախշմանը վերաբերող հարցին պատասխանած հարցվածների տոկոսը. (N=1617)

Ընդհանուր առմամբ ի՞նչ կարծիքի եք պարտականությունների բախշման մասին	Ընդհանուր առմամբ ինչքանո՞վ եք գոհ պարտականությունների բաշխումից	Ըստ Ձեզ, Ձեր զուգընկերն ընդհանուր առմամբ ինչքանո՞վ է գոհ պարտականությունների բաշխումից
Շատ դժգոհ	3.6	1.9
Դժգոհ	9.9	7.8
Գոհ	42.4	43.4
Շատ գոհ	28.0	28.8
Չգիտեմ/չի պատասխանել	16.0	18.0

Այս եզրակացությունը հաստատվել է տրված պատասխաններին ըստ սեռի տարանջատումով: Ակնկալիքերին համաձայն ավելի շատ կանայք են շատ դժգոհ տնային պարտականությունների ներկայիս բաշխումից՝ ի համեմատ տղամարդկանց: Սակայն դա համեմատաբար ցածր տոկոս է կազմում (խիստ դժգոհ են կանանց 5.1% և տղամարդկանց 2.0%-ը, իսկ 13.6% և 6.1% պարզապես դժգոհ են): Սույն մոտեցման պահպանման հնարավոր պատճառներից կարող է լինել տղամարդկանց պակասը ժանամակակից Հայաստանում: Պատերազմն ու միգրացիան զարկ են տվել դեմոգրաֆիկ ճգնաժամին: Տղամարդկանց դեմոգրաֆիկ դեֆիցիտը տանում է նրանց սիմվոլիկ արժեքի բարձրացմանը և առնականության հաստատմանը[77]: Վերոնշյալը բերում է տղամարդկանց թերությունների, սխալների և եսասիրության հանդեպ հանդուրժողական վերաբերմունքի ձևավորման:

Աղյուակ 26. Վերաբերմունք տնային պարտականությունների բաշխմանը

ՏՊ պարտականությունների բախշմանը վերաբերող հարցին պատասխանած կին և տղամարդ հարցվածների տոկոսը

[77] Ի.Ա. Զդրավամիսլովա, Ա.Ա. Տուեմկինա, *Տասներկու դասախոսություն գենդերային սոցիոլոգիայի մասին. Ուսումնական ձեռնարկ, Սանկտ Պետերբուրգ. Սանկտ Պետերբուրգի Եվրոպական համալսարանի հրատարակչատուն*, 2015, https://postnauka.ru/longreads/55082

(Տղամարդիկ N=694, կանայք N=738)

Ընդհանուր առմամբ ի՞նչ կարծիքի եք պարտականությունների բախշման մասին:	Չափազանց դժգոհ	Դժգոհ	Գոհ	Չափազանց գոհ
Ընդհանուր առմամբ որքանո՞վ եք գոհ պարտականությունների նման բաշխումից:				
Տ	2.0%	6.1%	36.9%	31.1%
Կ	5.1%	13.6%	47.6%	25.1%
Ըստ Ձեզ ընդհանուր առմամբ Ձեր զուգընկերն ինչքանո՞վ է գոհ պարտականությունների նման բաշխումից:				
Տ	2.0%	5.9%	41.6%	25.5%
Կ	1.8%	9.6%	45.1%	31.8%

Զուգընկերոջ գոհ լինելու վերաբերյալ կանանց և տղամարդկանց կարծիքների ուսումնասիրությունը, թվում է, ևս հստակեցնում է համատեղ ակնկալիքների պատկերացումը: .Այսպես, կանանց մոտ 77%-ը հավատացած են, որ իրենց զուգընկերները գոհ են պարտակնությունների համանման բաշխումից (հիշենք, որ տղամարդկանց 68%-ը գոհունակություն են հայտնել, այսինքն շեղումը կազմում է 9%), և այսպիսով նրանք հավատացած են, որ 45.1%-ը գոհ են, իսկ 31.8%-ը՝ չափազանց գոհ:

Տղամարդկանց մոտ 67%-ը վստահ են, որ իրենց զուգընկերները գոհ են պարտակնությունների համանման բաշխումից (հիշենք, որ կանանց 73%-ը գոհունակություն են հայտնել, այսինքն շեղումը կազմում է 6%), և այսպիսով նրանք հավատացած են, որ 41.6% գոհ են, իսկ 25.5%-ը չափազանց գոհ:

Այսպիսով, հետազոտությունը ցույց է տալիս, որ տնային պարտականությունների անհավասար և անարդարացի բաշխումը շարունակվում է, սակայն ընդհանուր առմամբ այս բաշխումը համապատասխանում է գոյություն ունեցող գենդերային կարծրատիպերին և գենդերային բախումների պատճառ չի դառնում:

ԳԼՈՒԽ 5. ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Սույն հետազոտությունը սեռերի միջև հարաբերությունների բնույթն ուսումնասիրում է նաև ամուսնությունից գոհ լինելու համատեքստում: Բավարարվածությունն ամուսնությունից բնորոշվում է կամ որպես «ամուսինների յուրաքանչյուրի կողմից իրենց հարաբերությունների սուբյեկտիվ գնահատում»[78], կամ որպես «ամուսինների կողմից սոցիալ-մշակութային նորմերի պրիզմայից դիտվող ընտանիքի գործառությանը վերաբերող սուբյեկտիվ ընկալում՝ իրենց անձնական կարիքները հոգալու տեսակետից», որը ենթադրում է շփվելու, ճանաչման, ես-ի գաղափարի պաշտպանության, փոխըմբռնման կարիք և այլնի [79]: Որոշ աղբյուրներ որոկում են «ամուսնությունից բավարարվածությունն» իբրև ընտանիքի ընկալման (պատկերի) ադեկվատ գիտակցման արդյունք, որը ձևավորվել է մարդու գիտակցության մեջ տարբեր իրադարձությունների ազդեցության ներքո, և որոնք նրա (իրական կամ խորհրդանշական) կենսափորձն են կազմում տվյալ գործունեության ոլորտում[80]:

Կան շատ ընկալումներ և մոտեցումներ, որոնք նկարագրում են ընտանեկան կյանքից բավարարվածության վրա ազդեցություն ունեցող դերակատարումն ու գործոնները: Ամուսնությունից սուբյեկտիվ բավարարվածության աստիճանը որոշող գործոններն են՝ ընտանիքի կյանքի շրջափուլը և ամուսնության տևողությունը, ամուսնանալու մոտիվացիան, ամուսինների արժեհամակարգի նմանությունը, ընտանիքում երեխաների գոյությունը, ամուսինների սեռական բավարարավածությունը, տնային պարտականությունների բաշխումը, տան պայմանները (բնակավայրի չափերը և հարմարավետության աստիճանը), ընտանեկան բյուջեն (գումարը և բաշխման միջոցները), և զբաղվածությունը: Օրինակ, աշխատող կանայք սուբյեկտիվ բավարարվածության ավելի բարձր մակարդակ են ցույց տալիս, քան չաշխատող տնային տնտեսուհիները: Հետազոտողները բացատրում են սա որպես «ինքնահիրացման մոտիվացիայի բավարարվածություն» մասնագիտական գործունեության ոլորտում, ինչը մեծացնում է ինքնահարգանքն ու կնոջ

[78]Ա.Վ. Հանկեվիչ, *Ընտանեկան կյանքից բավարարվածության վրա ազդող գործոնները.* http://seanewdim.com/uploads/3/2/1/3/3213611/hankevych_a._v._factors_that_influence_on_satisfaction_of_family_life.pdf

[79] Վ.Պ. Լեվկովիչ, Օ.Ի. Զուսցովա, *Զույգերի միջև կոնֆլիկտների ուսումնասիրության սոցիալ-հոգեբանական մոտեցումը*, Սամարա, 2007; Դ.Ի. Ռայգորոդսկի, խմբագիր, *Ընտանեկան հոգեբանություն. Քրեստոմատիա*, Սամարա, Բախրախ-Մ, 2007.

[80] Ս. Ի.Գոլոդ, *Պետության սոցիալ-ազգագրական վերլուծությունը և ընտանիքի էվոլյուցիան.* Социс.., 2008, #1.

ինքնաընկալման մակարդակը, և իրենց աշխատավայրում աշխատակիցներից էմոցիոնալ աջակցություն ստանալու հնարավորությունը: Ամուսնությունից և աշխատանքից բավարարվածության միջև ևս կա փոխառնչակցություն: Մասնավորապես՝ աշխատանքում հաջողության հասնելու և ընտանեկան հարաբերությունների միջև փոխկապակցվածություն կա տղամարդկանց պարագայում. Վերջինիս անկայունությունը երևան է գալիս այն ժամանակ, երբ տղամարդիկ մասնագիտական (և, հետևաբար, ֆինանսական) ձախողումներ են ունենում, ինչպես նաև վերանում են ֆինանսական վիճակի բարելավման հետ: Երբ տղամարդը վճռականորեն տրամադրված է իր կնոջ ու երեխաների ֆինանսական կայունությունն ապահովել, ապա նրա ֆինանսական և մասնագիտական ձախողումները բացասաբար են ազդում ոչ միայն ընտանեկան հարաբերությունների վրա, այլև նա բավարարվածության անկում է զգում կնոջ հետ ինտիմ հարաբերություններում [81]:

Այսպիսով, փորձելով համակարգել ամուսնությունից բավարարվածության գործոնները[82], որոնք հայտնաբերվել են տարբեր հետազոտությունների արդյունքում՝ այդ գործոնների չորս խմբեր են առանձնացվել.

1) Ընտանեկան կյանքից դուրս ամուսինների գործունեության բնութագրերը՝ մասնագիտական ոլորտ, հարաբերություններ ներքին շրջանակներում, և այլն,
2) Ընտանեկան կյանքի հիմնական ոլորտներում ամուսինների նպատակներն ու վարքը՝ տնային պարտականությունների բաշխումը և ընտանեկան կյանքի ոլորտում համատեղ նպատակները, ժամանցի կազմակերպումը,
3) Ամուսնական հարաբերությունների բնութագրերը՝ էմոցիոնալ և բարոյական արժեքներ (զուգընկերոջ հանդեպ սիրո և ակնածանքի զգացումները, միասնական տեսակետներն ու հետաքրքրությունները, ամուսնական հավատարմությունը, և այլն)
4) Ընտանիքի սոցիալ-դեմոգրաֆիկ և տնտեսական բնութագրերը:

---

[81] Տ. Գուրկո, *Տեսական մոտեցումներ ընտանիքի հետազոտություններին*, Մոսկվա, Սոցիոլոգիայի ինստիտուտ ՌԳԱ, 2010; Օ.Եգորովա *Ընտանիքից բավարարվածության երևույթը. Հետազոտության հիմնական ուղղությունները* , http://www.ipras.ru/cntnt/rus/dop_dokume/mezhdunaro/nauchnye_m/razdel_3_a/egorova_ov.html

[82] Տ. Գուրկո, *Տեսական մոտեցումներ ընտանիքի հետազոտություններին*, Մոսկվա, Սոցիոլոգիայի ինստիտուտ, ՌԳԱ, 2010;

Սույն հետազոտությունն ուսումնասիրում է առնականության դրսևորումներով պայմանավորված գործոնները՝ ամունսական բավարարվածության վրա ազդող գործոնների թվում:

Աղյուսակ 1. Փոխհարաբերություններ

Իրենց հարաբերությունների մասին հարցին պատասխանող տղամարդ և կին հարցվածների տոկոսը

(Տղամարդիկ N=694, կանայք N=738)

Ընդհանուր առմամբ ինչպե՞ս կբնութագրեիք Ձեր զուգընկերոջ հետ հարաբերությունները:	Տ	Կ
Վատ	2.0%	1.9%
Բավականին վատ	0.3%	0.9%
Ոչ այնքան լավ	7.3%	11.9%
Բավականին լավ	31.7%	40.0%
Շատ լավ	52.4%	42.5%

Տղամարդ (84.1%) և կին (82.5%) հարցվածների մեծամասնությունը դրական են գնահատում իրենց զուգընկերների հետ ունեցած հարաբերութունները՝ բավականին լավ և շատ լավ: Ընտրանքի տղամարդկանց 52.4%-ը հարաբերությունները գնահատում են գերադրական աստիճանով՝ տալով *Շատ լավ* որակումը, ինչը վկայում է իրենց ընտանեկան հարաբերություններում էմոցիոնալ հանգիստ են կամ որ իրենց զուգընկերոջից սպասումներն արդարացվել են: Տղամարդկանց համեմատությամբ կանայք ավելի զգուշավոր են դրական գնահատական տալիս: Ընտրանքի կանանց ընդամենը 42.5% է զուգընկերոջ հետ հարաբերությունները որակում են որպես «Շատ լավ», իսկ 40.0%-ը՝ «Բավականին լավ»: Այն հարցվածները, ովքեր բացասական որակումներ են տալիս զուգընկերների հետ իրենց հարաբերություններին (Ոչ այնքան Լավ, Բավականին վատ և Վատ) , ավելի շատ կանայք (14.7%) են, քան տղամարդիկ (9.6%): Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ տղամարդիկ ավելի գոհ են ընտանեկան հարաբերություններից, քան կանայք, ինչը համընկնում է ամուսնական հարաբերությունների հոգեբանական հետազոտության տվյալներին, որոնք ցույց են տալսի, որ ամուսնությունից բավարարվածության աստիճանը կախված է նաև

զուգընկերոջ սեռից[83] և տարբերությունները, որպես կանոն, կայանում են տղամարդկանց ավելի մեծ բավարարվածության մեջ՝ կանանց համեմատությամբ:

Միևնույն ժամանակ հոգեբանները ամուսնությունից բավարարվածությունը կապում են մարդու հոգեկան ներաշխարհի հետ: Այն զուգընկերները, ովքեր իրենց կյանքի պատասխանատվությունն ամբողջովին իրենց վրա են վերցնում՝ անկախ սեռից, ավելի բավարարված են ամուսնական կյանքում, այսինքն՝ ընդհանուր առմամբ, անձի հասունությունը առաջնահերթ դերակատարում ունի ամուսնության բարեհաջող կայացման համար: Հարկ է նշել, որ կանանց համար ամուսնությունից բավարարվածությունը կապված է նրանց ամուսինների հետ հոգևոր կապից. Ինչքան ավելի բարձր է ամունու հետ հոգևոր կապը, այնքան նա ավելի է բավարարված է իր կնոջից.[84]: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ պատասխանատու, հասուն տղամարդու հետ ամուսնությունը սուբյեկտիվորեն ավելի բարենպաստ է կնոջ համար: Սա նաև հաստատվում է ամուսնու աշխատանք ունենալու փաստի փոխկապակցվածությամբ կնոջ բավարարվածության հետ:

Ելնելով վերոնշյալից, մի շարք աղբյուրներ եզրակացնում են, որ ամուսինների գենդերային կարծրատիպային վարքը կանխորոշում է նրանց սպասումների և վարքի փոխպայմանավորվածությունը[85]: Այլ կերպ ասած՝ այն ամուսնությունը, որտեղ յուրաքանչյուրն իրեն հանգիստ է զգում առնականության և կանացիության կարծրատիպային ընկալումների շրջանակներում, ինչպես նաև իրենց ընտանեկան և մասնագիտական դերերում, ավելի գոհ են իրենց ամուսնությունից և քիչ են ունենում կոնֆլիկտներ:. Սույն հետազոտությունը վերահաստատում է այս եզրակացությունը՝ ամուսնական բավարարվածության և տնային աշխատանքների բախշման փոխկապակցվածության օրինակով:

---

[83] Ա.Ն. Վասիլյեվա, Գ.Ռ. Շագիվալեյեվա, *Ամուսնական բավարարվածության գենդերային փոխառնչակցության ուսումնասիրությունը զույգերի մոտ,* Կիրառական և հիմնարար ուսումնասիրությունների միջազգայի պարբերական, 2010, #3, էջեր.38-39.

[84] Յ. Ի. Ալեշինա, խմբ. Դ.Ի.Ռայգորոդսկի, *Ընտանեկան հոգեբանություն,*.Սամարա, Բախրախ-Մ, 2002, էջեր. 92-100.

[85] Ընտանեկան արժեքների և զույգերի դերակատարման փոխհարաբերությունը (Գենդերային ասպեկտը). Անհատականության սոցիալական դիրքի կապերը սոցիոմետրիկ կարգավիճակով անդամակցության խմբերին http://cyberleninka.ru/article/n/soglasovannost-semeynyh-tsennostey-i-rolevyh-ustanovok-suprugov-gendernyy-aspekt#ixzz4DyrppjuH

Նշված փոխհարաբերությունը պարզ երևում է «Դուք ընդհանուր առմամբ գո՞հ եք տնային պարտականությունների բաշխումից»: հարցին տրված պատասխաններում. Ստորև ներկայացված է այդ հարցն իր ենթահարցերով.

Աղյուսակ 2. Տնային պարտականությունների բաշխումը

ՏՊ պարտականությունների բախշմանը վերաբերող հարցին պատասխանած կին և տղամարդ հարցվածների տոկոսը

(Տղամարդիկ N=694,կանայք N=738)

Ընդհանուր առմամբ ի՞նչ կարծիքի եք պարտականությունների բաշխման մասին:				
Ընդհանուր առմամբ ինչքանո՞վ եք գոհ պարտականությունների նման բաշխումից:	Չափազանց դժգոհ	Դժգոհ	Գոհ	Չափազանց գոհ
Տ	2.0%	6.1%	36.9%	31.1%
Կ	5.1%	13.6%	47.6%	25.1%
Ըստ Ձեզ ընդհանուր առմամբ Ձեր զուգընկերն ինչքանո՞վ է գոհ պարտականությունների նման բաշխումից:	Չափազանց դժգոհ	Դժգոհ	Գոհ	Չափազանց գոհ
Տ	2.0%	5.9%	41.6%	25.5%
Կ	1.8%	9.6%	45.1%	31.8%

Տղամարդկանց 67.2%-ը և կանանց 73.6%-ը գոհ են տնային պարտականությունների բաշխումից, իսկ տղամարդկանց 72.6% և կանանց 76.9%-ը գտնում են, որ նույնքան գոհ է նաև զուգընկերը (**Աղյուսակ 2. Տնային պարտականությունների բաշխումը**): Եթե համեմատենք այս պատասխանները կանանց ընտանեկան հարաբերություններում տղամարդկանց բավարարվածության տվյալների հետ (**Աղյուսակ 1. Փոխհարաբերություններ**), ապա կարող ենք եզրակացնել, որ տնային պարտականությունների բաշխումն ավելի նշանակալի է կանանց, քան տղամարդկանց համար: Միևնույն ժամանակ, այս գործոնն ավելի մեծարժեք է երկու զուգընկերների համար և ազդում է հարաբերություններում նրանց բավարարվածության վրա: Նաև կարևոր է նշել, որ տնային պարտականությունների բաշխման վերլուծությունն ընդհանուր առմամբ իրականացվել է տղամարդու և կնոջ՝ ընտանիքում ունեցած դերերի ավանդական ընկալման շրջանակներում, որը ենթադրում է տնային որոշ գործերին և երեխաների խնամքի հարցերում տղամարդկանց մասնակցության բացառում: Այսպիսով, հարցվածների 13.5%-ը իրենց վրդովմունքն են հայտնել տնային պարտականությունների նմանօրինակ

բաշխման վերաբերյալ, նրանց թվում կանայք՝տղամարդկանցից երկու անգամ ավելի են:

Տղամարդկանց 44%-ը իրենց զուգընկերոջ ներդրումն ավելի բարձր են գնահատում,քան սեփականը (22.7%): Հետաքրքրական է, որ կանայք տղամարդկանց ներդրումն ավելի բարձր են գնահատում, քան իրենք՝ տղամարդիկ (37%): Սակայն, ինչ վերաբերում է կանանց ներդրմանը, զուգընկերներն այստեղ համակարծիք են, և տղամարդիկ կանանց ներդրումը գնահատում են մոտավորապես նույն ձևով(44%), ինչ իրենք՝ կանայք (45%), որը ընտանեկան հարաբերություններից գոհունակություն հայտնելու հիմք է տալիս:

Տնային պարտականությունների համատեղ բախշման տոկոսը, որը բնութագրում է էգալիտար հարաբերությունները, շատ ցածր է ՝ 0-4% գործունեության երկու տեսակների՝ գնումների և կոմունալ ծառայությունների վարձավճարների բացառմամբ: Այսինքն՝ տնային պարտականությունների բախշման տեսանկյունից ընտանեկան հարաբերությունների փոխակերպումները, որոնք կհամապատասխանեին երկու զուգընկերների պահանջներին էլ և կբարձրացնեին ընտանեկան հարաբերություններից բավարարվածության մակարդակը, չափազանց աննշան են կամ ընդհանրապես չկան:

Այս եզրակացությունները հաստատվում են հետազոտությամբ, որը ցույց է տալիս[86], որ տնային տնտեսուհիներն ամենաշատն են գոհ իրենց ամուսնությունից՝ էգալիտար հարաբերությունների պարագայում, և ամենաքիչը՝ ավանդական ընտանիքներում: Ավանդական հարաբերություններով ընտանիքներում կանայք ևս ավելի դժգոհ են տնային տնտեսուհու կարգավիճակից, քան էգալիտար ընտանիքների կանայք:

Այսպիսով, ըստ էության, չնայած այն փաստին, որ կանանց տնից դուրս վճարովի աշխատանքը ստիպողական անհրաժեշտությունից դառնում է մասսայաբար հանրորեն քաջալերվող երևույթ, ավանդական ներընտանեկան հարաբերությունները շատ ավելի դանդաղ են փոխվում: Ենթադրվում էր, որ եթե կինը հանձն առներ իր ընտանիքի ֆինանսական ապահովման գործառույթների մի մասը, տղամարդը

[86] Տ.Վ.Անդրեյեվա, Ա.Վ. Կոնոնովա, *Դերերի բաշխումը երիտասարդ ընտանիքում:* Անանեվսկի ընթերցումներ-2002. *Հոգեբանություն և քաղաքականություն.* Գիտաժողովի թեզիսներ. Սանկտ Պետերբուրգի համալսարան 2002

կիրացներ տնային գործառույթների մի մասը, այսինքն՝ տղամարդու և կնոջ պարտականությունները սերտորեն կապված չէին լինի սեռի հետ, այլ կկիսվեին զույգի միջև և, հետևաբար, այս բաղադրիչը չէր կենտրոնանան ընտանեկան հարաբերություններից բավարարվածության վրա: Սակայն, իրականությունն այնպիսին է, որ դեպքերի մեծ մասում աշխատանքից զատ կանայք պետք է հանձն առնեն բոլոր տնային պարտականությունների: Այսպես կոչված «կրկնակի ծանրաբեռնվածության» իրադրություն է ստեղծվել և դրա հետևանքով դժգոհությունն ընտանեկան հարաբերություններից գնալով աճում է: Տղամարդկանց դեպքում դա ուղեկցվում է ինքնագնահատականի անկումով և դառը փորձից առաջացած դժգոհությամբ ամուսնական կյանքից՝ ընտանիքում կնոջ ղեկավար դերակատարման աճի և տղամարդու հաց վաստակողի կարգավիճակի կորստի հետևանքով, ինչը պարտադրվում է գենդերային կարծրատիպերի միջոցով:

Զույգերի կողմից կիրառվող հաղթահարման ռազմավարությունները հանդիսանում են ևս մի գործոն, որն իր նպաստն է բերում ընտանեկան հարաբերություններից բավարարվածությանը: Հետազոտությունը ցույց է տալիս, որ խնդիրների կառուցողական և բանակցային ճանապարհով լուծման դրական մոտեցումները բարձրացնում են ամուսնությունից սուբյեկտիվ բավարարավածության մակարդակը, մինչդեռ առճակատումը, խուսափումն ու սեփական շահերի պաշտպանությունը, կոնֆլիկտները, ամենաթողությունն ու միտումնավոր անուշադրությունը հանգեցնում են գոհունակության անկման: Սույն հետազոտության շրջանակներում այս փոխհարաբերությունը հանդես է գալիս ընտանեկան խնդիրների համատեղ քննարկման պարագայում:

Աղյուսակ 3. Փոխհարաբերություններ

Իրենց փոխհարաբերությունների մասին հարցին պատասխանած տղամարդ և կին հարցվածների տոկոսը

(Տղամարդիկ N=694, կանայք N=738)

Երբ եք վերջին անգամ դուք և Ձեր զուգընկերը խոսել Ձեր կյանքում առկա խնդիրներից:	Տ	Կ
Այս շաբաթվա ընթացքում	61.7%	69.0%
Մեկից երկու շաբաթ առաջ	5.5%	7.2%
2 –ից 4 շաբաթ առաջ	3.5%	2.6%

Ավելի քան 4 շաբաթ առաջ, բայց 6 շաբաթից ավելի վաղ	3.2%	1.5%
Ավելի վաղ կամ երբեք	11.8%	12.3%

Տղամարդկանց յոթանասունհինգ և կանանց 83%-ը նշում են, որ խնդիրները համատեղ են քննարկում: Դրանից տղամարդկանց 61.7%-ը և կանանց 69% -ը վերջին անգամ դա արել են մեկ շաբաթ առաջ, իսկ մնացածն ավելի երկար ժամանկահատված են նշում՝ երկուսից վեց շաբաթ: Այս տվյալները փոխկապակցված են ընտանեկան հարաբերություններում բավարարվածության մակարդակի հետ և մատնացույց են անում այն փաստը, որ համատեղ որոշումների ընդունման գործոնը շատ ավելի կարևոր է կանանց, քան տղամարդկանց համար:

Միևնույն ժամանակ տղամարդկանց 11.8%-ը և կանանց 12.3%-ը նշում են, որ նրանք իրականում ընտանեկան խնդիրները համատեղ չեն քննարկում: Սա վկայում է ընտանիքում կանանց ենթակա կարգավիճակի մասին: Հարկ է նշել, որ նույնիսկ այն տղամարդիկ, ովքեր ցանկանում են հարցերը իրենց զուգընկերոջ հետ միասին քննարկել, այն կարծրատիպային մտածողության կրողն են, որ իրենց խոսքն ավելի ծանրակշիռ է (83.8%):

Այսպիսով, խոսքը գնում է այն դեպքերի մասին, որոնք քննվում են բազմաթիվ ժամանակակից ուսունասիրություններում, երբ առնականության և կանացիության հասկացությունները դիտարկվում են որպես գենդերային հարաբերություններում կախվածության և բռնության առաջացման նախապայմաններ:

Որոշ հետազոտողներ[87] առանձնացնում են առնականության հասկացության երկու ծայրահեղ դրսևորումներ՝ հեգեմոնիկ և բնական առնականություն: Հեգեմոնիկ առնականությունը կենսաձև է, որը ղեկավարման, ուժի և առաջնության տղամարդկային դիրքորոշման հետ համաձայն է վարվում: Բնական առնականությունը մի կենսաձև է, որը հիմնվում է հեգեմոնիկ առնականության պարտադրած բոլոր սահմանափակումների վերացման վրա (ներառում է էմոցիոնալ լինելու իրավունքը, տղամարդու՝ վստահության պակաս և ապագայի մասին մտահոգություն ունենալու իրավունքի ճանաչումը, և ընտանիքի ու երեխաների

[87] Լ. Ա. Պետրենկո, *Առնականության և կանացիության հասկացությունները՝ որպես գենդերային հարաբերություններում կախվածության և բռնության ներմուծման կանխորոշիչներ:*. Երիտասարդ գիտնական, 2015, #2, pp. 435-438

հանդեպ այլ վերաբերմունք ունենալու հնարավորությունը): Գտնում են, որ եթե բնական առնականությամբ տղամարդը հանդիպում է նորմատիվ կանացիությամբ կնոջ, նա կարող է վերջինիս հետ հարմոնիկ հարաբերություններ զարգացնել, որոնց բնորոշ կլինեն կոնֆլիկտների ցածր մակարդակը և կախվածության ու բռնության կիրառման ցածր հավանականությունը գենդերային հարաբերություններում (քանի որ զուգընկերներն այս դեպքում չեն մրցում իրար հետ, այլ լրացնում են իրար և նրանց միությունը հիմնված է համագործակցության, այլ ոչ թե պայքարի վրա): Ինչ վերաբերում է հեգեմոնիկ առնականությամբ տղամարդկանց տեսակին, նրանք մեծամասամբ հակված են կնոջը կախյալ վիճակի մեջ դնելուն և հարաբերություններում ագրեսիայի դրսևորմանը՝ ընդհուպ մինձև բռնություն:

Սույն ուսումնասիրությունը բացահայտում է հեգեմոնիկ տեսակի առնականության բավականին բարձր տոկոս, որը ենթադրում է կնոջ վարքագծի վերահսկողություն՝ սկսած նրան թելադրելուց, թե ինչ կրի, ընդհուպ մինչև զուգընկերոջ գտնվելու վայրի մշտական ստուգում: Ավելին՝ տղամարդկանց 18.1%-ը իրենց են վերապահում արտամուսնական կապերի իրավունքը:

Աղյուսակ 4. Վերահսկողական վարք

Իրենց ներկայիս կամ վերջին կնոջ կամ զուգընկերոջ վերահսկողական վարքի վերաբերյալ հարցին պատասխանած հարցվածների տոկոսը. Տղամարդիկ. N=689

Վերահսկողական վարք	Կողմ	Խիստ կողմ
Ես թույլ չեմ տա զուգնկերուհուս որոշ տեսակի հագուստ կրել	23.0	33.8
Մեզ վերաբերող կարևոր որոշումներում իմ ասելիքն ավելի շատ է, քան նրանը	24.2	59.6
Ես եմ ասում ընկերուհուս, թե նա ում հետ շփվի	19.2	29.2
Երբ ընկերուհիս իրեն սազացող հագուստ է կրում, ես ենթադրում եմ, որ նա ուզում է դուր գալ ուրիշ տղամարդկանց	4.2	4.1
Ես ուզում են մշտապես տեղեկացված լինել իմ զուգնկերուհու գտնվելու վայրի մասին	18.1	67.0
Սիրում եմ նրան զգացնել տալ, որ միակը չէ, ով կարող է հայտնվել իմ կողքին	7.1	11.0

Ստացված տվյալները գործնականորեն չեն առնչվում բնակավայրին՝ լինի դա քաղաք, թե գյուղական բնակավայր: Կախվածությունը տարիքի և կրթամակարդակի հետ է համադրվում: Ինչքան բարձր է կրթամակարդակը, այնքան քիչ է զուգընկերոջը

վերահսկելու ցանկությունը և հետևաբար ավելի մեծ է վստահության չափաբաժինն ընտանեկան հարաբերություններում:

Տարիքի գործոնը նաև դրական ազդեցություն է ունենում հարաբերությունների բնույթի վրա և այն հատկապես տեսանելի է զուգընկերոջ վարքի վերահսկանը վերաբերող հարցերում: Տարիքի հետ ոչ միայն նկատվում է զուգընկերոջ հանդեպ ավելի մեծ վստահություն, այլև զուգընկերոջ կարծիքի հանդեպ ավելի մեծ հարգանք: Սակայն, պետք է հաշվի առնել ևս մի գործոն. Տարիքի մեծացմանը զուգընթաց՝ ոչ հարմոնիկ ընտանիքները բաժանվում են և ընտրանքում մեծանում է հարմոնիկ ընտանիքների թիվը: Կարևորություն են ներկայացնում նաև տարիքով մարդկանց հոգեբանական առանձնահատկությունները՝ օր. սոցիալական կոմֆորտը, իրար հետ ապրած տարիների բեռը, միասին անցած դժվարությունները, երեխաների և թոռների առկայությունը, բարձր տարիքում բաժանվելու հնարավորության բացառումը: Բացի այդ, բարձր տարիքում միայնության վախը ստիպում է զուգընկերոջ հանդեպ լինել ավելի ուշադիր, հանդուրժող և հոգատար, որը բացատրում է ավելի մտերիմ հարաբերությունները և խնդիրներին նախկինի համեմատ ավելի էֆետկիվ լուծումներ տալու ունակությունը: Այս ամենն օգնում է տարեց մարդկանց իրենց ամուսնությունը հաջողված համարել, որն ակնհայտ է դառնում ընտանեկան հարաբերություններում բավարարվածությանը վերաբերող հարցի պատասխաններում 50-ից բարձր տարիքային խմբում: Այս տարիքային խմբի հարցվածների 81.6%-ը դրական են գնահատում իրենց զուգընկերների հետ ունեցած հարաբերությունները:

Աղյուսակ 5. Փոխհարաբերություններ

Փոխհարաբերություններին վերաբերող հարցին պատասխանած հարցվածների տոկոսն ըստ կենսագրական բնութագրիչների. **N=1617**

	Վատ	Բավականին վատ	Ոչ այնքան լավ	Բավականին լավ	Շատ լավ
Տարիքը					
18-24	2.1%	1.0%	11.9%	30.9%	42.3%
25-34	2.6%	0.0%	6.4%	31.9%	54.5%
35-49	1.2%	0.8%	9.9%	36.8%	48.8%
50-59	2.3%	1.0%	12.5%	43.4%	38.2%
Կրթությունը					

Հիմնական	0.0%	0.0%	0.0%	100.0%	0.0%
Միջնակարգ	1.9%	0.6%	11.0%	33.3%	49.0%
Միջին մասնագիտական	2.1%	0.9%	12.1%	40.2%	42.0%
Բարձրագույն	1.7%	0.5%	6.0%	36.7%	49.3%
Բնակության վայրը					
Երևան	1.8%	0.6%	10.6%	33.5%	46.7%
Այլ քաղաքային	1.7%	0.7%	11.4%	35.9%	46.6%
Գյուղական	2.3%	0.6%	7.5%	38.3%	48.6%

Հետազոտությունը ցույց է տալիս, որ ամուսնական կյանքի տևողությունից կախված ամուսնությունից սուբյեկտիվ բավարարվածության հնարավոր պատճառ են հանդիսանում ամուսնության ավելի ուշ փուլերում ամուսինների հոգեբանական առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են տարիքով, երեխաների դաստիարակության գործառույթն իրականացնելուց հետո ծնողների ինքնարտահայտման ոլորտների ընդլայնումով, ինչը դրսևորվում է ընտանեկան կյանքից դուրս կարիերայի ստեղծումով, մասնագիտական, սոցիալական գործունեության և տարբեր նախասիրությունների միջոցով, որոնց համար զույգը նախկինում ժամանակ չի ունեցել: Ինչ վերաբերում է ամուսնական բավարարվածության վրա չափահաս երեխաների ազդեցությանը՝ «դատարկ բների համախտանիշին», որն արտահայտվում է բացասական էմոցիոնալ օրինաչափությամբ՝ «կյանքի կորցրած իմաստով», ապա այն առկա է այն դեպքերում, երբ երեխաներին մեծացնելու գործառույթի իրացումից հետո ստեղծվում է ունայն կյանքի տպավորություն (ծնողները չեն աշխատում, չկան իմաստալի հետաքրքրություններ, կրթամակարդակը ցածր է), երբ ամուսինները նախկինում օտարացել են իրարից և չունեն ընդհանուր «շփման եզրեր» և հետաքրքրություններ, և մեծահասակ երեխաների և ծնողների միջև հարաբերությունները հեռակա են և կոնֆլիկտներով լեցուն: Հայտնի է նաև, որ երբ մայրերը տատիկների դերում են հանդես գալիս իրենց երեխաների ընտանիքներում, նրանց ամուսնական սուբյեկտիվ բավարարվածությունը նշանակալիորեն աճում է:

Մենք պետք է նաև նշենք, որ ըստ անցկացված հետազոտության ընտանեկան հարաբերություններում բավարարվածության աստիճանը հատկապես բարձր է 25-34

տարիքային խմբում: Սա կարելի է բացատրել ընտանիքում երեխաների ծնունդով, որն ամուսնական կյանքում բավարարվածությունն ապահովող կարևոր գործոն է: Ընտանեկան կյանքի շրջափուլերի և կայնքի սուբյեկտիվ բավարարվածության միջև կապ կա. Նվազագույն բավարարվածությունն ամուսնությունից նկատվում է փոքրահասակ երեխաներով ընտանիքներում, իսկ առավելագույնը՝ մինչ երեխաների ծնունդը: Սուբյեկտիվ բավարարվածությունն ամուսնական կյանքում նվազում է ընտանիքի կենսափուլերի անցումային փուլերում և փոքրահասակ երեխաներով ընտանիքներում:

Այլ չափորոշիչները, ինչպիսիք են կրթամակարդակը և բնակության վայրը, մեծ ազդեցություն չեն ունեցել ամուսնությունից բավարարվածության վրա:

ԳԼՈՒԽ 6. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1970 ականներին հետազոտողները սկսեցին խոսել այն մասին, որ մարդու առողջությունը, հիվանդացությունը և մահացությունը կախված են ոչ միայն կենսաբանական, այլև սոցիալական գործոններից: Մինչ այդ տղամարդկանց հիվանդությունների առանձնահատկությունները և կանանց ու տղամարդկանց կյանքի տևողության տարբերությունը դիտարկվել են սոսկ սեռերի կեսաբանական առանձնահատկությունների պրիզմայով՝ անտեսելով յուրահատկությունների սոցիալական հիմքերը: Ֆեմինիստական և գենդերային ուսումնասիրությունները[88] դարձել են տղամարդկանց հիվանդությունների առանձին գործոնների ուսումնասիրումից տղամարդկանց առողջության՝որպես լուրջ սոցիալական հիմնախնդրի համակարգված վերլուծության անցնելու նախապայման:

Արական կարծրատիպերի և տղամարդկանց առողջության փոխկապակցվածությունն ապացուցող ուսումնասիրությունների լարվածակետը/մեծ մասը/ կատարվել է 2000 ականներին[89]: Առանց տղամարդկանց բարձր բարոյականության կենսաբանական գործոնների ժխտման՝ ժամանակակից գիտությունը կարևոր տեսական և գործնական կարևորություն է տալիս սոցիալական գործոններին՝ տղամարդու դերին և առնականությանը: Իրենց ավանդական դերում բարձր ստանդարտ ապահովելու տղամարդկանց ձգտումը բացասական հետևանքների է հանգեցնում, որոնք դրսևորվում են առողջական խնդիրներով[90]: Բանը նրանում է, որ տղամարդկանց սեռային դերատիպարը ենթադրում՝ ռիսկերի հանդեպ բարձր հակվածություն (ներառյալ անկարևոր դեպքերը), էմոցիաների զսպում, հազվադեպ դիմում բուժօգնությանը, տղամարդկանց մոտ դեստրուկտիվ վարքագծի դրսևորման բարձր ռիսկ (թմրամիջոցների օգտագործում, ալկոհոլիզմ) և

---

[88] Դոնալդ Ֆ. Սաբո,Դավիդ Ֆրեդերիկ Գորդոն, Տղամարդկանց հետազոտությունների ասոցիացիա /ԱՄՆ/, Տղամարդկանց առողջությունը և հիվանդությունները. Սեռը, ուժը և մարմինը ,1995

[89] Տղամարդկանց առողջության հետ կապված խնդիրները քննվում են մի շարք միջազգային պրոֆեսիոնալ շրջանակներում և մի շարք հայտնի գիտական կայքէջերում (օրինակ, www.menshealthnetwork.org).: Այս խնդիրները միջգիտակարգային գիտական ամսագրերում լուսաբանվում են տարբեր դիտանկյուններից, օրինակ՝ «Տղամարդկանց հետազոտությունների պարբերական» (հրատարավում է սկսած 1992); «Տղամարդիկ առնականության հայեցակերպերը» (հրատարավում է սկսած 1999); «Տղամարդու և առնականության հոգեբանություն» (հրատարավում է սկսած 2000), «Տղամարդու առողջության միջազգային ամսագիրհ» (հրատարավում է սկսած 2002), « Տղամարդու առողջության ամերիկյան պարբերական» (հրատարավում է սկսած 2007), «Ծերացող տղամարդը» (հրատարավում է սկսած 1998), «Դեռահասի առողջության պարբերական» և այլն

[90] Օ Նեյլ Ջ.Մ., Գուդ Գ.Ի., Հուլմս Ս. (1995). Տասնհինգամյա տեսություն և հետազոտություն տղամարդու գենդերային դերի շուրջ կոնֆլիկտի վերաբերյալ. Փորձագիտական հետազոտությունների նոր հարացույցներ Ին, Ռ. Լեվանտ և Վ.Պոլլակ (խմբ.), Տղամարդյկանց նոր հոգեբանության հիմունքներ, Նյու Յորք, Բեյսիք բուքս

հիմնականում (կանանց հետ համեմատած) ֆիզիկական առողջության համար վտանգ ներկայացնող գործողությունների իրացում, էքստրեմալ սպորտ և այլն.[91]

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տղամարդիկ՝ ի տարբերություն կանանց, հազվադեպ են գիտակցում հիվանդանալու, վնասվածքներ ստանալու և առողջական տարաբնույթ խնդիրների ռիսկի տակ գտնվելը: Չնայած այս փաստին, որ տղամարդիկ թմրամոլության կամ ալկոհոլիզմի ավելի բարձր ռիսկի տակ են, բոլոր տարիքի տղամարդիկ զգալիորեն թերագնահատում են ծխելու հետ կապված ռիսկերը և ալկոհոլի կամ թմրեցնող նյութերի գործածման վտանգները: Չորս տղամարդկանցից մոտ երեքը պնդում են, որ նրանք չեն անհանգստանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով կամ սեռական ճանապարհով փոխանցվող այլ հիվանդություններով վարակվելուց, նույիսկ եթե իրենց սեռական կյանքը նրանց բարձր ռիսկի է ենթարկում[92]:

Ժամանակակից հետազոտողները տղամարդկանց հիվանդացության սոցիալական գործոններից մեկն են համարում ավանդական տղամարդկային գաղափարախոսությունը, որը վերագրվում է տղամարդկանց և նրանց պարտադրում վարքի որոշակի ստանդարտ, այդ թվում՝ բժիշկներին չդիմելը, իր թուլությունները չընդունելը, ինքանբացահայտումից խուսափելը և այլն[93]: «Ճիշտ» տղամարդկային վարքի ստանդարտին համապատասխան՝ տղամարդիկ «իսկական տղամարդուց» սպասում են ուժի և ղեկավարելու ունակությունների ցուցադրում, էմոցիոնալ զսպվածության, հաջողության մրցավազք և շատ այլ բաներ: Սակայն, իրական կյանքի հանգամանքները և ժամանակակից տղամարդկանց պաշարները (անհատական, ֆիզիկական, էմոցիոնալ, նյութական պաշարներ և այլն) հաճախ դժվարացնում են նկարագրված նորմատիվ սպասումներին հասնելու հնարավորությունը, որը բացասաբար է անդրադառնում տղամարդկանց առողջության վրա՝ առաջ բերելով առողջական խնդիրներ: Հեգեմոնիկ առնականությունը՝ որպես սոցիալ-մշակութային նորմատիվ կանոն, որոնց ձգտում են հասնել բոլոր տղամարդիկ, տղամարդկանց առողջությանը սպառնացող ամենամեծ ռիսկն է: Այս տերմինը ներմուծվել է

[91] Ադդիս և Քոհեյն, 2005; Մասֆիելդ և ուրիշներ.2005, Բուրմիկինա2006, Կորխովա 2000

[92] *Կորտենեյ Վ. Հ.*. Տղաների և տղամարդկանց բարեկեցության հիմնական կանխորոշիչները / Վ. Հ.Կորտենեյ. // Տամարդկանց առողջության միջազգային պարբերական. — 2003. — Հատ.. 2, № 1. . — էջեր. 1–30.

[93] Իգոր Կոն, *Հեգեմոնիկ առնականությունը՝ որպես տղամարդկանց վատառողջության գործոն*, http://www.pseudology.org/kon/Articles/GegemonMasculin.htm

ավստրալացի սոցիալական գիտնական Ռավեն Քոննելի կողմից[94]՝ նկարագրելու առնականության այն տեսակը, որը գլխավորում է տղամարդկային համայնքի մշակութային ստորակարգությունը և որը սատարում են տղամարդկանց ժնշող մեծամասնությունը: Այն բնութագրվում է կանանց և ենթակա տղամարդկանց հանդեպ տղամարդկանց գերիշխանության հաստատմամբ, ֆիզիկական ուժի պաշտամունքով, բռնության հանդեպ միտվածությամբ, էմոցիոնալ զսպված և լարված մրցակցությամբ: Սակայն այս կանոնին հետևելը կարող է ավելի բարձր օրինակ, առողջական, ռիսկերի պատճառ դառնալ: Խիզախ և կայացած մարդու կերպարը հաճախ կապված է հիվանդության կամ ցավի ախտանշանների ժխտման հետ, որոնք կարող են հանգեցնել, օրինակ, հիվանդության ախտորոշմանը միայն ավելի ուշ փուլերում[95]:

«Իսկական տղամարդու» մտատիպարը կառուցված է ոչ թե մեկի առողջության մասին հոգածության, այլ ինչ-որ հատկանիշի վրա, որը համարվում է երկաթի պես ամուր և բնածին: Արդյունքում տղամարդիկ սովորաբար.

a) Գերագնահատում են իրենց առողջական վիճակը,

b) Ամաչում են իրենց սեփական թուլությունը ընդունելուց,

c) Ի վիճակի չեն և չեն սիրում օգնություն խնդրել[96]:

Բոլոր այս եզրակացությունները գիտականորեն ապացուցված փաստեր են և հաստատվում են փորձարարական տվյալներով:

Գիտական գրականության մեջ տվյալ խնդի հետ կապված ամենաշատ հղումներն են կատարվում այն Փոլ Գալասին, ով տղամարդկանց առողջությանը վերաբերող հետազոտություն է անցկացրել: Հիմնվելով բժշկական տվյալների լայն բազայի վրա՝ նա բացահայտել և ցույց է տվել տղամարդկանց և կանանց միջև առկա զգալի տարբերություններ բժշկակն օգնության դիմելիս: Դա պարզապես մեկի առողջական վիճակի կամ բժշկին կատարած այցերի պարբերականության ևս մի գնահատում չէ, այլև բողոքների բնույթին, ախտանիշների նկարագրման ձևի և նրանց ինքնազգացողության, տղամարդու չափազանց ահանգստացած չերևալու և բազում այլ

[94] Քոննելլ Ռ. Սեռը և ուժը. Հասարկությունը, անհատը և սեռական քաղաքականությունը. Քեմբրիջ:Փոլիթի, 1987

[95] Ի.Ս.Կոն, *Հեգեմոնիկ առնականությունը՝ որպես տղամարդկանց վատառողջության գործոն*, http://www.pseudology.org/kon/Articles/GegemonMasculin.htm

[96] ibid.

մանրամասներին է վերաբերում: Հետազոտության շրջանակներում ներկայացված տվյալներն իրական պատկերն են բացահայտում. Տղամարդկանց ամբողջ 91.3%-ը իր առողջական վիճակը գնահատում են նորմալից գերազանց և ընդամենը 8.6% են այն որակում իբրև վատ կամ շատ վատ, նույնիսկ հաշվի առնելով այն փաստը, որ տղամարդ հարցվածների 53.70%-ը վերջին տարվա ընթացքում առողջապահական ծառայությունների են դիմել կլինիկայում կամ հիվանդանոցում և 6% -ից ավելին ունեն խրոնիկական հիվանդություն կամ սեռական առողջության հետ կապված խնդիրներ:

Աղյուսակ 1. Առողջություն

Իրենց առողջության մասին պատասխաններ տված կանանց և տղամարդկանց տոկոսը.

Տղամարդիկ N=767, կանայք N=850

Ընդհանուր առմամբ ինչպե՞ս կգնահատեիք Ձեր առողջական վիճակը	Շատ վատ	Վատ	Բավարար	Լավ	Գերազանց
Տ	1.4%	7.2%	45.9%	30.0%	15.4%
Կ	1.9%	8.9%	53.4%	29.3%	6.5%

Աղյուսակ 2. Առողջապահական ծառայությունների օգտագործում

Առողջապահական ծառայությունների օգտվելու մասին պատասխաններ տված կանանց և տղամարդկանց տոկոսը

Վերջին անգամ ե՞րբ եք դիմել առողջապահական ծառայություններին կլինիկայում կամ հիվանդանոցում	Երբեք	Ավելի քան 5 տարի առաջ	2 –ից 5 տարի առաջ	Վերջին տարվա ընթացքում	Վերջին 3 ամիսներին	Վերջին ամսվա ընթացքում
Տ	13.7%	11.5%	20.2%	26.2%	9.9%	17.6%
Կ	4.5%	8.6%	16.5%	31.9%	15.8%	22.5%

Ո՞րն է եղել վերջին անգամ առողջապահական ծառայություններին դիմելու հիմնական պատճառը	Ընդհանուր բուժզննում կամ բժշկական գրքույկ	Վնասվածք կամ դժբախտ պատահար	Սուր հիվանդություն (օրինակ, տենդ)	Խրոնիկական հիվանդություն (օրինակ, շաքարային դիաբետ,բարձր ճնշում)	Սեռական առողջության խնդիրներ	Ստոմատոլոգիական խնդիրներ	Ծննդաբերություն
Տ	45.2%	11.6%	11.9%	5.1%	1.2%	13.4%	0.2%
Կ	38.9%	3.7%	10.1%	7.0%	8.3%	10.2%	11.2%

Ինքնագնահատման հետազոտությունը ցույց է տվել, որ տղամարդիկ ավելի գոհ են իրենց առողջական վիճակից, քան կանայք: Միևնույն ժամանակ հարցերին տրված պատասխանները կարող էին կապված լինել գենդերային տեսակետների և կարծրատիպերի հետ,ըստ որի բողոքելը տղամարդկանց սազական չէ. Նրանք պետք է ուժեղ և անկոտրում լինեն: Նման վերաբերմունքը շատ խնդիրներ է առաջացնում. Տղամարդիկ հազվադեպ են դիմում ախտորոշման՝ այսպիսով բաց թողնելով վաղ փուլում հիվանդության բուժումը սկսելու հնարավորությունը, հազվադեպ են խոստովանում դեպրեսիայի մասին և չեն խոսում սթրեսային կյանքի մասին[97]:
Ըստ հետազոտողների, «իսկական տղամարդու» ընկալումը հասարակության կողմից հանգեցնում է մի իրադրության, երբ տղամարդիկ բուժօգնության դիմելը համարում են սեփական թուլության ընդունում[98].

Հետազոտողները պարզաբանում են առողջությանը վերաբերող առնականության հետևյալ կարծրատիպերը.

- Տղամարդը պետք է հանդես գա իբրև հաց վաստակող և կարիերային աճ ապահովի, այնպես որ առողջութայն մասին հոգալու ժամանակ չունենա.
- Տղամարդիկ ավելի հեշտ են ընկնում դեպրեսիայի մեջ, երբ գործազուրկ են մնում.
- Տղամարդիկ ավելի շատ են վախենում իրենց աշխատանքից և աշխատավարձից զրկվելուց, ինչի պատճառով աշխատանքի են գնում՝ նույնիսկ եթե հիվանդ են.
- Տղամարդիկ մասնագիտական օգնության են դիմում, երբ նրանք ավելի լուրջ առողջական խնդիրներ ունեն, քան կանայք[99]

Ըստ հետազոտողների, գենդերային դերերի հետ կապված կոնֆլիկտները բացասաբար են ազդում ինքնահարգանքի, մտերիմ հարաբերությունների և ամուսնությունից բավարարվածության վրա և դրական դաշտ են ստեղծում անհանգստության առաջացման համար: Տղամարդիկ սթրեսի են ենթարկվում ոչ միայն այն ժամանակ, երբ նրանք իրենց անընդունակ են համարում իրենց

[97] Փոլ Մ. Գալադաս, Ֆրանսին Չիթեր, Փոլ Մարշալ (2005). Տղամարդիկ և առողջապահական վարքը. Գրական ակնարկ
[98] Տ. Վ. Ռոզաչաեվա *Առողջության նկատմամբ տղամարդկանց և կանանց վերաբերմուքի կարծրատիպերը ժամանակակից Ռուսաստանում* http://www.medpsy.com/mprj/archiv_global/2010_4_5/nomer/nomer14.php
[99] Ի.Բ. Նազարովա, Աշխատող ազգաբնակչության առողջությունը, Մոսկվա, 2007

«տղամարդկային դերակատարման» պահանջները բավարարելու (օրինակ, հաջող կարիերայի ստեղծման և ընտանիքի ապահովման համար), սակայն նաև այն դեպքում, երբ իրադրությունը ստիպում է, որ նրանք «ոչ տղամարդավայել» վարք դրսևորեն (օրինակ, մնան տանը և բժշկական պրոցեդուրաներ անեն).[100]: Ավելին՝ որոշ ուսումնասիրություններ[101] շեշտում են այն փաստը, որ տղամարդիկ նախընտրում են «սոցիալական աջակցություն» ստանալ (այն է՝ քաջալերանք, համաձայնություն, իրենց կարծիքների և գործողությունների խրախուսանք) կանանց, այլ ոչ թե տղամարդկանց կողմից. Սա նվազեցնում է նրանց կենդանի մնալու շանսերը սրտի անբավարարության /ինֆարկտի/, քաղցկեղի և ուղեղի արյան սնուցման /ինսուլտի/ դեպքերում: Ավելի բարձր *սոցիալական աջակցություն* ստացող տղամարդիկ հաճախ ավելի լավ են հոգ տանում իրենց առողջության մասին, ավելի հեշտ են հարմարվում առողջ ապրելակերպին և ավելի են հակված բուժում ստանալուն [102]: Նույնը նկատվում է նաև սիրտ-անոթային համակարգի պաթոլոգիաներով տղամարդկանց մոտ, ովքեր առնականության ավանդական կամ կարծրատիպային տեսակետների կողմնակից են, լավ չեն հետևել բժշկի խորհուրդներին և ավելի հազվադեպ են վարել առողջ ապրելակերպ կլինիկայում ստացիոնար բուժումից հետո, քան թե իրենց՝ առնականության մասին ոչ այդքան արմատական կարծիքներ ունեցող իրենց հասակակիցները.[103]:

Այսպիսով, տղամարդիկ և արական սեռի դեռահասները, ովքեր ավանդական և կարծրատիպային պատկերացումներ ունեն առնականության վերաբերյալ, ավելի մեծ առողջական ռիսկի են ենթակա, քան ոչ այդքան արմատական կարծիքներ ունեցող իրենց հասակակիցները: Նման ավանդական հայացքներն ուղղակիորեն կապված են վնասակար սովորույթների հետ (այդ թվում՝ ծխելը, ալկոհոլի չարաշահումը և թմրանյութերի օգտագործումը), ինչպես նաև հակադարձաբան փոխկապակցված են

---

[100]Ի.Ս.Կոն, *Հեգեմոնիկ առնականությունը՝ որպես տղամարդկանց վատառողջության գործոն*, http://www.pseudology.org/kon/Articles/GegemonMasculin.htm

[101] Մեյեր Ռ.Ի.., *Մյուրեյ Ռ.Ֆ.* Ալկոհոլի առաջացրաց խնդիրների կանխումը և բուժումը. – Վաշինգտոն, 1989.

[102] Քորտենեյ, *Վ. Հ. Տղամարդկանց հիվանդությունների, վիասվածքների և մահվան հետ առնչվող վարքագծի գործոնները. Ապացույցներ և միջամտության հնարավորություններ* /Վ. Հ. Քորթենեյ //Տղամարդկանց հետազոտությունների պարբերական — 2000 Հատ. 9, № 1 ;

Քորտենեյ, *Վ. Հ.. Սեռը և էթնիկ տարբերությունները առողջական հավատալիքներում և վարքում* / Քորտենեյ, *Վ. Հ.*, Դ. Ռ. ԿաքՔրիերի, Ջ. Ռ. Մերիղի //Առողջական հոգեբանության պարբերական — 2002. — Հատ. 7, № 3

[103] Ամերիկյան հոգեբույժների ասոցիացիա. Հոգեկան հիվանդությունների ախտորոշիչ և վիճակագրական ձեռնարկ (4րդ հրատ.). — 2000. — Վաշինգտոն, Գոմեզ, 2007.

ապահով վարքագծի, դիետային հետևելու, քնի և հանգստի ռեժիմի և սեռական վարքի հետ: Այն տղամարդիկ, ովքեր առնականության ավանդական տեսակետների են հարում, ավելի հազվադեպ են ունենում այլ մարդկանց կարիքը և ավելի հազվադեպ են օգտվում առողջապահական ծառայություններից[104], քան այլ տղամարդիկ:

Կան շատ հետաքրքիր տվյալներ ալկոհոլիզմի և տղամարդու ավանդական գենդերային դերի միջև փոխառնչակցության միջև: Ինչպես պարզվում է, տղամարդկանց ընկերակցությամբ խմելը հեշտացնում է տղամարդկանց աջակցության ապահովումը այլ տղամարդկանց՝ վերացնելով ավանդաբար կանացի վարքագծին բնորոշ պահվածքով հանդես գալու սահմափակումները (բողոքներ կյանից, թույլ կողմերի խոստովանություն, գրկախառնումներ, արցունքներ), մի բան, որն անհրաժեշտ է բոլոր մարդկանց՝ անկախ սեռից, մի բան, որ տղամարդիկ չեն կարող իրենց թույլ տալ անել ավանդական հասարակությունում [105]: Ստացված տվյալները գալիս են սա ապացուցելու, քանի որ տղամարդ հարցվածների 42.7%-ը հայտնել է պարբերաբար ալկոհոլ օգտագործելու մասին (սկսած ամեն օրվանից մինչև ամիսը 1-3 անգամ)՝ ի հակադրություն կանանց, ովքեր ամիսը մեկ անգամից էլ քիչ են ալկոհոլ օգտագործում կամ երբեք (92.4%).

Աղյուսակ 3. **Ալկոհոլի օգտագործում**

Ալկոհոլի օգտագործման մասին պատասխաններ տված կանանց ու տղամարդկանց տոկոսը. Տղամարդիկ N=767, կանայք N=850

Որքա՞ն հաճախ եք խմում ալկոհոլային խմիչք:	Ամեն օր կամ գրեթե ամեն օր	Շաբաթը մեկ կամ երկու անգամ	Ամիսը 1–3 անգամ	Ամիսը մեկ անգամից քիչ	Երբեք
Տ	3.9%	13.6%	25.2%	43.0%	14.3%
Կ	0.2%	0.8%	6.6%	43.8%	48.6%

Այն փաստը, որ այս դրսևորումները հեգեմոնիկ առնականության հետևանք են, ակնհայտ է դառնում տղամարդու առողջության երկարամյա ուսումնասիրությունների արդյունքում, որոնք գնահատվում են ոչ միայն հիվանդության պատմության տվյալներով, այլև հիվանդների բավականին մանրամասն հոգեբանական բնութագրերով՝ նրանց «կանացիությունն» ու «առնականությունը» ներառյալ: Այլ կերպ ասած՝ ավելի կարծրատիպային առնական հայացքներով տղամարդիկ («Ես

[104] Ibid.

[105] ՄեյերՌ,Ի., Մյուրեյ Ռ.Ֆ. Ալկոհոլի առաջացրած խնդիրների կանխում և բուժում. – Վաշինգտոն, 1989.

ուժեղ եմ», և այլն) ինֆարկտից մեռնելու ավելի մեծ ռիսկի են ենթակա, քան համեմատաբար «փափուկ» տղամարդիկ[106].

Ավանդական տղամարդկային հայացքները նաև կապվում էին սթրեսային իրավիճակներում սիրտ-անոթային հակազդումների ռիսկի բարձրացման հետ, ինչպես նաև անհանգստության ավելի բարձր մակարդակի, դեպրեսիայի և հոգեբանական սթրեսի, նաև մահվան ավելի մեծ ռիսկի հետ: Բացի այդ, պարզվել է, որ տղամարդկային հասունությանը վերաբերող ավանդական հայացքները այն գործոններից են, որոնք տանում են ռիսկային վարքի զարգացմանը, ինչպես, օրինակ, միանգամից 5 –ից ավելի տեսակի խմիչքի օգտագործում:Սույն հետազոտության ընտրանքի տղամարդ մասնակիցների հիսուն տոկոսը խոստովանել են, որ երբեմն և հաճախ միանգամից 5 –ից ավելի տեսակի խմիչք են օգտագործել, և երբեք խմելուց հետո մեղքի զգացում չեն ունեցել (69.1%): Սույն ուսումնասիրության շրջանակներում հավաքած տվյալները ցույց են տվել, որ այս ռիսկային վարքը բարեբախտաբար չի հանգեցրել այլ մարդկանց կամ զուգընկերների նկատմամբ բռնության կիրառման:

Աղյուսակ 4. Ալկոհոլի օգտագործում

Ալկոհոլի օգտագործման հետևանքների մասին պատասխաններ տված տղամարդկանց տոկոսը.
Տղամարդիկ N=767

	Երբեք	Հազվադեպ	Երբեմն	Հաճախ
Որքա՞ն հաճախ եք միանգամից 5 կամ ավելի տեսակի խմիչք օգտագործում	8.3%	40.7%	32.1%	18.7%
Որքա՞ն հաճախ եք խմելու պատճառով տապալում Ձեզ վստահված գործը	75.8%	12.2%	7.6%	4.0%
Որքա՞ն հաճախ եք խղճի խայթ զգում կամ մեղավոր զգում խմելուց հետո	69.1%	13.1%	9.8%	8.0%

Աղյուսակ 5. Ալկոհոլի օգտագործում

Ալկոհոլի օգտագործման հետևանքների մասին պատասխանած տղամարդկանց տոկոսը. Տղամարդիկ N=767

	Ոչ	Այո
Ձեզ կամ որևէ մեկին վնասվածք հասցրե՞լ եք Ձեր խմածության պատճառով	91.7%	8.3%
Խմած լինելու պատճառով երբևէ բռնություն գործադրե՞լ եք	95.7%	4.3%

[106] Հանթ Կ., Լեվարս Հ., Էմիսլի Ք, Բեթթի Գ.Դ. Տղամարդկանց շրջանում ինֆարկտից մահանալու ռիսկի նվազումը՝ որպես կանանց հետ հարաբերությունների հետևանք. Ընդհանուր ազգաբնակչության խմբերի ուսումնասիրություն //Էպիդեմիոլոգիայի միջազգային պարբերական, 2007; հատ. 36, էջեր.612-20

Տղամարդկանց առողջության վրա հեգեմոնիկ առնականության և ավանդական առնականության գաղափարախոսության ներազդման մեխանիզմների ուսումնասիրումը ցույց է տալիս, որ սոցիալական և անձնական չափազանց մեծ ակնկալիքները («Տղամարդը պետք է միշտ և ամենուր լինի առաջինը և ղեկավարը») և ուժի կիրառմամբ կոնֆլիկտները հարթելու միտվածությունը («Իսկական տղամարդը միշտ պետք է իշխի») խթանում են կոնֆլիկտներն ու ագրեսիան, ինչը հաճախ չի համապատասխանում անհատական հոգեբանական-բնախոսական առանձնահատկություններին և իսկական տղամարդու ունակություններին և բացասաբար է ազդում տղամարդկանց և կանանց հարաբերությունների վրա[107]:

Այն զգացումը, որ նա չի արդարացնում իր հետ կապված հույսերն ու ակնկալիքները, տղամարդկանց մոտ հաճախ զարկ են տալիս «ձախողված առնականության» ախտանիշին և կարող են հանգեցնել դեպրեսիվ տրամադրության սրմանը, սոցիալական ապատիային/ անտարբերությանը/, ինքնասպանության հակվածությանը, «ձեռք բերված անօգնականության» ռազմավարության զարգացմանը (դժվարությունների հաղթահարման ակտիվ պայքարից նահանջելուն և մյուսներին աշխատեցնելու նպատակով անօգնական ձևանալուն), և այլն: Այնուամենայնիվ, այս մոտեցումը ,թվում է, դրական գործոն է շատ տղամարդկանց համար, քանի որ ազգային վիճակագրությունը լայն տարածվածություն ունեցող հիվանդություններից և չարորակ ուռուցքներից մահացածության դեպքերի աճ էր գրանցել տղամարդ բնակչության շրջանում 2010-2014 ժամանակահատվածում [108]:

Միևնույն ժամանակ որոշ հետազոտողներ մատնանշում են, որ որոշ «տղամարդկային» հատկանիշներ զգալիորեն նպաստում են տղամարդկանց (և նույնիսկ կանանց) ադապտացիային: Այդ հատկանիշները ներառում են անկախ գործելաոճը, վճռականությունն ու ինքնավստահությունը: Պարզվել է նաև, որ նման հատկանիշները օգնում են տղամարդկանց հաղթահարել հիվանդությունները[109] և ունենալ լավ ինքնազգացողություն:

---

[107]Ի.Ս.Կոն, *Հեգեմոնիկ առնականությունը՝ որպես տղամարդկանց վատառողջության գործոն.* http://www.pseudology.org/kon/Articles/GegemonMasculin.htm

[108] Կանայք և տղամարդիկ Հայաստանում, վիճակագրական բուկլետ, ՀՀ, ԱՎԾ 2015 էջեր 30-39

[109] Կ.Մ.Սեմուտենկո, Ի. Ա. Չեշիկ, Տ.Մ. Շարշակովա, Տղամարդկանց առողջության գլխավոր կանխորոշիչները. Գոմելի պետական բժշկական համալսարան, http://cyberleninka.ru/article/n/klyuchevye-determinanty-muzhskogo-zdorovya-soobschenie-i

Անդրադառնալով տղամարդ հարցվածներից ստացված պատասխաններին, որոնք վերաբերում են իրենց անցած շաբաթվա նրանց ինքնազգացողությանը՝ կտեսնենք, որ հարցվածների ընդամենը 6.4% են շաբաթվա ընթացքում դեպրեսիվ տրամադրություն ունեցել, իսկ ավելի քան 50%-ը եղել են լավ և ապագայի հույսով լեցուն և երջանիկ, 36%-ը վայելել են կյանքը և 79.9%-ը երբեք չեն հիվանդացել:

Աղյուսակ 6. Ինքնազգացողություն. Տղամարդիկ
N=767

	Հազվադեպ կամ երբեք	Որոշ կամ քիչ ժամանկով (1-2 օր անցած շաբաթվա ընթացքում)	Սահմանափակ ժամանակով (3-4 օր անցած շաբաթվա ընթացքում)	Միշտ կամ մեծամասամբ (5-7 օր անցած շաբաթվա ընթացքում)
Անհանգստացած էի սովորաբար ինձ անհանգստություն չպատճառող բաներից	74.7%	13.7%	6.3%	5.1%
Չէի ուզում ուտել, ախորժակ չունեի	71.3%	16.2%	8.7%	3.5%
Զգում էի, որ չեմ կարող տրամադրությունս բարձրացնել անգամ ընտանիքի և ընկերների օգնությամբ	84.1%	9.9%	4.0%	1.7%
Ինձ մյուսներին նման էի զգում	44.1%	9.0%	17.7%	26.2%
Դժվարանում էի գործիս վրա կենտրոնանալ	65.1%	17.7%	9.0%	7.8%
Դեպրեսիայի մեջ էի	72.4%	12.6%	8.3%	6.4%
Այն ամենն, ինչ անում էի, ջանք էր պահանջում	76.4%	12.8%	5.0%	5.1%
Հուսաշատ էի ապագայի հանդեպ	21.0%	7.8%	19.0%	51.4%
Մտածում էի, որ կյանքս ձախողվել է	88.8%	5.9%	2.5%	2.6%
Վախենում էի	87.6%	7.3%	3.1%	1.7%
Քունս անհանգիստ էր	65.4%	11.5%	10.2%	12.5%
Երջանիկ էի	14.0%	11.1%	22.3%	50.3%
Սովորականից քիչ էի խոսում	63.6%	15.3%	10.6%	9.4%
Միայնակ էի զգում	84.5%	7.2%	4.2%	3.9%
Մարդիկ թշնամաբար էին տրամադրված իմ հանդեպ	90.1%	4.8%	2.6%	2.2%
Վայելում էի կյանքը	25.6%	14.1%	22.3%	36.1%
Լացելու նոպաներ ունեի	94.8%	2.6%	1.4%	0.8%
Սրտխառնոց ունեի	79.9%	7.7%	6.5%	5.6%
Ես զգում էի, որ մարդկանց դուր չեն գալիս	92.4%	4.8%	1.0%	1.3%

Ես չէի կարող «սկսել»	88.7%	6.6%	1.8%	2.6%

Մինչ օրս քիչ ուսումնասիրություններ են իրականացվել չաթելու դեպրեսիայի տարածվածությունը Հայաստանի ողջ բնակչության շրջանում: Հայաստանում մի քանի կենցաղային առողջության վերաբերյալ հետազոտություններ[110] կիրառել են Համաժողովրդական ուսումնասիրությունների կենտրոնի դեպրեսիայի սանդղակը (CES-D), որը թարգմանվել և համապատասխանեցվել է հայկական մշակույթին, և կիրառելով ավանդական 16 միավորային արժեքի շեմը՝ ուսումնասիրվել է դեպրեսիվ ախտանիշների տարածվածությունը 18 և բարձր տարիքի բնակչության շրջանում. կին բնակչության շրջանում գրանցվել են բարձր ցուցանիշներ, որոնք տատանվում են 80.7%-ից 53.0%, մինչդեռ տղամարդկանց ցուցանիշը կազմել է 44.9%[111]. Ներկայումս Հայաստանում արձանագրվել է(առաջին անգամ ախտորոշված) հոգեկան հիվանդություններից մահացության աճ՝ բնակչության 100,000 շնչի հաշվով, որը 2009 թվականին գրանցված 82.9-ից 2013-ին դարձել է 89.3 [112]:

Քննելով առողջական խնդիրների հանդեպ վերաբերմունքի գենդերային առանձնահատկությունները՝ կարևոր է շեշտել, որ վերջին տարիներին Հայաստանի կառավարությունը թիրախային միջոցներ է ձեռնարկել առողջապահական ծառայությունների հասանելիության բարելավման և տղամարդկանց ու կանանց բժշկական օգնություն ստանալու հավասար իրավունքի ապահովման նպատակով , որը երաշխավորվում է *ՀՀ բուժօգնության և բնակչության սպասարկման մասին օրենքով*, որն ընդունվել է 1996-ին: Առողջապահության զարգացման առաջնահերթության քաղաքականությունն ամրագրված է *ՀՀ ազգաբնակչությանը տրամադրվող բուժօգնության որակի բարելավման և կառավարման հայեցակարգում* (2002) և *Առողջ ապրելակերպի խթանման ռազմավարական ծրագրում*, որն իրականացվում էր ՀՀ կառավարության կողմից 2014 թվականին:

[110] Դեմիրճյան և ուրիշներ, 2008; Դեմիրճյան և Թոնսոն, 2004ա,բ, 2008

[111] Դեմիրճյան Անահիտ, Ծովինար,Հարությունյան, Պետրոսյան Վարդուհի ՏՄ. Ընտանեկան առողջության հետազոտություն: Երևան,Հայստան; 2006

[112] Ազգային վիճակագրական ծառայություն. Հայաստանի վիճակագրական տարեգիրք. Երևան, Հայաստան; 2014:31

ԳԼՈՒԽ 7. ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

Սեռական ակտիվությունը

Սեռականությունը մի ոլորտ է, որը սերտորեն առնչվում է առնականությանը և աչալրջորեն հսկվում է *հայրիշխանական* և *կեղծ հայրիշխանական* հասարակություններում:

Հետազոտության մի շարք հարցեր առնչվում էին սեռական փորձառության և դրա հետ կապված խնդիրների հետ, օր. Հակաբեղմնավորման և հղիության ընդհատման և այդ ամենի նկատմամբ վերաբերմունքի հետ: Անհրաժեշտ է նշել, որ քանի որ դրանք բավականին զգայուն խնդիրներ են, տղամարդ հարցվածների մոտ 50%-ը չեն պատասխանել հարցերին չնայած որ բոլոր այդ խնդիրները ներկայացվել են ինքնուրույն հարցաշարում՝ ապահովելով գաղտնիության բարձր մակարդակ:

Ճիշտ կլինի սկզբում պարզել, թե ամենավերջին սեռական հարաբերության ժամանակ ով է եղել հարցվածի զուգընկերը:

Աղյուսակ 1. Վերջին սեռական հարաբերությունը

Հարցված կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր հետևյալ պատասխաններն են տվել այն հարցին (ինքնուրույն հարցաշարերում ընդգրկված), թե ում հետ են վերջին անգամ սեռական հարաբերություն ունեցել

	Տղամարդիկ N = 356	Կանայք N = 526
Ամուսին/ հիմնական զուգընկեր	69.4%	94.9%
Այլ զուգընկեր	19.1%	0.6%
Մեկը, ում հետ մի անգամ եմ եղել	4.5%	-
Ընկեր	-	0.8%
Նախկին զուգընկեր	3.1%	0.6%
Մարմնավաճառ կամ մարդ, ում վճարել եմ սեքսի համար	3.4%	-
Երբեք չեմ ունեցել սեռական հարաբերություն	-	2.8%
Չկա պատասխան	0.5%	0.3%

Տղամարդկանց և կանանց միջև կա ահռելի, թեև ոչ անակնկալ տարբերություն: Միայն կին հարցվածների 2% է սեռական հարաբերություն ունեցել նախկին

զուգընկերոջ, այլ զուգընկերոջ կամ ընկերոջ հետ, մինչդեռ 94.9%-ը՝ ամուսնու կամ ընթացիկ զուգընկերոջ հետ:

Մյուս կողմից, տղամարդ հարցվածների գրեթե մեկ երրորդը շեշտում են իրենց սեքսուալ վարպետությունը՝ խոստովանելով, որ սեռական հարաբերություններ են ունեցել իրենց կինը կամ ներկայիս զուգընկերը չհանդիսացող կնոջ հետ: Գրեթե ամեն հինգերորդ տղամարդ հարցվածը նշել էր, որ մեկ ուրիշ զուգընկերոջ հետ սեռական հարաբերություն է ունեցել, իսկ 3.4%-ը վճարել են կնոջը դրա դիմաց:

Այս միտումն իր վերահաստատումն է գտնում վերջին 12 ամիսներին զուգընկերների քանակի մասին հարցին հարցվածների տված պատասխաններում (ստորև տե՛ս **Աղյուսակ 2):** Թեպետև տղամարդ հարցվածների զգալի մասնաբաժինը (30.8%) սեքսով չեն զբաղվել վերջին 12 ամիսներին, իսկ ավելի բարձր տոկոս են կազմում միայն մեկ զուգընկեր ունեցողները (40.9%), տղամարդ հարցվածների մեկ քառորդն ունեին 2 կամ ավելի զուգընկերներ: Ելնելով ներկայիս հայ իրականությունից և զույգերի իրար հետ հանդիպելու նորմերից, փոխհարաբերություններից և սեռական վարքագծից՝ տղամարդու համար հազվադեպ երևույթ կիներ նույնիսկ երկու, ինտիմ հարաբերություններ ունենալը վերջին 12 ամիսների ընթացքում: Հետևաբար պարզ է, որ շատ դեպքերում այն հարցվածները, ովքեր ունեին 2 կամ ավելի զուգընկերներ, երկարատև հարաբերությունների մեջ չէին: Փաստորեն տղամարդ հարցվածների 19.6-ը մեկ գիշեր էին անցկացրել մեկ կնոջ հետ, իսկ 16.6%-ը՝ 2 կամ ավելի կանանց հետ:

Աղյուսակ 2. Վերջին 12 ամիսներին ունեցած զուգընկերների թիվը

Տղամարդ և կին հարցվածների տոկոսը, ովքեր որոշակի քանակով զուգընկերներ են ունեցել վերջին 12 ամիսների ընթացքում (ինքնուրույն հարցաշարերում). Ում հետ վերջին անգամ սեռական հարաբերություն են ունեցել

ՏՂԱՄԱՐԴԻԿ N = 396		ԿԱՆԱՅՔ N = 394	
Զուգընկերների թիվը	Հարցվածների տոկոսը	Զուգընկերների թիվը	Հարցվածների տոկոսը
0	30.8%	0	25.9%
1	40.9%	1	70.1%
2	7.6%	2	0.8%
3	4.3%	-	-
4	4.5%	-	-
5	2.8%	-	-

6 կամ ավելի	5.6%	6 կամ ավելի	0.3%
Չկա պատասխան	3.5%	Չկա պատասխան	3.1%
Ընդամենը	**100.0%**		**100.0%**

Ի հակադրություն, կին հարցվածների ճնշող մեծամասնությունը կամ այդ շրջանում ընդհանրապես զուգընկեր չէին ունեցել (25.9%) կամ ունեին միայն մեկ զուգընկեր (70.1%, ներառյալ 24.6%, ովքեր միայն մեկ անգամ էին սեռական հարաբերություն ունեցել իրենց զուգընկերոջ հետ): 1%-ից պակաս թվով կանայք ուներին 2 զուգընկերներ և չնչին տոկոս էին կազմում ավելի շատ զուգընկերներ ունեցող կանայք:

Չնայած տարբեր կանանց հետ սեռական հարաբերություններ ունենալուն՝ երկարատև հարաբերությունների և հատկապես ամուսնության առումով հարցված տղամարդիկ «միակնասեր» են (ստորև տե՛ս **Աղյուսակ 3**), քանի որ նրանց երեք չորրորդը ունեցել են միայն մեկ կին կամ համատեղ կյանք են վարել/վարում միայն մեկ կնոջ հետ: Համեմատաբար փոքր է այն տղամարդ հարցվածների տոկոսը (16.2%), ովքեր մեկ կին են ունեցել կամ համատեղ ապրել/ապրում են մեկի հետ:

Հարկ է նշել, որ մեկ զուգընկեր ունեցող տղամարդկանց տոկոսը նույնիսկ մի փոքր բարձր է, քան այն կանանց, ովքեր ներկայիս հարաբերություններից առաջ զուգընկեր են ունեցել կամ տղամարդու հետ համատեղ կյանք վարել (19.1%):

Աղյուսակ 3. Հարցվածների՝ երբևէ ունեցած ամուսինների/բնակակիցների թիվը

Տղամարդ և կին հարցվածների տոկոսը, ովքեր ունեցել են որոշակի թվով ամուսինների/բնակակիցներ (բացի ներկայիս հարաբերություններից) (ըստ ինքնուրույն հարցաշարի հարցին տրված պատասխանների)

ՏՂԱՄԱՐԴԻԿ N = 389		**ԿԱՆԱՅՔ N = 376**	
Ամուսինների/ բնակակիցների թիվը	Հարցվածների տոկոսը	Զույգերի/ բնակակիցների թիվը	Հարցվածների տոկոսը
0	76.6%	0	73.7%
1	16.2%	1	19.1%
2 և ավելի	1.9%	2	1.1%
Չկա պատասխան	5.3%	Չկա պատասխան	6.1%
Ընդամենը	**100.0%**		**100.0%**

Երկարատև ինտիմ հարաբերությունների (ներառյալ ամուսնությունը)կարևոր ասպետկներից է սեռական հարաբերություններից բավարարվածությունը և դրանց հաճախականությունը: Ստորև տրված Աղյուսակ **4** ներկայացնում է հարցվածների կարծիքներն իրենց սեռական հարաբերություններից և դրանց հաճախանակությունից (դժ)գոհ լինելու մասին:

Աղյուսակ 4. Սեռական հարաբերություններից բավարարվածությունը և դրանց հաճախականությունը

Տղամարդ և կին հարցվածների տոկոսը, ովքեր արտահայտել են սեռական հարաբերություններից և դրանց հաճախականությունից բավարարվածության կամ անբավարարվածության տարբեր մակարդակներ **(ըստ ինքնուրույն հարցաշարի երկու հարցերին տրված պատասխանների/**

Բավարարվածության մակարդակը	ՏՂԱՄԱՐԴԻԿ N = 374		ԿԱՆԱՅՔ N = 460	
	Հիմնական զուգընկերոջ հետ սեռական հարաբերություններ	Հիմնական զուգընկերոջ հետ սեռական հարաբերությունների հաճախականությունը	Հիմնական զուգընկերոջ հետ սեռական հարաբերություններ	Հիմնական զուգընկերոջ հետ սեռական հարաբերությունների հաճախականությունը
	Հարցվածների տոկոսը	Հարցվածների տոկոսը	Հարցվածների տոկոսը	Հարցվածների տոկոսը
Չափազանց բավարարող	42.6%	32.7%	37.6%	31.1%
Բավարարող	44.2%	53.8%	51.6%	58.2%
Փոքր-ինչ բավարարող	7.7%	7.8%	6.3%	6.1%
Փոքր-ինչ անբավարար	1.6%	2.2%	1.9%	1.8%
Չափազանց անբավարար	2.9%	2.7%	1.9%	2.4%
Չկա պատասխան	1.0%	0.8%	0.7%	0.4%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%

Հետազոտության տվյալները միանշանակորեն ցույց են տալիս, որ տղամարդ հարցվածների ճնշող մեծամասնությունը իրենց կնոջ կամ հիմնական զուգընկերոջ հետ սեռական հարաբերությունների «որակը» և «հաճախականությունը» (շատ) գոհացուցիչ են համարում (համապատասխանաբար 86.8% և 86.5%) կամ քիչ թե շատ գոհացուցիչ (համապատասխանաբար 7.7% և 7.8%: Իրենց կնոջ կամ հիմնական զուգընկերոջ հետ սեռական հարաբերությունների «որակից» և «հաճախականությունից» դժգոհ են հարցվածների 5%-ը:

Համեմատաբար բարձր է այն կին հարցվածների տոկոսը, ովքեր գոհ են իրենց ամուսնու կամ հիմնական զուգընկերոջ հետ սեռական հարաբերությունների «որակից» և «հաճախականությունից», թեպետև դժգոհ անձանց մասնաբաժինը 2.5%-ից ցածր է:

Կարող է թվալ, որ ամուսինների կամ զուգընկերների սեռական հարաբերությունների այս ներդաշնակությունը չի խախտվում անգամ իրենց տղամարդկանց հետ հարաբերություն ունենալու կանանց մերժման դեպքում: Ինչպես երևում է ստորև տրված **Աղյուսակ 5** տվյալներից՝ կին հարցվածների մեկ երրորդից մի փոքր ավելին երբեք չեն հրաժարվել իրենց տղամարդ զուգընկերոջ հետ սեքսից, մինչդեռ կին հարցվածների մեկ չորրորդը հրաժարվել են մեկից ավելի անգամ , իսկ մյուս մեկ չորրորդը հաճախակի են հրաժարվել դրանից: Տղամարդ զուգընկերների տված պատասխանները շատ հետաքրքիր պատկեր են ստեղծում:

Աղյուսակ 5. Տղամարդ զուգընկերոջ հետ հարաբերության մերժումը և դրա հետևանքները

Կին հարցվածների տոկոսը, ովքեր համաձայնվել կան մերժել են տղամարդ զուգընկերոջ հետ հարաբերությունը և ովքեր հաղորդել են վերջինիս հակազդման մասին (ըստ ինքնուրույն հարցաշարի 2 հարցերին տրված պատասխանների)

ԿԱՆԱՅՔ N = 499		**ԿԱՆԱՅՔ N = 309**	
Երբևէ մերժե՞լ եք տղամարդ զուգընկերոջ հետ հարաբերություն ունենալը		**Տղամարդ զուգընկերոջ պատասխանը կնոջ՝ իր հետ հարաբերություն ունենալու մերժմանը**	
	Հարցվածների տոկոսը		Հարցվածների տոկոսը
Երբեք	36.3%	Ընդունել է կնոջ ցանկությունը	95.1%
Մի անգամ	11.4%	Բղավել է վրան	3.2%
Մեկից ավելի անգամ	24.6%	Ծեծել է	0.0%
Հաճախ	26.9%	Զրկել է նյութական աջակցությունից	0.0%
Չկա պատասխան	0.8%	Չկա պատասխան	1.7%
Ընդամենը	**100.0%**	**Ընդամենը**	**100.0%**

Սկզբում նշենք, որ կին հարցվածների 95.1%-ը, ովքեր հրաժարվել էին իրենց զուգընկերոջ հետ սեռական հարաբերություն ունենալ, հաղորդում են, որ վերջիններս ընդունել էին կնոջ ցանկությունը: Մերժում ստանալուց հետո տղամարդ զուգընկերների /դժ/ գոհ լինելու մասին ոչինչ չի նշվում: Անկախ դրանից՝ տղամարդ

զուգընկերների հանդուրժողականության աստիճանը, ըստ կանանց, անհավատալիորեն բարձր է: Ոչ մի տղամարդ զուգընկեր ձեռք իր բարձրացրել կնոջ վրա և չի զրկել նյութական բարիքներից՝ իբրև պատիժ սեքսից հրաժարվելու համար: Ամենաբարկացած հակազդումը բղավոցն է եղել և կին հարցվածների ընդամենը 3.2% է նշել այս մասին:

Թեև տվյալները ստացվել են ինքնուրույն լրացվող հարցաշարերից, որոնք կին հարցվածներն պատրաստակամորեն լրացրել են՝ ունենալով գաղտնիության պահպանման երաշխավորություն, արդյունքները պատասխանների անկեղծության հետ կապված կասկածի տեղիք են տալիս: Տվյալները չեն համապատասխանում բռնությանը վերաբերող հետազոտության արդյունքներին, որտեղ իրենց ինտիմ զուգընկերոջ հանդեպ բռնության տարբեր ձևերի (այդ թվում՝ սեռական, ֆիզիկական և հոգեբանական) գործադրման մասին հաղորդող տղամարդկանց տոկոսը և ինտիմ զուգընկերոջ կողմից բռնության ենթարկվելու մասին հաղորդող կանանց տոկոսը անհամեմատելիորեն բարձր է, քան այս դեպքում: Իրականում կարելի է վստահաբար պնդել, որ մերժում ստացած տղամարդ զուգընկերների կողմից բռնի և ոչ բռնի հակազդումները հնարավոր չէ գնահատել կամ նույնիսկ կոպիտ հաշվարկ կատարել ոչ միայն իրողությունը մասամբ թաքցնելու, այլև ընդհանրապես ոչինչ չասելու պատճառով:

Տղամարդ հարցվածների 3.4%-ը ընդունել են, որ նրանք օգտվել են այս ոլորտում «աշխատողների» վճարովի ծառայություններից (կամ՝ վճարել են կանանց՝ նրանց հետ սեքսով զբաղվելու համար): Կին հարցվածների 0.0% է ասել, որ նրանք օգտվել են նմանօրինակ ծառայություններից: Սակայն նրանց 6.6%-ը ընդունել են, որ նրանք ունեցել են գործարքային սեքս (ստորև տե՛ս **Աղյուսակ 6**):

Աղյուսակ 6. Գործարքային սեքսի տարածվածությունը

Կին հարցվածների տոկոսը, ովքեր ընդունել են գործարքային սեքսով զբավելու փաստը (ըստ ինքնուրույն հարցաշարի 3 հարցերին տրված պատասխանների)

ԿԱՆԱՅՔ **N = 458**	
Կին հարցվածների տոկոսը, ովքեր գործարքային սեքսով են զբավել տղամարդ զուգընկերոջ հետ հետևյալ պատճառով.	Հարցվածների տոկոսը
Տղամարդ զուգընկերն իրեն ապահովել է սննդով, հագուստով, բջջային հեռախոսով կամ փոխադրամիջոցով	5.8%

Տղամարդ զուգընկերը կնոջ երեխաներին կամ ընտանիքին է աջակցել	6.2%
Տղամարդ զուգընկերը կնոջը փող է տվել՝ վարձավճարները մուծելու համար	6.1%
Տղամարդ զուգընկերոջ հետ վերոհիշյալ պատճառներից առնվազն մեկի դրդմամբ գործարքային սեքսով զբաղված կին հարցվածների տոկոսը	6.6%

Տվյալները նաև ցույց են տալիս, որ կանանց ճնշող մեծամասնությունը, ովքեր գործարքային սեքս են ունեցել, դա արել են մեկից ավելի պատճառներով և դեպքերի մեծ մասում բոլոր 3 նշված պատճառներով:

Հակաբեղմնավորում և ապահով սեռական հարաբերություն

Առնականությանն ու կանացիությանը առնչվող սեռական և վերարտադրողական առողջության հիմնական խնդիրներից է հակաբեղմնավորումը: Ավելի կոնկրետ՝ հարցը կայանում է նրանում, թե այն կիրառվում է թե ոչ և ով է որոշում օգտագործել հակաբեղմնավորիչ, թե ոչ:

Աղյուսակ 7. Վերջին 12 ամիսների ընթացքում պահպանակի օգտագործումը

Տղամարդ և կին հարցվածների տոկոսը, ովքեր պահպանակ են օգտագործել /չեն օգտագործել վերջին 12 ամիսների ընթացքում (ըստ ինքնուրույն հարցաշարի 2 հարցերին տրված պատասխանների)

	ՏՂԱՄԱՐԴԻԿ N = 363	ԿԱՆԱՅՔ N = 494
	Հարցվածների տոկոսը	Հարցվածների տոկոսը
Ընդհանրապես պահպանակ չեմ օգտագործում	49.3%	74.9%
Միշտ պահպանակ եմ օգտագործում	24.2%	3.6%
Հիմնականում օգտագործում եմ	7.2%	3.8%
Երբեմն օգտագործում եմ	18.7%	17.4%
Չկա պատասխան	0.6%	0.2%
ԸՆԴԱՄԵՆԸ	100.0%	100.0%

Ինչպես երևում է **Աղյուսակ 7** տվյալներից, տղամարդ հարցվածների կեսն ընդհանրապես պահպանակ չեն օգտագործում, մինչդեռ նրանց միայն քառորդն է օգտագործում պահպանակներ, իսկ մյուս քառորդը հիմնականում կամ պարբերաբար

են դրանցից օգտվում: Հարկ է նշել, որ համեմատաբար ուժեղ կապ կա տղամարդ հարցվածների տարիքային խմբի և նրանց կողմից պահպանակների օգտագործման միջև[113], քանի որ պահպանակներից օգտվող երիտասարդ հարցվածների մասնաբաժինը ավելի մեծ է, քան ավելի տարեց հարցվածներինը: Սա հատկապես վերաբերում է ամենաերիտասարդ տարիքային խմբին, որտեղ մշտապես պահպանակ օգտագործողները կազմում են 54.2% (մյուս տարիքային խմբերում տոկոսները բաշխված են համապատասխանաբար 20.8%, 7.7% և 12.2%): Անհրաժեշտ է նաև նշել, որ հարցվածների կրթամակարդակը կապ չունի պահպանակների օգտագործման հետ: Նշանակալի կապ կա բնակության վայրի և պահպանակների օգտագործման միջև՝ հատկապես կանանց պարագայում[114], սակայն այդ կապը թույլ է այն դեպքում, երբ միշտ պահպանակներից օգտվողների ամենաբարձր և դրանցից երբեք չօգտվողների ամենացածր տոկոսը երևանաբնակներն են կազմում:

Պահպանակների օգտագործման ոչ մշտական և ոչ հետևողական օգտագործումը կարող է լուրջ սպառնալիք հանդիսանալ իրենց ինտիմ զուգընկերների և իրենց սեփական սեռական և վերարատադրողական առողջության համար: Այն հարցին, թե արդյոք վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործել են, տղամարդկանց 63.9%-ը բացասական պատասխան են տվել,իսկ 35.4%-ը՝ դրական (0.7%-ը չի պատասխանել): Այսպիսով սա մտահոգիչ թեմա է ոչ միայն հակաբեղմնավորման, այլև չպաշտպանված, և, հետևաբար, ոչ ապահով սեքսի առումով, հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ տղամարդ հարցվածների մոտ 30%-ը, ովքեր պատասխանել են այն հարցին, թե ով է եղել իրենց զուգընկերը ամենավերջին սեռական հարաբերության ժամանակ, նշել է, որ դա եղել է մեկ այլ զուգընկեր, այդ թվում՝ պատահական սեռական զուգընկեր և մարմանավաճառ:

Սեռական և վերարտադրողական առողջության վիճակի ստուգման ձևերից մեկը **ՄԻԱՎ-ի վերաբերյալ ստուգումն է**: Այս հարցին պատասխանած 396 տղամարդ հարցվածներից վերջին վեց ամիսների ընթացքում ընդամենը 13.4% են ստուգվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ, իսկ 5.3%-ը՝ վերջին 12 ամիսների ընթացքում: 7.6% ստուգվել են

[113] Կապի անվանական արժեքն է p<0.1.
[114] Կապի անվանական արժեքն է p<0.1.

2-5 տարի առաջ, իսկ ևս 1.8%-ը՝ ավելի քան 5 տարի առաջ: 71.2%-ը երբևէ չեն ստուգվել (0.8%-ը չեն պատասխանել):

Խիստ կարևոր է, թե հարաբերություններում հակաբեղմնավորիչների օգտագործման հարցում *որոշումների կայացման* մենաշնորհն ում է պատկանում (տե՛ս **Աղյուսակ 8**): Անհրաժեշտ է նշել, որ անակնկալ կերպով պարզվեց, որ հարաբերությունների ժամանակ հակաբեղմնավորիչների օգտագործման որոշումը հարցվածների երկու երրորդը համատեղ են կայացնում: Նույնիսկ տղամարդ հարցվածների 61.7%-ն է նշել, որ որոշումը համատեղ է կայացվում: Երբ դա որոշում է զուգընկերներից մեկը, ապա և՛ կանանց, և՛ տղամարդկանց դեպքում ավելի բարձր է «ինքնուրույն» ընտրության տոկոսը, քան «զուգընկերոջ կողմից» ընտրության տոկոսը, իսկ ավելի բարձր տոկոս են կազմում միանձնաբար որոշում կայացնող տղամարդիկ, քան կանայք:

Աղյուսակ 8. Հակաբեղմնավորիչների օգտագործման մասին որոշումը

Կին և տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր ընտրել են տարբեր պատասխաններ հակաբեղմնավորման օգտագործման որոշումների կայացման վերաբերյալ հարցերին

Որոշումը կայացվել է	ՏՂԱՄԱՐԴԻԿ N = 407	ԿԱՆԱՅՔ N = 448	ԵՎ ՏՂԱՄԱՐԴԻԿ, ԵՎ ԿԱՆԱՅՔ N = 855
	Հարցվածների տոկոսը	Հարցվածների տոկոսը	Հարցվածների տոկոսը
Իր կողմից	19.2%	12.9%	15.9%
Զուգընկերոջ կողմից	3.2%	7.4%	5.4%
Համատեղ	61.7%	69.0%	65.5%
Մեկ ուրիշի կողմից	0.0%	0.7%	0.4%
Չկա պատասխան	15.9%	10.0%	12.8%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%

Հղիության ընդհատումը

Հղիության ընդհատումը սեռական և վերարտադրողական առողջության ևս մի խնդիր է, որը սերտորեն կապված է առնականության և կանացիության տարածված «նորմերի» հետ: Եթե հղիության ընդհատումը բուժական նպատակներ չի հետապնդում, ապա սա նշանակում է, որ հղիությունն անցանկալի է կամ անցանկալի է դարձել և որ առաջին պլան են մղվել սոցիալական պատճառները՝ ներառյալ հակաբեղմնավորման մասին անիրազեկ լինելը և դրա հնարավորությունը չունենալը:

Կարևոր է պարզել երբևէ հղիությունն ընդհատած կանանց տոկոսը, նրանց տարիքը առաջին հղիության ընդհատման ժամանակ, թե ով է եղել հղիության ընդհատման որոշում կայացնողը և թե արդյոք տղամարդ զուգընկերը մասնակցել է որոշում կայացնելիս (և եթե այո, ապա ինչպիսի մասնակցություն է ունեցել. ֆինանսակա՞ն և հոգեկա՞ն:

Ոչ բոլոր երբևէ զուգընկեր ունեցած կանայք են պատասխանել այն հարցին, թե արդյոք իրենց կյանքում երբևէ հղիությունն ընդհատե՞լ են: Հարցին դրական պատասխանողների տոկոսը փաստացիորեն համընկնում է բացասական պատասխանողների տոկոսին (համապատասխանաբար 45.8% և 46.6%): 7.4% -ն ընտրել են «Հարցը տեղին չէ» պատասխանը: Եթե ուղղումներ մտցվեն և վերջին խումբը հաշվի չառնվի, հարցվածների ուղիղ կեսը իրենց կյանքում առնվազն մեկ անգամ հղիությունն ընդհատել են:

Դրական պատասխան տված կին հարցվածների ընդամենը 1.6%-ը առաջին անգամ դա արել էին 18 տարեկանից ցածր հասակում, իսկ 98.4%-ը՝ 18 տարեկանում:

Ինչ վերաբերում է հղիության ընդհատման որոշմանը, կանանց և տղամարդկանց՝ տղամարդ զուգընկերոջ մասնակցությանը վերաբերող հարցին տված պատասխաններում զգալի անհամապատասխանություն կա: Ըստ տղամարդ հարցվածների պատասխանների՝ հղիության ընդհատման որոշումը կայացվել է ընտրանքի տղամարդկաց 23.6%-ի մասնակցությամբ: Մյուս կողմից, ըստ կին հարցվածների պատասխանների, նրանց տղամարդ զուգընկերների 86.6%-ն են մասնակցել վերջնական որոշման ընդունմանը: Այս անհամապատասխանության հնարավոր բացատրություններից մեկն այն է, որ կանայք և տղամարդիկ արմատապես տարբեր պատկերացումներ ունեն որոշումներին մասնակից լինելու վերաբերյալ: Ամենայն հավանականությամբ, կին հարցվածները ավելի լայն պատկերացումներ ունեն՝ որոշումների ընթացքում տեղի ունեցող քննարկումը, խորհուրդը կամ նույնիսկ ներկայությունը ներառյալ, մինչդեռ տղամարդ հարցվածները հավանաբար ավելին ի նկատի ունեն՝ հարցի առնչությամբ վերջին խոսքի իրավունքը և/կամ իրական ներգրավվածությունն ու պարտականությունների կատարումը ներառյալ:

Հղիության ընդհատման մասին որոշմանն առնչվող մեկ այլ հարց ավելի ուղիղ է և կին ը տղամարդ հարցվածների միջև տարբերությունը զգալիորեն ավելի քիչ է: Հարկ է

նշել, որ հարցին պատասխանել են միայն որոշման կայացմանը մասնակցած տղամարդ հարցվածները, և այն կին հարցվածները, ովքեր երբևէ ընդհատել են հղիությունը: Կանանց և տղամարդկանց ամենամեծ մասնաբաժինը նշել է, որ դա զուգընկերների համատեղ որոշումն է եղել (ստորև տե՛ս **Աղյուսակ 9**): Եթե որոշումը համատեղ չի կայացվել, այլ կողմերից միայն մեկինն է եղել, ապա տղամարդկանց պատասխաններում այն ներկայացված էր հավասար համամասնությամբ տղամարդկանց և կանանց միջև, մինչդեռ կին հարցվածների պատասխաններում գլխավոր դերակատարումը կնոջն է պատկանու, իսկ տղամարդիկ դեպքերի ընդամենը 1.3%-ում են որոշիչ դերում:

Աղյուսակ 9. Հղիության ընդհատման մասին որոշման կայացում

Կին և տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր ընտրել են տարբեր պատասխաններ հղիության ընդհատման մասին որոշումների կայացման վերաբերյալ հարցերին

Որոշումը կայացվել է	ՏՂԱՄԱՐԴԻԿ N = 84	ԿԱՆԱՅՔ N = 320
	Հարցվածների տոկոսը	Հարցվածների տոկոսը
Կնոջ կողմից	9.5%	26.9%
Տղամարդ զուգընկերոջ կողմից	9.5%	1.3%
Համատեղ	77.4%	64.7%
Մեկ ուրիշի կողմից	1.2%	4.1%
Կնոջ և մեկ ուրիշի կողմից	0.0%	0.3%
Բժշկի կողմից	1.2%	2.5%
Անպատասխան	1.2%	0.3%
ԸՆԴԱՄԵՆԸ	100.0%	100.0%

Այսպիսով, ինչպես վկայում են հետազոտության տվյալները, այս հույժ կարևոր որոշումը գոնե պաշտոնական տվյալների համաձայն համատեղ է ընդունվել: Սակայն անհնար է ասել, թե արդյոք որոշման կայացման մեջ պահպանվել է իրավահավասարությունը, քանի որ համատեղությունը չի ենթադրում իրավահավասարություն և քանի որ հայտնի չէ, թե ինչքան ուժեղ է եղել կողմերից յուրաքանչյուրի ազդեցությունը մյուս կողմի վրա:

Տղամարդկանց մասնակցությունը չի սահմանափակվում միայն որոշումների կայացմամբ: Նրանք կարող են նաև ֆինանսական և հոգեբանական աջակցություն ցուցաբերել իրենց կին զուգընկերներին հղիության ընդհատման դեպքում:

Աղյուսակ 10. Տղամարդ զուգընկերոջ մասնակցությունը կնոջ հղիության ընդհատմանը

Կին և տղամարդ հարցվածների տոկոսը

	ՏՂԱՄԱՐԴԻԿ. N = 85	ԿԱՆԱՅՔ . N = 321
	Հարցվածների տոկոսը	Հարցվածների տոկոսը
Տղամարդ զուգընկերը կնոջը ֆինանսական աջակցություն է ցուցաբերել հղիության ընդհատման համար	92.9%	92.8%
Տղամարդ զուգընկերն ուղեկցել է կնոջը հղիության ընդհատման վայր	82.1%	73.5%
Տղամարդ զուգընկերոջ ներգրավվածությունը վերոհիշյալ ասպեկտներից առնվազն մեկում	96.5%	94.4%

Աղյուսակ 10 տվյալները հատկապես ֆինանսական ուժեղ աջակցության մասին են վկայում, որը տղամարդ զուգընկերներն են ապահովում: Տղամարդ և կին հարցվածների նույն մասնաբաժինը շեշտել են այն փաստը, որ տղամարդ զուգընկերները հղիության ընդհատմանը ֆինանսական աջակցություն են ցուցաբերել: Համեմատաբար ցածր է այն հարցվածների և հատկապես՝ կանանց մասնաբաժինը, ովքեր ասել են, որ տղամարդ զուգընկերն է կնոջն ուղեկցել հղիությունն ընդհատման վայր:

ԳԼՈՒԽ 8. ՍԵՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Սեռականությունը և կարծրատիպերը

Հետազոտության հիմնական հարցաշարը պարունակում էր մի շարք պնդումներ, որոնք վերաբերում էին սեռականությանը և արտացոլում էին առնականության պատրիարխալ կարծրատիպերը: Այս հարցերին տրված պատասխանները ցույց են տալիս գենդերային արդարության աստիճանը, որը բնորոշ է ընտրանքին ընդհանրապես և առանձին վերցված տղամարդկանց ու կանանց մասնավորապես:

Աղյուսակ 1.Սեռականության նկատմամբ վերաբերմունք

Հետևյալ պնդումների հետ համաձայն հարցվածների տոկոսը

Պնդում	Հարցվածներ (N=1,617)
Տղամարդիկ ավելի շատ ունեն սեռական հարաբերության կարիք, քան կանայք	49.1%
Տղամարդիկ միշտ պատրաստ են սեքսով զբաղվել	58.3%
Տղամարդը այլ կնոջ կարիք ունի՝ նույնիս սեփական կնոջ հետ լավ հարաբերությունների դեպքում	34.8%
Հղիությունից խուսափելը կնոջ պարտականությունն է	45.5%
Կինը պետք է կույս մնա մինչև ամուսնությունը	85.9%
Իրենց մոտ պահպանակ ունեցող կանայք «թեթևաբարո» են	51.0%
Վերոհիշյալ պնդումներից առնվազն մեկի հետ համաձայն հարցվածների տոկոսը	97.3%

Պնդումներում արտահայտված տեսակետներին են հարում բնակչության նշանակալի, թեպետև տատանվող մասնաբաժինը (տ՛ս **Աղյուսակ 1**): Ամենաքիչ կողմանիկցերն ունեն միայն 2 պնդում: Շատ ավելի մեծ է այն անձանց մասնաբաժինը, ովքեր գտնում են, որ տղամարդն այլ կնոջ կարիք ունի՝ անգամ եթե իր սեփական կնոջ հետ նորմալ հարաբերութունների մեջ է (58.7%), որը էականորեն բարձր է այս տեսակետին դեմ արտահայտվածների տոկոսից: Այնուամենանիվ, հարցվածների մեկ երրորդը գտնում են, որ ամուսնու դավաճանությունը արտառոց երևույթ չէ: Չհղիանալու պարտականությունն ամբողջովին կանանց վրա բարդող պնդման կողմնակիցների տոկոսը (45.5%) զիջում է անհամաձայնություն հայտնողների

տոկոսին (49.9%): Այնուամենայնիվ տարբերությունն այնքան մեծ չէ, ինչքան առաջին պնդման դեպքում, և, բացի այդ, հակաբեղմնավորումը կանանց պատասխանատվության տակ դնողների տոկոսը բավականին բարձր է: Ընտրանքի հարցվածների գրեթե կեսը կիսում են այդ տեսակետը:

Այն պնդումները, թե տղամարդիկ ավելի շատ սեքսի կարիք ունեն, քան կանայք և որ տղամարդիկ միշտ պատրաստ են սեքսով զբաղվել, հաստատ թյուրըմբռնումներ են և հնաոճ կարծրատիպեր, որոնք կասկածի տակ են առնվում նորագույն գիտական հետազոտություններում. դրանք հայտնի են: Այդ պնդումների հետ համաձայն հարցվածների մասնաբաժինը մոտ 15%-30%-ով բարձր է, քան անհամաձայնություն հայտնողներինը (համապատասխանաբար 34.5% և 29.3%): Անհրաժեշտ է նաև նշել, որ հարաբերականորեն բարձր տոկոս են կազմում այն հարցվածները, ովքեր անվստահության պատճառով չեն պատասխանել (16.4% և 12.4%) :

Հարցվածների կեսից մի փոքր ավելին սատարում են մեկ այլ տարածված կարծրատիպ, ըստ որի իրենց մոտ պահպանակներ ունեցող կանայք «թեթևաբարո» են: Կանանց պատասխանատու սեռական որոշ հարցվածների կողմից դիտարկվում է որպես պատահական հարաբերությունների պատրաստակամություն և «արժանապատվության» բացակայություն: Միևնույն ժամանակ սույն պնդմանն անհամաձայնություն հայտնողների տոկոսը նշանակալի է (37.7%).

Երկակի ստանդարտներ արտահայտող զգայուն մի խնդիր է կնոջ կուսությունը: Հարցվածների ճնշող մեծամասնությունը (85.9%) համաձայն են այն պնդմանը(*խիստ կողմ* անձանց 75.0%-ը ներառյալ), որ կինը պետք է պահպանի կուսությունը մնա մինչև ամուսնությունը: Հարցվածների ընդամենը 12.4%-ն են դեմ, իսկ չնչին տոկոսը՝ 1.8% չունեն միանշանակ պատասխան: Այլ կերպ ասած՝ անկախ պարզաբանումներից և առաջադրվող փաստարկներից ու բացատրություններից, հարցվածների չորս հինգերորդից ավելին ժխտում են կանանց՝ սեփական մարմինը և սեռականությունը տնօրինելու իրավունքը և ստիպում նրանց ենթարկվել մոլեգին պատրիարխալ հոգեկերտվածքի պարտադրած նորմերին և ստանդարտներին:

Զարմանալի չէ, որ կին և տղամարդ հարցվածները պետք է որ տարբեր տեսակետներ ունենային վերոհիշյալ որոշ պնդումների շուրջ: Անսպասելին այն էր, որ բացահայտ սեռական խտրականություն դնող պնդումների ուղիղ կեսի դեպքում

կանանց դիրքորոշումները լիովին համընկնում էին տղամարդկանց պատկերացումներին:

Անհրաժեշտ է նշել, որ բացի առաջին պնդումից՝ վիճակագրության առումով հարցվածների սեռն և պնդումներում ամրագրված տեսակետների հանդեպ դիրքորոշումները փոխկապակցված են: Այդ փոխկապակցվածության հաստատունությունը տատանվում է շատ թույլից և թույլից մինչև չափավոր[115].

Ինչպես երևում է ստորև տրված **Աղյուսակ 2 –ի** տվյալներից, ի տարբերություն տղամարդկանց՝ կանայք ավելի քիչ են հակված համաձայնվել այն պնդումների հետ, որոնք *արդարացնում են* իրենց կնոջ հետ նորմալ հարաբերությունների մեջ գտնվող, սակայն դավաճանող տղամարդուն, որոնք *կասկածի տակ են առնում* կնոջ բարոյականությունը և բարոյական արժեհամակարգը, եթե նա իր մոտ պահպանակ ունի[116] և որոնք *պնդում են*, որ տղամարդիկ միշտ պատրաստ են սեքսով զբաղվել:

Աղյուսակ 2. Սեռականության նկատմամբ վերաբերմունք
Հետևյալ պնդումների հետ համաձայն հարցվածների տոկոսը

Պնդում	Տղամարդիկ (N=767)	Կանայք (N=850)
Տղամարդիկ ավելի շատ ունեն սեռական հարաբերության կարիք, քան կանայք	48.5%	49.7%
Տղամարդիկ միշտ պատրաստ են սեքսով զբաղվել	66.0%	51.4%
Տղամարդը այլ կնոջ կարիք ունի՝ նույնիս սեփական կնոջ հետ լավ հարաբերությունների դեպքում	44.5%	26.0%
Հղիությունից խուսափելը կնոջ պարտականությունն է	44.7%	46.2%
Կինը պետք է կույս մնա մինչև ամուսնությունը	87.5%	84.3%
Իրենց մոտ պահպանակ ունեցող կանայք «թեթևաբարո» են	60.9%	42.2%
Վերոհիշյալ պնդումներից առնվազն մեկի հետ համաձայն հարցվածների տոկոսը	**97.3%**	**97.4%**

[115] Առաջին պնդման դեպքում կապը բացակայում է, քանի որ p>0.05 (տարբերությունները վիճակագրություն տեսակետից նշանակալի են p<0.05 ցուցանիշի դեպքում): Այլ պնդումների պարագայում անվանական արժեքը պակաս է անվանական մակարդակից (α) 0.05-ից: 4րդ պնդման դեպքում p=.029, մնացած բոլոր դեպքերում p=.000.

[116] Այս պնդման հետ համամիտ տղամարդկանց տոկոսը (60.9%) մի քանի անգամ բարձր է Հայաստանի ԱԱՀ 2010-ի ուսումնասիրության ցուցանիշից (14.0%). Տե՛ս Հայաստանի ազգագրական և առողջապահական հետազոտություն /*Armenia Demographic and Health Survey/ 2010*. Պալվերտոն, MD: ՀՀ, ԱՎԾ, ՀՀ ԱՆ և ICF International, 2012, p. 92. Սակայն հարկ է նշել, որ ԱՎԾ հետազոտության ենթարկված 1,584 տղամարդիկ 15-49 տարիքային միջակայքում էին: Անհրաժեշտ է նաև նշել, որ վերջերս՝ 2015-ին Հայաստանի ԱՎԾ անցկացրած հետազոտությունը ժամանակային առումով մասամբ համընկնում է սույն Զեկույցում ներկայացված հետազոտության անցկացման ժամանակահատվածին: Երբ վերջապես հրապարակվեն Հայաստանի ԱՎԾ 2015 հետազոտության տվյալները, հետաքրքրական կլինի դրանք համեմատել սույն հետազոտության վերջնարդյունքների հետ:

Ինչ վերաբերում է մյուս 3 պնդումներին, հետազոտված դեպքերի տվյալները ժխտում էին այն կանխավարկածը, որ կին և տղամարդ հարցվածների միջև առկա են զգալի տարբերություններ:

Հիմնականում տղամարդ և կին[117] հարցվածների նույն տոկոսն է կիսում այն տեսակետը, որ հղիության կանխումը կնոջ պարտականությունն է: Այլ կերպ ասած՝ հետազոտության կին հարցվածների գրեթե կեսը յուրացրել են սեռերի միջև խտրականություն դնող այն կարծրատիպը, որը հղիության կանխման ողջ պատասխանատվությունը բացառապես կանանց վրա է դնում, մինչդեռ երկուսն էլ պետք է հավասարապես պատասխանատու լինեն:

Սա ճշմարիտ է նաև այն պնդման դեպքում, համաձայն որի տղամարդիկ ավելի շատ սեքսի կարիք ունեն, քան կանայք: Կանանց զգալի մասնաբաժինը (ինչպես նաև տղամարդիկ) անտեղյակ են այն փաստին, որ սեռականության դրսևորումները՝ սեռական կարիքները ներառյալ, որոշակի վարքագծի պարագայում կախված են ոչ միայն կենսաբանական գործոնից, այլև սոցիալականացումից, որը նորմեր և ստանդարտներ է պարտադրում և նույնիսկ սոցիալական հարաբերությունների կարգավորում:

Թեև նույնիսկ սեռականության հետ առնչվող շատ գենդերային կարծրատիպեր անհաղորդ են փոփոխություններին՝ ի շնորհիվ սոցիալական և մշակութային գործոնների, ինչը տեխնոլոգիական, քաղաքական և տնտեսական փոփոխությունների արդյունք է, նաև պաշտպանության ու կրթական ջանքերի արդյունք, մեկ հատուկ մոտեցում է պահպանվել քաղաքական և սոցիալ-տնտեսական հարացույցի միջով կատարած կրկնակի անցման հետևանքով: Այն խիստ և իրասածի գաղափարն է, որ կինը պետք է կույս մնա մինչև ամուսնությունը: Կին հարցվածների ծայրաստիճան բարձր տոկոսն է հարում այս տեսակետին: Սա նշանակում է, որ չնայած մոդերնիզացիայի զորեղ ուժին, գլոբալիզացիային և լիբերալիզացիային՝ սոցիալական կյանքի և հոգեկերտվածքի որոշ ասպեկտներ անհաղորդ են մնացել փոփոխություններին կամ արխայիկ են դարձել:

***

[117] Այս պնդման հետ համաձայն տղամարդկանց տոկոսը (44.5%) շատ ավելի բարձր է Հայաստանի ԱՎԾ 2010 թ. Ուսումնասիրության մեջ արձանագրված տոկոսից (13.8%). Տե՛ս. Հայաստանի ազգագրական և առողջապահական հետազոտություն *2010*, էջ 92. Նույն դիտողությունը տեղ է գտել նաև տողատակի նախորդ ծանոթագրության մեջ:

Հետազոտության տվյալները նաև ցույց են տալիս ընտրանքի բնակչության տարբեր սեգմենտների միջև առկա տարբերությունները, որոնք հիմնված են որոշ կարևոր կենսագրական բնութագրիչների վրա (Աղյուսակ **3**) և երևան են հանում այդ տարբերությունների վիճակագրական նշանակությունը:

Աղյուսակ 3. Սեռականության նկատմամբ վերաբերմունք

Հետևյալ պնդումների հետ **համաձայն** բոլոր հարցվածների տոկոսը՝ ըստ կենսագրական բնութագրիչների**

Կենսագրական բնութագրիչներ	Տղամարդիկ ավելի շատ ունեն սեռական հարաբերության կարիք, քան կանայք	Տղամարդիկ միշտ պատրաստ են սեքսով զբաղվել	Տղամարդը այլ կնոջ կարիք ունի՝ նույնիսկ սեփական կնոջ հետ լավ հարաբերությունների դեպքում	Հղիությունից խուսափելը կնոջ պարտակա նությունն է	Կինը պետք է կույս մնա մինչև ամուսնությունը	Իրենց մոտ պահպանակ ունեցող կանայք «թեթևաբարո» են	Հարցվածների թիվը **N = 1,617**
Տարիքը							
18-24	40.2%	52.5%	33.2%	42.0%	85.7%	58.4%	**286**
25-34	49.7%	59.5%	31.2%	46.8%	85.0%	52.1%	**461**
35-49	52.5%	63.4%	39.6%	44.4%	87.0%	46.2%	**541**
50-59	50.5%	53.5%	33.1%	48.6%	85.1%	51.4%	**329**
Կրթությունը ***							
Հիմնական	(65.2%)	(91.3%)	(67.4 %)	(52.2%)	(95.7%)	(78.3%)	**46**
Միջնակարգ	53.1%	65.6%	37.7%	47.6%	90.3%	55.8%	**727**
Միջին մասնագիտական	47.1%	53.4%	32.1%	49.3%	86.7%	49.9%	**371**
Բարձրագույն	43.0%	47.7%	29.3%	38.8%	77.1%	41.9%	**472**
Ամուսնական կարգավիճակը ****							
Գրանցված ամուսնություն	52.4%	60.9%	31.9%	46.3%	88.3%	49.8%	**941**
Չգրանցված ամուսնություն	44.9%	56.2%	33.2%	46.6%	85.4%	46.1%	**178**
Ընկերուհի (համատեղ կյանք չեն վարում	(37.8%)	(64.8%)	(32.4%)	(35.1%)	(78.4%)	(59.4%)	**37**
Չամուսնացած	40.3%	51.3%	39.7%%	43.1%	80.8%	58.7%	**337**
Բաժանված/ ամուսնալուծված	48.6%	52.7%	48.6%	41.9%	78.4%	41.9%	**74**
Այրի	(65.6%)	(62.5%)	(40.7%)	(62.5%)	(87.5%)	(46.9%)	**32**
Բնակության վայրը							
Երևան	43.5%	50.9%	30.0%	40.7%	79.8%	45.1%	**570**
Այլ քաղաքային	50.3%	57.6%	37.9%	45.0%	85.6%	49.4%	**472**
Գյուղական	53.8%	66.3%	36.9%	50.8%	92.0%	58.4%	**575**
Ընդամենը	**49.1%**	**58.3%**	**34.8%**	**45.5%**	**85.9%**	**51.0%**	**1,617**
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թվային տվյալը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:							

** Տվյալների հեշտ ներկայացման, համեմատության և վերլուծության նպատակով «խիստ կողմ եմ» և «կողմ եմ» պատասխանները միավորվել են՝ տրված պնդման հետ համամիտ կանանց տոկոսը որոշելու համար.

*** Քանի որ «ուսուցման համատեղում աշխատանքի հետ» կատեգորիայում կար ընդամենը 1 հարցված, այս կատեգորիան չի ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 1,616)
**** Քանի որ «Ոչ ֆորմալ միություն/ համատեղ կյանք» կատեգորիայում ընդամենը 18 հարցվածներ կային, այդ կատեգորիան չի ներկայացվել (հետևաբար հարցվածների ընդհանուր թիվն այս սեկցիայում 1,599).

Տարիքը վիճակագրորեն կարևոր գործոն է միայն առաջին 3 պնդումների դեպքում (որտեղ $p < 0.05$), սակայն կապի հաստատունությունը շատ թույլ է: Հարցվածների տարիքը հետևողականորեն դրական կամ բացասական առնչություն չունի իրենց դիրքորոշմանը՝ հիմնականում ի շնորհիվ հասարակության մեջ գոյություն ունեցող նորմատիվ հակամարտությանը: Ընդհանուր առմամբ ավելի երիտասարդ հարցվածներն այդքան զգայուն չեն այդ կարծրատիպերի հանդեպ, որքան ավելի տարիքավորները: Հարկ է նշել, որ ամենամեծ տարբերությունն ամենաերիտասարդ տարիքային խմբի և 35-49 տարեկանների խմբի միջև է: Սակայն, աղյուսակների համադրմամբ ստացված տվյալներն այս աղյուսակում պարզորոշ կերպով ցույց են տալիս, որ վերոհիշյալ կարծրատիպերը գերիշխում են բնակչության տարբեր տարիքային խմբերի մեծաքանակ մասնաբաժիններում:

Կրթությունը ուժեղ և վիճակագրության տեսանկյունից կարևոր գործոն է: Կրթամակարդակն ու վերոնշյալ պնդումների հետ համաձայնումը հակադարձորեն փոխկապակցված են, այսինքն՝ ինչքան ավելի բարձր է հարցվածների կրթամակարդակը, այնքան քիչ է համաձայնողների մասնաբաժինը: Տարբերությունը հատկապես զգալի է մի կողմից՝ բարձրագույն կրթություն ունեցող հարցվածների և մյուս կողմից՝ ընդհանուր միջնակարգ և միջին մասնագիտական կրթություն ունեցողների միջև:

Ամուսնական կարգավիճակը կարևոր գործոն չէ սույն պնդումների վերաբերյալ հարցվածի դիրքորոշման վրա ազդեցության տեսակետից: Նույնիսկ երբ տարբերությունները (վիճակագրության աղյուսակի արդյունքների միջև) վիճակագրության տեսանկյունից նշանակալի են (պնդումներ 1, 3 և 5), քննվող գործոնի և հարցվածների տեսակետի միջև կապը շատ թույլ է: Տվյալները ցույց են տալիս, որ ընտրանքի այս սեգմենտի ոչ մի կատեգորիա հետևողական չէ իր տեսակետի մեջ: Կախված պնդումից՝ հարցվածների միևնույն խումբը կարող է ավելի հակված լինել ավանդական և պահպանողական հայացքներին կամ ավելի լիբերալ և առաջադեմ հայացքներին:

Բնակության վայրը հանդես է եկել իբրև շատ կարևոր գործոն հարցվածների տեսակետների ձևավորման տեսանկյունից սեռականության հետ առնչվող պնդումներում: Այն հարցվածների մասնաբաժինների միջև եղած տարբերությունները, ովքեր համաձայն են վերոհիշյալ պնդումների հետ՝ կախված իրենց բնակության վայրից մշտապես մեծ դեր ունեն վիճակագրության մեջ[118]: Դրա ազդեցությունն ավելի անմիջական է, քան այլ գործոններինը:

Հետազոտության ենթարկված Երևանի բնակիչները հակված չեն հանաձայնելու վերոհիշյալ պնդումների հետ՝ ի համեմատություն գյուղաբնակների, այսինքն՝ մայրաքաղաքում ապրող հարցվածները հարում են ավելի ժամանակակից և լիբերալ հայացքներին, քան գյուղերում բնակվող հարցվածները: Միայն կուսությանը վերաբերող պնդման դեպքում Երևանաբնակ հարցվածների կեսից ավելին համաձայնել են դրան, իսկ այն պնդումը, թե տղամարդիկ միշտ պատրաստ են սեքսով զբաղվել, ճշմարիտ է Երևանաբնակ հարցվածների ուղիղ կեսի համար, իսկ մնացած 4 պնդումների հետ համաձայն են հարցված Երևանաբնակների 50.0% -ից պակաս անձինք, մինչդեռ գյուղաբնակներ հարցվածների կեսը կամ կեսից ավելին համաձայնություն են հայտնել բոլոր պնդումների վերաբերյալ, բացի մեկից: Այն պնդման հետ, թե նույնիսկ իր կնոջ հետ լավ հարաբերություններում գտնվող տղամարդն այլ կանանց կարիք ունի, համաձայն են գյուղաբնակ հարցվածների ընդամենը 36.9%-ը:.

Միջանկյալ դիրքում են այն հարցվածները, ովքեր ապրում են քաղաքային բնակավայրերում /ոչ Երևանում/ ՝ երբեմն ավելի մոտենալով խմբերից մեկին:

Վերևում ցույց է տրվել, որ պնդումների նկատմամբ հարցվածների վերաբերմունքը կրում է նրանց սեռի ազդեցությունը: Սեռի ազդեցությունն ավելի է սաստկացնում հարցվածների կենսագրական բնութագրիչների էֆեկտը ներկայացված պնդման նկատմամբ նրանց վերաբերմունքի վրա (տե՛ս ստորև տրված **Աղյուսակներ 4 և 5**):

[118] Անվանական արժեքը պակաս է (p=0.041)-ից, կամ շատ ավելի քիչ(p=0.000, p=0.001 and p=0.005) քան անվանական մակարդակը (α) 0.05-ի.

Աղյուսակ 4. Սեռականության նկատմամբ վերաբերմունքը. Տղամարդիկ
Հետևյալ պնդումների հետ **համաձայն** բոլոր հարցվածների տոկոսը՝ ըստ կենսագրական բնութագրիչների**

Կենսագրական բնութագրիչներ	Տղամարդիկ ավելի շատ ունեն սեռական հարաբերության կարիք, քան կանայք	Տղամարդիկ միշտ պատրաստ են սեքսով զբաղվել	Տղամարդը այլ կնոջ կարիք ունի՝ նույնիսկ սեփական կնոջ հետ լավ հարաբերությունների դեպքում	Հղիությունից խուսափելը կնոջ պարտականությունն է	Կինը պետք է կույս մնա մինչև ամուսնությունը	Իրենց մոտ պահպանակ ունեցող կանայք «թեթևաբարո» են	Տղամարդկանց թիվը N = 767
Տարիքը							
18-24	43.8%	63.4%	48.4%	45.8%	87.6%	73.9%	**153**
25-34	49.2%	62.7%	42.1%	44.5%	86.6%	66.0%	**209**
35-49	52.0%	72.8%	47.6%	39.6%	89.2%	52.4%	**250**
50-59	46.4%	61.9%	38.7%	52.3%	85.8%	54.8%	**155**
Կրթությունը							
Հիմնական	(65.7%)	(93.8%)	(78.2%)	(46.9%)	(93.7%)	(78.2%)	**32**
Միջնակարգ	51.8%	71.0%	46.2%	45.6%	89.8%	65.5%	**403**
Միջին մասնագիտական	46.8%	65.9%	40.5%	53.2%	89.6%	56.4%	**126**
Բարձրագույն	40.3%	51.9%	38.4%	37.4%	80.6%	52.0%	**206**
Ամուսնական կարգավիճակը * **							
Գրանցված ամուսնություն	53.0%	68.6%	43.4%	42.2%	89.7%	57.6%	**408**
Չգրանցված ամուսնություն	43.3%	66.3%	42.2%	50.6%	86.7%	59.0%	**83**
Ընկերուհի (համատեղ կյանք չեն վարում	(39.3%)	(71.5%)	(42.9%)	(42.9%)	85.7%	67.9%	**28**
Չամուսնացած	43.2%	58.2%	45.6%	45.5%	83.1%	69.0%	**213**
Բաժանված/ ամուսնալուծված	(50.0%)	(75.0%)	(45.9%)	(62.5%)	(91.7%)	(45.8%)	**24**** **
Այրի	*	*	*	*	*	*	**2**
Բնակության վայրը							
Երևան	41.1%	55.8%	39.5%	41.8%	81.8%	57.4%	**258**
Այլ քաղաքային	50.0%	64.6%	43.4%	43.8%	87.6%	60.2%	**226**
Գյուղական	54.0%	76.3%	49.9%	48.1%	92.6%	64.6%	**283**
Ընդամենը	**48.5%**	**66.0%**	**44.5%**	**44.7%**	**87.5%**	**60.9%**	**767**
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թվային տվյալը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:							

** Տվյալների հեշտ ներկայացման, համեմատության և վերլուծության նպատակով «խիստ կողմ եմ» և «կողմ եմ» պատասխանները միավորվել են՝ տրված պնդման հետ համամիտ տղամարդկանց տոկոսը որոշելու համար.
*** Քանի որ «Ոչ ֆորմալ միություն/ համատեղ կյանք» կատեգորիայում ընդամենը 9 հարցվածներ կային, այդ կատեգորիան չի ներկայացվել (հետևաբար հարցվածների ընդհանուր թիվն այս սեկցիայում 758).
**** Սահմանագծային դեպքերի տվյալները լրիվ վավեր են համարվում:

Վերջին պնդման բացառությամբ (Իրենց մոտ պահպանակներ ունեցող կանայք «թեթևաբարո» են), վիճակագրության տեսակետից նշանակալի փոխկապակցվածություն չկա տղամարդկանց ***տարիքի*** և պնդումների հետ նրանց

(ան)համաձայնության միջև: Այնուամենայնիվ, կարելի է կատարել որոշ դիտարկումներ:

Թեև ողջ ընտրանքում երիտասարդ հարցվածների մասնաբաժինը, ովքեր համաձայն չեն սուբյեկտիվ գենդերային պնդումների հետ, ավելի փոքր էր, քան այլ տարիքային խմբերի հարցվածների մասնաբաժինը, իրերի այլ դրություն է նկատվում երիտասարդ տղամարդ հարցվածների շրջանում: Վերջին դեպքում մասնաբաժինները կամ ավելի մեծ են, քան այլ տաիքային խմբերում, կամ ամենաբարձրն են՝ մեկ բացառությամբ: Բացի այդ՝ դրանք կայունորեն ավելի բարձր են, քան ողջ ընտրանքի համապատասխան մասնաբաժինները:

Վիճակագրական առումով նշանակալի փոխկապակցվածություն է նկատվում կին հարցվածների ***տարիքի*** և առաջին 3 պնդումներին նրանց համաձայնության միջև: Մյուս 3 պնդումների դեպքում նման փոխկապակցվածություն չկա: Պնդումների հետ համաձայն ամենաերիտասարդ կին հարցվածների մասնաբաժինն ամենափոքրն է, և այսպիսով արտացոլում է ողջ ընտրանքին բնորոշ ընդհանուր միտվածությունը: Ի հակադրություն տղամարդ հարցվածների՝ շատ դեպքերում կին հարցվածների մասնաբաժինները (ովքեր համաձայն են պնդումներին) այլ տարիքային խմբերում ավելի փոքրաթիվ են, քան ողջ ընտրանքում:

Վիճակագրության առումով նշանակալի փոխկապակցվածություն կա տղամարդ հարցվածների ***կրթամակարդակի*** և բոլոր պնդումների նկատմամբ վերաբերմունքի միջև՝ բացառությամբ երկուսի: Այս երկու պնդումները կնոջ վրա են բարդում հղիության կանխման պատասխանատվությունը և պնդում են, որ կինը պետք է կույս մնա մինչև ամուսնությունը: Հավանաբար սրանք են ամենազգայուն պնդումները, որոնց վրա ամենաքիչ ազդեցությունն ունի ֆորմալ կրթամակարդակը, քանի որ այս խնդիրները, որպես կանոն, չեն բարձրաձայնվում և քննարկվում կրթական հաստատություններում հիմնական մասնագիտական կրթական ծրագրի շրջանակներում: Մնացած բոլոր դեպքերում նույն միտվածությունն է առկա ողջ ընտրանքում, այն է՝ հարցվածների կրթամակարդակը հակադարձորեն փոխկապակցված է պնդումների հետ համաձայն հարցվածների մասնաբաժնի հետ, որը ևս իր արտահայտված է այստեղ:

Հետազոտության ենթարկված կանանց պարագայում ***կրթամակարդակի*** փոխկապակցվածությունը պնդման նկատմամբ վերաբերմունքի հետ վիճակագրության տեսանկյունից մեծ դեր ունի՝ առանց բացառությունների: Հարկ է նշել, որ թեև հակադարձ փոխկապակցվածության միտումը այս դեպքում ևս նկատելի է, միջին մասնագիտական և բարձրագույն կրթությամբ հարցվածների մասնաբաժինների միջև տարբերությունները շատ ավելի մեծ են տղամարդ, քան կին հարցվածների դեպքում (բացառությամբ ավելի վաղ նշված 2 բացառությունների):

Այսպիսով, կարելի է գալ այն եզրակացությանը, որ թեև տղամարդ հարցվածների ավելի մեծ մասնաբաժինն ընդհանուր առմամբ ավելի է հակված պնդումների հետ համաձայնելու, քան նույն կրթամակարդակն ունեցող կին հարցվածները, կրթական գործոնի ազդեցությունն ավելի ուժեղ է տղամարդկանց, քան կանանց դեպքում:

Աղյուսակ 5. Սեռականության նկատմամբ վերաբերմունք. կանայք

Հետևյալ պնդումների հետ **համաձայն** հարցվածների տոկոսը՝ ըստ կենսագրական բնութագրիչների**

Կենսագրական բնութագրիչներ	Տղամարդիկ ավելի շատ ունեն սեռական հարաբերության կարիք, քան կանայք	Տղամարդիկ միշտ պատրաստ են սեքսով զբաղվել	Տղամարդը այլ կնոջ կարիք ունի՝ նույնիսկ սեփական կնոջ հետ լավ հարաբերությունների դեպքում	Հղիությունից խուսափելը կնոջ պարտականությունն է	Կինը պետք է կույս մնա մինչև ամուսնությունը	Իրենց մոտ պահպանակ ունեցող կանայք «թեթևաբարո» են	Կանանց թիվը N = 850
Տարիքը							
18-24	36.1%	39.8%	15.8%	37.6%	83.5%	40.6%	**133**
25-34	50.0%	56.8%	22.2%	48.8%	83.8%	40.5%	**252**
35-49	53.0%	55.3%	32.7%	48.5%	85.2%	40.9%	**291**
50-59	54.1%	46.0%	28.1%	45.4%	84.5%	48.3%	**174**
Կրթությունը * **							
Հիմնական	*	*	*	*	*	*	**14**
Միջնակարգ	54.7%	59.0%	27.2%	50.0%	91.0%	43.8%	**324**
Միջին մասնագիտական	47.4%	47.0%	27.8%	47.3%	85.3%	46.5%	**245**
Բարձրագույն	45.1%	44.4%	22.2%	39.8%	74.4%	34.2%	**266**
Ամուսնական կարգավիճակը ** **							
Գրանցված ամուսնություն	51.9%	54.9%	23.0%	49.6%	87.2%	43.7%	**533**
Չգրանցված ամուսնություն	46.3%	47.4%	25.2%	43.1%	84.2%	34.7%	**95**
Ընկեր (համատեղ կյանք չեն վարում	*	*	*	*	*	*	**9**

Չամուսնացած	35.5%	39.5%	29.9%	38.7%	76.7%	41.1%	**124**
Բաժանված/ ամուսնալուծված	48.0%	42.0%	50.0%	32.0%	72.0%	40.0%	**50**
Այրի	(70.0%)	(63.4%)	(36.7%)	(60%)	(90.0%)	(50.0%)	**30**
Բնակության վայրը							
Երևան	43.5%	46.8%	22.2%	39.7%	78.2%	34.9%	**312**
Այլ քաղաքային	50.4%	51.2%	32.9%	45.9%	83.7%	39.4%	**246**
Գյուղական	53.5%	56.5%	24.3%	53.5%	91.4%	52.4%	**292**
Ընդամենը	**49.7%**	**51.4%**	**26.0%**	**46.2%**	**84.3%**	**42.2%**	**850**
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թվային տվյալը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:							

** Տվյալների հեշտ ներկայացման, համեմատության և վերլուծության նպատակով «խիստ կողմ եմ» և «կողմ եմ» պատասխանները միավորվել են՝ տրված պնդման հետ համամիտ կանանց տոկոսը որոշելու համար.

*** Քանի որ «Տարրական կամ ավելի ցածր կրթություն» կատեգորիայում կար ընդամենը 1 հարցված, այդ կատեգորիան չի ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 849):

**** Քանի որ «Ոչ ֆորմալ միություն/ համատեղ կյանք» կատեգորիայում ընդամենը 9 հարցվածներ կային, այդ կատեգորիան չի ներկայացվել (հետևաբար հարցվածների ընդհանուր թիվն այս սեկցիայում 841 է).

Ամուսնական կարգավիճակը վիճակագրության տեսանկյունից գրեթե ոչ մի նշանակալի ազդեցություն չունի տղամարդ հարցվածների վրա: Սակայն Աղյուսակի տվյալները երևան են հանում զգալի տարբերություն առաջարկված պնդումների հետ համաձայն տղամարդ հարցվածների մասնաբաժինների միջև: .

Չնայած որ կին հարցվածների դեպքում վիճակագրական Աղյուսակում արձանագրված արդյունքները զգալիորեն տարբեր են, այդուհանդերձ փոխկապակցվածությունը շատ թույլ է և չի կարող ընդունելի համարվել: Ամեն դեպքում չկան ուղիղ և միատեսակ օրինաչափություններ:

Արտահայտելով ընդհանուր առմամբ ողջ ընտրանքի միտումները՝ Աղյուսակներ **4** և **5** տվյալները ցույց են տալիս, որ ***բնակության վայրը***, այնուամենայնիվ, տարբեր կերպ է ազդում տղամարդկանց և կանանց պատասխանների վրա: Ի տարբերություն ողջ ընտրանքի՝ բնակության վայրը միշտ չէ, որ վիճակագրական տվյալներով զգալիորեն փոխկապակցված է վերաբերմունքի հետ այն դեպքում, երբ սեռը երրորդ գործոն է հանդես գալիս: Տղամարդ հարցվածների դեպքում նման կապ կա՝ բացառությամբ չորրորդ պնդման («Հղիության կանխումը կնոջ պատասխանատվության տակ է»), իսկ ինչ վերաբերում է կին հարցվածներին, ապա բացառություն են կազմում առաջին երկու պնդումները:

Պնդումների հետ համաձայն տղամարդ հարցվածների մասնաբաժինները ավելի մեծ են, քան կանանցը, իսկ միջինացված տվյալները վերաբերում են ողջ ընտրանքին:

Սա կանխատեսելի էր՝ ելնելով կանանց և տղամարդկանց պատասխանների ավելի վաղ բացահայտված տարբերություններից: Ինչն այդքան էլ ակնհայտ չէր, ապա դա այն փաստն էր, որ տարբերություններն ավելի ընդգծված են տղամարդ հացվածների դեպքում, քան կանանց՝ ելնելով հետազոտության ընտրանքի ըստ բնակության վայրի բաշխված 3 խմբերի:

Ժամադրություն, ամուսնություն և երեխաներ

Վեց հարցերից բաղկացած մի հարցաշար միտված էր պարզելու լավագույն տարիքը, որում տղամարդիկ և կանայք պետք է առաջին անգամ համապատասխանաբար ընկեր/ընկերուհի ունենան, ամուսնանան և առաջին զավակն ունենան:

Աղյուսակ 6. Լավագույն տարիքը

Հարցվածներ (N=1,617)

Տղամարդկանց համար			Կանանց համար		
Առաջին անգամ ընկերուհի ունենալու համար	18-ից ցածր	20.4%	**Առաջին անգամ ընկեր ունենալու համար**	18-ից ցածր	4.6%
	18-20	48.2%		18-20	46.0%
	21-24	11.7%		21-24	15.8%
	25 և բարձր	11.6%		25 և բարձր	5.6%
	Բեկումնային	20		Բեկումնային	18 և 20
	Ամուսնությունից առաջ՝ երբեք	2.2%		Ամուսնությունից առաջ՝ երբեք	25.8%
	Չկա պատասխան	6.1%		Չկա պատասխան	2.5%
Առաջին ամուսնության համար	18-ից ցածր	0.3%	**Առաջին ամուսնության համար**	18-ից ցածր	0.9%
	18-20	8.9 %		18-20	39.1%
	21-24	27.3%		21-24	41.5 %
	25 և բարձր	62.3%		25 և բարձր	17.4 %
	Բեկումնային	25		Բեկումնային	20
	Երբեք	0.1%		Երբեք	0.4 %
	Չկա պատասխան	1.2%		Չկա պատասխան	0.9%
Առաջին երեխան ունենալու համար	18-ից ցածր	0.1 %	**Առաջին երեխան ունենալու համար**	18-ից ցածր	0.3 %
	18-20	3.4%		18-20	18.8%
	21-24	21.2 %		21-24	52.9%
	25 և բարձր	73.0%		25 և բարձր	25.7%
	Բեկումնային	25 և 26		Բեկումնային	23, 21 և 22
	Երբեք	0.7%		Երբեք	0.6%
	Չկա պատասխան	1.6%		Չկա պատասխան	1.5%

Ինչպես երևում է **Աղյուսակ 6** տվյալներից, ուսումնասիրված վերաբերմունքներն ադեկվատ կերպով չեն արտացոլում ներկայիս հայ հասարակության իրողությունները:

Եթե վերաբերմունքը իրոք բացահայտում է ամենատարածված մտածողությունը, ապա վերջինս տարաբնույթ է և ներառում է միաժամանակ ավելի ավանդական և ավելի ժամանակակից հակասական բաղադրիչներ, որոնցից ակնհայտաբար առաջինն է գերիշխում: Շատ հարցվածների դիրքորոշումը գենդերային առումով օբյեկտիվ չէ: Կանանց և տղամարդկանց համար սահմանված ստանդարտներն ու ակնկալիքները տարբեր են:

Ինչ վերաբերում է ընկեր/ընկերուհի ունենալուն, ապա տվյալները ցույց են տալիս, որ հարցվածների երկու երրորդից ավելին գտնում են, որ տղամարդու համար առաջին անգամ ընկերուհի ունենալու ամենահարմար ժամանակը մինչև 21 տարեկան հասակն է (որից 20.4%-ը գտնում են, որ լավագույն տարիքը 18-ից շուտն է): Հարցվածների ընդամենը կեսն է հավատացած, որ դա է կնոջ համար առաջին ընկերն ունենալու լավագույն ժամանակը:

Ամենամեծ տարբրությունը սակայն դրսևորվում է «ամուսնությունից առաջ՝ երբեք» պատասխանի տարբերակում: Հարցվածների մեկ քառորդը համարում են, որ դա լավագույն տարբերակն է երիտասարդ կանանց համար (հարցվածների ընդամենը 2.2% էր դա երիտասարդ տղամարդկանց համար լավագույն տարբերակը համարում): Սույն մոտեցումը բացահայտում է ոչ այնքան սոցիալական իներտությունը , այլ ավելի շուտ ոչ վաղ պատմական անցյալում մնացորդային հայրիշխանական կարծրատիպեր և երկակի ստանդարտներ համարվող իրողությունների վերականգնում:

Անհրաժեշտ է նշել, որ կոնկրետ այս համատեքստում ընկե/ ընկերուհի ունենալը հարցվածների ճնշող մեծամասնության կողմից համարվում է ոչ միայն ռոմանտիկ, այլև սեռական հարաբերություն: Ինչպես ավելի վաղ է նշվել, հարցվածների 85.9%-ը միանշանակ սատարում են այն կարծիքը, որ կինը պետք է կույս մնա մինչև ամուսնությունը: Այդուհանդերձ, գիտակցելով ռոմանտիկ հարաբերության՝ սեռականի վերածվելու հնարավորությունը՝ հաստատ վեր է հարցվածների այն 25.8%-ի ըմբռնումից, ովքեր պնդում են, որ կինն ամուսնությունից առաջ չպետք է ընկեր ունենա: Իրականում այս մոտեցումը մեծամասամբ ընդամենը ցանկություն է և ակնհայտ հակադրության մեջ է մերօրյա հանդիպումների և հարաբերությունների կառուցման իրական դրության հետ:

Կանանց և տղամարդկանց հանդեպ մոտեցումների տարբերությունն ակնհայտ են նաև առաջին ամուսնության համար լավագույն տարիքի որոշման հարցում: Սակայն մինչև այս տարբերությունները քննելը, պետք է նշել 2 կանոր բացահայտումների մասին: Առաջին հերթին հարցվածների մեկ տոկոսի կեսից անքամ քիչը կարծում են, որ տղամարդիկ և կանայք ընդհանրապես չպետք է ամուսնանան: Ընտանիքը դեռ համարվում է շատ կարևոր սոցիալական ինստիտուտ: Երրկրորդ հերթին հարցվածների 1.0%-ից քիչը 18-ից պակաս տարիքն են նշել:. Ինչպիսի տրամաբանական հիմնավորում էլ որ ունենան այս տեսակետները, որ տղամարդկանց և կանանց համար կյանքում առաջին ամուսնության լավագույն տարիքը 18-ից հետո է գալիս, շատ դրական պետք է գնահատել այն հանգամանքը, որ փաստորեն բոլոր հարցվածների տեսակետները չեն հակասում թե՛ Հայաստանի ազգային սահմանադրությանը, թե՛ ընդունված միջազգային չափորոշիչներին:

Ըստ հարցվածների մի ստվար մասի (40.8%)՝ տղամարդկանց համար ամուսնության լավագույն տարիքը 21-24 և ինչպես նաև 18-20-ն է 25 տարեկանը 36.5% -ի դեպքում, իսկ հարցվածների 21.5%-ը մատնանշել է 25-ից բարձր տարիքը:

Կանաց համար 20 տարեկանն է համարվում առաջին ամուսնության լավագույն տարիքը (ըստ հարցվածների 26.8%-ի), իսկ 18-20 և 21-24 տարիքում ամունանության կողմանկիցների մասնաբաժինները գործանականում նույնն են (մոտ 40.0%): 25-ը համարվում է առավելագույն շեմը (և ընդամենը 13.4%-ի կողմից), մինչդեռ հարցվածների 4.0% է նշել 25-ց բարձր տարիք:

Ըստ Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության՝ առաջին ամուսնության միջին տարիքը կայուն տեմպով աճում է սկսած անկախացումից և ինչպես 2014-ին, այն 26.8 էր քաղաքում բնակվող և 25.5 գյուղաբնակ կանանց համար, համապատասխանաբար 29.7 քաղաքում բնակվող և 28.9 գյուղաբնակ տղամարդկանց համար [119].

Այսպիսով, տղամարդկանց և կանանց համար ամուսնության ամենացանկալի տարիքի տարբերությունը պաշտոնական վիճակագրական տվյալների և հետազոտության շրջանակներում հարցվածների կարծիքների միջև 5-6 տարի է: Սակայն իրականում այս տարբերությունն ավելի փոքր է, քանի որ (երբեմն՝ զգալի)

[119] *Կանայք և տղամարդիկ Հայաստանում 2015.* Վիճակագրական բուկլետ. Երևան, ՀՀ, ԱՎԾ 2015, p. 23.

տարբերություն կա de facto ամուսնության և հարաբերությունների օրինականացման տարեթվերի միջև: Ըստ հին հայկական ավանդության, որն անգամ հասարակական և ընտանեկան կյանքի սովետական ռեգլամենտը չի կարողացել վերացնել, հարսանիքը և/կամ եկեղեցական ծիսակարգը հասարակական ճանաչում են շնորհում միությանը՝ անկախ օրինական գրանցումից: Հետևաբար, շատ զույգեր իրենց ամուսնությունը պաշտոնապես գրանցում են միայն երբ անհրաժեշտություն է առաջանում, իսկ ավելի հաճախ երեխայի ծնվելուց առաջ կամ հետո: Ըստ պաշտոնական վիճակագրության, մայրերի միջին տարիքն առաջին ծննդաբերության ժամանակ 24.3 տարեկանն էր 2014-ին[120]: Թեև Հայաստանում հաստատապես կան միայնակ մայրեր, արտամուսնական երեխաներ ունենալն այս երկրում հազվադեպ երևույթ է: Ըստ հարցվածների մեծամասնությանը, կնոջ համար առաջին երեխան ունենալու լավագույն տարիքը 21-23 է, որը մոտ է իրենց առաջին երեխան ունեցած մայրերի միջին տարիքին՝ ըստ պաշտոնական վիճակագրության:

Տղամարդկանց համար առաջին անգամ հայր դառնալու լավագույն հասակը ըստ հարցվածների 73.0%-ի 25-26 տարեկանն է:

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել սեռի գործոնը: Ստորև տրված **Աղյուսակ 7** ներկայացնում է միևնույն հարցերին կին և տղամարդ հարցվածների պատասխանների վերաբերյալ տվյալներ: Վիճակագրության տեսանկյունից նշանակալի հարցվածների սեռն ազդում է այդ հարցերին տված պատասխանների վրա: Տրված հարցերի պատասխանների և հարցվածների սեռի միջև կա վիճակագրական առումով նշանակալի փոխառնչակցություն, որը առաջին և երրորդ հարցերի դեպքում չափավորից ուժեղ է արտահայտված, երկրորդի, չորրորդի և հինգերորդի դեպքում՝ չափավոր, և թույլ՝ վեցերորդի դեպքում: Երբեմն տղամարդ և կին հարցվածների տեսակետներն ու վերաբերմունքը գրեթե համընկնում են, իսկ երբեմն էլ նրանք տարբեր են, շատ տարբեր:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե տղամարդը կամ կինը որ տարիքում պետք է առաջին անգամ ընկեր կամ ընկերուհի ունենա, ապա կին և տղամարդ հարցվածների ամենամեծ մասնաբաժինը նշել է 18-20 տարիքային միջակայքը՝ որպես օպտիմալ տարիք: Մյուս կողմից՝ տղամարդ հարցվածների գրեթե մեկ երրորդը կարծում են, որ

[120] Հայաստանի ազգագրական գրքույկ *2015*. Երևան, ՀՀ ԱՎԾ, 2015, p. 20.

տղամարդն ընկերուհի պետք է ունենա մինչև 18 տարեկանը, մինրդեռ կանանց ընդամենը 10.1%-ն է հարում այդ կարծիքին:

Հետաքրքիր է, որ կին հարցվածներն ունեն ավելի «պահպանողական» տեսակետներ անգամ երիտասարդ կանանց առնչությամբ:

Աղյուսակ 7. Լավագույն տարիքը

		Պատասխանները ըստ սեռի	
Տղամարդկանց համար		**Տղամարդիկ N=767**	**Կանայք N=850**
Առաջին անգամ ընկերուհի ունենալու համար	18-ից զածր	31.8%	10.1%
	18-20	46.2%	50.0%
	21-24	9.9%	13.3%
	25 և բարձր	6.4%	15.9%
	Ամուսնությունից առաջ՝երբեք	2.0%	2.5%
Կանանց համար			
Առաջին անգամ ընկեր ունենալու համար	18-ից զածր	8.1%	1.4%
	18-20	43.4%	48.2%
	21-24	12.1%	19.1%
	25 և բարձր	2.9%	7.4%
	Ամուսնությունից առաջ՝երբեք	30.8%	21.3%
Տղամարդկանց համար			
Առաջին ամուսնության համար	18-ից զածր	0.7%	0.0%
	18-20	13.3%	5.1%
	21-24	35.9%	19.5%
	25 և բարձր	48.5%	74.5%
Կանանց համար			
Առաջին ամուսնության համար	18-ից զածր	1.7%	0.2%
	18-20	47.7%	31.3%
	21-24	38.2%	44.5%
	25 և բարձր	10.7%	23.2%
Տղամարդկանց համար			
Առաջին երեխան ունենալու համար	18-ից զածր	0.3%	0.0%
	18-20	5.2%	1.8%
	21-24	28.3%	14.7%
	25 և բարձր	63.2%	81.9%
	Ամուսնությունից առաջ՝երբեք	1.4%	0.1%
Կանանց համար			
Առաջին երեխան ունենալու համար	18-ից զածր	0.4%	0.1%
	18-20	24.5%	13.9%
	21-24	54.0%	51.9%
	25 և բարձր	18.4%	32.6%
	Ամուսնությունից առաջ՝երբեք	0.7%	0.6%

Նրանց ընդամենը 1.4%-ն էր գտնում,որ երիտասարդ կանանց համար լավ կլիներ առաջին ընկերության փորձն ունենալ 18 տարեկանը չբոլորած, մինչդեռ տղամարդ հարցվածների 8.1%-ն էր այդպես կարծում:

Այս հարցին իրենց մոտեցման կարևորագույն կետը հստակորեն արտացոլում է երկակի ստանդարտները: Տղամարդ հարցվածների ընդամենը 2.0%-ն են ասել, որ տղամարդիկ չպետք է ամուսնությունից առաջ ընկերուհի ունենան, մինչդեռ

երիտասարդ կանանց դեպքում տղամարդ հարցվածների 30.8%-ը և կին հարցվածների 21.3%-ը ասել են, որ կանայք ամուսնությունից առաջ չպետք է ընկեր ունենան:

Ինչ վերաբերում է առաջին ամուսնության ամենալավ տարիքին, ապա կին և տղամարդ հարցվածների ավելի մեծ տարակարծություն կա երիտասարդ տղամարդկանց առնչությամբ և ավելի մեծ համակարծություն երիտասարդ կանանց առնչությամբ: Ամեն դեպքում կին և տղամարդ հարցվածների չնչին տոկոսն են սատարում միջազգայնորեն որպես «երեխաների ամուսնության» ճանաչված երևույթը, այն է. ամուսնություն մինչև 18 տարին լրանալը:

Կին հարցվածները կողմ են տղամարդկանց ամուսնությանն ավելի ուշ տարիքում: Նրանց ընդամենը 5.1%-ն են ուրվագծել 18-20 տարիքային սահմանը՝ որպես ամենալավ շրջան, իսկ 19.5%-ը՝ 21-24: Նրանց 74.5%ն էին կարծում ,որ 25 տարեկան ու դրանից բարձր տարիքն է ամենալավը երիտասարդ տղամարդկանց համար: Տղամարդ հարցվածների ավելի բարձր տոկոսը նշել է 18-20 և 21-24 տարիքային սահմանները (համապատասխանաբար 3.3% և 35.9%): Նրանց ամենաբարձր տոկոսը նաև նշել է 25 տարեկան և բարձր հասակը՝ երիտասարդ տղամարդկանց ամուսնության համար: Այլ կերպ ասած՝ տղամարդ հարցվածների կեսը և կին հարցվածների երեք չորրորդը երիտասարդ տղամարդկանց ավելի հասուն տարիքում ամուսնանալու կողմնակիցներ են:

Նրանց տեսակետներն այլ են երիտասարդ կանանց առաջին ամուսնության տարիքի որոշման պարագայում: Տղամարդ հարցվածների համար լավագույն տարիքը 18-20 տարեկանն է, որին հետևում է 21-24 տարեկան հասակը (համապատասխանաբար 47.7% և 28.2%): Նրանց ընդամենը 10.7%-ն է նշել 25 և բարձր տարիքայի սահմանը երիտասարդ կանանց առնչությամբ:

Երիտասարդ կանանց համար ամուսնանալու ամենապատեհ ժամանակահատվածը, ըստ կին հարցվածների, ավելի համաչափ է ՛՛բաշխված՛՛ այդ տարիքային սահմաններում: Նրանց ընդամենը 31.1%-ն է վաղ ամուսնությունների կողմնակից (18-20 տարեկան): Կին հարցվածների ամենաբարձր տոկոսը(44.5%) հավատացած են, որ լավագույն տարիքը 21-24 է: Հետաքրքրական է, որ կին հարցվածների գրեթե քառորդը երիտասարդ կանանց ամուսնության համար մատնանշել են 25 տարեկան և բարձր տարիքային սահմանը:

Այսպիսով, դատելով նրանց կարծիքներից՝ տղամարդ և կին հարցվածների զգալի տոկոսը կնախընտրեր, որ երիտասարդները և հատկապես՝ երիտասարդ տղամարդիկ ամուսնանային այնպիսի տարիքում, երբ նրանք դառնան հասարակության հասուն անդամներ և ունենան կրթություն և/կամ մասնագիտական հմտություններ ու աշխատանք:

Զարմանալի չէ, որ նմանատիպ կամ լրիվ նույնական տրամաբանությանն են ենթարկվում նաև առաջին երեխա ունենալու մասին նրանց պատասխանները: Տղամարդ և կին հարցվածների ամենամեծ մասնաբաժինը 25 տարեկան և բարձր տարիքային սահմանն է համարում առաջին երեխան ունենալու համար ամենանպատակահարմարը: Տղամարդ հարցվածների զգալի մասնաբաժինը (28.3%) մատնանշել են 21-24 տարեկան տարիքը, մինչդեռ կին հարցվածների ընդամենը 14.7%-ն է «ընտրել» այդ տարիքը:

Կին և տղամարդ հարցվածների կեսից ավելին համակարծիք են այն հարցում, որ կնոջ՝ առաջին երեխան ունենալու ամենալավ տարիքը 21-ից 24-ն է: Միևնույն ժամանակ տղամարդ հարցվածների մեկ քառորդը նշել են 18-28 տարեկանը, իսկ 18.4%-ը՝ 25 տարեկան և բարձր: Մյուս կին հարցվածները նախընտրել են 25 տարեկան և բարձր հասակը (32.6%), քան թե 18-20 տարիքային միջակայքը (13.9%):

Հակաբեղմնավորման նկատմամբ վերաբերմունք

Հակաբեղմնավորմանը վերաբերող պնդումները, որոնք ներառվել էին հիմնական հետազոտության հարցաշարի մեջ, տարասեռ են և պետք է բաժանվեն մի քանի ենթախմբերի: Հիմնական բաժանումն այն պնդումների միջև է, որոնք արտահայտում են հակաբեղմնավորման նկատմամբ վերաբերմունքև և պնդումներ, որոնք կենտրոնանում են հակաբեղմնավորիչների հասանելիության և մատչելիության վրա: Հետազոտության մասնակիցների այդ պնդումներին տված պատասխանները ներկայացված են Աղյուսակ **8**.-ում:

Աղյուսակ 8. Հակաբեղմնավորիչների նկատմամբ վերաբերմունք

Հետևյալ պնդումների հետ համաձայն հարցվածների տոկոսը

Պնդումներ հակաբեղմնավորիչների նկատմամբ վերաբերմունքի մասին	Հարցվածներ (N=1,617)
Հակաբեղմանվորիչները վատ կողմնակի ազդեցություն ունեն կանանց համար	**67.8%**
Կարծում եմ, բարոյապես սխալ է հակաբեղմնավորիչներ օգտագործել	**40.4%**

Վերոհիշյալ պնդումներից առնվազն երկուսի հետ համաձայն հարցվածների տոկոսը	***73.5%***
Սեռական զուգընկերները պետք է հակաբեղմնավորիչներ օգտագործեն, եթե նրանք պատրաստ չեն երեխա ունենալ	**78.8%**
Պնդումներ հակաբեղմնավորիչների հասանելիության և մատչելիության մասին	**Հարցվածներ (N=1,617)**
Մեր բնակավայրում կամ գյուղում դժվար է հակաբեղմնավորիչներ ձեռք բերել	**20.5%**
Հակաբեղմանվորիչներ գնելը մեր բնակավայրում կամ գյուղում ամոթալի է	**26.4%**
Հակաբեղմնավորիչները թանկ արժեն	**21.9%**
Վերոհիշյալ պնդումներից առնվազն երկուսի հետ համաձայն հարցվածների տոկոսը	***45.2%***

Հարցվածների երկու երրորդը համոզված են, որ հակաբեղմնավորիչները կողմնակի բացասական ազդեցություն ունեն կանանց համար, 16.0%-ն ասում են, որ դրանք նման վատ ազդեցություն չեն գործում, իսկ ևս 16.2%-ը սույն հարցի շուրջ կարծիք չեն հայտնել: Ծնելիության վերահսկման որոշ ժամանակակից մեթոդներ կարող են իրոք ժամանակավոր կողմնակի էֆեկտ ունենալ կանանց համար: Հարկ է նշել, որ ոչ բոլոր հակաբեղմնավորիչներն են կողմնակի էֆեկտ ունենում, ոչ բոլոր կողմնակի էֆեկտներն են վատ և նույնիսկ «վատ» կողմնակի էֆեկտները զգալիորեն գերակշռում են անցանկալի հղիության ռիսկը և հղիության ընդհատման անհրաժեշտությունը: Հակաբեղմնավորիչների նշանակությունը չպետք է թերագնահատել, քանի որ դրանք զույգերին և հատկապես կանանց հնարավորություն են տալիս վերահսկել վերարտադրողական առողջությունը և պահպանել երեխաների թիվն ու նրանց միջև տարիքային տարբերության որոշման իրավունքն ու հնարավորությունը:

Հարցվածների անկանխատեսելիորեն բարձր տոկոսը համոզված են, որ հակաբեղմնավորիչների օգտագործումը բարոյապես սխալ է (40.4%): 51.1%-ը համաձայն չեն այդ պնդմանը, իսկ 8.5% չեն արտահայտել իրենց կարծիքը:

Հակաբեղմնավորիչների օգտագործումը բարոյապես անընդունելի համարելու կոնկրետ պատճառների բացահայտումն այս ուսումնասիրության նպատակը չէր հանդիսանում:

Ամեն դեպքում հիմք չկա պնդելու, որ այդ հարցվածների զգալի մասնաբաժինը լիովին վստահ չեն, կամ որ այս միտքն ընդամենը վերացական սկզբունք է, որը կարող է վրիպել ուշադրությունից՝ կյանքի իրողությունների հետ առնչվելիս: Հարցվածների ընդամենը 13.9% են դեմ այն պնդմանը, որ սեռական զուգընկերները պետք է օգտվեն

հակաբեղմնավորման որևէ ձևից, եթե նրանք պատրաստ չեն երեխա ունենալ, մինչդեռ 78.8%-ը դրա հետ համամիտ են (իսկ 7.0%-ը չեն կողմնորոշվում): Սա նշանակում է, որ հակաբեղմնավորիչների օգտագործումը բարոյապես սխալ համարողների մոտ կեսը միևնույն ժամանակ համաձայն են, որ հակաբեղմնավորումը պետք է կիրառվի այն սեռական զուգընկերների կողմից, ովքեր պատրաստ չեն երեխա ունենալ:

Այն փաստը, որ նույն անհատներն ունեն իրարամերժ տեսակետներ, հասարակության մեջ առկա նորմատիվ կոնֆլիկտի, բարոյական նորմերի անհաստատության ու միասնաբար ընդունված արժեհամակարգի բացակայության ևս մի դրսևորում է:

Մյուս 3 պնդումները վերաբերում էին հակաբեղմնավորիչների հասանելիությանն ու մատչելիությանը: Հարցվածներին խնդրել էին գնահատել հասանելիության 2 ասպետկները: Մեկն առնչվում էր իրենց բնակավայրում հակաբեղմնավորիչների ձեռքբերման դժվարությանը: Ինչպես ցույց են տալիս Աղյուսակի տվյալները, հարցվածների 20.5%-ը հակաբեղմնավորիչների ձեռքբերումը դժվար են համարում իրենց բնակավայրում: Մյուսն առնչվում է հարցվածների ինքնազգացողությանը իրենց բնակավայրում հակաբեղնավորիչներ ձեռք բերելիս: Հարցվածների 26.4%-ի համար հակաբեղմնավորիչների ձեռքբերումն իրենց բնակավայրում կամ իրենց գյուղում ամոթալի է:

Հարցվածների 21.9%-ը համաձայն են այն պնդումների հետ, որ հակաբեղմնավորիչները մատչելի չեն: Անհրաժեշտ է նշել, որ հարցվածների ամենաբարձր տոկոսը որոշակի պատասխան չեն տվել (40.8%), մինչդեռ 36.9%-ը անհամաձայնություն են հայտնել: Ելնելով այն փաստից, որ տղամարդկանց պահպանակներն ավելի հաճախ օգտագործվում են որպես հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդ և որ դրանք հասանելի են և թանկ չեն, անհրաժեշտություն է առաջ գալիս քննելու հարցվածների տարբեր ենթախմբերը՝ ավելի լավ հասկանալու համար, թե ինչու է հարցվածների մեկ հինգերորդը համոզված, որ հակաբեղմնավորիչները մատչելի չեն: Հնարավոր բացատրություններից մեկն այն է, որ այդ հարցվածներն ի նկատի ունեն հակաբեղմնավորման այլ ժամանակակից մեթոդներ՝ ներառյալ հաբերով հակաբեղմնավորիչները, ՆԱՊերը, ներդիրները,

ներարկվող և այլն, որոնք իրոք էժան չեն և կարող են անմատչելի լինել հարցվածներ որոշ խմբերի համար:

Աղյուսակ 9 –ը ներկայացնում է ըստ սեռի տարանջատված պատասխանները հակաբեղմնավորման նկատմամբ վերաբերմունքի մասին: Մինչ Աղյուսակի տվյալներին անդրադառնալը հարկ է նշել, որ բացի չորրորդ պնդումից վիճակագրական առումով նշանակալի կապ կա հարցվածների սեռի և պնդումների հետ նրանց համաձայնության և անհամաձայնության միջև[121]:

Աղյուսակ 9. Հակաբեղմնավորիչների նկատմամբ վերաբերմունք

Կին և տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր համաձայն են հետևյալ պնդումներին

Պնդումներ հակաբեղմնավորիչների նկատմամբ վերաբերմունքի մասին	Տղամարդիկ (N=767)	Կանայք (N=850)
Հակաբեղմանվորիչները վատ կողմնակի ազդեցություն ունեն կանանց համար	64.6%	70.9%
Կարծում եմ, բարոյապես սխալ է հակաբեղմնավորիչներ օգտագործելը (Հ93)	47.3%	34.1%
Վերոհիշյալ պնդումներից առնվազն երկուսի հետ համաձայն հարցվածների տոկոսը	***72.9%***	***74.0%***
Սեռական զուգընկերները պետք է հակաբեղմնավորիչներ օգտագործեն, եթե նրանք պատրաստ չեն երեխա ունենալ (Հ96/	72.0%	84.9%
Պնդումներ հակաբեղմնավորիչների հասանելիության և մատչելիության մասին	**Տղամարդիկ (N=767)**	**Կանայք (N=850)**
Մեր բնակավայրում կամ գյուղում դժվար է հակաբեղմնավորիչներ ձեռք բերել	19.1%	21.9%
Հակաբեղմանվորիչներ գնելը մեր բնակավայրում կամ գյուղում ամոթալի է	30.9%	22.4%
Հակաբեղմնավորիչները թանկ արժեն	23.9%	21.1%
Վերոհիշյալ պնդումներից առնվազն երկուսի հետ համաձայն հարցվածների տոկոսը	***45.0%***	***45.4%***

Կին և տղամարդ հարցվածները նույն պատկերացումներն ունեն հակաբեղմնավորիչների մատչելիության և հասանելիության մեկ ասպետկի վերաբերյալ: Երկու սեռի հարցվածների գործնականորեն նույն մասնաբաժինն է դրական (այդ հարցի շուրջ բացասական) պատասխան տվել պնդումներին:

Տվյալները ցույց են տալիս, որ կին հարցվածների ավելի մեծ մասնաբաժինն է համաձայն այն պնդման հետ, որ հակաբեղմնավորիչները վատ կողմնակի

[121] Բոլոր պնդումների դեպքում, բացի չորրորդից, անվանական արժեքն ավելի ցածր է, քան անվանական մակարդակը/ 0.05/. Սակայն կապի հաստատունությունը թույլ է կամ չափազանց թույլ

ազդեցություն ունեն կանանց համար, մինչդեռ միևնույն ժամանակ ի համեմատություն տղամարդկանց՝ կանանց զգալիորեն փոքր տոկոսն է համոզված, որ հակաբեղմնավորիչների օգտագործումը բարոյապես սխալ է: Հետևաբար զարմանալի չէ, կին հարցվածների բավականին մեծ տոկոսը համաձայն են այն պնդման հետ, ըստ որի սեռական զուգընկերները պետք է օգտագործեն հակաբեղմնավորման որևէ ձև, եթե նրանք պատրաստ չեն երեխա ունենալ: Կարող էր թվալ, որ բոլոր այս դեպքերում կանայք ավելի շուտ իրենց սեփական փորձից են խոսում կամ գիտակցելով այն փաստը, որ հակաբեղմնավորիչներ օգտագործել/ չօգտագործելու որոշումների հետևանքներն ավելի շատ կրում են կանայք, քան տղամարդիկ:

Հարկ է նշել, որ ի համեմատություն տղամարդկանց՝ կանանց ավելի փոքր տոկոսն է իրենց բնակավայրում հակաբեղմնավորիչ գնելը շփոթեցուցիչ համարում:

***

Ընտրանքի՝ տարբեր կենսագրական բնութագրիչների վրա հիմնվող ենթախմբերը ևս տարբեր են, ինչպես երևում է աղյուսակային տվյալների խաչաձևումից վիճակագրական **Աղյուսակ 9-ում**:

Խոշոր հաշվով վիճակագրության առումով հետաքրքրություն ներկայացնող փոխպայմանավորվածություն չկա հարցվածների ***տարիքի*** և պնդումներին տված պատասխանների միջև: Բացառությաւո են կազմուում միայն առաջին և հինգերորդ պնդումները (համապատասխանաբար p=0.015 և p=0.004), սակայն նրանց միջև առկա կապը շատ թույլ է: Կարելի է գալ այն փորձնական եզրակացությանը, որ այլ գործոնները միատեսակ ազդեցություն են ունենում մարդկանց կարծիքների ձևավորման վրա տարբեր տարիքային խմբերում:

Վիճակագրության տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում հարցվածների ***կրթական մակարդակի*** և հակաբեղմնավորմանը վերաբերող խնդիրների միջև կապն արտացոլող բոլոր պնդումները, բացի մեկից (tԱղյուսակի երրորդ պնդումը), սակայն այդ կապը չափազանց թույլ է: Ինչպես շատ այլ դեպքերում, հարցվածների կրթամակարդակը հակադարձորեն փոխկապակցված է պնդումների հետ նրանց համակարծությանը: Այլ կերպ ասած՝ ինչան ավելի բարձր է կրթամակարդկը, այնքան ավելի փոքր է այն հարցվածների մասնաբաժինը, ովքեր համաձայն են պնդումներին: Այս տարբերությունը հատկապես տեսանելի է

ընդհանուր միջնակարգ և բարձրագույն կրթություն ունեցողների միջև: Օրինակ, ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցող հարցվածների 63.1%-ին հակադրվում են բարձրագույն կրթություն ունեցողների ընդամենը 26.7%-ը, ովքեր գտնում են, որ հակաբեղմնավորիչների օգտագործումը բարոյապես սխալ է:

Աղյուսակ 10. Հակաբեղմնավրման նկատմամբ վերաբերմունք

Հետևյալ պնդումների հետ համաձայն հարցվածների տոկոսը ըստ կենսագրական բնութագրիչների**

Կենսագրական բնութագրիչներ	Հակաբեղմանվորիչները վատ կողմնակի ազդեցություն ունեն կանանց	Կարծում եմ, բարոյապես սխալ է հակաբեղմնավորիչներ օգտագործել	Սեռական զուգընկերները պետք է հակաբեղմնավորիչներ օգտագործեն, եթե նրանք պատրաստ չեն երեխա ունենալ	Մեր բնակավայրում կամ գյուղում դժվար է հակաբեղմնավորիչներ ձեռք բերել	Հակաբեղման վորիչներ գնելը մեր բնակավայրում կամ գյուղում ամոթալի է	Հակաբեղմնավորիչները թանկ արժեն	Հարցվածների թիվը N = 1,617
Տարիքը							
18-24	68.5%	37.1%	80.0%	17.8%	33.2%	19.9%	**286**
25-34	66.4%	39.5%	77.8%	22.3%	26.7%	24.1%	**461**
35-49	67.0%	41.6%	80.4%	20.9%	21.2%	22.0%	**541**
50-59	70.9%	42.6%	76.3%	20.0%	28.5%	20.4%	**329**
Կրթությունը							
Հիմնական	(71.8%)	(63.1%)	(65.2%)	(47.8%)	(52.2%)	(28.2%)	**46**
Միջնակարգ	69.1%	48.4%	78.4%	24.1%	33.1%	24.9%	**727**
Միջին մասնագիտական	68.2%	39.4%	79.0%	21.3%	24.3%	21.3%	**371**
Բարձրագույն	65.5%	26.7%	80.8%	11.9%	15.2%	17.2%	**472**
Ամուսնական կարգավիճակը ****							
Գրանցված ամուսնություն	68.0%	41.2%	79.7%	21.9%	25.6%	22.5%	**941**
Չգրանցված ամուսնություն	65.2%	41.0%	77.5%	25.3%	23.6%	23.0%	**178**
Ընկերուհի (համատեղ կյանք չեն վարում)	(70.3%)	(51.3%)	(70.3%)	(21.6%)	(37.8%)	(29.7%)	**37**
Չամուսնացած	66.5%	37.7%	78.9%	15.1%	30.8%	18.1%	**337**
Բաժանված/ամուսնալուծված	70.3%	28.4%	78.4%	18.9%	21.6%	23.0%	**74**
Այրի	(75.0%)	(53.2%)	(71.9%)	(9.4%)	(15.6%)	(25.0%)	**32**
Բնակության վայրը							
Երևան	64.9%	29.8%	81.6%	10.6%	17.0%	17.0%	**570**

Այլ քաղաքային	71.3%	41.3%	66.9%	16.9%	24.8%	23.1%	**472**
Գյուղական	68.0%	50.1%	77.5%	33.3%	37.1%	25.7%	**575**
Ընդամենը	**67.8%**	**40.4%**	**78.8%**	**20.5%**	**26.4%**	**21.9%**	**1,617**
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թիվը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:							

** Տվյալների հեշտ ներկայացման, համեմատության և վերլուծության նպատակով «խիստ կողմ եմ» և «կողմ եմ» պատասխանները միավորվել են՝ տրված պնդման հետ համամիտ հարցվածների տոկոսը որոշելու համար.
*** Քանի որ «Տարրական կամ ավելի ցածր կրթություն» կատեգորիայում կար ընդամենը 1 հարցված, այդ կատեգորիան չի ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 1,616):
**** Քանի որ «Ոչ ֆորմալ միություն/ համատեղ կյանք» կատեգորիայում ընդամենը 18 հարցվածներ կային, այդ կատեգորիան չէր ներկայացվել (հետևաբար հարցվածների ընդհանուր թիվն այս սեկցիայում 1,599 է):

Հարցվածների ***ամուսնական կարգավիճակի*** և հակաբեղմնավորման մասին նրանց տեսակետների փոխառնչակցությունը վիճակագրության համար հետաքրքրություն չի ներկայացնում՝ միայն բացառությամբ հինգերորդ պնդման, որը վերաբերում է հարցվածների անհարմարությանը իրենց բնակավայրում հակաբեղմնավորիչներ գնելու: Հարկ է նշել, որ ամենաքիչն այդ զգացողությունն ունենում են այրիները (15.6%), որոնց հետևում են իրենց զուգընկերոջից բաժանված կամ ամուսնալուծված հարցվածները (21.6%): Գրանցված կամ չգրանցված/քաղաքացիական կարգով/ ամուսնությամբ հարցվածները միջանկյալ դիրքում են: Նրանց համապատասխանաբար 23.6% և 25.6% կազմող մասնաբաժինները գտնում են, որ իրենց բնակավայրում կամ գյուղում հակաբեղմնավորիչներ գնելը ամոթալի է: Այս կարծիքն են կիսում նաև չամուսնացածները (30.8%) և, հատկապես, ընկեր կան ընկերուհի ունեցող, բայց միասին չապրող հարցվածները (37.8%).

Որպես գործոն՝ բնակության վայրն իր ազդեցությունն է գործում հարցվածների՝ հակաբեղմանվորիչներին առնչվող պնդումների մասին կարծիքների վրա: Բնակության վայրի և վերոհիշյալ պնդումների մասին կարծիքների միջև առկա է վիճակագրության համար հետաքրքրություն ներկայացնող փոխառնչակցություն՝ բացառությամբ երրորդ պնդման: Ինչպես և նախորդ շատ դեպքերում, ամենամեծ տարբերությունը երևանաբնակների և գյուղաբնակների միջև է, մինչդեռ միջանկյալ դիրքում են այլ քաղաքային բնակավայրերի բնակիչները: Օրինակ, ի հակադրություն գյուղաբնակների 50.1%-ի՝ երևանաբնակների ընդամենը 29.8%-ն է համոզված, որ հակաբեղմնավորիչների օգտագործումը բարոյապես սխալ է (այդ կարծիքը կիսող այլ քաղաքային բնակավայրերի բնակիչների մասնաբաժինը կազմում է 41.3%): Քիչ չեն

նաև տարբերությունները իրենց բնակավայրում հակաբեղմնավորիչների ձեռքբերմանն առնչվող դժվարությունների միջև (համապատասխանաբար 10.6% և 33.3%), իսկ դրա առաջացրած շփոթմունքի դեպքում (համապատասխանաբար 17.0% և 37.1%).

Անհրաժեշտ է նշել, որ երրորդ պնդման մասին հարցվածների տեսակետները միակ փոփոխականն են, որը կապված չէ մնացած 4 հիմնական փոփոխականներին (կենսագրական բնութագրիչներին) և իրենից հետաքրքրություն չի ներկայացնում վիճակագրության տեսակետից:

Հակաբեղմնավորման խնդրի շուրջ հետազոտության տվյալները կարելի է հետագա քննության ենթարկել գենդերային տեսանկյունից: **Աղյուսակներ 10 և 11-ի** տվյալները ցույց են տալիս, որ ***տարիքն*** ուժեղ ազդեցություն ունեցող գործոն չէ: Տղամարդ հարցվածների դեպքում, տարիքի ազդեցությունը հակաբեղմնավորմանը վերաբերող պնդումների մասին իրենց կարծիքների վրա նշանակալի չէ, մինչդեռ կին հարցվածների պարագայում առնչությունն ակներև է միայն երկրորդ, չորրորդ և հինգերորդ պնդումների դեպքում, իսկ ընդհանուր առմամբ կապը բավականին թույլ է: Ինչ վերաբերում է այն պնդումներին, որ հակաբեղմանվորում օգտագործելը բարոյապես սխալ է, իսկ հակաբեղմնավորիչների ձեռքբերումը իրենց բնակավայրում և գյուղում՝ դժվար, ապա այս դեպքում փոխառնչակցությունը դրական է, այսինքն՝ այն այդ պնդումների հետ համաձայն կին հարցվածների մասնաբաժինն աճում է տարիքի հետ: Հատկապես ակներև տարբերություն կա ընտրանքի ամենաերիտասարդ և ամենատարեց կանանց միջև: Երկրորդ պնդման մասնաբաժինները կազմում են համապատասխանաբար 27.8% և 39.6%, իսկ չորրորդ պնդման դեպքում՝ համապատասխանաբար 18.0% և 23.0%: Հինգերորդ պնդման դեպքում այդ կապն անմիջական չէ: Մինչ կանանց ավելի երիտասարդ խմբերը հակված են հակաբեղմնավորիչներ գնելիս շփոթվածություն զգալուն (30.1% -ը ամենաերիտասարդ խմբում և 22.2%-ը դրան հաջորդող տարիքային խմբում), կանանց ամենամեծ տարիքային խումբը երկրորդ տեղն է զբաղեցնում շփոթմունքի զգացում ունեցողների մասնաբաժնով (25.9%).

Աղյուսակ 11. Վերաբերմունք հակաբեղմնավորման նկատմամբ. Տղամարդիկ

Հետևյալ պնդումների հետ համաձայն բոլոր հարցվածների տոկոսը՝ ըստ կենսագրական բնութագրիչների**

Կենսագրական բնութագրիչներ	Հակաբեղման վորիչները վատ կողմնակի ազդեցություն ունեն կանանց համար	Կարծում եմ, բարոյապես սխալ է հակաբեղմնավորիչներ օգտագործել	Սեռական զուգընկերները պետք է հակաբեղմնավորիչներ օգտագործեն, եթե նրանք պատրաստ չեն երեխա ունենալ	Մեր բնակավայրում կամ գյուղում դժվար է հակաբեղմնավորիչներ ձեռք բերել	Հակաբեղմանավորիչները գնելը մեր բնակավայրում կամ գյուղում ամոթալի է	Հակաբեղմնավորիչները թանկ արժեն	Տղամարդկանց թիվը N = 767
Տարիքը							
18-24	56.0%	45.1%	73.2%	17.7%	35.9%	23.6%	**153**
25-34	63.6%	46.9%	71.8%	22.5%	32.0%	27.3%	**209**
35-49	62.4%	50.0%	73.6%	18.4%	26.4%	21.6%	**250**
50-59	67.7%	45.8%	68.3%	16.8%	31.6%	18.1%	**155**
Կրթությունը							
Հիմնական	(75.0%)	(62.6%)	(56.3%)	(43.8%)	(53.2%)	(34.4%)	**32**
Միջնակարգ	65.5%	51.4%	75.2%	20.9%	35.0%	23.8%	**403**
Միջին մասնագիտական	60.4%	46.0%	65.1%	18.2%	30.2%	19.8%	**126**
Բարձրագույն	63.6%	37.8%	72.4%	12.2%	19.9%	20.9%	**206**
Ամուսնական կարգավիճակը ***							
Գրանցված ամուսնություն	64.2%	47.8%	71.3%	17.7%	29.4%	21.0%	**408**
Չգրանցված ամուսնություն	60.2%	48.2%	74.7%	22.9%	31.3%	22.9%	**83**
Ընկերուհի (համատեղ կյանք չեն վարում)	(64.2%)	(57.1%)	(67.8%)	(25.0%)	(39.3%)	(32.1%)	**28**
Չամուսնացած	64.8%	46.0%	73.7%	18.4%	33.4%	24.4%	**213**
Բաժանված/ ամուսնալուծված	(75.0%)	(37.5%)	(72.5%)	(29.2%)	(25.0%)	(25.0%)	**24******
Այրի	*	*	*	*	*	*	**2**
Բնակության վայրը							
Երևան	61.2%	34.9%	73.7%	9.3%	17.4%	16.7%	**258**
Այլ քաղաքային	70.3%	50.4%	65.9%	15.1%	31.9%	23.4%	**226**
Գյուղական	62.9%	56.2%	75.3%	31.1%	42.4%	27.9%	**283**
Ընդամենը	**64.6%**	**47.3%**	**72.0%**	**19.1%**	**30.9%**	**23.9%**	**767**
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թիվը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:							

** Տվյալների հեշտ ներկայացման, համեմատության և վերլուծության նպատակով «խիստ կողմ եմ» և «կողմ եմ» պատասխանները միավորվել են՝ տրված պնդման հետ համամիտ կանանց տոկոսը որոշելու համար..

*** Քանի որ «Ոչ ֆորմալ միություն/ համատեղ կյանք» կատեգորիայում ընդամենը 9 հարցվածներ կային, այդ կատեգորիան չէր ներկայացվել (հետևաբար հարցվածների ընդհանուր թիվն այս սեկցիայում 758).

**** Սահմանագծային դեպքերի տվյալները լրիվ վավեր են համարվում:

Վիճակագրության տեսակետից ***կրթական*** գործոնը մեծ դերակատարում ունի բոլոր պնդումների պարագայում՝ բացի երկուսից (առաջին և երրորդ պնդումները տղամարդ հարցվածների դեպքում և երրորդ և վեցերորդ պնդումները՝ կին հարցվածների դեպքում): Սույն օրինաչափությունը նորույթ չէ: Այն հարցի առնչությամբ, որ հակաբեղմնավորիչների օգտագործումը բարոյապես սխալ է, իսկ դրանց ձեռքբերումը՝ դժվար կան շփոթեցուցիչ, ավելի բարձր կրթամակարդակ ունեցողներն ամենաքիչ մասնաբաժինն են կազմում:

Աղյուսակ 12. Վերաբերմունք հակաբեղմնավորման նկատմամբ. Կանայք

Հետևյալ պնդումների հետ համաձայն բոլոր հարցվածների տոկոսը՝ ըստ կենսագրական բնութագրիչների**

Կենսագրական բնութագրիչներ	Հակաբեղման վորիչները վատ կողմնակի ազդեցություն ունեն կանանց համար	Կարծում եմ, բարոյապես սխալ է հակաբեղմնավորիչներ օգտագործել	Սեռական զուգընկերները պետք է հակաբեղմնավորիչներ օգտագործեն, եթե նրանք պատրաստ չեն երեխա ունենալ	Մեր բնակավայրում կամ գյուղում դժվար է հակաբեղմնավորիչներ ձեռք բերել	Հակաբեղմանվորիչներ գնելը մեր բնակավայրում կամ գյուղում ամոթալի է	Հակաբեղմնավորիչները թանկ արժեն	Կանանց թիվը N = 850
Տարիքը							
18-24	71.5%	27.8%	88.0%	18.0%	30.1%	15.8%	**133**
25-34	68.6%	33.4%	82.9%	21.8%	22.2%	21.4%	**252**
35-49	70.8%	34.4%	86.2%	23.0%	16.8%	22.3%	**291**
50-59	73.6%	39.6%	83.3%	23.0%	25.9%	22.5%	**174**
Կրթությունը * **							
Հիմնական	(64.2%)	(64.3%)	(85.7%)	(57.1%)	(50.0%)	(14.2%)	**14**
Միջնակարգ	73.4%	44.7%	82.4%	28.3%	30.9%	26.2%	**324**
Միջին մասնագիտական	72.3%	35.9%	86.1%	22.9%	21.2%	22.2%	**245**
Բարձրագույն	66.9%	18.1%	87.2%	11.7%	117%	14.3%	**266**
Ամուսնական կարգավիճակը ** **							
Գրանցված ամուսնություն	70.9%	36.2%	86.1%	25.1%	22.7%	23.7%	**533**
Չգրանցված ամուսնություն	69.5%	34.7%	80.0%	27.3%	16.9%	23.2%	**95**
Ընկեր (համատեղ կյանք չեն վարում)	*	*	*	*	*	*	**9**
Չամուսնացած	69.4%	23.4%	88.1%	9.6%	26.6%	7.2%	**124**

Բաժանված/ ամուսնալուծ ված	68.0%	24.0%	86.0%	14.0%	24.0%	22.0%	**50**
Այրի	(76.7%)	(53.3%)	(73.3%)	(10.0%)	(16.7%)	(23.3%)	**30**
Բնակության վայրը							
Երևան	68.0%	25.6%	88.2%	11.5%	16.7%	17.3%	**312**
Այլ քաղաքային	72.0%	32.9%	87.0%	18.7%	18.3%	22.8%	**246**
Գյուղական	72.9%	44.1%	79.8%	35.6%	31.9%	23.6%	**292**
Ընդամենը	**70.9%**	**34.1%**	**84.9%**	**21.9%**	**22.4%**	**21.1%**	**850**
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թիվը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:							

** Տվյալների հեշտ ներկայացման, համեմատության և վերլուծության նպատակով «խիստ կողմ եմ» և «կողմ եմ» պատասխանները միավորվել են՝ տրված պնդման հետ համամիտ կանանց տոկոսը որոշելու համար

*** Քանի որ «Տարրական կամ ավելի ցածր կրթություն» կատեգորիայում կար ընդամենը 1 հարցված, այդ կատեգորիան չի ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 849):

**** Քանի որ «Ոչ ֆորմալ միություն/ համատեղ կյանք» կատեգորիայում ընդամենը 9 հարցվածներ կային, այդ կատեգորիան չէր ներկայացվել (հետևաբար հարցվածների ընդհանուր թիվն այս սեկցիայում 841 է):

Ըստ վիճակագրության՝ տղամարդ և կին հարցվածների ***ամուսնական կարգավիճակը*** գործնականորեն չի ազդում հակաբեղմանվորման մասին նրանց տեսակետների վրա:

Բնակության վայրը մեծամասամբ վիճակագրության համար կարևոր գործոն է թե՛ կին և թե՛ տղամարդ հարցվածների պարագայում, հատկապես՝ երկրորդ, չորրորդ և հինգերորդ պնդումների դեպքում: Երևանաբնակ կին և տղամարդ հարցվածների մասնաբաժինները, ովքեր համոզված են, որ հակաբեղմնավորիչների օգտագործումը բարոյապես սխալ է, առնվազն 1.5 անգամ զիջում է գյուղաբնակ կին և տղամարդ հարցվածների մասնաբաժինը: Տարբերություն ավելի մեծ է այն դեպքում, երբ հարցվածները խոստովանում են, որ իրենք ամաչում են կամ դժվարանում են իրենց բնակավայրում հակաբեղմնավորիչներ գնելիս:

Հղիության ընդհատումը

Հղիության ընդհատումը կարևոր սոցիալական խնդիր է, քանի որ այն զգալի ազդեցություն է թողնում կանանց ֆիզիկական, սեռական և հոգեկան առողջության, հարաբերությունների և ընտանեկան կյանքի վրա և հետևանքներ է թողնում նաև հասարակության շրջանում:

Հղիության արհեստական ընդհատումները Հայաստանում օրինական են համարվում մինչև 12 շաբաթական լինելը և մինչև 22 շաբաթական շրջանը բժշկական և սոցիալական պատճառներով: Երկար տարիներ հղիության ընդհատումը համարվել է երկրում ծնելիության վերահսկման հիմնական մեթոդներից մեկը:

Հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդների համեմատաբար ցածր տարածվածությունը մեծացնում է չկանխատեսված կամ անցանկալի հղիությունների հավանականությունը, ինչպես նաև հղիության ընդհատման հեռանկարը:

Հետազոտության շրջանակներում հարցվածներին խնդրել են հայտնել իրենց համաձայնությունը կամ անահամաձայնությունը մի շարք պնդումների վերաբերյալ, որոնք արդարացնում են կնոջ կողմից հղիության ընդհատումը մի շարք պատճառներով:

Ստորև՝ **Աղյուսակ 13** –ում ներկայացված են առաջարկված պնդումների հետ համամիտ հարցվածների տոկոսները: Ինչպես երևում է Աղյուսակի տվյալներից շատ դեպքերում հարցվածների բավական մեծ մասնաբաժինը համաձայնվել էր, որ մանրամասնորեն ներկայացված հանգամանքները արդարացնում էին կնոջ կողմից հղիության ընդհատման որոշումը: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ միայն մեկ կարևոր բացառությամբ՝ հարցվածների կեսից ավելին այդ պնդումներին դեմ են հանդես եկել: Այլ կերպ ասած՝ հարցվածների մեծ մասը թվարկված պատճառներն օրինական չեն համարում և ոչ էլ հղիության ընդհատման բավարար հիմք են դիտարկում: Հղիության ընդհատման միակ պատճառը, որը կարող է ընդունելի լինել հարցվածների ճնշող մեծամասնության համար (88.9%) այն դեպքում է, երբ հղիությունը կարող է վնաս հասցնել կնոջ առողջությանը: Սակայն նույնիսկ այդ արդարացումը համոզիչ չէ հարցվածների 9.5%-ի համար և նրանք կամ դեն են, կամ խիստ դեմ են այդ պնդմանը:

Աղյուսակ 13. Հղիության ընդհատում

Հետևյալ պնդումների հետ համաձայն հարցվածների տոկոսը

Պնդումներ Կինը կարող է հղիությունն ընդհատել հետևյալ դեպքերում	Հարցվածներ (N=1,617)
Ընտանիքն ունի բավարար թվով երեխաներ	**47.6%**
Ընտանիքում կան բավական թվով որդիներ	**40.6%**

Ընտանիքում կան բավական թվով դուստրեր	**41.3%**
Հղիությունը պլանավորված չէ կամ անցանկալի է	**43.6%**
Դժվար կլինի ևս մի երեխայի ապահովելը	**44.2%**
Պտուղն իգական սեռի է	**12.2%**
Հղիությունը կարող է վնասել նրա առողջությանը	**88.9%**
Վերոհիշյալ պնդումներից առնվազն երկուսի հետ համաձայն հարցվածների տոկոսը	**93.7%**

Հղիության ընդհատման պատճառների ցանկում ամենաընդունելի պատճառն այն է, որ ընտանիքն արդեն ունի շատ երեխաներ (47.6%): Կարևոր է նշել, որ թեև այս պնդման մեղմացված տարբերակի հետ համամիտ հարցվածների տոկոսն ավելի ցածր է (երբ ընտանիքում երեխաների սեռն արդեն որոշված է), գենդերային կանխակալ կարծիք չկա: Հարցվածների գործնականորեն նույն տոկոսն է գտնում, որ կնոջ կողմից հղիության ընդհատման հիմնարար պատճառ կարող է լինել ընտանիքում բավարար թվով որդիներ և դուստրեր ունենալը:

Նույնիսկ ավելի էական կարևորություն ունի այն փաստը, որ ընտրանքի բնակչության ընդամենը 12.2%-ն է արադարացնում սեռով պայմանավորված հղիության ընդհատումները (ընդդեմ անհամաձայնություն հայտնողների 86.3%-ի):

Հղիության ընդհատման վերաբերյալ տղամարդկանց և կանանց պատասխանների տարբերությունները կանխատեսելի էին: Սակայն որոշ դեպքերում անկանխատեսելի էր ոչ թե տարբերությունների խորությունը, այլ «ուղղությունը»: Զարմանալի չէ, որ հղիության ընդհատումն արդարացնող կանանց տոկոսը տղամարդկանց տոկոսից բարձր է. զարմանալին այն է, որ անկախ հիմնավորումներից վիճակագրությունն այդպիսին է:

Համապատասխան հետազոտության տվյալները նեկայացված են ստորև՝ **Աղյուսակ 14–ում:** Հարկ է նշել, որ վիճակագրության տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնաում (մեկ բացառությամբ) հարցվածների սեռի և հղիության ընդհատման տարբեր հիմնավորումների նկատմամբ նրանց վերաբերմունքի փոխկապակցվածությունը[122].

[122] Միակ բացառությունը վեցերորդ պնդումն է , որն արդարացնում է հղիության ընդհատումը, եթե պտուղը իգական սեռի է: Մնացած բոլոր դեպքերում անվանական արժեքը p=0.000է, իսկ կապի հաստատունությունը թույլ է կամ չափավոր՝ բացի վերջին պնդումից, որտեղ p=0.27 է և կապի հաստատունությունը չափազանց թույլ է:

Աղյուսակ 14. Հղիության ընդհատում
Հետևյալ պնդումների հետ համաձայն կին և տղամարդ հարցվածների տոկոսը

Պնդումներ Կինը կարող է հղիությունն ընդհատել հետյալ դեպքերում	Տղամարդիկ (N=767)	Կանայք (N=850)
Ընտանիքն ունի բավարար թվով երեխաներ	**36.1%**	**58.0%**
Ընտանիքում կան բավական թվով որդիներ	**32.4%**	**48.1%**
Ընտանիքում կան բավական թվով դուստրեր	**33.1%**	**48.6%**
Հղիությունը պլանավորված չէ կամ անցանկալի է	**33.0%**	**53.1%**
Դժվար կլինի ևս մի երեխայի ապահովելը	**35.3%**	**52.2%**
Պտուղն իգական սեռի է	**11.4%**	**13.0%**
Հղիությունը կարող է վնասել նրա առողջությանը	**88.2%**	**89.7%**
Վերոհիշյալ պնդումներից առնվազն երկուսի հետ համաձայն հարցվածների տոկոսը	**92.7%**	**94.6%**

Կանանց և տղամարդկանց պատասխանների միջև նվազագույն տարբերություն է արձանագրվել երկու դեպքերում: Առաջինը կանխատեսելի էր, քանի որ այն առնչվում էր կնոջ առողջությանը և հիմնականում գրեթե միասնական համակարծություն կա այն հարցում, որ եթե հղիությունը կարողանար վնասել կնոջ առողջությանը, ապա դա հղիության ընդհատման բավարար հիմք կհանդիսանար: Երկրորդ դեպքն առնչվում է երեխայի սեռով պայմանավորված հղիության ընդհատումներին: Թեև ըստ վիճակագրական տվյալների հղիության ընդհատմանը կողմ հանդես գալը կապված չէ երեխայի սեռի հետ, դեռևս շատ զարմանալի է այն հանգամանքը, որ կանանց մի մասնաբաժինն այդ հիմնավորումն ընդունելի է համարում:

Հարկ է նշել, որ ըստ հետազոտության տվյալների, հղիության ընդհատման հարցը քննարկելիս նյութական, ֆինանսական և սոցիալական նկատառումները շատ ավելի կարևոր են թվում կանանց, քան տղամարդկանց համար: Կին հարցվածների մասնաբաժինը, ովքեր համաձայն են կնոջ կողմից հղիության ընդհատմանն այն դեպքերում, երբ ընտանիքն արդեն բազմազավակ է և ունի որդիներ ու դուստրեր, երբ դժվար կլինի ևս մի երեխայի ապահովելը և երբ հղիությունը պլանավորված չէ կամ անցանկալի է, առնվազն 1.5 անգամ գերազանցում է համաձայնություն հայտնած տղամարդ հարցվածներին: Եվ ոչ միայն այդ դեպքում է կին հարցվածների մասնաբաժինը գերազանցում տղամարդկանց, այլ ընդհանուր առմամբ կին

հարցվածների մոտ կեսը կամ կեսից ավելին իրենց համաձայնությունն են հայտնել առաջին հինգ պնդումների վերաբերյալ՝ ի հակադրություն տղամարդ հարցվածների մեկ երրորդի:

Ինչ վերաբերում է որոշ հիմնական կենսաչափական բնութագրերի ազդեցությանը պնդումների մասին հարցվածների կարծիքի վրա, ապա համապատասխան տվյալները ներկայացված են **Աղյուսակ 15-ում:**

Աղյուսակ15. Հղիության ընդհատման նկատմամբ վերաբերմունքը

Հետևյալ պնդումների հետ համաձայն կին և տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունն ***ըստ կենսագրական բնութագրիչների***[**]

Կինը կարող է հղիությունն ընդհատել հետևյալ դեպքերում								
Կենսագրական բնութագրիչների	Ընտանիքն ունի բավարար թվով երեխաներ	Ընտանիքում կան բավական թվով որդիներ	Ընտանիքում կան բավական թվով դուստրեր	Հղիությունը պլանավորված չէ կամ անցանկալի է	Դժվար կլինի նս մի երեխայի ապահովելը	Պտուղն իգական սեռի է	Հղիությունը կարող է վնասել նրա առողջությանը	Հարցվածների թիվը **N = 1,617**
Տարիքը								
18-24	32.5%	25.9%	26.2%	32.5%	31.1%	5.9%	85.3%	**286**
25-34	46.9%	39.5%	40.8%	42.6%	43.0%	12.8%	89.8%	**461**
35-49	52.5%	46.6%	46.4%	47.5%	48.4%	14.0%	89.5%	**541**
50-59	53.8%	45.6%	46.7%	48.1%	50.3%	13.7%	89.9%	**329**
Կրթությունը ***								
Հիմնական	(47.8%)	(45.6%)	(47.9%)	(43.5%)	(43.5%)	(17.4%)	(87.0%)	**46**
Միջնակարգ	48.5%	42.9%	43.0%	44.2%	44.5%	16.5%	87.5%	**727**
Միջին մասնագիտական	53.6%	46.4%	46.6%	45.0%	50.7%	11.6%	88.9%	**371**
Բարձրագույն	41.5%	32.4%	33.9%	41.5%	38.8%	5.5%	81.3%	**472**
Ամուսնական կարգավիճակը ****								
Գրանցված ամուսնություն	52.7%	45.6%	46.4%	47.8%	49.2%	13.0%	90.7%	**941**
Չգրանցված ամուսնություն	52.3%	42.1%	42.1%	45.5%	48.9%	11.8%	90.4%	**178**
Ընկեր/ընկերուհի (համատեղ կյանք չեն վարում)	(27.0%)	(18.9%)	(18.9%)	(27.0%)	(27.0%)	(8.1%)	(78.4%)	**37**
Չամուսնացած	31.2%	25.8%	27.0%	30.6%	28.8%	7.7%	84.0%	**337**
Բաժանված/ամուսնալուծված	50.0%	46.0%	43.2%	46.0%	44.6%	16.2%	89.2%	**74**
Այրի	(56.2%)	(46.9%)	(46.9%)	(56.3%)	(56.3%)	(15.7%)	(90.7%)	**32**
Բնակության վայրը								

Երևան	40.0%	30.5%	31.1%	34.3%	39.0%	6.1%	88.2%	**570**
Այլ քաղաքային	46.4%	40.9%	42.5%	44.3%	42.6%	12.7%	89.6%	**472**
Գյուղական	56.2%	50.6%	50.3%	52.1%	50.6%	17.7%	89.1%	**575**
Ընդամենը	**47.6%**	**40.6%**	**41.3%**	**43.6%**	**44.2%**	**12.2%**	**88.9%**	**1,617**
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թվային տվյալը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:								

** Տվյալների հեշտ ներկայացման, համեմատության և վերլուծության նպատակով «խիստ կողմ եմ» և «կողմ եմ» պատասխանները միավորվել են՝ տրված պնդման հետ համամիտ հարցվածների տոկոսը որոշելու համար.
*** Քանի որ «Տարրական կամ ավելի ցածր կրթություն» կատեգորիայում կար ընդամենը 1 հարցված, այդ կատեգորիան չի ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 1,616):
**** Քանի որ «Ոչ ֆորմալ միություն/ համատեղ կյանք» կատեգորիայում ընդամենը 18 հարցվածներ կային, այդ կատեգորիան չէր ներկայացվել (հետևաբար հարցվածների ընդհանուր թիվն այս սեկցիայում 1,599 է):

Վիճակագրության տեսակետից ***տարիքային*** գործոնն ուղիղ առնչություն ունի նրանց կարծիքին, թեպետև այդ կապը բավականին թույլ է, հատկապես վերջին 2 պնդումների դեպքում (Վերջին պնդումն ընդհանուր առմամբ հատուկ դեպք է, քանի որ կնոջ առողջությանը հասցված վնասն է նշվում որպես հղիության ընդհատման պատճառ):

Փոխառնչակցությունը դրանկան է այն առումով, որ ինչքան մեծ է տարիքը, այնքան մեծ է այն հարցվածների մասնաբաժինը, ովքեր համաձայն են պնդումներին: Այլ կերպ ասած՝ երիտասարդ հարցվածները գրեթե հակված չեն համաձայնելու հղիության ընդհատման որևէ պատճառաբանությանը: Հատկապես զգալի տարբերություն կա ամենաերիտասարդ խմբի և մնացած հարցվածների միջև:

Պետք է նշել, որ ***կրթությունն*** այս դեպքում ազդեցիկ գործոն չէ: Նույնիսկ երբ վիճակագրության համար կարևոր առնչակցություն կա, այն չափազանց թույլ է: Աղյուսակի տվյալները նաև ցույց են տալիս, որ բացակայում է կայուն, առավել ևս՝ միատեսակ որևէ օրինաչափություն:

Ինչպես և կրթությունը, ***ամուսնական կարգավիճակը*** շատ քիչ ազդեցություն ունի և միայն առաջին 5 պնդումների դեպքում: Այն հարցվածները, ովքեր ամուսնացած չեն կամ ովքեր ընկեր կամ ընկերուհի ունեն, սակայն իրար հետ չեն ապրում, ամենաքիչն են հակված արդարացնելու հղիության ընդհատումը՝ անկախ դրա պատճառներից: Դա զարմանալի չէ, քանի որ այս 2 սոցիալ-ազգագրական խմբերը կազմված են գերազանցապես ավելի երիտասարդ մարդկանցից, ովքեր, ինչպես արդեն նշվել է, հակված չեն համաձայնվել հղիության ընդհատումն արդարացնող պնդումների հետ:

Մյուս կողմից, մյուս 4 խմբերում պնդումների հետ համամիտ անձանց մասնաբաժինը շատ ավելի մեծ է (օրինական կամ քաղաքացիական կարգով

ամուսնություններ, ընկերոջից/ ընկերուհուց բաժանված կամ ամուսնալուծված կամ այրի) և գործնականորեն նույնը բոլոր 4 խմբերում:

Վիճակագրական առումով հետաքրքրություն ներկայացնող փոփոխական է ***բնակության վայրի*** գործոնը, քանի որ այն ևս կանխորոշիչ է հղիության ընդհատումն արդարացնելու նկատմամբ հարցվածների վերաբերմունքի համար՝ վերջին պնդման բացառությամբ: Այս բացառությունը զարմանալի չէ, քանի որ այս դեպքում «հղիությունը կարող է վնասել կնոջ առողջությունը»: Ողջ ընտրանքի գրեթե 90.0%-ը գտնում են, որ դա ընդունելի պատճառ է հղիության ընդհատման համար և այս դեպքում կանայք և տղամարդիկ փաստացիորեն համակարծիք են:

Մյուս պնդումների առնչությամբ հարկ է փաստել, որ երևանաբնակներն ամենաշատն են հակված համաձայնելու հղիության ընդհատումները պատճառաբանող պիդումների հետ, իսկ գյուղաբնակները՝ ամենաքիչը: Ինչպես միշտ, միջանկյալ դիրք են զբաղեցնում այլ քաղաքային բնակավայրերի բնակիչները:

Թեև բավարար հիմքեր չկան դինամիկայի ներկայիս վիճակի մասին եզրակացություններ անելու համար, լիովին հնարավոր է, որ երևանաբնակները և որոշ չափով այլ քաղաքային բնակավայրերի բնակիչները սկզբունքորեն չեն սատարում հղիության ընդհատումը, քանի որ նրանք ավելի իրազեկ են և հավանաբար հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդների կիրառման ավելի մեծ փորձ ունեն: Ինչպես ցույց են տալիս աղյուսակի տվյալները, գյուղաբնակների կեսը կամ կեսից ավելին համաձայն են առաջին հինգ պնդումների հետ, որոնք այս կան այն պատճառով արդարացնում են հղիության ընդհատումը: Ամենացնցող տարբերությունը դրսևորվում է վեցերորդ պնդման դեպքում, ըստ որի կինը կարող է ընդհատել հղիությունը, եթե պտուղն իգական սեռի է: Թեև երևանցի հարցվածների ընդամենը 6.1% է համաձայն այդ պնդման հետ, այլ քաղաքային բնակավայրերում և գյուղաբնակների շրջանում մասնաբաշինը կազմում է համապատասխանաբար 12.7% և 17.7%: Այլ կերպ ասած՝ գյուղական բնակավայրերում գրեթե յուրաքանչյուր հինգերորդ հարցվածը սատարում է երեխայի սեռով պայմանավորված հղիության ընդհատումները, ինչը, ըստ էության ցեղասպանության ձև է՝ «գերդերասպանության»:

Աղյուսակ 16. Հղիության ընդհատման նկատմամբ վերաբերմունքը. Տղամարդիկ

Հետևյալ պնդումների հետ **համաձայն** բոլոր **հարցվածների** տոկոսը՝ ըստ կենսագրական բնութագրիչների**								
Կինը կարող է հղիությունն ընդհատել հետևյալ դեպքերում.								
Կենսագրական բնութագրիչներ	Ընտանիքն ունի բավարար թվով երեխաներ	Ընտանիքում կան բավական թվով որդիներ	Ընտանիքում կան բավական թվով դուստրեր	Հղիությունը պլանավորված չէ կամ անցանկալի է	Դժվար կլինի ևս մի երեխայի ապահովելը	Պտուղն իգական սեռի է	Հղիությունը կարող է վնասել նրա առողջությանը	Տղամարդկանց թիվը **N = 767**
Տարիքը								
18-24	21.6%	20.3%	19.0%	23.5%	21.6%	6.6%	81.7%	**153**
25-34	34.0%	29.7%	32.6%	28.7%	30.1%	10.6%	89.0%	**209**
35-49	40.4%	36.4%	35.6%	37.2%	42.4%	14.0%	89.2%	**250**
50-59	46.4%	42.0%	43.9%	41.3%	44.5%	12.9%	91.6%	**155**
Կրթությունը								
Հիմնական	(37.5%)	(37.5%)	(43.7%)	(37.5%)	(34.4%)	(15.7%)	(87.6%)	**32**
Միջնակարգ	40.4%	37.5%	37.2%	34.9%	38.5%	16.4%	86.1%	**403**
Միջին մասնագիտական	41.2%	36.6%	34.9%	32.5%	39.7%	6.4%	89.7%	**126**
Բարձրագույն	24.3%	19.5%	22.4%	28.7%	26.7%	3.9%	91.2%	**206**
Ամուսնական կարգավիճակը* **								
Գրանցված ամուսնություն	39.7%	36.1%	37.5%	35.1%	38.4%	10.7%	92.1%	**408**
Չգրանցված ամուսնություն	41.0%	35.0%	35.0%	35.0%	43.4%	12.0%	89.2%	**83**
Ընկերուհի (համատեղկյանք չեն վարում)	(25.0%)	(21.5%)	(21.5%)	(21.4%)	(25.0%)	(10.7%)	(75.0%)	**28**
Չամուսնացած	25.8%	23.0%	23.0%	28.2%	26.7%	7.9%	82.6%	**213**
Բաժանված/ամուսնալուծված	50.0%	45.8%	41.7%	45.8%	45.8%	33.3%	79.1%	**24**** **
Այրի	*	*	*	*	*	*	*	**2**
Բնակության վայրը								
Երևան	27.1%	23.3%	23.3%	24.8%	31.8%	7.0%	87.3%	**258**
Այլ քաղաքային	35.8%	31.4%	35.0%	31.9%	32.3%	10.7%	89.4%	**226**
Գյուղական	44.5%	41.7%	40.6%	41.3%	40.9%	15.9%	88.0%	**283**
Ընդամենը	**36.1%**	**32.4%**	**33.1%**	**33.0%**	**35.3%**	**11.4%**	**88.2%**	**767**
Փակագծերում տրված թվերը հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թիվը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:								

** Տվյալների հեշտ ներկայացման, համեմատության և վերլուծության նպատակով «խիստ կողմ եմ» և «կողմ եմ» պատասխանները միավորվել են՝ տրված պնդման հետ համամիտ հարցվածների տոկոսը որոշելու համար.

*** Քանի որ «Ոչ ֆորմալ միություն/ համատեղ կյանք» կատեգորիայում ընդամենը 9 հարցվածներ կային, այդ կատեգորիան չէր ներկայացվել (հետևաբար հարցվածների ընդհանուր թիվն այս սեկցիայում 758 է).

**** Սահմանագծային դեպքերի տվյալները լրիվ վավեր են համարվում:

Աղյուսակ 17. Հղիության ընդհատման նկատմամբ վերաբերմունքը. կանայք

Հետևյալ պնդումների հետ **համաձայն** բոլոր **հարցվածների** տոկոսը՝ ըստ կենսագրական բնութագրիչների**								
Կինը կարող է հղիությունն ընդհատել հետևյալ դեպքերում.								
Կենսագրական բնութագրիչներ	Ընտանիքն ունի բավարար թվով երեխաներ	Ընտանիքում կան բավական թվով որդիներ	Ընտանիքում կան բավական թվով դուստրեր	Հղիությունը պլանավորված չէ կամ անցանկալի է	Դժվար կլինի ևս մի երեխայի ապահովելը	Պտուղն իգական սեռի է	Հղիությունը կարող է վնասել նրա առողջությանը	Կանանց թիվը N = 850
Տարիքը								
18-24	43.1%	32.3%	34.6%	42.9%	42.1%	5.3%	89.5%	**133**
25-34	57.5%	47.6%	47.6%	54.0%	53.6%	14.7%	90.4%	**252**
35-49	62.9%	55.4%	55.7%	56.3%	53.6%	14.1%	89.7%	**291**
50-59	60.4%	48.8%	49.1%	54.3%	55.5%	14.4%	88.5%	**174**
Կրթությունը* **								
Հիմնական	*	*	*	*	*	*	*	**14**
Միջնակարգ	58.7%	49.7%	50.2%	55.7%	52.1%	16.7%	89.2%	**324**
Միջին մասնագիտական	60.0%	51.5%	52.6%	51.5%	56.3%	14.3%	88.6%	**245**
Բարձրագույն	54.9%	42.5%	42.9%	51.5%	48.1%	6.8%	91.4%	**266**
Ամուսնական կարգավիճակը ****								
Գրանցված ամուսնություն	62.6%	52.9%	53.2%	57.7%	57.4%	14.7%	89.7%	**533**
Չգրանցվածամուսնություն	62.1%	48.5%	48.4%	54.8%	53.7%	11.6%	91.6%	**95**
Ընկեր (համատեղ կյանք չեն վարում)	*	*	*	*	*	*	*	**9**
Չամուսնացած	40.3%	30.6%	33.9%	34.7%	32.3%	7.2%	86.3%	**124**
Բաժանված/ ամուսնալուծված	50.0%	46.0%	44.0%	46.0%	44.0%	8.0%	94.0%	**50**
Այրի	(60.0%)	(50.0%)	(50.0%)	(60.0%)	(60.0%)	(16.7%)	(90.0%)	**30**
Բնակության վայրը								
Երևան	50.6%	36.6%	37.6%	42.2%	45.0%	5.5%	89.1%	**312**
Այլ քաղաքային	56.1%	49.6%	49.6%	55.7%	52.0%	14.6%	89.1%	**246**
Գյուղական	67.5%	59.2%	59.6%	62.7%	59.9%	19.5%	90.0%	**292**
Ընդամենը	**58.0%**	**48.1%**	**48.6%**	**53.1%**	**52.2%**	**13.0%**	**89.7%**	**850**
Փակագծերում տրված թվային տվյալները հիմնված են 25-49 դեպքերի վրա: Աստղանիշը (*) ցույց է տալիս, որ թվային տվյալը հիմնված է 25-ից պակաս դեպքերի վրա և չի ներկայացվել:								

** Տվյալների հեշտ ներկայացման, համեմատության և վերլուծության նպատակով «խիստ կողմ եմ» և «կողմ եմ» պատասխանները միավորվել են՝ տրված պնդման հետ համամիտ կանանց տոկոսը որոշելու համար.

*** Քանի որ «Տարրական կամ ավելի ցածր կրթություն» կատեգորիայում կար ընդամենը 1 հարցված, այդ կատեգորիան չի ներկայացվել (հետևաբար այս սեկցիայում հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 849):

**** Քանի որ «Ոչ ֆորմալ միություն/ համատեղ կյանք» կատեգորիայում ընդամենը 9 հարցվածներ կային, այդ կատեգորիան չէր ներկայացվել (հետևաբար հարցվածների ընդհանուր թիվն այս սեկցիայում 841 է):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քանի որ ուսումնասիրության հիմնական խնդիրներից էր պարզել կանանց և տղամարդկանց վերաբերմունքը գենդերային հիմնախնդիրներին հարցերի լայն սպեկտրով, որպիսիք են. առնականությունը, գենդերային նորմերը, միջանձնային հարաբերությունները, գենդերային բռնությունը, սեռականությունը, վերարտադրողական առողջությունը, տնային պարտականությունների բաշխումը, երեխաների խնամքը և այլն) և երևան հանել ***գենդերային վարքին ներհատուկ օրինաչափություններ,*** հետազոտության առաջնահերթությունների թվում են եղել.

- Գենդերային հավասարության մասին գիտելիքները և դրա նկատմամբ վերաբերմունքը,
- Կանանց դեմ բռնությունը՝ տարածվածությունը, բացահայտումը և վարքը,
- բռնության նկատմամբ վերաբերմունքը,
- Տղամարդկանց դերն ընտանիքում,
- Ամուսնությունից բավարարվածությունը,
- Առողջապահական խնդիրները,
- Սեռական և վերարտադրողական առողջությունը, և
- Սեռականության, սեռական և վերարտադրողկան առողջության և դրանց առնչվող խնդիրների նկատմամբ վերաբերմունքը:.

Արդյունքները ցույց տվեցին, որ պատրիարխալ և «ավանդական» խստահայաց սոցիալական նորմերն ու ընկալումները, որոնք առնչվում են առնականությանը, կանացիությանը, գենդերաին հավասարությանը, սեռականությանը, ընտանիքի անդամների, այդ թվում՝ երեխաների հետ փոխհարաբերություններին, տնային պարտականությունների բաշխմանը, ինչպես նաև կանանց դեմ բռնությունը հանդուրժելուն, սեռական զուգընկերոջ բռնությանը և հասակակիցների կողմից բռնության գործարմանը, դեռևս հայ հասարակության մեջ լայն տարածում ունեն: Այս տարածվածությունը ցույց է տալիս, որ կանանց և սեռական զուգընկերների դեմ բռնությունը լուծում չստացած և վիճահարույց խնդիր է և արտացոլում է առանց բռնության, առանց խտրականության և օբյեկտիվության հիմնարար սկզբունքների

վրա հիմնված ժողովրդավարական գենդերային մշակույթի ձևավորման ջանքերի ապարդյունությունը:

Տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր հոգեբանական բռնության են ենթարկել իրենց կին սեռական զուգընկերոջը	***53.3%***	*Կին հարցվածների տոկոսը, ովքեր հոգեբանական բռնության են ենթարկվել իրենց տղամարդ սեռական զուգընկերոջ կողմից*	***45.9%***

Տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր տնտեսական բռնության են ենթարկել իրենց կին սեռական զուգընկերոջը	***20.8%***	*Կին հարցվածների տոկոսը, ովքեր տնտեսական բռնության են ենթարկվել իրենց տղամարդ սեռական զուգընկերոջ կողմից*	***21.3%***

Տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր ֆիզիկական բռնության են ենթարկել իրենց կին սեռական զուգընկերոջը	***17.4%***	*Կին հարցվածների տոկոսը, ովքեր ֆիզիկական բռնության են ենթարկվել իրենց տղամարդ սեռական զուգընկերոջ կողմից*	***12.5%***

Տղամարդ սեռական զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության ենթարկված կանանց տոկոսը՝ ըստ հիմնական հարցաշարի	***12.5%***	*Նույնը՝ ըստ ինքնուրույն հարցաշարի*	***22.4%***

Սեռական բռնության տոկոսը (տղամարդկանց կողմից գործադրված և հաղորդված)	***14.6%***

Ենթարկվել են առնվազն մեկ տեսակի բռության (Կանանց տոկոսը, ովքեր ինքնուրույն հարցաշարի միջոցով հայտնում են տանից դուրս միջին ծանրության կամ ծանր ֆիզիկական բռնության ենթարկվելու մասին վերջին 3 ամիսների ընթացքում)	***3.7%***

Կանանց տոկոսը, ովքեր գործարքային սեռական հարաբերություն են ունեցել	***6.6%***

Տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր հաղորդել են իրենց վերահսկողական վարքի մասին	***95.5%***

Տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր մանկության ընթացքում ֆիզիկական բռնության են ենթարկվել (տարածվածությունը կյանքի ընթացքում)	***49.3%***

Տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր մանկության ընթացքում ֆիզիկական բռնության են ենթարկվել (մինչև18տարեկանը)	***27.2%***

Տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր մանկության ընթացքում հոգեբանական բռնության են ենթարկվել	***10.9%***

Տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր մանկության ընթացքում սեռական բռնության են ենթարկվել	***3.5%***

Տղամարդ հարցվածների տոկոսը, ովքեր մանկության ընթացքում արհամարհված կամ լքված են եղել	***0.9%***

Սոցիալական նորմերի և արժեքների բախման համատեքստում զարմանալի չէ, որ ոչ բոլոր տղամարդիկ են գենդերային զգայուն և չեզոք: Նույնը ճշմարիտ է նաև կանանց դեպքում: Ավելի ճիշտ՝ շատ հարցվածներ երբեմն իրարամերժ տեսակետներ են հայտնել՝ այսպիսով ցույց տալով կայուն դիրքորոշման և մտածողության բացակայություն: Գենդերայի կարծրատիպերը հաճախակի են հանդիպում:

Պնդում	Պնդումների հետ համաձայնհարցվածների ընդհանուր տոկոսը	Տղամարդ հարցվածների տոկոսը	Կին հարցվածները տոկոսը
Երբ կայանք իրավունքներ են ստանում, նրանք խլում են տղամարդկանց իրավունքները	12.9%	18.2%	8.2%
Կանաց իրավունքերը երթադրում են տղամարդկանց իրավազրկում	13.1%	17.5%	9.1%
Գենդերային հավասարությունն արդեն զգալի առաջընթաց է գրանցել	86.8%	83.3%	89.9%
Գենդերային հավասարության հիմնականում ապահովված է	63.3%	57.0%	69.0%
Գենդերային հավասարության հասնելուն միտված ջանքերը ձեռնտու են հիմնականում ապահովված մարդկանց	47.5%	48.5%	46.6%
Գենդերային հավասարության խթանման ուղղությամբ ավելի շատ է պետք աշխատել	51.3%	44.2%	57.7%
Տղամարդիկ ավելի լավ քաղաքական գործիչներ են դառնում, քան կանայք	58.3%	67.1%	50.2%
Կանայք պետք է քաղաքականությունը թողնեն տղամարդկանց	42.5%	48.4%	37.3%
Կանայք չափազանց էմոցիոնալ են իրենց համայնքներում ղեկավար պաշտոններ զբաղեցնելու համար	69.7%	73.1%	66.7%
Կանայք պետք է ստանան քաղաքական պաշտոն զբաղեցնելու տղամարդկանց հետ հավասար հնարավորություններ	76.7%	70.3%	82.6%
Տղամարդու հետ նույն որակավորումներն ունեցող կինը կարող է նույնքան լավ աշխատանք կատարել	81.7%	71.7%	90.7%
Կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն ընտանիքի միասնության	35.7%	44.6%	27.8%
Որոշ դեպքերում կինը ծեծի է արժանի	27.7%	35.2%	21.0%

Եթե կինը տղամարդուն դավաճանում է, ապա վերջինս կարող է նրան խփել	55.4%	60.9%	50.5%
Տղամարդը կարող է խփել կնոջը, եթե նա հրաժարվում է իր հետ սեռական հարաբերություն ունենալ	5.1%	5.8%	4.5%
Երբ կին է բռնաբարվում, սովորաբար նա է ինչ-որ բան արել՝ իրեն դնելով այդ իրադրության մեջ	32.2%	40.9%	24.2%
Բռնաբարության որոշ դեպքերում կանայք իրականում ուզում են, որ դա տեղի ունենա	35.8%	44.0%	28.6%
Եթե կինը ֆիզիկապես չի հակադարձում, ապա հնարավոր չէ հաստատապես պնդել, որ տեղի ունեցածը բռնաբարություն է	59.8%	61.3%	58.4%
Ցանկացած բռնաբարության դեպքում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք զոհը պատահական սեռական կապեր կամ վատ համբավ չի ունեցել	62.7%	64.4%	61.0%
Նույնասեռական տղամարդու հանդեպ բռության գործադրում արդարացված է մի շարք պատճառներով	Չ/Պ	62.4%	Չ/Պ
Ես երեխաներիս հետ չափազանց քիչ ժամանակ են անցկացնում աշխատանքիս պատճառով	Չ/Պ	54.8%	Չ/Պ
Երեխաների հոգածության հարցում ես հանդես եմ գալիս իբրև հաց վաստակող.	Չ/Պ	89.9%	Չ/Պ
Ես գոհ եմ հարաբերություններից/ ամուսնությունից	83.3%	84.1%	82.5%

Տնային պարտականությունները կիսող տղամարդ հարցվածների տոկոսային բաշխվածությունը	
Լվացքը	**3.2%**
Տան վերանորոգումը	**68.2%**
Սննդամթերքի գնումը	**17.7%**
Տան մաքրման աշխատանքները	**3.2%**
Լոգասենյակի/ զուգարանի մաքրումը	**3.0%**
Սննդի պատրաստումը	**3.3%**
Վարձավճարների մուծումը	**36.5%**

Սեռերի միջև «անդունդը» հատկապես ակնհայտ է ընտանիքում և ինտիմ հարաբերություններում ուժերի անհամաչափության պարագայում:

Տվյալները հստակ կերպով ցույց են տալիս, որ դրական, գենդերային փոխհարաբերությունների հարցում օբյեկտիվ տղամարդու կերպարի բացակայություն, բացասական առնականության օրինաչափությունների

տարածվածություն և առնականության այլընտրանքային, բռնությունը բացառող դրսևորումների կարիք:

Չնայած Կառավարության վարած քաղաքականությանը գենդերային բռնության և գենդերային անհավասարության վերացման ուղղությամբ հանրային կյանքի տարբեր ոլորտներում, ինչպես նաև գենդերային արդարություն և հավասարության ապահովման ուղղությամբ՝ հատուկ կարճաժամկետ միջոցների կիրառմամբ, այնուամենայնիվ, ինչպես վկայում են հետազոտության արդյունքները, առաջընթացը բավականին դանդաղընթաց է:

Այն գործոնների թվում, որոնք դրական ազդեցության միտվածություն ունեն գենդերային արդար վերաբերմունքի ձևավորման համար, ավելի երիտասարդ տարիքային խմբերն են, բարձր կրթամակարդակը (հատկապես՝ բարձրագույն կրթությունը) և մայրաքաղաքի բնակիչ լինելը: Քաղաքականությունը պետք է հիմնական շեշտը դնի այս և նման դրական գործոնների վրա՝ օգնելով հայ հասարակությանը հաղթահարել առնականության և կանացիության կարծրատիպային հասկացությունները և դրանց բացասական հետևանքները:

Որպես Հայաստանում իր տեսակի մեջ առաջին ուսումնասիրություն՝ սույն հետազոտությունը միտված է հիմք և ուղենիշներ ապահովելու քննվող հարցերի առնչությամբ: Սակայն պարզ դարձավ, որ հետագա ուսումնասիրության կարիք կա, որը կետրոնանալու է անհատական խնդիրների վրա, այդ թվում՝ ազդեցության գնահատման ուսումնասիրու՝ որպես քաղաքականության և նախագծերի շարունակություն:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ուժեղացնել առնականության դրական կողմերը՝ լայն հասարակությանը կրթելու և ավելի նպատակային միջամտությունների միջոցով՝ ուշադրության կենտրոնում պահելով և խթանելով գենդերային արդար վերաբերմունքի և վարքի ձևավորումը,
- Գենդերային արդարությանը և հավասարությանն ուղղված ապագա Ազգային գործողությունների ծրագրերում և ռազմավարություններում նախատեսել *առնականության* հիմնախնդիրներին վերաբերող գործողություններ,
- Ուժեղացնել արդյունավետ համագործակցությունը ու համակարգումը հիմնական կառույցների շրջանում, որոնց թվում են կառավարական կառույցներ, քաղաքացիական հասարակությունը, ակադեմիական համայնքը և միջազգային կազմակերպությունները,
- Ներմուծել և պարբերաբար անցկացնել գենդերային հավասարության, այդ թվում՝ առնականության հիմնախնդիրներին նվիրված ազգային ծրագրերի գործած ազդեցության գնահատում,
- Աջակցել առնականության նոր միտումներին և ընկալումներին նվիրված ուսումնասիրություններին՝ հատուկ ուշադրություն դարձնելով գենդերային արդարությանը սատարող վերաբերմունքի տարածմանը և այն ադեկվատ վարքի վերափոխման աստիճանին,
- Հանրայնացնել էգալիտար ընտանիքի մոդելը՝ բռնությունը բացառող վարքի օրինակով և գենդերային հիմնախնդիրները ընտանիքի օժանդակության ազգային նախագծերի վերածելով,
- Աջակցել ազգային օրենսդրության բարեփոխմանը և գենդերային բռնության բացահայտված դեպքերի դեմ պայքարը քաղաքական հարթակ տեղափոխել՝ հասնելով դրա ճանաչմանը, *ի թիվս այլ հարցերի*, ստեղծելով ուղղորդման մեխանիզմ և ապահովելով ավելի արդյունավետ օգնություն և երթարկվածների պաշտպանվածություն:
- Սատարել գենդերային քվոտաների ներմուծումը հանրային կառավարման համակարգ և տեղական ինքնակառավարման մարմիններ և վերջնական լուծման համար՝ Ազգային ժողով: